



ГЕНЕРАЛЪ Е.

Губернаторъ и Сиренбургъ

ЕПИСКОПАТЪ

Самосержеуъ Всероссийскій

ՀԱՄԱՌՕՏ

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՅ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Հ. ԳԱԲՐԻԵԼԻ ԱՅՎԱԶՈՎՍԻԻ

ԿԱՖԱՑԻՈՅ ՄԻՒԹԱՐԵԱՆ

A
743



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲԵ ՂԱԶԱՐ

—
1836



ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ

ՏԵԱՌՆ ՍՏԵՓԱՆԵՈՍԻ ԵՒ ԵՂԲՕՐ

ՆՈՐԱ ՊԱՐՈՆ ԲԱՂՏԱԾԱՐԱՅ

ՆԵՓԻՍԵԱՆՑ



ՋԵԿՈՒՑՈՒՄՆ

ՊԵՏՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱԳ յԵՐՐԵԱԿ ԴԱՐՈՒԿ ՄԻՇՈՅԻ անկարծելի բարգաւաճեալ 'ի զէն և յիմաստ և 'ի կենցաղակիրթ քաղաքականութիւն, պատկեր իմն գեղանկար 'ի հիացումն կարգեցաւ աշխարհի, յորում է տեսանել ակն յայտնի զմեծազօր ճիւղն և զպերճ արգասիս ազգասէրն հանճարոյ :

Ընդ նորին թեարկութիւն հովանաւորեալ և ոչ սակաւք յանդրանկաց այրացելոյ մօրն ամենայն ազգաց, Արարատեանն ասեմ աշխարհի, վաղու ևս իղձ լինէին 'ի գիտել զազգաբանութիւն և

զանցս և զքործս հոյակապ խառանգոր-
դացն հիւսիսոյ, որ այսգունակ մար-
դասիրութիւն հիւրընկալեցին զնոսա :

Եւ ահա 'ի լուսնն ըղձից նոցա, մա-
նաւանդ թէ իրաւացի թախանձանացն,
այս ընծայի համառօտ Պատմունի Ռու-
սաց 'ի սկզբանէ հետէ մինչև ցժամանակ
Թագաւորութեն Եղիսաբէթի, հան-
դերձ ծաղկաքաղ յաւելուածով յիշա-
տակելեաց դիպելոց 'ի Ռուսիա 'ի Պե-
տրոսէ երրորդէ և այսր :

Կարևոր թուեցաւ յարել զկնի և
զնկարագիր աշխարհին Ռուսաց ըստ
քաղաքական հանգամանաց արդի ժա-
մանակացս. հոգ 'ի մտի եղեալ զնոցին
իսկ Ռուսացն մատենագրաց զկարծիս
ընարել ըստ կարի յայտմամբնայնի ա-
ռաջնորդ, և խոյս տալ 'ի բազմաբանու-
թէ, յուշմութի ընթերցասիրին առ-
նելով տպաստան հանդերձ այլովք և
զպիտանի խրատուց և զմաստից ար-
դիւնս յանձին ամբարումն :

Եւ եթէ մտադիր ընթերցող հայկ-

ալն բազում ինչ յանցս նախնոյն Ռուսիոյ զոյգ և կշիւ անցից հայրենի աշխարհին տեսանիցէ, մանաւանդ ըստ մասին յերկար անզօր և ռոնակոխ մնալոյ 'ի պատճառս անմիաբանութե իշխանացն, մեր յոյս և ուխտ սրտի այն է, զի և յայժմու բարգաւաճանացն Ռուսաց 'ի վարժս իմաստից և 'ի փոյթ ազգասիրութե ոչ հարեանցի և ունայնաձեռն վերջացի :

Ի հինգ գլուխս բովանդակեմք զՊատմութիւնս .

Ա. Յամէ րոն 862 մինչև ցամն 1054, միջոց ժամանակի հարիւր իննսուոն և երկուց ամաց . յորում սկիզբն պետութենն Ռուսաց 'ի Նովկորոտ 'ի Րիւրիքայ, և Օլէկայ փոխադրել զաթոռն 'ի Քիեվ քաղաք, և թագաւորել որդւոցն Րիւրիքայ ազգաւ մինչև ցԵարոսլաւ օրէնագիր :

Բ. Ի 1054 ամէ ցամն 1236, միջոց ժամանակի հարիւր և ութսուոն ամաց . յորում Եօթնևտասն թագաւորք սխայա-

զատեն՝ եղբայր յեղբօրէ ժառանգելով
յաճախ զաթուռն . և 'ի նոսա ականա-
ւորք Վլատիմիր Մոնոմախ , և Անդրէաս՝
որ 'ի Քիեվէ 'ի Վոլոտիմիր քաղաք վո-
խեաց զաթուռն :

Գ . Ի 1237 ամէ ցամն 1460 , միջոց
ժամանակի հարիւր քսան և երկոց ա-
մաց . յորում արշաւանք Թաթարաց 'ի
Ռուսիա , և Թագաւորեւ Աղէքսանդրի
Նեւսքեայ , և Միքայէլի Թվերացոյ և
այլոց մինչև ցիւան Ա , որ հաստատեաց
զաթուռ Թագաւորութեն 'ի Մոսքուա :

Դ . Ի 1460 ամէ ցամն 1613 , միջոց
ժամանակի ամաց հարիւր յիսուն և ե-
րկոց . յորում Թագաւորեւ Իւանեանց՝
Էրրորդին և չորրորդին , և ալէտք աշ-
խարհին Ռուսաց յերեսոց Թաթարաց ,
և շիտթք վասն աթուռոյն՝ որ հուսկ ու-
րեմնանցանէ առ տոհմն Ռումանովեանց :

Ե . Ի 1613 ամէն մինչև ցամն 1762 ,
պատմութի ժամանակի հարիւր քառա-
սուն և ինն ամաց , 'ի Թագաւորելոյ
անաթի Միքայէլի Ռումանով մինչև ցմահ

Եղիաբէթի : Յորս յարեմք զԼուսն
սատմութիւն Ռուսաց, միջոց ժամանակի
անաց վաթսուն և ութից. այս է 'ի
Թագաւորելոյ Պետրոսի երրորդի մինչև
ցճինգերորդ ամ ինքնակալութիւն մեծի
Կայսեր ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Ա. ջամն 1830 :



ՌՈՒՐՍՏՆԻ



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ռ Ո Ւ Ս Ա Յ



Գ Լ Ո Ւ Խ Ա .

862 = 1054

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ն

Ն Ո Վ Կ Ո Ր Ո Տ Ա Յ

Որպէս յղով ազգաց Եւրոսայ, նոյնպէս՝ և աւելի ևս Ռուսացն պատմութեան ճանօթ է սկիզբն մինչև ց՛հինգերորդ դար . յորում Սլաւեանք նեղեալք ՚ի Բուլղարաց՝ խաղացին անցին, ասէն, ՚ի Ռուսիա յափանց անտի Դանուբ գետոյ : Այս նոցա դադարեալ առ Տնեքերաւ՝ կառուցանեն զքաղաքն Քիեւ . և միւս կէսն անդր ևս դիմեալ ընդ ճիւսիս՝ կանգնեն իւրեանց քաղաք Սլաւեանք անուն . և ՚ի կրկին անգամ ամայանալ քաղաքին յերեսաց պատերազմաց և ժանտ ախոսից՝ ճիմն արկանեն նորոյ քաղաքի, այն իսկ է՝ Նովկորոս :

Սոքա անդատին բաղմաթիւ և հզօր

գողով քան զմերձակայս իւրեանց , գիտային անքոյթ պահել զազատութիւն իւրեանց , և դամ քան զգամ բարդաւածեցին վաճառաշահ ընդ Յոյնս լինէնելով . զի տային նոցա մորթ և սամուրենիս , ձկուճնս աղծեալս , մեղր և մոմ . և առնուին 'ի նոցանէ գինի , բրինձ , միրգս , ասր , մետաքս և կաաւ :

Եւ այնչափ անարկու եղեն շրջաբնակ ազգաց , զի և անդէն 'ի հինգերորդ դարուն յառակս եղև ասել . " Ո՞րչիսեսցէ ընդդէմ կալ Աստուծոյ , և Նովկորոտայ մեծին , " : Եւ էին յայնժամ 'ի Նովկորոտ , որպէս ասեն , չորեքհարիւր հազար բնակիչք :

ԲԻԲԻԻԲ

ՎԱՂ զեղծան Նովկորոտացիք երջանկութիւն իւրեանց և անկան յընտանի յուզմունս շփոթից . և 'ի դարման չարեացն խորհուրդ վատութե 'ի մէջ առեալ՝ կոչեցին իւրեանց 'ի թիկունս զիշխանան Ինկրիոյ զերեսին եղբարս , որոց անուանք էին Տիւրիք , Չինաւ , և Թրուվոր , որպէս զի արասցեն իրաւունս և նուաճեացեն զգիմակացս ընկերհատութեանն . և էին սոքա յազգէ Վարեակք , կամ ըստ այլոց՝ Ռուսք հատուածք 'ի Սլաւեանց : Որոց եկեալ

հաստատեցին զտեղի բնակուէ իւրեանց արտաքոյ Նովկորոտայ յերկից կողմանց քաղաքին . Բիւրիք 'ի Ղատոկա, Չինաւ 'ի Պելւօզերօ, և Թրուվոր յԻզպորսք . և յանդորրու սահէին զՆովկորոտ 'ի յարձակմանց օտարաց և յառանին գըժտուածց :

Ի մեռանել Չինաւայ և Թրուվորայ զհետ երկուց ամաց, միայն ժառանգեալ Բիւրիք զիշխանուիս եղբարցն՝ 'ի տիրասպետել ձեռն արկանէր . և այն ինչ խլրաէին Նովկորոտացիք թօթափել ըզլուծն Բիւրիքայ, աստի ահա սրտաճառս իրաւանց առեալ նորա՝ նկուն արար զնոսին զինու բռնութիւն . եդ զաթոռ իշխանութիւն իւրոյ 'ի Նովկորոտ, և որ շուրջ քաղաքք և աւանք էին՝ բաշխեաց զնոսին 'ի զօրավարս իւր և 'ի բարեկամս, և հզօրացաւ յոյժ յոյժ : Եւ ընդ ամս եօթնևտասն խաղաղութիւն կալեալ զթագաւորութին՝ մեռաւ յամիսն 879, թողեալ որդի մի Իկոր անուն չորեքտասանամեայ, որում խնամակալ կարգեաց զՕլէկ զազգակից իւր :

Առ Բիւրիքաւ թուի բարձեալ խաիրն որ ընդ Վարեաիս և ընդ Սլաւեանս, և ամենեցուն կոչեցեալ հասարակաբար միով անուամբս Ռուսք :

ՍԵ այր հզօր և խորամանկ փուլթա-
ցաւ զիւրև ամէլ զՎարեական, և 'ի նո-
ցունց յուրմէլ իւր անձնասպահս . ապա
զօրաժողով լեալ 'ի Վարեկաց, 'ի Սլա-
ւեանց և յայլոց Սարմատացոց՝ խաղաց
նախ առաջին 'ի Քիւսիւ . 'ի մտի եդեալ
էր յաւելուլ և զայն 'ի պետուլթի անդր
հովկորոտայ :

Աժէր ընդ իւր և զԻկոր մանուկ .
և զճանասպարհայն նուաճեալ զքա-
ղաքսն Սմոլէնսք և Լիւպեց, եկն ե-
հաս դիշերի մերձ առ սպարխսսս Քիւս-
վայ : Անդ 'ի դարանի արարեալ զմեծ
կէս բանակին, ընդ այդն հրեշտակս
արձակեաց առ Օսքոլտ և Տիր որ էին
դիւսաւորք աւագանւոյն Քիւսվայ՝ կան-
խաւ ընդվզեալք 'ի ներքուստ ձեռինն
Տիւրիքայ, և ասէ ցնոսա բանիւք նեն-
դուէ . «Արք բարեկամք իմ և քաղաքա-
կիցք, իմ 'ի մտի եդեալ է խաղալ ընդ-
դէմ Յունաց . արդ թէ բարւոք թուի
յաչս ձեր՝ եկայք առ իս, և խորհուրդ
կարևոր միաբանուլթէ հաստատեսցուք
'ի միջի » : Եւ իբրև ելին յանկասկածս
իշխանքն ըստ դուռն քաղաքին, անդէն
պաշարեաց ցնոսա Օլէկ իւրովք զօրա-
կանօք, և կալեալ զձեռանէն Իկորայ՝

ասէ ցնոսա զայրագին . « Չէք դուք իշխանք , և ոչ որդիք իշխանաց . ահա որդին Տիւրիքայ՝ միայն իշխան Ռուսիոյ » . և հրամայեաց խողխողել զնոսա , և ապա խուժեալ 'ի ներքս իւրովքն հանդերձ անհակառակ , տիրեաց քաղաքին , և անդ հաստատեաց զաթոռ իշխանութեն : Կառոյց և այլ ևս քաղաքս շուրջանակի , և ընդ հարկաւ արար զՏրեւլեանս , զՍեւերեանս , զՌատիմիչս , և զայլս յազգաց մերձաւորաց :

Այլ նորա 'ի Յունացն պետուի ակնեդեալ էր , և 'ի Բիւզանդիոն դնել զաթոռ իւր . վասն որոյ սրատրաստեալ նաւակս երկու հազար ընդ մեծ և ընդ փոքր , թողու զԻկոր 'ի Քիեւ , և լցեալ զնաւակսն ամբօխիւ խիղախ Վարեկաց հանդերձ այլովք՝ անհնարին տաժանմամբ նաւարկեալ անցանէ ընդ ջրլէժսն Տնեբերայ , և ելեալ 'ի կղզի մի մերձ յՕզու նորոգէ զխարխալեալ նաւակսն . զնոյն և յանցանէ ընդ Դանուբ արարեալ՝ դայ հասանէ 'ի բերան նեղցին Բիւզանդիոյ , այն է Վոսփորոն . զոր տեսեալ աղիաղիսեալ ստուար շղթայիւք , հրամայէ ընդ ցամաք զնաւակսն վարել՝ անիւս 'ի ներքոյ նոցին յարմարեալ , մինչև եկն էջ հուս 'ի պարխսպս անդր թագաւորեալ քաղաքին : Իսկ թէ զոր չարիս անցոյց այս բանակ ահարկու տակաւին գենիւ հեթանոս՝ ընդ բնակիչս ծովեղերեայցն , անհնար է բանիւ յայտ

առնել. զի յեկեղեցեաց մինչև 'ի շիրիմս մեռելոց ոչ զերծան 'ի յափշտակութեց նոցա, և ոչ ալիք ծերոց մինչև ցգրկընկալ մանկտինն ոչ ապրեցան 'ի սրոյ նոցա :

Իսկ Ղևոն խմաստասէր հայկազարմ որ ինքնակալէրն յայնժամ, յաղեկարծում աղէտին 'ի խնդիր ուխտի խաղաղութե՛ եղև ապաստան : Եւ այս դաշինք հաստատեցան 'ի միջև, զի հատուցեն Յոյնք զօրականին Ռուսաց մէն մի դահեկան առ այր, և զի ընդ ամիսս վեց կերակրեսցեն զվաճառականս Ռուսաց որ դայցեն 'ի Բիւղանդիս, և ազատս արասցեն զնոսս յամենայն բաժից և մաքսից : Ի հաւատարմութի այսր ամենայնի երգուաւ Ղևոն 'ի սբ խաչն, և Ռուսք 'ի սուսերս իւրեանց և 'ի դիմն 'ի Փեռուն ամալրոսային, և 'ի Վոլոս հօտից շահապետ : Անդ 'ի դրունս Բիւղանդիոյ կախեցին զվահանս իւրեանց Օլէկ և աւագանին իւր, և դարձան 'ի Քիեւ աղխաղխեալք բազում աւարաւ :

Զհետ ամաց ութից 'ի ծագել երկսպառակ խորհրդոց և դժուարութեց ինչ զգաշանցն հաստատելոց՝ դարձեալ աւաբեաց Օլէկ հրեշտակս 'ի Վոստանդնուսօլիս, և այնպէս ընդ ամս քսան և ութ խաղաղութե՛ կացին ընդ միմեանս Յոյնք և Ռուսք :

Իսկ իբրև Իկոր յարբունսեհաս, Օլէկ ած նմա 'ի կնութի զօրիորդ մի, զոր և

Եւր անունն Օղկա անուանեաց, և ինքն
 յետ սակաւուց օձահար եղեալ մեռաւ
 յամին 913, խնամասկեալաւ քաջութի
 զամս երեսուն և չորս :

Ի ԿՈՐ

Ի ՀԱՄԲԱԻ մահունն Օղկայ վտարանն
 ջեցին յԻկորայ Տրեւլեանք և մերձա
 ւորք նոցա, զլացեալ նմա զպայմանեալ
 սակ հարկացն . այլ ապա ընդ ծանրադոյն
 հարկօք նուաճեցան : Առաւելագոյն
 ճգանց պէտք եղեն Իկորայ 'ի նուաճել
 զՈւկլիչս բնակեալս առ Տնեբերաւ . յո
 ըոց վերայ արձակեալ զքաջ սպարա
 պետ իւր Սվենալա՝ էառ զքաղաք նոցա
 զկնի եռամեայ պաշարման, և եգ 'ի վե
 րայ նոցին ամ ըստ ամէ հարկ ըստ երգ
 մորթ մի աքսի : Ասրս հալածական ա
 րար Իկոր և զՓեչենեկս արշաւեալս 'ի
 Ռուսիա :

Եւ վառեալ ոգւով աշխարհակալու
 թէ, մանաւանդ թէ հուղկահարութե
 ըստ օրինակին Օղկայ, կազմեաց, որ
 պէս ասեն, նսաակս բիւր մի, եգեալ
 քառասուն այր 'ի մի նաւակ, և խա
 զաց ընդդէմ Յունաց :

Սոցա ևս զնոյն տաժանտկանն ճանա
 պարհն Օղկայ հատեալ անցեալ, և
 յայրեաց և յաւեր դարձուցեալ զգա

ւառան Պափղագոնիոյ, Բիւթանիոյ և Պոնտոսի, եկին հասին 'ի Առափորոն :

Յայնժամ Յոյնք վառեալք 'ի վրէժքինու անարդանացն անցելոյ, և յառաջիկայիցն խիթացեալք՝ զօրաժողով եղէն յամենայն կողմանց, յարձակեցան կատաղաբար, և փախուցին զՌուսս անդրէն 'ի նաւակս իւրեանց : Եհաս 'ի վերայ և Թէոփանէս պատրիկ իւրով նաւատորմաւն, և ահագին կոտորած 'ի վերայ հատուցանէր Ռուսաց՝ արուեստաւոր հրձգութեամբքն . մինչ զի հազիւ զչորրորդ մասն բանակին իւրոյ ապրեցուցեալ ՚իկորայ՝ եկն անկաւ 'ի Քիեվ :

Յետ ոչ սակաւուց վերստին խրախուսեալ զիւրսն 'ի յոյս աւարին Յունաց, դիմեաց եհաս մինչև 'ի Խրիմ . այլ խաղաղասէր ինքնակալն Կոստանդին Պերփեռուժէն աճապարեաց խոտացաւ նմա հատուցանել անթերի ըզխնդրելի տուրսն, և նորոգեալ զգաշինան ըստ պայմանացն զորս պահանջէր 'ի նմանէ ՚իկոր՝ դարձոյց զնա միւսանգամ յերկիր իւր :

Ի ձախողէլ այսպէս ակնկալութեն Ռուսաց՝ ստիպելն զ՚իկոր 'ի Տրեւէանց անտի խլրտելոց յասրտամբութի՝ հանել զվրէժն միանգամայն և զաւարն . և նորա գնացեալ նուաճեաց զնոսա, և յաւել ևս 'ի ծանրութի հարկացն զոր հարկէին նմա . և ապա յանհոգս եղեալ

վասն մեծի յաղթութեն՝ արձակեաց յիւրմէ զմասն ինչ բանակին :

Յայնժամ դարանեցան նմա Տրեւլեանք, և յանկարծակի հասեալ ՚ի վերայ հատին զգլուխն, և մեռաւ նա ամաց վաթսուն և ութից՝ թագաւորեալ ամս երեսուն և երկու . և եթող ընդ ինամակալուք կնոջ իւրոյ Օլկայի զորդի մի մանուկ հասակաւ Սվեաթոսլաւանուն :

ՕԼԿԱ

ՏՐԵՒԼԵԱՆՔ ակն ունելով յօգուտ անձանց վարել զանտիական հասակն Սվեաթոսլաւայ, խորհեցան զիշխանն իւրեանց փեսայացուցանել Օլկայի, և յինքեանս ձգել զթագաւորունն Քիւվայ . սմին իրի առաքեալ առ Օլկա յաւագորերոյն իւրեանց արս քսան, զառաջինն աղերսիւ իմն անբասիր արարին զդաւաճանել իւրեանց զԻկոր սակս տարապայման ծանրութե հարկացն՝ զորս պահանջեր ՚ի նոցանէ . և ապա ՚ի դովեստ առեալ զհանճար և զքաջութի իշխանին իւրեանց, յորդոր եղեն Օլկայի յանձն առնուլ դալ նմա ՚ի հարսնութի :

Օլկա ՚ի վերին երեսս հաւանեալ խընդրոյ նոցին, առ այժմ դարձարուք

743

դուք ասէ՛ի նաւակս ձեր, և վաղիւ եկեալիք այսրէն, զի՛ ՚ի սլափու երեսաց ձերոց և իշխանին ձերոյ ընկալայց զձեզ արժանապէս մեծարանօք առաջի իմոցս իշխանաց :

Ի վաղիւ անդր առաքեաց կոչեաց զնոսա հրաւիրանաւ ՚ի քաղաքն . և ընդ մտանել քսանեցունց իշխանացն ՚ի ներքս՝ ըստ յառաջագոյն խրատուն ՕԼկայի սպասաւորք նորս և զօրականք խարդաւանեցին զնոսա՛ի սրատրաստեալ վիհ խորայատակ, և թաղեցին կենդանւոյն :

Ապա առաքեաց դեռպանս առ Տրեւլեանս խնդրել ՚ի նոցանէ և զայլ և սականաւոր մարդիկ, եթէ՛ ՚ի հաստատու թի սլայմանաց ամուսնու թէն, և եթէ՛ ՚ի տանել զինքն առ իշխանն իւրեանց . քանզի խիթամ ասէր, զի Քիեւացիք խափան ինչ լինիցին մեկնելոյս իմոյ աստի : Արձակեցին Տրեւլեանք արս յիսուն ՚ի դլսաւորաց քաղաքին . որոց այն ինչ հասեալ առ Օլկա՝ հրաւիրեցան ՚ի նմանէ ՚ի բաղանիս, և անգէն կենդանւոյն այրեցան :

Յետ այնորիկ յաւել առաքեաց այլ Ռուսս առ Տրեւլեանսն՝ ազդ առնել նոցա զգալուստ իւր, և աղաչել զի տարցին ՚ի գերեզման Ղկորայ մեղրաջուր և խորտիկս և դահամունս, իբր զի՛ ՚ի մտի եղեալ է խնջոյս մեծ կարգել անդանօր ՚ի յիշատակ առաջնոյ ամուսնոյն՝ մինչ

չև ձեռն տուեալ երկրորդին : Կատարեցին Տրեւլեանք անդէտք եղելոցն՝ անվրէպ զբանան , և խնդալից ընդ առաջ ելին Օլկայի , որ եհաս սակաւութի մամբք խորհրդակցօք . և ՚ի հարցանել Տրեւլեանց զիշխանացն իւրեանց , ընկալան սրտասխանի՝ թէ նոքա ընկերել և առաջնորդել ունին սլաշտատականացն և ընտանեաց դշխոյին : Իսկ նորա աշխար եդեալ ՚ի վերայ գերեզմանին Իկորայ , շիրիմ կանգնէ ՚ի վերայ . և զգեցեալ զհանդերձս հարսանեաց դայ ՚ի խնջոյան հանդերձեալս ըստ բանի նորա :

Անդ իբրև ընդ գինիս մտեալ զգրլխէին Տրեւլեանք , և սկսեալ իսկ էին բանս նախատանաց բարբառել ընդդէմ Իկորայ , Ռուսք անգէն յակնարկել Օլկայի անկեալ ՚ի վերայ թմբբելոցն ընդ սուր հանին զամենեւեան , և կոտորեցին ոգիս իբրև քսան հազար :

Դարձաւ Օլկա ՚ի Քիեւ , և վաղվա զակի գունդ կազմեալ յարձակեցաւ ՚ի վերայ Տրեւլեանց մինչ նոքա գեռ զաղմկաւն էին : Եւ ոչ հանդարտեալ նոցա ընդդէմ բանակին Ռուսաց ՚ի փախուստ դարձան , և ապրեալքն ՚ի սրայ ամբայեալ ՚ի քաղաքին իւրեանց ընդ ամ մի ողջ . ժուժկալեցին սլաշարման , և ապա քաջալերեալք ՚ի խոստմանցն Օլկայ թէ շատացի սլայմանեալ հարկաւ , և ոչ ևս վրէժխնդիր լիցի նոցա , անձնա

տուր եղին 'ի նա, և հաստատեցաւ
գաշն խաղաղութե՛ն 'ի միջի :

Անտի շուրջ յայց ելեալ 'ի գաւառս
գաւառս, կառոյց զքաղաքն Փսքով և
այլ ևս գեօղս և աւանս : Եւ իբրև գար-
ձաւ անդրէն 'ի Քիեւ, կամեցեալ գի-
տել ինչ զկրօնից քրիստոնէիցն գտելոց
անդանօր, յօժարեցաւ առնուլ զմկրր-
տութիւն : Սմին իրի գնաց 'ի Բիւզան-
դիոն, և մկրտեալ կոչեցաւ Հեղինէ :
Կայսրն Կոստանդին Պերսիեռուժէն
ընկալաւ զնա յաւազանէ, և մեծասպար-
գև մեծարեաց զնա և զիշխանս նո-
րա, որք առ հասարակ մկրտեցան ընդ
նմա :

Այլ ոչ կարաց Օլկա դարձուցանել
'ի քրիստոնէական հաւատս զորդի իւր
զՍվեաթոսլաւ զպատերազմասէրն և
զգոռոզ. և ինքն գշխոյն մեռաւ յամին
955. և գասեցին զնա Ռուսք 'ի կարգս
սրբոց :

ՍՎԵԱԹՈՍԼԱՒ Ե .

ԻնՔՆԻՇԽԱՆ անցեալ Սվեաթոսլաւ 'ի
գաշն հայրենի, լաւ համարեցաւ զվայ-
րագասուն կեանս որում սովորեալ էր
'ի մանկուէ՛ քան զգրգանս արքունեաց :
Վասն որոյ ցանգ 'ի բացի 'ի զէն և յաս-
պազէն վարժեալ, լոկ մսով ձիոց շա-

տանայր, և գեանախշաի բացօթեայ ննջէր :

Առաջին գործ արար յառնել պատերազմաւ 'ի վերայ խասարաց կամ խաղրաց խրիմու, որոց յաղթեալ էառ և զմայր քաղաքաց նոցա որ կոչէր Սարքէլ :

Զհետ երկուց ամաց Նիկեփորոս Փոկաս կայր ձեռն օգնականութի խընդրեաց 'ի Սվեաթոսլաւայ ընդ գէմ Բուլղարաց, որք միաբանեալ ընդ Մաճառաց ասպատակէին 'ի գաւառս Յունաց : խաղաց գնաց Սվեաթոսլաւ 'ի Բուլղարս, և էառ զքաղաք նոցա զՓերէեասլաւ, այն է Եամպօլու առ Դանուբ գետով :

Բայց անգուտտ պարասլ առեալ Փեչենեկք յարձակեցան 'ի Ռուսիա, և պաշարեցին զԲիելով : Այն ինչ յառնուէր քաղաքն, և ահա պատանի ոմն խիզախ և արի՝ հմուտ թշնամեացն բարբառոյ, այլակերպեալ զանձն իւր անց ընդ մէջ բանակի նոցա, և ընթացեալ ազգ արար 'ի գունդ մի Ռուսաց՝ որոց զօրավարին անուն էր Փուեթիչ : Աճասլարեաց նա յօգնութիւն քաղաքին, և աստի աղաղակ զօրացն և հնչումն փողոց և թմբկաց, և անտի անգրէն կրկնել պաշարելոցն զաղաղակ ցնծութեն այնպէս իմն կարծեցուցին Փեչենեկաց, եթէ ինքնին Սվեաթոսլաւ եկեալ հասեալ իցէ 'ի վերայ, վասն որոյ փախեան իւրաքանչիւր գէպ երեսաց իւրեանց :

Եւ յիրաւի յետ սակաւուց հասանէ
 և Սվեաթոսլաւ զօրու ծանու . յարձա-
 կի 'ի Թշնամիան, խորտակէ զնոսա, և
 ուխտիւ խաղաղութե՛ գուլ առնէ սա-
 տերազմին :

Այլ զի յասպահովի կացուսցէ զգա-
 ւաւս տէրութե՛ իւրոյ ընդդէմ արշա-
 ւանաց օտարաց, բաժանեաց զնոսին
 ընդ որդիս իւր . զԲիւեմ ետ Եարովու-
 քայ անգրանկին իւրում, զաշխարհն
 Տրեւրեանց՝ Օլեկայ, և զՆովկորոտ Վլա-
 տիմիրայ . իսկ անձին զԹագաւորութե՛ն
 սպահեալ զիշխանութի՛ դարձ առնէ 'ի
 Բուլղարս 'ի նոր աթոռ արքայութեան
 իւրոյ :

Սվեաթոսլաւ 'ի խաղալ իւրում ընդ-
 դէմ Փեչենեկաց՝ ընդ իւր ածեալ էր
 զամենայն զզօրս իւր . սմին իրի քաջ
 գիտացին Բուլղարք յօգուտ 'ի կիր ար-
 կանեւ զվրիպանսն . և 'ի դալ մերձենալ
 նորա 'ի Փերէեասլաւ՝ յարձակեցան
 ելին 'ի քաղաքէն և անկան 'ի վերայ
 բանակին Ռուսաց : Յանակնկալ յօր-
 հասական արկածիցն յանհնարինս մո-
 լեգնեալ Ռուսաց՝ ընդդէմ կացին յու-
 սահատաբար, մինչև սարտասեալ Բուլ-
 զարաց՝ լքին զղէնան և զքաղաքն 'ի
 ձեռս Սվեաթոսլաւայ, և նա երկրորդ
 անգամ տիրեաց քաղաքին :

Բայց ոչ այս միտք էին կայսերն 'ի
 հրաւիրելն անդ զՍվեաթոսլաւ 'ի Բուլ-
 զարս, այլ զի սպատերազմ՝ ևեթ տացէ

նա 'ի կողմանէ Յունաց . վասն որոյ դէս պան առաքեալ յուշ առնէր նմա զպայման գաշանցն , և ասէր մեկնել յաշխարհէն : Ետ պատասխանի յոխորտս Սվեաթոսլաւ . “ Եթէ այլ ևս սնդէսցի ասէ կայսրդ , 'ի Բիւզանդիոն եկից ևս տալ նմա պատասխանի ” :

Աճապարեցին կանխեցին Ռուբրքան զՅոյնա 'ի պատերազմ , և ահագին բազմութիւն զօրաց , ըստ ոմանց երէքհարիւր հազարաւ , մխեցան 'ի Թրակիա , և հարեալ զամենայն 'ի հուր և 'ի սուր եկին և զակիշ ածեալ բանակեցան հանդէս Ագրիանուպօլսոյ :

Եւ էր անդ յայնժամ քաղաքապետ Վարդ կամ Վարդան ոմն (Թերևս հայկկազն) այր նրբամիտ և ճարտար 'ի հնարս պատերազմի . որոյ կեղծեալ թէ յանհրնարս է քաղաքն և մերձ է անձնատուր լինել՝ այնպէս պատրեաց զՌուսս , զի շատ համարեալ նց զմասն ինչ բանակին թողուլ առ պարսպօքն , ինքեանք յապատակ սխուեցան շուրջ ընդ գաւառսն :

Յայնժամ անհնարին սաստկութիւն ելեալ յարձակեցաւ Վարդ , կոտորեաց զպաշարիչսն , և կալաւ զբանակետոն . և Ռուբր հազիւ անձնապուր եղեալ անկան 'ի Բուլղարս :

Ի դալ ամին միւսոյ ինքնին կայսրն Չմէկիկ հայկազն ել 'ի վերայ նոցա , և էտա զՊերէեասլաւ և զայլ քաղաքս : Իսկ Սվեաթոսլաւ և հան զվրէժ քինուն

'ի Բուլղարաց անտի , խողխողեալ անխնայ՝ զորոց միանգամ կալաւ կասկած մասնութէ :

Տուրութոլ միայն քաղաք մնացեալ էր առ Դանուբաւ 'ի ձեռս Ռուսաց . զոր պաշարեալ Յունաց ընդ ծով և ընդ ցամաք , արկին սով սաստիկ 'ի քաղաքն : Վասն որոյ Սվեաթոսլաւ յուսահատեալ ել արտաքս ամենայն ամբօխիւն հանդերձ , և ետ աղխել 'ի Թիկանց կուսէ զգրուենն , զի կամ յաղթեսցեն Ռուսք , և կամ 'ի սուր մասնեցին :

Անդ ճակատ յարդարեալ Յունաց ընդդէմ Ռուսաց խառնեցան 'ի պատերազմ . և եղև մարտ սաստիկ յերկուց կողմանց անպարտելի , մինչև հուսկ ուրեմն յաղթանակեցին Յոյնք , և Սվեաթոսլաւ խնդրեաց զհաշտութի : Զիջաւ և կայսրն , և հաստատեցաւ 'ի միջի ուխտ սիրոյ և միաբանութի :

Ասի բան թէ Յոյնք 'ի կողոպտել զղիակունս Ռուսաց , գտին զի և կանայք բազումք էին 'ի զօրս անդ առնացի սպառազինեալք :

Ընտրեաց Սվեաթոսլաւ ընդ Բորիսթենէս առնել զգարձ իւր 'ի Ռուսիա , քան ընդ ցամաք՝ որպէս խրատ տայր նմա սպարապետն Սվենալտ . և հասեալ յառաջին ջրվէժս գետոյն , իբրև ետես զի Փեչենեկաց կալեալ պաշարեալ էր զտեղիսն , հարկեցաւ ձմերել անդէն :

Այլ 'ի սովորեկ լինել ամբօխին իւ-

ըոյ օր ըստ օրէ, խիզախեաց հատանել
անցանել զճամբարս թշնամեացն. բայց
'ի բազմութի նոցին անճողոպրելի մնա-
ցեալ կորոյս զմեծ մասն բանակին իւ-
րոյ. անկաւ և ինքն ամաց քաւաս-
նից, թագաւորեալ ամս քսան և եօթն.
և մեծ իշխանն Փեչէնեկաց առեալ ըզ-
գանկն Սվէնալտայ՝ նովաւ ըմպէր
զգինի, որպէս ասեն: Սվէնալտ և եթ
սակաւուք ոմամբք անկաւ 'ի Քիւմ-
տալ Եարոփուքայ զուր աղետից հօրն:

ԵԱՐՈՓՈԼԻ Ա.

ԵԱՐՈՓՈԼԻ յողջողջ 'ի բարս և կնա-
մարդի՝ 'ի Սվէնալտ և եթ յեց կայր 'ի
զօրավարն և 'ի խորհրդականն քաջ. այլ
և նա ոչ սակաւ խռովութի եղև պատ-
ճառք յարքունիսն:

Քանզի յաւուր միում գիպեալ որ-
դին Սվէնալտայ որոյ աղագաւ յան-
տառս ուրեք Տրեւլեանց, իբրև ետես
զնա յերկրի իւրում Օլեկ եղբայրն Եա-
րոփուքայ, որ նոյնպէս յորս ելեալ էր,
ցասեալ ը գործ պատանւոյն՝ յանդըզ-
նութի և արհամարհանս գրեալ նմին
զի իւրում երկրին յորս հեծանէր. և
ոչ ինչ ունկն մատուցեալ աղերսի ասլա-
բանութեն՝ յարձակեցաւ ինքնին 'ի վե-
րայ և խողխողեաց զնա:

Յայնժամ Սվենալտ 'ի վրէժ սպանութեան որդւոյն գրգռեալ յարուցանէ զԵարոփուք 'ի մարտ ընդգէմ եղբօրն: Եւ Օլէկ 'ի սարտութի մատնեալ 'ի փախչել անդ իւրում ընդ կամուրջ գետոյն՝ առ խուռն խուժանի փախատելից վիժեալ անկանի 'ի գետ անդր և անհետանայ:

Անագան ուրեմն յապաշաւ նստեալ Եարոփուք խնդրէր զեղբայրն, աւաղէր զանձն, և սրանջէր զՍվենալտայ, այլ 'ի զուր. յարեաւ գրաւեաց և զեղբօրն իւրոյ զբաժին, և վաղվաղակի մխիթարեցաւ 'ի վերայ մահու նորին:

Վլաախմիր միւս եղբայրն Եարոփուքայ յեղէլոցն ինքնին գուշակ եղև և զիւրոյ բախտէն, և ոչ ապաւինեալ 'ի սակաւաձեռն զօրս իւր, գնաց անկաւ առ Վարեական. և Եարոփուք աճարարեաց էառ և զնորա զերկիրն լքեալ, և բաժանեաց 'ի կուսակիցս իւր:

Բայց Վլաախմիր հանգերձ Վարեկօքն գայ մտանէ անընդդիմակ անդրէն 'ի Նովկորոտ, և ազգ առնէ Եարոփուքայ ըղգալուստ իւր առ նա յողջոյն զօրու ծանու:

Էր յայնժամ խորհրդակից մտերիմ Եարոփուքայ շողումարար ոմն Պլուտ առնուն. սա կաշառեալ 'ի Վլաախմիրայ՝ յանհոգս առնէր զԵարոփուք, մինչև եկն եհաս Վլաախմիր 'ի Քիեվ: Եարոփուք 'ի գրգռելոյ Պլուտայ սպան նախ

ղարխադոյնս 'ի զօրավարաց իւրոց իբրև ձեռնատուս 'ի Թշնամիս անդր , և ապա երկուցեալ Թէ իւրքն մասնեւ ունին զնա 'ի ձեռս Վլատիմիրայ , որպէս կեղծէր Պլուտ , գաղտադնաց եղև 'ի քաղաքէն . և Քիեւլացիք անթագաւորմնացեալ՝ բացին զգրուենս քաղաքին և ընկալան զՎլատիմիր 'ի Թագաւոր :

Սակայն նորա այնու ոչ շատացեալ հետամուտ եղև Եարովիտքայ . և անօրէնն Պլուտ 'ի լուումն դաւաճանուԹէ իւրոյ հաւանեցոյց զեղկելին Եարովիտք անձնատուր լինել 'ի ձեռս եղբօրն , և նա արար այնպէս , այլ անդէն առ թաս Վլատիմիրայ խողտոյեցաւ սրով :

Զաւուրս երիս մեծարեալ Վլատիմիրայ զՊլուտ , ապա ասէ ցնա . “ Լցի ըզխոստումն իմ՝ առ քեզ , վարեցեալ ընդ քեզ ցարդ իբրև զբարեկամ . Ժամ է իբրև զգատաւոր արդար սխտուհասել ըզաիրասպանդ դաւաճան , : Եւ անդէն հրաման ետ սպանանել զՊլուտ :

ՎԼԱՏԻՄԻՐ Ա .

ՎԼԱՏԻՄԻՐ զերծ մնացեալ 'ի Թշնամեաց շուրջանակի , ետ զանձն 'ի գրդանս հեշտուԹէ : Ապա 'ի սահանջել Վարեկայ 'ի նմանէ 'ի վարձ ածելոյ իւրեանց զնա 'ի Քիեւլ զհարկ ինչ տա .

րեկան, 'ի վերին երեսս խոստացաւ հատուցանել նոցա զհարկ 'ի սահմանեալ ժամու, և գամ քան զգամ ստուարացուցեալ զզօրս իւր, այնպէս իմն ահարկու եղև Վարեկաց, զի լուեալ նոցա 'ի սահանջանացն՝ խնդրեցին հրաման 'ի նմանէ երթալ 'ի Յունաստան 'ի խնդիր բախախ: Եւ նորա տուեալ զհրամանն, առ նմին և գրով ազգ առնէր կայսեր և աղաչէր խորտակել զնոսա:

Նուաճեաց ապա զվտարանջեալն յինքենէ ժողովուրդս, 'ի սարտուի մատնեաց և զլէհս որոց թագաւորէր յայն՝ ժամ Մսթիալաւ Ա. և ընդ հարկաւ արար զԵաթվիկս բնակեալս առ Պոկ գետով, և զհատուածս Բուլղարացն խազանու:

Վասն այսր ամենայնի յաջողութեց կամեցեալ շնորհս մատուցանել զից, նախ զոհեաց նոցա զմարդագերին զոր ածէր 'ի սրտերազմէն: Եւ 'ի բարբանջել քրմացն թէ արժան իցէ ազգային իմն մատուցանել մարդազոհ, անկաւ վիճակն Վարեկի ումեմն որդւոյ առն քրիստոնէի. և յընդգէմ կալ հօրն՝ անդէն ընդ որդւոյն խողխողէր առ ոսս գիււաշունչ կռոյն:

Այնչափ յաղթանակօքն և ահարկու զօրութիւն ցանկալի եղեալ բարեկամութի Վլատիմիրայ բազմաց 'ի թագաւորաց, դեսպանք ամենայն ուստեք արձակէին առ նա՝ և յորդոր լինէին նմա

դառնալ ընդունել զԻւրեանց կրօնս :
Այսպէս արարին և Թագաւորք արև-
մտից , և կայսերք Յունաց : Բուլղարք ա-
ռաջի դնէին զդէնն մահմետական , և
Հրեայք Խրիմու զմովսիսական օրէնս :

Այլ ճոխագոյն 'ի խռան անդ դես-
պանաց երևեցաւ մետրասպօլիան Յու-
նաց առաքեալ 'ի պատրիարգէն Կոս-
տանդնուպօլսոյ՝ որ միաբան էր յայն-
ժամ ընդ եկեղեցւոյն Լատինացւոց : Սա
Թէ և ոչ հաւանեցոյց զԹագաւորն , սա-
կայն դրաւեաց զբարեկամութի նորա ,
և մեծապարգև դարձ արար 'ի Բիւզան-
դիոն :

Վլատիմիր հաստատեալ զմիտս իւր
յընարել զաւն 'ի կրօնից անտի առաջ-
արկելոց , արձակեաց ասէն 'ի սոյն ա-
ղագա ընտրանաւ արս տասն : Որոց հա-
սեալ նախ առ Բուլղարսն մահմետա-
կանս , ոչինչ հաճեցան ընդ օրէնս նո-
ցա : Ոչ գտին և յանշուք եկեղեցիս
Գերմանիոյ մեծավայելուչ հանդէսս ա-
րարողութեց , որպէս կարծէին : Այլ
'ի տեսիլ հոյակաս տաճարի սրբոյն Սո-
փիայ 'ի Կոստանդնուպօլիս՝ և որ 'ի
նմա պերճ հանդիսիցն յապուշ հարեալ ,
գոչեցին . « Այս էն ճշմարիտ կրօնք որ
այսպիսեաւ մեծվայելուի քարոզին » :

Զոր և 'ի դառնալ իւրեանց առ Վլա-
տիմիր մանրասրտութի արարեալ՝ աղեր-
սէին զնա անդրէն առաքել զլինքեանս 'ի
Թագաւորեալ քաղաքն : Եւ 'ի յաւե-

լուր աւագանւոյն Վլատիմիրայ, « Եւ թէ չէին ազնուագոյն կրօնք Յունաց՝ ոչ արդեօք յանձն առնոյր զայն մեծախոհն Օղլիա », եղ 'ի մօրի Վլատիմիր քրիստոնէայ լինել: Եւ եղանակ դարձին նոր իմն և արդարև խժական:

Քանզի բանակ կազմեալ խաղայ գընայ 'ի խրիմ, և սաշարէ յանկարծ զՔերսոն քաղաք, կամ ըստ այլոց զԹէոդոսիա, այն է Քէֆէ կամ կաֆա. կամեցեալ իմն զինու բռնուք զհաւասան ածել 'ի ձեռս. այսինքն զի գերեցեցէ երիցունս քրիստոնէայս, յորոց առնուցու զմկրտութի. զսոյն և առ Աստուած ազօթս, ասէն, ուխտիւք մատուցանէր:

Ընդ ամիսս վեց անհարին կոտորած հասուցեալ 'ի վերայ սաշարեւոյն՝ կորոյս և յիւրոցն ամբոխ բազում. և այն ինչ հանգերձեալ էր ձեռնթամի լինել 'ի գործոյն՝ ըստ բախտի լեալ ընկալաւ նեւս մի յանձանօթ ձեռաց արձակեալ 'ի բանակ իւր, զորով գալարեալ թուղթ այսպիսի, թէ ակն ջրոյ քաղաքիս հուսէ 'ի բանակ այդր քո. զոր էթէ խնուցուս, քո է քաղաքս: Եւ նորա անդէն հետազօտեալ գտանէ զաղբիւրն, և խանդարեալ զջրանոցն, առնու զքաղաքն: Այսպէս ապա տէր լեալ քաղաքին, և խրիմու ողջոյն, ոչ ևս կարօտանայր քահանայից զի մկրտիցի 'ի նոցանէ:

Այլ այն չէ շատ. կամեցեալ և յազգակցութի մտանել ընդ կայսերաց, ա-

աւքեալ խնդրէ իւր 'ի կնուծի զքոյր
կայսերացն Վասլի և Կոստանդնի . ապա
ծէ ոչ, ասէ, ակն կալցի և Բիւզանդիոն
անցիցն Քերսոնի : Ի վարանս մտեալ
կայսերացն՝ պատասխանի առնեն ծէ
նախ առաջին հարկ է նմա քրիստոնեայ
լինել . այլ 'ի սնդեղ հորա՝ անճարա-
ցեալք առաքեն զքոյրն իւրեանց :

Յայնժամ գազանն այն գառն ե-
ղեալ հեզ, կրթի 'ի հաւատս քրիստո-
նէութի . և մկրտեալ հանդերձ երկո-
տասան որդւովք իւրովք՝ կոչի Վասիլ .
ամուսնանայ ընդ դչխոյին . 'ի բաց թո-
ղու զգաւառսն հատեալս, և դարձ առ-
նէ յերկիր իւր յաղթական աւարաւ
նք սպասուց, գրովք եկեղեցական սաչ-
տամանց, սպտկերօք և նշխարօք ոսկե-
րաց սրբոց՝ և խուռն բազմութի վար-
դապետաց և պաշտօնէից :

Վլատիմիր՝ անհամբոյր և վայրենամիտ
երբէմն 'ի հեթանոսութի, քրիստոնեայ
լեալ՝ այնչափ հեղահամբոյր եղև և զգօն,
զի քան զամենայն հպատակս իւր մեղա-
սրարտ զանձն համարեալ, զաւազակս և
զյապիշտակօղս անգամ չառնոյր յանձն
սպտուհասել . « Ո՞ իցեմ՝ ես, ասէր,
առ 'ի մահ տալ զմարդիկ », . և յղեր
զնոսա առ մետրապօլիտն Քիեվայ Սիր
անուռն այր արդարակորով և առաքինի,
զի գատ արասցէ նոցա :

Սյլ և ըստ չափու նախկին կռամո-
լութեն՝ նմին հակառակ յատելութիւն

վառեալ ընդդէմ կռոցն , ընդ ամենայն տեղիս կործանէր զբաղինս նոցա , և խորտակէր զպատկերսն , և զՖեռուհի զգիցահօր Ռուսաց զառնապատկերն կապեալ յադի ձիոյ՝ ետ դանակոծ քարշէլ ընկենուլ մինչև 'ի Տնեբեր գետ :

Ապա և համօրէն Քիեվացիք զհետ երթեալ օրինակի իշխանին իւրեանց , 'ի ժամագրեալ աւուր ժողովեցան յափն դետոյն՝ և մկրտեցան . « Զի թէ ոչ բարի ինչ էր ասեն՝ բանդ , ոչ արդեօք անէին զայն թագաւորն և աւագանին » :

Պատուիրեաց ևս Վլատիմիր , որպէս ասեն , զի որ ոք սնդեացի դեռ ևս 'ի գիցապաշտ կրօնսն , թշնամի ծանիցի Քրիստոսի , և թագաւորին . այլ ըստ խրատու մետրապօլաին չափ եդ նախանձաւորու թէն :

Յայնմհետէ ոչ ևս ասպատակեաց նա յաշխարհս օտարաց , այլ իւրումն շատ համարեցաւ զգուշանալ . և 'ի յառնել 'ի վերայ նորա Ֆեչենեկաց և այլոց խուժից , խաղաց ընդդէմ՝ նոցա ահագին բազմութիւն զօրաց :

Մինչդեռ ճակատ առ ճակատ բանակեալ կային երկօքին կողմանքն , դեսպան 'ի թշնամեաց հասեալ առ Վլատիմիր՝ հաւանեցուցանէր զնա մենամարտութիւն երկուց շահատակաց երկուստեք վճարել զպատերազմն , սրայմանաւ՝ զի կողմն սրարտելոյն ընդ ամս ե

ընա մի իշխեսցէ զէն առնուլ ընդդէմ
միւսոյ կողմանն :

Այլ 'ի վարանել Վլատիմիրայ թէ
զո՞ յիւրոցն յառաջ կոչեսցէ , եկն անց
'ի մէջ հինաւուրց ոմն զօրական , որոյ
որդիք չորք էին ընդ նմա 'ի բանակին ,
և դովեաց զզօրութիւն հինգերորդին :
Ածին զպատանեակն , և առ 'ի փորձ ու-
ժոյ և յաջողութե նորա կատաղեցու-
ցին հրաշէկ երկաթովք զցուլ վիթխա-
րի , և ախոյեանն յարձակեալ ընդ ա-
ռաջ՝ և կալեալ զեղջերացն՝ առ ետեղ
արձանացոյց զցուլն , և անդէն զգետնեալ
յօշ յօշ պատառեաց : Ապա դիմեալ 'ի
ճակատ խրոխտ ախոյենին , զյափշտա-
կելն՝ զզգետնելն և զգլխատելն մի առ-
նէր :

Յայնժամ յաճապարել թշնամեացն
'ի փախուստ՝ Ռուսք սնդեցան զհետ ,
և հարուածս սաստիկս հասուցին 'ի վե-
րայ նոցա . և զի փերեսլաւ անուն էր
յաղթականին , Վլատիմիր 'ի տեղոջ
անդ քաղաք կառոյց նմին համանուն :

Զհետ երկոց ամաց եկեալ պաշարե-
ցին Փեչենեկքն զքաղաք մի . դնաց
Վլատիմիր 'ի վերայ նոցա , այլ ձախող
եղից դիպեալ , և վերս ևս առեալ , հա-
լիւ զերծաւ թագուցեալ ընդ կամփջաւ
ուրեք :

Անտի և յառաջ թշուառութիւնք 'ի
թշուառութիւն յաւելան նմա . զի թո՞ղ
զմահ սիրեցէլոյն 'ի մէջ յորդուոյ իւրոց ,

և զմահ՝ Աննայի կնոջ իւրոյ , այլ և մի յորդւոց իւրոց ասպտամբէաց 'ի նըմանէ :

Քանզի 'ի տասանց որդւոցն մնացելոց զՊորիս ընտրեալ իւր 'ի յաջորդ՝ ետ 'ի նա զիշխանութի Ռոսթոկայ , և անուանեաց զնա Իշխան մեծ , որ հասարակաց անուէն էր թագաւորացն Ռուսաց . Եարուսլաւայ ետ զՆովկորոտ , Վլէպայ զՎոլոտիմիր , Սվէաթոսլաւայ զաշխարհն Տրեւլէանց , Մսթիսլաւայ զԹէմրուք , և զայլս այլոց : Բայց Եարուսլաւ ամրացեալ յիշխանութե իւրում՝ Ժխտեաց զսակ հարկին , զոր հարկէր հօր իւրում , և թիկունս ևս խնդրեաց 'ի Վարեկաց առ 'ի զգէմ ունել Վլասիմիրայ : Եւ նորա ակամայ կամօք ելեալ ընդգէմ որդւոցն , զճանապարհայն մեռանի առ ցաւս սրտին , թագաւորեալ ամս քառասուն և հինգ :

Սա բազմապատիկ արգասեօք ճոխացոյց զպետունի իւր . զբազում վայրս անբերս ետ 'ի մշակունի , հիմնեաց քաղաքս , կարգեաց դպրոցս , ծաղկեցոյց զարուեստս՝ ամեալ ճարտարապետս և արուեստագէտս 'ի Յունաց աշխարհէն : Հաստատեաց եղ և վեց գլուխս կանոնաց վասն եկեղեցականաց ազգին . յորս որոշեալ սահմանեաց զեկեղեցական և զաշխարհական իրաւունս , զտասանորդս և զհասս առաջնորդաց , զպէտս և ըզխնամ որբոց և այրեաց և զաղքատաց

և զհիւանդաց : Եւ վասն այսր ամենայնի քաջալաւութեցն Մեծ կոչեցաւ . և եկեղեցին Ռուսաց կարգեաց զնա 'ի թիւս սրբոց :

ՍՎԵՅԹՈՓՈԼԻ Ա .

ՊՈՐԻՍ արժանաւոր ժառանգ թագաւորութե մեծին Վլատիմիրայ 'ի բանակին էր ընդդէմ՝ փեչենեկաց՝ յորժամ մեռաւ Վլատիմիր : Նմին իրի դէպ ժամանակ գտեալ Սվեաթոփոլք որդի Եարոփոլքայ որ ցայնժամ ակն եղեալ մնայր 'ի Քիեվ մեռանելոյ հօրեղբօրն իւրոյ , անց նստաւ յաթոռ նորա , և արձակեաց զովմանս 'ի դաւաւկցացն սպանանել զՊորիս , որոց անյստպաղ երթեալ 'ի բանակ նորին , և մտեալ 'ի խորանն՝ անդէն խողխողեցին զնա և զսենեկապետ նորա ընդ նմին :

Ապա զհետ եղեալ դաւաճանն 'ի բառնալ և զայլ եղբարս նորին , հոգացաւ 'ի ծածուկ պահել 'ի Վլեսլայ զմահ հօրն , և դեսպան յանուն նորա առաքեալ ազդ առնէր՝ իբրու թէ խօթ է հայրն 'ի Քիեվ և 'ի վտանգ մահու , և զյետին ողջոյնն կամի տալ նմա :

Աճապարեաց Վլեսլ առ դուժ ծնողին . և զճանապարհայն ըստ ոչ բաղդի անկեալ յերթվարէն՝ ջաղխեցաւ մին 'ի

բարձից նորա : Սակայն անձկացեալ 'ի տեսանել զհայրն՝ եմուտ 'ի նաւ , և եհաս մինչև 'ի Սմոլենսք . ուր այն ինչ 'ի քեռէն իւրմէ իրազգած լինէր մահուհօրն և եղբօր , հասին 'ի վերայ անօրէն դաւակիցքն Սվեաթօփօլքայ , և խողխողեցին զՎլէս :

Ի լուր սղեալիցն գուժելոց շուրջանակի , զգացեալ Սվեաթօսլաւայ իշխանին Տրեւեանց՝ եթէ և անձն իւր 'ի վտանգի կայր , վուժացաւ անկանել առ Անդրէաս արքայն Մաճառաց , զորոյ զքոյրն ունէր 'ի կնուծէ : Այլ արբանեակքն Սվեաթօփօլքայ զհեռ սլնդեալ հասին նմա 'ի սահմանս աշխարհին Մաճառաց , և աւին զգլուխն 'ի նմանէ :

Մինչդեռ Սվեաթօփօլք յայս ոճիրս գեգերէր , Եարոսլաւ անգէս մահուհօրն , նա և միաբանեալ ընդ իւր զՎարեակս՝ գայր 'ի վերայ նորա : Եհաս մինչև 'ի Նովկորոտ . և այն ինչ արիւնը ուշտ կոտորածս առնէր 'ի քաղաքացիս անգր , և յիւրոցն ևս զբազումս կորուսանէր , էառ զգոյժ մահուհօրն և զեղբարց իւրոց : Եւ հզօր սերձախօսուծիք իւրով խաղաղեալ զՆովկորոտացիս , յարձակեցաւ նոքօք հանդերձ 'ի Քիւիվ . որում ոչ կարացեալ զգէմ ունել Սվեաթօփօլք՝ կորոյս զբանակ իւր , և ինքն անկաւ առ Պոլէսլաւ արքայ լեհաց առ աներն իւր : Եւ յաղթականն

Եարոսլաւ եկն եմուտ խաղաղութի ՚ի
Քիւիւ :

Պոլէսլաւ ոչ այնչափ առ դուժ փե-
սային՝ քան ՚ի վրէժիսնդիր լինել չա-
րեացն զորս անցուցեալ էր Ռուսաց ընդ
Լէհս առ ժամանակօքն Վլատիմիրայ՝
խաղաց ընդ Սվեաթոփոլքայ ՚ի վերայ
Եարոսլաւայ : Եւ ՚ի ճակատել բանա-
կացն երկուսանք Պոկ գետոյ , մի ոմն ՚ի
զորագլխոց անախ Եարոսլաւայ կայր և
ծաղրէր ասէն զքաղրթեղ թանձրամու-
թի արքային Լէհաց . վասն որոյ և նա
ձայն տուեալ իւրոցն անդէն ՚ի լող ան-
կանէր . փողեցան և իւրքն զկնի , և ան-
կեալ ՚ի վերայ Ռուսաց՝ ցիր և ցան կա-
ցուցին զբանակ նոցա . և Եարոսլաւ
հաղիւ զդէմ կալեալ Լէհաց առ վայր
մի մնացելովք զօրօքն , ապա և ինքն
մաղապուր զերծաւ երիւք ոմամքք ըս-
պայիւք : Իսկ Պոլէսլաւ ձիգ զհետ
մտեալ փախստէիցն , և աւարեալ զամե-
նայն զճանապարհայն , եկն սաշարեաց
զՔիւիւ , և սով արկեալ էառ զքա-
ղաքն . կողոպտեաց զտուն գանձի թա-
գաւորացն Ռուսաց , և հաստատեալ
յաթուռն զՍվեաթոփոլք՝ մեկնեցաւ
յաշխարհ իւր , և զԿարմիրն անուանեալ
Ռուսիա եհատ միացոյց ընդ Լէհաստա-
նեայց :

Եարոսլաւ զհետ խորտակմանն իւրոյ
ապաստանեալ էր ՚ի Նովկորոտ , և կա-
մէր առ Վարեակս անդր անցանել . այլ

արգահատեցին նմա Նովկորոտացիք , և հուր հարեալ 'ի նաւակսն՝ որովք հանգերձեալ էր փախչել , խոստացան ձեռն տու օգնական լինել նմա արծաթով և զօրօք : Եւ նորա նօքօք զթիկունսն հաստ արարեալ՝ խաղաց գնաց 'ի Քիեւ , և անխափան եմուտ անդր :

Զի Սվեաթոփոլք անգէն ընդ լուր գալստեանն Եարոսլաւայ աճապարեալ գիմեալ էր առ Փեչենեկսն թշնամիս Ռուսաց . որոց կարգեալ զնա իւրեանց 'ի զօրավար՝ յարձակեցան 'ի վերայ Քիեւ վայ : Եւ եղև սրատերազմ՝ սաստիկ զերիս աւուրս , որպէս ասէն , անպարտելի քաջութիւն . այլ հուսկ ուրեմն յալթանակեաց Եարոսլաւ . և հայրանենգն Սվեաթոփոլք առ անհնարին տագնաու աղետիցն ցնորեալ 'ի մտաց մեռաւ չարաչար 'ի կատաղութիւն իւրում՝ գոչելով թէ խոցեցին զնա , ուր չէր ոք որ խոցէր զնա : Եւ թագաւորեաց ամ մի և եթ :





ԵՍՐՈՍԼԱՒ Ա .

Այս լեալ զարմանալի ըստ արիու-
թեն միանգամայն և ըստ մարդասէր բա-
րուց , ընթերցասէր և իմաստասէր , ու-
շեղ և խոհական , վաղ անյիշատակ ա-
րար զառաջին զվրիպակ յանցանացն , և
սիրելի գտաւ իւրոցն և օտարաց :

Ի հրկէղ լինել յանկարծակի քաղա-
քին Քիեվայ՝ անգրէն շինեաց զայն մեծ
քան զառաջինն . և երախտագէտ մտօք
բազում սարգևս և առանձին շնորհս
սարգևեաց ետ՝ Նովկորոտացւոց . և կար-
գեաց նոցա օրէնս իմաստունս , քան
զորս կանխաւ չէր լեալ Ռուսաց օրէնք
գրաւոր :

Մի ոմն յազգականաց իւրոց իշխան
Փոլոցքայ , ոգւով փառամոլ ագահու-
թեն յարձակեցաւ յաւարի էսա զՆով-
կորոտ , և բազում գերիս աղխաղխեալ
տանէր յաւագաց քաղաքին : Իբրև
ազգ եղև Եարոսլաւայ՝ գիմեաց ՚ի վերայ
նորս ստուար գնդաւ . և հասեալ նմա
զճանապարհայն՝ թափեաց զամենայն

զաւարն և զգերին : Եւ առաքինաբար ներուին շնորհեալ անխոհեմութե երկ տասարդին , յաւել սարգիւեաց նմա և երկուս քաղաքս . և ոչ միայն նուաճեաց զաստատմբն , այլ և յինքն յանկոյց անմեկնելի սիրով :

Սակայն զհեա ամաց ինչ և որդի նորին իշխանի Ուչեսլաւ 'ի նոյնօրինակ աւազակութիւն յանդգնեալ՝ արկաւ 'ի բանտ հրամանաւ Իսիասլաւայ արքայի որդւոյ Եարոսլաւայ :

Այլ և եղբայրն Եարոսլաւայ Մսթիսլաւ իշխան Թէմրուքայ վտահացեալ 'ի զօրութիւն վտարանջեաց 'ի նմանէ , և դիմեաց 'ի Քիւիվ . բայց ուժգին վանեալ 'ի Ռուսաց՝ անկաւ 'ի Չէրնիկով քաղաք , և տիրեաց նմին :

Եւ 'ի խաղալ Եարոսլաւայ 'ի վերայ նորա , Մսթիսլաւ օգնական իւր գտեալ զգիշեր մի անձրեայոյդ՝ անկաւ 'ի վերայ բանակին Եարոսլաւայ և ցրուեաց , և ինքն ապաստան եղև առ Պոլեսլաւ արքայ Լէհաց : Անոր դիմեաց Եարոսլաւ , և խառնեցան ճակատքն երկոքեան առ Պոկ գետով . և Պոլեսլաւ յաղթող եղեալ Ռուսաց՝ ընդ հարկաւ արար զնոսա , բայց զգերինն շնորհեաց Եարոսլաւայ : Յայնմ հետէ մինչև ցվախճան Պոլեսլաւայ խաղաղութիւն էր Եարոսլաւ ընդ Լէհս :

Հաշտեցաւ և ընդ եղբոր իւրոյ Մլոսթիսլաւայ , և սարգիւեաց նմա 'ի բա-

Ժին զարևելեան և զհարաւային մասն
Ռուսիոյ մինչև ցՄէովաիա ծովակ , եր-
կիր ընդարձակ , այլ անկոխ և ամայի :
Սակայն Մսթիսլաւ ոչ ընդերկար վայե-
լեալ 'ի պարգևսն՝ մեռաւ անորդի , և
զամենայնն եթող կտակաւ Եարոսլա-
ւայ :

Վաղագոյն քան զնա մեռաւ Պոլե-
սլաւ , և կալաւ զաթոռն Մեցիսլաւ որ-
գի նորա խորթացեալ ամենեկին 'ի բա-
րուց և 'ի քաջութիւն հօրն . որ և անկաւ
ևս 'ի մտայ . և վարէր զթագաւորուին
կին ոմն ամբարտաւան , ուղիք և շուայտոտ
Ռիքսա անուն : Չայս պատեհ գտեալ
Եարոսլաւայ՝ առ ընդ իւր և զՄսթի-
սլաւ , և խաղաց 'ի վերայ Լէհաց , զբա-
զումս կոտորեաց , և զայլս բազումս 'ի
գերութի վարեաց , և զկարմիր Ռուսիա
անգրէն յինքն նուաճեաց :

Յետ ոչ բազմաց 'ի յաճախել գժտու-
թեց 'ի մէջ վաճառականացն Ռուսաց
և Յունաց ընդգէմ դաշանցն առաջնոց ,
առաքեաց Եարոսլաւ դեսպանս զոք 'ի
Կոստանդնուպօլիս 'ի դարման իրացն .
այլ դեսպանն սպանաւ յուզուջ . և
Եարոսլաւ լի սրամտութիւն ետ 'ի ձեռս
որդւոյ իւրոյ Վլատիմիրայ իշխանին Նով-
կորոտայ զօրականս , որպէս ասեն , հա-
րիւր հազար , և արձակեաց 'ի վերայ
Յունաց :

Կոստանդին Մոնոմախ կայսր չև ևս
ստրասդ առեալ 'ի պատերազմացն Բուլ-

զարաց, հրեշտակս առաքեաց և աղա-
 չէր զԵարոսլաւ 'ի խաղաղութի. այլ 'ի
 մերժել նորա զդեսպանսն՝ խմբեցաւ
 նաւամարտն մօտ 'ի նեղուցս Բիւզան-
 դիոյ: Եւ ոչ կարացին Ռուսք զգէմու-
 նել հրձգութեցն Յունաց. յոր յաւե-
 լեալ և մրրիկ ահագին՝ ցրուեաց և խոր-
 տակեաց զբազումս 'ի նաւակացն Ռու-
 սաց. և զերծեալքն 'ի նոցանէ 'ի ցա-
 մաք անդր՝ յանխնայ կոտորեցան 'ի հե-
 ծեւադնդէն Յունաց, որք զծովէզն
 ունէին:

Ի ցածնուլ մրրիկն արձակեաց Կոս-
 տանդին 'ի վերայ մնացելոցն Ռուսաց
 այլ ևս քսան և չորս նաւս մեծամեծս.
 և սորա յուսահատեալք 'ի կենաց՝ ան-
 հնարին երազուք յարձակեցան կատա-
 ղաբար 'ի նաւս անդր Յունաց, զումանս
 հարին խորտակեցին, և զումանս կալան
 'ի գերութի, յորոց 'ի միումն էր և զօ-
 րապետ նաւատորմին Յունաց:

Ալատիմիր սակաւիկ մի ոգի էստ 'ի
 յաջողուածոյն. այլ այն փոքր ինչ էր
 առ նախկին կոտորածիւն. և նոքին իսկ
 ապրեալքն 'ի փախչել անդ ընդ ցամաք
 յաշխարհ իւրեանց՝ ըստ մեծի մասին
 կոտորեցան 'ի Յունաց, և գերեցան:

Եարոսլաւ կենցաղօգուտ գործուք
 ավտփեաց զլնասս աշխարհին իւրոյ:
 Տարածեաց և ևս 'ի տերութի իւրում
 զբրիստոսական հաւատս, և ժողովեալ
 արս հմուտս՝ էտ յեղուլ 'ի յոյն բար-

բառոյ 'ի Սլաւեանցն զմծաշուհն գիրս
'ի Թարգմանութենէ եօթանասնից . և
զբնագիրն եղեալ յեկեղեցոջ սրբոյն
Սոփիայ , զոր իւր իսկ շինեալ էր 'ի
Քիեւ և զարգարեալ մեծաշուք վայել
չութիք , հրամայեաց փոխադրել զմա-
տեանսն և բազմացուցանել : Ետ Թարգ-
մանել և զայլ ևս գիրս պիտանիս , կա-
ռոյց զբազում եկեղեցիս , և հաստա-
տեաց դպրոց 'ի դաստիարակունի ազա-
որդւոցն Քիեւլայ ընդ ձեռամբ եկեղե-
ցական անձանց :

Վասն այսր ամենայնի բարելաւու-
թեցն առաւել ևս սիրելի եղեալ Ռու-
սաց , ոչինչ նուազ ցանկալի եղև բարե-
կամութի նորա և ազգաց հեռաւորաց .
սակս որոյ և խնամութիք եղեն ընդ մէջ
տան իւրոյ և Թագաւորացն Շվետաց ,
Լեհաց , Անգղիացւոց և Գաղղիացւոց :

Ապա լեալ ամաց վաթսուն և վեցից ,
և բաժանեալ զերկիր պետութի իւրոյ
յորդիս իւր , աղերսիւ պատուիրեաց նո-
ցա՝ հնազանդ լինել Իսխասլուայ ան-
դրանկին իւրում իբրև աթոռաժառանգ
փոխանորդի իւրոյ , և մեռաւ յամին
1053 , Թագաւորեալ ամս երեսուն և
ութ :

Ընդ մարդասէր բարոյից և զարուծի քաջութեան լծորդեալ և սա հանդոյն հօրն , սկէտ արար յառաջ քան զամենայն՝ միաբան հաւանութիւն եղբարց իւրոց Սվեաթոսըաւայ և Ասեվոլոտայ հանել 'ի բանտէ զեղբայր մօրն իւրեանց Սուտիալաւ , որ յերեսուն ամաց հետէ 'ի կալանս կայր վասն սուտ ամբաստանութիւն եղելոյ զնմանէ : Այլ նորա հրաժեշտ տուեալ ամենայնի , եմուտ 'ի կարգ միանձնութիւն :

Ընդ այն ժամանակս բազմութիւն Թարաց բնակեւոց առ Եայլիք և Տոն դետովք , զորս Ռուսք Փոլովցիս կոչէին , յարձակեցան 'ի կողմանս Տիեբերայ 'ի բաժին Ասեվոլոտայ . որոց ոչ կարացեալ նորա զգէմ ունել՝ ամբասցաւ 'ի քաղաքի իւրում . և նոքա ասպատակ սփռեալ յաւարի առին զամենայն երկիրն , և զմնացուածսն սյրեցին :

Եւ 'ի գալ ամին միւսոյ իբրև անդրէն արշաւեցին նոքա 'ի Ռուսիա , երեքին եղբարքն ևս միաբանեալ ելին ընդգէմ նոցա . այլ վաղ հարկեցան խոյս տալ անդրէն ամբանալ 'ի քաղաքս իւրեանց :

Յայնժամ տեսեալ բնակչացն Քիւվայ՝ զի Փոլովցիք սփռեալ են սյսր անդր

յասարատակի, խնդրէին 'ի սպարապե-
տէն իւրեանց զէնս՝ զի հարցեն խորտա-
կեացեն դիւրաւ զՓռլովցիան ցրուեալս .
և 'ի ժխտել նորա՝ կասկածեալ եթէ
ապստամբէլ խորհիցին, առհասարակ
'ի զայրոյթ սրտմտութի բորբոքեցան,
և ամբոխ արարեալ գիմեցին 'ի խողխո-
ղել զսպարապետն . և չգտեալ զնա 'ի
տան, յարձակեցան ընդ ամենայն քա-
ղաքն, և բազում չարիս գործեցին . բա-
ցին և զգրուես բանակց և արձակեցին
յազատութի զբանտարկեալն : Ի թիւս
նոցա գոլով և Ուչեսլաւ իշխանն Փռլոյ-
քայ՝ զորմէ կանխեցաք ասացաք, զնա
կարգացին իւրեանց սղատարար և թա-
գաւոր :

Իբրև ազդեղեն իրքն Իսիասլաւայ՝
յանհնարս մտեալ անկաւ առ Պռլե-
սլաւ Բ . արքայ Լէհաց, և ընկալեալ 'ի
նմանէ զօրս՝ խողաց եկն 'ի վերայ Ու-
չեսլաւայ : Իսկ նորա զարհուրեալ 'ի
բազմութի զօրացն, գիշերախառն զեր-
ծաւ յանառամէջս ուրեք . և ընդ այգս
այգոյն անգլուխ տեսեալ իւրոցն զան-
ձինս՝ աճսպարեցին դարձան 'ի Քիւիվ,
և առաքեալ աղաչեցին զՍվեաթոսլաւ
և զՎսեվոլոտ միջնորդ լինել առ Իսիա-
սլաւ, զի անյիշաչար լիցի յանցանաց
իւրեանց . ասլա թէ ոչ՝ ասէին, հրոյ
ճարակ տուեալ զՔիւիվ՝ 'ի Յոյնա անդր
անցանեմք :

Իսիասլաւ ներեաց նոցա, և առա-

քեաց 'ի Քիւմզի զորդի իւր զՄսթիսլաւ .
որոյ տեսեալ զբաղաբացիսն նկունս և
և հանգարտեալս՝ արս վաթսուն յա-
ռաջնորդաց անտի ապստամբու թէն կո-
տորեաց յանգէտս հօրն : Եւ ապա էառ
յԻսիասլաւայ զիշխանութիւն Փոլոցքայ :

Այն ինչ սակաւիկ մի ոգի առնոյր
Իսիասլաւ 'ի խուովութեց անտի , և ա-
հա եկն 'ի տեղիս տեղիս աշխարհին սով
սաստիկ : Զորոյ զպատճառսն արկեալ
ումանց չարախնդիր արանց զկանամբք
Ռոսթովայ և Պելոօզերոյի , իբրու եթէ
գիւթու թէնոցա լեալ էր սովն , յար-
ձակեալ կոտորեցին զբազումս 'ի նոցա-
նէ : Այլ Իսիասլաւ և զնոսա անդէն
չարաչար մահուամբ սատակեաց :

Ի միւսում ամի երևեցան և երկու
սուտ մարգարէք , յորոց մին գուշա-
կէր՝ 'ի կատարած հնգից ամաց դառ-
նալ ջուրցն Տնեբերայ 'ի վեր յսկունս
իւրեանց , և թէ յայնժամ Ռուսիա
Յունաստան լինիցի , և Յունաստան Ռու-
սիա : Այլ սա վաղ բարձաւ 'ի միջոյ խո-
րագիտութեն Իսիասլաւայ : Իսկ միւսն
գնացեալ 'ի Նովկորոտ սլատիր նշանօք
մոլորեցուցանէր զժողովուրդն՝ հայհոյե-
լով զՔս , և գրգռելով զամբոխն ընդ-
դէմ Թէոդորի արհիեպիսկոպոսի քա-
ղաքին :

Յայնժամ իշխանն Նովկորոտայ Կլեպ
որդի Սվեաթոսլաւայ խիթացեալ 'ի
հերձուածոց ժողովրդեան , կոչեաց ըզ-

մարգարէն զառաջեալ , և բազում ինչ հարցեալ , և պատ 'ի պատ առեալ 'ի նմանէ պատասխանիս , յաւել հարցանել էթէ գիտիցէ՞ արդեօք որ ինչ գէպք պատահելոց իցեն յայնմ աւուր . և յասել նորա թէ ինքն հանդերձեալ է մեծամեծ սքանչելիս կատարել , Խաբիս՝ ասաց իշխանն , և անդէն եհար կտրեաց զգլուխն վաղակաւորաւն զոր ունէր 'ի ծածուկ :

Յայս վայր համամիտք էին իշխանքն երեքեան . այլ աստի և անդր ոգի փառասիրուէ ընդ մէջ մտեալ վեր 'ի վայր յեղաշրջեաց զամենայն : Քանզի Սվեաթոսլաւ կամեցեալ ընդարձակել զՁեր նիկով զերկիր իշխանութեան իւրոյ , 'ի նոյն յորդորեաց և զեղբայր իւր զՎսեվոլոտ . և խաղացին երկոքին միանգամայն 'ի վերայ Իսխաղաւայ . որոյ ոչ ևս վստահացեալ 'ի հաւատարմութի ժողովրդեան իւրոյ , աճապարեաց կազմեցաւ փախչել կնաւ և որդւովք իւրովք առ Պոլեսլաւ արքայ Լեհաց , և խնդրել միւսանգամ զձեռն օգնականութեան :

Այլ Պոլեսլաւայ մտրտ սաստիկ էր յայնժամ ընդ Մաճառս , և չկարաց օգնական լինել Իսխաղաւայ : Ապա դիմեաց առ Եհրիկոս Դ , կայսր գերմանացւոց . սակայն և նա յաղմուկս իւրոյ աշխարհին ոչինչ նուազ չուառագոյն քան զԻսխաղաւ , հրեշտակս և եթ կարաց արձակել առ Սվեաթոսլաւ , զի

տեղի տացէ յաթոռոյն . բայց նա ոչինչ լուաւ բանիցն :

Յանհնարս մտեալ Իսիասլաւայ՝ արձակեաց զորդի իւր զՄսթիսլաւ 'ի Հըռովմ առ քահանայապետն Գրիգոր է . այլ և նա յիւրմէ կողմանէ զարքայորդին ծանուցեալ ևեթ օրինաւոր ժառանգ աթոռոյն Ռուսիոյ , արդեամբք ոչ ինչ կարաց վճարել :

Ի դէպ ժամուն մեռաւ Սվեաթոսլաւ , և կալաւ զաթոռն Ասեվոլոտ : Բայց Պոլեոսլաւայ յաղթանակաւ դարձարարեալ 'ի սրատերազմէն Մաճառաց , եկն ամենայն բանակաւն հանդերձ 'ի հաստատել յաթոռն զԻսիասլաւ : Եւ իբրև բնակիչքն Քիեվայ անգիտացեալք իմն զմիտս արքային՝ զգրուեսն ընդդէմ եդին , սպանէչ պաշարմամբ սով արկ 'ի քաղաքն . և յանձնատուր լինել նոցա՝ ներողամիտ մեծանձնութիւն եմուտ 'ի քաղաքն . զԻսիասլաւ կարգեաց եդ անդրէն յաթոռն , և ինքն ել գնաց յաշխարհ իւր . և Ասեվոլոտ մեկնեցաւ 'ի Չերնիկով :

Յետ սակաւ ժամանակի Պորիս և Օլէկ որդեք Սվեաթոսլաւայ 'ի վարձու կալեալ զՓոլովցիսն՝ արշաւեցին յերկիր հօրեղբօրն իւրեանց Ասեվոլոտայ . և նա անկաւ առ եղբայր իւր Իսիասլաւ . որոյ ընկալեալ զնա անյիշաչար մարդասիրութիւն , գնաց ընդ նմա և էառ զՉերնիկով , և սպաշարեաց զմիջնաբերդն :

Իսկ Պորիս և Օլէկ 'ի բացեայ գոլով
յայնժամ, աճապարեցին գալ մարտ
գնել ընդ Իսիասլաւայ և Վսեվոլոտայ .
այլ Պորիս անկաւ 'ի սկզբան անդ կը-
ռուոյն, և Օլէկ 'ի վախուստ դարձաւ
ապրեցելովք զօրօքն :

Իսիասլաւ կալեալ զբանակետոն՝ մինչ
գեռ գնայր գայր ընդ մէջ դիականցն
անկեւոց, յորոց միջի էին և որք կիսա-
մեռ և խոց կային, Փոլովցի ոմն՝ որ մե-
ռեալ թուէր, իբրև ետես զԻսիասլաւ՝
զի 'ի մօտոյ անցանէր, արձակեաց զնետ
մի և անդէն զգեանեաց զԻսիասլաւ :

Այսպէս զրաւեցաւ 'ի կենաց վատա-
բաղդ արքայն՝ ամաց յիսուն և երկոյ,
թողեալ զերիս որդիս, որոց անուանք
էին Մսթիսլաւ, Սվեաթոփոլք, և Եա-
րոփոլք :

Այլ անմահ յիշատակ կանգնեցին
առաքինւոյ իշխանիս՝ օրէնքն իւր սակա-
ւաթիւք, այլ այնչափ անպաճոյճք և
ճիշդք և յայտնիք, և պատուհասքն
ըստ յանցանաց այնպէս արդարակորով
կշռեալք, զի և ոչ այլք 'ի պետուեցն
Եւրոպայ ունէին արդեօք յաւուրս ժա-
մանակացն այնոցիկ հանգուճատիս
օրէնս, թէպէտ և առաւել քան զՏրուսս
բարգաւաճէին 'ի քաղաքականութի :

ՎՍԵՎՈԼՈՏ Ա. ԵՄՐՈՍԼԱՒԻԶ .

ՎՍԵՎՈԼՈՏ յաղթանակաւ դարձեալ 'ի Քիեւ՝ անց բազմեցաւ յաթու թագաւորութեն . ոչ ինչ թողեալ եղբօրորդւոյն իւրոյ՝ որում անկ էր թագաւորութին , բայց զՉերնիկով , և այն ըստ մասին :

Յաւել անձին և զնոր իմն մականունն առեալ 'ի հայրենի անուանէն . և այս սովորութի հասարակ եղև ապա թագաւորացն Ռուսաց : Զի կոչեաց զանձն իւր Վսեվոլոտ Եարոսլաւիչ , այն իսկ է Եարոսլաւեան :

Որդիքն Իսիասլաւայ Եարոփոլք և Սվեաթոփոլք առ ժամանակ մի խաղաղութիւն էին ընդ Վսեվոլոտայ . և յամին 1084 յասպատակել թշնամեաց յերկիր իշխանութեն Եարոփոլքայ , արձակեաց Վսեվոլոտ ընդդէմ նոցա զորդին իւր զՎլադիմիր , և էառ անդրէն 'ի ձեռաց նոցա զքաղաքսն Եարոփոլքայ :

Սակայն նա 'ի գալ ամին միւսոյ 'ի վրէժ զրկանացն Վսեվոլոտայ , կամ թէ ոչ շատացեալ իւրով մասամբն , ամբարձ զձեռն իւր ընդդէմ հօրեղբօրն . և ոչ հանդարտեալ բուռն զօրութեանն Վսեվոլոտայ , եթող զընտանիս իւր և փախեալ 'ի Լէհս : Այլ և անդ ևս ոչ

դառնալ զկարծեցեալ օգնականութիւն՝
 և խնայեալ զկերոցն բանասարգելութիւն՝ ի
 Քիւեվ, դարձաւ անդրէն առ Վսեւոլոյտ՝
 ապաւինեալ ՚ի դժութիւն նորա . որ և
 ներեաց նմա զամենայն, և դարձոյց ՚ի
 նա վերստին զաշխարհն նորա : Բայց յետ
 սակաւ ժամանակի սպանաւ Եարովոլք
 ՚ի ճանապարհորդութե իւրում յաւա-
 զակաց :

Եւ Վսեւոլոյտ մեռաւ յամին 1093,
 լեալ ամաց վաթսուն և չորից, և թա-
 գաւորեալ ամս հնգետասան :

Ի սորա աւուրս դիպաւ ՚ի Քիւեվ
 սրածութիւն անհազին, և կոտորեաց զբա-
 զումս ՚ի բնակչաց քաղաքին :

Դարձեալ և Ռւրբանոս Բ . քահա-
 նայապետ Հռովմայ առաքեաց, ասեն,
 առ Վսեւոլոյտ զեպիսկոպոս ոմն, և ընդ
 նմա նշխարս սրբոց բազումս :

Այլ թագաւորուի Վսեւոլոյտայ ա-
 ռաւել Համբաւեալ է փոփոխմամբ կար-
 գի յաջորդուի թագաւորացն Ռուսաց,
 զոր սա առաջին սկսաւ : Զի ուր ՚ի
 սկզբանէ հետէ անգրանիկն յարքայոր-
 գիս ժառանգէր զթագաւորութիւն, աս-
 տի և անդր սովորութիւն եղև եղբարց
 թագաւորել մի ըստ միսջէ, և ՚ի սպա-
 ռել նոցա ասա առնոյր զթագն անգրա-
 նիկ որդի երիցագոյն եղբարցն վախճա-
 նելոց, և յետ նորա եղբարք իւր ըստ
 կարգի : Եւ այս փոփոխումն թուի հաս-
 տատեալ հաւանութն Իսխասլաւայ՝ մինչ

չև մեռեալ էր. կամ թէ առանց այնք
խնդիրն հաստատեցաւ սուրբութիւն
այն անփութութիւնն Ռուսաց, որոց շատ
էր զի յազգէ Տիւրիքայ ո՞րք և իցէ թա
գաւորեսցէ ինքեանց :

Այլ թէ քանի քանի աղէտից Ռու
սիոյ սլաւաճառս էտ այս փոփոխութիւնն,
որպէս և բաժանումն աշխարհին 'ի մա
սունս մասունս, վաղ տեսցի յառաջի
կայսդ :

ՍՎԵՍԹՈՓՈԼՔ Բ. ԵՍՐՈՍԼԱՒԻՉ՝

ՉԷՏ Վսեփոլոտայ անցեալ յա
թոռն եղբայր նորին Սվեաթոփոլք՝ առ
նմին յայանեաց և զթերութի խոհակա
նութիւն իւրոյ, բանտեալ զպատգամա
ւորս Փոլովցեաց առաքելոց 'ի հաստա
տեւ զգաշինան՝ զոր ունէին ընդ Ռուսս :
Վասն որոյ և նոցա հեղեղաբար արշա
ւեալ 'ի Ռուսիա՝ պաշարեցին զԹոս
ժոք քաղաք 'ի գաւառին Թվերայ :

Անագանի զգաստացեալ Սվեաթո
փոլք՝ արձակեաց զպատգամաւորսն, և
խնդրէր զհաշտութի. այլ ոչ ևս հաւա
տացին խոսքն քանից նորա : Եւ զի ոչ
ինչ աւելի քան զութհարիւր զօրականս
ունէր նա յայնժամ յոտին, թիկունս
խնդրեաց 'ի Վլատիմիրայ. և նա վաղ
վաղակի յարուցեալ եկն զօրօք իւրովք,

առեալ ընդ իւր և զեղբայրն իւր զՌոս-
թիսլաւ :

Իբրև հասին գումարեցան եղբարքն
երեքէանն ՚ի դաշտ անդր Քիււլայ, ոչ
ևս հանդուրժեալ Վլատիմիրայ՝ յանդի-
մանեաց զՍվեաթոփոլք սակս անխոր-
հուրդ գործոյն : Ի զայրոյթ ցասման
գրգռեցաւ Սվեաթոփոլք, և փոքր
միւս ևս կողմանքն երկոքին ընդ միմեանս
անկանէին՝ թէ չէր Վլատիմիրայ հան-
գարտեալ զվէճն :

Վլատիմիր խրատ տայր՝ զէն ՚ի ձեռին
խնդրել ՚ի թշնամեացն զխաղաղութի-
այլ ՚ի խկլախել Սվեաթոփոլքէանց՝
խառնուրդք եղէն մարտին, և Փոլովցիք
յաղթող դտեալք՝ հալածական վարե-
ցին զՌուսս : Սոքա ՚ի լուղ անցին ընդ
դեան գարնանաղայր, և Ռոսթիսլաւ
գետամոյն եղև. հաղիւ հաղ զերծաւ ՚ի
վտանգէն և Վլատիմիր, որ ձեռն տալ
կամէր եղբօրն ընկղմեցելոյ. և տեսեալ
զկոտորած իւրոցն՝ մեկնեցաւ ՚ի Չէր-
նիկով :

Իբրև տեսին Փոլովցիք՝ եթէ գարձեալ
սակաւաձեռն գնդաւ մնաց Սվեաթո-
փոլք մաղապուր ճողոպրեալն ՚ի մահուա-
նէ, սնդեցին զսրաշարու մն թոռժոքայ,
և առեալ զայն՝ հուր հարին այրեցին
զքաղաքն, և զքնակիչսն ՚ի դերութեան
վարեցին. որք և դոպցես առ հասարակ
մեռան սովու և ծարաւով և սառամա-
նեօք ճանապարհին :

Յայնժամ 'ի խնդրել Սվեաթոփոլ-
քայ զհաշտութի, զիջան թշնամիք . և
'ի հաստատուի գաշինն էառ իւր Սվեա-
թոփոլք 'ի կնուծիւն զգուտար խանին
նոցա՝ որում անուն էր Թընդըր :

Օլեկ որդի Սվեաթոսըաւայ կամե-
ցեալ յինքն կորզել զՉէրնիկով 'ի ձե-
ւաց հօրեղբօր իւրոյ Վլատիմիրայ, գըր-
գուեաց զՓոլովցիսն յարձակել ընդ իւր
յանկարծակի 'ի սահմանս նորա : Եւ
նոքա յանձին կալեալ՝ գիմեցին 'ի Չէր-
նիկով . յաւարի աւին զքաղաքն, և զա-
րուարձանեայսն հրձիգ արարին . և 'ի
գառնալ անդրէն յաշխարհն իւրեանց՝
ոտնակոխ արարին և զաշխարհն Օլեկայ,
իբր 'ի վճար ծախուց պատերազմին՝
յոր հրաւիրեաց զնոսա :

Վլատիմիր թողեալ զՉէրնիկով՝ սու-
րացեալ էր 'ի Փերեսլաւ . այլ ընդ
հուպ հաւանեցան դալ 'ի հաշտութիւն
ընդ Վլատիմիրայ Փոլովցիք, և յամին
1095 առաքեցին առ նա զերկուս ոմանս
'ի գլխաւորաց անտի իւրեանց, զԻթլար
և զՔիթան :

Ի մտանել Իթլարայ 'ի քաղաքն՝
Վլատիմիր առաքեաց 'ի բանակ դեսպա-
նացն 'ի պատանդուի զորդին իւր : Անդ
գաւաճանք ոմանք սագրեցին Վլատիմի-
րայ սպանանել զԻթլար . և մի ոմն 'ի
նոցանէ Սլաւաթա անուն, որ եկեալ
էր 'ի Սվեաթոփոլքայ, գիմագրաւ եղև
անձամբ երթալ զերծուցանել զպա-

տանդն զորդին վլատիմիրայ : Եւ վլատիմիր, չգիտեմ որպէս, զիջաւ հրապուրանաց նոցին :

Յայնժամ գիշերայն գնաց Սլաւաթա 'ի բանակ թշնամեացն, և գտեալ 'ի քուն զՓոլովցիս՝ յափշտակեաց զարքայորդին, և արար 'ի նոսա իւրովքն կոտորած մեծ. անդ սպանաւ և Քիթան. և Իթլար խողխողեցաւ առ վլատիմիրայ :

Ապա գիմեաց վլատիմիր անյասպաղ 'ի վերայ Փոլովցեաց. որում զճանասպարհայն յօգնութի հասեալ և Սվեաթոփոլքայ՝ կանգնեցին յաղթանակ մեծ, և ածին աւար և գերի բազում :

Այլ բազմաթիւ ազգ նետողացն վաղ գումարեցան դարձեալ 'ի վերայ Ռուսաց, և գնացեալ յաճիւն դարձուցին զբաղաքն Եռերեւ. և 'ի միւսում սարուջ սաստկագոյն բանակաւ արշաւեցին 'ի Ռուսիա յերիս առաջս, յորոց միումն առաջնորդէր ինքնին Թընղըր խան աներ Սվեաթոփոլքայ : Սակայն յանկանել նորա 'ի սպտերազմին՝ ցրուեցան և զօրք իւր : Եւ իբր 'ի տեղի նոցա փոխանակեցին նորանչան հարուածք մարախոյ՝ այն առաջին անգամ եկեալք 'ի Ռուսիա 'ի կողմանցն Թաթարաց, և կերան սպառեցին զամենայն գեղ դալար. որոց զհեա եկին ախտք և հիւանդուիք մահաբերք :

Յամին 1096 ժողով արարին 'ի Քիեւ

Սվեաթոփողք և Վլատիմիր հանդերձ
 էպիսկոպոսօք և վարդապետօք և պա-
 սուականօք քաղաքին՝ ՚ի կարգաւորել
 զիրս հասարակաց և զխաղաղութի աշ-
 խարհին իւրեանց :

Կոչեցին և զՕլէկ, և յանդոսնել նո-
 րա՝ խաղացին եղբարքն երկոքեան ընդ-
 դէմ նորա . որոյ փախուցեալ ՚ի Չեր-
 նիկովայ՝ անկաւ ՚ի Սթարոսուս . այլ
 իբրև հարկեցաւ նա խնդրել զհաշտու-
 թի, հրամայեաց նմա Սվեաթոփողք եր-
 թալ ՚ի Սմոլենսք առ եղբայրն իւր Դա-
 ւիթ, և ածել զնա ևս ընդ իւր ՚ի Քիւմի:
 Երդմնի եղև Օլէկ առնել զբանն, և
 գնաց ՚ի Սմոլենսք . և քանզի յայնժամ
 Դաւիթ ՚ի բացեայ գտանէր, քաղաքա-
 ցիքն զգուրս ընդդէմ եղին : Օլէկ առ
 ժամանակ մի աստանդական լեալ՝ ասլա
 գնաց սակաւաձեռն գնդաւ ՚ի վերայ
 Մուրով քաղաքի, զոր ունէր Իսիա-
 սլաւ որդի Վլատիմիրայ : Բայց իբրև նա
 ոչ էառ յանձն զառաջարկութիս Օլէ-
 կայ՝ ՚ի զէն ընթացան երկոքեան . և ՚ի
 մարտի անդ մեռաւ Իսիասլաւ, և Օլէկ
 էառ զՄուրով :

Մսթիսլաւ միւս որդի Վլատիմիրայ
 իբրև զգաց զգէպս եղբօրն և զյափշտա-
 կութիւնն Օլէկայ, սուաքեաց առ նա
 սլատգամաւորս խօսել ՚ի հաշտութիւն,
 խոստացեալ բարեխօսել վասն նորա առ
 հայր իւր : Եւ իբրև արհամարհեաց Օ-
 լէկ զսլատգամաւորս Մսթիսլաւայ, այն

զի 'ի մտի եգեալ էր յարձակել և 'ի սահմանս նորին, խաղայ Մսթիալաւ 'ի վերայ նորա մարտիւ սրատերաղմի. և յանձուկս ուրեք փակեալ զնա՝ կատտեաց 'ի նմանէ զամենայն զքաղաքսն. և ապա խօսեցաւ ընդ նմա 'ի խաղաղութի :

Ի դարման երկարառակութեց իշխանացն՝ ժողով գումարեաց Սվեաթովոլք 'ի Վիւպից քաղաք մերձ 'ի Չէրնիկով. ուր միաբան հաւանութիւ ամենեցուն նորոգ քաշխեցան իւրաքանչիւր իշխանութիւք, և իշխանքն երգուան 'ի խաչն՝ հաստատուն կալ 'ի բանս ուխտին. և զի թէ ոք վրդովեսցէ զխաղաղութն, ամենեքեան միանգամայն խընդրեսցեն 'ի նմանէ զվրէժ դրժանացն :

Նախկին դրժիչ ուխտին եկաց Գաւթ որդի Իկորայ, թուն մեծին Վլատիմիրայ. զի կատեաց 'ի շլթայս զՎասիլքօ զորդի Ռոսթիալաւայ զթուհորդի Եարոսլաւայ օրէնսդրի. կուրացոյց և զաչս նորա, և անողորմ տանջանօք գերցաց չարչարեաց զնա :

Յայնժամ Վոլոտար եղբայր հիգացելոյ իշխանին Վասիլքոյի գիմեալ 'ի վերայ Գաւթի՝ պաշարեաց զնա յանձուկ քաղաքի ուրեք. և նորա 'ի նեղանկեալ՝ արձակեաց զՎասիլքօ, և կատտեցաւ յուրմէ իշխանութին :

Յետ սակաւուց և Սվեաթովոլք ինքնին ուխտագրութ լեալ յարեալ 'ի վերայ Վասիլքայ և Վոլոտարայ, իբրու

Թէ կալուածք իշխանութե նոցա՝ իւրոյ
 հօրն իցեն լեալ կանխաւ : Եւ միաբա-
 նեալ երկուցն եղբարց՝ էլին ընդդէմ
 նորա : Աստիւքօ քանզի կոյր էր՝ անց
 ընդ մէջ զօրացն իւրոց առաջնորդաւ ,
 և ձախու ձեռամբն բարձեալ զխաչ՝ ա-
 զաղակէր առ զօրսն . « Ի զօրութի սրբոյ
 խաչիս երդուաւ , ասէր , Սվեաթովոյք՝
 սաշտպան կալ մեզ իբրև հարազատաց .
 նորին խորհրդով բրեաց Դաւիթ զաչս
 իմ . և նա ինքն խնդրէ արդ բառնալ
 զկեանս իմ . այլ արգար է Աստուած .
 դատ արասցէ ընդ մեզ և ընդ նա » :

Ի բանից աստի յեռանդն վրէժխըն-
 դրութե վառեալ զօրականին՝ հարին
 խորտակեցին զՍվեաթովոյք . և նա խըն-
 դրեալ ընկալաւ յարքայէն Մաճառաց
 զօրս՝ ի խաղալ անդրէն՝ ի վերայ երկո-
 ցունց եղբարցն :

Յայնժամ անագորոյնն Դաւիթ ան-
 ցեալ ի կողմն Աստիւքայ , զոր ինքն խկ
 կուրացուցեալ էր , եդ զկին իւր ի սա-
 տանդի առ Աղլոտարայ , և գնաց ան-
 ձամբ առ Փոլովցիս , որոց առաջնորդէր
 յայնժամ Պոնեաք ոմն անուն՝ որ բա-
 զում չարիս անցուցեալ էր ընդ աշխարհն
 Ռուսաց : Սա յանձն առեալ զխնդիրն՝
 խաղաց ընդ Դաւթի ընդդէմ Մաճա-
 ռաց , և խորտակեաց զիոսա ի սպառ :

Ուր ուրեմն ի խաղաղէլ զքաղաքա-
 կան սպաերազմունս՝ նոր ժողով կար-
 գեցին իշխանաց . յորում զԴաւիթ զըր-

կեալ յիշխանութեն Վլադիմիրայ՝ ետուն նմա այլուր քաղաքս հինդ, և արծաթ բաղում, և եղև խաղաղութեն ՚ի մէջ իշխանացն Ռուսաց :

Դարձուցին ապա զզէնս իւրեանց ընդդէմ Վէհաց . բայց ՚ի նոցանէ հաւածական եղեալ՝ յարձակեցան ՚ի Փոլովցիս, և թափեցին ՚ի նոցանէ աւար բաղում :

Եւ յամին 1115՝ մեռաւ Սվեաթոփուք՝ թագաւորեալ ամս քսան :

Ի սորա աւուրս թոյլտուութի իւրով բաղմացեալ էին ՚ի Քիեւ չրեայք ճարտարք ՚ի վաճառաշահունի, որք և հեաղհետէ մեծանային ճոխութի . այլ աւելի եղեալ Ռուսաց ըստ այլ և այլ պատճառաց, անդէն ընդ մեռանել Սվեաթոփուքայ՝ յարձակեցան Ռուսք և յանխնայ կոտորեցին զնոսա :

ՎԼԱՏԻՄԻՐ Բ . ՎՍԵՎՈՒՈՏՈՎԻՉ

ՄՈՆՈՄԱԽ

ՎԼԱՏԻՄԻՐ Բ Քիեւայ փութացեալ զառաջս առնուլ չարեաց անիշխանութեն՝ ընտրեցին ՚ի թագաւոր զՎլադիմիր զորդի Վսեվոլոտայ . որոյ զառաջինն հրաժարեալ, ապա իբրև ետես զյաճախել խոռվութեցն Քիեւայ՝ հաւանեցաւ իշխանացն : Եւ իբրև եմուտ ՚ի քա-

ղաքն՝ դադարեաց ամենայն աղմուկ
ամբոխին . այլ նա ՚ի զերծուցանել
զհրեայսն յօխակալութի Ռուսաց՝ ե-
հան արձակեաց զնոսա ՚ի Ռուսիոյ, հո-
դացեալ անդրժեղի պահել զինչս և
զստացուածս նոցա զամենայն զճանա-
պարհայն, և խոստացաւ հովանի լի-
նել նոցա նաև արտաքոյ առ սահմանօք
իւրոյ աշխարհին :

Յայնմ հետէ ՚ի խոր խաղաղութեան
վայելեցին Ռուսք խոհական և անյող-
գողդ առաջնորդութեն Վլատիմիրայ :
Եւ որդիք նորա գամ քան զգամ ընդ-
արձակէին զպետութիւն նորա : Մսթի-
սլաւ իշխան Նովկորոտայ յաղթութիւն
տարաւ ՚ի Ղլմոնիա, և ընդարձակեաց
զպարիսպս քաղաքին իւրոյ . Եարոփոլք
խորատակեաց ՚ի սպառ զՓոլովցիս առ
Տոն գետով . Եուրի, որ և Գէորգ լի,
կալաւ յաղթութի մեծ ՚ի վերայ Բուլ-
ղարաց . և Անդրէաս էառ զքաղաքս
ինչ ՚ի Ղէհաց :

Եւ ինքն Վլատիմիր խաղաղասէր և
առաքինասէր բարուքն յամենայնի ճշգ-
նեալ ՚ի բարդաւաճել զժողովուրդս
իւր, ցանկալի եղև շրջակայ ազգաց
անդամ :

Ինքնակալն Ալէքս Կոմնենոս առա-
քեաց նմա ՚ի պարգև զարդս կայսերա-
կանս իբր ՚ի դիմաց Կոստանդնի Մոնո-
մախ կայսեր, որ էր հաւ Վլատիմիրայ
՚ի մօրէ . և վասն այսորիկ՝ որպէս թուի՝

անուանեցաւ Մոնոմախ և Վլատիմիր
ինքն :

Սա այս Վլատիմիր առաջին 'ի թա-
գաւորս Ռուսաց՝ կոչեցաւ և Չար, որ
է Աբբայ, կամ Տէր, ևս և Սաճափերժեց,
այսինքն է Ինքնակալ, որպէս յայտ է 'ի
գրամոց նորա :

Եւ թագաւորեալ ամս մետասան՝ մե-
ռաւ յամին 1125 'ի հասակի վաթսուն
և երկուց ամաց . և էին նորա որդիք
ութ . Մսթիսլաւ, Իսիասլաւ, Սվեա-
թոսլաւ, Եարոփուք, Վէաչէսլաւ, Ռո-
ման, Եուրի, և Անդրէաս . և կալաւ
զաթուն Մսթիսլաւ :

ՄՍԹԻՍԼԱՅԻ ՎԼԱՏՒՄԻՐ ՈՎԻԶ

ՉԷՏ խաղաղական աւուրց թագա-
ւորութեն Վլատիմիրայ դարձեալ յաղ-
մուկս անընդհատս պաշարեցաւ Ռու-
սիա ընդ ամս ոչ սակաւ . զի ահա ան-
դէն 'ի սկզբան թագաւորութեն Մսթի-
սլաւայ արշաւեցին ՓոլոՎցիք յաշխարհն,
և յաւարի առին զբազում տեղիս :

Եւ թէպէտ Եարոփուք եղբայրն
Մսթիսլաւայ վանեաց զնոսա քաջութի,
սակայն ոչ նուազ չարաղէտ գտաւ քան
զբարբարոսաց արշաւանսն՝ յափշտա-
կէն Վսեվոլոտայ որդւոյ Օլէկայ զՉէր-

նիկով 'ի ձեռաց Եարոսլաւայ հօրեղբոր իւրոյ :

Ի զայրոյթ բարկուէ վառեալ Մսթիւսլաւ ընդ յանդգնութի անիրաւունն, երդուաւ 'ի խաչն սբ՝ վրէժինդ իր լինել Վսեվոլոտայ : Այլ նա կանխեաց հրաւիրեաց զՓոլովցիսն իւր 'ի Թիկունս, խոստացեալ 'ի մասն աւարին հասարակել զնոսա :

Եւ մինչդեռ պատգամաւորք երկուստեք երթային և գային, Ռուսք ոմանք կալեալ զճանապարհայն զպատգամաւորս Փոլովցեաց՝ 'ի դերութե վարեցին. ընդ որ ցասուցեալ նոցա, առ ժամն շատ համարեցան սրահանջել յետս զգերիսն. և Վսեվոլոտ հարկեցաւ ինդրել 'ի Մըւթիսլաւայ զհաշտութի, դարձուցեալ 'ի նա անդրէն զՉէրնիկով :

Մսթիսլաւ ըստ ընդաբոյս գթութենն՝ ներողամիտ կամեր լինել և յայս նուագայլ երկնչէր 'ի լուծանելոյ զերդումն. և Թէպէտ ըստ վճուոյ արքեպիսակոպոսին կարաց շնորհել նմա զկեանսն, սակայն մինչև ցմահ իւր տարապարտ խղճիւ սողտանէր զանձն. և մեռաւ յամին 1132, Թագաւորեալ Եօթն ամ և եթ. և Եթող ուստերս վեց, աւանդեալ զնոսին 'ի ձեռս եղբոր իւրոյ Եարովուքայ :

ԵՆՐՈՓՈՒԹ Բ . ՎԼԱՏԻՄԻՐՈՎԻԶ

ԱՆՑԵԱԼ սորա յաթոռ եղբօրն իւրոյ՝ նախ առաջին հոգացաւ բաշխել յեղբօրորդիա իւր օրչափ ինչ արժան էր սպասուոյ նոցա . այլ քանզի անմարթ էր կատարել զայն առանց խորելոյ զբաժինս իւրոցն եղբարց , ամին իրի անհնարին շփոթք և խռովութիք ծագեցան ՚ի մէջ իշխանացն , մինչև տեսին զբռնանալ Ղեհայ ՚ի կողմանս ինչ աշխարհին իւրեանց , և անդէն միաբանեալ ընդ միմեանս՝ յարձակեցան ընդդէմ հասարակաց թշնամոյն :

Զարհուրեալ Պոլեւլաւ Գ . արքայ Ղեհայ ՚ի միաբանութեն Ռուսաց , մինչդեռ վարանէր ելս դտանել իրացն , մի ոմն ՚ի խորհրդակցաց նորա Ալտաթովիչ անունն յառաջ մատուցեալ ձեռն յանձին հարկանէր՝ երթալ անձամբ դաւաճանել զարքայն Ռուսաց . և եկն առ Եարոփուք սակաւ արամբք՝ բողբեւով իմն նենգաւ ընդդէմ իւրոյ արքային , որ յեա կողոսպտելոյ ասէր՝ զինչս իմ , ինդրէ բռնալ և զկեանս : Եւ իբրև ընկալաւ զնա Եարոփուք , և հարցանէր քիտեալ ՚ի նմանէ զպատրաստութի Ղեհայ և զղօրութի Պոլեւլաւայ , Ալտաթովիչ զամենայնէ ոճով սպտմեալ ըստ

կամի՛ բազում չարախօսութիւն յաւել-
լոյր զԹագաւորէն, և ասէր՝ եթէ Լէհք
ևս տաղակացեալ 'ի նմանէ՛ մտազիւ-
րագոյնս արդեօք տացեն զաշխարհն 'ի
ձեռս Եարոփոլքայ : Եւ այսպիսի ողորկ
բանիւք որսացեալ զսիրտ նորին՝ եղև մի
'ի խորհրդակցացն սիրելեաց, և անմեկ
նեւի էր 'ի նմանէ ուր և երթայր :

Ապա 'ի միում աւուր մինչ առանձին
ուրեք արտաքոյ քաղաքին ելեալ էր ընդ
Եարոփոլքայ, յանկարծակի կալ և կապ
արարեալ զնա 'ի վերայ երիվարին՝ յա-
փրշտակեաց տարաւ 'ի Քրաքովիա, և
արդեւ 'ի դիպահոջ : Եւ ոչ կարաց Եա-
րոփոլք զերծանել անտի՛ մինչև հատոյց
արծաթ յոլով, և երդուաւ հարկատու
և ստրուկ լինել արքային Լէհաց :

Եարոփոլք 'ի մտի կալեալ զգաւն,
եգիտ խորամանկ զոմն Մաճառ յազգէ,
և խրատեալ զնա որպէս կամէրն՝ արձա-
կեաց 'ի Քրաքովիա . ուր իբրև այր ա-
զատազգի գիւրամատոյց գտեալ նորա
զարքայն Լէհաց՝ ամբաստան եղև զար-
քայէն Մաճառաց, իբրու եթէ նա-
խանձու սրտճառաւ զրկեալ իցէ զինքն
յրնչիցն, և արտասահման արարեալ :
Գթացեալ Պուէսլաւայ յայրն, կար-
գեաց զնա քաղաքապետ Ախալիցա քա-
ղաքի մերձ 'ի Քրաքովիա :

Ընդ այն ժամանակս գէսլ եղև ար-
քային Լէհաց գնալ 'ի սահմանս իւրոյ
աշխարհին առ Գերմանացւոլք . և Մա

Ճառին զայն պատեհ առեալ՝ համբաւ
 ւեաց շուրջանակի՝ եթէ Ռուսք մեծաւ
 կազմուածք յարձակեալ գան 'ի Լէհա .
 վասն որոյ ամենայն ճոխք և աւագա-
 նին Քրաքովիոյ ապաստան եղեն ընչիւք
 և ընտանեօք իւրեանց 'ի Վիսլիցա իբրև
 'ի քաղաք ամուր՝ զի կառուցեալ էր
 յասպառաժի :

Զայս ամենայն 'ի դէպ ժամու զգա-
 ցեալ Եարովիուքայ՝ էառ ընդ իւր գունդ
 մեծ ընտիր զօրականաց, և յարձակեցաւ
 գիշերայն 'ի վերայ ամրականացն . և
 հնարիւք մատնչին 'ի բաց գտեալ ըզ-
 դրունան՝ եմուտ գերեաց զամենայն ա-
 ւագանին, զինչսն յափշտակեաց, և ըզ-
 քաղաքն քանդեալ աւերեաց, և որպէս
 պատմեն Լէհք, սպան և զմատնիչն գա-
 ւաճան :

Ոչ շատացան Ռուսք վրէժխնդրու-
 թքս, և ստիպէին զԵարովիուք խաղալ
 'ի վերայ նորին ինքեան Պոլէսլաւայ :
 Եւ առ 'ի դաւով իմն ձգելոյ զնա յաշ-
 խարհն իւրեանց, ոմանք յիշխանացն
 Ռուսաց՝ հրամանաւն Եարովիուքայ յար-
 ձակեցան առին զՎալիչ քաղաք, զոր
 ունէր Եարոսլաւ խորթ որդի Վլաախ-
 միրայ Մոնոմախին . և նա փախեաւ առ
 Պոլէսլաւ առ մտերիմ բարեկամ իւր, և
 դրդուեաց զնա 'ի խնդրել զվրէժ զրկա-
 նացն : Ի նոյն և գլխաւոր բնակիչքն
 Վալիչայ 'ի յորդորելոյ Եարովիուքայ
 երթեալ խնդրեցին 'ի Պոլէսլաւայ՝ զի

ածցէ զիշխանն իւրեանց զԵարոսլաւ ,
 և վանեացէ զբռնացեալնն 'ի մասին
 ժառանգութեան նորա . զի և Եարոս-
 փուլքայ կամացն հակառակ են , ասեն ,
 արարք իշխանացն : Պոլէսլաւ հաւատոս
 ընծայեալ նոցա՝ սակաւաձեռն գըն-
 դաւ եկն մերձ 'ի Կալիչ . և ասա յան-
 կարծակի պաշարեցին զնա երկուստեք
 բնակիչքն Կալիչայ և զօրք Եարոփու-
 քայ :

Եւ մինչդեռ Պոլէսլաւ անյողգողգ ա-
 րիութիւն փութայր ճակատել վանել ըզ-
 դաւաճաննն՝ Ասեպոր զօրասլեա նորին
 զարհուրեալ 'ի փախուստ դարձաւ , և
 'ի խռան անդ մարտին խոց վիրաւոր ան-
 կեալ արքային յերկալարէն՝ հազիւ ճո-
 ղօտրեցաւ յերկիր իւր 'ի ձեռն միոյ ու-
 րուք յիւրոցն . և հասեալ 'ի Քրաքո-
 վիա՝ առաքեաց առ Ասեպոր մորթ մի
 նասպաստակի և վուշ և աղեկոտ . և նա
 առ անհնարին ամօթանացն անձնա-
 սպան եղև :

Յետ սակաւուց մեռաւ և Եարոփուլք՝
 թագաւորեալ ամս ութ . և թագաւո-
 րեաց եղբայր նորա խաղաղասէրն Աեա-
 չեսլաւ : Այլ զկնի երկոտասան աւուրց
 եկն եհաս 'ի գրունս Քիեւայ Ասեւո-
 լոտ որդի Օլեկայ , և պահանջէր 'ի նմա
 նէ զթագաւորութիւն . և Աեաչեսլաւ
 տեղի ետ գնաց անգրէն յառաջին տե-
 ղի իշխանութիւն իւրոյ :

ՎՍԵՎՈՂՈՏ Բ. ՕԼՎՈՎԻԶ

ՅԱՂՄԿԱԼԻՑ Ժամանակս պետու-
թեանն Ռուսաց Թագաւորեալ առնս
ճարտարի 'ի Հնարս դաւաճանութեց,
ևս քան զևս բորբոքեաց զաղէտս աշ-
խարհին :

Յանդ Հնարս նիւթեալ յընդարձա-
կեւ զսահմանս իւր՝ ամփոփամբ սահ-
մանաց իշխանացն իւրոց, բարեկամա-
ցաւ ընդ արքային Լէհաց, և օգնական
եղև նմա զօրօք 'ի մարտս նորին, զի և նա
ինքեան օգնեսցէ 'ի դէս ժամանակի :

Այլ արքայն Լէհաց 'ի պարտութի
մատնեցաւ, և Վեւիլոտ յետ Երկուց
ամսոց մեռաւ յամին 1146, և արարին
ժողովուրդքն ինջոյս մեծի ուրախութե
'ի յուզարկաւորութե նորա :

ԻՎՈՐ Բ. ՕԼՎՈՎԻԶ

ՎՍԵՎՈՂՈՏ որ խոստացեալ էր Իսիա-
սլաւայ որդւոյ Մսթիսլաւայ զաթոռն,
'ի մեռանեւն ետ զայն եղբօր իւրում
Իկորայ : Սա այր խիտ և ամբարտաւան՝
վութով ատելի եղև իւրոցն, Ժխտեալ

դիտատու մն իւր թեթևացուցանելոյ ըզ-
 ծանրութիւնն հարկացն՝ զոր հարկէին
 վսեվոլոտայ, և տուեալ զանձն ՚ի դա-
 տարկութի և յամենայն ախաս դարշու-
 թեց. և շողոմարար իշխանքն իւր լցին
 զպետութիւնն ամենայն անիրաւութի և
 զսկանօք: Սմին իրի Գիւեվացիք ետուն
 զաթոռն՝ Իսխասլաւայ:

Յայնժամ և Իկոր առեալ ընդ իւրսն
 և զզօրս միոյ ուրուք յեղբարց իւրոց՝
 խաղաց ՚ի վերայ նոցա. և ՚ի չկամել
 Գիւեվացոց մարտ դնել՝ անկաւ խոռ-
 վուի մեծ ՚ի բանակին Իկորայ, և սկսան
 կոտորել այր զընկեր, մինչ զի և Իկոր
 ինքնին ՚ի վախուստ աճապարեալ՝ ա-
 ւուրս չորս թապեալ ՚ի ճահիճս ուրեք.
 և ապա ՚ի յայտ եկեալ ածաւ առաջի
 Իսխասլաւայ, և նա շղթայակապ արգել
 զնա ՚ի բանտ խաւարչուտ:

Ի գալ ամին միւսոյ խնդրեաց Իկոր
 յԻսխասլաւայ հրաման կրօնաւորելոյ, և
 եմուտ ՚ի մենաստան մի ՚ի Գիւեվ. այլ
 Սվեաթոսլաւ եղբայր նորին յարեալ ՚ի
 վերայ Իսխասլաւայ ՚ի խնդրել զվրէժ
 եզբօրն: Եւ իբրև ՚ի սպարտուի մասնե-
 ցաւ նա առաջի Իսխասլաւայ, և խնդրէր
 զհաշտութի՝ առանց յետս կալոյ ՚ի սա-
 հանջանացն, Իսխասլաւ հրձիգ արար
 զամենայն տունս և զադարակս նորա,
 և էառ զքաղաքս նորա, և հալածական
 արար զնա յաշխարհէն:

Իսկ Իկոր յետ վեցամսեայ թագա-

ւորութէն և միամեայ միանձնութեան՝
անդէն 'ի նմին 'ի վանս իւրում խողխո-
ղեցաւ 'ի ժողովրդենէն Քիւվայ . և
մարմին նորա մերկ քարշեալ ընդ փո-
ղոցս քաղաքին՝ ասպ թաղեցաւ 'ի շի-
րխն թագաւորացն :

ԻՍԻԱՍԼԱԻ Բ . ՄՍԹԻՍԼԱԻԻԶ

ԵՒ արին Իսիասլաւ հաստատեալ 'ի
Թագաւորութէ իւրում՝ անդրէն յինքն
դարձոյց զքաղաքսն առեալս յօտարաց :
Միաբանեցին ընդ նմա և ոմանք յիշխա-
նացն , որոց ձեռնտուութի նուաճեաց
և զայլն . և Սվեաթոսլաւայ ետ 'ի կը-
նութի զթոռն իւր՝ զի մոռացօնք եղի-
ցին նմա արկածք եղբօրն :

Եւրի որդի Ալատիմիրայ երկրորդի
քանզի ռիս ունէր ընդ Սվեաթոսլաւայ՝
թշնամացաւ և ընդ Իսիասլաւայ , և
միաբանեալ ընդ իւր զՓոլովցիս՝ խաղաց
ընդդէմ նորա , և եղև սպատերազմ մեծ
հուս 'ի Փերեսլաւ քաղաք : Անդ խոր-
տակեցան զօրքն Իսիասլաւայ , և ինքն
կնաւ և որդւովք իւրովք փախուցեալ
ամրացաւ 'ի Աոլոտիմիր :

Եւ զի աներ էր Իսիասլաւ արքային
Մաճառաց , և ազգակից արքային Լե-
հաց , խնդրեաց 'ի նոցանէ զօրս յօգնա-

կանուլի, և նորօք հանդերձ ել ընդդէմ Եուրեայ : Այլ Մաճառք և Լէհք 'ի տեսիլ ևեթ թշնամեացն բազմութեան՝ յետս ընդ կրունկն դարձան . և Իսիասլաւ հարկեցաւ խնդրել զհաշտութի, և թողուլ Եուրեայ զթագաւորութիւն Քիեւայ :

Սակայն աւագանին Ռուսոց դազա միաբանեալ՝ կոչեցին զԻսիասլաւ անդրէն յաթոռն . և նա եկն 'ի Քիեւ ոչ բազում զօրօք : Իսկ Եուրի նիզակակցութի իշխանին Կալիչայ յարձակեալ 'ի Քիեւ վերստին կալաւ զաթոռն . և մինչդեռ անարգել անձնատուր լեալ 'ի վափկութիս և 'ի թուլութիւնս կայր յանհոգս, Իսիասլաւ ստուար բանակաւ անկեալ 'ի վերայ բռնաւորին՝ հալածեալ վանեաց զնա 'ի Քիեւայ, և եմուտ անդր մեծաշուք յալթանակաւ՝ և ծափաձայն ցնծութի քաղաքացիացն :

Այլ յանդադարելի սպատերազմաց և 'ի խռովութեց աշխարհին զերծոյց զնա մահն յամին 1156, թագաւորեալ ամս ութ : Եւ հրաւիրեցաւ 'ի թագաւորել վերստին խաղաղասէրն Վեաչեսլաւ . այլ նա ետ զաթոռն ցՌոսթիսլաւ եղբայր Իսիասլաւայ :

Իսկ նորա կասկածեալ եթէ Իսիասլաւ Դաւթեան՝ իշխան Չերնիկովայ ակն եդեալ իցէ թագաւորութեանն, յարեաւ 'ի վերայ նորա անխորհրդաբար, և 'ի սպարտութիւն մատնեալ վա-

խրատական եղև, և եթող զաթուն՝ Ի սիասլաւայ :

Սակայն և նա տօխպեցաւ թողուլ զայն անհանդարտին Եուրեայ անուանելոյ Տոլիորուքի, այսինքն Երկայնաձեռն, որ զօրու ծանու եկեալ եմուտ ՚ի Քիեվ, և թագաւորեաց :

ԵՈՒՐԻ Ա . ՎԼԱՏԻՄԻՐՈՎԻՉ

ԵՐԿԱՅՆԱՉԵՌՆ

Ի ՎԱԹՍՈՒՆ և երկոյ ամաց հասակին անցեալ յաթոռ, յանդուլ պատերազմունս ծախեաց և զմնացորդս կենացն ընդդէմ արշաւանաց Փոլսկեաց . և յապրատամբէլ Նովկորոտացոց՝ երգուաւ նկուն առնել զխռովաւէր ժողովուրդն . այլ կանխեալ իւրոյ օրհասին՝ մեռաւ յամին 1158, զհետ երկոյ ամաց թագաւորութեն . և եթող մետասան որդիս :

Սա շինեաց զՄոսքուա (որ և Մուկով կամ Մոսքա) քաղաք՝ հաւանեալ ընդ դիրս տեղւոյն, և անիրաւութի յափշտակեալ զայն ՚ի ձեռաց տեառնն՝ որում անուն էր Քուչքօ . և զբազումս ՚ի բնակչացն Վոլոսիմիրայ անգր առաքեաց ՚ի բնակել : Շինեաց և այլ քաղաքս ՚ի տերութի իւրում, և գաղթականս ածեալ բնակեցոյց ՚ի նոսա :

Այլ քանզի բազում բռնութեամբք

տաղակալի լեալ էր Քիւմացւոց , ընդ մեռանել նորա յաւարի առին զասպարանս նորա , և զմտերիմս նորա ընդ սուր անցուցին : Եւ մինչ նոքա դեռ զաղմկաւն էին՝ Իսիասլաւ իշխան Չէրնիկովայ եկն եմուտ 'ի քաղաք անդր , և կալաւ զաթոռն :

Զհետ նորա իշխանք ինն հետ զհետէ առին 'ի միմեանց զաթոռն , և ոչ ինչ արժանի յիշատակի թողին՝ բայց յանարժան ոգւոյ փառասիրութի :

Իսկ բնակիչքն վճռութիմիրայ թագաւորեցուցին իւրեանց զանգրանիկն Եուրեայ զԱնդրէաս Պոհոլիւպոքի , այսինքն է Աստուածասէր , զայր բարեպաշտօն և խոհական և արիասիրտ , և նա սկսաւ վանել զթշնամիս Ռուսիոյ զԲուլղարս և զԹաթարս ասպատակեալս յաշխարհն :

ԱՆԴՐԷԱՍ ԵՈՒՐԵՎԻՉ

ՊՈՀՈԼԻՒՊՍԿԻ

ՏԵՍԵԱԼ Անդրէի զփոթս աշխարհին յերեսաց բազմիշխանութեն , և մաւնաւանդ զանդադար խռովութիս հովհորոտայ , զոր գումարեաց 'ի ձեռս որդւոյ իւրոյ Մսթիսլաւայ . միաբանեցոյց

ընդ նմա և զմետառան իշխանա, և առա-
քեաց նախ 'ի վերայ Քիեվայ :

Ռոսթիսլաւ որ թագաւորէրն անդ
յայնժամ, յետ ընդդէմ կալոյ ժամս
ինչ՝ ապա եթող զկին իւր և զորդին՝ և
փախեաւ 'ի քաղաքէն . և թշնամեացն
մտեալ աւար հարին զՔիեվ զերիս ա-
ւուրս . և յայնմ հետէ փոխադրեցաւ ա-
թու թագաւորութեն 'ի Ալոտիմիր :

Յետ այնորիկ նուաճեաց Անդրէաս
և զՆովկորոտացիս՝ կարգեալ նոցա ըստ
խնդրոյ նոցին իշխան զորդի իւր զԵուրի :

Եւ մինչև սկիզբն արարեալ 'ի վայե-
լել յարդասիս արութեցն իւրոց՝ զրա-
ւեցաւ 'ի կենաց բռնական մահուամբ :

Քանզի Անդրէաս ունէր 'ի կնուծէ
զգուսար Քուչքայ՝ զտեառն Մոսքուա
քաղաքին . և սիրէր յոյժ զմի յորդւոց
աներոյն իւրոյ՝ որում անուն էր Յովա-
կիմ : Ապա 'ի պատժասպարտ դտանիլ
միոյ յեղբարցն Յովակիմայ՝ Անդրէաս
ետ զնա 'ի մահ, և Յովակիմ եդ 'ի մտի
վրէժխնդիր լինել մահու եղբօրն . և 'ի
գիշերի միում յարձակեալ 'ի վերայ ար-
քային գաւակցօք իւրովք՝ սպան զնա,
և զտուն նորա էառ յաւարի :

Եւ նա թագաւորեաց ամս երեքսա-
սան . և կալաւ զաթուն Միքայէլ Եու-
րեվիչ զամ մի, և մեռաւ՝ թողեալ
որդի մի Ալեպ անուն :

ՎՍԵՎՈՒՆՑ Գ. ԵՈՒՐԵՎԻՉ

ՉԷՏ Միքայէլի միաբան հաւանու-
թիւ ժողովրդեան ամբարձաւ յաթոռն
Վսեվոլոտ կրսերագոյնն յորդիս Եու-
րեայ: Որոյ կալեալ արդարապէս զսպա-
նողան Անդրէի՝ ընկղմեաց 'ի ծովակ մի
մերձ 'ի Վոլոտիմիր. և զկին նորա, որ-
պէս ասեն ոմանք, կախեալ 'ի գրունս
ապարանիցն արքունի՝ նետահար ետ
սպանանել, իբրև զհամախոհ սպանողաց
առնն իւրոյ:

Յետ այնորիկ փոյթ յանձին կալեալ
զխաղաղութենէ աշխարհին՝ նուաճեաց
ղբազումս յիշխանաց գաւառացն և եգ-
զնոսա 'ի բանտի. և խաղաղացաւ եր-
կիրն ամս երկուս:

Ապա յամին 1184 արշաւեցին Բուլ-
ղարք 'ի Ռուսիա, և Վսեվոլոտ յեա
մի անգամ մարտ գնեւրցն ընդ նոսա՝ հաշ-
տութի խնդրեաց 'ի նոցանէ:

Եւ թագաւորեալ ամս երեսուն և
հինգ՝ մեռաւ յամին 1212. և 'ի բազ-
մամեայ թագաւորութէ սորա է իմա-
նալ՝ թէ ոչ ինչ արժանի յիշատակաց
գէտք վրդովիչք խաղաղութե պատա-
հեցին 'ի Ռուսիա յաւուրս իւր:

Վսեվոլոտ ունէր որդիս Էօթն, որք
էին Կոստանդին, Պորիս, Եուրի, Եա-

րոտլաւ , Վլատիմիր , Սվեաթոսլաւ , և
Իւան . և 'ի մեռանել իւրում՝ բաժա-
նեաց նոցա զգլխաւոր քաղաքս պետու-
թէն , Եուրեայ պահեալ զթագաւորու-
թին Վոլոտիմիրայ : Այլ վաղ խանգա-
ցեալ նոցա ընդ բաժինս իրերաց՝ սկսան
անկանել ընդ միմեանս :

ԵՈՒՐԻ Բ . ՎՍԵՎՈԼՈՏՈՎԻԶ

ՄՍԹԻՍԼԱԻ զօրացեալ յաւուրս սո-
րա ախրեաց 'Նովկորոտայ , և օր ըստ օրէ
բազմացուցեալ զզօրս իւր՝ որսացաւ
յիւր կողմն և զՎոստանդին զեղբայրն
Եուրեայ , և յարեաւ 'ի վերայ նորա :
Եւ Եուրեայ կազմեալ բանակ ահագին
բազմութիւն զօրաց խաղաց ընդդէմ Մըս-
թիսլաւայ , և խրոխտանօք իմն քարոզ
կարդաց 'ի բանակին , զի թէ ոք խնայես-
ցէ յոսոխ իւր , և կամ գեթի վարեացէ
զնա և ոչ սպանանիցէ , մահապարտ
լիցի :

Այլ 'ի խառնել պատերազմին խոր-
տակեցան զօրք իւր . ինն հազարք 'ի նո-
ցանէ անկան 'ի մարտի անդ , և մեծ
մասն նոցա 'ի փախչել իւրեանց գետա-
մոյն եղեն . և ինքն Եուրի մերկացեալ
զսպառազինու թիւն իւր՝ շապկով և եթ
փախուցեալ գայր 'ի Վոլոտիմիր : Հա-
սին զինի նորա և Մսթիսլաւ և Վոս-

տանդին, և Եուրի անձնատուր եղև 'ի նոսա : Կոստանդին կալաւ զաթոռն, և զԵուրի արձակեաց յազատութի՛ կարգեալ նմա կալուածս իշխանութե՛ :

Այլ անդէն յառաջնում ամի թագաւորութե իւրոյ անկեալ յախտ ծիւրական, իբրև ետես զանձն 'ի դուրս մահու հասեալ՝ կոչեաց զԵուրի, և ետ 'ի նա անդրէն զթագաւորութիւնն, 'ի խնամն նորին յանձն արարեալ և զերեսին որդիսն իւր զԱստիլ, զԱսեվուրոս, և զԱլատիմիր :

Իսկ Մսթիսլաւ ոչ շատացեալ իշխանութիւն Նովկորոտայ՝ դիմեաց 'ի Կալիչ, և կրկնակի յաղթանակաւ էառ զայն 'ի Մաձառաց, յերկրորդումն ձերբակալ արարեալ և զարքայն նոցա զՔոլուման :

Ընդ այն ժամանակս յարձակեցան Բուլղարք 'ի սահմանս Աղլոտիմիրայ, և Եուրի գիւրաւ խոնարհեցոյց զնոսս 'ի խնդրել զհաշտութի, զի անտի և Թաթարք յաշխարհն Բուլղարաց արշաւէին :

Քանզի աշխարհակալն Չինկիզ խան զկնի արշաւանին 'ի Պարսս և 'ի Կասպս, խաղայր գայր ընդ դուռն Ալանաց յաշխարհն Փոլովցեաց : Ընդ որ զահի հարեալ Ռուսաց՝ սլաարաստեցան զգէմ ունել նոցա՝ հարիւր հազարօք, առաջ նորդութի Մսթիսլաւայ . և ոչ հաւանեալ սլաագամաւորաց Թաթարացն՝ որք յորդոր լինէին նոցա հանգարոտ կալ,

զի չիք ինչ՝ ասէին՝ մեր և ձեր . այլ և սպանեալ ևս զսպառաքամաւորսն՝ գրգռեցին զԹաթարս ՚ի պատերազմ՝ :

Որոց զառաջինն պարտութի կերպարանեալ ՚ի փախուստ դարձան . և հետամուտ եղէն նոցա Ռուսք աւուրս տանն , մինչև անցին երկաքանչիւր քանակքն ըստ գէտն Ղալզա՝ որ թափի ՚ի Սեաւ ծով . յայնժամ ընդ կրունկն դարձեալ Թաթարաց՝ ահագին կոտորած հասուցին ՚ի վերայ շփոթեւոցն Ռուսաց , և Փոլովցեաց նիզակակցացն նոցա . մանաւանդ ՚ի փախչել անդ Մըս թիւրաւայ սակաւաձեռն գնդաւ՝ հրձիգ արարեալ անմտութի զայլ անցի նաւակս իւրոյ քանակին . որով ՚ի սպառխորտակեցան Ռուսք , և զերծեալքն ոչ ինչ աւելի եղէն քան զողիս տասն հազար :

Այս յերկուս առաջս բաժանեալ Թաթարաց՝ դիմեցին աւին զՔիեւ , և զիշխան քաղաքին՝ որ աւուրս երկուս զգէմ կալեալ էր սլաշարմանն , և զայլ ևս երկուս յիշխանակցոց նորին սլընդեալ առանձինն յերկուս երկուս տախտակս , և նստեալ ՚ի վերայ նոցա՝ խնջոյս յաղթութե կազմեցին , և այնպէս չարամահ արարին զնոսա : Եւ ինքեանք խողացեալ ևս յառաջ , ՚ի հուր և ՚ի սուր ծախեցին զքաղաքս և զգիւղս , և լցեալք աւարաւ՝ դարձան անդրէն առ Չինկիզ , որ դեռ ևս ՚ի Պուխարա էր :

Ուր ուրեմն խլրտեցաւ Եուրի յառնել ընդդէմ թշնամեաց . այլ 'ի լսել զգարձ Թաթարացն յետս , և ինքն գարձաւ 'ի տեղի իւր :

Յետ այսորիկ ընդ ամս երեքտասան ցամն 1236 , յանդադար աղէտս սովու և սասանու թէց , պատերազմաց և յափրչտակու թեանց մատնեցաւ Ռուսիա . մինչև լցին զչափ աղէտից աշխարհին Թաթարք արշաւեալք անդր ան թիւ քաղմու թէ 'ի 1237 :

Ի խնդրել կուսակալ իշխանացն զօդնականու թի Եուրեայ , նա զլացաւ նոցա . և Թաթարաց անխափան շրջան առեալ ընդ ամենայն կողմանս աշխարհին՝ կոտորեցին զգիմակացս , և ընդ որս հաճէինն՝ 'ի գերու թէ վարեցին . առին և զՄոսքուա , և զիշխան քաղաքին զորդի Եուրեայ չարաչար մահուամբ խողխողեցին :

Ի լուր եղելոցս փախեաւ Եուրի , և անկաւ առ թոռունս և ազգակիցս իւր յայնկոյս Առկա գետոյ . այլ 'ի ժխտել նոցա զձեռնտուութիւն իւրեանց նմա , որպէս արար նա ինքն այլոց իշխանաց իւրոց , եդ 'ի մտի յուսահատ համարձակութեամբ մարտ գնել վանել զթըշնամիս :

Առեւցան և իւրքն նովին ոգւով և խաղացին ընդդէմ Թաթարաց , որք ահա ընդ առաջ նորս գային՝ առեալ զԱռտախմիր քաղաք , և հրկէզ արարեալ ,

և զկանայս և զորդիս Եռերեայ՝ զապա-
ւինեալս յեկեղեցին՝ ՚ի սուր սուսերի
կոտորեալ :

Բազում արուժին գործեցին Ռուսք
՚ի սրատերաղմին . այլ իբրև անկաւ անդ
Եռի՝ լքան սրատասեցան և իւրքն,
և ցիր և ցան եղէն : Եւ Թաթարք շատ
համարեալ առ ժամն զյաղթանական՝
դարձան ՚ի բուն բանակն իւրեանց :

Քառասուն և ինն ամաց էր Եռերի
՚ի մեռանել իւրում, անուամբ չափ
գողցես թագաւորեալ նախ յամին
1212, և ՚ի 1217 անկեալ յաթուոյն,
և ՚ի միւսում ամին անդրէն հաստա-
տեալ, և ոչ ինչ գործ թագաւորի ցու-
ցեալ մինչև ցմահ իւր :





ԵՅՐՈՍԼԱՒ Բ . ՎՍԵՎՈԼՈՏՈՎԻԶ

Ի ԲՐԵՒ ազգ եղև Եարոսլաւայ որդւոյ Վսեվոլոտայ նահանջն Թաթարաց, փութացաւ հաստատեաց զորդին իւր զԱղէքսանդր յիշխանութե՛ն Նովկորոտայ, և գնաց ՚ի կանգնել զաւերակս Վոլոտիմիրայ. ժողովեաց անդր զքնակիչս քաղաքին զցրուեալս, և բաժանեաց ՚ի տոհմակից իւր իշխաննն զգաւառս անառաջնորդս : Ապա խաղաց ՚ի Վալիչ, և գերի տարաւ զիշխանն նորին հանդերձ կնաւն :

Ընդ այն աւուրս Մանգու զօրավար Պադու խանին հրեշտակս արձակեալ առ Միքայէլ որդի Եարոսլաւայ իշխան Քիեւայ՝ խնդրէր զքաղաքն. այլ նա հրամայեաց սպանանել զհրեշտակսն. և յաւելեալ վատուի ՚ի նենգն՝ փախստական թաքթաքուր շրջէր ՚ի Մաճառս :

Ի գէպ ժամուն տիրեաց Քիեւայ Ռոսթիսլաւ իշխանն Չէրնիկովայ. սակայն և զնա վանեաց անտի այլ ոմն իշ-

խան . և ինքն իսկ խոյս տուեալ յահէ
Թաթարաց՝ յանձն արար զքաղաքն
Դեմետրի ումեմն իշխանի :

Իսկ Պադու խան իրազեկ լեալ ստան-
ման դեսպանացն , եկն անձամբ և ազգ-
արար ՚ի Քիեվ տալ զքաղաքն՝ խաղա-
ղու թէ պայմանօք . և ՚ի չառնուլ յանձն
Դեմետրի , սկսաւ բախել զորմունան
բաբանօք . և մինչև խրամատեցաւ մի
կողմն պարսպին , քաղաքացիքն այլ
պարիսպ կանգնեցին ՚ի ներքուստ , և
քաջու թք մարտ գնէին :

Այլ իբրև Դեմետր կարեւիւր խոցե-
ցաւ , զեղան ՚ի ներքս Թաթարքն և
սկսան յանխնայ կոտորել զՔիեվացիս .
բայց Պադու արդեւ զնոսա , մեծարեաց
զԴեմետր , և ներեաց քաղաքացւոցն
վասն քաջու թք զդէմ ունելոյ նոցա
սրաշարմանն . և կարգեալ նոցա իշխան
զմի ոմն յիւրոցն՝ մեկնեցաւ անտի , և ըստ
Դեմետրի խրատուցն դէմ եդ խաղալ
՚ի Ղէհս և ՚ի Մաճաուս՝ յուսով յոր-
վագոյն աւարի :

Սակայն սուղն այն խաղաղուի Ռու-
սիոյ վաղ վրդովեցաւ անդրէն ներքին և
արտաքին պատերազմօք :

Զի տեսեալ զհարուածս աշխարհին
Ռուսաց՝ խաչակիրքն Ղիվոնիացիք և
ուսմանակիցք նոցա՝ օգնականուք թա-
գաւորացն Դանեաց և Շվէտաց խաղա-
ցին ՚ի Ռուսիա , և սախպէին զՆովկորո-
տացիս անձնատուր լինել :

Եւ ընդդէմ նոցա Աղէքսանդր որդի Եարոսլաւայ, և ճակատ տուեալ յափն՝ Նեւա գետոյ՝ հոյակատ յաղթանակ կանգնեաց ՚ի տեղւոջն . վասն որոյ և կոչեցաւ Նեւաքի, այսինքն է Նեւացի :

Մինչդեռ ոգի առեալ հանդարտեալ կային Ռուսք ՚ի Վոլոտիմիր և ՚ի Նովկորոտ, առաքեաց կոչեաց Պագու խան զԵարոսլաւ ՚ի բանակ իւր, զի յայտ արասցէ նա զնշանակս հնազանդութեան իւրոյ և զհպատակութե . և իբրև եկն՝ հաստատեաց զնա ՚ի Թագաւորութեն . զնոյն արարին և այլք յիշխանացն Ռուսաց : Եւ Եարոսլաւ մեռաւ ամաց յիսուն և եօթանց, Թագաւորեալ ամս եօթն :

Լուեալ Միքայէլի զմեկնեւ Թաթարաց՝ դարձեալ երևեցաւ ՚ի մէջ, և կալաւ զՉէրնիկով : Սմին իրի փոխանորդն Պագու խանին հարկեցոյց զնա գնալ առ Պագու, զի խոստացեալ նմին զհպատակութի իւր՝ առցէ անդրէն զիշխանութին : Եւ նորա վստահացեալ ընդ խոստումնն օրինակաւ այլոց իշխանաց՝ գնաց ՚ի մեծ բանակն :

Սովորութի էր առ Թաթարս, զի օտարազգի ոք եկեալ յայց խանին՝ անցանէր նախ ընդ հուրն՝ որ վառեալ կայր աստի և անտի դրանց խորանին, իբր ՚ի սրբել զանձն և զնուէրսն, և ապա երկրպագեալ առաջի խորանի խանին՝ մտանէր ՚ի ներքս : Արդ կարծեալ

Միքայէլի՝ եթէ դիք ոմանք իցեն 'ի ներքս 'ի խորանի անդ , սնդեցաւ և ոչ կամէր երկիր սլադանել :

Ընդ որ ցասուցեալ խանին՝ յիշեաց և զառաջին դաւաճանութիւն դեսպանացն , և սպան զնա . այլ անիմաս արձակեաց զիշխանն Պորիս՝ որ եկեալն էր ընդ Միքայէլի :

ԱՆԴՐԷՍՍ Բ . ԵՆՐՈՍԼԱՒԻԶ

ՊԱԴՈՒ խան իբրև տէր համօրէն Ռուսիոյ՝ սահանջեաց և յԱղէքսանդրէ՝ Նեւսքեայ զհպատակութի . և նորա առեալ ընդ իւր զեղբայր իւր զԱնդրէաս՝ գնաց առ նա . և սակս բարձրահասակ և գեղադիտակ և ազնուական կերպարանացն , և արխական համարձակութեն մեծապէս պատուեցաւ 'ի խանէն , և կարգեցաւ 'ի նմանէ իշխան հիւսիսային կողմանցն Ռուսիոյ :

Իսկ զԱնդրէաս կացոյց խանն իշխան վոլոսիմիրայ , և ետ նմա զօրս 'ի թիկունս , որովք վանեաց նա յաթոռոյն վոլոսիմիրայ զՍվեաթոսլաւ զեղբայրն Միքայէլի , որ այն ինչ գեռ ևս բռնացեալ կալեալ էր զաթոռն :

Ընդ այն ժամանակս մինչդեռ տակաւին Թաթարք ունէին զՔիւիւ՝ Դանիէլ ոմն իրաւացի ժառանգորդ համա-

րեալ իշխանութի քաղաքին՝ ընկալաւ զհռովմէական դաւանութի, և գտեալ շնորհս առաջի քահանայապետին հռովմայ՝ կոչեցաւ և թագաւոր Ռուսիոյ : Արդ ընդ սմա մտերմացեալ Անդրէի՝ յանձն իւր ևս ձգեաց զատելութի Ռուսաց և զԹաթարաց՝ իբրև բարեկամ ազգաց օտարաց հեռաւորաց . և դիմեալ Թաթարաց զօրու ծանու ասպատակեցին յաշխարհ նորա , և զնա փախուցին կնսուն հանդերձ ՚ի Լիվոնիա , և ետուն զիշխանութի նորին Աղէքսանդրի :

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ե . ԵԱՐՈՍԼԱՒԻՉ
ՆԾԻՍՔԻ

ՍԵ այր անձնանուէր յօգուտ հայրենի աշխարհին , ՚ի բազմավրդով ժամանակին ամենայն ոգևով ձգնեալ ՚ի հանդարտել ըստ կարի զչփոթս , էր զի զյանցուածս իւրոցն ինքնին պատուհասէր , և էր զի անձամբ երթեալ առխանն՝ ներումն վասն իւրոցն հայցէր :

Այլ առ կենդանութի նորա ոչ ծանեան Ռուսք զյարդ առաքինւոյ առնն : Եւ Նովկորոտացիք ձեռն տուեալ եղբոր նորին Եարոսլաւայ՝ վանեցին ՚ի քաղաքէն իւրեանց զՎասիլ զորդի Աղէքսանդրի : Սակայն Աղէքսանդր վերստին հաստատեաց զորդի իւր յիշխանութեն .

ապա խաղաց և յաշխարհն Շվէտաց ,
և էած գերի և աւար բազում :

Իբրև մեռաւ Պաղու խան , կարգե-
ցաւ 'ի մեծէ խանէն փոխանակ նորա
զօրավար Պուրղա ոմն . որոյ արձակեալ
ընդ ամենայն Ռուսիա հարկահանս , ա-
ռաքեաց զմի ոմն և 'ի Նովկորոտ . այլ
'Նովկորոտացիք չառնուին յանձն , մին-
չև եկն Աղէքսանդր , և զխուովարարն
պատուհասակոծ արարեալ , և 'ի տեղի
Վասլի կարգեալ զմիւս որդի իւր զՆե-
մետր , հաւանեցոյց զՆովկորոտացիան
անխափան հարկիլ թաթարաց՝ ա-
նուամբ ընծայաբեր լինելոյ :

Մեռաւ 'ի ժամանակին յայնմիկ
Գիուգ մեծ խանն թաթարաց թուն
Չինկիզ խանին , և յեա բազում շիո-
թից՝ զօրացեալ տիրեաց Քուսլայխան :
Եւ Ռուսաց պատէհ առեալ զալմուկս
նոցա՝ միաբանեցան 'ի ծածուկ քա-
ղաքք բազումք , և 'ի ժամագիր պահու
յարձակեալ կոտորեցին զամենայն ըզ-
հարկահանս թաթարաց :

Ի տաղնապ անհնարին պաշարեալ
Աղէքսանդրի ընդ այն՝ մինչդեռ վարա-
նէր ելս իրացն դտանել , պատուէր հրա-
մանի ընկալաւ 'ի Պուրղայէ՝ զօրաժողով
լինել և պատրաստիլ 'ի պատերազմ :

Յայնժամ արին այն զանձն 'ի կշիւ
եդեալ փոխանակ ընդ ազգին՝ գնաց
միայնակ առ Պուրղա , և յայտ արա-
րեալ թէ ոչ մի ինչ յեղէլոցն յիւր գի-

տուժի եկեալ էր, յաւել առաջի դնել աղերսիւ զասպաշաւ Ռուսաց ընդ եղեալսն, և խոստացաւ տուժիւք հարկաց վճարել զյանցուածն. և զօրավարին սքանչացեալ ընդ արիական վստահութի և ընդ հաւատարմութին Աղեքսանդրի, շնորհեաց Ռուսաց զյնսան:

Այլ Աղեքսանդրի խօթացեալ զճանապարհայն և մերձեալ 'ի մահ' եմուտ 'ի կարգ կրօնաւորութեան և կոչեցաւ Ալեքս. և դասեաց զնա ազգն իւր 'ի դասս սրբոց. ասպա յետ ժամանակաց և մեծն Պետրոս կառոյց 'ի պատիւ նորա մենաստան 'ի տեղւոջն ուր յաղթեալ էր Աղեքսանդր Շվետաց, և կարգեաց յանուն նորա զկարգ մի ասպետաց:

Եւ մեռաւ Աղեքսանդր Նեւսքի յաւմին 1264, լեաց ամաց քառասուն և չորից, և թագաւորեալ ամս երկոտասան. և եթող որդիս չորս, զՎասիլ, զԴեմետր, զԱնդրէաս և զԴանիէլ:

ԵՄՐՈՍԼԱՒ Գ. ԵՄՐՈՍԼԱՒԻԶ

Ի ԳՆԱԼ Աղեքսանդրի առ զօրավարն Թաթարաց՝ Նովկորոսացիք բանս եղեալ ընդ եղբօր նորին Եարոսլաւայ՝ պատրաստեցան 'ի բաց վարել զԴեմետր զորդի Աղեքսանդրի, և զնա կացուցանել իւրեանց իշխան՝ յուսով մեծամեծ ազա-

տութեանց և բարեաց, զորս խոստանայր նա նոցա : Այլ 'ի մեռանել Աղէքսանդրի կալաւ նա զաթոռ թագաւորութեն Ռուսաց, և խաղաց 'ի վերայ Տոմանդեայ ուրումն լիթուանիացւոյ՝ որ բռնացեալ էր 'ի Փսքով . բայց ոչ ինչ կարաց վճարել, զի և Նովկորոտացիք յետս կացին 'ի նմանէ :

Ապա օգնականութիւն թաթարաց յաղթանակ կանգնեալ 'ի վերայ Գերմանացւոց արշաւելոց 'ի կողմանս Նովկորոտայ՝ վստահութիւն եմուտ 'ի Նովկորոտ . այլ քաղաքացիքն անգոսնեալ վանեցին զնա անախի իբրև երդմնազանց և ստախոս : Եւ նորա լի ցասամբ զարձ արարեալ 'ի Վոլոտիմիր՝ գունդ կազմեաց ելանել ընդդէմ Նովկորոտացւոց, և խնդրեաց զորս 'ի Մանգու խանէն՝ ասելով եթէ ոչ վասն այլոյ իրիք անգոսնեցին զնա Նովկորոտացիք, բայց զի ատելի է նոցա նախանձ հաւատարմութիւն իւրոյ առ թաթարս :

Մինչդեռ նա յայտոսիկ էր՝ Վասիլ եղբայր նորա իշխան Քոսթրոմայ որոացաւ զՆովկորոտացիս յիւր կողմն, և գնացեալ ինքնին առ Մանգու՝ յայտնեաց նմա զբուն պատճառս թշնամութիւն Նովկորոտացւոց ընդդէմ Եարոսլաւայ . և խանն յետս կոչեաց անդրէն զզօրսն՝ զորս առաքեալ էր յօգնութիւն նմա :

Սակայն Եարոսլաւ խաղաց որդւովքն

իւրովք և նիզակակից իշխանաւն Սմոլնսքայ 'ի Նովկորոտ . և տեսեալ զդիմամարտութի հզօր քաղաքացւոցն , բարեխօս կալաւ զմետրապօլիան Քիււլայ . և նորա ընդ մէջ մտեալ հաւանեցոյց զժողովուրդն՝ բանալ զգրունս քաղաքին՝ յայտ առնելով եթէ ստրջացեալ է Եարոսլաւ ընդ եղեալսն , և խոստանայ անշուշտ կատարել զխոստմունս իւր :

Այլ Եարոսլաւ յերկրորդ ամի հաշտուեթէն մեռանի՝ թագաւորեալ ամս եօթն , և թողեալ որդի մի անուն Միքայէլ :

ՎԱՍԻԼ Ա . ԵԱՐՈՍԼԱՅԻԲ

ՎԱՍԻԼ եղբայր Եարոսլաւայ թագաւորեալ 'ի Վոլոսիմիր նիզակակցուեթէ հարկահանին թաթարաց՝ գիմեաց 'ի վերայ բնակչաց Նովկորոտայ , որոց առանձին իշխան կացուցեալ էր իւրեանց զԴեմետր . և նորա տեսեալ զվտանդ աշխարհին յերեսաց զօրացն Վասլի և թաթարաց , հաւանեցոյց զՆովկորոտացիս անձնատուր լինել Վասլի , և ինքն մեկնեցաւ 'ի Փերեսլաւ :

Եւ 'ի մեռանել Վասլի յետ ամաց հնդից , Դեմետր անդրէն կալաւ զիշխա-

նուլթիւնն Նովկորոտայ և ՂԱՂՈՒԹԻՄԻՐԱՅ
միանգամայն :

ԴԵՄԵՏՐ Ա . ԱԼԿԻՔՍԱՆՏՐՈՎԻԶ

ԵՒ սա ըստ օրինակի առաջնոցն ա-
նուամբ չափ և եթ թագաւորեաց . ոչ
միայն վասն զի թաթարք էին բնիկ տեալք
աշխարհին , և ըստ կամս աստատակ
սփռէին ընդ ամենայն կողմն Ռուսիոյ ,
այլ և վասն երկապառակուլթեանց նոցին
իսկ Ռուսաց :

Զի Անդրէաս կրսեր եղբայր նորա
ակն եղեալ աթոռոյն՝ գրգռեաց զԹա-
թարս ընդդէմ Դեմետրի , և ընկալաւ
ի մեծէ խանէն զիշխանուլթի Վոլոսի-
միրայ . և եկեալ ազգ արար այլ և այլ
իշխանաց , թէ կամք այս են Մանգու
խանին՝ զի միաբանեացին նոքա ընդ իւր
ընդդէմ Դեմետրի . և նոքա յանձին
կալան :

Յայնժամ Դեմետր սակաւ ուք ունամբք
խորհրդակցօք անկաւ ՚ի Նովկորոտ , զի
թերևս ձեռն տացեն ինքեան : Այլ բը-
նակիչք քաղաքին զէն առեալ հալա-
ծեցին զնա մինչև յամին Իլմեն լճին , և
զերկուս գստերս նորա և զկանայս իշ-
խանացն որ ընդ նմա՝ ՚ի գիպահոջ ար-
գելին , և ասպա հրաւիրեցին զԱնդրէաս
գալ սիրել քաղաքին իւրեանց :

Իբրև ետես Դեմեար զմեկնել թա-
 թարացն՝ գուհոգ կազմեաց գալ վանել
 զյափշտակողն 'ի Նովկորոտայ . այլ նո-
 րա աճնսպարեալ անկեալ 'ի մեծ բա-
 նակն թաթարաց , դարձաւ եկն բազ-
 մութի զօրաց , և ոտնակոխ արար զամե-
 նայն սահմանս Դեմեարի . որոյ ոչ կա-
 րացեալ հանգարտել կալ ընդդէմ Ան-
 դրէի , ապաստան եղև առ Նողայ թա-
 թարս , որք ինքնագլուխք էին . և նիզա-
 կակցութի նոցա եկն 'ի Աղլոտիմիր . և
 Անդրէաս խոնարհեցաւ խնդրել զսա-
 զաղութի :

Ի մեռանել Մանգու խանին և 'ի
 յաջորդել թուքադարայ՝ Անդրէաս գը-
 նացեալ նմա յայցելութի՝ չարախօսեաց
 և զԴեմեարէ , զի բարեկամութի էր ընդ
 Նողայս . և նա ետ 'ի ձեռս եղբօր իւրոյ
 զօր բազում և արձակեաց ընդ Անդրէի
 'ի Ռուսիա , զի հաստատեսցեն յաթոռն
 Աղլոտիմիրայ զԱնդրէաս :

Եւ քանզի վաղագոյն խոյս տուեալ
 էր Դեմեար 'ի Փսքով՝ յաւարի առին
 թաթարք զԱղլոտիմիր և զմերձակայ
 քաղաքսն , և Անդրէաս ժառանգեաց
 զամայացեալ աթոռ թաղաւորութեն .
 այլ 'ի գալ ամին միւսոյ դաշն ուխտի
 հաստատեցին ընդ միմեանս եղբարքն
 երկոքեան , և Անդրէաս դարձոյց ան-
 դրէն առ Դեմեար զԱղլոտիմիր և զա-
 մենայն երկիր նորա :

Սակայն և նորա ոչ ընդերկար վայե-

լեալ 'ի կարծեցեալ թագաւորու թէն մեռաւ յամին 1294, թագաւորեալ ամս հինգ . և եթող զորդի մի Իւան անուն :

ԱՆԴՐԻՅԱՍ Գ . ԱԼԵՔՍԱՆՏՐՈՎԻՉ

ՄԱՀՈՒԱՄԲՆ Դեմեարի միայն մնացեալ Անդրէաս օրինաւոր ժառանգ աթոռոյն Վոլոսիմիրայ, և տեսեալ զի Մոսքուա միայն զերծ մնացեալ էր յաւշաւանաց թաթարացն և գամ քան ըզգամ սոյծառանայր, զհետ եղև յափրշտակէլ զայն յեղբօրորդւոյն Խուրմէ Եուրեայ :

Այլ մինչդեռ գառնայր զօրօք 'ի մեծ բանակէն թաթարաց՝ մեռաւ յամին 1304, և ասրեցաւ Ռուսիա 'ի նորանոր հարուածոց :

ՄԻՔԱՅԷԼ Բ . ԵԱՐՈՍԼԱՅԻՉ

ՅԵՐԻՑ Իշխանաց ձգտելոց 'ի ժառանգուի աթոռոյն Անդրէի, որք էին Դեմեար Իշխան թաթարայ, Եուրի Իշխան Մոսքուայի, և Միքայէլ որդի Եարոսլաւայ երրորդի, ուխախւք ժողովըրդեանն ընտրեցաւ Միքայէլ, և հաստա-

տեցաւ 'ի խանէն Թաթարաց, և զամն հինգ խաղաղութիւն վարեաց զԹագաւորութիւն :

Ապա 'ի մեռանել Թուքադարայ, և 'ի յաջորդել որդւոյ նորին Իւզպէքայ՝ գնացեալ Միքայէլի յայց նորոյ խանին՝ մեծապէս պատուեցաւ 'ի նմանէ ինքն և մետրապօլիտն Պետրոս, զոր ընդ իւր ածեալ էր :

Այլ մինչդեռ նա անգ էր՝ սով սաստիկ անկաւ 'ի Նովկորոտ, և Եուրի իշխան Մոսքուայի համբաւեաց չարամասք, իբրու եթէ անխորհուրդ տեսչութեն Միքայէլի արգասիք իցեն հարուածքն, և ինքն կալաւ զիշխանութի քաղաքին :

Իբրև արդ եղեն իրքն առ Իւզպէք, ծանրացասումն եղեալ՝ առաքեաց կոչեաց զԵուրի յառնել դալ անյասաղ առ ինքն, և զՄիքայէլ դարձոյց զօրօք հանդերձ 'ի տեղի իւր . յորոյ 'ի հասանելն 'ի Նովկորոտ, քաղաքացիքն խնդրեցին զխաղաղութի :

Իսկ Եուրի իւրով կեղծուպատիր բանիւք ընդ միտ մտեալ խանին՝ այնպէս իմն յինքն յանկոյց զսիրտ նորա, զի էառ 'ի կնութի զքոյր խանին՝ որ յեա մկրտութեն անուանեցաւ Ագաթա : Ապա յամին 1517 ընկալաւ և զանուն թագաւորութե, և դարձաւ 'ի Ռուսիա :

Զայն զգացեալ Միքայէլի՝ գունդ կազմեաց և ել ընդդէմ Եուրեայ . որոյ

տեսեալ զանբաւականութի ձեռնն իւրոյ՝ առաքեաց խնդրեաց զխաղաղութի՝ հրաժարելով՝ ի թագաւորութէն Վրացոսիմիրայ . և Մլիքայէլ հաւատաց նմա :

Իսկ նորա ի ծածուկ զիւրեւածեալ զոմանս յիշխանաց, և զՆովկորոտացիս, խաղաց պաշարեաց զՄլիքայէլ ի Թվերքաղաքի . սյլ նա իւրովքն հաւատարիմ զօրօք հալածեաց զնա ի բաց, և զկիննորին զԱգաթա կտլեալ ած ի Թվեր, որ և յետ սակաւուց հիւանդացեալ մեռաւ անդէն :

Զայս պատճառս առեալ նենգժոտն Եուրի՝ համբաւեաց՝ եթէ Մլիքայէլ առ թշնամութե գեղ մահու արբոյց կնոջ իւրում քեռ մեծի խանին . և թէպէտ նա ի ցոյց անմեղութե իւրոյ առաքեաց առ խանն զորդի իւր զԿոստանդին պատանի չորեքտասանամեայ, սակայն Եուրի անձամբ երթեալ զայրացոյց զոգին Իւզսէքայ ընդդէմ Մլիքայէլի բազմապատիկ զրպարտութեք . մինչև գեսպան առաքեաց առ նա խանն, զի փութանակի եկեալ յանդիման լիցի ինքեան : Իսկ նորա յառաջ քան զժամանեւ գեսպանին յուղի անկեալ դայր առ խանն . և զճանապարհայն գիւրաւ հաւանեցոյց զգեսպան խանին զայր ըւտաբարոյ ընդ անմեղութի իւր . և ի պատմել առնն զամենայն դաւաճանութիս Եուրեայ, և թէ հանդերձեալ է խանն ի գիպահոջ արկանեւ զՄլիքայէլ, բազումս թա-

խանձեցին զնա որդիքն իւր և բարեկամքն , զի մի երթիցէ անձամբ առ խանն , այլ նա ոչ անսաց նոցա :

Եւ իբրև եհաս առ Իւզպէք՝ նա զառաջինն բարեկամաբար ընկալեալ զՄիքայէլ , ապա 'ի նորոգել զըպարսու թէցն՝ արդել զՄիքայէլ 'ի դիպահոջ առ 'ի դատաստանաւ քննել զնա . և որչափ ջանացաւ Իւզպէք արդարապէս առնել զվճիռն , սակայն պատրեալ 'ի դատաստանողիցն սուտ ամբաստանութեց՝ արկ զՄիքայէլ 'ի կապանս , և մատնեաց զնա 'ի ձեռս կուսակցին Եուրեայ Ղարղատի իշխանին : Եւ նորա եղեալ 'ի մտի դառն մահուամբ վճարել զՄիքայէլ 'ի կենաց՝ ամիսս ինչ պնդեաց զպարանոց նորա 'ի կոճեղս ծանունս , և ապա դատապարտեալ 'ի մահ՝ ամ զնա 'ի բաղանիս , զգեցոյց հանդերձս ոսկեդիպակս , և արար նմա խնջոյս բաղմածախս , զի յուշ լիցին նմա նախնի պերճութիւնքն : Եւ իբրև յագեցան Եուրի և Ղարղատի ընդ ողորմ տեսիլ վատաբախտ արքային՝ առին զնա դահիճքն , և ծայրակառուր արարեալ յոտից և 'ի ձեռաց , կախեցին զնա ընդ որմ ինչ խարխուղ զպարանոցէն , և յանկանել որմոյն մինչդեռ այսր անդր շարժէին զնա դահիճքն , մի ոմն 'ի Ռուսաց առ դուրթ աղետիցն խոյեաց դանակաւ ընդ սնակուշան Միքայէլի , և զերծոյց զնա 'ի դառն տանջանաց անտի : Ի տեսիլ դիականն յու-

զէցան գուծք թաթար իշխանին . որ և
տեսեալ զի Եուրի անկարեկիր գիւմօք
պլնոյր ընդ նա , ասէ ցնա . « Այ գազան
անադորոյն , և զիարդ ասորժ ակնար-
կես 'ի մերկ գիական եղբօր քո » : Եւ նո-
րա շառագունեալ՝ հրամայէ ծածկել
ղզին պատառաւ , և հրաման հայցէ
տանել զնա 'ի Ռուսիա :

Այսպէս բարձաւ 'ի Ռուսաց այրն
քաղցրաբարոյ , արի և խաղաղասէր
յամին 1317 , թագաւորեալ ամս երեք-
տասան . և էին նորա որդիք չորք . Դե-
մետր , Ալէքսանդր , Կոստանդին և
Վասիլ :

ՆՈՒՐԻ Գ . ՏԱՆԻԼՈՎԻՉ

Չէս երկց ամաց մեռանելոյ Մի-
քայէլի եկն Եուրի 'ի Ռուսիա՝ առեալ
'ի խանէն զթագաւորուծի Վոլոտիմի-
րայ , և 'ի ընուլ զանյագ արծաթսիրու-
ծիւն թաթարաց՝ ծանր ծանր հարկա-
պահանջուծք կեղէքէր զժողովուրդ
իւր :

Տեսեալ Դեմետրի որդւոյ Միքայէլի
զանխրաւուծիս Եուրեայ և յիւրում
գաւառին , և երկուցեալ թէ գուցէ
զըպարտեսցէ զնա խորամանկ հօրեղ-
բայրն իւր՝ իբրու զսակ հարկացն թերի
հատուցեալ , եւ գնաց առ Իւզպէք , և

ծանոյց նմին զբռնութիս Եուրեայ. և քանզի խանն կանխաւ իսկ 'ի կասկածոս միաս էր զնենգաւորէն, եւ Գեմեարի զթագաւորութին Վոլոսիմիրայ, և արձակեաց զնա 'ի Ռուսիա:

Զայն զգացեալ Եուրեայ՝ աճապարեաց երթալ առ խանն և ամբաստան լինել զԳեմեարէ. այլ զճանտարհայն եհաս 'ի վերայ նորա Ալեքսանդր եղբայր Գեմեարի, և զուղեկից բարեկամս նորին ցրուեալ՝ հալածեաց զնա 'ի Փսքով:

Ի միւսում ամին գնաց Եուրի առ խանն. գնաց և Գեմեար զկնի նորա, և սա շնորհս գտեալ առաջի Իւզակէքայ՝ հանգարտեցոյց զնա, և ապա 'ի վրէժ արեան հօր իւրոյ՝ սպան և զԵուրի:

Սակայն և ինքն չև լցեալ զքսան և եօթն ամ հասակին՝ սպանաւ յեղբօրէն Եուրեայ յԱլեքսանդրէ, որ էառ զթագաւորութին Վոլոսիմիրայ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ. ՄԻՔԱՅԼՈՎԻԶ

ԱՂԵՔՍԱՆԴՐ փոխանակ տաղտկալոյ ընդ աթոռն՝ որ ծխէր տակաւին յարիւն հօր իւրոյ, և եղբօրն, և հօրեղբօր, գնաց առ Իւզակէք, և ընկալեալ զթագաւորութիւնն՝ եկն բնակեցաւ 'ի

Թվեր . զի ՎՂՂՈՒԹԻՄԻՐ աւերակ և ամայի մնացեալ էր :

Խորհեցեալ Իւզսէքայ, որպէս աւանդէն պատմագիրք Ռուսաց, յիւրմէ ազգէն կացուցանել զոք թագաւոր ՎՂՂՈՒԹԻՄԻՐայ և Նովկորոտայ, առաքեաց առ Աղեքսանդր զՍեչէլ խան . որում և պատուէր ետ սպանանել զԱղեքսանդր և զիշխանս նորա, և զամենայն աւագանին Թվերայ : Աղեքսանդր մեծապէս սիրով հիւրընկալաւ և հանգոյց զՍեչէլ և զիշխանս նորին յապարանս իւր . այլ իբրև զգաց զգաւն՝ ՚ի նմին գիշերի կոտորեաց զամենայն զԹաթարս որ գտան ՚ի Թվեր, և զապարանսն ուր փախուցեալ էր Սեչէլ խան իւրովքն հանգերձ՝ այրեաց ՚ի վերայ նոցա :

Յայնժամ Իւան եղբայր Եուրեայ՝ առ անհաշտելի ռսութեանն զոր ունէր ընդ իշխանս Թվերայ՝ ազգ արար Իւզսէքայ զեղեալսն, և ընկալեալ զԹագաւորութի ՎՂՂՈՒԹԻՄԻՐայ՝ եկն բազմութի զօրաց Թաթարաց և այրեացաւեր արար զԹվեր և զսահմանս նորին . և Աղեքսանդր ամրացաւ ՚ի Փսքով :

Ասա տիրեաց Իւան և Նովկորոտայ, և եդեալ անդ զոմն տեղակալ իւր՝ ինքն գարձաւ անդրէն առ խանն :

Իսկ Աղեքսանդր յետ տասն ամաց կոտորածի Թաթարացն՝ այն է յամին 1538 ՚ի մեծի բանակի անդ նոցա հատոյց զվրէժն մահուամբ իւրով :

Եւ էին նորա ուստերք երեք . Ֆէոտար
կամ Թէոդոր, Վսեւլովտա և Մլէքայէլ .
յորոց աւաջինն սպանաւ ընդ հօր իւ-
րում : Եւ դստերք երկու , Մարիամ և
Յուլիանէ . և յերկրորդէս յայտնանէ՝
որ ամուսնացաւ ընդ արքային Շվէտաց՝
իջանէ առհմն Պետրոսի Գ , կայսեր Ռու-
սիոյ , և Պօղոսի Ա , և Աղէքսանդրի , և
այժմու ՆԻՎՈՂԱՅՈՍԻ Ա , ինքնակալին :

ԻՒԱՆ Ա . ՏԱՆԻԼՈՎԻՉ

ՔԱԼԻԹԱ

ՊԱՅՄԱՆ Թագաւորելոյն Իւանայ էր
առաջ 'ի ձեռս Իւզպէքայ զԱղէքսանդր ,
կամ կորուսանել զնա . վասն որոյ ընդ
Թագաւորէն հրամայեաց Աղէքսան-
դրի երթալ անյապաղ առ խանն . և 'ի
չանսալ նորին՝ ստիպեաց զամենայն իշ-
խանս Ռուսաց յառնել ընդդէմ նորա :
Այլ առ ժամն հարկեալ զդէմ ունել
Գերմանացւոցն արշաւելոց դէս 'ի Նով-
կորոտ՝ ետ մետրապօլիին իւրում ընդ-
բանագրանօք արկանել զԱղէքսանդր և
զկուսակիցս նորին . և նա մեկնեցաւ 'ի
Լիվոնիա :

Իբրև ետես Իւան՝ զի նիզակակիցք
իւր ցրուեցան յիւրմէ , և կուսակիցք
Աղէքսանդրի օր ըստ օրէ յաւելուն ,
գնաց առ Իւզպէք , և 'ի չքմեղս եղև

ընդ ոչ յաջողէլ խորհրդոց իւրոց՝ որ վասն Աղէքսանդրի . և խանին ներողաւմիտ դտեալ առ Իւան՝ յաւելլ հրաման և ստալ, զի թէ կամի հաշտեսցի ընդ Աղէքսանդրի :

Ընդ այս ներողամտութի խանին վըստահացեալ Աղէքսանդրի՝ առաքեաց առ նա զորդին իւր զՖէոտոր . զոր սիրով ընկալեալ Իւզսկէքայ՝ ազգ արար Աղէքսանդրի անձամբ գալ առ ինքն և տալ պատասխանի վասն կոտորածի Թաթարացն : Եւ Աղէքսանդր ոչ դանդաղեցաւ դնալ առ նա ՚ի պատէհ ժամուն՝ յորում պատրաստէր խանն խաղալ պատերազմաւ ՚ի Պարսս : Եւ խանին շնորհեալ նմա զյանցանան, ետ և զիչ խանութին Թվերայ ՚ի պարգևս :

Սակայն այլք յիշխանացն Ռուսաց, և մանաւանդ Իւան՝ վերատին նախանձու և ատելութի վառեալ ընդդէմ Աղէքսանդրի, սկսան չարախօսել զնմանէ առ Իւզսկէքայ . և մինչդեռ Աղէքսանդր առաքէր առ խանն զորդի իւր զՖէոտոր, Իւան կանխեալ յառաջ քան զնա՝ զարթոյց ՚ի սիրտ Իւզսկէքայ զառաջին զայրոյցսն . և նորա կոչեցեալ զԱղէքսանդր՝ դիտատեաց զնա և զորդի նորուն, յամին 1538 :

Զհետ երկոց ամաց մեռաւ և Իւան ծրդեալն ՚ի չարիս ամենայն, թագաւորեալ ամս երէքտասան : Սա մոսկանուանեցաւ Քալիթա, այսինքն է Քասկ,

իբր զի սովոր էր կրել զգօտւոյն քսակ
 գրամոց 'ի բաշխոյս ողորմութեւ . և սա
 ինքն միացոյց զիշխանութիս Մուքուայի
 և Ռոսթովայ : Ի մեռանել իւրում ե-
 թող երիս որդիս , որոց անուանք էին
 Սիմէոն , Իւան և Անդրէաս :

ՍԻՄԷՈՆ ԻՒՅՆՈՎԻԶ

ԳՈՌՈԶ

Ի ՎԻՃԵԼ որդւոց և եղբարցն Իւա-
 նայ զաթուոյն՝ Իւզպէք որոշեաց տալ
 զայն որդւոցն , 'ի նոսին ապաստան ա-
 րարեալ զընտրութի միոյ 'ի նոցանէ . և
 Իւան և Անդրէաս ետուն Սիմէոնի զա-
 թուան հանդերձ կիսով մասամբ հասից
 պետութեւն : Սակայն և սա ոչ կարաց
 խաղաղութի վարել ընդ երկար զթա-
 գաւորութին 'ի պատճառս ապստամ-
 բութե բնակչացն թողոթք քաղաքի , և
 արշաւանացն լիթուանաց , լիւնիացւոց
 և Շվէտաց 'ի սահմանս Նովկորոտայ :

Իսկ յամին 1343 ճարակեցաւ ընդ
 Ռուսիա և ախտ ժանտ՝ որով ըմբու-
 նեալքն մեռանէին յերկուս և յերիս
 աւուրս . մեռաւ և Սիմէոն 'ի նմին ախ-
 տէ , թագաւորեալ ամս երեքտասան .
 և եթող երկուս որդիս , զԻւան և զՍի-
 մէոն :

ԻՒԱՆ Բ. ԻՒԱՆՈՎԻԶ

ՎԱՂ, քան զՍիմէոն մեռեալ էր իւզ պէք խան, և սայազատեալ էր որդի նորին Ճանիպէկ. առ սա գիմեցին եղբարքն Սիմէոնի իւան և Անդրէաս, և իւան ժառանգեաց զաթոռն. և թագաւորեալ ամս վեց՝ ոչ ինչ եցոյց դործ արժանի յիշատակի, և մեռաւ յամին 1358 :

ԴԵՄԵՏՐ Գ. ՔՈՍԹԱՆԹԻՆՈՎԻԶ

ԸՆԴ այն աւուրս և զօրութի թաթարաց սկսաւ թուլանալ ՚ի պատճառս անմիարանութի խանիցն. զի Ճանիպէկ վաղամեռիկ լինէր, և յաջորդք նորա կոտորմամբ իրերաց ՚ի բազում մասունս հերձին զտէրութի իւրեանց. և խաբր խան տիրեաց կողմանցն Վոլկայի : Առ սա գիմեաց Դեմետր որդի Կոստանդնի, և էազ թագաւորութի Մոսքուայի :

Այլ ՚ի մեռանէլ խաբրայ, և ՚ի շօրանալ Մուրաս խանին՝ որ նստէր ՚ի Սարայ, Դեմետր որդի իւանայ երկրորդի ինդրեաց ընկալաւ ՚ի նմանէ զաթոռ թագաւորութեանն, զոր յերկուց ամաց

հետէ ունէր Դեմեար Կոստանդեան .
որ և եթող երիս ուստերս , որոց ա-
նուանք էին Վասիլ , Սիմէոն , և Իւան :

ԴԵՄԵՏՐ Գ . ԻՒԱՆ ՈՎԻԶ

ՏՈՆՍՔԻ

ԴԵՄԵՏՐ եղբայր Անդրէի մանուկ
երեքտասան ամաց թագաւորեալ՝ ա-
ծաւ 'ի Մոսքուա 'ի ձեռն հօրեղբօր իւ-
րոյ Վլատիմիրայ իշխանին Սերփուքո-
վայ : Այլ քանզի հրամանաւն Մուրա-
տայ անցեալ էր սա յաթուն , Մամայ
խան հզօրագոյնն 'ի խանս ժամանակին՝
ես և ինքն հրովարտակս և հաստատեաց
զնա 'ի թագաւորուէն . ընդ որ գժուա-
րեալ յոյժ Մուրատայ՝ յիւրմէ կողմա-
նէ ետ զթագաւորութին Դեմետրի Կոս-
տանդեան՝ իշխանին Սուլտալայ . և ա-
հա նոր պատճառք աղեալից Ռուսիոյ :

Անտի և Միքայէլ Աղեքսանդրեան
իշխան թվերայ՝ նիզակակցութիւն անե-
րոյն իւրոյ արքային Վիթուանաց յար-
ձակեալ ոտնակոխ արար զՌուսիա , կա-
մեցեալ ինքն թագաւորել փոխանակ
երկուցն ևս Դեմետրեանց : Եւ այս շք-
փութք ոչ դադարեցին 'ի Ռուսիա ընդ
ամն ութուտասն :

Յորում ժամանակի Մամայ խան և
ևս հզօրացեալ 'ի վերայ այլոց խանից ,

և ակն եդեալ աթոռոյն Մոսքուայի՝
վեցհարիւր հազար զօրօք անցանէ ըստ
գէան Վոլկա : Հպատակի նմա և Օլէկ
Իշևան Րեազանայ, և գայ յօդնականու-
թիւն երկաքանչիւրոցն արքայն Ղէհաց
Վլասիալաւ Ե, ակն ունեւոյ մասն բաժ-
նի առնուլ 'ի Թագաւորուէն Ռուսաց :

Յայնժամ և Դեմետր միաբանեաց
ընդ իւր զամենայն իշխանս Ռուսաց՝ և
անց ընդ Տոն կամ Տօնաւիս գետ չորեք-
հարիւր հազար զօրօք, որպէս ասէն :
Եւ եղև պատերազմ մեծ յոյժ, յո-
րում Դեմետր ինքնին ահագին քաջու-
թիւնս ցուցեալ 'ի փախուսա դարձոյց
զԹաթարս . և Ռուսք ձիգ զհետ մտեալ
նոցա վարեցին ընդ մլոնս քսան՝ և ծած-
կեցին զամենայն զճանասպարհայն գիա-
կամբք Թաթարաց :

Մինչդեռ Մամայ վերստին զօրաժո-
ղով լինէր 'ի վերայ Ռուսաց, եւ ընդ-
գէմ նորա Թոխթամըշ խան ամբոխիւ
արևելեան Թաթարաց . յորմէ զարհու-
րեալ զօրավարաց Մամային՝ Թողին զնա
և միացան ընդ Թոխթամըշ խանին, և
Մամայ ապաստանեալ 'ի Բէֆէ՝ սպա-
նաւ անդէն :

Իսկ Թոխթամըշ տիրեաց Սարայի և
Վոլկայ, և առաքեաց ազգ արար իշ-
խանացն Ռուսաց զկամս իւր՝ խաղա-
ղութի՞ կալոյ ընդ նոսին . և նոքա մե-
ծաւ ուրախութի՞ շնորհս կալեալ, ըն-
ծայարեբք լինէին նմա :

Սակայն զհետ երկուց ամաց կոտորեաց նա զՌուսս՝ որք վաճառաշահ լինելին ընդ Թաթարս խաղանայ, և ՚ի նաւակս նոցին լցեալ զզօրս իւր՝ եկն ընդ Վոլկա ՚ի վերայ Մոսքուայի :

Դեմետր խնդրեաց զձեռնտուութի իշխանացն Ռուսաց. այլ ոչ ոք իշխեաց միաբանել ընդ նմա ընդդէմ ահագին թշնամւոյն. նա զի և իշխանքն Տեաղանայ և Սուզտալայ ուղեցոյցք եղեն խանին Թաթարաց. վասն որոյ և Դեմետր անօգնական մնացեալ՝ ամրացաւ ՚ի Քոսթրոմա :

Իսկ բնակիչքն Մոսքուայի անիշխանք և անսանձք ՚ի խուճբս խուճբս բաժանեցան, և միեցան յամենայն անօրէնութիս. և մինչև եկեալ Թաթարաց՝ հիմն ՚ի վեր տապալէին զբաղաքն, թէ ոչ հասեալ տիրէր նոցա Օստոս իշխան լիթուանաց :

Հասին և Թաթարքն ՚ի վերայ, և Օստոս պատրաստեցաւ ընդդէմ նոցա ՚ի պատերազմ : Այլ Թոխթամըշ խօսեցաւ ընդ քաղաքացիսն և ասէ. «Չեն ինձ կամք չարիս ինչ հասուցանել ձեզ իմ միտք էին վրէժ խնդրել ՚ի թագաւորէ անտի որ վատութիւն եթող զաթու իւր և փախեաւ. արդ ՚ի ձէնջ ոչ այլ ինչ պահանջեմ, բայց զի տրուք ինչ ընծայից յայտ առնիցէք զբարեկամութի ձեր ընդ մեզ » :

Յայնժամ բացեալ Մոսքուայ ըզ-

դրուենն, ելին ընդ առաջ խանին ըն-
 ծայիւք՝ բազմու թիւ իշխանաց և ազնուա-
 կանաց, հանդերձ սրաշտօնէիւք եկեղե-
 ցւոյն՝ որք բարձեալ բէրէին թափօրիւ
 մեծաւ խաչս և սրասկերս սրբոց, և
 մտին ՚ի բանակ անդր Թաթարաց, մինչև
 եկին հատին ՚ի միջավայր բանակին :
 Յայժամ Թաթարքն անկեալ ՚ի վերայ՝
 կոտորեցին զնոսա յանխնայ, ընդ որս և
 զՕստոս, և ապա խուժեալ ՚ի Մոս-
 քուա՝ ՚ի հուր և ՚ի սուր դատեցին զա-
 մենայն, և զապրեալսն ՚ի կոտորածէն ՚ի
 դերու թիւ վարեցին :

Զնոյն անցս անցուցին և ընդ մօտա-
 կայ քաղաքս ինչ, և ապա դարձան ՚ի
 տեղիս իւրեանց :

Սակայն Թոխթամըշ իբրև արդարա-
 սէր ոք չէառ յանձն կապտել ՚ի Դեմե-
 տրէ և զԹագաւորու թիւնն, տալ և զայն
 իշխանին թվերայ, որպէս հայցէր նա :
 Եւ Դեմետրի լուեալ զիրան՝ առաքեաց
 առ խանն զանդրանիկ իւր զՎասիլ իբրև
 ՚ի սրատանդ հաւատարմութիւ իւրոյ առ
 նա : Ընդ ամս քանի մի առ իւր կալաւ
 խանն զսրատանին, մինչև ձանձրացեալ
 նորա՝ փախեալ ՚ի Ղիվոնիա :

Այս ամենայն եղև յամին 1382, և
 յետ եօթն ամաց մեռաւ Դեմետր Տոնս-
 քի քառանամեայ, թագաւորեալ
 ամս քսան, և եթող եօթն որդիս, որք
 էին Տանիլօ կամ Դանիէլ, Վասիլ, Եու-
 թի, Անդրէաս, Պետրոս, Իւան և Կոս-

տանգին : Իսկ զնա պայազատեաց որդի
նորա Վասիլ, և հաստատեցաւ 'ի Թոխ
Թամբը խանէն :

ՎԱՍՒԼ Բ . ՏՄԻԹՐՈՎԷԶ

Ընդ թագաւորէն զազահու թեամբ
հարեալ սորա, դիմեաց անպատճառ
յերկիր իշխանութեն Պորխայ 'ի Սուզ-
տալ և 'ի Նիժնի Նովկորոտ, և զեր-
կրորդս զայս քաղաք յաւարի առեալ
խաղաց գնաց առ խանն, և կաշառաբեկ
արարեալ զնա՝ ընկալաւ 'ի նմանէ հրա-
ման միացուցանելոյ զերկիրն ընդ իւ-
րում թագաւորութեն : Եւ մինչդեռ
գառնայր գայր 'ի Ռուսիա հանդերձ
պատգամաւորաւ խանին, Պորխա խոր-
հուրդ առեալ ընդ իւրում աւագա-
նւոյն՝ յուշ առնէր նոցա զերգումն հա-
ւատարմութեն զոր երգուեալ էին՝ չթո-
ղուլ զնա երբէք 'ի ձեռաց . և երկցա-
գոյնն 'ի նոսա վկայեաց՝ թէ ամենե-
քեան պատրաստ էմք 'ի մեռանել փո-
խանակ անձին քոյ : Յայնժամ Պորխա
եգ 'ի մտի չտալ մուտ պատգամաւորին
և պաշտօնէիցն Վասիլի 'ի քաղաք իւր :

Իբրև եհաս անդր պատգամաւոր
խանին, իշխանք Վասիլի որ ընդ նմա՝
հնչեցուցին զլանդակսն 'ի Ժողովել
զամբոխն . և մինչդեռ Պորխա սպա-

սեռւ մնայր տեսանել զարդիւնս խոտա-
մանց իւրոյ աւագանւոյն, և ահա նո-
քա միաբանեալք ՚ի մատնել զնա՝ հա-
սին ՚ի վերայ և կասկեցին. և հնազեալն
այն չարութիւն՝ որ կանխաւ իբրև յամե-
նեցուն բերանոյ խիզախէր մեռանել
վասն իւրոյ իշխանին՝ յայնժամ ստէ-
ցՊորիս լրբութիւն. « Մէք ծառայք էմք
թշնամոյ քո » :

Յետ սահաւուց եհաս և Վասիլ, և
զՊորիս արկեալ ՚ի կալանս՝ այսր և
անգր ցրուեաց զկին նորա և զորդիս և
զմտերիմս. այլ Պորիս մեռաւ ՚ի միւ-
սուս՝ ամին, և մահ նորա գրաւական
իմն եղև հանդերձելոց աղեալցն Ռու-
սիոյ :

Քանզի ընդ այն ժամանակս ՚ի զօրա-
նալ Ղէնկթիմուրայ՝ մեծ մասն թա-
թարաց միաբանեցին ընդ նմա, և տկա-
րացաւ կողմն թաթար խանից Ռուսիոյ
հերձեւոց ՚ի խուսթս խուսթս. որք սա-
սղատակեալ ընդ կողմանս կողմանս Ռու-
սիոյ՝ տառապեցուցանէին յոյժ զաշ-
խարհն : Թո՛ղ և զարշաւանս Վիթոլտայ
գքսին Ղիթուանիոյ ՚ի Սմոլէնսք, և զա-
ւեր և զյափշտակութի՝ զոր գործէր ՚ի
Ռուսիա : Մեռաւ և Թոխթամբը, և
ամբարձաւ փոխանակ նորա որդի նորին
Պուլադ խան, այլ զտեսչութի իշխա-
նութիւն նորա ունէր իշխան նորին Եափ-
կէոյ : Առ սա բողոք կալաւ Վասիլ զՎի-
թոլտայ, և նա ՚ի վերին երեսս խոտա-

ցեալ առաքել նմա զորս յօգնականու-
թի, մնայր ակարանալոյ երկաքանչիւր
իշխանացն՝ ընդ իրեարս մարտնչելով :
Եւ իբրև ետես զինոքա իմացեալ զդաւն՝
ոչ ևս յարեան ՚ի վերայ միմեանց, գար-
ձոյց զգորն ՚ի Մոսքուա, և պաշարեաց
զնա, այլ ոչ կարաց առնուլ զայն առ
՚ի չգոյէ բաբանաց : Հաս համարեցաւ
զվճար գանձուն զոր հատուցին նմա
քաղաքացիքն, և ասպատակեալ զամե-
նայն շրջակայ վայրս՝ գարձաւ առ Պու-
լագ, որ ՚ի վտանգի կայր յերեսաց այլոց
Թաթարաց. և ընդ ամս քսան և չորս
ոչ կոխեցին Թաթարք ՚ի Ռուսիա :

Իսկ Վասիլ՝ որ ՚ի պաշարման անդ
Մոսքուայի ամրացեալ էր ՚ի Քոսթրո-
մա հանդերձ ընտանեօք և աւագա-
նուովն, ՚ի մեկնել Թաթարաց յաշխար-
հէն իւրմէ՝ ոչ ինչ պիտանի գարման կա-
րացեալ մատուցանել աւերածոյ և ա-
ղետից Թադաւորութի իւրոյ՝ մեռաւ
յամին 1425, Թադաւորեալ ամս երե-
սուն և վեց : Եւ էր ինքն ամաց յիսուն
և չորից. և եթող երկուս ուստերս՝
զՎասիլ և զԻւան, և զերիս դստերս՝
յորոյ մին ամուսնացաւ ընդ Յովհան-
նու Պալէոլոգ կայսեր յունաց :

ՎԱՍԻԼ Գ. ՎԱՍԻԼԵՎԻՉ

ԵՈՒՐԻ իշխան Վալիչայ՝ եղբայր Վասիլ Երկրորդի տեսեալ զի եղբօրորդին իւր Վասիլ Գ, մանուկ էր տասնամեայ, յինքն ջանայր կորզել զաթուն: Եւ թէպէտ խոհական մայր արքայորդւոյն Սոփիա՝ իմաստուն հնարիւքն և ճարտար բանիւք հպատակեցոյց որդւոյ իւրում՝ զաւագանին Մոսքուայի, սակայն Եուրեայ ոչ կացեալ յետս ՚ի խորհրդոցն, և ոչ խրատուց մետրապօլիին Երեսսինչ արար: Այլ ՚ի հասանել ՚ի վերայ քաղաքին իւրոյ սրածուէ՝ ընթացաւ ինքնին զհետ մետրապօլիին և խոստացաւ այլ ոչ ևս անհանգիստ առնել զեղբօրորդին իւր:

Զհետ ամաց հնգից տեսեալ զի էանց ՚ի նմանէ սրածու թին, գունդ կազմեաց՝ անկանել յանկարծ ՚ի վերայ Մոսքուայի. և եթէ անյաջողեացէ, ՚ի յայտնի պատերազմ ձեռն արկանել: Խորհուրդեալ հանձարեղն Սոփիա Եուրեայ երթալ յատեան խանին՝ և վճռոյ նորուն հպատակել. և խանն հաստատեալ ըզթագաւորութիւնն Վասիլ՝ յաւել ևս պատուէր, զի Եուրի կալեալ զսանձ Երիվարին Վասիլ՝ յածեցուցէ զնա. այլ Վասիլ խոհական համեստութիւն արգա-

հատեաց 'ի հօրեղբայր իւր, և ոչ իջոյց
զնա յայնչափ նուաստութիւն :

Մի ոմն յաւագանւոյն կամեցեալ
ատլ զգուստր իւր 'ի կնութիւն Վասլի՝
իբրև չեղև լսելի, գրգռեաց Նուրի
վերասին ընդգէմ՝ եղբորորդոյն . որք և
'ի մի հաւաքեալ զերկաքանչիւր զօրս՝
խաղացին գէալ ուղիղ 'ի Մոսքուա, և
մերժեալ զդեսպանս Վասլի՝ որ գային
'ի խնդրել զխաղաղութիւն, հալածեցին
զնա ինքն զՎասլի մինչև 'ի Քոսթրու-
մա, և Նուրի արկ զնա 'ի կալանս . այլ
ապա ետ նմա 'ի բաժին զՔոլոմնա, և 'ի
պատուի ունէր զնա՝ ըստ խրատու խոր-
հրդակցին իւրոյ Մորոզովայ առն լաւի :

Եւ քանզի Վասլի ցանգ սիրելի էր
ամենեցուն, այնուհետև առ նա ընթա-
նային ամենայն իշխանք և մեծամեծք
Մոսքուայի, և Քոլոմնա եղև գոգցես
բնիկ քաղաք թագաւորութեն : Ընդ որ
գժուարեալ յոյժ որդւոցն Նուրեայ՝
ապանին զՄորոզով իբրև զաւիթ մեծա-
րանացն Վասլի . և ապա երկուցեալ 'ի
ցամանէ հօրն իւրեանց՝ անկան 'ի Քո-
լոմնա : Իսկ Նուրեայ ամայի մնացեալ
յիշխանաց և յաւագաց և յորդւոց իւ-
րոց անգամ, եթող ելիք զաթոռն եղ-
բորորդւոյ իւրում, և մեկնեցաւ 'ի Վա-
լիչ :

Վասլի զեղծեալ բարեբախտութեն՝
ընդ մտանէլն 'ի Մոսքուա զօրաժողով
եղև յառնել 'ի վերայ հօրեղբօր իւրոյ :

որ կայրն յանկասկածի . և հալածեալ զնա 'ի Վալիչայ՝ յաւարի էառ զքաղաքն և գարձաւ 'ի Մոսքուա . կարծէր իմն այնպէս եթէ 'ի սպառ ընկճեաց զԵրուրի , այլ խաբեցաւ : Զի նա միաբանեաց ընդ իւր զժողովուրդն զայրացեալ ընդ գնացսն Վասլի , և դիմեալ 'ի վերայ նորա՝ խորտակեաց զըօրս նորին . և գնաց էառ երկրորդ անգամ զՄոսքուա , այլ ոչ ինչ յերկարեալ անդէն մեռաւ , թողեալ երկս որդիս , որք էին Վասիլ Քասսոյ , Գեմեար Շեմեաքա , և Գեմեար Քրանոյ :

Եւ կալաւ զաթոռն անգրանիկն . ընդ որ խանդացեալ երկուցն եղբարց , ասենցնա . « Աստուծոյ չէղեն կամք թագաւորել հօր մերում , և մեք չկամիմք եթէ գու թագաւորեսցես » : Եւ եկեալ 'ի Նիժնի Նովկորոտ՝ առին զՎասիլ Գ , և ածին հռչակաւ 'ի Մոսքուա : Քասսոյ փախեալ 'ի Նովկորոտ . և 'ի փակել ընդդէմ նորա քաղաքացւոց զգրուանն՝ սակաւաձեռն զօրօք զորս գումարեաց ասաի և անաի՝ տարաւ 'ի վերայ զօրացն Վասլի յաղթութիւնս ինչ մանունս , մինչև հասեալ Վասլի ստուար բանակաւ՝ ձերբակալ արար զնա և կուրացոյց :

Անագորոյն լեալ առ ազգակիցն՝ ապերախտ գտաւ և առ Ուլու Մահմէտ խան՝ որոյ կարգեալ էր զնա թագաւոր . զի 'ի գալ սպաւինել նորա առ Վասիլ յերեսաց թշնամեաց՝ մինչև գու-

մտրեացէ իւր ձեռն բաւական , սա նենդաւ կարեկցեալ նմա զառաջինն , ապա արձակեաց 'ի վերայ արս քառասուն հազար : Իսկ Մահմէտ որ ոչ աւելի քան զհազար սպառազէնս ունէր ընդ իւր 'ի յուսահատ ժամուն տնայարտելի քաջութիւնն ասիս՝ իրս բազումս գործեալ 'ի Ռուսս՝ փախստական տրար զզորավարս նոցա , և ինքն անցեալ ըստ գեան Վոլկա՝ յաւել զթիւ զորաց իւրոց , և գիմեալ անդէն հրկէզ արար զՄոսքուա , և զքնակիչս գիւղից և աւանաց նորին 'ի սուր սուսերի կոտորեաց . յալթեաց և զորացն Վասլի որ եկեալ էին 'ի վերայ իւր , և զնա ինքն հանդերձ այլովք իշխանօք ձերբակալ արար : Այլ 'ի ցոյց իւրումն մեծանձնութե՛ն ներեաց նմա , և արձակեաց զնա վերստին յաշխարհ իւր :

Մինչդեռ առաջի կայր իշխանացն Ռուսաց այսպիսի օրինակ առաքինի ոգւոյ թաթար իշխանին , Շեմեաքա թըշնամացեալ ընդ Վասլի՝ համբաւ սուտ եհան զնմանէ՝ իբրու թէ վաճառեալ իցէ զաղբն 'ի ձեռս թաթարաց . և միանգամայն յորդորեաց զՎասիլ գնալ 'ի մենաստան սրբոյ Երրորդութե՛ն 'ի գոհանալ զԱստուծոյ սակս ազատութեան իւրոյ . և ինքն յարձակեցաւ եմուտ 'ի Մոսքուա ձեռնառուութիւն կաշառաբէկ իշխանացն , և անդ բանտարդել արար ըզթագուհին և զիշխանս՝ զորս ոչ կարաց սպարել :

Ապա մի ոմն 'ի բարեկամաց անտի նորա յանձին կալեալ յափշտակել զՎասիլ 'ի մենաստանէն՝ դնաց անդր, և խաբկանօք առեալ ած զնա 'ի Մոսքուա, ուր Շեմեաքա կուրացոյց զնա, և առաքեաց յՈւկրէն: Անդր ածան և մայրն Վասիլ և բարեկամք նորա և արկան 'ի բանա: Այլ իշխանքն Ռեափոլոլսքի զերծուցին զերկուս որդիս նորա զԻւան և զԵուրի 'ի Մուրում, և միաբանեալ ընդ ոմանս յիշխանաց՝ եդին 'ի մոի զերծուցանել և զՎասիլ և զամենայն ընտանիս նորա: Զայն զգացեալ Շեմեաքայ՝ փութացաւ ազատեաց ինքնին զՎասիլ, և կարգեաց նմա 'ի կալուած զքաղաքն Վոլոկտա:

Իսկ Ռեափոլոլսքեանց յուղի անկեալ հանդերձ մեծաւ մատամբ աւագանւոյն՝ պատահեցին զճանապարհայն որդւոց Մահմէտ խանին, որ և նոքա իւրեանց զօրականօք երթային յազատել զՎասիլ: Սոցա ամենեցուն 'ի մի վայր եկեալ՝ իբրև լուան թէ Շեմեաքա ոչ է 'ի Մոսքուա, առաքեցին անդր զմի ոմն 'ի քաջ զօրավարաց իւրով դնդաւն, և ինքեանք հետամուտ լեալ Շեմեաքայ՝ հալածեցին զնա 'ի Նովկորոտ, ուր յեա երկուց ամաց գեղով մահու սպանաւ: Իսկ Վասիլ թագաւորեալ խաղաղութեայլ ևս ամս վեց, մեռաւ յամին 1462, թագաւորեալ ամս երեսուն և եօթն. և լացին զնա ամենայն ժողովուրդք իւր: Եւ էին նորա որդիք վեց. Եուրի,

Իւան, միւս Եսէրի, Անգրէաս, Պորիս,
և միւս Անգրէաս :

Ի սոցանէ իւան պայտաղատեալ զս-
թոռն քսան և երկուց ամաց՝ վախ-
ճան առնէ աղէտիցն Ռուսիոյ, որ ՚ի
պատճառս ներքին և արտաքին թշնա-
մեաց ողողէին զՌուսիա զամս երէք-
հարիւր :





ԻՒՅՆ Գ . ՎԱՍԻԼՆՎԱԻՉ

ՄԵՍ այս Իւան անդատին 'ի մանկական տիոց յանձին բերեալ զողի վէհանձն , զարիուի անմեղկէլի , զեռանդն պատերազմական , զխոհականութի հանճարեղ և զսէր իւրոյ ազգին , յառաջ քան զամենայն վառեցաւ 'ի խորտակել զուծ թաթարաց : Եւ ամենայն ոգւով գուն գործեալ 'ի նորոգել ըզխաթարեալ կարգս սշխարհին , և զսիրտս ամենայն իշխանաց իւրոց յինքն յանկուցեալ՝ գէմ եգ առնուլ զՅսազան , և վանել անտի զթաթարս :

Արձակեաց անգր զմասն մի զօրաց իւրոց . և 'ի կոտորիլ նոցա 'ի ցրտոյ և 'ի սովէ , արձակեաց և այլ զօրս , որք ոչ ինչ թողին ողջ զինի իւրեանց՝ 'ի սուր և 'ի հուր գատեալ զարս և զկանայս , զծերս և զմանկունս , զանասունս և զվրանս և զծառատունկս անգամ , և պաշարեցին զՅսազան Անգրէաս և Պորխ

էղբարքն Իւանայ : Որք և 'ի նեղ արկին զքաղաքն սասակապէս յամենայն կողմանց, մինչև ստիպեցաւ Իպրահիմ խան Իսազանայ խնդրել զհաշտութի, և խոստացաւ՝ հարկատու լինել թագաւորին Ռուսաց՝ սարուկ նորա զանձն խոստովանեալ :

Ի նոյն աւուրս խնդրեցին Նովկորոտացիք, զի հաստատեցէ նոցա յարքեպիսկոպոսութի զԹէոփիլոս միանձն, զոր ընտրեալ էր նոցա փոխանակ առ աջնոյն վախճանելոյ : Չիջաւ նոցա Իւան, և յաւել ասել ցարապաւսաւորսն . «Գիտասցէ ընկերհաշտութիդ Նովկորոտայ, զոր սեպհական ժառանգութի համարիմ ինձ հայրենի, զի ես ցանգ պատրաստ եմ զգութ և զսէր իմ յայտ առնել առ ձեզ» :

Այս բան խէթ եղև սրտի աւագորերոյն Նովկորոտացւոց, և ըմբոստացան 'ի լուր բանին՝ թէ Իւան համարիցի զՆովկորոտ իւր սեպհական ժառանգութի . նմին իրի 'ի ծածուկ խորհուրդ 'ի մէջ առեալ՝ լաւ համարեցան մտանել ընդ ծառայութի արքային Ահայ Քաղիմիրայ չորրորդի . և առ այս յորդորեցին նա և զայլս 'ի քաղաքացւոց 'ի ձեռն կրօնաւորի ուրումն Պիմէն անուն, ասելով թէ Իւան կամի բռնանալ 'ի վերայ նոցա 'ի սպառ : Իսկ ընդ Ահայ բանագնաց լինէին 'ի ձեռն Մարթայի ուրումն այլուոյ 'ի սոհմէ ազատանւոյն Նովկորո-

տայ , որ ունէր ամուսնանալ ընդ իշխա-
նի միոյ լիթուանացւոյ :

Եւ 'ի սաստկանալ ամբօխի ասպտամ-
բացն՝ մինչև 'ի ձայն բարձր կարդալ իւ-
րեանց թագաւոր զՔաղիմիր , եհաս 'ի
վերայ Իւան երիւք բանակօք . և միով 'ի
նոցանէ խորտակեալ զմեծ մասն երե-
սուն հազար զօրաց Նովկորոտացւոց ,
զերկուս հազարսն ձերբակալ արար :

Ի մերկացուցանել զգլխակունս անկե-
լոցն Նովկորոտացւոց գտան առ միոյ
միոյ 'ի նոցանէ յետկարք ուխտի՝ որով
նուիրէին զանձինս 'ի սարկութի Քաղի-
միրայ . և զօրավարացն Իւանայ զնոյն գը-
տեալ առ այլս 'ի մեծամեծաց ձերբա-
կալ եղելոց՝ սպանին զնոսա , և մնա-
ցելոցն հրամայեցին հատանել զմիմեանց
զունչս և զչրթունս և զականջս , և ա-
ռաքեցին զնոսա անդրէն 'ի քաղաքն :

Ի ձախողել այսպէս իրաց իւրեանց
զգօնացան փոքր մի Նովկորոտացիք , և
'ի ձեռն միջնորդութե քահանայից և ա-
ւագորերոյն իւրեանց և մեարապօլ-
տին Մոսքուայի՝ եթող նոցա Իւան ըզ-
յանցանսն՝ սրահանջելով զհարկսն զոր
ժխտեալ էին , և 'ի վերայ այնր այլ ևս
գրամս 'ի պատիժ վտարանջութեն :

Սակայն զհետ ամաց դարձեալ ասլըս-
տամբեցին նովին խորհրդովք , և զգլխա-
կացս խորհրդոցն իւրեանց սպանին :
Յայնժամ Իւան անձամբ խաղացեալ 'ի
վերայ նոցա , ոչ ինչ երեսս արար աղա-

չանայ նոցին, և կապտեալ 'ի նոցանէ զամենայն ազատութիւնսն՝ հաւասարս արար այլոց քաղաքաց . այլ զերիս առանձին ազատութիւն ետ նոցա . չէլանել յակամայս ըստ բնիկ աշխարհն իւրեանց, չգալ յատեան Մոսքուայի, և չզինուորել 'ի մարտս ընդդէմ Թաթարաց :

Ասլա առեալ 'ի նոցանէ զերդումս հաւատարմութե, խաղացոյց 'ի Մոսքուա զՄարթա և զհամախոհս նորին . ևս և զհռչակաւորն զայն զանգակ՝ որով սովոր էին Նովկորոտացիք ազդ առնել զապստամբութիւն իւրեանց . զոր և կախեաց յաշտարակի ուրեք բարձու հանդէպ Քրեմլինայ՝ որ առ Մոսքուայիւ :

Յետ սակաւուց 'ի խլրտել զարձեալ անանդորր ժողովրդեանն՝ խորհեցաւ Իււան ջրուել զնոսա ընդ աշխարհն, և զխռովարարսն վանել արտաքս քան ըզՌուսիա, և արար այնպէս :

Ընդ այն ժամանակս Ահմէտ խան Ռուկեղէն անուանեալ գնդին Թաթարաց (այն է Ալթըն Օրդա) դեսպանս հրովարտակաւ առաքեալ առ Իւան՝ պահանջեաց զհարկսն, զորս նախնիք նորա պակաս արարեալ էին վճարել Թաթարաց : Իբրև էառ Իւան զհրովարտական՝ եթուք 'ի վերայ և առ ոտն կոխեաց, և հրամայեաց խողխողել անդէն զգեսպանսն, զմին միայն արձակեալ առ Ահմէտ՝ ազգարար զէզելոցն :

Խաղաց Ահմէտ զօրօք բաղմօք 'ի Ռուսիա՝ ասպատակեալ 'ի բազում տեղիս . այլ իբրև ետես առաջի զսուռարագոյն բանակ Ռուսաց պատրաստեալ 'ի յարձակել 'ի փախուստ իուճապեցաւ իւրովքն հանդերձ , և կորոյս զբազումս 'ի նոցանէ :

Զհետ ամաց ինչ վերստին արշաւեալ 'ի սահմանս Ռուսաց՝ 'ի սպառ խորտակեցաւ 'ի նոցանէ , և ինքն խկ անկաւ 'ի վերջնում ճակատուն :

Խորտակմամբ մեծի գնդին Թաթարաց իրախուսեալ Իւանայ ևս քան զևս զարթոյց 'ի նախանձ զԲաղիմիր արքայն Լէհաց . որ առաքեաց զիշխանն Լիւքսմբրի 'ի Մոսքուա՝ զի բարեկամացեալ ընդ Իւանայ՝ սպանցէ զնա : Այլ դաւն 'ի վեր ել , և Լիւքսմբրի կենդանւոյն այրեցաւ յերկաթի վանդակի . և զամս տասն պատերազմ էր Ռուսաց ընդ Լէհս , և միանգամայն ընդ Լիվոնիացիս . որոց ամենեցուն յաղթական գտաւ Իւան . այլ որ առաւել պայծառացոյց զնա՝ եղև յաղթութիւնն Ալի խանին Խազանայ :

Վասն զի դէպ ժամանակ համարեալ Ալեայ զղբաղնուլ Իւանայ 'ի պատերազմունս Լէհաց՝ խաղաց զօրօք 'ի Ռուսիա : Ել և Իւան ընդդէմ նորա , և եղև պատերազմ սաստիկ յոյժ առ Սվեակա գետով . խորտակեցան Թաթարքն , և խան նոցա ձերբակալ եղև : Եւ Ռուսք

զհետ պնդեալ փախստէիցն՝ մտին ընդ նոսա ՚ի Խազան, և կալան զմայր և զկին և զորդիս խանին և ածին ՚ի Մոսքուա :

Ի մեռանէլ խանին՝ որդի նորա կրտեր մկրտեցաւ, և եղբայրն Մահմէտ էմին՝ որ կանխաւ ևս մտեալ էր ՚ի ծառայութի Ռուսաց՝ կարգեցաւ իշխան Խազանայ : Այլ քաղաքացւոցն ոչ հանդուրժեալ բռնութեց նորին, ընտրեցին փոխանակ նորա զՄանուկ ոմն անուն (հայկազուն, որպէս թուի), այլ և զնա բռնագոյն գտեալ քան զՄահմէտ, խնդրեցին յԻւանայ զայլ ոք, և նա կացոյց նոցա իշխան զԱպտըլապիս ոմն. և տալա դարձեալ զՄահմէտ էմին՝ տուեալ նմա ՚ի կնութի զայրին Ալեայ :

Եւ թէպէտ Մահմէտ յայտմ յերկրորդում նուագի խոհականագոյնս վարել սկսաւ զիշխանութի իւր, այլ կին նորա անմոռաց ունելով զաղէտս առաջնոյ առնն իւրոյ՝ գրգռեաց զՄահմէտ ընդգէմ իւանայ : Եւ նորա յետ բազում ժամանակաց ոչ ևս կարացեալ զգէմ ունել սագրանացն, եգ ՚ի մտի զի ՚ի ժամագրեալ աւուր հանգիսի վաճառուց՝ յորում ժողովէին ՚ի Խազան Ռուսք յամենայն կողմանց աշխարհին՝ կոտորեսցէ յանխնայ զամենայն զՌուսս : Եւ իբրև զայն արար՝ գումարեաց զամենայն զօրս իւր, և ընդ նոսա քսան և հինգ հազար Նոզայս, յարձակեցաւ ՚ի

հարաւային կողմանս Ռուսիոյ, և պաշա-
րեաց զՆիժնի Նովկորոտ :

Այլ ի մարանչել քաղաքացւոցն՝ ան-
կաւ ընդ այլս ՚ի Թաթարաց և Մրզա իշ-
խան Նողայից . ընդ որ զայրացեալ Նո-
ղայիցն յոյժ՝ դարձուցին զդէնս իւրեանց
՚ի վերայ զօրացն Մահմէտի, և արարին
առ պարսպօք քաղաքին կոտորած մեծ :

Այս ամենայնի իրազեկ լեալ Իւան
արձակեաց ՚ի վերայ նոցա արս հարիւր
հազար, և Թաթարաց տեսեալ զբազ-
մութիւն ամբօխին՝ փախեան ՚ի տեղիս
իւրեանց :

Այլ Իւան որ յառաջագոյն ևս խօ-
թացեալ էր, ընդ այն աւուրս յամին
1505 մեռաւ ամաց եօթանասուն և
հնգից, թագաւորեալ ամս 43: Եւ էին
նորա որդիք հինգ . Ասաիլ, Գէորգ,
Դեմետր, Սիմէոն և Անդրէաս, զորս
ծնաւ նմա Սովիա գուսար Թովմայի
Պալէոլոգայ Թոռին Մանուէլի կայսեր
Յունաց, որ յայնժամ ապաստանեալ
էր ՚ի Հռովմ յերեսաց Տաճկաց :

Իւան ՚ի մեռանել իւրում կարգեաց
իւր յաջորդ զԱսաիլ :

Երկուք ոմանք ՚ի զօրասպետացն Իւա-
նայ առաւել սատար եղեն յընդարձա-
կել զտէրուի նորա, Յակոբ (Եաքով), և
Եուրի Զաքարեան Ռոմանով, յորոյ
՚ի տոհմէն տեսցին զկնի թագաւորք ՚ի
Ռուսիա : Սոքա երկոքեան նուաճեալ
նախ զընակիչս ծովեղերեայց Սառու-

ցեալ ծովուն, 'ի նոցանէ ուսան վարեւ
բալխիրս (խրղախս) ձգեալս յեղջե-
րուաց և 'ի շանց, և Ռուսք 'ի սորս ժա-
մանակս մտին 'ի Սխալիր, որ կանխաւ
անձանօթ էր նոցա:

Առ թագաւորուքն Իւանայ ակնկա-
ւոյց եղեն և Եւրոպացիք 'ի Ռուսիա,
և յաճախեցին 'ի Մոսքուա նուիրակք
ինքնակալին Գերմանացւոց, քահա-
նայապետին Հռովմայ, թագաւորին
Տաճկայ, թագաւորացն Ղէհաց և Դա-
նեաց, և հասարակապետութենն վե-
նետկոյ, ընդ որս այլ և այլ դաշինս ուխ-
տի հաստատեաց Իւան: Եկին 'ի Յու-
նաստանէ և յԻտալիոյ և արուեստա-
դէտք բազումք, ճարտարապետք, պա-
րրսպաշէնք, ձուլիչք հրազինուց և այլք,
զորս առատապէս վարձատրեալ Իւա-
նայ բնակեցոյց 'ի Մոսքուա, և ճոխա-
ցոյց զպետութիւն իւր կարևոր կարգօք
քաղաքականութե:

'Նա ինքն արար և ժողով մեծ 'ի բա-
րեկարգեւ զիրս եկեղեցւոյն Ռուսաց .
բաժանեաց զկուսաստանս 'ի մենաստա-
նաց արանց, և կարգեաց կանանցն մայր-
պետս, և արանց վանահարս. և արգեւ
երիցանց և սարկաւազաց այրիացեւոց
զմատակարարութի սք խորհրդոց:

Եւ նշան դրօշուցն Ռուսաց՝ որ էր
սուրբն Գէորգ զօրավար, զինի ամուս-
նանալոյն Իւանայ ընդ Սոփիայ՝ եղև երկ-
զլսի արծուի սեաւ:

ՎԱՍՍԻԼ Դ. ԻՒԱՆՈՎԻՉ

Ի ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ընդարձակ պե-
տութէ հօր իւրոյ ուշ եդեալ Վասլի,
դաշինս խաղաղութէ կուեաց ընդ Աղեք-
սանդրի արքային Լէհաց, և ընդ Մէն-
կլի քերէյի խանին խրիմու :

Այլ 'ի պատճառս թշնամութեանց
Մահմէտ խանին խաղանայ՝ ստիպեցաւ
առաքել ընդդէմ նորա զեղբայր իւր
զԴեմետր հարիւր հազարաւ . զորս յան-
կարծակի պաշարեալ թաթարաց՝ արա-
րին 'ի նոսա կոտորած մեծ, և զմնա-
ցեալսն վանեցին, և ինքեանք խնջոյս
յաղթանակի կազմեալ 'ի բացի արտա-
քոյ խաղանայ՝ կանամբք և մանկուով
հանդերձ ուտէին և ըմպէին անյադա-
բար :

Եւ ահա դարձեալ Ռուսաց նորոգ
կազմութիւն, և հասեալ 'ի վերայ թմրե-
լոցն թաթարաց՝ ընդ սուր անցուցին
զմեծ մասն նոցա, և փոխանակ մտանե-
լոյ 'ի քաղաք անդր՝ հարան անմտութի
'ի կերակուրս և յըմպելիս թաթարացն,
արբեցան և զմրեցան :

Յայնժամ յարձակեցաւ խանն 'ի վե-
րայ նոցա, և եհար զնոսա 'ի հարուածս
մեծամեծս, մինչև 'ի հարիւր հազարացն՝

եօթն հազարք և եթ ասրեցան, որպէս
ասեն :

Սակայն Մահմէտ ոչ յերկարեալ 'ի
վայելս յաղթուածէն՝ անկաւ յախտ մա-
հու, և զլջացեալ ընդ ասերախտուածի
իւր առ իւան, համարձակեցաւ առա-
քեաց առ որդի նորա Վասիլ 'ի պարգև
երկերիւր երկվարս ընտրանաւ, և խըն-
դրեաց 'ի նմանէ զներումն յանցանացն :
Եւ Վասիլ ներողամիտ դտեալ՝ յղեաց
նմա 'ի փոխարէն այլ պարգևս : Իսկ
Մահմէտ մեռաւ 'ի նմին ամի . և կինն նո-
րա էառ զդեղ մահու՝ խիթացեալ 'ի
վրէժինդրուածէ Ռուսաց :

Ընդ այն աւուրս թագաւորեաց Լե-
հաց Սիդիամունդ փոխանակ Աղէքսան-
դրի եղբօր իւրոյ, և յետս սրահանջէր
'ի Վասիլ զքանի մի քաղաքս՝ որք կան-
խաւ Լեհաց անկ էին : Եւ 'ի ջանսալ
Վասիլ՝ գրգռեցաւ պատերազմն, և
Լեհք 'ի պարտուածի մասնեցան՝ տռա-
ւել 'ի սլառճառս անցանելոյ բազմաց
յաւագորերոյն նոցա 'ի կողմն Ռուսաց :
Որպիսիք ոմանք էին և երէք եղբարքն
Վլինսի 'ի տոհմէն Միքայէլի իշխանին
սպանելոյ 'ի Թաթարաց յամին 1245 :

Ի սոցանէ ականաւորն Միքայէլ Վլինս-
քի կամեցաւ անդրէն մտանել 'ի ծա-
ռայուածի արքային Լեհաց . և Սիդիս-
մունդ ուրախուի մեծաւ առաքեաց հրա-
ւիրել զնա 'ի ձեռն թրեփքայի ուրումն
լեհացելոյ : Թրեփքա ձերբակալ եղև

'ի Ռուսաց որպէս լրտես , և 'ի տանջանս մասնեալ՝ զի յայտնեացէ զխորհուրդ դալստեանն , նա անմեղկելի մնաց 'ի լըռուէն մինչև առ սակաւ սակաւ հրակէզ եղեալ ծախսեցաւ խորովեալ շամիրով :

Ասլա յամին 1509 խաղաղութի արարին ընդ միմեանս Վասիլ և Սիգիսմունդ : Այլ սա ոչ կացեալ յուխտին դրգուեաց և յարոյց 'ի ծածուկ 'ի վերայ Վասլի զՄէնկլի քէրէյ խան Խրիստո . որում յաղթեցին Ռուսք , և բռնադատեցին խնդրել զհաշտութի :

Յեա սակաւուց Կլինսքի իւրով խոհականութի նուաճեաց ընդ ձեռամբ Վասլի զքաղաքն Սմոլենսք , զոր ոչ կարացեալ էին առնուլ Յակոբ և Եուրի Զաքարեան զօրավարք Իւանայ . և իբրև ետես՝ զի Վասլի մոռացօնք իմն եղէն տալ ինքեան զՍմոլենսք 'ի կալուած , որպէս խոստացեալն էր , բանադնաց եղև ընդ Սիգիսմունդայ , և մինչև գնացեալ առ նա՝ խորհուրդ եա առաքել յամին Տնեբերայ զորս՝ որովք ինքն յարձակեսցի 'ի Ռուսս :

Հաւանեցաւ արքայն խորհրդոյն . և եղև 'ի տեղոջ անդ սլատերազմ արիւնըռուչտ , յորում կորեան բազումք յազատանուոյն Ռուսաց : Այլ իբրև 'ի վեր ել գաւն Կլինսքեայ՝ արկաւ 'ի կալանս ընդ գաւակցին իւրում եպիսկոպոսին Սմոլենսքայ :

Եւ պատերազմն Լէհաց ընդ Ռուսս

տևեաց զամս ինն . յորում ժամանակի
Վասիլ դաշինս բարեկամութե հաստա-
տեաց ընդ Մաքսիմիլիանոսի Ա, կայսեր
Գերմանացուց, և ընդ Լէհս գուլ ա-
րար զինուց ամս վեց, զի 'ի խաղան
հարկ էր դարձուցանել զզէնսն :

Հէիս Ալի խան յաջորդեալ Մահմե-
տայ 'ի խաղան՝ նողկալի լեալ էր Թա-
թարաց՝ եթէ վասն ձառագէմ կերպա-
րանացն, զի կարճ էր հասակաւ և քա-
ղըրթեղ յոյժ, և ականջքն տարասպա-
ման երկայնք, և եթէ վասն հաւատար-
մութեն առ Ռուսս . վասն որոյ հալածե-
ցաւ 'ի նոցանէ 'ի ձեռն Սաֆա քէրէյի
խանին խրիմու :

Արձակեաց Վասիլ կրկին բանակս
զորաց 'ի վերայ խաղանայ . յորոց մին
նաւարկեալ ընդ Վոլկա՝ մեծաւ մասամբ
'ի կորուստ մատնեցաւ, իսկ միւսն խա-
ղացեալ ընդ ցամաք վանեաց զԹաթարա-
այլ ոչ հանդարտեալ ընդերկար պա-
շարել զխաղան՝ դարձան յետս :

Վասիլ թելադրութիւն իւրոյ աւագո-
րերոյն վերստին զորաժողով եղև՝ երե-
սուն զորավարս կարգեալ 'ի բանակին՝
և սպարապետ ամենեցուն զԻւան Պել-
սքի : Զայն իբրև զգաց Սաֆա քէրէյ՝
տասն հազար Նողայս կոչեաց իւր 'ի
թիկունս, և պատնիշափակ արարեալ
զքաղաքն՝ ամրացաւ 'ի ներքս :

Ռուսք բազում սնդամ վայրապար
յարձակեալ 'ի պատնէշն, սպա իբրև

առնին զի թաթարք յանհոգս և յանկասկածի զակատեալ են յուտել և յըմպել՝ յարձակեցան գիշերի հուր հարին՝ ի ցցապատնէչս անդր, և արարին կոտորած մեծ ՚ի թաթարս: Եւ Սաֆա քերէյ յուսահատեալ ՚ի տուել բաւել այլ ևս յամրոցին՝ առ ընդ իւր երիս հազար հեծեալս, և քաջութիւն սատառեալ զքանակն Ռուսաց՝ անց դնաց հանդերձ կնաւն և որդւովք ՚ի տեղի իւր ՚ի Խրիստ:

Իսկ զօրավարք Ռուսաց փոխանակ առնլոյ զԽազան՝ խաղաղութիւն արարին ընդ քաղաքացիս՝ եդեալ ՚ի վերայ նոցա հարկս ծանուհս, և զերից ամաց ըզհարկսն կանխիկ սահանջեալ. և դարձան առ Վասիլ հարիւր հազար զօրօք:

Ընդ այս գործ զօրավարացն զայրացեալ Վասիլ՝ կամէր սպանանել զսպարապետն Պելլքի, որ կաշառաբեկն լեալ էր ՚ի թաթարաց. բայց յարգահատելոյ մետրապօլտին շատ համարեցաւ մերկացուցանել յընչից զՊելլքի և արկանել ՚ի բանտ:

Ի խնդրել ասրա թաթարաց ՚ի Վասիլ խան զոմն, ետ նոցա զԶին Ալի զեղբայր Շէխ Ալեայ, և խորհրդակից նմա զՌուս ոմն. այլ խազանցիք ՚ի միւսումն ամի խողխողեցին զնա և զՌուսն, և կոչեցին անդրէն զՍաֆա քերէյ:

Իսկ Վասիլ ոչ ժամանեալ խնդրել զվրէժ դաւանացն՝ մեռաւ յամին 1554:

Թագաւորեալ տմն քսանն և ութ : Երկու կանայք եղեն սորա . Սաղամէ , և Հեղինէ դուստր Վասլի Կլինսքեայ , որ ծնաւ նմա երկուս որդիս՝ զԻւանն և զԵուրի : Զի զՍաղամէ վասն ամլութեանն՝ ՚ի բաց արձակեաց՝ բռնադատեալ զնա մտանեւ ՚ի մեհաստան ուրեք ՚ի Քարկոփոլ . ընդ որ զայրացեալ բազումք յաւադանւոյն , և ոչ կարացեալ ՚ի ծածուկ ունեւ զզայրոյթս իւրեանց ընդդէմ Վասլի , կէսք աքսորեցան , և կէսք ՚ի մահ մատնեցան : Յորմէ յայտ է և խստութի բարուցն Վասլի :

Այլ խստագոյն և հզօրագոյն գտաւ քան զնա որդի նորին Իւան Դ , որպէս տեսցի ՚ի գործոց նորա :

ԻԻԱՆ Դ . ՎԱՍԻԼԵՎԻԶ

ՔԱՆԶԻ ՚ի մեռանեւ հօրն մահուկ էր եռամեայ Իւան , մայր նորա Հեղինէ կալաւ զինամ աշխարհին՝ խորհրդակցութի Կլինսքեայ : Սորա տեսեալ զգայթակղական բերումն Հեղինեայ առ իշխանն Օսոլենսքի , որով նշաւակ նախանձու և երգիծանաց լեալ էր իւրոց ժողովրդոց , խստիւ յանդիմանեաց զնա . և Հեղինէ զրպարտեալ զԿլինսքի՝ որպէս թէ միայն կամիցի Թագաւորել , արկ զնա ՚ի կալանս , և ասլա կուրա-

ցուցեալ զաչսն՝ արգել զնա 'ի վանս ուրեք :

Յարկածից աստի Կլինսքեայ սոսկացեալ բազմաց յաւագորերոյն՝ անցին 'ի Լէհս . և Սիմէոն Պեքքի շնորհս գտեալ առաջի Սիգիամունդայ արքային Լէհաց՝ ապա յարոյց 'ի վերայ Ռուսիոյ զԼէհս և զԹաթարս և զՏաճիկս :

Յայնժամ Օպոլէնսքի յարձակեալ բազմութիւն զօրաց 'ի Լիվոնիա՝ Էհար աւերեաց զամենայն երկիրն մինչև 'ի Վիլնա : Եւ ընդդէմ նորա Սիգիամունդ և պաշարեաց զստին 'ի Սթարոտուպ քաղաքի . և հուր հարեալ 'ի փայտաշէն պարիսպսն՝ բորբոքեցոյց հրդեհ մեծ ընդ ամենայն քաղաքն . և որք միանգամ 'ի քաղաքացւոց անտի ոչ կարացին փրկանաւորել զանձինս դրամովք՝ վարեցան 'ի գերութիւն : Եւ Օպոլէնսքի առաջին գտաւ 'ի զերծեալսն այսու պայմանաւ :

Երկու եղբարք էին Վասի չորրորդի, Եուրի և Անդրէաս, որք զառաջինն երգուեալ զհաւատարմութիւն առ եղբօրորդին իւրեանց՝ ապա դրժեցին երգմանն . Եուրի մեռաւ 'ի բանտի . իսկ Անդրէաս ապաստանեալ 'ի Նովկորոտ՝ գրեաց առ աւագանին Մոսքուայի բանս անարդանաց զողայ արքայէն և զմօրէ նորա, և յաւել առաջի առնել նոցա զանձն իւր որպէս օրինաւոր ժառանգ աթոռոյ եղբօրն՝ փորձ և հմուտ 'ի խորհուրդս և 'ի

գործս պատերազմի : Եւ յարեցան 'ի նա ոչ սակաւ անձինք :

Այլ Օսրլենսքի եւ 'ի վերայ նոցա ընտիր ընտիր զօրօք , և մինչև ձեռնարկեալ 'ի պատերազմ՝ զիջաւ ապաշաւանացն Անդրէի , և ած զնա 'ի Մոսքուս . սակայն Հեղինէ դատապարտեաց զնա 'ի բանտ ուրեք խաւարին , ուր և մեռաւ իսկ : Եւ ինքն Հեղինէ անարժանն կենաց սպանաւ դեղով մահու , և Օսրլենսքի գլխատեցաւ :

Էր յայնժամ եօթն ամաց Իւան , և ոգւոյ բարւոյ դիպեալ . այլ ապականեցին զբարս նորա երեքին իշխանք անօրէնք , Իւան , Վասիլ Շույսքի , և Միքայէլ Թուշքով : Որոց կողոպտեալ ըզգանձն հասարակաց , բաժանեցան ըստ կամս զկալուածս պետութեն , և որք միանգամ ընդ ակամբ էին նոցա՝ էր զոր աքսորեցին , և էր զոր չարամահ կորուսին : Այլ խոհականն Վորոնյով առ ժամանակ մի զգէմ՝ կալաւ բռնութեն :

Քանզի խորհրդով նորա առաքեաց մանուկ արքայն զՇույսքի 'ի Վոլոտիմիր իբրու ընդգէմ Թաթարաց , և կոչեաց մերձեցոյց առ իւր զԻւան Պելսքի ազգական միւս Պելսքեայ՝ որ 'ի Լէհս էր . սակայն որդիք ժանտք Շույսքեայ կալան զՊելսքի զանխուլ յարքայէն , և ազգարարին հօրն իւրեանց զեղեալն : Իսկ Շույսքեայ այնուհետև յայտնապէս վրտարանջեալ՝ առ ընդ իւր արս սիկա-

րեանս և եկն եմուտ 'ի Մոսքուա 'ի շուք յաղթանակի . ատեան գումարեաց , և դատապարտեաց զՊելլքբի յաքսորս՝ եղեալ 'ի մտի գաղտ բառնալ 'ի նմանէ զկեանսն :

Որք միանգամ հաւատարիմ պաշտօնեայք թագաւորին էին՝ անգուտ խկ յապարանից նորա ըմբռնեալք՝ ունիք աքսորեցան և այլք սպանան . և մեարապօլիտն իբրև բարեկամ Պելլքբեայ աքսորեցաւ և նա 'ի Պելլօօզերօ , ուր աքսորեալ և մեռեալ էր Պելլքբի : Վորոնցով և եթ թուէր զերծեալ՝ հեռանալով 'ի Մոսքուայէ հրամանաւն արքայի . այլ և նա յետ սակաւուց բարձաւ 'ի կենաց :

Մինչ այս մինչ այն՝ Սիմէոն Պելլքբի գնացեալ առ Սաֆա քէրէյ խան խրիմու՝ յարոյց զնա 'ի վերայ Ռուսիոյ . և նորա ժողովեալ զամենայն զօրութիւն իւր , էառ և 'ի թագաւորէն Օսմանեանց զօրս և զէնս յօգնութի , և խաղաց 'ի Ռուսիա :

Յայնժամ առ վիշտ վտանգին 'ի բաց թողեալ Ռուսաց զերկապառակութիսն՝ միաբան գիմեցին ընդ առաջ մեծի բանակին Թաթարաց : Իբրև ետես Սաֆա քէրէյ զամբոխն Ռուսաց՝ համարեցաւ թէ խաբեալ իցէ 'ի Պելլքբեայ , և դառն բանիւք կշտամբեալ զնա՝ դարձաւ յետս յերկիր իւր : Եւ Ռուսաց հետամուտ լեալ փախստէիցն՝ թափեցին 'ի նոցանէ ամբարս և երիվարս և սայլս բազումս :

Այս անսպասեցողութեամբ յաղթութիւնն Ռուսաց զարթոյց զողին Իւանայ, որ չորեքտասան ամաց էր յայնժամ, խիզախել 'ի զօրութի իւր : Զի և մարմնով յաղթանգամ էր և բուռն, և մտօք հանձարեղ և շոյտ, սիրող կարգի և կրթանաց, անյողգողգ. և անմեղկելի յարութենէ : Սակայն 'ի տղայ տիոց թողեալ էքեալ 'ի բռնութի իւրոց աներասանակ կրից և աստից, զկամս իւր ևեթ գիտէր օրէնս և պարտս յամենայնի :

Արդ ժողովեալ նորա զաւագանին իւր համօրէն, ասէ ցնոսա. «Արիւն եմ ես Տիւրիքայ՝ մի միայն ժառանգորդ և թողոյ նախնեացն իմոց. և դուք երգուարուք ինձ զհաւատարմութի ծառայութի : Այլ արք անօրէնք զեղծան իմովս մանկութի, և վեր 'ի վայր հարեալ կործանեցին զպարտս թագաւորի և զհպատակաց, և զուտացուածս իմ և զիւրեանց խառն 'ի խուռն արարին, և զըկեցին զիս յարի արանց՝ որք էին նեցուկք հաստատութի թագաւորութի իմոյ : Յաւուր յայսմիկ ես եմ տէր. և թագաւորեցից 'ի կազդուրումս տկարաց, 'ի պատուհաս յանցաւորաց և յօրինակ բարի ամենեցուն » :

Զարհուրեցաւ Շույքի յահեղ բարբառոյ արքային և 'ի հրացայտ աչացն, և յապուշ կրթեցան խորհրդակիցք նորա : Հրամայեաց Իւան 'ի մահ տալ զանօրէնսն անյապաղ. և զգաստացան ա-

մենայն ժողովուրդքն 'ի տեսիլ արդար պատուհասին :

Բայց գեղեցիկ սկզբանն զհետ յարեալ Իւանայ զարգասիս անկիրթ բարուցն՝ ետ զանձն իւր 'ի թուլութի անչափ, և յամենայն չարիս անկղիտացաւ : Անառակագոյնքն 'ի մարդկանէ եզեն նորա սեղանակիցք, և ոչ թուլին զչարիս զոր չանցուցին ընդ ժողովուրդն, յափշտակութբ, խորամանկութբ, մարդասպանութբ և ամենայն բռնութբք : Եւ Իւան խցեալ էր զականջս իւր առ 'ի չսեւոյ զբողոք և զհեծութիւնս անմեղաց :

Ընդ ամս երկուս տևեցին ցնորք Իւանայ, յորում ժամանակի սլսակեցաւ հանգիսիւ 'ի մետրապօլտէն թագաւն Կոստանդնի Մոնոմախ կայսեր Յունաց, և հրամայեաց՝ զի յայնմ հետէ անփոփոխելի կոչեսցեն զնա Չար :

Յետ սակաւուց ան 'ի կնութի զԱնաստասիս զգուստր Ռոմանայ Ռոմանով, և նա իւրով խոհական և ազնիւ բարութն խրատ բարի եղեալ առն իւրում բանիւք և արդեամբք՝ զգօնացոյց զնա և դարձոյց 'ի ճանապարհն ուղղութեան :

Հալածեաց այնուհետև Իւան յարքունեացն զԺաղրածուս և զհացկատակս և զչողովարարս, և փոխանակ նոցին ամ կարգեաց զիւրև արս առաքինիս և խորհրդականս :

Տեսեալ Իւանայ զանընդհատ երկ-
պառակուծիս Թաթարացն խաղանայ
և Աժտէրխանու, ուչ եդ հանդերձա-
նայ մեծի պատերազմի, և առ 'ի կարգի
ունելոյ ընդ միով գլխով զամենայն ըզ-
զօրան՝ որք յառաջն խառն 'ի խուռն
գնային 'ի պատերազմ՝ ընդ վարչութի
այլ և այլ ինքնօրէն զօրագլխաց՝ եհան
նոր խումբ զինուորաց Սթրելէց կոչե-
ցելոց, այս է Աղեղնաւորք. զինեաց զնո-
սա հրազինութի, և զմի մասն նոցա կար-
գեալ իւր յանձնապահս, զայլս ցրուեաց
ընդ այլ զօրան 'ի մարզէլ և զնոսա 'ի
կարգս զինուորութի:

Ընդ այն ժամանակս բնակիչքն խա-
ղանայ 'ի բաց վանեալ զխան իւրեանց՝
ինդրեցին յԻւանայ զՇէխ Ալի, որ
յաքսորս էր կանխաւ 'ի Պելոօզերօ, և
մայրն Իւանայ Հեղինէ արձակեալ էր
զնա յազատութի: Իւան առաքեաց նո-
ցա զԱլի բազմութի Ռուսաց և Թաթա-
րաց: Ընդ առաջ եղէն նոցա խաղան-
ցիք և ընկալան 'ի ներքս մեծաւ սր-
տուով. այլ յանկարծակի կալեալ զա-
մենայն զմրղայս՝ այսինքն զազատանին
Ալեայ՝ բանտարգել արարին, և զայլ
ուղեկիցս նորուն 'ի բացի ընդ սուր ան-
ցուցին. և զնա ինքն զԱլի հալածեալ 'ի
բաց՝ կոչեցին անդրէն զառաջին զխանն
իւրեանց:

Իւան իրազգած լեալ եղելոցն՝ ար-
ձակեաց 'ի կողմանս խաղանայ խումբ

ժի Սթրեյցաց, որք հարին 'ի Թաթարաց
ոգիս քսան հազար, և երեսուն հազար
գերեցին : Ի միւսում ամի որ էր 1550,
մեռաւ խանն խազանայ՝ Թողեալ որդի
ժի մանուկ հասակաւ, և կին նորա Սիւմ
պէքի անուն կալաւ զտեսչութիւն աշ-
խարհին :

Իսկ Իւան յետ վայրասպար առաքե-
լոյ անդր զօրս յայլ և յայլ խումբս,
խաղաց ինքնին զօրօք բազմօք, և զճա-
նասարհայն 'ի վերայ սեպացեալ լերին
միոյ կառոյց գղեակ՝ քսան վերստիւք
հեռի 'ի խազանայ, զի գիւրին լիցի նմա
յարձակել անտի 'ի խազան :

Մինչդեռ Ռուսք զգործոլն էին՝ խա-
զանցիք բռնադատեցին սպառնալէօք
զՍիւմպէքի՝ ամուսնանալ ընդ Շէխ Ա
լէայ, որ հզօրացեալ 'ի Ժամանակին՝
կարող էր զգէմ ունել Ռուսաց օգնուք
խազանցոց : Եւ նորա կեղծեալ զհաւա-
նուի՝ առաքեաց առ նա խորտիկս և դա-
համունս : Բերկրեցաւ Ալի յանձն իւր
ընդ առաջարկուին . այլ իւրքն 'ի կաս-
կածի եղեալ՝ իբրև ետուն շան միում
ճաշակել 'ի դահամանց անտի, անդէն
առ ետեղ սատակեցաւ շունն . և պատ-
գամաւորքն ականատեսք եղելոցն՝ վը-
կայեցին յանուն համօրէն ազգին, զի
Սիւմպէքեայ էր դաւն :

Յայնժամ Ալի եմուտ 'ի խազան ե-
րեսուն հազար արամբք, զՍիւմպէքի
որդւոլն հանդերձ առաքեաց 'ի Մոս-

քուա , և զորոց միանգամ կարծիս ինչ կալաւ՝ թէ չիցեն հաւան ընդ ընտրու-
թիւն իւր , յանինայ սուր 'ի վերայ ե-
դեալ կոտորեաց :

Ոչ ևս հանդուրժեալ թաթարաց՝
միաբանեցին դաւել զնա . այլ ընդ
յայտնիլ դաւոյն՝ նա 'ի միում աւուր
երեսուն հազար ոգիս ընդ սուր ան-
ցոյց :

Զայս ամենայն իբրև լուաւ Չափիւրն
անուն ոմն իշխան խազանայ՝ որ յար-
քունիսն Իւանայ կայր , խնդրեաց 'ի
նմանէ զհրաման՝ որպէս թէ երթալ հա-
նէլ 'ի խազանայ զընտանիս իւր . այլ
նորա կամք էին վանել անտի զԱլի , և
ունել զաթուն : Վասն որոյ իբրև եհաս
անդր , գրեաց ամբաստանութի զնմա-
նէ առ Իւան՝ իբրու եթէ դաւ ինչ խոր-
հիցի ընդդէմ Ռուսաց , և Իւան վաղ-
վաղակի կոչեաց զԱլի 'ի Մոսքուա :

Ընիս Ալի ոչ ինչ զգացուցեալ ումէք
զհրամանէն Իւանայ՝ ազգ արար աւագ-
որերոյն խազանայ , թէ կամիմ եր-
թալ 'ի Մոսքուա . այլ նախ խնջոյս
կազմել ձեզ ամենեցուն 'ի Սվեաթեաք ,
այն էր նորակառոյց գղեակն Ռուսաց :
Եւ իբրև եկին ժողովեցան անդր արք
իբր հինգհարիւր , էառ Ալի զգրունսն ,
և զչորեքհարիւրսն գլխատեալ՝ զմնա-
ցեալ հարիւրն շղթայակապս առաքեաց
'ի Մոսքուա , զի յայտ արասցէ զստու-
թի ամբաստանութեցն գրելոց զանձնէ

իւրմէ, և Իւան ոչ ևս երկմտեաց զհաւատարմութիւնն :

Իսկ Չափխըն պատեհ առեալ զզայրոյթ Թաթարաց ընդ արարս Ալեայ, ընտրեաց նոր զօրավարս, և երգմնի արար զնոսա յանհաշտ Թշնամութի ընդդէմ Ռուսաց, յուսով ունելոյ զթոռն Խազանայ : Այլ նոքա ամբօխ մեծ արարեալ ետուն զաթոռն՝ Եափկէրայ որդւոյ խանին Աթաէրխանու . որ և եկեալ եմուտ ՚ի Խազան երեսուն հազար զօրօք :

Ի նմին ժամանակի և Ռուսք առաջ նորդութիւն Թագաւորին իւրեանց Իւանայ եկին պաշարեցին զԽազան . կանգնեցին շուրջ զնովաւ պատնէշս հաւասար պարսպոցն, և կարդեալ ՚ի վերայ նոցա Թնդանօթս՝ ահան հատին ընդ պարսպօքն, և վլուցին զնոսա, և խուժեցին ընդ խրամատսն ՚ի ներքս : Սակայն և Թաթարք ՚ի յուսահատութիւն ըմբռնեալ վանէին զնոսա յետս կոյս . որ ինչ և դայր ՚ի ձեռս՝ փոխանակ զինու վարէին, զնետ, զսուր, զջուր եռացեալ, զքարինս, զգերանս և զխանձողս : Եւ էր պատերազմն ցրուեալ ընդքաղաքն ամենայն ՚ի փողոցս ՚ի տանխա և ՚ի պարտէզս . ամենայն ուրեք հուր սուր և կոտորած, և աղաղակ և ձայնք ողբոց և յուսահատութե . և կանայք անգամ ՚ի տանց իւրեանց յարձակեալք մտրտ գնէին : Հատին ապա Ռուսք յա-

պարանա խանին , ուր ամրացեալ էր
Ետիկէր սակաւուք ունամբք ընտիր զօ-
րականօք , որ և յերկար զդէմ կալաւ
Ռուսաց արխաբար՝ առեալ յանձն իւր
վերս բազումն , մինչև եկն եհաս 'ի տե-
ղին ինքնին թագաւորն . և 'ի գուժ և
'ի զարմանս հարեալ ընդ քաջուն խա-
նին՝ ապրեցոյց զնա 'ի ձեռաց իւրոցն :

Յայնժամ Իւան գոհացեալ զԱս-
տուծոյ վասն յաղթուժէն մեծի , ասէ
ցիշխանս իւր և ցզորավարս . « Ահա
այժմ ամրացոյց զես Աստուած ընդդէմ
ձեր » :

Կարգեդ ապա 'ի քաղաքին և 'ի սահ-
մանս նորա , և դարձաւ 'ի Մոսքուա :
Եւ առմամբն խազանայ վախճան եղև
պատերազմաց Ռուսաց ընդ թաթարս
մինչ 'ի սպառ : Չի և խանն Աժտեր-
խանու Ապտուլ ինքնին անձնատուր ե-
ղև Իւանայ , և բարձաւ անտի աթոռն
Խըփչախ թաթարաց յաջորդացն Չին-
կիզայ : Ի յառնել ընդդէմ Ռուսաց
այլոյ խանի՝ որ կոչէր Էմիւրկէյ կամ
Էմթիւրչէյ , խաղաց 'ի վերայ նորա
Իւան , և հալածեալ զնա 'ի կողմանս
Աղախու , առ զքաղաքն , և եդեալ 'ի
վերայ բնակչաց նորա տարեկան հարկս
չորեքհազար ըսուլի , դարձ արար յաղ-
թանակաւ 'ի Մոսքուա :

Ընդ այն ժամանակս Անգղիացիք սկը-
տան վաճառաշահ լինել ընդ Ռուսա՝
մտեալ 'ի հիւսիսային ծովէ անտի 'ի բե-

րան Տվինա գետոյ, և անտի 'ի Մոսքուա . և Իւան մեծաւ մարդասիրու թիւ ընկալաւ զնոսա իբրև գեսպանս առաւել քան վաճառականս ոմանս :

Զայնու ժամանակաւ թաղաւորեաց Շվեաց Կուսդաւոս Վազա, և սաղրանօք Լիվոնիացւոց խաղացեալ յաշխարհն Ռուսաց՝ տուժիւք հանդերձ վանեցաւ յԻւանայ . որոյ իմացեալ յետոյ զնենգութիւն Լիվոնիացւոց՝ պատճառս իմն հնարեցաւ, և պահանջէր 'ի խաչակրաց բնակելոց 'ի Լիվոնիա զհարկ յիսուն ամաց՝ զոր պարտէին հատուցանել Ռուսաց, որպէս ասէր նա . և 'ի ժխտել նոցա՝ ասպատակեաց 'ի Լիվոնիա, և առեալ աւար և գերի բաղում՝ վաճառեաց զնոսա թաթարաց :

Ապա զիջաւ Իւան աղաչանաց Լիվոնիացւոց, և արար դադարումն զինուոց վեցամսեայ . յորում ժամանակի թըշնամութի իմն ծագէր վասն պահոց ընդ բնակիչս Նարվա քաղաքին Լիվոնիոյ՝ Լուտերականս, և ընդ բնակիչս Իւանկորոտ քաղաքին Ռուսաց, վասն որոյ հարկ եղև 'ի պատերազմ՝ ձեռն արկանել : Առին Ռուսք զՆարվա, ապա և զՏերբո, և դարձան 'ի ձմերել յաշխարհին իւրեանց : Եւ մագիստրոս կարգին խաչակրաց յարձակեալ 'ի քաղաք մի մերձ 'ի Փոքով՝ յորում էին երեքհարիւր արք սպատերազմի, ընդ սուր անցոյց զամենեւեան :

Անտի և խանն խրիմու կարծեալ է թէ Իւան դեռ ևս արտաքոյ աշխարհին իւրոյ գեղերի՝ յարձակեցաւ 'ի սահմանս Ռուսաց . այլ իբրև լուաւ՝ զի նա 'ի Մոսքուա է զօրօք իւրովք , գարձաւ անգրէն յերկիր իւր :

Իսկ զօրքն Իւանայ գարձան 'ի վերայ Լիվանիացւոց , և ձերբակալ արարեալ զմագիստրոսն խաչակրաց՝ եկին 'ի Մոսքուա :

Իբրև կալաւ զտեղի նորա այլ ոմն մագիստրոս Քեթլէր անուն , կոչեաց իւր 'ի թիկունս զարքայն Լէհաց . որոյ ընդ առաջ գնաց ինքնին Իւան . և զառաջինն 'ի գլուխ տարեալ զքանի մի յաղթուածինս , ապա և 'ի սրարտուծիւն մասնեցաւ յայլ պատերազմունս : Յորմէ պատճառս առեալ Ռուսաց , զօտարազգի զօրավարօք իւրեանց արկանէին զիւսան , և չարախօս լինէին զնոցանէ առ Իւան . այլ նա որ քաջ գիտէր զմախանս իւրոցն , և զվաստակս հմուտ զօրավարացն , անաչառ խտուածեամբ պատուհասեաց զչարախօսն :

Մեռաւ 'ի ժամանակին յայնմիկ ամոքիչն խտուածեան Իւանայ գչխոյն Անաստասիա . զոր լուեալ Իւանայ՝ կոչեաց 'ի մի վայր զուագորեարն ամենայն և ասէ ցնոսս . « Տաղտուկ է ինձ այսուհետև 'ի մարդկանէ , և 'ի մեծութիւն և 'ի գործոց . և ասա հրաժարիմ

յաթոռոյս, և անձին կենաց ուչ ունիմ” : Եւ արար այնպէս :

Եւ զի Դեմեար անդրանիկն իւր դեռ ևս մանուկ էր, աւանդեաց զղեկաւարութի աշխարհին 'ի ձեռս Ետիկէրայ խանին Խաղանայ, զորոյ քաջիկ տեղեկացեալ գիտէր զհանձարն և զհաւատարմութի : Ետիկէր ոչ կալաւ յանձին. այլ Իւան բռնադատեաց զնա՝ և խոստացաւ նմա զխորհրդակցութի իւր 'ի գործս կարևորս. ետ նմա զանուան Չար, և անձին պահեաց զկոչումն Վէլի + Իյ + նէազ, այսինքն է իշխան մեծ, և ինքն մեկնեցաւ 'ի քաղաք մի փոքրիկ՝ որ կոչէր Ալէքսանարովա սլոպոտա մերձ 'ի Մոսքուա :

Մինչդեռ Ետիկէր առաջնորդէր աշխարհին խոհական տեսչութի, աւագանին Ռուսաց հարեալ զագահութի՝ սկսան խուել զժողովուրդն, և գործէին զամենայն ըստ կամս անձանց :

Ոչ հանդուրժեաց Իւան անկարեկիր կալ մնալ ընդ աղէտս իւրոյ պետութեն, յարեալ կազմեաց գունդ մի զօրաց Օփրիչնիք անուանելոյ, 'ի սոսկական ամբօխէն և եթ ընտրեալ զնոսա, որպէս զի և՛ ըստ ախորժակաց իւրոյ վարեցէ զնոսին, և զազատորեարն պատկառեցուսցէ և 'ի խոնարհութի կռիւսցէ : Եւ առեալ զնոսա 'ի գործիս իւրումն վրէժխնդրութի՝ եւ շուրջ յածեցաւ ընդ ամենայն աշխարհ իւր, և

զմեծատունսն բունացեալս՝ էր զոր ընդ սուր անցոյց, էր զորս յաքսորս առաքեաց, և էր զորս կապուտ կողոսուտ արար յընչից նոցին :

Ի վերայ հասեալ 'ի ձեռն արբանեկաց իւրոց՝ եթէ արքեպիսկոպոսն Նովկորոտայ բանադնաց է մատնուծք ընդ արքային Ղէհաց, խաղաց 'ի Նովկորոտ, և յընդսուաջել նմա արքեպիսկոպոսին՝ առաւել ևս 'ի սրամատուծի բարկուծէ բորբոքեալ Իւանայ՝ ասէ ցնա . «Մատնիչ դաւաճան, սրպէս ժպրհեցար դու և ժողովուրդքո մատնել զքաղաքս զայս 'ի ձեռս ոսոխին իմոյ Սիդիամունդայ : Ո՛չ խաչ տեառն է այդ 'ի ձեռինքում. արդ զէն է այդ՝ զոր դարձուցանես յիմ՝ վերայ . և միթէ իցե՞ս դու հովիւ՝ դայլդ անադորոյն : Հրամայեաց նմա երթալ յեկեղեցի իւր և մատուցանել զսատսորագն . և ճաշեալ 'ի տան արքեպիսկոպոսարանին, ասա հրամայեաց արկանել 'ի կալանս զարքեպիսկոպոսն, և ընդ սուր անցուցանել զամենայն զմեծամեծս քաղաքին, և գետովէժ առնել : Իսկ զարքեպիսկոպոսն փակեաց 'ի վանս ուրեք, ուր և մեռաւ նա յետ սակաւուց :

Զնոյն անցս Նովկորոտայ կրեցին և քաղաքացիքն Փսքովայ և Թվերայ ամբաստանեալք վասն բարեկամուծն իւրեանց ընդ Ղէհս :

Եւ դարձաւ Իւան 'ի Մոսքուա, ու

րոյ բնակիչքն զահի հարեալ գողային 'ի լուր աղետից 'նովկորոտայ և Թվերայ . այլ նա շուրջ եկեալ երիվարաւ ընդ փողոցս քաղաքին աղաղակէր և ասէր . «Աներկիւզ լիցի ժողովուրդն իմ, և միայն դաւաճանքն իմ զգողանի հարցին » : Ապա 'ի մահ մատնեաց արս երեքհարիւր յաւազաց անախ, յորս էին և յազգակցաց Թագաւորին :

Թուէր իմն խստութի նորա անցեալ ըստ չափ . այլ ոչ սուտ էին և ամբաստանութիքն . և իշխանն Քուրպի, որ փախուցեալ յԻւանայ ապաւինեալ էր յարքայն Լէհաց, անդ գրեաց զպատմութի Իւանայ, և առաքեաց առ նա ինքն . սակայն Իւան զարմանալի մեծանձնութի գրեաց առ նա պատասխանի, և արդարացոյց զանձն յանաչառ անգրութութի՝ որով կշտամբիւրն յատելեաց իւրոց . յայտ արար անժխտելի փաստիւք՝ եթէ Ռուսք ինքնին հարկ արարին նմա հովուէլ զնոսա գաւազանաւ երկաթեալ :

Ի յոյզս ներքին շփոթիցն Ռուսիոյ յաւելան և պատերազմուիք Լէհաց և Լիվոնիացւոց, որովք տագնապեցաւ յոյժ Իւան, մինչև Եղիսաբեթի դըժխտոյին Անդղիոյ արգահատել նմա, և հրաւիրել զնա յերկիր իւր :

Ընդ այն ժամանակս Ենրիկոս եղբայր Կուսգաւոսի Վաղայ Թագաւորեալ Շվէտայ՝ ոխերիմ Թշնամի հանդիսա-

ցաւ Ռուսաց, և զգլեստական նոցա բանա-
արդեւ արար ամս երկուս . ապա զի մի
առցեն Ռուսք զքաղաքսն Լիվոնիոյ՝ որ
ընդ իւրով ձեռամբ էին, եհան զգես-
պանսն՝ ՚ի բանակն, և առատ պարգևօք
մեծարեալ զնոսս՝ գարձոյց յերկիր իւ-
րեանց, և ընդ նոսս առաքեաց զայլ
ոմն գեսպան՝ զի ուխտ խաղաղութեան
հաստատեցի ընդ երկուս պետութիան
փոխանակ զինադադարմանն:

Իսկ Իւան կալաւ զգեսպանն և եդ ՚ի
բանտի նոյնչափ ամս և ամիսս և աւուրս
և ժամս, որչափ կացեալ էր իւրոցն ՚ի
Շվէտս . և ապա մերժեալ զառաջար-
կութիան՝ նորոգեաց զպատերազմն: Սա-
կայն իբրև ետես թէ ծանր է ինքեան
պատերազմել այլ ևս, և Լիվոնիացիք
ցանդ ատելութիւն են ընդ Ռուսս, յոր-
գորեաց զնոսս մտանել ընդ տէրութիւն
Մագնոսի գբսին Ալաացիոյ՝ և խոստա-
ցաւ նոցա զպաշտպանութի իւր: Եւ
յընդդէմ կալ բնակչացն Րէվէլայ և ՚ի
չհնազանդել Մագնոսի, յանօգուտս
առաքեալ նախ Իւանայ ՚ի վերայ նոցա
զօրս, ապա յերկրորդում նուագին
պատրաստեցաւ անձամբ խաղալ ՚ի վե-
րայ նոցա ամենայն զօրութիւն իւրով:

Յայնժամ Մէնկլի քերէյ խան Խրի-
մու սադրանօք արքային Լէհաց յար-
ձակեալ զօրօք բազմօք ՚ի Ռուսիա, և կն
եհաս մինչև ՚ի Մոսքուա, և հրդեհեաց
զամենայն արուարձանեայս քաղաքին .

և եղև 'ի Ռուսաց կոտորած մեծ' իբրև
հարիւր հազար ոգւոց, որք անկան 'ի
հօւր և 'ի սուր Թաթարաց :

Գարձ արարեալ սուր խանին 'ի
Խրիմ, արձակեաց առ Իւան երեքհա-
րիւր դեսպանս, և պահանջէր զհարկս :
Փոքր միւս ևս և ընդ սուր անցուցանէր
Իւան զամենեսին զնոսա . այլ շատ հա-
մարեցաւ զգլխաւորացն 'ի նոցանէ հա-
տանել զունչս և զականջս, և սուեալ
'ի ձեռս նոցա զվաղակաւոր մի՝ դարձոյց
յետս զնոսա առ խանն և ասէ . «Այս
ևեթ հարկ է, զոր հատուցից ես խա-
նիդ» :

Չայրացաւ խանն, և տաստկագոյնս
յարձակեցաւ 'ի Ռուսիա, մինչև մեկնել
Իւանայ 'ի Նովկորոտ՝ յանձն արարեալ
զլորսն յիշխանն Առուծինպի . որ աջո-
ղակի խորտակեաց զԹաթարսն, ձերբա-
կալ արար զմի յորդուոց խանին, և զմիւսն
եգիտ անկեալ 'ի տեղուջ Ճակատուն,
և լցան Ռուսք աւարաւ թշնամեաց :

Ի նմին ժամանակի մեռաւ և Սիգիս-
մունդ արքայ Ահաց, և Իւան ոգի ա-
ռեալ 'ի ձեռաց երկուց ասէղ թշնա-
մեացն, դուն գործեաց նկուն առնել
և զերրորդն՝ զարքայն Շվետաց : Չմասն
մի զորաց իւրոց յարձակեցոյց 'ի Ֆինլան-
տիա, որք բազում նախաճիրս գործե-
ցին անդէն . և ինքն երկոքումբք որ-
դուովք իւրովք ասպատակեալ 'ի Ալվո-
նիա, էսառ քաղաքս քանի մի, և դար-

ձաւ ինքն 'ի Նովկորոտ՝ զայլ զօրականն
առաքեալ յԵսթոնիա, զոր ծայր 'ի
ծայր աւերեալ ապականեցին Ռուգք :

Սակայն Աբէնտոն զօրավար Շվէտաց
ելեալ 'ի Րէվէլայ, արար 'ի Ռուսս կո-
տորած մեծ : Զոր իբրև լուաւ Իւան՝
Թուղթս խոնարհականս գրեալ առ ար-
քայն Շվէտաց Յովհաննէս՝ յորդորեաց
զնա 'ի հաշտութի խաղաղութե . այլ
քանզի կամեր 'ի Նովկորոտ կատարել
զգաշինս ուխտին և ոչ 'ի սահմանա-
գլուխս երկոցունց աշխարհացն . Յով-
հաննէս ոչ կալաւ յանձին . և պատե-
րազմ էր անընդհատ 'ի մէջ նոցա՝ տու-
թիւք հանդերձ երկաքանչիւր կողմանն .
մինչև զիջաւ Իւան, և արձակեաց զգեո-
պանս իւր 'ի սահմանագլուխս Շվէտաց .
և պայմանեցաւ եռամեայ ևեթ զինա-
գարումն յամին 1575 :

Ի կատարած ամացն երկց եկն Իւան
և պաշարեաց զՐէվէլ յիսուն հազար
զօրօք . այլ յետ երկուց ամսոց մեկ-
նեալ անտի եկն 'ի Փսքով . ուր կոչեաց
զՄագնոս, և բաժանեցաւ ընդ նմա
զԼիվոնիա :

Ապա կամեցեալ Իւանայ մտանել 'ի
քաղաքն Քոբէնհաւզէն՝ որ էր 'ի բաժ-
նին Մագնոսի, չետուն նմա մուտ քա-
ղաքացիքն յանուն Մագնոսի . ընդ որ
անհնարինս զայրացեալ Իւանայ՝ գնաց
պաշարեաց զՎէնտէն, յորում էր Մագ-
նոս . որ և անստգիւտ մտօք ել ընդ ա-

աաջ Իւանայ՝ մեծաւ յարգանօք, որ պէս սովորն էր :

Դէպ եղև զի մինչդեռ յանդիմանելը զնա Իւան, ոռամբ երկաթի արձակեալ ուստեք հարաւ 'ի գլուխ իւր : Ի ցատումն բարկութե՛ք բորբոքեցաւ թագաւորն, և զՄագնոս 'ի կալանս արկեալ՝ երգուաւ չարամահ սատակել զամենայն զքնակիչս քաղաքին : Որոց ապաստան եղեալ 'ի միջնաբերդն, ապա հուր հարին 'ի վառօդսն, և ծածկեցան ընդ փլատակօք քաղաքին, և զապրեալսն խեղճամահ արարին Ռուբ :

Յետ այնորիկ կոտորեաց Իւան և ըզքնակիչս Վոլմար քաղաքի, և տիրեաց բովանդակ հիւսիսային կողման Տվինա գետոյ՝ բաց 'ի Րէվէլայ : Անտի անցեալ 'ի Տերբդ՝ ջանայր յանցաւոր ցուցանել զՄագնոս, կամ ստիպել զնա 'ի խընդրել զներուսն . այլ նա պնդէր, զի իրքն իրաւամբք դատաստանի 'ի յայտեկեսցեն, և ապա թէ յանձն առիցասէր՝ առնուլ զինև զանուսն վատութեան :

Ազդ եղև Իւանայ յարձակումն թաւթարաց 'ի Ռուսիա, և հարկեալ դառնալ յաշխարհ իւր՝ արձակեաց զՄագնոս 'ի Քոքէնհաւզէն :

Ընդ մեկնել Իւանայ՝ միաբանեցին Շվէտք և Ղէհք, և առին զբազում տեղիս Լիվոնիոյ 'ի ձեռաց Ռուսաց՝ կոտորեալ 'ի նոցանէ եօթն հազար ոգիս :

Զայն իբրև լուաւ Իւան, փութացաւ
խօսել 'ի հաշտութի ընդ Թաթարս, և
եկն դարձեալ 'ի Փսքով հարիւր հազար
զօրօք, զորս տրոհեալ 'ի խումբս խումբս՝
կամեր յարձակել գիշերասառն 'ի վե-
րայ թշնամեաց և առնուլ՝ բաց 'ի Լի-
վոնիոյ և զԲուրլանտիա և զԲրուսիա
Լեհաց. այլ Շվեդք ընդ այլ կողմանս
խոտորեցուցին զզօրս նորս, և Մագնո-
սի խիթացեալ յԻւանայ՝ եմուտ ընդ
պաշտպանութի Ստեփաննոսի Պաթ-
թորի արքային Լեհաց:

Սա այս Պաթթորի ուխտ բարեկա-
մութե հաստեալ ընդ թագաւորին Օս-
մանեանց և ընդ խանին Խրիմու, պա-
հանջէր յԻւանայ՝ զի տացէ 'ի բաց որ-
չափ ինչ քաղաքս հաստեալ էր 'ի Լի-
թուանիոյ և 'ի Լիվոնիոյ. իսկ Իւան
պահանջեաց 'ի նմանէ 'ի վերայ այնր ա-
մենայնի և զԲուրլանտիա: Եւ 'ի սըն-
դել Պաթթորեայ, Իւան արկ զթղթա-
բերն 'ի բանտ:

Յայնժամ Պաթթորի պաշարեաց
զփոլոցք և էառ զայն, և յաջողեաց
նմա յամենայնի. և յարոյց վերստին
զԹաթարս Խրիմու 'ի վերայ Ռուսաց:

Իբրև ետես Իւան զտոյժս և զաւեր
իւրոյ աշխարհին, 'ի խնդիր եղև խա-
ղաղութե. և միջնորդ պատկառելի կա-
լաւ զքահանայապետն հռովմայ զԳրի-
գոր ԺԳ, աղաչելով զնա՝ զի հաւանն-
ցուսցէ զՊաթթորի 'ի խաղաղութի և

'ի չափաւ որու թի՛ ըստ պատուիրանաց
կրօնին զոր դաւանէրն :

Առաքեաց քահանայապետն 'ի Լէհա
զՓոսսեւինոս յիսուսեան . որում էտ
պատասխանի Պաթթորի՛ թէ ոչ այլապէ
հնար է ինձ զիջանել 'ի հաշտուի, բայց
եթէ դարձուցէ առ իս Իւան զքովան
դակ Լիվոնիա, և հատուցէ զծախս
պատերազմին :

Անտի գնաց Փոսսեւինոս առ Իւան,
որոյ մեծաւ պատուասիրութիւն հիւրըն-
կալեալ զնա՝ յանձն էառ չպահանջել
'ի Լէհաց զՔուրլանտիա, և տեղի տալ
'ի մասնէ Լիվոնիոյ : Այլ արքայն Լէ-
հաց ոչ ինչ հաճեցաւ ընդ պայմանն,
մինչև զիջեալ Իւանայ՝ եթող զԼիվոնիա
և զայլ քաղաքս զորս առեալ էր 'ի նմա-
նէ, և եղև խաղաղութի՛ յամին 1583 :

Հաշտեցաւ Իւան և ընդ խանին Խրի-
մու, և ընդ Շվէտս հաստատեաց զի-
նադողարումն եռամեայ, և ժամ էր այ-
նուհետև պատել զվերս Ռուսիոյ . այլ
յաղթասէր ոգին Իւանոյ այլում պա-
հեաց զայն ժամանակի :

Սակայն 'ի սարս ընկճեցաւ այն ոգի
յաղիողորմ՝ արկածիցն որ գիպաւ նմա
ընդ նոյն ժամանակս :

Քանզի չև հաշտեալ Ռուսաց ընդ
Պաթթորեայ՝ հատուած զօրացն Լէ-
հաց արչաւեցին հասին մինչև 'ի Վոլ-
կա, որպէս պատմեն տմանք, և Իւան
չիմանալոյն արար՝ զի ակն ունէր ինք-

նին կոտորիլ նոցա 'ի սաստկասառոյց ձմերայնոյ անտի վայրացն : Իսկ աւազանին ոչ ինչ հաւատեալ 'ի վերայ եկաց, ասեն, խորհրդոց նորա . և համարեալ այնպէս եթէ առ ծերուէն գանգաղիցի, թախանձ արկին նմա ելանել անձամբ ընդդէմ Ղէհաց, կամ գէթ արձակել զանդրանիկ որդին իւր զոր սիրէր զԳեմետր 'ի վերայ նոցա :

Իւան նախատինս իւր համարեալ զխորհուրդն, թերևս և համախոհութի ընդ որդւոյ իւրում՝ հակառակ անձինն, գլխատեաց զաւագանին . և այն ինչ արքայորդին Գեմետր անկեալ առ ոտս հօրն՝ կամէր քերել աղերսիւ յանձնէ զխէթ կասկածանացն, իւան դեռ ևս յեռանդան բարկութեն՝ եհար գաւազանաւ 'ի դլուխ որդւոյն, որ յերրորդ և 'ի չորրորդում աւուրն մեռաւ :

Փոսսեւինոս, որ յայնժամ 'ի Ղէհս էր, այլ պատճառս տայ մահուն Գեմետրի . այլ այն որպէս և իցէ՝ իւան ըմբռնեցաւ յանհնարին սուգ թախսութի : Սկսաւ բաշխել դրամս յոլովս մեծնաստանաց և աղքատաց, մինչև եպիսկոպոսացն յունաց անգամ, զի թերևս թողցէ նմա տէր զհազարին ոճիրս յանցանացն : Սակայն և այնու ոչ զերծեալ 'ի բողոքոյ և 'ի սողտանաց խղճին, եգ 'ի մտի կրօնաւորել . և մետրապօլիան Գիտնեսիոս խուզեալ զնս՝ անուանեաց Յովնան :

Ի մանկու թեան իւրում ոչ ինչ շահեալ 'ի դաստիարակութենէ, մինչև ցմահ անմեկնելի կալաւ ընդ անդոսնելի թերութեց բնութեանն և զընտիր ընտիր ձիրս նորին, որովք ճոխացեալն էր : Մահու չափ ճգնեալ 'ի հաստատութի և յաճեցումն պետութե իւրոյ, զոյգ նմին խնամ կալաւ և պայծառութե աշխարհին 'ի դպրութիւնս և յարուեստս :

Սա առաջին կոչեաց ժողովեաց 'ի Մոսքուա օրէնագէտս, ճարտարապետս, նկարիչս, քանդակագործս, ոսկերիչս, թղթարարս, ձուլիչս, բժիշկս, ևս և անծարանս : Եւ յամին 1563 տպագրեցան 'ի Մոսքուա այն առաջին անգամ Գործք և Թուղթք առաքելոցն 'ի սարկաւագէ ումեմնէ :

Նորին Իւանայ խնամովք եմուտ 'ի Ռուսիա կարգ և մարզք Եւրոպացի զինուորութե, որպէս ասացաք, և նա յաւել օրէնս կարևորս 'ի մատեանն Եարոսլաւեան : Ի սահմանեալ ժամս ընդունէր զաղերսագիրս, և ամենեցուն անընդմէջ համարձակէր մատչել առ ինքն : Զգատաւորս և զպաշտօնեայս պետութեն անիրաւեալս 'ի դաստաստանի 'ի մահ պատուհասէր . իսկ 'ի թեթևագոյն յանցանս նոցա՝ մերկացուցեալ զնոսին յիշխանական զգեստուցն, տայր յաճեցուցանել զնոսս քրձազգաճօ ընդ փողոցս քաղաքին 'ի ձեռն մեռելաթաղ

արանց արբելոց . և ասպա խրատէր ըզնոսա զգատտանալ առ յապայս : Իսկ զարբեցողս միշտ բանախիւ պատուհասէր :

Նովին անաչառ խտուածք վարեցաւ Իւան և ընդ սրաշտօնեայս եկեղեցւոյն իւրոյ . փոփոխէր ըստ կամս զմեարասօլիտս իւր՝ առանց ինչ հարցանելոյ զՅոյնս, որպէս կանխաւն . և զանձամբ իսկ էառ զարդս եսլիսկոսոսականս :

Առ Թադաւորուծքն Իւանայ սկասն պեղել Ռուսք և զբովս երկաթոյ, և վաճառաշահ լինել ընդ ծով և ընդ ցամաք յաճախասպէս :

Համառօտ ասել, Իւան այր մեծ էր ՚ի ըււուածիւս և ՚ի վատթարուծիս միանգամայն . և Թէ բազում անգամ անց նա ըստ չափ արդարուծէ, Թերևս՝ որպէս ասէ Քուրսպքի, այնպէս սրահանջէին հանգամանք ազգին իւրոյ յայնժամ : Որք և սկիզբն արարեալ սիրել զնա, ասպա սրատկառել, հպատակել, երկնչել և նողկալ, ՚ի վախճանի իսանգազաատեցան ՚ի տեսիլ վերջին աղետից նորա :

Եւ մեռաւ Իւան Դ, յամին 1584, ՚ի հասակի յիսուն և չորից ամաց : Կա նայք հինգ լեալ էին նորա, առաքինին Անաստասիա, որ ծնաւ նմա երիս որդիա, զԴեմետր, զԻւան և զՖէոտոր . Մարիամ դուստր Թանսուգ իշխանին Չէրքէզաց, որ ծնաւ զմիւս Դեմետր . Մարթա և Տարեա, որք արգելան ՚ի

վանս կանանց . և Մարիամ Փէոտո-
րեան :

ՖԷՈՏՈՐ Ա .

ԳՒՏԵԼՈՎ չափ Իւանայ , որպէս ա-
սեն , զապիկար զօրութի երէց որդւոյն
իւրոյ Փէոտորայ՝ աւանդեաց զաւսչու-
թի սկստութեն ՚ի ձեռս երկց զօրավա-
րաց իւրոց քաջաց , որք էին Իւան
Շույքի , Իւան Մսթիալաւքի , և Նի-
քիթ Եսերեվ եղբայր Անաստասիայ
դշխոյին . և զկրտերն զԴեմեար յանձ-
նեաց ՚ի խնամս Պողոտանայ Պէլքի :

Ընդ մեռանել հզօր ինքնակալին՝ յա-
ճախեցին ամբաստանուիք զՊէլքեայ ,
որպէս թէ կամիցի թագաւորեցուցա-
նել փոխանակ Փէոտորայ զսան իւր զԴե-
մեար , և նա ինքն Պէլքի գեղով մահու-
սպանեալ իցէ զարքայն Իւան . և արգե-
լաւ նա ՚ի Նիժնի Նովկորոս :

Ահեղագոյն ոսոխ Փէոտորայ ամբար-
ձաւ Պորիս Կոստանով եղբայր կնոջ
նորին . որ առաւել քան ՚ի Փէոտորայ՝
՚ի Դեմեարէ խիթացեալ , հնարեցաւ
նախ հեռացուցանել զնա մարբն հան-
գերձ յարքունեացն ՚ի քաղաք կալուա-
ծոց նորին յԱւիլի :

Ապա ուշ եգեալ ՚ի բարձունս երկց
իշխանացն՝ հաւանեցոյց զՓէոտոր զգու-

Հանալ անձինն 'ի նոցանէ , իբր զի զամե-
նայն ժողովուրդն յիւրեանց կողմն ու-
նեւով նոցա՝ կամին ասէր յինքեանս կոր-
զել զթագաւորութիւնդ : Եւ դիւրահա-
ւանն Ֆէոտոր յլեաց զՄսթիսլաւսի
'ի Պելոօզերօ , և բռնագատեաց զնա
մտանել 'ի կարգ միանձնութե . Եւրեւի
մեռաւ ինքնին . և յամին երրորդի նաև
Շույսի ամբաստանեալ 'ի ծառայէն
իւրմէ կաշառելոյ 'ի Կոտունովայ իբրև
մասնիչ , առանց քննութե դատաստա-
նի առաքեցաւ յաքսորս , և ասլա գաղտ
խողխողեցաւ :

Բողոք կալան զանիրաւ վճռոյն ե-
պիսկոսպոք երկու , և անկան յաստի-
ճանէ պատուոյն իւրեանց . և փոխա-
նակ միոյ 'ի նոցանէ , որ էր մետրասպօլիտ
Մոսքուայի , կարգեցաւ Յոբ եպիսկո-
պոս Ռոսթովայ՝ մտերիմ Կոտունովայ :

Դէպ եղև զի ընդ այն աւուրս անդ
գտաւ Երեմիա պատրիարգ Կոստանդ-
նուպօլսի , որ անկեալ յաթոռոյն և
անդր եկեալ էր 'ի խնդիր գրամոյ՝ ո-
րովք մարթացի անդրէն 'ի ձեռս բե-
րել զաթոռն՝ զոր կալեալ էր Մետրո-
փանէս : Կոտունով խոստացաւ նմա
գրամս՝ եթէ տացէ Յովբայ զիշխանու-
թի պատրիարգութեան հաւասար պա-
տրիարգութեան Յունաց , զի մի այլ և ո
հարկ լինիցի հրամանի պատրիարգին
Կոստանդնուպօլսոյ հպատակել յիրս
եկեղեցւոյն Ռուսաց : Եւ նա փոխա-

նահեալ զիրաւունս աթուոյն ընդ իւրումն փառասիրութիւն, կարգեաց հանդիսիւ զՅօբ 'ի պատրիարդ հաւասար իշխանութիւն պատրիարդացն Կոստանդնուպօլսոյ, Աղեքսանդրու, Անտիօքայ, և Երուսաղէմի: Եւ յայնմհետէ պատրիարդն Ռուսաց լիով իշխանութիւն սնամէր զէզէկէցին իւր մինչև ցմեծն Պետրոս, որ եբարձ 'ի սպառ զպատրիարդութիւն:

Մինչդեռ նոր պատրիարդն խրատութիւն իւրովք որսայր զսիրա ժողովրդեանն, Կոստանով առատաձեռնութիւն զնոյն գործէր՝ տիրեալ արքունի գանձուն: Դիւրին էր նմա անցանել 'ի տեղի ապիկարն Ֆէոտորայ. այլ կեալն Դեմետրի եղբօր Ֆէոտորայ՝ խէթ էր սրտին իւրոյ. վասն որոյ կաշառեալ զարս անօրէնս և զիշխանն Պատեակովսքի՝ յանձն արար նոցա կորուսանել զԴեմետր:

Գնաց Պատեակովսքի յԱւկլիչ, և որսացաւ զգայեակն Դեմետրի 'ի դաւակցութի իւր, և գայեկին առեալ 'ի գործի անզգամութեն զորդի իւր զհասակակից և զընկեր Դեմետրի 'ի զբօսանս մանկութեան, 'ի ձեռն նորա ած զարքայորդին 'ի վայր անդր՝ ուր մնային դաւաճանքն: Եւ անդէն խողխողեցին զանմեղ մանուկն զվերջին շառաւիղ տոհմին Տիւրիքայ յամին 1591:

Որք միանգամ 'ի վերայ հասին ան

օրէն սպանութեն, հնչեցուցին վաղ-
 վաղակի զգանդակսն, և ամբոխն գի-
 մեալ 'ի վերայ՝ ընդ սուր անցուցին զՊա-
 թեակովսքի գործակցօքն հանդերձ, և
 Կոտունով միայն վայելեաց յարգասիս
 եղեռանն: Որոյ գուն գործեալ ամե-
 նևին 'ի ծածուկ ունել զիրսն 'ի Ֆէո-
 տորայ, ուր ամենայն Ռուսք գիտակ
 էին, այնպէս իմն համբաւեաց՝ եթէ 'ի
 ցնորից իմն աղմկեալ պատանւոյն, և
 անինամ մնացեալ՝ անձամբ զանձն փո-
 ղոտեալ իցէ. որով յանցաւորս եցոյց և
 զմայր նորին և զազգակիցսն. վասն որոյ
 և Ֆէոտոր առաքեաց զՄարիամ 'ի
 վանս կանանց, և զեղբարս նորին յաբ-
 սորս:

Չմնայր ինչ այլ խափան ըղձիցն Կո-
 տունովայ. զի և Ֆէոտոր հիւանդագին
 անձամբն զօր ամենայն 'ի գրունս մա-
 հու գեգերէր: Սակայն գիտաց Կոտու-
 նով և զայն միջոց ժամանակի վարել 'ի
 պէտս իւրոյ չարամտութեն, և հարկե-
 ցոյց զՖէոտոր խաղաղ պատերազմաւ 'ի
 Լիվոնիա ընդդէմ Շվէտաց հարիւր հա-
 զար արամբք. և նորա գնացեալ էառ 'ի
 Շվէտաց զԻւանկորոս և զՆարվա, և
 ապա յամին 1592 խաղաղութի արար
 ընդ նոսա:

Ի վեցսմեայ ժամանակին՝ որ զհետ
 եկին խաղաղութեն՝ ոչ ինչ գործ ար-
 ժանի յիշատակի թուի արարեալ Ռու-
 սաց, բայց յառմանէն Սիպիրայ, յոր

'ի բազմաց հետէ վաստակ լինէին խազախքն Տոնաքի անուանեալք, այսինքն բնակեալք առ Տոն գետով. (զի էին և Զափոռոժաքի խազախք առ Տնեբերաւ, և այլք բազումք. որք առ հասարակ էին խառնուրդք իմն Լէհաց, Ռուսաց և Թաթարաց.) որք և յուժսուռն ամաց հետէ աշխատ առնէին զՌուսս՝ հաստ առնելով ճանապարհաց, և երբէք երբէք ասպատակելով յաշխարհն :

Արդ յամին 1577, Եռմաք գլուխ Տոնաքի խազախաց 'ի պարտութի մատնեալ առաջի զօրացն Իւանայ չորրորդի, խազաց գնաց վէց հազար ընկերակցօք 'ի կողմանս Սիպիրայ, յորում տիրէին յայնժամ այլ և այլ խանք զանազան սերնդոց Թաթարաց. և 'ի նոսա հօրագոյն էր 'ի ժամանակին Քուչում խան : Եռմաք եդ 'ի մտի յարձակել 'ի բնակիչս Սիպիրայ 'ի Թշնամիս Ռուսաց, յուսով շնորհս գտանելոյ առաջի Թագաւորին. և նախ 'ի մարզս խատրմբերս կրթեալ զզօրս իւր՝ ասպա յամին 1579 անց գնաց ևս յառաջ մինչև Եհասս 'ի գեան Սերեպրեանքս անհնարին տաժանմամբ, և կորոյս զկէս զօրացն յաշխատութէն և 'ի սովէ և 'ի ցրտոյ : Զմիւս կէս զօրացն յառաջ վարեալ մարտեաւ ընդ խանին Արկուլից, և յաղթեաց նմա հրազինութեն՝ զոր չունէին Թաթարք :

Զերբակալ արար և զմի 'ի զօրագլու-

խացն ֆուչումայ, և դարձոյց զնա առ խանն ընծայիւք հանդերձ ողջունել զնա յիւր անուն: Այլ ֆուչում զարհուրեալ յարչաւանէն Եւմաքայ՝ առաքեաց ընդդէմ նորա զօրս, որոց պատահեալ Եւմաք մերձ ՚ի Թոպուլ՝ մազապուր զերծաւ ՚ի յարձակմանէ նոցին այսպիսի իմն հնարիւք: Ելից զնաւակս իւր ցցովք պատելովք սպառազինուածք խազախաց՝ սակաւս ոմանս եդեալ ՚ի նոսա պահասանս, և ինքն աներևութաբար սլաշարեաց իւրովքն զԹաթարս ՚ի Թիկանց կուսէ. և նոցա համարեալ Թէ շուրջ փակեալ իցեն ՚ի խազախաց՝ ՚ի փախուստ դարձան:

Յետ այնորիկ յաղթեաց Եւմաք և խարաճա խանին Թոպոլայ, և էառ զքաղաք նորին լի ոսկուով և արծաթով և ակամբք սլատուականօք՝ զորս հաւաքեալ էր անդր յաջորդացն Չինկիզայ. և անդ հաստատեալ զբանակ իւր՝ հանդէս յաղթանակի արար քառասնօրեայ պահօք նախ քան զվերափոխումն սրբոյ կուսին. զի եռանդն յոյժ էր նորա ՚ի դործս բարեւաշտութէ. վասն որոյ և ունէր ընդ իւր երիցունս երկու, և միանձն մի փախստական, և զօր ամենայն սեղան շարժական ուղղեալ յանուն սրբոյն Նիկողայոսի՝ տայր երկրանցն մատուցանել զպատարագ:

Այլ խազախքն ոչ ինչ աւելի մնացեալք քան զվեցհարիւր այր, յորդո-

րէին զԵռմաք դառնալ 'ի Ռուսիա, և առաջի առնել թագաւորին զաշխարհակալութիս իւրեանց. զորս հաւանեցոյց նա՝ թէ սարա է 'ի դէպն վարիւ ահաբեկութիւն թաթարացն. և խաղաց 'ի վերայ Սիպիր քաղաքին Քուչումայ: Եւ ընդդէմ նորա Մէհէմմէտ զուլ ազգակնից խանին, և կտտաղաբար մարտուցեալ՝ եհար 'ի Խազախաց արս հարիւր և եօթն, այլ ապա 'ի փախուստ գարձաւ, և Եռմաք տիրեաց Սիպիրայ:

Յայնժամ բազումք 'ի մերձակայ ժողովրդոց եկեալ անձնատուր եղեն Եռմաքայ. սակայն նորա ոչ վստահացեալ ընդ ձեռամբ ունել ցանգ զնոսա առ նուազելոյ իւրոցն, առտքեաց 'ի Մոսքուա յամին 1581 զաթամանն կամ զհէթմանն, այս է զգնդապետն Իւան Քոլչոք անուն՝ յիսուն Խազախօք, ասել ցթագաւորն. «Վալաք յաղթանակաւ յանուն քո զՍիպիր, և խորտակեցաք 'ի սարա զՔուչում. նուաճեցան և Օսթեաքքն և Վոկուլք, և եղեն հարկատուք Ռուսաց. արդ հաճեսցի՞ր յղէլ այսր իշխան զոմն տեսուչ լայնատարած աշխարհիս, և թող մեզ զառաջին ստահակութիւնս մեր»: Եւ եբեր Քոլչոք իբրև երախայրիս հարկացն վաթսուն քուրձս սամուրենեաց, քառասուն սամուրենի 'ի մի քուրձ: Իւան Գ, որ թագաւորէրն յայնժամ, մեծաւ ուրախութիւններեալ Եռմաքայ և Խազախաց,

գրեաց առ նա թուղթ սիրոյ, և առաքեաց 'ի պարգև նմին զմուշտակ մի սամուրեհնի՝ զոր ինքն ագանէր, և զտաջուածի աշխարհացն 'ի նա յանձն արար մինչև առաքեցից ասէ զայլ ոք:

Իսկ Քուչում վերստին զօրաժողով լեալ ընդ Մէհէմմէտայ՝ գիմեաց 'ի վերայ Խաղախաց. և Եռմաք վաթսուն Խաղախօք 'ի պարտութի մատնեալ ըզնոսա, ձերբակալ արար զՄէհէմմէտ զուլ և զորդինորա, և առաքեաց 'ի Մոսքուա. որք և հասին անդր յամին 1588, և արքայն Փէոտոր պատիւ մեծ արար նոցա:

Հասին և առաքեալքն 'ի Ռուսաց 'ի Սիպիր Պուքովսքի և Կլուհով հինգ հարիւր զօրականօք. այլ 'ի դառն ժամու. զի Եռմաք իբրու պաշարեալ իմն էր 'ի Սիպիր 'ի զօրացն Քուչումայ, և յանհնարին վիշտս սովու մատնեալ, մինչև ուտել Խաղախաց զգիսկունս ընկերացն իւրեանց մեռելոց. և նորոգ ժամանեալքն յաւելին զթշուառութի նոցա և զիւրեանցն, և Պուքովսքի մեռաւ:

Դարձեալ և այլ աղէտք պատահեցին Խաղախաց. զի Խարաճա սաղրանօքն Քուչումայ եկն էառ յԵռմաքայ Խաղախա քառասուն, և զաթամանն Քուչոք, որպէս թէ 'ի վանել զթշնամիսն, և բերել համբարս կերակրոց. և խոտորեցուցեալ զնոսա՝ խողխողեաց

զամենեւեան . և ասլա ամբոխիւ զօրաց
յարձակեցաւ 'ի Սիպիր : Այլ Եռամաք
հալածեաց զնա գիշերայն , և զզօրս նո-
րա՝ էր զոր սպան , և էր զոր 'ի դերուծի
վարեաց . և դարձեալ անձնատուր ե-
ղեն նմա Թաթարք բազումք . յորոց մի
ոմն իշխան մատոյց նմա զդուստր իւր ,
այլ նա ոչ առ , և արդէլ իւրոցն չխօ-
սել անգամ ընդ աղջկանն :

Ի դառնալ իւրում անդրէն 'ի Սի-
պիր՝ առ սաստկուծէ անձրևաց զկայ
էառ 'ի կղզի ուրեք յԻրթիշ գետ . և
մինչդեռ յանկասկածի զքնով անկանէր
իւրովքն հանդերձ , եհաս 'ի վերայ
Քուչում , և սպան գրեթէ զամենայն
զխաղախան : Սակաւք ոմանք հերձեալ
զամբոխ թշնամեացն՝ անկան 'ի նաւակս
իւրեանց , և Եռամաք յոստնուլ իւրում
'ի մի 'ի նաւակացն՝ անկաւ 'ի գետ
անդր , և առ ծանրուծէ սպառազինու-
ծէցն ընկղմեցաւ : Յետ սակաւուց գը-
տաւ մարմին քաջի առնն յԻրթիշ , և
խուժագուժն Քուչում մատնեաց զայն
յայսն իւրոցն նախատանաց : Այլ նո-
քին իսկ Թաթարք կշտամբեալ ապա
զխանն վասն անիրաւելոյն 'ի մարմին
այնպիսոյ վեհագին՝ թաղեցին զնա
հռչակաւ , և զոհս քաւուծէ մատու-
ցին նմա . և յայնմ հետէ կարգային զա-
նուն նորա 'ի թիկունս 'ի սրատերազմի
և յորս էրէոց : Յարդ ևս համարին թէ
ոսկերք նորա և հանդերձքն են 'ի բժըշ-

կութի ամենայն աստաժետաց հաւատով մերձեցելոց 'ի գերեզման նորա :

Ի լուր մահուն Եռմաքայ եթող Վուհով զՍիպիր և դարձաւ 'ի Մոսքուա հարիւր և յիսուն արամբքն ապրեցելովք, այլ Ռուսք առ սակաւ սակաւ տիրեցին դարձեալ Սիպիրայ, և շինեցին 'ի նմա քաղաքս բազումս. կալան և զորդիս Քուչումայ և առաքեցին 'ի Մոսքուա. և ինքն Քուչում անկեալ առ Խալմուխա՝ սպանաւ 'ի նոցանէ : Բաղմացան ապա 'ի Սիպիր հատուածք Ռուսաց, և տիրեցին բովանդակ աշխարհին. և այժմ է մի 'ի մեծամեծ նահանգաց Ռուսիոյ՝ օր ըստ օրէ բարգաւաճեալ յարուեստս և 'ի կենցաղօգուտ գիտութիս :

Եւ Ֆէոտոր յետ այնր գեղեցիկ և անաշխատ երկրակալութե մեռաւ յամին 1598, 'ի հասակի քառասուն և մի ամաց. և զի ոչ ունէր որդիս, 'ի նմա սպառեցաւ և ազգն Տիւրիքայ, յորմէ յիսուն և երկու թագաւորք տուան Ռուսիոյ ընդ ամս եօթն հարիւր երեսուն և վեց :

ՊՈՐՒՍ ԿՈՏՈՒՆՈՎ

ԽՈՐԱԳԻՏ գտեալ սորա 'ի լրումն ըղձից փառասէր սգւոյն, խորագիտագոյն ևս գտաւ 'ի ծածկել յամենեցուն զփառասիրութի իւր. և մինչդեռ յամենայն կողմանց Ռուսիոյ գային ժողովէին 'ի Մոսքուա արք աւագք, իշխանաւորք, զօրավարք և կուսակալք յընտրութի նորոյ արքայի, Կոտուհով մեկնեցաւ 'ի վանս ուրեք առ քեան իւրում այրւոյն Ֆէոտորայ:

Գիտէր այրն խորամանկ՝ զի աչք ամենեցուն յինքն էին, և ոչ խաբեցաւ. այլ իբրև առաջի արարին նմա զԹագն, 'ի վեր քան զիւրն չափաւորութի ասէր լինել զքեան Թագաւորութի. և « Որ ինչ միանգամ մինչև ցարդ գործեալ իցէ իմ գործս ոչ անօգուտս պետութիւն, և ոչ անհաճոյս այլ և այլ անձանց երևելեաց որ 'ի նմա, այլ այն զինչ իցէ, ասէր, առ պարտութագաւորի »:

Նոյն բան հաստատեցաւ և յերկրորդում ժողովի ընտրականաց, և պատգամաւորք հանդերձ բովանդակ ամբոխիւ քաղաքին դիմեալ 'ի վանսն՝ յայտ առնէին զվճիւ ժողովոյն, և 'ի ձայն

բարձր թախանձ արկանէին առնել նոցա զչնորհն զայն : Եկն և պատրիարքն հանդերձ ամենայն ուխտիւ եկեղեցւոյն, և զնոյն աղերս մատուցանէին . մինչև հուսկ ուրեմն զիջաւ նոցա . և օրն այն կարգեցաւ 'ի պահս ամ ըստ ամէ : Ապա աղաչեաց զաւագանին՝ զի մի՛ պսակեացեն զնա ընդ ամ մի ողջոյն՝ մինչև հաճեսցին ընդ ընտրութի իւր և համօրէն պաշտօնեայք և կարգք պետութեն . և ինքն նուազեցոյց զհարկս, առատաձեռնեաց գրամս, առաքեաց գեսպանս 'ի Ահաստան, 'ի Շվէտս, 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Խրիմ և 'ի Պարսս, և նորոգեաց ընդ նոսա զգաշինս խաղաղութեան :

Կոչեաց 'ի Ռուսիա և արս հմուտս իրաց պատերազմի և տեղեակս ուսումնական գիտութեց, և յորդորեաց զազատանին առաքել զորդիս իւրեանց 'ի վարժս իմաստից և 'ի կրթութի բարուց 'ի Շվէտս և յայլ սահմանակից քաղաքս, և ոչ ինչ եթող 'ի հնարից առ յինքն յանկուցանելոյ զսիրտ ժողովրդեանն :

Ի սկզբան թագաւորութեան նորա կրկին աղէաք հասին 'ի վերայ Ռուսաց : Առաջին՝ սով սաստիկ անկեալ 'ի Մոսքուա, յորմէ մեռան առաւել քան զորդիս վեցհարիւր հազար : Եւ երկրորդ՝ խուժան աւաղակաց զՄոսքուայիւ, որք աւաղակապետաւն իւրեանց երկիցս և

երիցս զգէմ՝ կալան ամբօխի զօրաց արձակելոց՝ ՚ի վերայ նոցա, մինչև առ սակաւ սակաւ ցրուեալ՝ կէս մի պատժեցան, և կէս մի զերծան արտաքոյ աշխարհին :

Իսկ Պորիս ՚ի դարման չարեացն եղելոց ծաղկեցոյց զվաճառականութի ներքին և զարտաքին, թողեալ զմաքս բազմաց ՚ի սահմանակից քաղաքաց : Եւ ՚ի խնդրել ՚ի նմանէ պապին Հռովմայ և թագաւորին Անգղիոյ, զի թոյլ արասցէ Իտալացւոց և Անգղիացւոց վաճառաշահ լինել ընդ Ռուսս, ոչ միայն զԷջաւ նոցա, այլ և մեծապարգև մեծարեալ դարձոյց անդրէն զառաքեալն : Շինեաց ապա բերդս և ամրոցս ընդդէմ արշաւանաց Նոլայից և Չէրքէղաց և այլոց Թաթարաց :

Ընդ ամս հինգ այնպէս երջանկաբար թագաւորեալ, յետ այնորիկ սողալտ առաջնոց անիրաւութեցն արկ զնա ՚ի ծուփս կասկածանաց ամենայն ուստեք . յաճախեաց լրտեսս մինչև ՚ի տունս անգամ՝ առ ՚ի գիտել զինչ բանք իցեն զանձնէ իւրմէ ՚ի ժողովրդեան : Այլ և ոչ այնու շատացեալ՝ որսացաւ գրամովք արս զրպարտիչս, և սկսաւ բանիւք նոցին դատապարտ առնել զգլխաւորս քաղաքին :

Յայնժամ լցաւ Մոսքուա անիրաւ ամբաստանութիք . այր զընկեր զրպարտէր, ծառայ զտէր, եղբայր զեղբայր,

ամուսինք զամուսինա , և որդիք անգամ
զհարս :

Ածաւ յատեան ծերունի ոմն պաա-
կառելի արեօքն կաշկանդեալ 'ի շրջ-
թայս : Խնդրեցաւ ամբաստանն , և ել
եկաց 'ի մէջ որդի նորին : Եկաց հայրն
առ վայր մի ակնկոր 'ի լուութե . և ա-
սրա շարժեալ զշրթայսն՝ ամբարձ զաչս
իւր յերկինս և ասէ ցորդին . «Տուր պա-
տասխանի որդեակ իմ առ այս բարբառ՝
թէ կարող իցես » : Քստմնեցան դա-
տաւորքն ընդ տեսին . և Պորիս ինքնին
զամօթի հարեալ՝ արդեւ զնողկալին զայն
դատաստան :

Քան զամենայն աւագորեարն ահա-
գին էր յաչս Պորիսայ թագաւորազն
տոհմ Ռոմանովեանց . վասն որոյ ամբա-
տանեցան՝ թէ կամին նոքա դեղ մահու-
արբուցանել թագաւորին : Մի ոմն յաղ-
գակցացն Պորիսայ կաշառեաց զծառայս
Աղէքսանդրի Ռոմանով , և ետ դնել
յարկեղս նորա արմատս թունաւորս :
Ասրա նոքին իսկ ծառայք դատասխազք
և վկայք՝ ամբաստանեցին զտէրն իւ-
րեանց . և առանց իսկ քննութե յաք-
սորս առաքեալ սպանաւ Աղէքսանդր ,
և եղբայր նորա Ֆէոտոր՝ Նիքիթիչ բրու-
նադատեցաւ մտանել 'ի վանս ուրեք
յԱրքանկէլ , և կոչեցաւ Փիլարետ . և
կին նորա Արսենիա մուծաւ 'ի վանս
կանանց հանդերձ վեցամեայ մանկաւրն՝
որ կոչէր Մեքայէլ :

Աստի է 'ի միտ առնուլ և զանցս այլոց մեծամեծաց . և միանգամայն զկուրուծի թագաւորին՝ որ եղեալ 'ի մտի անքոյթ լինել յաթոռ իւրում, ինքնին յաւելոյր զթշնամիս իւր՝ ասելի լեալ ամենեցուն առ հասարակ :

Կրօնաւոր ոմն 'ի Կալիչայ Օթրեվիէ վանուն պատանի ատենադպիր էր պարիարգին Յովբայ : Սա գիտելով ճշգրտաիւ զանցս մահուն Դեմետրի մանկանն որդւոյ Իւանայ չորրորդի, որում և նրման իմն թուէր կերպարանօքն, գիտէր ևս եթէ խաժամուժն անգէտ էին անցիցն, և սակայն ատէին յոյժ զՊորիս, և պատրաստ էին վտարանջել 'ի նմանէ՝ թէ գտանէր ոմն 'ի միջի այր յազգէն Տիւրիքայ : Եդ 'ի մտի կարծեցուցանել զանձն իւր թէ Դեմետրն այն իցէ . այլ նախ հոգացաւ կեղծել զպատմութի ինչ սուտանուն Դեմետրի սպանելոյ յՈւկլիչ, և պատմել այսր անդր զբօսանաց աղագաւ : Բայց քանզի երբէք երբէք սպրդեցին 'ի բերանոյ նորա և բանքինչ, որովք ցուցանէր թէ թագաւորելոց է նա երբեմն, կասկած կալաւ զնմանէ արքեպիսկոպոսն Ռոսթովայ, և ազգարար Պորիսայ . և նա հրամայեաց առաքել զկրօնաւորն 'ի վանս ուրեք 'ի հեռաստան, պատուիրեալ առաջնորդի տեղոյն՝ զգուշանալ նմա :

Օթրեվիէ վիճակեալ անտի 'ի Քիեվ որ էր յայնժամ ընդ իշխանութիւն

հաց, և եղև տան երէց իշխանի ումեմն լեհացւոյ: Անդ ևս ոչ ըստ արժանի իւրոյ կարգին գնացեալ գնացս, և կշտամբեալ յիշխանէն, եթող զմիանձնուին, և անցեալ ՚ի Ղեհաստան՝ եմուտ ՚ի ծառայութի Վիշէնեւեցքի իշխանին. այլ ոչ եթող զխորհուրդ թագաւորելոյն. և ՚ի գիր ևս գրոշմեաց զառասպել իւրոյ ծագմանն. ասէ, « Որ արբանեկէն ՚ի տան Վիշէնեւեցքեայ գերեակն Արիչքա (զի Գրիգոր էր անունն նորա), Գեմետր է նա որդի մեծի թագաւորին Իււանայ: Որդի երիցու ուրումն էր սպանեալն յՈւկլիչ հրամանաւ բռնաւորին Կոտունովայ, և ոչ Գեմետրս էս, որպէս կարծի: Իշխանն այն խորհրդական՝ որ խնամովքն այ ասլրեցոյց զկեանս իմ, յերկար ՚ի թաքստեան կալաւ զիս. և սպա առ ահի բռնաւորին անցոյց զիս այսր ՚ի Ղեհս. և էս յարհամարհ վիճակիս իմում յուսամ թէ հայեսցի երբէք Աճ ՚ի տառապանս իմ, և տացէ ինձ ըզվայելս իրաւանց իմոց: Իսկ եթէ ըստ գաղանաճաճուկ խորհրդոցն Այ վիճակեսցի ինձ այսպէս մեռանել, այն շատ է ինձ՝ զի սովին զեկուցմամբ ծանկցի թէ ո՛ր և որպիսի ոք անցեալ կայ յաթուն թագաւորաց: Եւ եդեալ ըզթուղթն ընդ սնարիւք՝ ընկողմնեցաւ ՚ի մահիճս. և պատճառեալ զխօթութի՛ կոչեաց զերէց մի զի խոստովանեսցի նմա զմեղս իւր. որում և պատմեաց

սակաւ ինչ 'ի վիպաց իւրոց, և որպէս
 թէ անկարանայր առ ցաւոցն յառաջ
 ևս վարել զբանսն՝ ակնարկէր նմա հե-
 կեկանօք՝ թէ որ այլ ևս ինչ կայցէ գի-
 տելի, գտցես ապա 'ի թղթի անդ որ
 ընդ սնարիւքս իմովք :

Ընթեռնու հետաքնին երէցն ըզ-
 թուղթն, և ընթացեալ ազդ առնէ իչ
 խանին տեառն նորա. և նորա եկեալ
 առ հիւանդն, և ոչ կարացեալ քաղիւ
 'ի բերանոյ նորա բանս ինչ աներկբայե-
 լիս՝ խնդրեաց եղիտ զթուղթն և ըն-
 թերցաւ. և խնամ մեծ կալեալ առող-
 ջանալոյն Կրիչքայի՝ ած զնա 'ի Քրա-
 քով, ուր էր ժողով աւագանւոյն : Անդ
 աներկիւղ վստահութիւն հաստատեաց
 խաբեբայն՝ թէ ինքն իցէ Դեմեաթ որդի
 Իւանայ. և աւագանին խոստացաւ
 ձեռն տալ նմա և ամբառնալ զնա յա-
 թոռն Ռուսիոյ : Յաւել Վիշէնեւեցքի
 խոստանալ նմա զամենայն ինչս իւր, ե-
 թէ ծաղկեցուցէ 'ի Ռուսիա զքաւա-
 նուի հռովմէական հաւստոյ, և Օթրե-
 վիէվ աներկմտելի արար զնա ընդ այն :

Ի տարածել համբաւոյ եղելոցն՝ ու-
 րախութի մեծ եղև Տոնսքի խաղախաց,
 և առաքեցին առ սուտանուէն Դեմեաթ
 դրամս և զօրս յօդնականութի : Գունդ
 կազմեցին և Լէհք՝ գիմել ընդ խաղա-
 խացն 'ի Ռուսիա :

Իսկ Պորիս երկուցեալ յիրացն՝ ար-
 գել Ռուսաց գնալ 'ի Լէհս, կամ

զլէհնս ընդունել 'ի Ռուսիա . այլ 'ի զուր . զի Ռուսք օր ըստ օրէ գային ժողովէին առ սուտանունն Դեմեար . և առաւել ևս հաստատեցան թէ ճշմարիտ իցեն իրքն՝ յորժամ տեսին խաչ մի առ նմա ընդ ձորձովն , զոր ասէր առեալ յԻւանայ Մսթիաղաւսքի , որ մի էր յերկն զօրավարացն կարգելոց յԻւանայ չորրորդէ :

Ապա առ և ևս ամրապնդելոց զտէրութի իւր , սրտաճառանօք նպաստ լինելոց ուղղութեամբ հաւատոյ՝ ասպաւինեցաւ առ Յիսուսեանսն հզօրս յայնժամ յարքունիս Եւրոպայ . նոքա միջնորդեղեն առ Կղեմէս Բ , քահանայապետ հռովմայ , և նա առաքեաց առ Դեմեար դրամս , և զարքայն Լէհայ յորդորեաց ինամ ունել իրացն Դեմեարի :

Հրասարակեցաւ և հրովարտակ լի թշնամանօք ընդդէմ Պորիսայ , յորում խոստանայր Դեմեար Ռուսաց՝ որք կամիցին զիւր կողմն ունել՝ թողութիս և վարձս առատութիւն . և այնուհետև ազատք և ռամիկք առ հասարակ դէպ ժամու մնային անցանել առ Դեմեար : Եւ եհաս ժամն :

Զի կուսակալն Սենտոմիրայ և Վիշէնեւեցքի և Դեմեար եկին մտին 'ի Ռուսիա զօրօք և վնց հազար խաղախօք , և առին զՉէրնիկով , և այլ ևս եօթն քաղաքս : Խաղաց ընդդէմ նոցա Պորիս ամենայն զօրութիւն իւրով , և զառաջինն

'ի պարտութի մասնեալ առաջի Դեմեարի, յերկրորդումն խորտակեաց զզօրս նորին: Այլ Դեմեար դարձեալ խիզախեաց մնացելովքն հինգ հազարօք, և թէպէտ բազում յոյժ էին զօրք Ռուսաց, բայց անդէն 'ի սկզբան մարտին մեծաւ մատամբ անցին 'ի կողմն Դեմեարի, և մնացեալքն վանեցան առաջի յալթականին:

Զարհուրեալ Պորիսայ յերեսաց Դեմեարի՝ գուն գործէր հնարէր զիւրև ածել զխաղասն. խոստանայր նոցա թողութիս և վարձս, տայր պատրիարգին բանագրել զապստամբսն, այլ 'ի զուր և յանօգուտս: Եւ մինչդեռ առ թագաւորս Բանեաց և Շվէտաց բանագնաց լինէր, խիթք 'ի փոր անկան նմա և մեռաւ յամին 1605, թագաւորեալ ամս եօթն:

Զսկիզբն և զկատարած թագաւորութեն ծայրագոյն անգթութք լցեալ սորա, թերևս ոչ ինչ տարադէպ կարծեցաւ յոմանց՝ թէ որ բազմաց 'ի սխտանի արանց գահիճ լեալ էր Պորիս, և անձին զնոյն սպաս հարեալ իցէ գեղով մահու:

Այլ այն որպէս և իցէ, Պորիս թէ ոչ արգարանայ անագորոյն գնացիւքն, դէթ կարեկիցս գտանէ թշուառ մահուն՝ սակս փութաջան խնամոցն զոր կալաւ 'ի կեանս իւր 'ի պայծառութի Ռուսիոյ: 'Նմին իրի և մեծն Պետրոս 'ի նորոգել

Իւրում յէա ժամանակաց զաշտարակն Մոսքուայի, իբրև եգիտ անգ արձանա-
գիր եգեալ 'ի պատիւ Պորիսայ, և ապա
ծեփեալ բաով, հրամայեաց բանալ զայն
և սարղէլ:

ՖԷՈՏՈՐ Բ . ՊՈՐԻՍՈՎԻԶ

Ի ԼՈՒՐ մահուն Պորիսայ ընթացեալ
ամենայն ժողովուրդն յարքունիան՝ ա-
զազակեցին, կեցցէ արքայ Ֆէոտոր որ-
դի Պորիսայ, և մայր նորա խնամապետ:
Զի 'ի սորա կողմն էին պատրիարդն և
մեծամեծք Մոսքուայի. այլ ազատա-
նին արտաքին գաւառաց և զինուորա-
կանքն ամենայն կուսակիցք էին Դեմե-
արի, որ դամ քան զգամ՝ դայր մերձե-
նայր 'ի Մոսքուա. և յանուանէ անձ-
նատուր եղեն նմա Պասմանով քաղա-
քապետ հիւսիսային Նովկորոտայ, և
երկու իշխանքն Վոլիցին:

Իսկ ինքն Դեմետր առաքեաց լրտես
'ի Մոսքուա. որք իբրև 'ի յայտ եկին
անգանօր, ամբոխն յարեցաւ 'ի նոսա,
և հնչեաց անունն Դեմետրի ընդ քա-
ղաքն ամենայն: Ընդվայր ճգնեցան և
խնամակալ գշխոյն և պատրիարդն Յովք
'ի սանձել զամբոխն. նոքա դիմեցին 'ի
Քրէմլին, և առ հասարակ սպանին զա-
ւագս և զսոսկականս զբարեկամս թա-

գաւորին . ձերբակալ արարին և զՔէո-
տոր հանդերձ մարբն և քերբն , և դեռ
պանս առաքեալ առ Դեմետր շառա-
ւիլ Տիւրիքայ՝ որպէս կարծէին , հրա-
ւիրեցին զնա ունել զաթոռ նախնեացն
իւրոց :

Հրամայեաց Դեմետր Կոլիցիներանց
և Մասալքեայ և Պասմանովայ՝ ի մահ
տալ նախ զՔէոտոր և զմայր նորին . և
զսլաարխարգն մերկացուցեալ ՚ի շքոյն՝
արգելուլ ՚ի վանս ուրեք միանձանց հե-
ռի ՚ի Մոսքուայէ . ապա և տոհմն Պո-
րիսայ ջնջեցաւ : Այլ ամբոխն զաչա-
ցու և ոչ զայն շատ գրեալ , պէղեաց և
զգիակունս տոհմի նորին ՚ի գերեզմա-
նաց իւրեանց , և թշնամանեաց զնոսա :

ԴԵՄԵՏՐ Ե . ԻՒԱՆՈՎԻԶ

ՍՈՒՏԱՆՈՒՆ

ՄԻՆՉԴԵՌ Դեմետր գայր հուպ մեր
ձենայր ՚ի Մոսքուա՝ ելին ընդ առաջ
նորա եկեղեցականք և ժողովրդականք
և ընկալան ՚ի ներքս ՚ի ձայն ցնծութե՝
կարդալով զնա Արուսեակ առաւօտու
ծագեալ ՚ի Ռուսիա : Այլ Դեմետր զի
հաստատեսցի և ևս յաթոռն՝ կամեցաւ
առնուլ զթագ արքայիցն Ռուսիոյ .
վասն որոյ ետ զսլաարխարգութիւնն Ռու-

սաց արքեպիսկոպոսին Քեազանայ , և սրահեցաւ 'ի նմանէ :

Մի միայն խոչ խափանարար իրացն Դեմեարի մնայր այրին Իւանայ չորրորդի Մարիամ՝ արգեւական 'ի վանս ուրեք 'ի Պելժօղերօ : Թողուլ զնա անդէն չէր 'ի դէս , և ածել 'ի Մոսքուա կարի խիթալի . այլ խրոխան Դեմեար համարձակեցաւ առաքեաց պատգամաւ . Լորս առ դշխոյն և կոչէր զնա իբրև զիւր մայր 'ի վայելս արքունի շքոյ : Եւ 'ի գալ նորին՝ ել նմա ընդ առաջ Դեմեար , էջ յերկվարէն , և անկեալ առ ռասն՝ ոչ ինչ եթող 'ի գորովական բանից որդւոյ զոր չէարկ առաջի նորա . վարեցաւ ապա 'ի գիրկս սուտ մօրն , և անէծսցաւապինս կարդայր Կոտուհովայ . երգմնահար լինէր և խոտանայր մօրն , ես ջնջեցից , ասէր , 'ի մտաց քոց զլիշատակ աղեւտիցն զորս կրեցեր անգստին 'ի մտհուանէ հօրն իմոյ Իւանայ : Ծանեաւ և Մարիամ զԴեմեար իւր յորդի , և եցոյց նմա բերկրութի յոյժ . և ազաչէր ելանել բազմել ընդ իւր 'ի կառան՝ որով ինքն եկեալ էր . այլ Դեմեար հեաի և բացաւ դլխով դնայր 'ի կողմանէ՝ մինչև ած զնա 'ի վանս վերապիտիման , ուր 'ի բազում ամաց հետէ սովորութի էր բնականալ այրեաց թագաւորացն :

Այնչափ դժուարահաւատալի աստանօր թուեցաւ ոմանց այսպիսի աներկեան վստահութի 'ի Դեմեար , և այս

գոռնակ աներկմիտ հաւանութի յայրին
 Իւանայ, մինչև տարակոյս 'ի մէջ ար-
 կանեւ՝ թէ գուցէ արգարե վրիպակ ինչ
 լեալ իցէ 'ի մահուն Դեմետրի : Որք
 նոյնպէս զարմանան և ընդ թողուին Դե-
 մետրի սղջ զիջխանն Շույսքի զգլխաւորն
 'ի կուսակիցս Պորիսայ : Այլ մէք 'ի
 սպամութի անգր ուշ կալցուք :

Ծանր էր աւադանւոյն Ռուսաց տե-
 սանել առ նորոյ արքային թիկնապահս
 լէհացիս և օտարազգիս . վասն որոյ
 սկսան ասել ցնա՝ զի արձակեացէ զնոսս
 'ի տեղիս իւրաքանչիւր . զի թագաւորի
 արգարոյ սէր ժողովրդեանն պարիսպ է
 ասէին՝ քան զամենայն պահապանս ամ-
 րագոյն : Խաբեցաւ Դեմետր, և արար
 ըստ նոցա բանիցն . և անդէն 'ի վեր ե-
 րևեցաւ խումբ գաւազրաց , և իշխանն
 Շույսքի հաղիւ ճողոպրեցաւ 'ի ներ-
 քուսս ձեռին դահճի՝ շնորհելովն Դե-
 մետրի . իսկ այլք 'ի մահ վարեցան :

Այնուհետև յապահովացեալ Դե-
 մետրի՝ առաքեաց ինդրեաց զխօսեցեալն
 իւր զգուստր կուսակալին Սենաոմիրայ,
 և եղեն հարսանիքն մեծաշուք հանդեր-
 ձանօք 'ի Քրոքով և 'ի Մոսքուա :

Այլ Ռուսք 'ի բնէ ատեցողք լէհաց՝
 կարի իմն գժգմեցան , զի օրիորդ լէհացի
 ամաւ իւրեանց 'ի գշխոյ : Թո՛ղ զայն,
 'ի մեծ ևս զայրոյթ բորբոքեցան 'ի լսել՝
 թէ Յիսուսեանք ունին հաստատել զը-
 պրոցս 'ի Մոսքուա , և ուսուցանել ըզ-

դաւանութի հռովմէական հաւատոյ . նորոգեցաւ յամբօխին և յիշատակ Կրիչ քայի միանձին Օթրեվիէվայ, և կասկած զԴեմետրէ . և վասն այսր ամենայնի հաստատեցին բառնալ զկէանս թագաւորին . և այն առաւել 'ի թելագրութե Վասլի Հույսքեայ առաջնորդի դաւոյն , որ ցայնժամ երկոտասան հազար ոգիս զիւրև ածեալ 'ի մերձակայս Մոսքուայի շուրջ դայր :

Իբրև զգաց Դեմետր զգունն՝ սլատուիրեաց Սթրելցացն 'ի սրատրաստի կալ . և ինքն հրատարակեաց յամբօխին թէ 'ի 15 աւուր մայիսի հանդէս զինուորական հանդերձեալ է առնել 'ի մեծի հրապարակին . և էր հանդէսն փորձ պաշարման և առման փայտաշէն ամրոցի միոյ : Այլ 'ի ծածուկ հրամայեաց կարգել շուրջանակի զամրոցուն և թնդանօթս , որպէս զի յարձակեալ Սթրելցացն և Լէհաց 'ի կոտորել զգաւազիրսն եկեալս 'ի տեսիլ հանդիսին , ունիցին և զբերդն 'ի տեղի ապաւինի : Սակայն 'ի կորուստ նմին դարձաւ խորհուրդ իւր :

Զի Հույսքի 'ի վերայ հասեալ հնարիցն՝ սլատուէր ետ գալտ իւրոցն գաւակցաց՝ 'ի նախընթաց գիշերի հանդիսին գալ ժողովել 'ի Մոսքուա : Մինչդեռ ամենեքին խոր 'ի քուն ննջէին , հնչեցուցին սոքա զզանգակսն , և ամբօխն յամենայն կողմանց 'ի մի վայր

խուժեալ արարին աղմուկ խռովութե մեծի : Աալան դաւադիրքն զամենայն երևելի տեղիս քաղաքին , և Շուշաբի առեալ 'ի ձեռս զխաչն և զսուր՝ ընթանայր ընդ ամենայն հրասպարակն , աղա զակէր և ասէր . « Լէհք նշովեալ են զանձինս 'ի կորուստ Ռուսաց , և ահա վաղ ընդ փոյթ ելանեն՝ ընդ սուր անցուցանել զնոսա » : Ընդ որ 'ի խռով մեծ հարեալ քաղաքացւոցն , առ հասարակ 'ի զէն ընթացան ծերք և մանկունք , արք և կանայք . յարձակեցան 'ի առնս Լէհաց և կոտորեցին զնոսա , և դիմեցին 'ի վերայ պահանորդաց արքունեացն :

Յաղակէ անտի ահագին շփոթից հարթուցեալ արքային 'ի քնոյ՝ արձակեաց զզօրագլուխն 'ի գիտել թէ զինչ իրք իցեն : Սակայն մինչև դարձեալ նորա՝ եհաս անգր 'ի Քրեմլին Շուշաբի , եմուտ բռնութի 'ի գաւիթն արքունի հանդերձ իւրովքն խրոխտագոյն ընկերօք , և գոչէր առ Գեմետր իջանել տալ զհամար կենաց և վարուց իւրոց առ ժողովուրդն : Այն ինչ Պասմանով կամէր զգէմ ունել նոցա , թաթիչչեմ ընկերակից Շուշաբեայ եհար կործանեաց զնա , և ապա զպահապանսն :

Գեմետր 'ի ներքս անդ յարքունիան խուճապեալ շտապ տապնասպաւ իւրն գրէր ելս փախտի , և չգտեալ՝ հասեցաւ ընդ պատուհան օկնեկին իւրոյ 'ի

վայր, որով խորտակեցաւ մի 'ի բարձիցն, և գլուխն վերաւորեցաւ չարաչար. և մինչդեռ հոսէր արիւնն գունդագունդ ընդ սնդուանն և ընդ ականջսն, հասին անդր ոմանք յիւրոցն 'ի ձայն աղաղակին, և բարձեալ տարան զնա յօթեանս Սթրելցոց: Սորբա զառաջինն երգուան մինչև ցմահ մարտ դնել վասն նորա. այլ 'ի խուժել անդր դաւադրացն և 'ի սպառնալ հուր հարկանել 'ի առևս անդր, տեղի ետուն նոցա Սթրելցքն:

Յայնժամ յարձակեցան ժողովուրդքն 'ի վերայ Օթրեվիէվայ անհնարին թըշնամանօք: Աղաղակեաց նա բնիկ համարձակութքն. «Այդպէս ոսնհար լինիք ինձ, արք, գիտելով չափ թէ որդի եմ ես հարազատ Իւանայ, և ձեր թագաւոր օրինաւոր սրակեալ առաջի ամենայն Ռուսաց: Եթէ ինձ ոչ հաւատայք, աղէ Օն թող ասացէ ձեզ մայր իմ զճմարիան »: Ի խիզախ բանից անտի քաջալերեցան Սթրելցքն, և 'ի բաց վանեցին զխուժանն:

Արձակեցան ապա արք ոմանք, որոց գլուխ էր Շույքի, առ գշտոյն Իւանայ, և աղաչէր զնա Շույքի յանուն համօրէն ազգին ասել թէ արդարև որդի նորա իցէ թագաւորն, եթէ նենդաւոր ոք չարամիտ, որ բռնացեալ և սրլծեալ է զաթոռ մեծին Իւանայ: Եւ զայս սլատասխանի ետ, ասեն, գշտոյն.

«Չէ իմ որդի թագաւորդ այդ, և ես
 առ ահի ևեթ Գեմետր զնա վարկայ,
 զի դուք այնպէս ընկալարուք, և դու
 Հույսքի, դու առաջին էիր որ սպառնա-
 լիս մահու 'ի վերայ կապէիր որոց իբրև
 'ի դաւաճան ակնարկիցեն 'ի դա: Գուք
 ձեռն առեալ 'ի Արիչքա՝ վրէժխնդիր
 յառնէիք ընդդէմ Ատտունովայ. և ես
 համարելով զնա իմ որդի, սրահէի ըզ-
 կեանս իմ, և զվրէժ խնդրէի զճշմարտին
 Գեմետրի: Այսպէս ես և նա երկաքան-
 ջիւր 'ի նոյն ձգեցաք վախճան»:

Թէ զայս արդարև սրտասխանի
 տուեալ իցէ գշտոյն, կամ թէ այլինչ,
 սակայն Հույսքի իբրև սպտմեաց զայս
 ամբոխին, Սթրելեցքն մասնեցին զոր-
 քայն 'ի մոլեգնութի նոցա. և նոքա առ
 ետեղ սպտառեցին զէղկէլին, և զղիակին
 կապեցին ընդ գիոյն Պասմանովայ, ընդ-
 քարշ ածին զնոսա ընդ քաղաքն ամե-
 նայն, և առուրս երկուս 'ի բացի թո-
 ղեալ՝ ասպա այրեցին:

Մինչդեռ ամբոխն յայտոսիկ էր, դա-
 ւադիրքն յարձակեալ կոտորէին զամե-
 նայն զլէհս, և կողոպտէին զնոսա. այլ
 աւագանին զգէմ կալաւ նոցա զօրօք:
 Եւ եղեն սպանեալքն յառուր յայնմիկ
 Վէհացիք հազար և երկերիւր, և Ռուսք
 չորեքհարիւր:

ՎԱՍԻԼ Ե. ԻԻԱՆՈՎԻՉ
ՇՈՒՅՍԻ

ՇՈՒՅՍԻ տեսեալ զանձն իւր մերձ
'ի լուսն իւրոյ վառասիրութե, որում
'ի բազում ժամանակաց զհետ պնդեալ
էր, ժողովեաց զաւագանին, և ասէ ցնո-
սա. «Ահա զերծաք մէք 'ի բռնութէ.
զգոյշ լիցուք մի ևս անձամբ զանձինս
արկանել ընդ նովաւ: Ընտրեսցուք արդ-
զայր մի հասեալ յարս, յազնուական
տոհմէ, հմուտ օգտի պետութեն, ճոխ
գործովք արութէ և խոհականութէ,
պնդապահ օրինաց և սովորութեց նախ-
նեաց, և որ տայցէ Ռուսաց 'ի մոռա-
ցօնս արկանել զաղէտս՝ որք հասին 'ի
վերայ 'ի վերջնոցս թագաւորաց »:

Խորհուրդ առին, վիճակս արկանելին,
և մնայր ընտրութին ընդ նա և ընդ Առ-
լիցին. և իբրև ելին երկոքեան նոքա ար-
տաքս, իշխանն Առութինսքի յետ ա-
ռաջի առնելոյ զկարևոր պայմանս ըն-
տրութէ նորոյ թագաւորին՝ դրուա-
տեաց զՎոլիցին, այլ կարի հզօր է ասէ
տոհմ՝ նորա, որ խիթալի ինձ թուի. և
եցոյց զանձն իւր հաւան ընդ Շույքի:
Յարեաւ այլ ոմն կուսակից Վոլիցինայ,
և ասէ. «Ժողովս ելից զիւր պարտիս՝
ընտրեալ զԵրկոսին իշխանան զուգապէս

արժանաւորս . արդ 'ի դէպ թուի 'ի
 ժողովուրդ անդր ապաստան առնել զըն-
 արու թի միոյ 'ի նոցանէ : Եւ հաճոյ
 եղև խորհուրդն :

Այլ կուսակիցքն Շուշաբեայ վաղ
 որասցեալ զժողովուրդն , համբաւեալ
 ևս էին՝ թէ Շուշաբի ընտրեցաւ 'ի թա-
 գաւոր . և ընդ բանալ դրանց ժողովա-
 րանին , մի ոմն 'ի կուսակցացն Շուշա-
 բեայ խառնեալ ընդ ամբոխին դռչեաց ,
 կեցցէ արքայ Վասիլ Շուշաբի . և ամ-
 բոխն զնոյն բարբառ անդրէն կրկնեաց :
 Յայնժամ մտին աւագորեարն և հաստա-
 տեցին զՇուշաբի , և ասլա տարեալ զնա՝ ի
 մայր Եկեղեցին՝ երդ մնեցուցին ըստ սլայ-
 մանացն առաջարկելոց 'ի Վոռոթինս-
 բեայ , և թագ եդեալ նմա՝ ի ձեռն սրա-
 ըրհարդին , ածին յարքունիս , յամին 1606 :

Յառաջ քան զամենայն խնամ կա-
 լաւ Շուշաբի խաղաղութի առնել ընդ
 լէհս , և առաքեաց առ թագաւոր նո-
 ցա հրեշտակութի զիշխանն Վոլբոնաբի՝
 ազգ առնել զիրացն պատահելոց 'ի Մոս-
 քուա . այլ անպատասխանի արձակե-
 ցաւ յետս սլատգամաւորն :

Մի 'ի սլայմանաց թագաւորելոյն
 Շուշաբեայ էր անյիշաչար լինել առան-
 ձինն մարդկան ձեռնառու եղելոց 'ի Գե-
 մետր . այլ նա ոչ եկաց յերդմանն , և
 մերկացոյց զսլատրիարդն յիշխանուէն՝
 զոր տուեալ էր նմա սուտանուէն Գե-
 մետր , և կացոյց փոխանակ նորա զմե-

արապօղիան խաղանայ : Աքսորեաց և զկուսակիցս Կոչիցինայ . որք և բորբոքեցին զհօւր ապօտամբութի ՚ի զանազան գաւառս , մանաւանդ յԱւքրանիա , ուր համբաւէր՝ իբրու թէ Գեմեար զերծեալ իցէ , և փոխանակ նորա զայլ ոք զգերմանացի սպանեալ իցէ Ռուսաց . զնոյն արարին և ՚ի քաղաքսն ՚ի Փութիքուլա , ՚ի Տեազան , ՚ի Թուլա , և յԱժաէրիսան :

Ի գարման չարեացն հրամայեաց Շույսքի հանել ՚ի գերեզմանէ զմարմին ճշմարտին Գեմեարի , և տօն կատարել ՚ի սպառնորին իբրև սրբոյ վկայի . սակայն ոչ եթէ զԳեմեար խնդրէին ապօտամբն , այլ զայլ ոք թաղաւոր փոխանակ Շույսքեայ : Գունդ կազմեաց Պոլոթնիքովոմն ՚ի Սթրելցաց , ՚ի Խաղախաց և ՚ի գերեաց փախստականաց , որք յետանբաւ յափշտակութեց և սպանութեց՝ զոր դործեցին , խնդրէին կոտորել և զաւազանին ամենայն , մինչև ազատութարն Սմոլենսքայ զօրօք բազմօք յարուցեալ ՚ի վերայ ցրուեաց զխուժան ալքստամբացն :

Ի նմին ժամանակի և Տոնքի Խաղախք համբաւեցին՝ թէ առ նոսա իցէ որդին Ֆէոտորայ Իւանեան զերծեալ ՚ի կոտորածէն Կոտուհովայ . և աւեալ յանուհն նորա զպատանի մի՝ որում ա նուհն էր Իլիա Վասիլէվիչ՝ ծառայ փախստական ՚ի տեառնէ իւրմէ , մօտն ՚ի

Ռուսիա, և օր ըստ օրէ բազմացան: Եւ իշխանն թէլէաթեւոքի, որ հանդերձ այլովք միաբանեալ էր ընդ Խազախան, խորտակեաց զզօրան Էույսքեայ արձակեալս 'ի վերայ իւր, և էառ զՔալուկա. այլ 'ի պաշարել զօրացն Էույսքեայ զԹուլա և 'ի խցանել զաղբիւր ջրոյ քաղաքին արտաքուստ, քաղաքայիքն անձնատուր եղէն, և էառն 'ի ձեռս արքայի զսրատանին և զգլխաւորս ասպատաժութէն:

Յեա այնորիկ յամին 1608 յարեան 'ի Սթարոտուպ երկուք ոմանք արք յանդգունք, Նակի և Ռուքին. յորոց առաջինն ասէր՝ թէ Դեմեարն իցէ ինքն ասրեալ առանձին խնամովքն Աստուծոյ, և խաղացին սոքա 'ի քաղաքէն իւրեանց ամբոխիւն, և գամ քան զգամ բազմացեալ՝ առին զՊրիանց քաղաք, և ասլա զՔոչեւք 'ի ձեռաց Մասալսքեայ իշխանին:

Իսկ Էույսքի քանդի գիտէր եթէ Լէհք են չարեացապարտք աղետիցն, յարեալ ամենայն զօրութիւն իւրով 'ի վերայ դաւաճանացն, և հալածեաց զնոսա 'ի Նովկորոտ հիւսիսոյ. անգր եկին յօգնութի երկրորդի սուտանուն Դեմեարի լէհացի ոմն Ռուսիսքի անուն զօրօք իւրովք, և ոչ սակաւ գունդք 'ի Լիթուանաց, 'ի Տոնսքի Խազախաց և յայլոց սիկարեանց: Զօրաժողով եղև Քուռսքին զօրավար Էույսքեայ և խա-

զաց 'ի Պրիանց . զառաջինն յաղթեալ խռովարարացն՝ յերկրորդումն 'ի պարտութի մատնեցաւ . և ապստամբքն յառաջ խաղացեալ եկին մերձեցան 'ի Մոսքուա . մինչև երկնչեւ ոմանց յաւագ որերոյն և չերթալ ընդդէմ : Շույսքի 'ի մահ էտ զայնպիսիսն , և աճեցոյց զչարն : Ապա կարգեաց սպարապետ զօրաց զՄեքայէլ Շույսքի , և զԻւան Ռոմանով , որք յաղթեցին և յաղթեցան երկիցս և երկցս :

Խորհուրդ կալան ապա պատրիարզն և աւագանին՝ թողուլ յազատութիւն զԼեհասամենայն , և զկին առաջնոյն սուտանունն Դեմեարի զՄարիանէ , զի թերևս հաւանեացի արքայն Լեհաց յետս կոչեւ զզօրսն իւր : Եւ Շույսքի արար այնպէս :

Այլ մինչդեռ իշխանն Տոկտուբի ածէր տանէր զամբոխն 'ի սահմանս կոյս Լեհաց , Նակի առաքեաց 'ի վերայ նորա Խազախս երկու հազար , որք և յափրշտակեալ 'ի ձեռաց նոցա զկինն Օթրեվիեվայ և զհայր նորին , արձակեցին զպատգամաւորսն :

Ընդ անզանազան պատահումն Նակեայ և Մարիանեայ կնոջն Դեմեարի ընդ միմեանս՝ խռովեցան զօրքն , և փոքր միւս ևս և կորուսանէին զնա . այլ կուսակիցք Նակեայ յորդորեցին զՄարիանէ և զհայր նորա՝ գէթ առ երեսու կեղծել՝ որպէս թէ արդարև գիտեն զնա

Դեմետրն լինել: Եւ նոքա կուրացեալք 'ի սէր փառաց և սրատուոյ՝ յանձն առին զանօրէն խորհուրդն, և Մարիանէ ընթացեալ 'ի խորանն Նակեայ՝ փարեցաւ խնդալից զպարանոցաւն առաջի բովանդակ զօրուն: Յայնմհետէ առաւել ևս բազմացան զօրք Նակեայ, և Լէհք առաքեցին առ նա զայլ ոմն զօրավար քաջ՝ Սափեհա անուն, որ կոտորած մեծ հասոյց 'ի զօրս թագաւորին Ռուսաց, մինչև չմնալոյ ընդ ձեռամբ նորա այլ ևս քաղաքաց, բայց Նովկորոս, Սմոլենսք, Տեազան, Քոլոմնա և քաղաքքն Սիպիրայ:

Շուշսքի 'ի տագնապ ժամուն առաքեաց խնդրեաց զօրս 'ի Նովկորոտայ, և թիկունս օգնականութե յարքայէն Շվետաց: Նա առաքեաց նմա արս հինգ հազար, և այլս ևս խոստացաւ առաքել՝ եթէ Շուշսքի գրամովք նպաստ լինիցի նմա, և միաբանեցան երկուքին յառնել ընդդէմ արքային Լէհաց: Այն ինչ թշնամիք եկեալ պաշարէին զՄոսքուս, հասին անդր Կառտի սպարապետ Շվետաց և Մեքայէլ Շուշսքի, և հզօրացաւ կողմն թագաւորին:

Յայնժամ աթամանն Խազախաց Եւքովսքի խորհուրդ ետ զօրավարացն Նակեայ՝ թողուլ զպաշարումն Մոսքուայի, և քան վտանգաւ անձանց յընդ վայր ճգունս մխիլ վասն միոյ առն՝ որոյ անստոյգ յոյժ է օրինաւոր ժառանգն լի-

նել աթոռոյն Ռուսիոյ, տալ զնա 'ի ձեռս արքային Ղեհաց, որ յայնժամ պաշարէր զՍմոլենսք. և մեզ օգուտ անախ քան զնաս ծնցի, ասէր, զի Սիգիսմունդ զորդի իւր զՎլաախաւ կացուցէ 'ի թագաւոր Ռուսաց: Հաւանեցան զօրավարքն, և 'ի նա ապաստան արարին ունել զՆակի և տալ 'ի ձեռս Սիգիսմունդայ, և խնդրել զորդի նորին զՎլաախաւ: Այլ աւուրք յառաջ իմացաւ Նակի զգաւն, և փախեաւ. և 'ի շփոթել բանակին՝ ելին պաշարեալքն, և ցիր և ցան արարին զնոսա:

Մեքայէլ Շույքի՝ մականուանեալն Սքոփին՝ նա էր որ զայս ևս քաջութիւն արար 'ի վերայ այլոց բազմաց. և ժողովուրդն կարգային զնա հայր հայրենեաց, և ազատարար թագաւորին: Զկծեցաւ նախանձու թագաւորն, և պաշտօնեայք նորին եղին 'ի մախ կորուսանել զՍքոփին և շնորհս գտանել առ արքայի: Վասն որոյ յարմարեցին յօգեցին թուղթ մի յանուն Ղեափուհովայ քաղաքապետին Տեազանայ, ուր էր յայնժամ շըշունջ ապստամբութիւն, իբրու թէ յորդորէր Ղեափուհով զՍքոփին յափշտակել զաթոռն՝ որպէս մի միայն արժանաւոր, և թշնամանէր զՇույքի: Աւեալ Շույքեայ զթուղթն՝ պաշարեցաւ 'ի տազնաս պաննարին, և փութայր գաւել զՍքոփին: Իբրև զգաց զիրան Վաստի զօրավար Շվետաց մտերիմ Սքոփի-

նայ՝ յորդոր եղև Հուլյսեայ առաքել զՍքովին՝ ի զերծուցանել զՄոժայսք ՚ի սրաշարմանէ միոյ ՚ի զօրավարացն Լէհաց . և միանգամայն ազգ արար Սքովինայ զվտանդն յորում կայր նա : Այլ ՚ի նմին գիշերի մեռաւ Սքովին՝ անշուշտ դեղեալ ՚ի թշնամեաց . և լացին զնա Ռուսք առ հասարակ , և ասէին . « Եհաա արքայ ձախու ձեռամբն զաջրազուկն իւր » : Եւ Լեափոււնով գրեաց առ ամենայն կուսակալս և քաղաքապետս աշխարհին , կամիմ՝ ասէր՝ վրէժխնդիր լինել անօրէնութեն զոր անօրինեցաւ արքայ յեղբորորդին իւր ՚ի Սքովին :

Իսկ Հուլյսի առաքեաց յօգնութի Մոժայսքայ զեղբայր իւր զԳեմետր , և ընդ նմա զզօրավարն Կառտի . այլ Եւքովսքի յարձակեալ կոտորեաց զձախթէն Ռուսաց , և կէս զօրացն Հվետաց անցին ՚ի կողմն Լէհաց : Յայնժամ և Կառտի թիկնադարձոյց լեալ մնացելովքն հանդերձ մեկնեցաւ ՚ի Հվէտս :

Իբրև եկն Գեմետր ՚ի Մոսքուա և սրտամեաց զգէսսն , կամէր Հուլյսի առաքել զայլ զօրս , այլ նոքա ոչ անսացին և ոչ լուան . զի Լեափոււնով որացեալ էր զնոսա : Ձեռն ետուն և Լէհք վերստին Նակեայ , և ամին զնա մինչև հանդէս Մոսքուայի : Յայնժամ աւագանին ամենայն՝ խրատուք Լեափոււնովայ գեասրանս առաքեցին առ զօրավարն

Լէհաց Սափեհա, և հաւանեցուցին զնա ըքանել զկողմն Նակեայ, որպէս և ինքեանք մերժեն յաթուոյ զՇուշաբի, և ընտրել միաբան հաւանութի՞ զայլ ոմն նոր թագաւոր: Հաճեցաւ զօրավայն իւրովքն հանդերձ ընդ առաջարկութին: Եւ աւագանին ընդ Լեամու նովայ եկելոյ 'ի Մոսքուա՝ յարձակեցան յասարանս Շուշաբեայ, և ձերբակալ արարին զնա հանդերձ կնաւն: Ազդարարին այնուհետև 'ի բանակն Լէհաց՝ մերժել զՆակի և դալ 'ի Մոսքուա յընտրութի նորոյ թագաւորի: Ետուն սլատասխանի ապստամբքն խրոխտանօք և ասեն. « Չեմք մեք իբրև զձեզ ուխտադրութք առ 'ի մերժել մեզէն զիշխանն մեր »: Սակայն աւագանին անյեղ լի մնացեալ 'ի խորհուրդս իւրեանց՝ ածին զՇուշաբին 'ի վանսն Չուտով, և ստիպէին 'ի բաց դնել զծիրանին, և առնուլ զանձամբ զխարազն միանձնականս. և 'ի չկամել նորա՝ իշխանն թուփեաքին բռնի ագոյց զսքեմն նմա և կնոջ նորին, և երկուց եղբարցն:

Ի նմին սահու զօրավարն Լէհաց Զուքեւսքի խորտակեաց զՄոսքուա, և հառ խաբանօք զՄոսքուա. յափշտակեաց և զՇուշաբի իւրովքն հանդերձ, և ած տարաւ կացոյց առաջի Սիգիսմունդայ արքային:

Իբրև ետես թագաւորն զխրոխտ և զաներկիւղ կերպարանսն Շուշաբեայ,

որամտեցաւ և հրամայեաց նմա երկիր պապանել առաջի իւր: Ետ պատասխանի Վասիլ. « Թշուառութի իմ ոչ մուսացոյց ինձ եթէ թագաւոր եմ ես, և չարախիմ պապանել ումեք երկիր: Եւ ոչ զօրութիւն քո է որ դերեացն զիս, այլ նենգութի իմոցն հպատակաց. արդ ՚ի անսիլ իմոյ անկաժութեա՝ զարհուրեցիր դու որ չամբարձարդ երբէք յաստիճան բարձրութեանս իմոյ »: Սիգիսմունդ առաքեաց զնա ընտանեօքն ՚ի Վարչաւ, և յետ ոչ սակաւուց մեռաւ անդ Հույսքի և եղբարքն իւր: Իսկ Զոլքեւսքեայ կողոպտեալ զգանձն Մոսքուայի, և մատնեալ զքաղաքն յաւար իւրոցն, ելիք և զկողմն Նախեայ, որ և վախուցեալ առ խանն Թաթարաց՝ սպանաւ ՚ի նոցանէ:

Եւ աթամանն խաղախաց էառ իւր ՚ի կնութի զՄարիանէ, որոյ ծնեալ էր մանուկ մի ՚ի Նախեայ, և խաղախքն հաստատեցին ՚ի միջի իւրեանց թագաւորեցուցանել զմանուկն. այլ ձերբակալ եղեն ՚ի Ռուսաց. աթամանն ցցահար սպանաւ, և մանուկն խողխողեցաւ, և Մարիանէ արկաւ ՚ի բանտ խաւարին և մեռաւ անդէն:

Բնակիչքն Մոսքուայի յայնչափ անմտութիւն ժամանեցին, մինչև ոչ ինչ ունին մատուցեալ բանիցն Երմոգինեայ պատրիարդի, և Փիլարեաեայ մետրապօլտի, դեսպանս առաքեցին առ Սի-

գիամուսնիք և խնդրեցին իւրեանց 'ի թա-
 դաւոր զորդի նորա զՎլաախալաւ . այլ
 սրայմանաւ , զի մկրտեսցի նա կրկին ըստ
 արարողութե՛ իւրեանց եկեղեցւոյն , և
 երդուիցէ սրահել զօրէնս իւրեանց :
 Եւ կային դեսպանքն առաջի Սիգիս-
 մունդայ առ Սմոլէնսքաւ յամին 1610 .
 և էին մեարասօլիան Փիլարեա , Վասիլ
 Կոլիցին , ոմանք 'ի միջակային ազատաց ,
 և ոմանք 'ի սոսկականաց :

Զառաջինն պատուասիրեաց զնոսա
 թագաւորն . և 'ի վաղիւ անդր ասաց
 նոցա բանալ առաջի իւր զգրուանն Սմո-
 լէնսքայ՝ զոր իւր սրաշարեալն էր : Պա-
 տասխանի ետ արիաբար Փիլարեա , և
 ստէ . «Մեզ չեն կամք և ոչ իշխանու-
 թիւն՝ սալ քեզ զՍմոլէնսք : Որդի քո
 ժառանգեսցէ և զայս քաղաք և զայլս ,
 յորժամ բազմեսցի յաթոռն Ռու-
 սիոյ » : Բարկացաւ Սիգիսմունդ ընդ
 սրատասխանին , և չէառ յանձն առա-
 քել նոցա զորդին իւր :

Յայնժամ հաւատտեաւ գիտացին
 Ռուսք՝ զի Սիգիսմունդայ կամք էին ան-
 ձամբ արել Ռուսիոյ . ազգ արարին վաղ
 վաղակի Ղեափուհնովայ , և նա խաղաց
 դալ յօգնութիւն քաղաքին եօթանա-
 սուն հազար արամբք :

Երկեաւ Սիգիսմունդ՝ թէ չարիք ինչ
 անցցեն ընդ Ղեհան գտեալս 'ի Մոս-
 քուա , և կոչեալ զդեսպանսն՝ սախ-
 պեաց զնոսա գրել առ Ղեափուհնով ,

զի զզօրսն իւր յետս ընկրկեացէ, և հրամայեացէ պաշարելոցն 'ի Սմոլենսք բանալ զգրուենա քաղաքին. և 'ի չանաալ դեսպանացն՝ խաղացոյց զնոսա 'ի Լէհաստան, և եդ յայլ և այլ բանաս: Խտտագոյնս վարեցաւ ընդ մեարապօլտին՝ հացիւ և ջրով և եթ արգելելալ զնա յաներևոյթ աեղևոջ ուրեք. և նա ընդ ամս ինն անարտունջ տարաւ տառասանացն: Նոյնպիսի խտտութի վարեցան և Լէհք որ 'ի Մոսքուա՝ ընդ պատրիարքին. և իբրև ոչ կարացին խոնարհեցուցանել զնա 'ի կամս իւրեանց՝ հուր հարին 'ի քաղաքն, և բորբոքեցին հրդեհ մեծ յամին 1611: Կապտեցին և զիշխանութի պատրիարքին, և արգելին զնա 'ի մենաստանն Չուտով, ուր և մեռաւ իսկ 'ի սովոյ:

Մինչդեռ սյսպէս 'ի ծուփս ներքին և արտաքին աղէտից անգլուխ և անղէկավար ծիփէին Ռուսք առ հասարակ, և Լէհք և Շվետք ակն եգեալ մնային գէպ ժամու բաժանել յիւրեանս զՌուսիա, վառեցաւ ոգի հայրենասիրութե յայր ոմն մաագործ Կողմա Մինխա առնուն 'ի Նիժնի Նովկորոս, և վառեաց զքաղաքակիցս իւր 'ի փոյթ ազատութե հայրենեացն: Գործ էր գաանել զոք առաջնորդ մեծի գործոյն. և յետ բազում խորհրդոց և քննութեց 'ի վերայ երեցուն գլխաւոր կուսակալացն Ռուսաց՝ Ալեափուհովայ, Զարեւաբեայ և

Թրուպեցբեայ, ոչ հաճեալ ժողովա-
կանացն և ոչ ընդ մի 'ի նոցանէ՝ ընտրե-
ցին զիշխանն Փոժարսքի, որ վերաւո-
րեալ էր 'ի մարտին Լեհաց առ Մոս-
քուայիւ : Փոժարսքի գովեալ զնախանձ
նոցա՝ խոստացաւ իւրովսանն մեռանել
ընդ նոսա վասն հայրենի աշխարհին . և
պատգամաւորքն դարձեալք 'ի նմանէ
խնդութի՝ խրախուսեցին ածին զան-
ձամբք և զբնակիչս Տորոհոպուժ և Վեաղ-
մա քաղաքաց , և նոքա առաքեցին դը-
րամս և մարդիկ 'ի նպաստ Նիժնի Նով-
կորոտացուց : Մինիմբ աշխեաց զդրամսն
'ի զօրական անդր , և նոքա յառաջ խա-
ղացեալ 'ի քաղաքէն իւրեանց՝ օր ըստ
օրէ աճեցին 'ի բազմութի , և Փոժար-
սքի 'ի ձեռն նոցա վանեաց 'ի բաց զԼեհս
և զՇվէտս , և եբարձ 'ի միջոյ զարս ան-
օրէնս և ընդունայնասէրս և զրկողս ժո-
ղովրդեանն : Եւ զերծաւ Ռուսիա 'ի
հարուածոց արտաքին և ներքին թշնա-
մեաց :

Սակայն հարկ էր ընտրել դարձեալ
զայր ազնուատոհմ 'ի բնէ , քաջ խոր-
հրդական պետութեան , հմուտ իրաց
պատերազմի , և սիրող օգտի հայրե-
նեաց : Այսպիսի ոք էր Ֆէոտոր Նի-
քիթիչ Ռոմանով , ազգակից Թագաւո-
րացն Ռուսիոյ 'ի մօրէ . նա ինքն է Փի-
լարեա մետրապօլիտ Ռոսթովայ , զորմէ
կանխեցաք ասացաք : Այլ քանզի նա
կապեալ էր անլուծանելի յուխտ ե-

կեղեցական աստիճանի, Ռուսք 'ի մի
բերան կարդացին իւրեանց թագաւոր
զորդին Ֆէոտորայ զՄիքայէլ Ֆէոտո-
րովիչ Ռոմանով, որ ընդ մօրն իւրում
Արսենիայ կայր 'ի վանս ուրեք արդե-
լեալ : Եւ եղեն այս գէսք երևելիք 'ի
21 աւուր փետրուարի, յամին 1613 :

Յայնմ աւուր սկիզբն եղև նոր իմն
պետութիւն 'ի սարժանս և 'ի մսիթա-
րութի Ռուսիոյ, որ ցայնժամ 'ի ներ-
քոյ ձեռին Տիւրքեանց ունել ունէր
իշխանս և օրէնս, այլ երկաքանչիւր
թերի, միանգամայն և կարի իմն ազասս
և արձակս : Իսկ աստի և անդր ոտն աւ
ոտն ամենայնի չափ և սահման 'ի վեր
ելանէ . և երջանկութի ևեթ Ռուսիոյ
երևեսցի անցեալ ըստ չափ և ըստ սայ-
ման կարծեաց օտարաց :



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1613 = 1762



ՄԻՔԱՅԵԼ ՓԵՌՏՈՐՈՎԻՉ
ՌՈՄԱՆՈՎ

ՏՈՀՄԵՆ ՌՈՄԱՆՈՎԷԱՆՅ ԵՐԵՒԵՅԱԼ 'ի ՌՈՒՍԻԱ, որպէս կարծի, անգստին առ թագաւորութիւն առաջնոյն Իւանայ 'ի հօրէ Բրուսացոյ, և պայծառացաւ գործովք արութէ անընդհատ մինչև ցաւուրս Պորխայ, որ զՖէոտոր 'Նիքիթիչ Ռոմանով և զկինն նորա որդւոյն հանդերձ Միքայէլիւ ստիպեալ եղեալ էր 'ի վանս միանձանց:

Էր յայնժամ Միքայէլ ամաց վեշտասանից. և 'ի խնդրել զնա նուիրակացն 'ի մօրէն՝ շնորհս կալաւ Արսենիա, և յաւել առաջի առնել նոցա պարզ մտօք զդեռափթիթ հասակ որդւոյն իւրոյ, և զարգելական սնունդ նորին 'ի կրօնաւորական կեանս՝ անդէտ բնաւին քաղաքական տեսչութիւն, թող թէ թագաւորելոյ լայնածաւալ աշխարհին Ռուսաց. աղաչէր արտասուալից՝ զայլ ոք արժանաւոր ամբառնալ

յայն պաշտօն : Այլ նուիրակացն 'ի մէջ բերեալ զսէր ազգին առ առձմն Ռոմանովեանց՝ հարկ 'ի վերայ կայ աւելին զիջանել իրաւացի թախանձանացն . և զթերուծի հատակի և հմտութե թագաւորազինն՝ լցցէ անթերի ի մաստուծի հօրն նորա : Եւ անց Միքայէլ 'ի վանաց յաթոռ արքունի :

Բայց քանզի չև էր շիջեալ յողիս Լէհաց և Շվետաց իղձ ատրեւոյ աթոռոյն Ռուսաց , գեսպանք Միքայէլի առաքեալք առ նոսա 'ի խնդրել զհաշտութի 'ի բաց մերժեցան : Յայնժամ միջնորդ կալաւ Միքայէլ զթագաւորն Գաղղիոյ և զԱնդղիոյ և զԻանեաց , և ուր ուրեմն հաւանեցոյց զարքայն Շվետաց զՎուսդաւոս 'ի խաղաղութիւն , և հաստատեցաւ գաշն 'ի Սթոլպով քաքաք 'ի 26 աւուր յունուարի յամին 1616 . և ըստ պայմանի գաշանցն Միքայէլ խոստացաւ հատուցանել Շվետաց զծախս պատերազմին , չպահանջել այլ ևս ինչ 'ի մասնէ Լիվոնիոյ և Եսթոնիոյ , և թողուլ ընդ իշխանութի Շվետաց Ղինկրիա , զՔարելիա , և զամենայն երկիրն որ ընդ Ինկրիա և ընդ Նովկորոս : Անտի մինչև ցժամանակ պատերազմին Պետրոսի մեծի ընդ Վարուսի ժԲ , արքային Շվետաց՝ գեան Լավա սահման էր Շվետաց և Ռուսիոյ :

Զերժեալ Միքայէլի 'ի միոյ ոսոխէն , ջանայր և 'ի միւսմէն զերժանել . այլ

այն ոչ նոյնպէս դիւրաւ յաջողեաց. զի Լէհք տիրեալ Սմոլէնսքայ՝ վեր 'ի վայր առնէին զամենայն սահմանս նորին՝ օգնականութի Տոնսքի Խաղախաց : Այնեցին հալածեցին զՌուսս եկեալս 'ի սաշարու մն Սմոլէնսքայ, և վառախալաւ որ ակն եդեալ էր գահին Ռուսիոյ՝ Խաղաց եկն մինչև մերձ 'ի Մոսքուա, նուաճեալ զճանապարհայն զՏորոհոսպուժ, զՎեազմս, զՄոժայսք և զայլ քաղաքս : Այլ իբրև ետես վառախալաւ զահեղ սպառառութի սաշարեւոցն, գարձաւ 'ի վերայ այլոց քաղաքաց. սակայն և 'ի նոցանէ 'ի մուսմ նուագի 'ի սարտութի մասնեալ, եդ 'ի մտի թողուլ լքանել զխորհուրդն թագաւորելոյ 'ի վերայ Ռուսաց, և խնդրեաց զխաղաղութի :

Ի սպայմանս այնր դաշին հաստատեցաւ մնալ Սմոլէնսք և Տորոհոսպուժ քաղաքացն 'ի ձեռս Լէհաց, և Փիլարետեայ և ընկերաց նորա բանտարկելոց 'ի Լէհս յանիրաւի յինն ամաց հետէ՝ արձակիլ յաշխարհ իւրեանց :

Անպատմելի էր ցնծութիւն՝ որով փարեցաւ Միքայէլ զհարբն. և քանզի չկայր ոք 'ի ժամանակին սպարիարդ, Փիլարետեայ տուաւ իշխանութիւն, որով և գլուխ խորհրդականաց արքայի կարգեցաւ :

Ի նմին ժամանակի և սուլգան Մուրասս թագաւոր Օսմանեանց առաքեաց

առ Միքայէլ գեասարնս, և խնդակից
էլև նմա վասն յաջողութեցն, հաստա-
տելով ընդ նմա ուխտ բարեկամութիւն :
Եւ Միքայէլ պատուասիրեալ զնոսա
մեծապէս՝ առաքեաց և ինքն գեասարնս
'ի Կոստանդնուպօլիս 'ի հաստատութի
ուխտի գաշանցն, և խաղաղացաւ եր-
կիրն Ռուսաց զամս քանի մի :

Միքայէլ զինի առաջնոյ կնոջն՝ ընդ
որում ամուսնացաւ յամին 1625, որ և
մեռաւ յետ սակաւուց, առ 'ի կնութի
զառաքինին Եւդոքսիա զգուստր Սթրէ-
շէնեվայ առն ազնուականի, այլ աղ-
քառի : Կամեցեալ Միքայէլի կարգել
զաներ իւր զՍթրէշէնեվ ընդ աւագա-
նին՝ առաքեաց զսենեկապետ իւր հրա-
ւիրել զնա յարքունիսն : Իբրև եկն առ
նա սենեկապետն՝ ետես զի մշակէր զեր-
կիր ընդ ընտանիս իւր, ասէ ցնա. «Ար-
քայ և գշխոյն առաքեալ զիս՝ կոչեն
զքեզ 'ի Մոսքուա, արդ իմ զամենայն
պէտս ճանապարհին պատրաստեալ է,
առջիր զընտանիս քո և եկ ընդ իս » :
Սթրէշէնեվ ոչ գիտելով զանցս գըս-
տերն իւրոյ՝ որ 'ի մանկութի 'ի տան
Շերեմեթովայ կայր 'ի Մոսքուա, ետ
պատասխանի սենեկապետին և ասէ.
«Ես ոչ ճանաչեմ զքեզ : Տարազ զգես-
տուցդ և կերպարանք քո յայտ առնեն՝
զի այր գործոյ էս գու, և կամիս իմն
խաղ առնել զինև, որ աղքատ ոմն էմ
կարօտ ձեռինս վաստակոյ, թոյլ տուր

աղաչեմ, զի մի ընդ վայր անցցէ ժամա-
նակն իմ: Յայնժամ սենեկասպեան
եւ ՚ի նա զթուղթն Եւգոքսիայ. և նա
յուզի անկաւ գնալ ՚ի Մոսքուա:

Տեսեալ Ռուսաց՝ զի Եւգոքսիա յեր-
կուց ամոց միջոցի դատերս ևեթ ծնաւ,
արանջէին յոյժ. և փոքր մի ևս և ար-
գելուին գնա ՚ի վանս. այլ մայրն Մի-
քայէլի ընդդէմ եկաց նոցա. և յամին
1627 ՚ի մարտի 17 ծնաւ Եւգոքսիա
ուսար մի, որ մկրտեալ ՚ի հաւոյն իւրմէ
կոչեցաւ Ալէքս, նա է հայր մեծին Պե-
տրոսի:

Մինչդեռ ՚ի խոր խաղաղութե՛ն վայե-
լէր Ռուսիա, արքայն Շվետաց հրաւի-
րեաց զՄիքայէլ գալ ընդ իւր ընդդէմ
Լէհաց. այլ նա խոհական և խաղաղա-
սէր բանիւք հրաժարեցաւ ՚ի պատե-
րազմէն:

Առաքէր այնուհետև դեսպանս առ
ազգս հեռաստանեայս, և դուռն վաճա-
ռաշահութե՛ն բանայր ընդ նոսա ազգին
իւրում. ամրացուցանէր զքաղաքս իւր,
և կոչէր յայլոց քաղաքաց Եւրոպայ արս
հմուտս քաղաքականութե՛ն, կենցաղա-
կիրթ գիտութե՛ց, և անստերիւր կար-
գաց: Սահմանեաց այլ և այլ կարգս
հեծելոց, և սպայս կարգեաց նոցա
գերմանացիս, գաղղիացիս և շվետս.
յօրինեաց և հետևակս կանոնաւորեալս
ըստ օրինակի այլոց Եւրոպեանց:

Այլ կորուստ մեծ եղև Միքայէլի

մահ հօրն իւրոյ Փիլարետեայ պատրիար-
գի, առն գովելէւոյ ըստ ամենայն հան-
դամանաց :

Մեռաւ ընդ նոյն ժամանակս և Սի-
գիամունդ արքայ Լէհաց, և որդիք նո-
րա վիճէին զաթոռոյն : Ի գէպ ժամուն
արձակեալ Միքայէլի զօրս հարիւր հա-
զար՝ պաշարեաց զՍմոլէնսք, և համա-
րէր դիւրաւ առնուլ զնա. սակայն ան-
խմաստութի իւրոյ սպարապետին յետ
յերկարաձգելոյ ընդ ամս երկուս զպա-
շարումն քաղաքին՝ խափանեաց և զա-
ռոււմն նորա. զի ոչ միայն ոչ լուաւ
խրատուց հմուտ զօրավարացն օտարազ-
գեաց, որ էին ՚ի բանակին, այլ և ՚ի
բաց հալածեաց զնոսա : Եւ հասեալ ՚ի
վերայ Ալատիսլաւ թագաւորն Լէհաց
զօրու ծանու՝ պաշարեաց զպաշարիչսն,
և հարկեցոյց զնոսա անձնատուր լինել-
ապա առ ՚ի ձեռաց նոցա զամենայն
զէնս և զմեքենայս պատերազմի և ար-
ձակեաց, և ինքն մնաց տէր Սմոլէնսքոյ
և մերձակայ քաղաքացն :

Իսկ Միքայէլ որ ՚ի բնէ հեզն էր և նե-
րողամիտ՝ այն անգամ իրաւացի խստու-
թե՛ պատուհասեաց զզօրավարս իւր. զո-
մանս ՚ի նոցանէ՝ ընդ որս էր և սպարա-
պետն Շէյն՝ գլխատեաց, և զայլս սք-
սորեաց ՚ի Սիպիր :

Եւ յամին 1645 ՚ի յուլիսի 12 յան-
կարծամահ եղև Միքայէլ ՚ի կաթուա-
ծոյ, և ելաց զնա գառնապէս ամենայն

Ժողովուրդ իւր : Եղեն նմա յԵւդոք-
սիայ ուստերք երէք . Ալէքս , Վասիլ ,
և Իւան . և դատերք եօթն . Իրենէ , Պե-
ղադիա , Մարթա , Սոփիա , Եւդոքսիա
և Դատիանէ :

ԱԼԵՔՍ ՄԻՆԱՅԵԼՈՎԻՉ

ՎԵՇՏԱՍԱՆ ամաց էր Ալէքս 'ի մե-
ռանել հօրն , և դաստիարակ նորա Պո-
րիա Իւանովիչ Մոռոզով ունէր զինամա
պետուէն , ըստ յանձնելոյն Միքայէլի .
այլ Մոռոզով այր էր փառամուլ և ար-
ժաթասէր , որով մթացուցանէր զփառս
բաղմապատիկ լաւութեց իւրոց : Հե-
ռացոյց յարքայէ զամենայն հաւատա-
րիմ պաշտօնեայս նորա , և զհամամիտս
իւր կարգեաց 'ի հասս նոցին . և զԱ-
լէքս զբօսեցոյց յորսս և 'ի դատարկու-
թիւն , զի ինքն ըստ կամի տնօրինեացէ
զամենայն :

Զհետ երկուց ամաց կամեցեալ կին
ածել արքայի՝ ընտրեաց զգուսար ու-
րումն 'ի միջակային աղատաց , որ կոչէր
Եղիա Միլոսլաւսի . բայց Ալէքսի ոչ
հաւանեալ նմա այս անգամ , հրա-
մայեաց ըստ օրինակի նախնեաց իւրոց
Ժողովէլ աղջկունս կոյսս՝ զի ընտրեացէ
զոր անձին հաճոյ թուեացի . և ընտրեաց
զումն : Մոռոզով ոչ հաճեալ ընդ ըն-

արուծին՝ որսացաւ զկանայսն զգեցուցիչս գշխոյին, զի փնասեսցեն աղջկանն. և նորա 'ի յօրինել անդ զցցունս վարսից նորա՝ այնպէս իմն բուռն ձգեցին զհերացն, զի առ ցաւոցն թալացեալ անկաւ աղջկն. և կանայքն դաւակիցք Մոռոզովայ զաղաղակ բարձին՝ եթէ լուսնոտ է սա : Ամբաստանեցաւ հայր աղջկանն որպէս թշնամի արքայի, և աքսորեցաւ հրամանաւն Մոռոզովայ 'ի Սիպիր : Եւ թագաւորն 'ի սլատիրս ըմբռնեալ ամուսնացաւ ընդ Մարիամն դստերն Միլոսլաւսիցայ. և Մոռոզով յեառութ աւուր առ 'ի կնուծի ըզքոյրն Մարիամն :

Այլ ըստ չափու փառամոլութեն և ագահ ևս էր Մոռոզով, և զսրատիւս և զիշխանութիւնս ընդ արծաթոյ վաճառէր : Աստի ծանրութիւնք հարկատահանջութեց և յսփշտակութիւք յաճախեալ՝ գրգռեցին զժողովուրդն բողոքունել զբռնուէ աւագանւոյն. և քան զի Մոռոզով արգելեալ փակեալ էր զամենայն մուտս ժողովրդեանն առ արքայ, դէպ ժամու սպասեալ մնային նորա :

Ապա յամին 1648 'ի յուլիսի 7, 'ի գնալ Ալէքսի 'ի վանս սրբոյ երրորդութեանն, կուտեցաւ ժողովուրդն հանդէպ Քրեմլինայ, և ցրուեալ զնոսա՝ որք սար առեալ գնային զարքայիւ, կացուցին զնա, և աղաչէին անսալ բո-

զոքոյն զոր հարկանէին ընդդէմ իշխանաց նորա : Յապուշ հարաւ Ալէքս ընդ ժտութիւն ամբոխին . այլ առ ժամն անյեղ լի գիմօք ունկն մատուցեալ ամբաստանութեանցն՝ խոստացաւ քննել զիրան , և իրաւունս առնել նոցա :

Մինչգեռ ժողովուրդն դոհացեալք զարքայէ մեկնէին անտի , ոմանք յաւագանւոյն կշտամբեցին զմի ոմն 'ի նոցանէ : Յայնժամ 'ի զայրոյթ սրտմտութիւն բորբոքեալ ամբոխին՝ քարաձիգ լինելով վանեցին զնոսա մինչև յապարանսն . և ևս գիզացեալ 'ի բազմութիւն սպառնային հուր հարկանել 'ի սալաան՝ թէ ոչ տացին 'ի ձեռս իշխանքն Մուռզով , Փլեչչեվ , Թրաքանեօթով և Չիսթով :

Յայսմ իրաւունս ետ թագաւորն ամբոխին , և համարէր ցածուցանել զսրտմտութիւն նոցա՝ մատնեալ 'ի ձեռս նոցին զՓլեչչեվ . այլ նոքա ոչ շատացեալ արեամբ նորա՝ գիմեցին 'ի տուն Չիսթովայ , և մատնութիւն ընտանեաց նորին գտեալ զնա թագուցեալ ուրեք 'ի տանն՝ քարշեցին 'ի գաւիթ անդր և թոպամահ արարին , և զտուն նորա հիմնայատակ կորուսին : Անտի յարձակեցան յապարանս Մուռզովայ . և յաւարի առին զամենայն , և զպատկերս անգամ սրբոց . զնոյն անցուցին և ընդամենայն կուսակիցս Մուռզովայ , և հրդեհ մեծ բորբոքեցին 'ի քաղաքին . և այնչափ էր կապուտ կողոպուտ յա-

փրշտակելոց տանցն , զի անարգ գնով 'ի վաճառ ելանէին մարգարիօք և ականք սլատուականք , սամուրենիք , և զխպակք ոսկեթելք :

Երկուցեալ Ալէքսի՝ գուցէ դարձցին խռովարարքն յարքունիս իւր , ժողովեաց առ իւր գունդս զօրաց բազմաց , և տպա առաքեաց առ ամբօինն զմի յաւագաց անտի որք հաճոյ էին նոցա , զի զգօնացուցէ զնոսա : Ետուն նմա սատասանի ժողովուրդքն , և ասէն . « Չիք մեր արտունջ զթագաւորէն , և քաջ գիտեմք զմեր առ նա զպարտիս . այլ բողոքեմք զպատուհաս այնոցիկ՝ որք յանուն նորա խուեն և տառասելցուցանեն զմեզ . թող տացին 'ի ձեռս մեր Մուռզով և Թրաքանեօթով , և ահա խաղաղութի » : Ասէ ցնոսա իշխանն . « Առժամայս չէ հնար տալ զնոսա 'ի ձեռս , զի փախուցեալ են . այլ անշուշտ հաճեսցէ զձեզ արքայ ըստ կարի » :

Ալէքս խնայեալ 'ի կեանս առաջնոյն , ետ ունել զերկրորդն 'ի փախուցելոց անտի , և գլխատել հրապարակաւ : Նուազեաց այնուհետև զհարկս , և ետ բաշխել ժողովրդեանն աւուրս ինչ մեղրաջուր և օղի : Վարդեաց 'ի տեղի սպանելոցն արս արժանաւորս , և ապա 'ի հանդիսի ուրէք հրապարակախօս եղև առ ժողովուրդն , և ասէ . « Մեծաւ սորջանօք լուեալ զանիրաւութիս խնայ պաշտօնէից , ահա պատուհասեցի զնո-

սա ըստ արժանեացն, և կարգեցի փո-
 խանակ նոցա արս աներկբայելիս 'ի լա-
 ւուԹիս իւրեանց. յայսմհետէ հսկե-
 ցից աչալըջուբ 'ի վերայ նոցա, և հարկբ
 այնչափ ևեթ տուցին 'ի ձէնջ՝ առանց
 որոց անհնար իցէ յոտին կալ պետու-
 Թէս ։ Հնչեաց քաղաքն ամենայն 'ի
 ձայնէ ցնծուԹէ ամբոխին, և առհասա-
 րակ անկեալ 'ի վերայ երեսաց իւրեանց
 երկիր պսպին Թագաւորին. և զայն պա-
 տեհ առեալ Ալէքսի յապրեցուցանել
 զգաստիարակն իւր՝ սսէ ցնոսա քաղցր
 բարբառով և կարեկիր դիմօք. « Ժողո-
 վուրդ իմ, խոստացայ ես, այո՛, տալ 'ի
 ձեռս ձեր զՄուռզով. այլ չիշխեմ
 մատնել 'ի տանջանս զայր մի՛ որ հայր-
 օրէն խնամովք ակն կալաւ 'ի վերայ իմ
 'ի մանկուԹէ իմմէ : Չունիմ անբասիր
 զնա առնել. գիտեմ զի յանցեաւ. այլ
 յուշ լիցի ձեզ, աղաչեմ, զի գաստիա-
 րակ իմ է նա, բարեկամ իմ, և ազգա-
 կից և սրաշտօնեայ. երգնում 'ի Թագ-
 իմ, զի յայսմհետէ ուղղեսցին դնացք
 նորա : Եթէ ձեզ չիցեն կամք այլ ևս
 ունել նմա տեղի 'ի խորհրդեան իմում,
 ոչ ևս կոչեցից զնա. այլ զոր ինչ նմայն
 առնիցէք՝ այն հաւաստիք լինիցին ձե-
 րումդ առ իս մտերմուԹեան ։ Ոչ ևս
 հանդուրժեալ ամբոխին 'ի լսել զսիրա-
 լիր աղերս Թագաւորին, ձայն բար-
 ձեալ 'ի մի բերան աղաղակեցին. « Ե-
 ղիցին կամք Տէտուն և Թագաւորին ։

Եւ Ալէքս առ խնդին յարտասուս հա-
րաւ :

Յետ սակաւ աւուրց գնաց արքայն 'ի վանս սրբոյ երրորդութեան՝ գոհանալ զԱստուծոյ վասն հանգարտելոյ ծփանաց խռովուէն . և Մոռոզով խնդրեաց գնալ ընդ նմա , զի տեսցէ թէ յինչ միտս էր զինքենէ ժողովուրդն : Անց շորջեցաւ նա ընդ Մոսքուա՝ կալեալ զգրկ խսարկն 'ի ձեռին , և ողջունէր երկուստեք զամբոխն , խօսէր ընդ ոմանս քաղցրութիւն , և զուարթ ակնարկէր 'ի դէմս սյլոց . և խնդացին ամենեքեան . և յորժամ ձեռն էարկ յառաջին պաշտամունս իւր՝ նախկին արժանաւոր ատելութիւն ամբոխին առ նա 'ի սէր փոխեցաւ . և մի 'ի պիտանի գործոց նորա եղև նոր մատանն օրինաց , որ և հաստատեալ յԱլէքսէ՝ մեծապէս նպաստ եղև 'ի բարեկարգութիւն աշխարհին :

Ընդ այն ժամանակս թագաւորեալ Շվետաց Քրիստինէ դուստր Կուսգաւոսի՝ գանգատ կալաւ առ Ալէքս վասն իւրոցն , որք թողեալ զհայրենի աշխարհն՝ անցանէին 'ի Ռուսիա 'ի խնդիր բախտի , և օգտելով Ռուսաց՝ զնասէին աշխարհին իւրոյ : Եւ Ալէքս գաշն ուխտի հաստատեաց ընդ նմա , զի երկուստեք ևս մի պահանջեցին անցեալքն յայս կամ յայն աշխարհն . և յայնմհետէ թէ ոք անցանիցէ ընդ սահմանս աշխարհին իւրոյ առանց մուրհակի , ան-

դրէն յետս արձակեցի : Եւ քանզի բազմագոյն յոյժ էին Շվեաքն անցեալք ցայնժամ 'ի Ռուսիա քան զՌուսս անցեալս յաշխարհն Շվեաաց , խոստացաւ Ալեքս հատուցանել Շվեաաց հարիւր և յիսուն հազար բուսպլիս , կէս մի դրամովք , և կէս մի ցորենով՝ ցամա 1650 :

Չգրաման հատոյց անթերի , և զցորենոյն հատուցումն յանձն արար վաճառականի ումեմն Փսքովացոյ : Իսկ նա 'ի շահ անձին միայնոյ ուշ կալեալ՝ զամենայն ցորեանս առ իւր ամբարեաց մենավաճառ լինելով : Չնոյն անիրաւուի արար և Վոլք անուն ոմն 'ի Նովկորոտ . և եղև 'ի մէջ առատութե ժամանակին սով հացի , մինչև բողբ ունել ամբոխին 'ի Մոսքուա : Ալեքս պատուիրեաց բառնալ 'ի միջոյ զանօրէնութին զայն . այլ իբրև դանդաղէդ մենավաճառն Փսքովայ , յարձակեցաւ ամբոխն յամբարանոցս նորին , և տրամիեաց զցորեանն . և զնա ոչ գտեալ 'ի տանն՝ պատուհասեցին յանպարտս ըզկին նորա և զորդիս : Հազիւ ուրեմն էհաս իշխանն Քավանսքի առաքեալ յԱլեքսէ , և ցածոյց զաղմուկն Փսքովայ :

Իսկ անագորոյնն Վոլք կաշառաբեկ արար զՍթրէլեցան և զԽազախս , և նոքա պատճառանօք խաղաղելոյ զխուովութի ամբոխին՝ խուեցին մերկացուցին աւազակաբար զՆովկորոտացիս առ հասարակ , և զբաղումն ևս յանխնայ կո-

Իմացան Լէհք զմիտս Ալէքսի, այլ գիտելով չափ զտկարութի իւրեանց՝ փութացան եղին իւրեանց թագաւոր զՅովհաննէս Քաղիմիր ծիրանաւոր յիտասեան՝ առեալ վասն նորա տնօրինումն ՚ի պասէն: Իսկ Խաղաիք յետ բազումս աշխատ առնելոյ զԼէհսն՝ յամին 1654 անցին մաին ընդ պաշտպանութի Ռուսաց:

Նոքիսէք և ևս զօրացեալ Ալէքսի՝ պատճառս խնդրէր յարձակել ՚ի Լէհաստան. և հրեշտակութի արարեալ առ Քաղիմիր՝ մեղադիր եղև նմա, զի ՚ի թղթին որով զեկուցանէր Ալէքսի զթագաւորէն իւր՝ ոչ ըստ արժանի պատուոյն պատուեալ էր զնա Քաղիմիրայ. և զի ՚ի համալսարանին Վիլնա քաղաքի տպագրեալ էին մատեանք ինչ, յորս կարի իմն գրուատեօք հռչակէին յաղթութիքն Վլատիսլաւայ արքայի իբր ՚ի նախատինս թագաւորին Ռուսաց և զօրավարաց նորա. և վասն այսր ամենայնի պահանջէր ՚ի Քաղիմիրայ զՍմոլէնսք հանդերձ նահանգաւն: Քաղիմիր իմաստուն բանիւք հերքեաց զբաղբաղայն. և իբրև ետես զի տակաւին պնդէր դեսպանն Ալէքսի, արձակեաց զնա Քաղիմիր ՚ի Մոսքուա. և Ալէքս ետ պատասխանի, զի թէ ոչ ներեսցեն Լէհք Խաղաիսաց, հարիւր հազար զօրօք խաղացից ՚ի Լէհաստան, և զինու զօրութի յայտ արարից զիրաւունս

իմ: Խորհուրդ արարին Լէհք, և ոչ կամեցեալ ներել խազախաց՝ պատրաստեցան ՚ի պատերազմ:

Յայնժամ Ալէքս էառ ընդ իւր զխազախսն, և պաշարեալ զՍմոլէնոսք՝ կալաւ զայն, և զՎիթեպոսք, և զՄոհիլէվ, և զՓոլոզք. և յամին երկրորդի յարձակեալ ՚ի Լիթուանիա տիրեաց գլխաւոր քաղաքի գաւառին:

Տեսեալ Քաղիմիրայ՝ զի ոչ կարէ զգէմ ունել Ալէքսի, ուր և ՚ի Շվետաց նեղէր պատերազմաւ, միջնորդ կալաւ զկայսրն Գերմանացւոց զՓերտինանտոս Գ, զի ուխտ խաղաղութե՛հ հաստատեցի ընդ իւր և ընդ Ալէքս: Եւ Ալէքս զիջաւ ՚ի հաշտութիւն, և յիւր ձեռս մնացին Սմոլէնոսք, Քիեվ և Սեւերիա, և ամենայն քաղաքք և գաւառք՝ զորս Վլատիսլաւ առեալ էր ՚ի Ռուսաց:

Խրախոյս առեալ յաջողութե՛ք բախտին՝ խաղաց Ալէքս և ընդգէմ Շվետաց, և էառ քաղաքս բազումս. այլ ոչ կարաց առնուլ և զՏիկա, և մեկնեցաւ յերկիր իւր:

Ի պատերազմաց անտի նորա սպառեցան գանձք արքունի, և աղքատացան հպատակքն իւր: Խորհուրդ ետուն նմա իշխանքն փոխել զարծաթի դրաման, որովք ցայնժամ վարէին, ՚ի սղնձիս, և հաճոյ թուեցաւ Ալէքսի. զի այնուհետև վաթսներորդ մասամբ ևեթ առաջնոյ ծախուցն պահէր զմի զօրական:

Սակայն հարկաւ բարձրացան գինիք ար-
ծաթոյ և ոսկւոյ յոյժ յոյժ, և եղև
խափան տուրևառից և սով: Միաբա-
նեալ ապա ժողովուրդն 'ի զէն ընթա-
ցան առ հասարակ. տասն հազարք 'ի նո-
ցանէ գիմեցին առ թագաւորն, և տասն
հազարք մնացին 'ի քաղաքին 'ի յափշա-
կել զոունս իշխանաց և զմեծատանց:
Առաջինքն բողոք կալան առ Ալէքս՝ զի
պատուհասեսցին աներն արքայի և Մոռ ո-
զով՝ զորս համարէին պատճառս աղե-
տիցն իւրեանց: Ալէքս իմացեալ յերի-
կէ զպատրաստութի ասպտամբուլթեն՝
ժողովեալ էր առ իւր գունդ բազում,
զի թէ չկարասցէ քաղցրութի շահել
զամբոխն, ահիւ սանձեսցէ:

Արդ նախ բազում ինչ քաղցրութի
խօսեցեալ ընդ նոսա՝ խոստանալով
քննել զկարծեցեալ յանցանս իշխա-
նացն ամբաստանելոց և հաճել զժողո-
վուրդն, իբրև ետես զի նոքա ոչ դադա-
րէին 'ի թշնամանելոյ զաներ նորին և
զթագուհին ինքնին, ձայն եա Սթրե-
ցացն և ասէ. «Հայա 'ի բայ վանեսջիք
յինէն զըունսդ կատաղեալս»: Եւ եղև
'ի տեղւոջն երկուստեք կոտորած մեծ,
մինչև լքաւ խաժամուժն զդէմ ունել
զօրականին, և ինդրեաց վներումն:
Ալէքս ներեաց նոցա վաղվաղակի և ար-
գել զկոտորածն:

Իսկ որք 'ի քաղաքին էին՝ դեռ ևս ա-
ւար հարկանէին 'ի տունս ազատորե-

րոյն . այլ հասեալ 'ի վերայ զօրակա-
նաց՝ նկուն արարին և զնոսա . ոմանք 'ի
գլխաւոր խռովարարաց անտի կախե-
ցան , և այլք սքսորեցան 'ի Սիսիւր , և
դագարեաց խռովութիւն : Յետ սակա-
ւուց և Մոռոզով անկեալ 'ի խօթու-
թի մեռաւ , և եղև սուգ մեծ Ալէքսի :

Դէսլք կրկին հետաքնինք պատմին
լեալ ընդ այն ժամանակս 'ի Մուքուա ,
որովք է իմանալ զայն ժամու Ռուսացն
զպարզութի բարուց :

Ս . խօթացեալ երբեմն Ալէքսի՝ վարձ
մեծ խոստացաւ բժշկաց իւրոց , թէ դք
ասպարինեսցէ զնա . և ամենեքեան յա-
ռաջ մատուցին զիւրեանց դեղս , այլ 'ի
զուր : Զնոյն հրաման եհան ապա Ա-
լէքս յընդհանուրս՝ մեծամեծ վարձուց
խոստմամբք . և կին միոյ ուրուք յաւա-
գաց անտի որ տաղակացեալ էր 'ի դառն
և դժնեայ բարոյից առն իւրոյ՝ գնաց
առ Եղիա աներն Ալէքսի , և ասէ ցնտ՝
թէ կայ առ առն իւրում դեղ օգտա-
կար արքայի , և նա չկամի յայտնել :
Կոչեցաւ վաղվաղակի իշխանն . և 'ի զար-
մանալ նորա ընդ հարցուած գաղտնի
դեղոյ՝ զոր խնդրէին 'ի նմանէ , համա-
րէին թէ կեղծիցէ ինչ . և 'ի ժխտել նո-
րա ևս պնդութի , գան հարին զնա և
արկին 'ի բանտ . ուր իմացեալ նորա զա-
րուութիւն կնոջ իւրոյ , կատաղեալ 'ի
սրամոռութի բարկութի նզովս արձա-
կէր զհետ նորա , և սպառնայր հատու-

ցանել նմա զմատնուէն յորժամ զերծ-
ցի 'ի բանակէն : Իբրև պատմեցան բանքն
առ արքայի , վերստին հրամայեցաւ ձաղ-
կել զայրն իբրև զթշնամի արքայի : Երդ-
նոյր և նզովէր այրն զանձն իւր թէ էս
բնաւ և գիտեմ իսկ ոչ զարուեստ բժըշ-
կու թէ և ոչ զդէղարարու թէ . և իբրև
էտես զի մեռանել ունէր ընդ դաւազա-
նաւ , և անյոյս էղև յարդարանալոյ այլ
ևս , յանձին կալաւ և առէ . « Գիտէի
արդարև զդէղ մի . այլ ոչ հաւաստեալ
հմուտ գողով զօրու թէ նորին , ոչ ժտէի
'ի վեր հանել . արդ տուք ինձ աւուրս
հնգետասան և կաղմեցից զդէղն » : Եւ
ընկալեալ զինգիրն , առաքեաց ժողո-
վեաց յափանցն Օքա գետոյ խոտս ա-
նուշահոտս բազումս , և պատրաստեաց
'ի բաղանիս արքային 'ի լոգանալ գողոր-
շէօք խոտոցն : Ըստ գիպաց իմն բժշկու-
թի էղև Ալէքսի 'ի դէղոյն . և ամենե-
քեան հաստատեցան 'ի միտս իւրեանց՝
թէ արդարև գիտէր այրն զդէղն , և յա-
մառէր պնդէր առ չարութե սրտին .
Յայնժամ հրամայեաց թագաւորն ձաղ-
կել զնա չարագոյն քան զառաջինն և
զերկրորդն , և ապա տուեալ նմա 'ի
պարգևի մասին դրամս բազումս , և գե-
րիս տասն , արձակեաց գնալ 'ի տուն
իւր . այլ և պատուիրեաց սպառնալէօք՝
մի և մի իւրիք դառնանալ այնուհետև
առ կինն իւր :

Բ . Գանձապետ դքսին Աթուանիոյ՝

որ ընդ այլա 'ի բանտարկելոց կայր յար-
քունիսն Ալէքսի' խօթացաւ երբեմն, և
խնդրեաց զբժիշկ, և Ալէքս սուաքեաց
առ նա բժիշկ զոմն խաւայի. որ և հար-
ցաքննեալ զհիւանդն՝ պատուէր ետ առ-
նուլ 'ի մաղձադեղ զԳրէճօր քի ԲարՌարօ,
այն է զտեալ մրուր գինւոյ: Անդ մերձ
գողով մի ոմն 'ի ռուս սպայից՝ ուշի ու-
շով ունկն դնէր խօսից երկոցունցն. սա
'ի լսել անդ զանուն գեղոյն՝ համարե-
ցաւ եթէ զխրիմու Թաթարացն իցեն
բանք կալանաւորին և բժշկին. և ան-
յապաղ գնացեալ առ աներն Ալէքսի
պատմեաց զիրան: Իսկ նորա գիտելով
զի յայնժամ դաշնակից էին Ղէհք ընդ
Թաթարս Խրիմու, և զի ախտացեալն
ինքնին լեհացի էր, աներկբայ եդ 'ի
մօտ թէ դաւ ինչ նիւթէր նա ընդ բժշ-
կին ընդդէմ պետութե՛ Բուսաց. կո-
չեաց Եղիա զբժիշկն, և սկսաւ յանդի-
մանել զնա որպէս դաւաճան զոք և
մատնիչ. և մինչ նա զամօթի հարեալ
կայր 'ի լուութե՛ ոչ գիտելով ինչ զանձ-
նէ խիղճ այնպիսի, սա ևս քան զևս
բորբոքեալ 'ի զայրոյթ բարկութե՛, ա-
պա ասէ ցնա. « Այլ ասա՛ ո՛վ դու,
զի՞նչ այն ինչ էր զոր խօսեցար զխրի-
մու Թաթարացն զթնամեաց Բուսիոյ»:
Յայնժամ անկաւ 'ի սիրտ բժշկին ա-
նուն գեղոյն զոր պատուիրեալ էր ախ-
տացելոյն. և յայտ արարեալ զթանձր
պատրանս սպային՝ հազիւ ուրեմն զեր-

Ծառ 'ի մեծէ պատուհասէ . յիայն զի արդեւաւ նմա ոչ ևս խնամ՝ ունել հիւանդի ումէք օտարազգւոյ :

Իսկ պատերազմն Ռուսաց ընդ Ղէհս և ընդ Թաթարս նիզակակիցս Ղէհաց վերստին բորբոքեցաւ . էր զի սոքա յաղթէին , և էր զի նոքա . մինչև կայսրն Գերմանացւոց Ղէոփոլտ միջնորդ եղև ընդ նոսա՝ առաքելով 'ի Մոսքուա պատգամաւոր զոք . և Ալէքս ուր ուրեմն զիջաւ 'ի հաշտութի խաղաղութի :

Ընդ այն աւուրս յամին 1667 ժողով կարգեաց Ալէքս 'ի գատել զպատրիարգն Նիկոն : Սա 'ի մանկուէ սնեալ 'ի խիստ վարս միանձնութի՝ խոտագոյն գտաւ և 'ի բարս իւր , և առ գժգմնութի իրիք ընդ ընկերս իւր արտաքսեալ 'ի վանաց անտի՝ եմուտ յայլ վանս , և անդ խըստակրօն վարուքն օրինակ բարի լեալ ամենեցուն ընտրեցաւ առաջնորդ վանիցն . և յերթալ իւրում երբեմն վասն գործոց կրօնին իւրոյ առ Թագաւորն 'ի Մոսքուա , այնպէս իմն հաճոյ եղև Թագաւորին իւրով պերճ խօսիւքն և ճարտարաբանութի , զի յամին 1649 կարգեաց նա զՆիկոն մետրապօլիտ Նովկորոտայ , և յամին 1652 պատրիարգ : Որչափ խիստ էր Նիկոն առ անձն իւր , նոյնչափ գորովագութ լեալ առ սյլս , մանաւանդ առ կարօտեալս , բազում նախանձորգս և ատելիս ստացաւ , որոց

գլուխք էին թագուհին և հայր նորա .
և ամբաստանիւր՝ որպէս թէ զհետ
պնդեալ նորոգուէ կարգաց եկեղեցւոյն՝
աղմուկ և խռովութիս յարուցանիցէ :

Զի նա հաւանութի արքային ՚ի սպառ
զատոյց զիշխանուի պատրիարգին Ռու
սաց ՚ի յունականէն , ծանուցեալ զայն
գրով և առ պատրիարգն Յունաց : Բազ
մացոյց զարքեպիսկոպոսս , զեպիսկոպո
սունս , զվարդապետս և զայլ պաշտօնեայս
եկեղեցւոյն , և կառոյց չորս մենաստանս
մեծամեծս : Կարգեաց դպրոցս յու
սումն յոյն և լատին լեզուաց , յորոց
զընտիր մատեանս ետ թարգմանել ՚ի
ուրուս բարբառ . եմոյծ յեկեղեցիս Ռու
սաց զեղանակաւոր երգս ըստ այժմու
օրինին , և եբարձ ՚ի միջոյ զբազում
նանրահաւատ կրօնս արմատացեալս
յաղգին : Յայտ է յայսմ ամենայնէ
խուռն ծանրութի ամբաստանութեցն
զՆիկոնէ . զի յայնժամ ծնաւ և ա
ղանդն հերձեւոց , որ կոչին Ռասքօշ
նիք , պնդապահ ,ք նախնի սովորութեց
եկեղեցւոյն իւրեանց , և բազմապատիկ
թանձրամիտ կարգաց :

Նիկոն հրաժարեցաւ կամովին ՚ի պա
տրիարգութենէ , և մեկնեցաւ ՚ի վանս
Յարութե . այլ քանզի դեռ ևս պա
տրիարգ անուանէր նա , և սիրելի էր
Ալեքսի , ամբաստանեցաւ և անդ որպէս
բանագնաց ընդ Լեհս , յորոց առեալ
իցէ գրամս յուրվս :

Յայնժամ կարգեաց Ալէքս ժողով
 ընդհանուր՝ բերեալ իւրովք ծախիւքն
 'ի Յունաստանէ երիս պատրիարդունս,
 քսան և եօթն արքեպիսկոպոսունս, և
 հարիւր եօթնուտասն եպիսկոպոսունս
 և վանահարս. և գլխաւորք յեկեղեցոյն
 Ռուսաց էին հարիւր և յիսուն: Եւ
 սահմանեցաւ 'ի ժողովի անդ. Խ, Զի
 Նիկոն արկցի յաթուոյն և արգելցի 'ի
 վանս ուրէք մինչև ցմահ. Բ, Զի առա-
 ջի թագաւորին և աւագանւոյն ընարես-
 ցի այնուհետև պատրիարդն, և հաւա-
 նութի նոցա զօրեսցէ հաւասար կար-
 ծեաց արքեպիսկոպոսաց և եպիսկոպո-
 սաց և վանահարց ժողովոյն. Գ, Զի մի
 պատրիարդն Կոստանդնուպօլսոյ ևեթ
 համարեսցի գլուխ եկեղեցոյն Յունաց,
 և մի ևս տացի նմա համար գհասից և
 զծախուց եկեղեցոյն Ռուսաց. Դ, Զի
 մի ոք 'ի սոսկականաց իշխեսցէ վաճա-
 ուել ինչ կամ սրարգևել միանձանց և
 այլոց եկեղեցականաց. Ե, Զի պա-
 տրիարդն ոչ ունիցի զիրաւունս ձեռնա-
 դրելոյ զոք յեպիսկոպոս, կամ կառու-
 ցանելոյ մենաստանս և եկեղեցիս ա-
 ռանց հաւանութե թագաւորին և ա-
 լագանւոյն:

Մինչդեռ այս իրք գործէին 'ի Մոս-
 քուա՝ մի ոմն 'ի Տոնոքի Խաղախաց
 Սթենքօ անուն սկսեալ յելուզակել
 հինարար 'ի վերայ Աղլկա գետոյ մերձ
 յԱժտէրխան, էառ ասլա և քաղաքս

քանի մի, և սպան զպատգամաւորս
 քաղաքապետին Աժտերխանու, որք ե-
 կեալ էին 'ի խրատել զնա, և խորտա-
 կեաց զզօրսն առաքեալս յերկրորդում
 նուագին 'ի վերայ իւր: Միաբանեալ
 ընդ իւր և զայլ ոմն աւազակապեա
 Սէրկէյ կամ Սարգիս անուն, յափշտա-
 կեաց նաւակս բազումս 'ի Վոլկայ, և
 խաղացեալ նոքօք 'ի ծովն Կասպից ափ-
 րեաց ամենայն նաւաց ծովուն, և յա-
 ւարի էառ զծովէ զերեսայն. այլ և կո-
 րոյս զկէս իւրոյ ամբօրին:

Իբրև ազգ եղեն իրքն 'ի Մոսքուա,
 արձակեցաւ 'ի վերայ Սթենքայ և ըն-
 կերաց նորա քաջ զօրապետն Փրոզո-
 ոսովսքի, որ հրամայեաց նմա յանուն
 թագաւորին՝ մեկնել 'ի Պարսից և դալ
 յաշխարհն իւր. և Սթենքօ հնազան-
 դեալ՝ առաքեաց 'ի Մոսքուա յիւրոց
 անախ արս ութ 'ի խնդրել զթողութի:
 Այլ սրատգամաւորք նորա գարձուցան
 յԱժտերխան ընդ առաջնորդութի զօ-
 րավարի ուրումն. զոր զճանասպարհայն
 սպանեալ խաղախացն՝ եկին գարձեալ
 առ ընկերս իւրեանց. և Սթենքօ նոքօք
 հանդերձ յարձակեալ 'ի խարմուխս և
 'ի Թաթարս, էառ և զքաղաքն Յարի-
 ցին, և յափշտակեաց զամենայն ար-
 քունի համբարս և զնաւս որ էին 'ի
 նմա: Էառ ասրս և զԱժտերխան, սպան
 զքաղաքապետն, և յաւարի էառ զա-
 մենայն ճօխութիս քաղաքին. և թո-

դեալ անդ զերկուս յիւրոց սպայիցն ,
ինքն գիմեաց վերստին յելուզակել 'ի
Ռուսիա . և սպայքն 'ի վերայ այլոց ա-
դեալց զոր հասուցին բնակչացն Աժ-
տերխանու , անհնարին տանջանօք սպա-
նին և զարքեպիսկոպոս նոցին :

Լուեալ Ալեքսի զաղէտս քաղաքին՝
առաքեաց ընդդէմ ապստամբացն զիւան
Պոլտանովիչ Միլոսլաւսքի , և նա խոր-
տակեալ միանգամ և երկիցս զզօրս
Սթենքայ , պաշարեաց և զԱժտերխան ,
և էառ զայն մատնութի ուրումն Չէր-
քեզի , որ խաբանօք ածեալ զսպայսն
Սթենքայ 'ի աուն իւր՝ կալաւ ետ զնո-
սա 'ի ձեռս Միլոսլաւսքեայ : Անտի և
իշխանն Տոլկորուքի հետամուտ էր
Սթենքայ . զոր և ձերբակալ արար , և
ած 'ի Մոսքուա , և հատոյց անդ Սթենքօ
զվրէժ չարեացն գործելոց :

Յամին 1669 մեռաւ թագուհին Մա-
րիամ , և Ալեքս առ 'ի կնուծի զՆա-
տալիա դուստր սպայի ուրումն՝ որ կո-
չէր Նարիչքին , այր խոհական , անա-
չառ , անկեղծ և հաւատարիմ . որում
ետ արքայ և զպաշտօնն Եղիայի անե-
րոյն իւրոյ առաջնոյ : Նարիչքին մեծա-
պէս նպաստ եղև 'ի նորոգութի բարե-
կարգութեց յարքունիս և արտաքոյ , և
ծաղկեցոյց զարուեստս և զտուրևառիկ
վաճառաշահութիս :

Կարևոր ընծայեցան կարգադրութիք
Նարիչքինայ և 'ի պատերազմին ընդ

Օսմանեանս, և ևս առաւել 'ի խաղա-
ղութեն որ զկնի: Քանզի խաղախբն
անհանգարտք աղաչեցին զսուլքան Մէ-
հէմէտ Գ, առնուլ զնոսա ընդ իւրով
պաշտպանութիւն. և նա սոզգ արար Ա-
լէքսի թողուլ 'ի ձեռաց զՌէքրանիա
զերկիր խաղախաց: Բայց Ալէքս ոչ
կալաւ յանձին. և միանգամայն գես-
պանս առաքեալ առ Պապն և առ ամե-
նայն գողցես պետութիւն Եւրոպայ, բաց
'ի թագաւորէն Գաղղիոյ՝ զոր գիտեր
գաշնակից Օսմանեանց, աղաչէր զնոսա
միաբանել ընդ իւր ընդդէմ սուլքա-
նին: Այլ նոքա անպարապ էին 'ի սլա-
տերազմաց ընդ միմեանս, և Լէհք միայն
սպարաստեցան ելանել ընդդէմ Օս-
մանեանց ընդ առաջնորդութիւն քաջ
սպարապետին իւրեանց Սոպեպեայ. որ
և յաղթեաց այլազգեաց, կոստրեալ 'ի
նոցանէ արս քսան հազար, և տասն
հազար գետամոյնս արարեալ: Առա-
քեալ էր և Ալէքս յՌէքրանիա զզօրս
իւր. այլ զկնի խորտակման թշնամւոյն՝
խաղաղութի արար ընդ ամենեսեան, և
յօդուտ և 'ի սլայծառութի ազգին և եթ-
ուչ կալաւ:

Չեան ետ այնուհետե 'ի բարգաւա-
ձել զգիտութիւն, զարուեստս, զձե-
ռագործս և զտուրեառս: Կոչեաց 'ի
հոլանդիոյ արս հմուտս նաւակերտու-
թիւն և նաւալարութիւն, և կազմեաց տոր-
միլս նաւաց 'ի Սեաւ և 'ի Կասպից

Ծովս : Բարեկարգեաց և զքանազնացու թիւնս քաղաքականս ընդ արտաքին պետութեանց՝ կարգեալ վասն այնորիկ ատեան առանձին :

Կարի աշխոյժ էր Ալեքս, և միանգամայն մարդասէր յոյժ և գթոտ և քաղցրաբարոյ . այլ խռովասէր բարձր ամբօխին հարկեցոյց զնա կարգել գաղտնի ատեան հարցափորձի, յոր յանկարծակի ձգեալ ամբաստանօղն և ամբաստանեալն՝ սլատուհաս կրէին ձաղկանաց : Սակայն ինքն Ալեքս բազում անգամ յայց ելանէր կալանաւորացն ՚ի բանտս ատենին, և դատ առնէր նոցա ներողամտութիւն :

Պատուիրեալ էր և պատրիարքին՝ զի տացէ ինքեան հանապազ զհամար բազմազաւակ տանուտեարց կարօտելոց, և ընդր առատապէս զկարիս նոցա : Այլ և զգերիս և զկալանաւորս որ ՚ի Լեհաց, ՚ի Շվետաց, և ՚ի Թաթարաց՝ կարգեաց ՚ի մշակել զանդործ երկիրս Ռուսիոյ, սահմանեալ նոցա ռոճիկ բաւական ՚ի կեանս : Փորձ փորձեաց և բրածոյս հանել ՚ի Սիպիրայ, յԱւրալ լեւանց, յափանց Թոպուլայ և յայլոց տեղեաց . այլ առ ՚ի չգոյէ արանց հմտացելոց յայն արուեստ՝ ոչ յաջողեցաւ այն որպէս կամէր, և որպէս այլք զկնի նորա արդիւնացուցին :

Անդատին յամէն 1653 զհետ եղև բարեկամութե ընդ Չինս, և առաքեաց

անդր զիշխան ոմն 'ի Թոստոլոսայ սլա-
տուական սամուրենեօք, որ և դարձաւ
անտի ոսկուով և արծաթով, և ակամբք
և դիպակօք: Ասլա առաքեցաւ անդր
հրեշտակութի՞ Պայքով խաղախ, այլ 'ի
պատճառս իւրոյ ամբարտաւանութեն
և յամառուէ՛ որով ոչ կամեցաւ հսրա-
տակել արարողութի՛ իրիք յարքունիսն
Չինաց 'ի Փէքին, դարձուցաւ յետս
յաշխարհ իւր հանդերձ սարգևօքն իւ-
րովք:

Եւ մեռաւ Ալէքս ամաց քառասուն
և ութից՝ Թողեալ ուստերս հինգ և
գասերս ութ 'ի Մարեմայ Թագուհւոյ .
և 'ի Նատալիայ զուսար մի և զգուսար :

ՖԷՈՏՈՐ Գ. ԱԼԵԿՍԵՅԵՅԱԿԻՉ

ԹԱԳԱՒՈՐԵԱԼ Ֆէոտորայ յինն և
տասն ամաց հասակին լի և ճոխ ամենայն
կարևոր հանգամանօք 'ի բարդաւաճել
ևս քան զևս զԹագաւորուի հօրն իւրոյ
Ալէքսի, ու խախք փափաքելի արար
Ռուսաց զերկարժամանակեայ Թագա-
ւորութիւն իւր, այլ խառնուած նորա
տկար՝ խափան եղև ըղձից Ժողովրդեան
իւրոյ:

Այլ և յերկրորդ ամի Թագաւորու-
թեան նորա փոքր միւս ևս և վրդովէր
ընդ երկար խաղաղութին Ռուսիոյ: Չի

Թաթարք միաբանեալ ընդ Օսմանեանս՝
յարձակեցան յերկիրն Խաղախաց , և
առին զբաղաք մի նոցա : Սակայն վաղ
հաստատեցաւ 'ի միջի ուխտ խաղաղու-
թէ , որով սուլթան Մէհէմմէտ 'ի սպառ-
հրաժեշտ կալաւ յՈւքրանիոյ , և Խա-
ղախք մնացին ընդ ձեռամբ Ռուսաց :
Հաստատեաց Ֆէոտոր և զգաշինս հօրն
իւրոյ ընդ Թագաւորացն Շվեդաց և Լե-
հաց , և ոչ եղև յաւուրս իւր պատե-
րազմ ինչ Ռուսաց ընդ օտարս :

Յիշատակաց արժանի գործ Ֆէոտո-
րայ եղև բարեկարգելն զիրս ազնուա-
կանաց : Քանզի տեսեալ նորա զի բազ-
մապատիկ անկարգութեց և ձախող պա-
տահարաց պատճառք էին առաւելուիք
ազնուականացն հնագունից տոհմիւքան
զկրսերագոյնս , և բազում անգամ քա-
ջագոյնք յիշխանաց տեղի տալ հարկէին
վատաց մեծատոհմից , արար ժողով մեծ
յարքունիս իւր 'ի յունուարի 12 , յա-
մին 1682 , որպէս թէ 'ի քննել և 'ի
ճշգրտել զամենայն ազգաբանութիս ա-
զատանոյն : Այսն որոյ հրաման եղև ա-
մենայն տոհմից գլխաւորաց գալ բերել
զմուրհակս և զազգաբանութիս իւրեանց ,
զի ճշգրտեսցին , և թէ պէտք ինչ լինի-
ցի՝ ուղղեսցին : Ապա ժողովեաց Ֆէո-
տոր զպատրիարգն հանդերձ եպիսկոպո-
սօք և աւագանւոյն , և խմատուն բա-
նիւք յայտ արար զիմասս առանձնա-
շնորհուէցն որ բաշխէին ըստ կարգի ազ-

նուևատոհմութի : Եւ զկնի պատրիարգն
գրուատեալ զխորհուրդ թագաւորին ,
զնոյն բանս նորա ճոխագոյն մեկնաբա-
նեաց . մինչև 'ի մի բերան գոչել ժողո-
վականայն . « Եղիցի ըստ բանի սրբազան
պատրիարգին » : Գոհայաւ զայ թագա-
ւորն վասն յօժարամիտ ունկնդրութե-
նոցա , և հրամայեաց ջնջել 'ի միջոյ զա-
մենայն աղգահամարս , յաճիւն դար-
ձուցեալ զամենայն զմուրհակսն 'ի մեջ
հրասպարակին . և ասպա նզովս կարգաց
պատրիարգն որոց միանդամ իշխեսցեն
պարսաւել զգոյլելին զայն վճիռ հրա-
մանի :

Մի 'ի կարևոր բարեկարգուէյն Ֆէո-
տորայ եղև փակելն 'ի գիշերի զփողոցս
Մոսքուայի , և կարգել 'ի նոսա գիշերա-
պահ զօրս : Բազմացոյց 'ի Ռուսիա երի-
վարս ընտիրս , և կոչեցեալ ձիավարԺս
հմուտս յօտար աշխարհաց՝ ետ ուսու-
ցանել պատանեացն Ռուսաց զհեծելուի :

Քակեաց զփայտաաշէն տունս հասա-
րակաց , և կանգնեաց քարեայս և աղիւ-
սեայս : Գեղեցկացոյց զՄոսքուա , և
զայլ քաղաքս բազումս . և որոց չէին
ձեռնհաս կառուցանել զտունս իւրեանց
ըստ վայելչութե զորինքն կամէր՝ առա-
տաձեռնէր նոցա դրամս և ատաղձս :

Սա նախ փոխեաց և զտարազ լայն ըզ-
գեստուցն Ռուսաց 'ի ձև լեհացի , ա-
ռաջին ինքն զգեցեալ զնոյն , և ասպա
իւրոյ աւագորերոյն զգեցուցեալ :

Խնամ կալաւ 'ի մեղմէլ ըստ կարի և զանիրաւ դատապարտութի 'Նիկոնի, և ազատութի շնորհեալ նմա՝ հրաման ետ դալ 'ի Մոսքուա . և թերևս 'ի սլաօիւ իշխանութե ևս հասուցանէր զնա, այլ նա զճանապարհայն վախճանեցաւ յամին 1681:

Եւ ինքն Ֆէոտոր ախտացեալ տենդիւ՝ իբրև ետես թէ մերձ է 'ի վախճանել, կարգեաց իւր յաջորդ 'ի թագաւորութե զեղբայր իւր զՊետրոս, որ էր յայնժամ մանուկ տասնամեայ. զի թէ սկտ և երկցագոյն քան զնա էր Իւան, այլ մտօք մանկագոյն էր, և ասուչ, և ըստ խառնուածին տկար: Եւ մեռաւ Ֆէոտոր յամին 1682, թագաւորեալ ամս հինգ, փոքր ինչ աւելի. և սուգ մեծ եղև ժողովրդեան իւրոյ:

Եթէ մինչև ցամբառնալ Ռումանովեանց յաթոն Ռուսիոյ՝ գիշեր աղջամղ ջին էր տեսանել 'ի մեծի աշխարհին, և վաղանցուկ նշոյլք ինչ երբէք երբէք փայլատակեալք 'ի նմա՝ առաւել ևս աչախիլ զնաւարն որ զկնի՝ գործէին, ժամանակ թագաւորութեն Միքայէլի, Ալէքսի, և Ֆէոտորայ երրորդի արգարև այգալոյս էր զուարթարար: Արդ ժամ է տեսանել զարեգակն սլայծառ ծագեալ 'ի Ռուսիա թագաւորութեն Պետրոսի մեծի. որով և անուն սկտութե Ռուսաց կալաւ զգերագոյն տեղի յարձանագրութիս աշխարհի:

Այլ աստանօր յակամայս հարկիմք ստորագրել համառօտիւ զմերիկ խռովութեն որ կանխեաց քան զթագաւորէն Պետրոսի բացարձակ իշխանութիւն, ՚ի 1682 ամէ մինչև ցամն 1696 :

Ի Ի Ա Ն Ե . Ե Ի Պ Ե Տ Ր Ո Ս Ա .

Ա Լ Ե Ք Ս Ե Յ Ե Վ Ի Զ Ք

ՍՈՓԻԱ կին փառասէր՝ քոյր Իւանայ ՚ի մօրէ, դժուարեալ ընդ զսկուսն եղբօրն իւրոյ յիրաւանց թագաւորութե՛ գուն գործեաց ոգւով չափ կորուսանել զմայրն Պետրոսի զնատալիս և զնարիչքինեանս . և Միլոսլաւսքի եղբայր մօրն Սոփիայ և այլք ոմանք յաւագորերոյն համբաւեցին՝ եթէ կուսակիցքն Պետրոսի գեղ մահու արբուցեալ են Ֆէոտորայ, և զհետ են զնոյն անցս և ընդ Իւան անցուցանել :

Այսու պատճառանօք որսացան և զյանգգնագոյնս ՚ի Սթրելցաց արս իբրև քսան հազար, որք խուռն գիմեալ ՚ի Քրեմլին՝ բողոք կալան զինն սպայից՝ կուսակցաց Պետրոսի՝ որպէս թէ պակաս արարեալ իցէ նոցա զհատուցումն ոռճկաց իւրեանց, և սպանին զնոսա :

Կոչեաց Սոփիա զգլխաւորս ՚ի զօրսպետաց և յաւագանեոյն հանդերձ պատրիարքաւ և եպիսկոպոսօք և վաճառա-

կանօք , և յայտ արար՝ թէ Իւանայ անկէր ամենայն իրօք թագաւորուին : Այլ մինչև էր սահմանեալ ինչ ՚ի Ժողովեանդ , յարեաւ աղմուկ մեծ ՚ի քաղաքին : Զի Սովիայ տուեալ էր Սթրեչացն ՚ի ծածուկ զհամար անուանց իբրև քառասնից , զորս կոչէր թշնամիս իւր և հասարակաց . և նոցա յարձակեալ մուլեգին ՚ի տունս և յեկեղեցիս , ուր որէք գտանէին ՚ի նշանագրելոց անտի՛ շարաշար մահու սպանանէին . և էր զորս կոչր զկուրայն իբրև նշանագրեալս խողխողէին : Զաթանաս Նարիշքին ՚ի պատուհանէ ապարանիցն ՚ի վայր հոսեցին , և զիշխան ոմն Տուկորուքի խողխողեցին՝ համարեալ զնա ՚ի Նարիշքինեանցն : Խնդրեցին պնդութի զՎանկատ բժիշկ հոլանդացի՝ որ ամբաստանեալ էր որպէս գեղատու Փէոտորայ . և գտեալ զորդի նորա անդէն սպանին : Գտին զայլ ոմն բժիշկ գերմանացի , և ասեն . « Եւ դու բժիշկ ես . եթէ դու չսպաներ ըզՓէոտոր , այլ զբազում մարդիկ սպաներ , մահապարտ ես » . և սպանին զնա : Ի վերջէ գտին և զՎանկատ ՚ի կերպարանս մուրողի , և քարշեալ զնա մինչև առաջի ապարանիցն արքունի՛ իբրև կամէին սպանանել , զաղաղակ բարձին քորքն Փէոտորայ՝ խնայել յայրն . և Սթրեչեցքն խնդրեցին փոխանակ նորա զԿիւրեղ Նարիշքին և զորդի նորա , ըսպառնալով հուր հարկանել յապարանս

անդր՝ եթէ ոչ տացին նոքա 'ի դուրս :
 Զարհուրեալ քերցն Ֆէոտորայ գնացին
 հանդերձ պատրիարգաւն 'ի տեղի թա-
 քրստեան Նարիշքինեանց . ուր պատ-
 ըրիարգն ետնոցա զարձակումն 'ի մեղաց ,
 հաղորդեցոյց սէյ խորհրդոյն , և ետ զօ-
 ծումն վերջին . և առեալ 'ի մի ձեռս ըզ-
 հրաշագործ պատկեր սէյ կուսին , և միւ-
 սոին կալեալ զձեռանէ պատանւոյն Նա-
 ըրիշքինայ՝ եւ ընդ առաջ Սթրելցացն :
 Այլ նոքա յափշտակեցին զհայրն և զոր-
 դին , քարշեցին ընդ սանգուղս 'ի վայր ,
 և խորհուրդ արարեալ՝ յօշոտեցին զսա-
 տանին և զՎանկատ , և զգլուխս և ըզ-
 ձեռս և զոտս նոցա անցուցին 'ի ծայրս
 վանդակաց ասարանիցն . խկ զծերու-
 նին Նարիշքին ածեալ բռնութէ 'ի մե-
 նաստան ուրեք՝ հարկեցուցին կրօնա-
 ւորել անդէն :

Այս արկածք ամենայն գուշակք էին
 դեռ ևս հանդերձելոց աղետիցն . և Սո-
 փիա այնպէս իմն կեղծէր , իբրու թէ
 ինքն ասիցէ զարարս Սթրելցացն , և
 զանգթութիս նոցա . որպէս զի եթէ
 երբէք ձախողեացին իրք նորա՝ պատճառս
 խուսափելոյ գտանիցէ : Իսկ Սթրե-
 լեցքն կարգացին թագաւորս զԻւան և
 զՊետրոս միանգամայն , և խնամակալ
 սէտուածէն զՍոփիա ըստ փառամոլ ըզ-
 ձից նորին :

Նախկին գործ տնտեսութի իւրոյ ա-
 րար նա՝ զվարձահատոյցն լինել դաւակ-

ցաց իւրոց, և բաշխեաց Սթրելցաց զինչս սպանելոցն, և այլ ևս դրամն 'ի գանձուցն արքունի. այլ և հրովարտակ հանեալ շնորհս մատուցանէր նախանձու և հաւատարմութե զովողացն իւրոց: Արձակեաց ապա դեսպանս առ արտաքին պետուիս հանդերձ նամականուով, զորս ինքնստորագրէր և երկոքին թագաւորքն. նոյնպէս առնէր և յիմ հրովարտակս. և 'ի դրամն ետ փորագրել զիւր և զերկոցուն թագաւորացն զգէմս 'ի միասին:

Սակայն ըստ բախտի Ռուսաց ընտրեաց իւր 'ի մտերիմ և 'ի խորհրդական զիշխանն Վոլիցին, և ետ 'ի ձեռս նորա զամենայն դերագոյն իշխանութիս. զի կայոյց զնա ընդ հանուր սպարապետ, և հազարապետ տեսուչ իրաց արքունի, և կնքասպահ. և ամենեքեան վկայեցին թէ արժանի էր այրն այնմ ամենայնի, և ոչ խաբեցան:

Զի Վոլիցին սկսաւ ցրուել նախ զՍթրելցան, և առաքեաց զնոսա կիսով չափ յԱւքրանիա, 'ի Խաղան և 'ի Սիպիր:

Իսկ Սոփիա զհետ էր և զՊետրոս արկանել յաթուոյ, և գէթ 'ի վանս ուրեք արգելուլ. վասն որոյ կարգեաց առ նմա պատանիս յիսուն իւրու զբօսեցուցիչս, զի որկորոյ և շուայտութե պարապեալ լուծցի նա յարիական քաջուէն և առելի լիցի ամենեցուն. և միանգամայն 'ի հաստատել զթագաւորութին Իւանայ որդւոց յորդիս՝ ած նմա 'ի կը-

նութի զյուսար Ձութիքովայ սիպի-
րացւոյ յամին 1684 :

Մինչդեռ պաշտականքն ամենայն 'ի
խնջոյս հարսանեացն էին, դարձեալ աղ-
մուկ մեծ յարուցին Սթրեւեցքն . զի
Քալանոքի զորագլուխ նոցա նախանձու
սրամտութե վառեալ ընդդէմ Առլիցի-
նայ՝ որոյ իշխանութեցն ինքն ակն ու-
նէր հասանել իբրև առաւել երախտա-
ւոր առ Սոփիա, եդ 'ի մտի սպանանել
և զԹագաւորսն և զՍոփիա և զքորս նո-
րա և զամենայն կուսակիցս արքունի
տոհմին :

Չահի հարաւ Սոփիա յամբոխ աղա-
ղակէ անտի, և աճապարեաց խոյս ետ
ընդ Թագաւորացն և ընդ այլոց պաշա-
տականաց 'ի մենաստան սբջ երրորդու-
թեանն . և անգր ձայնեալ զՔալանոքի՝
որպէս թէ 'ի խօսել ընդ նմա, ձերբա-
կալ արար զնա 'ի ձեռն դարանակալաց՝
զորս եդեալ էր մերձ 'ի սարխաղ անգր
մենաստանին, և անյասպաղ գլխատեաց
զնա և զորդի նորա :

Չայն լուեալ Սթրեւեցայ՝ յարձակե-
ցան առ հասարակ 'ի մենաստան անգր՝
և սպառնային 'ի հուր և 'ի սուր մաշել
զամենեւեան : Իբրև ազգ եղև աւագացն
և ամենայն ազատանւոյն վտանգ արքու-
նի տոհմին՝ գիմեցին և նոքա իւրեանց
ամբոխիւ 'ի ակելն, այլ պատրիարզն
Ճարտար և հզօր բանիւք ցածոյց ըզ-
բարկութիւն Սթրեւեցացն, և աղէրսիւ

յայտ արարեալ զանմիտ վրէժխնդրութի նոցա վասն միոյ առն ընդդէմ բովանդակ տոհմի թագաւորին իւրեանց՝ հակառակ օրինացն Այ և սիրոյ հայրենի աշխարհին, այնպէս իմն ընկճեաց զնոսա, զի չօրք հազարք 'ի նոցանէ հանդերձ իւրեանց կանամբք և որդւովք տոռն ընդանձն անկեալ առաջի դրանց մենաստանին՝ անձամբ զանձինս մահու սարսուտակին . այլ սպարիարգն շնորհեաց նոցա զյանցանսն :

Մինչդեռ խորհէր Կոլիցին նկուն առնել զՍթրելեցսն 'ի սպառ, խորհրդով Լէոփոլաի կայսեր յորդորեցաւ խաղալ 'ի պատերազմ ընդդէմ Թաթարացն Խրիմու՝ նիզակակցութբ Լեհաց, զի բազում քանդմունս գործեալ էր նոցա 'ի գաւառս ինչ Լեհաստանի : Չայն պատեհ առեալ նորա ժողովեաց զամենայն Սթրելեցսն և տարաւ 'ի պատերազմն . և հանդարտեաց երկիրն յերեսաց բուռն զօրականին :

Իսկ խանն Խրիմու 'ի բաց տարաւ յՕրէն և 'ի մերձակայ վայրաց զամենայն համբարս կերակրոց, և հրկէզ արար զամենայն արտորայս ընդարձակ դաշտացն . մինչ զի զօրք Կոլիցինայ անկերակուր մնացեալ՝ սկսան ուտել զերիվարս իւրեանց . և կորեաւ մեծ մասն բանակին : Մի միայն գործ այնր արշաւանի եղև կառուցումն քաղաքի միոյ առ Սամարս գետով յերիս ամիս, որ

պէս զի 'ի գալ Ռուսաց կրկին 'ի Խրիմ՝
 ունիցին անդ 'ի սլատրաստի զէնս և
 համբարս :

Իբրև դարձաւ կողիցին 'ի Մոսքուա,
 ինչոյս ուրախութե՛ կարգեաց Սոփիա
 ժողովրդեանն, և բաշխեաց պարգևս զօ-
 րավարացն և զօրաց՝ որպէս թէ յաղ-
 թանակաւ առեալ էր նոցա զԽրիմ :

Աւաւել քան զամենեսեան ծանրա-
 ցասումն լինէր ընդ այս ամենայն Պե-
 տրոս՝ որ չորեքտասան ամաց էր յայն-
 ժամ, և չէր հաճ ընդ անիրաւ լուծումն
 դաշանցն՝ զոր 'ի քսան ամաց հետէ կը-
 ուեալ էին Ռուսք ընդ Օսմանեանս .
 այլ ոչ կարաց արգելուլ զկողիցին 'ի
 գիմելոյ երկրորդ անգամ 'ի Խրիմ : Ուր
 նորա ոչ ինչ գործ քաջութե՛ արարեալ,
 այլ և զմեծ մասն բանակին 'ի սլատե-
 րազմի կորուսեալ, դարձաւ անդրէն 'ի
 Մոսքուա ամբարտաւանութե՛ իբրև յաղ-
 թական ոք : Պետրոս բռնադատեալ 'ի
 Սոփիայ՝ ել նմա ընդ առաջ իբր 'ի սլատ-
 ճառս սիրոյ, և այնչափ իմն թշնամա-
 նօք և կշտամբութե՛ պատահեաց նմա,
 զի Սոփիայ 'ի ցասումն սրտմտութե՛ բոր-
 բոքեալ՝ եդ 'ի մտի բառնալ 'ի միջոյ
 զՊետրոս զխէթ սրտի իւրոյ 'ի ձեռն
 գլխաւորի ուրումն 'ի Սթրեւցաց :

Ազգ եղև Պետրոսի գաւն . և փա-
 խուցեալ 'ի մենաստանն երրորդութե՛,
 կոչեաց զաւագանին որ յիւր կողմն
 էին, և զօրս որչափ ձեռնհաս էր, և

Թէպէտ Սոփիա գուն գործեաց որսալ զՍթրէլէցսն , այլ զօրացաւ բարբաուն Պետրոսի , որ հրապարակեաց զանօրէն գաւաճանութիւննիւ թեալ ընդդէմ իւր և մօր իւրոյ . և խոսիւ պատուհասեցան գաւազիրքն ամենայն : Կոչիցին զէրծեալ 'ի մահուանէ 'ի պատիւ երեսաց ազգակցին իւրոյ մտերմին Պետրոսի՝ սքսորեցաւ 'ի Քարկոփոլ՝ հանդերձ կնաւն և որդւովք , և անտի 'ի Փուսթոսերպք , ուր և մեռաւ յետ քսան և չորից ամաց . իսկ Սոփիա արկեալ յիշխանութէ խնամակալութեն՝ փակեցաւ 'ի մենաստանն , զոր իւր իսկ շինեալ էր մերձ 'ի Մոսքուա . և Իւան անցուցեալ յառանձնութէ զմնացուածս աւուրց իւրոյ՝ մեռաւ յամին 1696 :

Այժմ՝ ահա առցուք 'ի ճառել ըզգործս Պետրոսի մեծի , որոց սակաւս ունին զուգականս պատմութիւք անցից աշխարհի :

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ

ՄԱՐԴԻՎ ընդաբոյս բերմամբ 'ի նախնեացն աւանդս և 'ի կանխակալ սովորոյթս յախուռն և առանց քաջիկ ընտրողութէ կասկեալք , նորօրինակ իմն զօրութէ կարօտացեալ գտանին առ 'ի սուղ ժամանակի վերոսնկելոյ 'ի ճաշակ-

առուծի քաղաքականութիւն և ուսումնասիրութիւն : Այսպիսի ինչ զօրութիւն յարոյց Աստուած՝ օրէնսդիր և նորոգող Ռուսիոյ զՊետրոս Ա, ճոխացուցեալ զնա ամենայն կարևոր հանգամանօք ՚ի գործն մեծ, այս է ճշգրիտ ընտրութիւն, ուչիմ հանձարով, անյողգողգ հաստատութիւն, եռանդուն աշխուժութիւն, անմեղկելի սիրով արդարութիւն, և անվրէպ հմտութիւն բարուց մարդկան :

Մի միայն թերութիւն երբէք երբէք միթացուցիչ այսր ամենայնի գեղեցիկ կատարելութեց նորա էր խստութիւն բարուցն, որով կարծիս ետ երբեմն և անագորունութիւն. և այն արգասիք էին խժական դաստիարակութեան յոր սնաւնա ՚ի տղայ տիոց : Երկիւղ յոյժ ունէր ՚ի նաւարկելոյ. և անգամ ընդ առուփոքրիկ անցեալ՝ ահաբրտնէր. սակայն տորմիզս նաւաց կամեցեալ հանել ՚ի ծով՝ յաղթեաց բնութիւն իւրում, և զուարճալի արար անձին զնաւագնացն լինել : Եւ ոչ յայտմ միայն, այլ և յամենայնի յոր միանգամ կրթել կամէր զազգն իւր, նախ զանձն ՚ի նմին կիրթ և վարժ կացուցանէր :

Յաւանն Փրէօպրաժէնսքոյ մերձ ՚ի Մոսքուա՝ ուր յաճախ զբօսանէր, կազմեաց գունդ փոքրիկ յիւրոց ընկերակցաց և յազատորդւոց աւագորերոյն յարելոց ՚ի նա. և ինքն իբրև զմի ՚ի զինուորաց անտի մարզէր ՚ի ներքոյ ձեռին Վը-

Ֆոռ անուն սպայի գենուացւոյ, ընդ որում սերտ բարեկամութիւն կալեալ անմեկնելի պահէր առ իւր: Ի նմին գնդի կարգ ըստ կարգէ ամբարձաւ Պետրոս 'ի թմբկահարութէ 'ի զինուորութի, 'ի տասնպետութի, 'ի յիսնապետութի և 'ի հարիւրապետութի: Եւ առ սահաւ սահաւ գունդն այն եղև խումբ զորաց բազմաց՝ անուանեալ Փրէօպրաժենպի: Ի նմին ամի առատաձիր վարձուց խոստմամբք հրաւրեաց Պետրոս սպայս 'ի հռանդիոյ, յԱնգղիոյ և 'ի Գենուայ, և ևս ճոխացաւ գունդն Լըֆոուայ, յորում և Պետրոս զինուորեալ էր: Այլ և Կոռնտոնոմն Սկովա յազգէ՝ ունէր ընդ իւրևարս հինգ հազար, յորս սահաւք յոյժ բնիկ Ռուսք էին:

Սոքա ամենեքեան անդադար էին 'ի վարժս մարզից. և Պետրոս ըզձացեալ փորձ փորձել քաջութեան նոցա՝ հրամայեաց շինել գղեակ մի, զոր կէսք ունէին պաշտպանել, և այլք պաշարել: Ի պաշարողաց անախ էր Լըֆոու իւրովքն, և 'ի ժամ յարձակմանն՝ ուր ոմանք մեռան, և ոմանք խոցեցան, վերս էառ և Լըֆոու. և Պետրոս զուարճացեալ յոյժ ընդ հանդէսն՝ կառոյց Լըֆոուայ սալատ գեղեցիկ ըստ արդի ճարտարապետութի:

Ուշ կալաւ Պետրոս ընդ ցամաքային զորաց բազմացուցանել և ծովայինս,

կարգեալ ծովակալ զնոյն ինքն զլըժոռ զայրն ճարտար յամենայնի : Եւ նա ետ հոլանդացի և վենետիկացի արուեստագիտաց կերտել նաւս և մակոյկս 'ի բերան Աորոնեժ գետոյ : Անաի և Պետրոս ետ կառուցանել նաւս յԱրքանկէլ, և ինքնին մտեալ 'ի վարժս նաւաստեացն՝ վարէր զնաւս 'ի Հիւսիսային ծովուն, զոր ուրուք 'ի Թագաւորացն առաջնոց և տեսեալ իսկ չէր :

Մինչդեռ յայտպիսի կրթանս սարսալէր նա, մեծապէս խնամով միտ դնէր և քաղաքական տնտեսութե՛ն. կարգեաց գլխահարկս 'ի դարման զօրականին, և մաքսատունս չափաւորեալս. կարճեաց զտարասայման ազատութիս եկեղեցականացն Ռուսաց. և 'ի մեռանել եղբօրն իւրոյ Իւանայ յամին 1696, զծախստան նորա փոխեաց 'ի նսպատ ծախուց զինուորութե՛ն :

Յամին 1652 Քասպարով անուն ոմն իւրովք Խաղախօք հասեալ մինչև ցգեան Ամուր՝ էսու զբազում բերդորայս Չինաց արտաքոյ մեծի սարսպին : Ապա առ Թագաւորութե՛ն Պետրոսի խոհական արքայն Չինաց Քամհի խորհրդով յիսուսեան կրօնաւորաց՝ փոխանակ ստերազմելոյ ընդ Ռուսս՝ ընտրեաց զխաղաղութիւն, և առտքեաց մանդարինս երկուս հանգերձ երկու կրօնաւորօք 'ի յիսուսեանց և տասն հաղար արամբք՝ հաստատել զգաշինս ուխտին 'ի Ներ-

չինք : Կոլովքին քաղաքապետ տեղւոյն կամեցեալ ցուցանել Չինաց՝ թէ ոչ նոքա և եթ են յաշխարհի ճոխք և հզօրք , որպէս կարծէին , սփռեաց 'ի յատակս խորանին իւրոյ շքեղ կապերաս և սպաստառս Տաճկաց և Պարսից , և տողեաց շուրջանակի անօթս սակոյ և արծաթոյ : Եւ հաստատեցաւ պայմանն ուխտին 'ի լատին բարբառ , յորում սահման երկոցունց պետութեցն կարգեցաւ գեան Կորպիցա . և ապա երկուս գաղափարս արարեալ պայմանին՝ ստորագրեցին երկուստեք . և կանգնեալ արձան 'ի տեղւոջն՝ փորագրեցին և 'ի նմա զպայմանս ուխտին :

Զայնու ժամանակաւ տեսեալ Օսմանեանց զՊետրոս 'ի կարծեցեալ անփութութե զտեսչութե իւրոյ աշխարհին՝ ժամանակ պատեհի համարեցան հեռագոյն զնա և զարքայն Լէհաց կացուցանել 'ի բարեկամութե Գերմանացւոց , ընդ որս պատերազմ էր նոցա յայնժամ . և դադտ 'ի միմեանց բանագնաց լինէին ընդ Ռուսս և ընդ Լէհս : Այլ Լէոփոլտ 'ի վեր հանեալ զգաւն , աղաչեաց զերկուս թագաւորսն միաբանել ընդ իւր ընդդէմ Օսմանեանց : Յանձն էառ Պետրոս , և յերկուս բաժանեալ զզօրսն՝ զՎոռտոն հինգ հազարաւն և զԼըֆոռ երկուսասան հազարաւն առաքեաց յԱզով ընդ ամուսնս Տոն գետոյ , և զՇէրէմեթով Սթրել-

յօքն և խաղախօք՝ արամբք իբրև ութսուուն հազարաւ արձակեաց ՚ի խափանել զարշաւանս Թաթարաց ընդ գետեղերս Տնեբերայ. և Քլայն բրուսացի գայր ամէր զհրաղէնան և զմէքէնայս: Իսկ Պետրոս յայնժամ ըստ զինուորութէն կարգի ընդ սպայսն էր:

Այլ գժուարին էր առնուլ զքաղաքն Ազով ընդ ցամաք և եթ. զի ամուր էր քաղաքն և պաշարապինդ, և քաղաքապետ նորին այր փորձ իրաց պատերազմի: Այլ և ոմն ՚ի Տանցիկ քաղաքէ ցասուցեալ ընդ Քլայնի, բևեռեաց եխից զԹնդանօթան, և փախուցեալ յԱզով դարձաւ յայլազգութիւն: Յայնժամ և Պետրոսի խնայեալ ՚ի ժողովուրդն, յորոց երեսուն հազարք անկան առ քաղաքան, դարձաւ ՚ի սաշարմանէ անտի: Սակայն ոչ ինչ սրտաբեկ լեալ՝ զժամանակ ձմերայնոյն ծախեաց ՚ի կատարել զնաւան զոր սկսեալ էր շինել ՚ի նաւակայս Աորոնեժ քաղաքի՝ բերեալ յայլոց աշխարհաց Եւրոպայ արս ճարտարս ՚ի յօրինել և ՚ի վարել զնաւան:

Զօր գումարեաց ապա ՚ի խալմուխաց, որք յաջողակք էին ՚ի հեծելուի հանգոյն Թաթարացն խրիմու. և խաղացեալ բազմագոյն զօրօք քան զառաջինն յԱզով, էառ զայն, և ևս ամբայոյց. շինեաց ՚ի նմա գղեակս, և նաւահանդիստ մեծ. և առ ՚ի տիրել կրճիցն

Քէֆէի՛ ընդ որ լինի մտանել ՚ի Սեաւ ծով. կառոյց ինն նաւս վաթսուն վաթսուն թնդանօթիւք, և երեսուն նաւ՝ որք տանէին թնդանօթս յերեսնից մինչև ցլխուն: Իսկ զծախս այնր ամենայնի ելից յառատաձեռնութէ՛ մեծատանցն Ռուսաց և վաճառականաց, և պարիարդին, և մետրապօլտաց, եպիսկոպոսաց և վանահարց:

Առմամբն Ազովայ կամեցեալ Պետրոսի խրախոյս մատուցանել Ռուսաց և յառաջիկայսն՝ մեծաշուք յաղթանակաւ եմոյծ զգօրս իւր ՚ի Մոսքուա: Յառաջոյ իւրմէ ետ գնալ զօրավարաց իւրոց պսակաւորս. և ՚ի նոսա Շէրէմէթով զգեցեալ էր ըստ գերմանացի տարազու՝ տանելով զգլխանոց եռանկիւնի փետրազարդ: Չհետ ամենեցուն գայր մատնիչն Տանցիկեցի շղթայակապ ՚ի սայլի՝ երկուստեք ձաղկելով ՚ի դահճաց, որ և ըսպանաւ ՚ի կախաղանի: Յայնմ հանդիսի երևեցաւ դրամ սրատուոյ յանուն Պետրոսի՝ յորում գրոշմեալ էր. «Պետրոս Ա. Ինքնակալ Ռուսաց»:

Յանկայր Պետրոս և ՚ի Պալթիկ ծովուն ունել նաւակայս. այլ օր ըստ օրէ առաւելագոյն իմացեալ զհարկ զարգանալոյ բնիկ ազգին յարուեստս և ՚ի դիտութիս կարևորս՝ մինչև ոչ կարօտանալ օտար ազգացն օգնականութե, առաքեաց ՚ի Վենետիկ և յԱլիկուռնա պատանիս վաթսուն ՚ի գնդէն Լըֆոուայ,

զի ուսցին կերտել և վարել նաև մեծամեծս . առաքեաց և այլս քառասուն 'ի հողանդիա յուսումն կառուցանելոյ պատերազմիկ նաևս . դարձեալ և զայլս առաքեաց 'ի Գերմանիա, զի մարդեսցին 'ի զինուորական կարգս աշխարհին :

Եւ ոչ այնու շատացեալ, ըզձանայր անձամբուսանել զամենայն զարուեստան՝ զոր բարգաւաճել կամեր յաշխարհին իւրում . վասն որոյ եղ 'ի մօի ճանապարհորդել որպէս սոսկական ոք ընդ ամենայն Եւրոպա, և անձամբ հմտանալ կարևորաց :

Իբրև կոչեաց զաւագանին և յայտարար նոցա զխորհուրդ իւր, նոքա 'ի մի բերան զդէմ կալան խորհրդոյն . չէ օրէն չէ արժան, ասէին, ընդ օտարազգիս օտարահաւատս խառնել զբարեկամութի և զկենցաղավարութի . մի՛ ջանասցուք լաքան զհարսն մեր երևել : Այս խմոր նանրահաւատ տգիտուն յուզեաց զամենայն ժողովուրդն . և Սովիա 'ի վանս անդ յոր արգելեալն էր՝ անչէջ ունելով զողին վրէժինդրութե ընդդէմ Պետրոսի, և նա և ժողովուրդն, և Սթրելեցքն և ազատանին և ուխտ եկեղեցւոյն վառեցան յատելութի ընդդէմ թագաւորին, և խորհուրդ արարին դաւել զնա 'ի ձեռն երկց ոմանց՝ Յիքլերայ, Փուչիչքինայ և Սուքովոյի : Այլ մի ոմն 'ի մտերմացն Յիքլերայ յայտնեաց Պետրոսի զդաւն, և երեքեան նոքա ձերբակալ

եղեն և պատուհասեցան . իսկ Սոփիա
սինդագոյն զգուշուածք արդէլեալ մնաց
'ի վանսն :

Յայնժամ Պետրոսի աւանդեալ զխը-
նամ տեսչուէ աշխարհին 'ի ձեռս Սթրէ-
ֆէնեվայ և Ռոմատանովաքեայ աւա-
դաց, և թողեալ 'ի Մոսքուա զՎոռտոն
զօրավար իւրով գնդաւն, և զՍթրէլեցսն
բաշխեալ 'ի սահմանագլուխս Խրիմու,
մեկնեցաւ յաշխարհէն և յուղի անկաւ :
Եւ առ անծանօթ մնալ օտարաց՝ կար-
գեաց հրեշտակուծին մեծ, յորում էին
Լըֆոս զօրավար, Վուտովին կուսակալ
Սիպիրայ, Վոյնիցին խորհրդական սե-
տուածէ, երկոտասան արքաւագք, կըր-
կին արքանեակք առ մի մի դեսպան, և
յիսուն զօրականք՝ իւրեանց սպայլուք .
ընդ ամենայն ոգիք երկերիւր՝ ամենե-
քեան 'ի գնդէն Փռէօսպրաժենսքի : Խառն
ընդ ամբօխին էր և Պետրոս՝ երկուս և եթ
ունեւով սպասաւորս, և թզուկ մի :

Յայնչափ ամբօխէ հետաքնին մարդ-
կան կասկած երկիւղի կաշաւ քաղաքա-
պետն Տիկայի, մանաւանդ իբրև ոմանք
'ի նոցանէ սփռեալք ընդ հրասպարակն
ընդօրինակէին զգիրս վայրացն, և այլք
չափէին զխրամս քաղաքին . վասն որոյ
կարգեաց ամենայն ուրեք գէտս և սպ-
հանորդս, զի մի անխտիր մոցէն օտա-
րականքն յարքունի տեղիս . և զայս խըս-
տուծին նորա յետ ժամանակաց կաշաւ
Պետրոս 'ի պատճառս սրատերազմի :

Ի Պերլին ցրուեցաւ ամբոխ գետապանացն 'ի խուճբա խուճբա . և Պետրոս հընգետասանն աւուրբք կանխեալ յԱմստերդամ քան զընկերս իւր՝ եմուտ 'ի ձև նաւավարի , և դնացեալ 'ի մերձակայ գիւղն Սարտամ՝ ուր կառոյցք էին նաւուց բազմաց , խառնեցաւ ընդ հիւսուհանն և վաստակէր ընդ նոսա ժրաջան փութով : Անտի երբէք երբէք գնացեալ յԱմստերդամ , ունկն դներ դասախօսութե երևելչոյն Ռուխպիոսի , և ուսանէր զվիրաբուժականն արուեստ . և զքնաբանութի ուսանէր 'ի տան քաղաքապետին , և 'ի պարտիզին Պոէրհաւայ , և ուշի ուշով 'ի միտ առնոյր որչափ ինչ կարևոր պէտք էին 'ի կանգնումն Համալսարանի :

Ի նոյն միտս թողեալ առ ժամանակ մի զՍարտամ՝ դնաց անտի յԱւթրէքթ և 'ի Հայիա 'ի տեսանել զարքայն Անգլիոյ , և դիտել զմուտ և զընդունելուի դեսպանաց իւրոց : Յառաջ քան զերթն 'ի Հայիա լուեալ զերկպառակութի աւազորերոյն Ղէհաց , որոց կէսք ընարէին 'ի թագաւոր զկայսրընտիրն Սաքսանիոյ , և կէսք զիշխանն գաղղիացի զԲոնթի , յլեաց պատուէր հրամանի առ զօրսն Ուքրանիոյ՝ զի պատրաստեսցին երեսուն հազարաւ խաղալ 'ի թիկունս կայսրընտիրն :

Ի Հայիայանց իւրովքն դեսպանօք 'ի Ռիավէք 'ի փոխադարձ այցելութիւն

ամենայն մեծամեծաց և դեսպանաց՝ որք անգր դումարեալ էին վասն ժողովոյ : Անդ էառ զլուր յաղթութեն՝ զոր տարեալ էր Հայն 'ի վերայ Օսմանեանց և 'ի վերայ Թաթարացն խրխմու :

Դարձ արարեալ Պետրոսի վերստին 'ի Սարտամ, բաց յայլոց իրաց կատարեաց իւրով ձեռամբ զնաւ մի՝ որ տանէր թընդանօթս վաթսուն, զոր և սկսեալ էր կառուցանել ոմանց յազատանւոյն որ էին ընդ նմա, և առաքեաց զայն յԱրքանկէլ : Ուղղադրեաց զաշխարհացոյց թուղթս տէրութե՛ իւրոյ, և առաքեաց 'ի Ռուսիա արուեստագէտս յամենայն կարգէ : Ասա գնացեալ ընդ իւրն յԱնդղիա՝ ուսաւ կատարելապէս զարուեստ նաւակերտութե, և զուսումնականն և զաստղաբաշխականն. անդ ետ հրաման և վաճառականացն անդղիացւոց յաճախել 'ի Ռուսիա, և տանել անգր զթթախոտ ևս, որ դարչելին էր Ռուսաց, և սպտորիարգն իսկ արգելեալ էր զայն իբրև զսիւղծ ինչ :

Գուլիէլմոս արքայն Անդղիոյ հանգիւսացոյց առաջի Պետրոսի զտեսիլ նաւական սպտերազմի, և ապա ետ նմա 'ի սարգև զնաւն՝ որով ինքն երթաւէկէր 'ի հոլանդիա. և Պետրոս առաքեաց զնոյն յԱրքանկէլ երիւք նաւապետօք սպտերազմիկ նաւու, քսան և հինգ նաւավարօք, քառասուն փոխանորդօք սպայից, երեսուն վերաբուժիւք, եր-

կերիւր և յիսուն թնգանօթաձիգ մարտ
կօք և երեքարիւր ձեռագիտօք : Յաղ
թանակ պերճ քան զյոլով թաղաւո
րաց զյաղթանակս և զաշխարհակալու
թիւնս : Զնոյն առնէր և Շէրէմէ թով
շուրջ եկեալ 'ի քաղաքս Իսապիոյ :

Պետրոս յԱնդղիոյ անց 'ի Գերմանիա
'ի զննել զկրթանս զինուորացն գերմա
նացւոց : Եւ այն ինչ կամէր անցանել
'ի Վեննայէ 'ի Վենեաիկ՝ ազգ եղև նմա
թէ աղմուկ խռովութե է 'ի Ռուսիա :
Քանզի նորաձևութիւն Պետրոսի գեռ
ևս շփոթէին զմիտս Ռուսաց, և կու
սակիցքն Սոփիայ որսացեալ զՍթրե
լէցսն ցրուեալս առ սահմանօք Վիթուա
նիոյ՝ ապստամբեցուցին զնոսա 'ի ներ
քուստ ձեռին զօրավարացն, և նոքա
խաղացին գէպ ուղիղ 'ի Մոսքուա՝ թա
գաւորեցուցանել զՍոփիա : Այլ զօ
րավարքն Շայն և Կոռտոն յարձակեալ
ընդգէմ նոցա՝ իբրև ոչ կարացին հա
ւանողական և ոչ սպառնական բանիւք
ամոքել զնոսա, արձակեցին 'ի վերայ
զհեծեղագունդն, յորոց այնպէս իմն
զահի հարան Սթրելէցքն, զի անդէն
արկեալ 'ի բաց զզէնս իւրեանց՝ խըն
դրեցին զներուսն :

Այն ինչ գրեալ էին զօրավարքն առ
Պետրոս՝ թէ զի արասցեն Սթրելցացն՝
որովք լի էին բանտք և կտապարանք, ա
հա ինքն իսկ Պետրոս երևեցաւ 'ի Մոս
քուա : Կամէր սպանանել զՍոփիա,

այլ Լքիոս զիջոյց զնա 'ի ցասմանէն . կամեցաւ գէթ պատուհասակոծ առ նեւ զնա բանիւք կշտամբանաց . սակայն Սոփիա առեալ զանձամբ զկերպարանս քեռ անմեղն՝ այնչափ աղերս արկ առաջի, մինչև յարտասուս շարժել զՊետրոս : Յայնժամ զամենայն զցասուումն իւր թափեաց Պետրոս 'ի Սթրեւեցն, մանաւանդ զի պնդեցին զանձինս՝ չյայտնել զպատճառս և զգլխաւորս ասպատամբու թէն : Երկու հազարք 'ի նոցանէ՝ հանդերձ իւրեանց սպայիւքն և քանի մի երկիցամբք 'ի մահ գատասարտեցան . երկու նաժիշտք Սոփիայ և Մարթայի քեռ նորա՝ որք թուղթս 'ի Սոփիայէ առ Սթրեւեցն տանէին և բերէին, կենդանւոյն թաղեցան . և երեքհարիւրք յազտոտանոյն 'ի ձեռն այլոց ազատաց գլխատեցան : Շուրջանակի զմենաստանաւն յորում էր Սոփիա և քորք իւր՝ կախազանք սրտարաստեալ էին, և կախեցան 'ի նոսա Սթրեւեցքն հաւատարմագոյնք առ Սոփիա . այլ և երեք օմանք 'ի նոցանէ՝ որ գրով սաղատանաց հրաւիրեալ էին զՍոփիա 'ի գահ՝ 'ի վանդակաւ սրատս երկաթիս պատուհանից նորա կախեալ սպանան, և 'ի նոսա որ գրեացն զաղերսագիրն՝ 'ի ձեռին ունէր զայն : Մի օմն 'ի պատրաստելոցն 'ի գլխատումն գոչեաց առ այլա՝ տեղի տալ 'ի բաց, զի ինքն նախ առցէ զմահացու հարուածն . յորմէ 'ի գուժ շարժեալ Պետրոսի՝

զերծոյց զնա, և այլ ևս ոգիս եօթն հա-
ղար, և վարեաց ընսանեօք նոցին հան-
դերձ 'ի Սիպիր, և զայլ Սթրեւեցան
յԱժտերիսան և յԱզով, արկեալ զամե-
նեսեան 'ի զինուորական պաշտամանէն,
և փոխանակեցին զտեղիս նոցա կանո-
նաւոր դունդք ութուտասն հետևակ
զօրաց, և երկու վաշտք հեծելոց:

Որչափ խիստ գտաւ Պետրոս 'ի պա-
տուհասել զյանցաւորսն, նոյնչափ ևս
առատաձեռն եղև 'ի պարգևս առ վաս-
տակաւորսն. հաստատեաց զկարգ աս-
պետութեան սրբոյն Անդրէի, և զնշան
պատուոյն բաշխեաց ամենայն զօրավա-
րաց արիացելոց 'ի սրտերազմունսն ընդ
Թաթարս և ընդ Օսմանեանս: Եւ 'ի
մեռանել Ղըֆոռայ ընդ այն աւուրս՝
արար նմա յուղարկաւորութիւն մեծ
յոյժ, յորում ինքնին գնայր 'ի ձև
սպայի զհետ այլոց զօրավարաց:

Այնուհետև վերստին ձեռն արկեալ
Պետրոսի 'ի նորոգութիւն ասպետութեն՝
բազմացոյց զզօրսն զգամաքայինս և զծո-
վայինս. կարգաւորեաց զտուրս հասից
և բաժից. հաստատեաց վարժոցս նա-
ւավարութե և լեզուագիտութե, և ետ
Թարգմանել և տպագրել գիրս բազումս
զգիտութեց և զարուեստից, և առան-
ձին հրովարտակաւ սրատուիրեաց ամե-
նեցուն ուղեգնացութիւնս առնել՝ զի
հմտացին արտաքնոցն իրաց:

Զամն ետ սկսանել Ռուսաց 'ի յուն.

վարէ, զի յառաջ 'ի սեպտեմբեր ամսոյ
առնէին սկիզբն. ապա կամեցեալ բառ-
նալ զհանգերձան երկայնս և զմօրուս՝
սրատուիրեաց սրաշատականացն անմօ-
րուսս երևեւ առաջի իւր՝ դաղղիական
վերարկուաւ և եռանկիւնի գլխանո-
ցաւ: Իսկ վասն ամբօխին, որ պնդա-
պահք էին նախնի սովորութեց, կար-
գեաց հարկս ըստ մօրուաց և ըստ պճըղ-
նաւոր զգեստուց, և զգաղափարս վեր-
արկուացն զորս կամէր ագուցանել նո-
ցա՝ կախեաց 'ի գրունս քաղաքին: Եւ
զայս ամենայն հոգացաւ առնել, զի մի-
այլ ևս գարշեսցին Ռուսք յայլոց եւ-
րոպականաց, յորոց ունէին ուսանել զա-
րուեստս և զգիտութիս:

Իսկ ամբօխն երիցամբքն հանգերձ՝
բռնաւոր և անհաւատ ևս կոչէին զնա
վասն այսր ամենայնի նորաձեւութեանց:
Ծեբքն հարկեալք 'ի բաց զմօրուսն ար-
կանել՝ սրահէին զայն զգուշեաւ իբրև
զգանձ ինչ սրատուական, զի ընդ ին-
քեանս թաղեսցին. և ոմանք յազա-
տանւոյն յակամայս ուղևորեալք 'ի
Փարէզ և 'ի Վենետիկ և այլուր, և ար-
գելեալ զանձինս յիջևանան՝ յորս ա-
գանէին, ապա դարձ արարեալ պար-
ծէին՝ թէ չիք բնաւ նոցա տեսեալ ինչ
և կամ ուսեալ: Այս ամենայն բրտու-
թիք փոխանակ լքուցանելոյ զՊետրոս՝
առաւել ևս խրախուսէին զնա յառա-
ջիկայսն և 'ի ծանրագոյն փոփոխմունս:

Պատուիրեաց զի մի ոք չև յարբունս
 հասեալ՝ մտցէ 'ի կրօնաւորական վարս .
 արգել եպիսկոպոսաց վարել զաշխար-
 հական իշխանութիս և զճոխութիս . և
 որ մեծն է, պատէհ առեալ զմահ Ա-
 դրիանոսի պատրիարքին՝ չեդ 'ի նորա
 տեղի զայլ ոք, այլ զանձն ասաց գլուխ
 եկեղեցւոյն Ռուսաց՝ ըստ օրինակի թա-
 գաւորին Անդղիոյ . և զպաշտօն պա-
 տրիարքութե յանձն արար Սիւնհոգո-
 սի միում՝ որոյ ինքն էր գլուխ, և ան-
 դամք՝ երկու փոխանորդք նախագա-
 հին, չորք խորհրդականք, և չորք դա-
 տողակիցք, ամենեքեան ընտրեալք յե-
 պիսկոպոսաց և 'ի վարդապետաց :

Յետ այնորիկ առ 'ի պարապեցուցա-
 նել զմիտս Ռուսաց 'ի նորաձևութեց
 անախ 'ի պատերազմականս, կամեցաւ
 առնուլ 'ի Շվետաց զԻնկրիա, զի և 'ի
 Պալթիկ ծովուն կալցի զնաւահանգիստ :
 Վասն որոյ միաբանեալ ընդ թագաւո-
 րացն Դանեաց և Ղեհաց ոսոխացն Կա-
 րոլոսի ԺԲ, Շվետաց արքայի, որք և
 երկուստեք յարձակեալ աւերէին զաշ-
 խարհն Շվետաց, յամին 1699 առա-
 քեաց խնդրեաց 'ի Կարոլոսէ իրաւունս
 վասն թշնամանացն՝ որովք թշնամա-
 նեալ ասէր զանձն իւր 'ի ճանապահոր-
 դել իւրում 'ի Տիկա : Յաւել 'ի նոյն և
 այլ պատճառս, և խաղացոյց 'ի Մոս-
 քուայէ զյառաջապահ գունդն, պա-
 տրաստեալ և ինքն գնալ զհետ նոցա

մնացելովքն 'ի պաշարել զՆարվա . այլ կամեցեալ բերան 'ի բերան խօսել ընդ Օգոստեայ արքային Լէհաց՝ որ եկեալ էր 'ի Նովկորոտ՝ յանձն արար զամենայն զգօրսն 'ի գուքսն Քառա , որով վրիպակ մեծ գործեաց :

Քանզի եհաս 'ի վերայ նորա կարողութազմութի զօրաց , և կոտորած մեծ հասոյց Ռուսաց , և զգուքսն հանդերձ այլովք ումամբք սպայիւք ձերբակալ արար . ապա զնոսա 'ի գերութե կալեալ՝ զայլ զօրականն արձակեաց ազատս : Ի հռչակաւոր մարտի անդ Նարվայի անկան 'ի Ռուսաց ոգիք քսան հազար , և 'ի Շվետաց երկու հազար : Եւ առին Շվետք թնդանօթս հարիւր քառասուն և հինգ , ումբաձիգս քսան և ութ , գրօշս հարիւր յիսուն և մի , նշանս քսան , թմբուկս երկոտասան , և զամենայն զկահ և զհամբար բանակին Ռուսաց :

Յուեաց յոյժ Պետրոսի բեկուճնայն , այլ իւրով բնիկ արութիւն ասէ ցՇէրէմեթով սսլարապետ հեծեղաղօրուն . «Գիտակ իսկ էի թէ յոլով անգամ յաղթիլ ունիմք 'ի Շվետաց . այլ հուսկ ուրեմն յաղթեսցուք նոցա : Խոյս տացուք առ այժմ 'ի մեծամեծ պատերազմաց , և փոքումբք աշխատ արացուք զնոսա » :

Տեսեալ Պետրոսի՝ զի կարողոս ոչ յառաջ ևս վարէ զյաղթանակսն , այլ 'ի Լէհս անդր ուշ առնէ , դարձաւ 'ի

Մոսքուա մնացեալ զօրօքն, ձուլեաց
 [Թնդանօթս երկերիւր քառասուն և
 երկուս, և սմբաձիգս երկոտասան, հա-
 լէցուցեալ զզանգակս մեծամեծ քա-
 ղաքաց աշխարհին. և կազմեաց երկո-
 տասան գունդս սաղասարտաւոր հեծե-
 լոց: Ասլա յամին 1701 իբրև ետես թէ
 բաւական ձեռն է նորա պայքարել
 ընդդէմ Շվետաց, առաքեաց 'ի Ղիվո-
 նիա զՇէրէմեթով ութուտասան հազա-
 րաւ: Ի թիւս գերեացն զորս գերեցին
 Ռուսք 'ի Մարիէնպուրկ քաղաքէ՝ էր
 և օրիորդ մի Մարթա անուն, 'ի ման-
 կութէ որք մնացեալ 'ի ծնողացն առ-
 երիցու ումեմն. և Պետրոս յանցանելն
 ընդ Ղիվոնիա տեսեալ զնա առ իշխանին
 Մենչ չեքովայ՝ հաճեցաւ յոյժ ընդ օ-
 րիորդն, և տարեալ 'ի Մոսքուա՝ յանձն
 արար զնա 'ի խնամն գերմանացւոյ ու-
 րումն արկնոջ, որ կայր յարքունի պա-
 լատանն: Սոյն այս օրիորդ է Կատարի-
 նէ Ա:

Մինչդեռ պատերազմ էր Ռուսաց
 ընդ Շվետս աստ և անդ, Պետրոս ոչ
 ինչ անտես առնէր 'ի կարևորացն առ
 պայծառութիւն ազգին իւրոյ: Մերձ
 յԱբբանկէլ կանգնեաց ամրոց մի ծո-
 վահայեաց. կոչեաց երէր 'ի Ղէհաստա-
 նէ, 'ի Սաքսոնիոյ և 'ի Շվեդիոյ հովիւս
 և հօտս խաշանց՝ վասն ասու. բազմա-
 ցոյց զարուեստագէտս, և 'ի նպաստ
 բարգաւաճելոյ վաճառականութիւն սկը-

աւ պեղել զՋրանցան որով կցի Տօնա-
ւիս դեռ ընդ Վոլկայի: Ապա խաղաց
գնաց յԱրքանկէլայ 'ի Նոթէպուրկ
քաղաք ամուր 'ի դրունս աշխարհին
Շվետաց, և աւուրս երիս մարտուցեալ
էառ զայն: Յետ այնորիկ սփռեաց ըզ-
զորս իւր ընդ Լիվոնիա, ընդ Ինկրիա, և
ընդ Քարէլիս, և ամենայն ուրէք յաղ-
թող գտաւ. և 'ի խրախոյս ժողովրդոց
իւրոց՝ մեծաւ հանգիսիւ յաղթանակի
եմուտ 'ի Մոսքուա:

Ի միւսում ամի էառ և զկղզին
Լուսթէլանտ. յայնմ կղզւոջ արկ ըզ-
հիմն դղեկի միոյ՝ զոր անուանեաց
Սանքթ-Փեթերպուրկ, այսինքն է Քա-
ղաք սրբոյն Պետրոսի. և եղև յետոյ ար-
քայանիստ քաղաք պետութեն:

Իսկ արքայն Շվետաց յարհամարհս
ունելով զզորութի Ռուսաց վասն խոր-
տակման նոցին 'ի Նարվա, առաւել
սլանծայր 'ի յաղթութիս իւր ընդդէմ
Լէհաց, և ոչ ինչ փոյթ առնէր սաշտ-
պանել իւրոյ աշխարհին:

Խաղաց այնուհետև Պետրոս 'ի Տերբդ
զորօք բաղմօք, և առեալ զայն մարտիւ
պատերազմի՝ դիմեաց 'ի Նարվա, և
ուժգին յարձակմամբ էառ և զայն՝ ան-
հնարին կոտորած 'ի վերայ հասուցեալ
բնակչաց քաղաքին: Իբրև խուժեցին
Ռուսք 'ի ներքս՝ արդէլ Պետրոս չսալա-
նանել զոք 'ի բնակչացն, և տեսեալ
զերկուս յիւրոցն զի չանասցին հրամա-

նին՝ ընդ սուր անցոյց զերկոսին միանգամայն :

Տիրեալ ապա բովանդակ նահանգին Ինկրիոյ՝ կացոյց ՚ի նմին կուսակալ զՄէնչ չիքով, որ ՚ի մանկութէ սպասաւոր էր առ ումեմն ծաղարարի, և իւրով ճարտարմտութբ յառաջագէմ գըտեալ ՚ի շինուորութե՝ կարգեալ էր ՚ի Պետրոսէ տեսուչ շինութե Բեթրպուրկայ :

Իսկ թէ քանի վաստակոց պէտք է ղեն ՚ի լիւր արկանել զմօտակայ լճական Բեթրպուրկայ՝ յայտ է և յայժմու գրից նորին, և յանբաւ մարդկանն կատորածէ առ սարսաօք նորա ՚ի շինութեն : Կանգնեցան ՚ի նմա տունք բաղումք և ամբարանոցք և ամրոցք, և նաւարան մի, և խանութք, դպրոցք, և ասպարանք :

Սակայն տգիտութի և պնդութիւն Ռուսաց ոչ սակաւ աշխատ արարին զՊետրոս ՚ի շինութե քաղաքին : Քան զի ընդ յօրինիլ Բեթրպուրկայ տամբք և դպրոցօք, համբաւեցաւ ամենայն ուրեք՝ եթէ գեան Նեւա, որպէս գուշակեաց ոմն սուտ մարդարէ, բարձրանալ ունէր երբեմն մինչև ՚ի կատար եղևին ծառոյն՝ որ մերձ ՚ի դղեակն կայր : Եւ հաստատակն զգուշակութին նշանաւն արտատուելոյ պատկերի սրբոյ Ատուածածնին որ էր յեկեղեցւոյ անգ հուպ ՚ի ծառն : Այլ Պետրոսի քննեալ զիրան,

և 'ի վերայ հասեալ խաբեպատիր հնարից չարախոհ մարդկան՝ առանձին հրովարտակաւ ջրեաց զերկիւղն սնտոի :

Իբրև ազգ եզև Պետրոսի՝ էթէ արքայն Շվետաց յետ կացուցանելոյ թաւաւոր 'ի Լէհս փոխանակ Օգոստեայ զՍտանիալաւ, 'ի նեղ արկեալ և զՕգոստոս՝ խաղաղութի արարեալ է ընդ նմա, կամէր փութալ 'ի թիկունս մտերմին իւրոյ Օգոստեայ . այլ իմացեալ՝ զի Կարոլոսի զերեսս հաստատեալ էր արշաւել 'ի Ռուսիա, ետ ամրացուցանել զգղեական Մոսքուայի զԲրեմլին և զԲիթայ, և սպարաւտեցաւ ամենայն զօրութիւն զգէմ ունել արշաւանին :

Կարոլոս գաղտ սրացեալ զաթամանն Տոնոբի խաղախաց զՄաղեփիփա, որ ցանգ թշնամի գոլով Պետրոսի՝ ընդամս քսան զհաւատարմութի կեղծէր առ նա, ազգ արար նմա, զի ընդ մտանել իւր 'ի փոքրն Ռուսիա՝ գլուխ ամբարձցէ իւրովքն հանգերձ ընդգէմ Ռուսաց : Եւ Մաղեփիփա կազմեցաւ վեշտասան հազար արամբք ընդառաջել նմա :

Ապա յամին 1708 խաղաց Կարոլոս 'ի Լիթուանիոյ, և եմուտ անխափան 'ի Ռուսիա, անց մեծաւ համարձակութիւն ընդ բազում քաղաքս փոքունն Ռուսիոյ և եհաս մինչև 'ի Մոհիլեվ . ակն ունէր՝ թէ յայնկոյս Տնեբերայ գտցէ համարս զօրաց իւրոց ըստ խոստմանն Մաղեփ

փայ . այլ նա խորտակեալ 'ի Ռուսաց՝
հազիւ անկաւ առ Թագաւորն Շվետաց
հաղար և հինգ հարիւր խաղախօք :
Յաւելին և Ռուգք ասրականել աւերել
չուրջանակի զերկիրն , զի մի՛ այլ ևս յա-
ռաջ խաղասցեն Շվետք . և Կարոլոս
դարձաւ դէս յՈւքրանիա՝ ոչ մնալով
գալստեան Լէօվէնհաւփոգ անուն զօրա-
վարին իւրում 'ի Ռիկայէ բազմութի
զօրաց :

Պետրոս առեալ զմասն մի զօրականին՝
խաղաց ընդդէմ Լէօվէնհաւփոգայ , և
զմնացեալսն տուեալ 'ի ձեռս Շերէմե-
թովայ արձակեաց յՈւքրանիա 'ի վե-
րայ Կարոլոսի : Ինքն պատահեաց զօ-
րավարին Շվետաց , և ահագին քաջու-
թի՛ յարձակեցաւ 'ի վերայ : Ի խռան
անդ մարտին գոչեաց , ասեն , Պետրոս
առ խաղախան վերջապահս , զի թէ ոք
կամ թէ ինքն իսկ ընդ կրունկն դառ-
նայցէ , դիտապաստ արկցեն զնա՝ ի տեղ
ւոջն : Եւ տարաւ յաւուր յայնմիկ
յաղթուի մեծ , որ և առաջին էր Ռու-
սաց սակաւաւորաց քան զկանոնաւոր
զօրս թշնամեաց բազմագոյնս՝ յաղթող
հանդիսանալ :

Մինչդեռ Պետրոս հանդէս յաղթա-
նակի կարգէր 'ի Սմոլենսք՝ էառ զուր
և զայլոց յաջող ելեց յԻնկրիոյ . ապա
առաքեաց զՄենչչիքով 'ի վերայ Մա-
զէփփայ . և նորա պատնէշ պաշարմամբ
առեալ զՊատթուրին քաղաք նորա , այ-

րեաց զհամբարան սրատրատտեալս վասն
Շվետաց, և կարգեաց աթաման փոխա-
նակ Մաղեփիայ զԱբորուպալ :

Իսկ Վարդուսի ոչ ինչ սրաարեկ լեալ
ընդ արկածս իւր՝ խաղաց քսան և վեց
հազարու, անց ընդ գեան Տեսնա և Ե-
հաս մինչև յերկիրն Չափոսոժաքի Խա-
ղախաց, որք վաղագոյն միաբանեալ էին
ընդ Շվետս ՚ի ձեռն Մաղեփիայ : Կա-
րուոս նորօք հանդերձ պաշարեաց զքա-
ղաքն Փողթաւա, որ լի էր համբարօք .
այլ այնպէս արխարար զգէմ կալան նմա
Խաղախք քաղաքին հաւատարիսք առ
Ռուսս, զի յերկարել պաշարմանն պա-
րապ կալաւ Պետրոս ժամանել անդր
յամին 1709, ՚ի 4 յունիսի :

Չառաջինն կամեր առանց մարտի ա-
զատել զքաղաքն ՚ի պաշարմանէն . այլ
իրիւ ետես զի պակասեալ էր քաղա-
քացւոցն վաւօգ փոշի հրազինուց, ամ
մերձեցոյց զզօրս իւր ՚ի բանակն Շվե-
տաց : Աւուրք յառաջ քան զպատե-
րազմն ել Վարդուս գիշերի գիտել զքա-
նակն Ռուսաց, և ՚ի գնդէ ուստէք Խա-
ղախաց վիրաւորեցաւ հրազինու ՚ի
բարձան, և անկաւ ՚ի մահիճս : Սակայն
՚ի վաղիւ անդր ՚ի 27 յունիսի հրամայ-
եաց հանել զինքն սրագարակաւ ար-
տաքս, և յարձակեցոյց զզօրս իւր կա-
տաղարար ՚ի վերայ Ռուսաց : Յարձա-
կեցան և Ռուսք ՚ի հանդիպոյ, և գունդս
վեց հետևակաց և տասն վաչոս հեծե-

րոց 'ի բաց հատեալ 'ի բանակէն Շվե-
 տաց արկին յանտառան, և առին դրօշս
 չորեքտասան : Անդ խոցեցաւ զօրավարն
 Շվետաց Ռէն, և զօրավարն Պաւր հար-
 կեցաւ սակաւ մի յետս յետս գնալ՝ մին-
 չև ելցէ հետեակազօրն Ռուսաց 'ի պատ-
 նըշացն . որք իբրև ելեալ ճակատեցան
 կացին հանդէս Շվետաց, յարձակե-
 ցան միանգամայն կողմանքն երկոքին և
 բաղխեցան ահագին սաստկութիւնդ ի
 րեարս . այլ յետ կրկին ժամուց 'ի փա-
 խուստ դարձեալ Շվետաց՝ անկան յան-
 տառն՝ յորում յառաջ ճակատեալ էին :
 Հարան խորտակեցան 'ի Մենշ չիբովայ և
 յայլոց զօրավարացն Ռուսաց և ա-
 ռաջին փախուցեալքն յանտառամէջս
 անդր . և ձերբակալ եղէն երևելի երևե-
 լի զօրավարք Շվետաց հինգ, և բազում
 սպայք և զօրականք, և տան հազարք
 'ի նոցանէ անկան 'ի աեղի ճակատուն,
 թող զցրուեալն ընդ անտառս և ընդ
 արտորայս : Գտաւ և պատգարակն Կա-
 րոլոսի, 'ի մի կողմն խորտակեալ 'ի ռըմ-
 բէ : Սակայն և 'ի բանակէն Ռուսաց ան-
 կան ոչ սակաւք, և Պետրոս անգամ
 ընկալաւ գնդակս հրազինուց 'ի դլխա-
 նոցն և 'ի թամբս երիվարին : Այս այն
 բազմահազակ պատերազմ է Փոլթա-
 ւեան, յորմէ յոլով այլափոխ գէսք
 զհետ եկին ընդ ամենայն Եւրոպա :

Քանզի իբրև ազդ եղև խորտակումն
 Շվետաց, և փախուսան Կարոլոսի յեր-

կիրն Տաճկաց 'ի Պէնտէր, աճապարե-
ցին Լէհք և Դանիք և Բրուպ և Գեր-
մանացիք, ևս և Անդղիացիք, հաստա-
տել զգաշն բարեկամութե ընդ Պետրո-
սի, որ եկեալ էր 'ի պատերազմէ անտի
'ի Լէհաստան:

Դարձաւ Պետրոս այնուհետև 'ի Մոս-
քուա, և արար մեծ և փառաւոր հան-
դէս յաղթանակի: Եւ մինչդեռ Շէրէ-
մեթով և այլ զօրավարք նորա 'ի կող-
մանս կողմանս յաղթութիս գործէին և
քաղաքս բազումս առնուին, ինքն և ևս
բարեկարգէր զիրս իւրոյ աշխարհին, և
զարդարէր զԲեթրսուրկ: Վանդնեաց
'ի նմա զեկեղեցի սրբոյն Սամփսոնի 'ի
յիշատակ պատերազմին Փուլթաւայի.
և զմերձակայ վայրս եկեղեցւոյն զար-
գարեաց հոյակապ շինուածովք ըստ
արգի օրինաց ճարտարապետութե, և
զուարճալի դարաստանօք: Չնոյն հրա-
մայեաց առնել և զօրավարաց իւրոյ և
իշխանաց, զորս ըստ արդեանց վաստա-
կոցն մեծապէս սխարգւօք ճոխացու-
ցեալ էր:

Այն ինչ զերծեալ Պետրոսի յահա-
գին ոսոխէն՝ պատրաստէր ձեռն մխել և
ինքն 'ի տասնամեայ պատերազմն որ
սակս յաջորդութե թագաւորացն Սպա-
նիոյ յուզէր յԵւրոպա, յանակնկալ
պահու հարկեցաւ ելանել ընդդէմ Օս-
մանեանց, Քանզի միջնորդութեն Փո-
նեաթովպեայ բարեկամին Վարուսի:

մեծաւ սիրով ընկալան Տաճիկք զար-
քայն Ըվեռաց, և խոստացան օգնական
լինել նմա զօրօք մինչև հասցէ յառա-
ջին իշխանութի իւր: Ապա ըստ բողո-
քոյ դեասպանին Ռուսաց հարկեցան ար-
ձակել զՎարդուս 'ի Պէնակերայ հինգ
հարիւր տաճիկ զօրականօք մինչև 'ի
սահմանս Լէհաց, և անդ տալ զնա 'ի
ձեռս զօրականացն Ռուսաց՝ զի ածցի
յերկիր իւր, առանց այլ ևս բանագնաց
լինելոյ ընդ Լէհս: Այլ Փոնեաթովքի
և դեասպանն Գաղղիոյ ամբաստան եղէն
առ թագաւորն սուլթան Ահմէտ զվէզի-
րէն՝ որպէս թէ կաշաւեալ իցէ նորա
'ի Ռուսաց, և թագաւորն արգելեալ
զդեասպանն Ռուսաց 'ի յԵաի դուէ՝
հրատարակեաց զպատերազմ՝ ընդդէմ
Ռուսաց, ասելով եթէ Պետրոս ընդ-
դէմ առաջնոց դաշանցն գրաւեաց
զԼէհս և զյսաղախս 'ի սահմանացն իւ-
րոց, և թէ շինեաց բերդս և ամրոցս 'ի
սահմանադլուխ տեղիս, և զի կարգեաց
զօրս պարասպարհս 'ի Քամենից, զի
անախ դիւրամուտ լեալ 'ի Մոլտաւիա՝
յանկարծակի արշաւեսցէ 'ի վերայ Օս-
մանեանց:

Իբրև ազգ եղև Պետրոսի, պատուէր
յղեաց վաղվաղակի առ իշխանն Մի-
քայէլ Վոլիցին որ 'ի Լէհս էր՝ զի խա-
ղասցէ 'ի սահմանս վաղաքիոյ տասն
վաշաիւք սաղաւարտաւոր հեծելոց:
հրամայեաց և Շէրէմեթովայ թողուլ

զԼիվոնիա, և քսան և երկու գնդիւք զօրաց խաղալ 'ի սահմանագլուխս Օսմանեանց 'ի Վէհաստան : Ապա թողեալ զՄենշ չեքով 'ի Բեթրպուրկ՝ գնաց 'ի Մոսքուա, ուր հրատարակեաց զպատերազմ՝ իւր . կարգեաց հաշակաւ ծերակոյս մի արանց ութից 'ի տեսչութի իրաց պետութենն, և աւանդեաց նոցա զկարգաւորութիս կարևորս առժամայն և առ յապա, և ստակեալ յայտնապէս ընդ Կատարիներայ՝ ծանոյց զնա գշտոյ Ռուսիոյ, և նովաւ հանդերձ խաղաց գնաց զհետ զօրաց իւրոց 'ի կողմանս Վալաքիոյ :

Պրանքովան գուքս Ռւլահաց խոստացաւ Պետրոսի զօրս և համբարս ընդգէմ՝ Տաճկաց . զոր իբրև զգաց սուլդանն՝ առաքեաց գուքս Մոլտաւիոյ զԴեմեար Քանթէմիր, սատուիրեալ նմա ուծացուցանել զՊրանքովան 'ի Ռուսաց . այլ նա և ինքն իսկ միաբանեաց գաղտ ընդ Ռուսս 'ի հասանել Շէրէմեթովայ յԵաշ : Մեծապէս առիթ եղև այսոցիկ բանագնացութեց պատրիարքն Երուսաղէմի, որ 'ի Մոլտաւիա էր յայնժամ . զի ասէր նա . գտաւ 'ի շիրմին Կոստանդիանոսի բան մարգարէականն, եթէ Ազգ մի շէկ վանեացէ զՏաճիկս յԵւրոպայ : Տեսեալ Պրանքովանայ ըզմիաբանել Քանթէմիրայ ընդ Ռուսաց, խորշեցաւ ինքն 'ի նոցանէ, և զնպաստն զոր խոստացեալ էր Ռուսաց՝ գարձոյց

յՕսմանեանս . և սխարիարդն Երուսաղէմի փախեալ :

Իսկ Պետրոս յանցանել իւրում ընդ Լէհս՝ հաստատեալ ընդ Օգոստեայ զառաջին ուխտ միաբանութիւն ընդդէմ Օսմանեանց , իբրև եկն անց ընդ գետն Տնեսութեր՝ խորհուրդ կալաւ ընդ զօրավարս իւր , և ամենեքեան ասէին՝ անյապաղ գիւնագրաւ լինել առանց մնալոյ դաշտեան այլ ևս զօրաց : Միայն զօրավարն Ալլարթ լուռ ևեթ կայր . և ՚ի հարցանել Պետրոսի թէ զինչ կարծիք իցեն նորա , ասէ . « Դրպէս ինձ թուի , գիրք զօրացն մերոց ամենեկին հանդէտ են գրից զօրացն Շվետաց առ Փոլթաւայիւ . այլ և ոչ յանհնարիցն ինչ է՝ թէ և մեք խաբիցիմք ՚ի դքսիցն Ալաքիոյ և Մոլտաւիոյ որպէս Կարոլոս ՚ի Մաղեփիփայ » : Սակայն չեղև լսելի խորհուրդ նորա . և հրամայեցաւ անցանել ըստ գետն Փրութ . ուր յանջրդութէ և ՚ի սոթոյ կորեալ բազմութի մարդկան և անասնոց . և Քանթէմիր արս սա կուս յոյժ քան զոր կարծելն էր՝ ած առ Պետրոս :

Ի վերոյ հասեալ կայր զօրացն Ռուսաց և վտանգ սոլոյ . այլ ՚ի մերձակայ լերանց Մոլտաւիոյ՝ ուր էին համբարանոցք Տաճկաց՝ հոգացաւ Պետրոս ածել զհամբարս ՚ի ձեռն զօրավարին Ռէնայ :

Գործ էր չտալ Տաճկաց անցս ընդ Փրութ , այլ նոքա աճապարեցին անցին

յայսկոյս, և անջրպետեցին ընդ զօրսն Պետրոսի և Ռէնայ: Պետրոս կամէր խոյս տալ 'ի կողմն Սիրէթ գետոյ և մընալ ժողովելոյ ամենայն զօրաց իւրոց. այլ վէզիւրն խաղաց մերձեցաւ 'ի բանակն Ռուսաց, և ճակատեցան կողմանքն երկոքին: Օամանեանք թաթարօքն հանդերձ էին աւելի քան զերկու հարիւր հազար, և Ռուսացն զօրք քառասուն և չորք հազարք: Վէզիւրն, որ էր Պալթաճի Մէհէմէտ փաշա, առաջնորդուծք շվէտ զօրավարի իւրոյ շուրջանակի փակեաց սրաշարեաց զՌուսս. և մինչդեռ Պետրոս 'ի գիւղագոյն վայրի կամէր զետեղել զբանակն, վերջասլահ զօրք բանակին իւրոյ հարան 'ի թշնամեաց, և ընդ ժամս հինգ սաստկապէս մարտ եղեալ ոչ զատեան 'ի բուն բանակէն:

Ասլա 'ի բողխիլ Ռուսաց և յառաջակողմն կուսէ՝ կանոնաւոր խաղացմամբն իւրեանց հարկեցուցին զզօրս Տաճկաց մեկնել 'ի բուն բանակն. այլ ոչ ինչ փոխեցաւ գժպատէհ գիրք բանակին իւրեանց՝ շուրջ պատեալ գոլով 'ի թշնամեաց: Թող զայն, այլ և սովն 'ի վերայ հասեալ էր, և հիւանդք բազում յոյժ էին 'ի նոսա. խոյս տալ չէր հնար, զիմագրաւ լինել ևս երկիւղալի, զի վտանգ էր կենաց ինքնակալին և զչխոյլին, և ընտիր ընտիր զօրաց:

Յանհնարին 'ի տագնապ ժամուն՝ մեկնեցաւ Պետրոս ցաւագին և դառնա

ցեալ ոգւով 'ի վրան իւր, պատուիրեալ զի մի՛ ոք մտցէ առ ինքն : Կատարինէ, որ յանգ խորհրդական և ողորբին էր Պետրոսի իւրով զԿօն բանիւք, համարձակեցաւ եմուտ առ Պետրոս խորհրդով զօրավարացն, և ամօքեաց զնա, և էառ հրաման փորձ փորձել վասն խընդրոյ խաղաղութն : Շէրէմեթով գրեաց թուղթ առ Վէղիրն, յորում խոստանայր դարձուցանել առ թագաւորն Օսմանեանց զՎլզով, քանդել զամուրան նորոգ կանգնեալս, և շնորհել Կարոլոսի անխափան անցս յերկիր իւր : Ապա հաստատեցին զօրավարքն, զի թէ Օսմանեանք ոչ հաւանեալ պայմանաց խաղաղութեն՝ հարկ արասցեն Ռուսաց անձնատուր լինել, աներկմիտ խիզախեսցեն յարձակել պատառել զզօրս նոցին և անցանել :

Հաւանեցաւ վէղիրն և զիջաւ 'ի հաշտութի, զի և զանձկութի զօրացն Ռուսաց ոչ քաջ գիտէր, և խիթայր ևս թէ հասցեն ընդ հուպ և այլ զօրք Պետրոսի 'ի Ղեհաստանէ : Եւ Պետրոս 'ի 22 յուլիսի մեկնեցաւ յափանց անտի Փրութ գետոյ, և սկսաւ քանդել զամրոցն Սամարայ և զայլս ոչ ինչ այնպէս կարևորս . ապա կատարեաց և զայլ սպամանս ուխտին :

Արժանի յիշատակաց վէհանձնութի եցոյց աստանօր Պետրոս, որով ոչ հաւանեցաւ տալ 'ի ձեռս Տաճկաց զՔան-

Թէ՛միր . այլ ասէ . «Ալա համարիմ Թո-
ղուլ 'ի ձեռս Տաճկաց զամենայն եր-
կիրս իմ մինչև 'ի Քուրսք , քան մաս-
նել զհաւատարմութի իմ . զի զերկիրն
Թերևս անգրէն առից յաւուր միում ,
այլ հաւատարմութեանն կորուստ ան-
գիւտ է » :

Ձհեա բազում շփոթից Թագաւո-
րացն Դանեաց և Բրուսիոյ , Պետրոս
նորոգ դաշնագրութե՛ք 'ի ձեռս իւր կա-
լաւ զԻնկրիա , զԲարեւիա , զԵսթոնիա ,
և զքաղաքսն Ախպուրկ , Նարվա , և Տէ-
վէլ , զորս առեալ էր 'ի Շվետաց . և 'ի
Տէվէլ շինեալ նաւահանգիստ մեծ՝ ե-
լից զայն նաւուքն բերելովք յԱնգղիոյ :

Ի բազմաց հետէ ցանկայր Պետրոս և
'ի նաւամարտի առնել միանգամ իւր
անուն : Ապա յամին 1713 , յորում
Ժամանակի ըստ կարգի յառաջագիմու-
թե՛ իւրոյ 'ի նաւաստականին՝ երրորդն
էր ծովակալ իշխանի , առաքեաց ընդ-
դէմ Շվետաց զծովակալն Ափրաքսին
հարիւր և ութսուն ցուկանաւուքն 'ի
Ֆինլանտիա 'ի հրուանդանն Ապօ , և ինքն
այլովք վեշտասան նաւուք սլատերազմի
մեծամեծօք խաղաց 'ի կողմն Տէվէլայ :
Բաղխեցան կողմանքն երկոքին . և ճիգն
Ռուսաց՝ յորոց միջի Պետրոս և մարտիկ
էր և նաւաստի և նաւուղիղ և զօրա-
վար , յաղթեաց ճգանցն Շվետաց , որոց
զօրավարէր Էրէնշիլտ փոխանակ ծովա-
կալի : Յետ երկուց ժամուց նաւամարտին

յաղթող եղէն Ռուբ և տիրեցին գոգ-
ցէս ողջոյն նաւատորմին Ըվետոս : Սա-
կաւք ոմանք և եթ ՚ի նաւացն Ըվե-
տոս զերծան ՚ի Սթոբոլս, և անդ առին
զգոյժն՝ զի վեշտասան հազար Ռուսաց
առեալ էր և զԱլանտ կղզի, և խռովե-
ցաւ ամենայն աշխարհն : Այլ Պետրո-
սի խնայեալ ՚ի զօրս իւր՝ փութացաւ ՚ի
Բեթրսուրկ ՚ի հանդէս յաղթանակի :

Նշանաւոր և շքեղ յոյժ եղև հան-
դէսն զոյս նուազ . զի իշխանն Ֆէոտոր
Ռոմատանովսքի՝ որ փոխանորդ լեալ էր
ինքնակալին ՚ի լինել նորա արտաքոյ աշ-
խարհին, տեսաւ բազմեալ ճոխութիւն
գահն արքունի զարդարեալ ամենայն
կայսերական նշանօք : Ակն եկաց առա-
ջի ծովակալն Ափրաքսին, և մատոյց առ
տեղակալ թագաւորին զյաղթականն
և զյաղթեալն, և դրուատեաց զգնացս
և զքաջութիւն երրորդին իւրոյ Պետրոսի
Ալեքսեյեվիչ, որ կայր անդէն խառն
ընդ այլս ՚ի սպայից : Յառաջ կոչեաց
զնա Ռոմատանովսքի և եհարց զանցս
նաւամարտին առ Անկութաւ, և Պե-
տրոս ճառեաց նմա կարգաւ զիրս պա-
տերազմին : Յայնժամ վկայեաց տեղա-
կալն՝ եթէ արժանի է Պետրոս սրատուոյ
փոխանակի ծովակալին, և ապա իջեալ
՚ի գահէ անտի, և զկայսերական զարդան
՚ի բաց եղեալ՝ մատոյց բազմեցոյց անդր
զինքնակալն : Անդ զի վառեաց Պետրոս
զամենեսեան ՚ի նախանձ փառաց հայ-

րենի աշխարհին՝ շարժեաց զձեռն իւր և
 ասէ . «Ի՞ դք ՚ի ձէնջ այր , եղբարք իմ ,
 որոյ քսան ամաւ յառաջ քան զայս ընդ
 միտ անցեալ իցէ թէ մարտ ունիցի եր-
 բէք յարդարել ընդ իս ընդ ալիս Պաւ-
 թիականին ՚ի նաւս ձերոյին կերտեալս
 ձեռամբ , և թէ քաղաք բնակութեան
 առնուցուիք յաշխարհս յայտոսիկ մե-
 րովս վաստակօք և արութիւն : Ո՞վ դք ՚ի
 ձէնջ գուշակ լինէր եթէ այսչափ մարդ-
 կան կրթելոց , այսչափ ճարտար ձեռա-
 գիտաց , այսչափ ժրաջան գործաւորաց
 բաղմութիւք գայցեն երբէք ՚ի բարգա-
 ւաճել զարուեստս ՚ի Ռուսիա : Անդ
 ուրեմն ՚ի Յունաստան զտեղի կալեալ
 երբեմն գիտութեց , անտի ծաւալեցան
 յառալիա , և ապա ընդ ամենայն Եւրո-
 պա . այլ ոչ և ՚ի Ռուսիա : Եւ պատ-
 ճառք , անխութութիւն մերոցն նախ-
 նեաց : Այսօր մարթի նոցին գիտութեց
 լինել և մեզ մասն ժառանգուէ , եթէ
 և դուք նպաստ լինիցիք իմոցս ջանից՝
 զժրութի և զհնազանդութի ՚ի մի կցոր-
 դեալ : Արուեստք շրջան առնուն յաշ-
 խարհի որպէս արիւն ՚ի մարմնի . և իցէ
 երբէք զի ՚ի միջի մերում հաստատեալ
 նոցա զաթոռ իւրեանց , աստի դարձ ա-
 րասցեն երբեմն ՚ի Յունաստան ՚ի վաղե-
 մի իւրեանց հայրենիս » :

Յեա այնորիկ հրամայեաց Պետրոս՝ զի
 ամենայն ապատանին ՚ի ժամադրեալ ա-
 ւուր ածցեն զոռալեաւ զորդիս իւ-

բեանց 'ի տասնամենից մինչև ցերեանա-
մեանս, զի ընտրեսցին 'ի նոցանէ զի-
նուորք վիճակաւ. և որոց դանդաղես-
ցին գալ 'ի կոչն, որպէս մինչև ցայնժամ,
սպառնացաւ յարքունիս առնուլ զամե-
նայն զինչս նոցա :

Որդի մի էր Պետրոսի յԵւդոքսիայ
կնոջէն իւրմէ Ալէքս անուն՝ քսան և
երկուց ամաց՝ ճոխ արտաքին ձրիւք,
այլ 'ի բարոյս խեռ և անկիրթ. վասն
որոյ կինն ած նմա հայրն իւր զիշխանու-
հին Աղլֆէնպուլթէլ զազգակից կայ-
սերն գերմանացոց Վարուսի Զ, զի-
մաստուն օրիորդն և զղուարթաբարոյ.
սակայն Ալէքս վաղ էթող զնա և դար-
ձաւ անդրէն յառաջին խառնագնաց
վարս իւր. որով հասոյց Պետրոսի վիշտ
մեծ :

Ի գալ ամին միւսոյ կամեցեալ Պե-
տրոսի առանձինն իմն փառաւորել զղըշ-
խոյն Վատարինէ վասն արիակտն հա-
մարձակութէն 'ի մարտին որ առ Ֆրութ
դեատվ, կարգեաց 'ի պատիւ նորա ըզ-
կարգ սրբուհւոյն Վատարինեայ յաւուր
յիշատակի նորին : Յաւելլաւ ուրախու-
թի արքունեացն Պետրոսի և գալստեամբ
դեսպանացն իւրոց 'ի Վոստանդնուպօլ-
սոյ՝ հաստատեալ զուխտ բարեկամուէ
ընդ Օսմանեանս :

Եւ յետ բազմապատիկ բարեկարգու-
թէցն և ջանից 'ի նպաստ բարգաւա-
ճելոյ վաճառաշահուէն Ռուսաց, յա-

մին 1717 անց դնաց գշխոյիւն հանդերձ
 'ի Գաղղիա . ուր մեծապէս պատուով
 ընդունելու թի գտեալ 'ի Թագաւորէն
 որ էր Լուդովիկոս ԺԳ , ուչի ուչով
 զննէր զամենայն զքաղաքական և զղի-
 նուորական կարգս , զհասարակաց տե-
 ղիս , զվարժոցս և զուսումնարանս և ըզ-
 գործարանս , և զմշակութիւն անգամ
 գիւղականաց աշխարհին : Տեսեալ զշի-
 րիմ աշխարհաշէն ծիրանաւորին Ռիչ-
 լեւայ՝ գոչեաց , ասէն , Պետրոս . «Ա՛յրդ
 մեծ . իցի՛ւ թէ դու առ իս էիր , և ես
 շնորհէի քեզ զկէս Թագաւորութե՛ ի-
 մոյ , և առ 'ի քէն ուսանէի զմիւսոյ կի-
 սոյն ունել զտնտեսութի՛ն » :

Ծանօթս կալաւ գոգցես ընդ ամե-
 նայն աւագորերոյն Գաղղիոյ , տեղե-
 կութիւնս կարևորս քաղելով յամենե-
 ցուն : Մատեաւ առ Աստուածաբանս
 անգամ Սորպոնեան ժողովոյն , և հնարս
 'ի նոցանէ խնդրէր միաբանելոյ զեկե-
 ղեցին Ռուսոյ ընդ հռովմէականին :
 Հաստատեաց ընդ Թագաւորին Գաղ-
 ղիոյ զգաշն բարեկամութեան , յորում
 Թագաւորքն Գաղղիոյ և Բրուսիոյ իսա-
 տանային միջնորդ լինել հաշտութեան
 Ռուսաց ընդ Շվէտս : Հաւան էր Պե-
 տրոս ընդ հաշտութիւնն , սակայն առ
 ժամն լուեաց՝ մնալով նախ աղաչանաց
 'ի Կարոլոսէ , և դարձ արար յերկիր
 իւր :

Այց արար կողմանցն նորոգ ստացե-

լոց. հաստատեաց նորանոր կարգս 'ի Բեթրպուրկ. ասպա անցեալ 'ի Մոսքուա՝ գնաց անտի 'ի Տարիցին մերձ 'ի Վոլկա, և արգել զարշաւանս Թաթարացն Կուսպանայ, և կանգնեաց բերդս ամուրս առ ամամբք Վոլկա և Տօնաւիս գետոց :

Իբրև դարձաւ անդրէն 'ի Բեթրպուրկ՝ հրատարակեաց մատեան իրաւանց, զոր տպագրեալ էր 'ի Տանցիկ. պահանջեաց զհամար տնտեսութեան տեղակալացն իւրոց, և գտեալ 'ի նոսա յանցաւորս՝ պատուհասեաց զնոսա :

Ընդ նոյն ժամանակս առաքեաց ըզքաջուսումն զոք 'ի խնդիր անցից 'ի հիւսիսոյ 'ի Հնդիկս, տուեալ ընդ նմա և ընծայս բազումս՝ զի մատուցէ խանից Թաթարացն, և առ տեարս տեղեաց տեղեաց՝ ընդ որս լինիցի նմա անցանել : Եհաս այրն մինչև յեօթանասներորդ աստիճան լայնութեան 'ի գետն Վէնա՝ որ Թափի 'ի սառուցեալն ծով. այլ խան տեղւոյն չետ նմա Թոյլ այլ ևս յառաջ մատչել, և դարձոյց 'ի տեղի իւր :

Ժամ է պատմել և զգէպս արքայորդւոյն Ալէքսի, յորում ոչ այլ իւրք երբէք արգարասցի խստութիւն հօր նորին Պետրոսի, բայց որչափ նախանձու նորոգութեան աշխարհին և տեղութեան բրտութեան և պնդութեան 'ի հին սովորոյթս :

Քանզի Ալէքս ըստ բուսոյ բարուցն

և ըստ անխնամ սննդեան 'ի ձեռս հնասէր և յամառոտ դաստիարակաց՝ յամենայնի հակառակէր մտաց և կամաց հօրն . որոյ կամեցեալ ուղղել զնա յանուղղայ գնացիցն՝ անադան ուրեմն կարգեաց նմին դաստիարակ զՄենչ չիքով, այլ 'ի զուր: Ամուսնացոյց զնա ընդ խոհական օրիորդի . այլ նա տաղտկացաւ 'ի նմանէ, և յառաջին խեռութիս իւր դարձաւ, մինչև մեռաւ և օրիորդն: Յայնժամ գրեացառ նա Պետրոս թուղթ կշտամբանաց և յանդիմանութե՝ հանդերձ սպառնալեօք մահու՝ թէ ոչ զգօնասցի: Եւ յայլում նուագի դարձեալ գրեաց նմա՝ կամ ուղղել զգնացս իւր և յաջորդել ինքեան յաթուռն արժանապէս, և կամ կրօնաւորել. ապա թէ ոչ՝ ասէ, կեալ քո և եթ զկնի մահուն իմոյ շատ է վեր 'ի վայր տապալել զպետուի Ռուոաց: Յանձն էառ Ալէքս կրօնաւոր լինեւ. և Պետրոս ամիսս վեց շնորհեաց նմա 'ի խորհել զիրացն, և ինքն յուղի անկաւ 'ի Ռուսիոյ:

Յայնժամ Ալէքս անհրաման 'ի հօրէն գնաց 'ի Վեննա, անտի 'ի Թիրոլո, 'ի Թուրին, և ապա 'ի Նէասպօլիս: Արձակեաց Պետրոս զհետ նորա զգօրագլուինն Տումեանցով և զխորհրդական իւր զԹուլսթօյ. և երկրորդս այս այր գուլով ճարտար 'ի գիւտս հնարից՝ եգիտ զաստատանարանն Ալէքսի 'ի բերդն անուանեալ Սանթէլփօ, և հաւանե-

յոյց զնա դառնալ Կալընդի իւր 'ի Ռուսիա :

Եկաց Ալէքս առաջի Պետրոսի 'ի Մոսքուա , և 'ի ծուներ իջեալ խնդրէր զներումն : Պետրոս յարոյց զնա , և եհարց նմա բազում ինչ , ոպառնալով նմա զմահ' եթէ ծածկեսցէ ինչ 'ի նմանէ : Ասաւ զնա 'ի սրահն մեծ , ուր էր ժողովեալ աւագանին , և անդ ետ ընթեանուլ զյայտարարութիւն պատրաստեալ , յորում ամբաստան լինէր զանուղլայ բարոյից որդւոյն , զհամախոհութէ նորա ընդ կուսակիցս հին սովորութեանց , զստահակ գնացիցն ընդ կնոջ իւրոյ , զգրժեւ ամուսնական հաւաստարմուէն՝ յաճախելով առ այլ կին յածաղդի , և զգնալոյն 'ի Վէննա և ամբաստան լինելոյ զհօրէն առ կայսրն , և խնդրելոյ 'ի նմանէ զօրս 'ի թիկունս , և յաւելոյր ասել . « Այսպէս ասա դարձաւ եկն որդին մեր . և թէպէտ արժանի մահու էր նա , այլ գորովն մեր հայրենի ներէ նմա դյանցանսն : Սակայն զմտաւ ամեալ զստահակութէ գնացս նորա՝ չկարեմք թողուլ նմա զթագաւորութի մեր , գիտելով քաջ՝ զի 'ի նախաախնս և 'ի կործանումն աղգիս և աշխարհիս դառնալ ունի այն : Վասն որոյ ըստ հայրենի իրաւանց մերոց և ըստ կայսերական իշխանութես՝ զրկեմք զորդին մեր զանգրանիկ զԱլէքս 'ի ժառանգութէ ամթողոյս Ռուսաց զհետ մեր . և կար-

գեալ յայտ առնեմք ժառանգ թագա-
ւորութեան մերոյ զորդին մեր զկրտսեր
զՊետրոս՝ թէսպէտ և դեռահասակ, առ
'ի չգոյէ այլոյ ուրուք արժանաւորի ոյ:
Այս վճիռ հրատարակեցաւ 'ի Մոս-
քուս յամին 1718 'ի փետրուարի 14.
և Ալէքս ստորագրեաց 'ի նամակին՝ ի-
րաւունս տալով վճռոյ հօրն: Յայն-
ժամ գնաց ինքնակալն 'ի մայր եկեղե-
ցին, և անդ վերստին յընթերցումն ետ
զվճիռն, ընդ որ հաւանեցան և ամե-
նայն եկեղեցականքն և ձեռն եգին
վճռոյն:

Կասկած կալան ոմանք՝ եթէ այսմ
ամենայնի մեծաւ մասամբ պատճառս
տուեալ իցէ Կասարինեայ մօրուին Ա-
լէքսի. և թերևս յիրաւի, որպէս թուի
յիրացն գիպելոց: Քանզի ոչ շատա-
ցեալ Պետրոսի այնու վճռով՝ խորհէր
եթէ յետ իւրոյ մեռանելոյ անշուշտ ոչ
կացցեն յակաստանի և Կասարինէ դըշ-
խոյն, և որդի նորին Պետրոս յերեսաց
Ալէքսի և կուսակցաց նորա. հարկ հա-
մարէր ապա արկանել զԱլէքս յարևէ:

Այլ տագնապ տարակուսանաց պա-
տեալ պաշարէր զնա, զի չգտանէր 'ի մա-
տեանս օրինացն իրաւունս խորհրդոց
իւրոց, մանաւանդ թէ զնորին հակա-
ռակն. զի յառաջ քան զամենայն ինքն
էր գլխաւոր ոսոխ և ամբաստան զոր-
դւոյն, և դատաւոր և վկայ: Սակայն
հնարեցաւ հաւաքեաց կուտեաց որչափ

ինչ գլուխս ամբաստանութեց մարթա-
 ցաւ գտանել զորդւոյն իբրև զգաւա-
 ճանէ և զմատնչէ : Ստիպեաց և զորդին
 ողորջով և սպառնալեօք՝ խոստովան լի-
 նել՝ եթէ կամեցեալ իցէ երբէք դաւել
 զհայրն, կամ թէ եղեալ իցէ ՚ի մտի
 ձեռն տալ ՚ի թշնամիս կենաց հօրն՝ ե-
 թէ երբէք ուրեք ՚ի վեր երևեսցին : Յայն-
 ժամ ետ նմա պատասխանի Ալէքս
 գրով, և տսէ . «Եթէ երբէք հրաւիրէին
 զիս ապստամբք հըօք յուրեանց կողմն
 կենդանեաւ իսկ հօրդ խնոյ, հաւաս-
 տեաւ կուսակից նոցին լինէի» :

Յետ չորից ամսոց քաղեաց ՚ի բերա-
 նոյ Ալէքսի և զայլ խոստովանութիւն
 հանգէտ առաջնոյն . սակայն և այն ոչ
 բաւական սրտձառք էին սուրանանելոյ
 զնա : Առաքեաց ապա առ դատաւորս
 և առ եպիսկոպոսունա, և խորհուրդ
 հորցանէր ՚ի նոցանէ վասն առաջիկայ
 իրացն՝ զի կարացէ անստգիւտ խղճիւ
 յառաջ վարել զխորհուրդն : Եւ նոքա
 խորհուրդ ՚ի մէջ առեալ՝ պատասխանի
 ետուն ինքնակալին եթէ տէր է նա կե-
 նաց և մահու ըստ արարչադիր կարգին .
 եթէ կամիցի զմահ որդւոյն՝ հրաման է
 նմա ՚ի քրոց սրբոց, յօրինացն Մովսէսի
 և յօրինակէն Աբեսաղովմայ (որ այլ
 ազգ էր յառաջիկայ իրացն) . և եթէ
 հաճեսցի ներել նմա, օրինակ առցէ նե-
 րողամտուէ ՚ի Քրիստոսէ . «Սիրտ թա-
 քաւորի ՚ի ձեռս Աստուծոյ է, ասէն .

ընտրեա՛ զկողմն յոր ձեռն տեառն ա-
ռաջնորդեսցէ քեզ” :

Յօրինեցաւ այնուհետև յՃիւղ դա-
տապարտուէն Ալէքսի՛ ի բերանոյ ատե-
նին . և իբրև ընթերցաւ այն հրատարա-
կաւ , թալուկն մահու անկաւ , ասէն ,
զԱլէքսիւ . և ապա հարեալ ՚ի կաթուա-
ծէ մեռաւ : Են որք ասէն եթէ Պետրոս
ինքնին իւրով ձեռամբ գլխատեալ իցէ
զորդին . այլք՝ թէ ՚ի ձեռն այլոյ ու-
րուք լեալ իցէ գլխատումն . և կէտք՝
թէ ՚ի թունաւորեալ խարանէ մեռեալ
իցէ Ալէքս : Այս ինչ հաւաստի է , զի
Պետրոս կարգեաց նմա յուղարկաւո-
րութի մեծ . և ապա սլատուհասեաց
զբազումն իբրև դաւակիցս Ալէքսի :
Աբրահամ Լափուքին եղբայր Եւդոք-
սիայ մօրն Ալէքսի , Ալէքսանդր Քիբին ,
Էպիսկոպոսն Ռոսթովայ , Փուսթիննոյ
դրան երէցն Եւդոքսիայ , սպանան ա-
նուօք : Ալէպով զօրավար մտերիմն Եւ-
դոքսիայ սպանաւ ՚ի կախաղանի : Երի-
ցունք և միանձունք յիսուն և հինգ զո-
վողակիցք Ալէքսի՛ գլխատեցան շուրջ
զկախաղանաւն . և այլք էին որք ըստ
նոցին օրինակի սպանան , էին ևս որք
յաքսորս աւաքեցան . և Եւդոքսիա
ինքնին ձաղկեալ յերկուց հաւատաւո-
րաց՝ արգելաւ ՚ի մենաստան ուրէք ՚ի
նորն Լատոկա :

Սակայն ոչ յասլաղեաց սողիւտ խըղ-
ճին տագնապեցուցանել զՊետրոս , և

ասպաշաւն այն դարձոյց նմա անդրէն զփառս առաջնոց վաստակոցն : Յետ սակաւ ժամանակի և մահ որդւոյն Կատարինեայ՝ զոր կացուցեալ էր ժառանգ թագաւորութեանն՝ յաւելլեալ 'ի մահ անդրանկին իւրոյ, Լքոյց զնա 'ի քաջութի սրտին . մերժեցաւ այնուհետև 'ի զգօնութի մտացն, անկաւ թուլացաւ 'ի պնդուէ հոգւոյն, և փակեալ զանձն իւր 'ի Փեթերհոֆ՝ եղ 'ի մաի սովամահ վճարիլ 'ի կենաց, սպառնալիս մահու կապեալ 'ի վերայ՝ թէ որ իշխեսցէ մատչել առ նա : Եկն եկաց առ դուրս նորա քաջ իշխանն Տոկորուքի, և բազխեաց ուժգին : Ի ձայն սպառնական գոչէր թագաւորն 'ի ներքուստ, զի թէ իշխեսցէ յերեսս անկանել նմա՝ բարձրէ զգլուխն 'ի նմանէ : Այլ Տոկորուքի պնդէր և ասէր . « Բնց զի խօսեցայց ընդ քեզ : Հասեալ կամ 'ի ծերակուտէ անտի հարցանել ցքեզ՝ թէ զո՞ կարգեսցես ինքնակալ փոխանակ քո, որովհետև դու հրաժարես յաթուոյդ » : Ոչ հանգարտեաց Պետրոս արիական սիրոյ իշխանին, եբաց զդուրսն և անկաւ ըզպարանոցաւ նորա . անսաց զգօնութի խրատուց ճշմարիտ բարեկամին, և էառ վերապին 'ի ձեռս զսանձ կառավարութե աշխարհին : Առցուք և մէք անդրէն զթել պատմութե գովելի գործոց ինքնակալի :

Մինչդեռ 'ի Մոսքուա կատարէր
 դասն Ալեքսի, արքայն Շվետաց փու-
 թայր խաղաղութիւն առնել ընդ Ռու-
 սաց՝ միջնորդելով բազմահար խորհրդ-
 դականին իւրոյ քաջի, որում անուն
 էր Կսէրց : Հաւանեցաւ և Պետրոս, և
 եղև ժողով մեծ յԱլանտ կղզի, յո-
 Րում նախ քան զսոյմանս ուխտին ցու-
 ցին թագաւորքն երկոքեան զարդիւնս
 բարեկամութե . զի Կարոլոս դարձոյց
 Պետրոսի զերկոսին զօրավարս նորա
 զԹրուպեցքոյ և զՎոլովին, որք անդըս-
 տին 'ի պատերազմէն Նարվայի գերի
 վարեալ կային 'ի Շվետս . և Պետրոս
 դարձոյց Շվետաց զմարաջախտն Էրէն-
 շիլտ, զոր իւրով ձեռամբ կալեալ էր
 նորա 'ի վերջնում նաւամարտի անդ իւ-
 րում : Իսկ 'ի դաշնադրութե ուխտին
 այս սոյմանք հաստատեցան 'ի միջի .
 և, Դարձուցանել Պետրոսի առ Շվետս
 զՖինլանտիա և զմասն Քարէլիոյ, 'ի ձե-
 ոին սրահեալ զՎիպուրկ, զԻնկրիա,
 զԵսթոնիա և զԼիվոնիա . ք, Օգնական
 ըինել Շվետաց՝ զի առցեն անդրէն
 յԱնգղիացոց զՓոմերանիա և զՊրէմա
 և զՎերտէն . ք, Հաստատել զդուքսն
 Մէքլէմպուրկայ յիւրում տէրութեն .
 ք, Զի հաստատեցէ Պետրոս յաթուռն
 Լեհաց զՍտանիսլաւ :

Ընդ այն աւուրս մեռաւ Կարոլոս
 ԺԲ, 'ի պատերազմի . և Պետրոս դար-
 ձաւ ուշ ունել զարդարելոյ աշխարհին

իւրոյ : Բազմացոյց զգործարանս աղգի
 աղգի իրաց , ևս և յախճապակաց , մե-
 տաքսի , ոսկերչաց , չուխայից , հողան-
 դեան կերպասուց , և սարսիկ գիպա-
 կաց անգամ ոսկեթելից : Առանձին
 ժողով խորհրդականաց կացոյց 'ի տըն-
 տեսել զպեղումն հրահալից , և ճոխա-
 ցոյց զգործարանս զինուց : Պեղեաց և
 ջրանցս՝ որովք միացոյց զգեան Նեւա
 ընդ այլում նաւարկելի գետոյ , և գիւ-
 րացոյց յոյժ զերթևեկ վաճառականաց
 'ի Բեթրպուրկ : Յառաջ վարեաց և ըզ-
 պեղումն մեծի խրամին՝ որով կցել ու-
 նէր ծովն Կասպից ընդ ծոցոյն Ֆինլան-
 տիոյ և ընդ Ովկիանու : Շինեաց և զնոր
 քաղաքն Լատոկա : Եւ յայտմամե-
 նայնի ոչ միայն ինքնին անձամբ վերա-
 տեսուչ կայր , այլ և իւրով իսկ ձե-
 ոամբ զձևսն նկարագրէր , զյատակսն
 չափէր , և վաստակէր ևս 'ի գործ : Մե-
 ծատանց պատուէր հրամանի կապեաց
 'ի վերայ՝ վայելուչս կանգնել տունս
 ըստ ճարտարապետական կարգաց . կար-
 ճեաց զխենեչութիս 'ի հանդերձս , և
 զզեղձմունս 'ի խաղս բախտի : Յամենայն
 քաղաքս կարդեաց դպրոցս թուաբա-
 նութէ . եբարձ 'ի միջոյ զմուրողս , կա-
 ոուցեալ աղքատանոցս և որբանոցս .
 և միօրինակս արար ընդ ամենայն Ռու-
 սիա զչափ և զկշիռ : Կարգս եղ և օրի-
 նաց դատաստանի՝ ըստ կարի 'ի համա-
 ոտն սահմանեալ զվճիռ դատին : Հաս-

տատեաց վարժոցս արտաքին իրաց, պատերազմի, ծովակալութե, արքունի եկամտից և վաճառականութե, և կարգեաց ՚ի նոսա մանկունս ազատաց թըւով: Հրատարակեաց և մատեան օրինաց պարզ և համառօտ ՚ի ռուս և ՚ի գերմանացի բարբառ. և ուշի ուշով հսկէր ՚ի ճշգրիտ կատարումն օրինացն:

Տեսեալ Գէորգայ Ա, թագաւորին Անգլիոյ, և այլոց ոմանց թագաւորաց Եւրոպայ զճոխանալ Պետրոսի յամենայնի, և զանցանել զբազմօք ՚ի նոցանէ, միաբանեցին՝ որպէս թէ իրաւունս առնել արքային Շվետաց և գարձուցանել ՚ի նա զՔինլանտիա և զԼիվոնիա, և չթողուլ ՚ի ձեռս Պետրոսի, բայց միայն զԲեթրալոնդ, զԲրոնշթատ, և զՆարվա: Յայնժամ Պետրոս արտասահման արար ՚ի Ռուսիոյ զՅիսուսեանս՝ որք բընակութեք հաստատեալ էին անդանօր, և ազգ արար հրամանակալացն Շվետաց՝ զի թէ չեցէ հաստատեալ խաղաղութիւն ՚ի միջև ըստ պայմանացն առաջարկելոց, առաքեցից ասէ զնաւատորմն իմ ՚ի Շվետս: Եւ արար այնպէս, և առին Ռուսք քաղաքս և աւանս բազումս ՚ի հիւսիսի և ՚ի հարաւակողմն Սթոքոլմայ, և անխնայ աւարհարութե քանդեցին տունս հնգետասան հազար: Միջնորդ հաշտութե կալաւ գշխոյն Շվետաց զԳէորգ թագաւոր Անգլիոյ, այլ Պետրոս մերժեաց զմիջնորդութիւնն, և

գանդատ կալաւ առ Գէորգ վասն գնալ
ցից նորա, որ ըստ բաղում գլխոց 'ի
շնաս և 'ի նախատինս Ռուսիոյ բերէին:

Եւ մինչդեռ տակաւին ամրամնդէր
զգօրս իւր 'ի խաղալ ընդդէմ պետու-
թեցն գաշնակցելոց 'ի նպատտ Շվեաիոյ,
և 'ի միւս կողմանէ զօրք իւր 'ի նաւա-
մարտս յաղթութիս գործէին ընդդէմ
Շվեաաց, Փեդերիկոս այրն Ուլլիքայ
ամբարձեալ յաթոռն Շվեաիոյ՝ միջ-
նորդ խաղաղուէ կալաւ զարքայն Գաղ-
լիոյ առ Պետրոս, և զինադադարումն
եղև: Վարդեցաւ Ժողով Թագաւորաց
'ի Նայշթատ, յորում Պետրոս ահար-
կուն յաչս բաղմաց՝ հաճութե ամենե-
ցուն մշտնջենապէս գրաւեաց որչափ
ինչ երկրակալութիս արարեալ էր նորա
'ի սահմանոցն Քուրլանաիոյ մինչև յայն-
կոյս ծոցոյն Ֆիլանաիոյ, և անտի և 'ի
վեր զամենայն զհիւսիսակողմն Քեքս-
հոլմայ, և հաստատեցաւ պայման ուխ-
տին յՅՕ աւուր ամսոյն օգոստոսի, յա-
մին 1721:

Ապա 'ի մեծահանգէս կացուրդսն որք
հռչակեցան 'ի Բեթրալուրի սակս մեծի
և կարևոր ուխտի խաղաղութեն, ծե-
րակոյտն և սիւնհոգոսն միանգամայն
վճիռ ետուն անուանել զՊետրոս Մեծ,
և Ինքնակալ, և հայր հայրենեաց: Իսկ
նա այն ինչ զուարճացեալ յանձն իւր
ընդ խաղաղութին՝ ակն ունէր անխա-
փան և անընդհատ միտ գնել բարգա-

ւաճելոյ սրտութէ իւրոյ, հարկեցաւ
 'ի նոր սրտերազմ՝ ձեռն արկանել 'ի
 կողմն Ասիոյ :

Քանզի ազգն Ղեկաց կամ Լեզկեք
 բնակիչք Կովկասու գլուխ ամբարձեալ
 ընդդէմ Հիւսէյին շահի Պարսից՝ աւ-
 սատակեցին զԱղուանս և զամենայն
 զարեմտակողմն Կասպից ծովուն մինչև
 'ի Դարբանդ : Յաւարի առին և զմեծ
 քաղաքն Շամսիսի, և սպանին արս բա-
 զումս յեկաց և 'ի բնակաց տեղւոյն ըզ-
 հայս և զՊարսիկս, ընդ որս և զընկե-
 րութի ուսս վաճառականաց առսքե-
 լոց անդր 'ի Պետրոսէ : Բողոք կալաւ
 Պետրոս վասն իւրոցն առ Հիւսէյին
 շահ . և տեսեալ զի նմա ոչ ինչ փոյթ
 էր զեղելոցն վասն անսարսալութեն 'ի
 խռովութեց իւրոյ աշխարհին, մանա-
 ւանդ թէ և 'ի Պետրոսէ ձեռն օգնակա-
 նութեան խնդրէր ընդդէմ Մահմուտ
 միւրվէյիզ անուն խանին՝ որ բռնացեալ
 էր յԱսպահան, յարեաւ Պետրոս քա-
 ռասուն և հինդ հազար արամբք, և Կա-
 տարինէ ընդ նմա, և խաղաց եհաս մին-
 չև 'ի Դարբանդ : Յաջողեաց Ռուսաց,
 զի իշխան անառիկ տեղւոյն այր գոլով
 յոյլ և վատ՝ մատոյց զբանալիս դրանցն
 առ Պետրոս . և նա եմուտ 'ի ներքս խա-
 զաղութի : Ապա իբրև ետես զի ձմեռն
 սաստկանայր, և լուաւ զի նաւքն նսա-
 րակաւորք վտանգեալ էին, շտտ համա-
 բեցաւ զայնչափ զերկրակալութին, և

դարձաւ անդրէն 'ի Մոսքուա :

Իսկ խանն Պարսից Մահմուտ խաղաց գնաց և 'ի կողմանս Դարբանդայ՝ աւար հարեալ զամենայն զճանապարհայն, և բնակիչքն Կիլանու սպաւինեցան 'ի Ռուսս : Մինչ այս մինչ այն, շահ թահմազ որդի Հիւսէյին շահին զօրացեալ՝ արձակեաց զդեսպան մի առ Պետրոս . և նորա հասեալ 'ի Բեթրպուրկ՝ պայմանաւ ուխտի աւանդէր Պետրոսի զԴարբանդ, և զգաւառս Կիլանու և Մազանդարանայ . և Պետրոս խոստանայր օգնական լինել զօրօք շահ Հիւսէյինայ և որդւոյ նորին :

Ընդ այն ժամանակս հրատարակեաց Պետրոս և մատեան մի օրինաց վաճառականութի, և արգել դատաւորաց մեկնաբանել զխմտոս օրինացն, ատենակալաց և եթ տուեալ հրաման՝ զերկբայելի դէպս առ ծերակոյտ անդր հանել : Կարգեաց և զմի ոմն 'ի ծերակոյտ ժողովոյ անախ ընդհանուր տեղակալ, որոյ իշխանութիւն էր դիտել զգնացս սինկղիտոսացն, կալ հանապազ առ թագաւորին, և 'ի լինել նորա արտաքոյ՝ ունել զտեղին :

Բազում նորոգութիս արար և յեկեղեցական սովորուիս և եբարձ զղեղճմունս՝ առաջնորդութի թէոփանեայ մետրապօլի Փրոքքոփովիչ . թէպէտ և բազումք 'ի տգիտաց անէծս կարդային թագաւորին, և նեռն անգամ կոչէին զնա :

Գնեալ Պետրոսի կանխաւ զհռչակաւոր պահարան հնուԹէցն Ռուխփիոսի, հրամայեաց և բժշկի իւրում Արեշփին անուն՝ առնել զհաւաքումն բնական պատմութե, և վտան երկաքանչիւր հաւաքմանցն կանգնեալ շինուած հոյակապ՝ համարձակ արար զմուտն ամենեցուն, և սրատուիրեաց հիւրասիրել զեկեալն խահվէիւ, գինեաւ, ցբւով և ազանդերով, կարգեալ առ այն եկամուտ տարեկան:

Կանգնեաց և Ճեմարան գիտութեց՝ ծանր ծանր պայմանս կարեւորս յանդամոց նորին պահանջեալ: Առանձին խնամով ուշ կալաւ Թարգմանութե բազմապատիկ մատենից, այլ ՚ի ձեռն արանց քաջ լեզուագիտաց, զորս և յազգէ ուսաս կամէր, և ըստ ամենայնի հմուտս հայրենի բարբառոյն:

Յայն միջոց ժամանակի կամեցեալ հռչակաւ պսակել զԿատարինէ ՚ի կայսրուհի Ռուսիոյ, առանձին հրովարտակաւ հանգիսացոյց զվաստակս և զարժանիս նորին, և ասպա յ18 մայիսի յամին 1724 եգ զԹագն ՚ի գլուխ Կատարինեայ ՚ի մայր եկեղեցին Մոսքուայի, հանգիսատես ունելով զգթուհին Քուրլանաիոյ զգուսար եղբօրն իւրոյ Իւանայ, և զգուքսն հոլսԹէյնայ: Իբրև ելին յեկեղեցոյն՝ ետ տանել յառաջոյ կայսրուհւոյն զգաւազան և զգունա: Յետ այնր հանգիսի՝ որ ամե-

նայն մեծալայելուչ հանդերձանօք կատարեցաւ 'ի մեծազօր ինքնակալէն, հռչակեցաւ այլով հանդիսիւ և խօսուամն Աննայի դատերն Պետրոսի ընդ դքսին հօլածէյնայ :

Այլ իբրև վախճան եղև այսր ամենայնի ուրախութեանց՝ ժամանեցին աւուրք վշտացն Պետրոսի : Քանզի անչափ վատակքն՝ յորս անձնատուր էր 'ի սկզբանէ հետէ թագաւորութեն՝ վատեցին զառողջութի նորա, և սողիւտ դատապարտութեանն Ալէքսի, և մահորդւոյն Վատարինեայ դառնացուցանէին նմա և ևս զցաւս մարմնոյն, այլ և մխիթարութի պակասեաց նմայնութեան յամուսնոյ անտի իւրմէ : Զի Վատարինեայ տաղտկացեալ իմն 'ի նեղասիրտ գնացից խօթագին ինքնակալին՝ ինգրէր զափփանս իւր 'ի մտերմութե սենեկապանին իւրոյ Մոէնս անուն պատանւոյ : Այն ունէր ևս՝ եթէ յետ պտակմանն 'ի կայսրուհի Ռուսիոյ՝ անցէ և յաթռն Պետրոսի, այլ չգտեալ ինչ նշանակ այնպիսի 'ի հրովարտակին՝ սկսաւ անգոմնել 'ի միտս իւր զբարերարն իւր և զամուսին և զտէր :

Տոհմն արքունի 'ի Փեթերհօֆ էր յայնժամ, և անդ Պետրոս անանդորր մատնեալ 'ի յոյզս անընկճելինախանձու սրտմտութե, զհասարակ գիշերաւ յարուցեալ եմուտ յանկարծակի 'ի սենեակ անդր՝ ուր ննջէր իշխանն Ռեփ-

նին . որոյ շատուցեալ 'ի տեսիլ թագա-
 ւորին զահի հարկանէր : Ասէ ցնա Պե-
 տրոս . « Արի՛ կաց , և տուր ինձ պա-
 տասխանի . չէ ինչ հարկ թէ ագանի-
 ցիս » : Կանգնեցաւ Ռեփնին գողալով .
 և Պետրոս պատմեալ նմա զոր 'ի ձեռն
 այլոց և ինքնին գլխովին ստուգեալն էր
 զգշխոյէն՝ ասէ . « Իմ՝ եղեալ է 'ի մօտի
 վաղվաղակի ընդ այգն հատանել զգլուխ
 կայսրուհւոյն » : Եւ Ռեփնին ետ պա-
 տասխանի . « Անձն՝ քո թշնամանեցաւ ,
 ինքնակալդ , և դու տէր ես ինքնիշխան :
 Այլ շնորհեա՛ ինձ ասել միանգամ՝ զոր
 խորհիմս : Չիք ոք բաց 'ի քէն , որ դի-
 տիցէ զիրադ հաւաստեալ . և ընդէր իցէ
 քեզ հրապարակել զայն . և արատ ան-
 ջնջելի ածել զանուամբ քով և զփա-
 ռօք : Կամիցիս վրէժ խնդրել զթշնամա-
 նացն , անկցի Մոէնս 'ի բերան սրոյ օրի-
 նաց . իսկ 'ի մերժել 'ի բաց զկայսրու-
 հին՝ բիւր ճանապարհք առաջի կան ,
 առանց վտանգի փառաց քոց » : Պե-
 տրոս գողգոջելով սաստկապէս՝ անբը-
 թիթ զակն պիշ ունէր 'ի Ռեփնին յեր-
 կար , և ապա ել 'ի բաց 'ի սենեկէ ան-
 տի անբարբառ , և ընդ ժամս երկուս
 ճեմս առեալ տագնապու 'ի սրահի
 անդ՝ եմուտ դարձեալ 'ի սենեակն առ
 Ռեփնին ասելով . « Կորիցէ Մոէնս . և
 յայամհետէ գոյզն վրիպակ գշխոյին 'ի
 կորուստ նմին դարձցի » : Եւ անտի յա-
 ռաջ մինչև ցմահ իւր՝ ոչ բնաւ խօսա-

կից եզլ ընդ Աստարինեայ առանձինն, և ոչ վայրկեան մի ժամանակի եկաց միայն ընդ նմա : Մոէնս և քոյր իւր ամբաստանեցան պարգևս առեալ գոլ, որ արգելեալ էր իշխանաւորաց ընդ պատժով մահու. վասն որոյ առաջինն գըլխատեցաւ, և երկրորդն խարազանաւ ձաղկեալ մեռաւ :

Սակայն ոչ աստին զայրանալ օր ըստ օրէ և ոչ վշտացն 'ի վերայ եկելոց յիշատակ ոչ արգելին զՊետրոս 'ի խնամոյ իրաց հասարակաց : Զօր հանապաղ գողցես էր առ ծերակուտին. էր երբէք զի և երկիցս դնացեալ անդր՝ զօրն ցերեկ անդ անցուցանէր, և արթուն խորհրդովն և նրբամիտ գատողութեւ արագ արագ լուծանէր զգթուարակնձիւնն ինդիրս, վասն որոց տարժանէին սինկղիտոսքն և գատաւորք, և դրոշմէր 'ի թղթի համառօտիւ զկարծիս իւր կամ զվճիւնն :

Երիւք ամսովք յառաջ քան զմահ իւր յուղի անկեալ գնաց 'ի լիճն Եւմեն, զի տացէ հաւաքել զաղի ջուրս վայրացն 'ի լճակ մի՝ սակս պահելոյ 'ի նմա զկաղնիս 'ի պէսս նաւակերտի : Այց արար և ջրանցիցն Լատոկայ, զոր և ինքն իսկ գլուխ կարևոր գործոց իւրոց համարէր : Եւ այսպէս յար 'ի շարժման կալով՝ ակն ունէր զգէմ ունեւ խօթութեն և օր ըստ օրէ ակտրանալոյն : Ապա բուռն արար անձին առաջեկայ

գտանիլ և հանդիսի ջրօրհնեաց 'ի տօնի
 յայանուածէ Տեառն առ Նեւա գեառով
 յամին 1725 . և հարեալ 'ի ցրտոյ ան-
 կաւ 'ի տենդ անհնարին, և սասակացաւ
 ախան յոյժ, մինչև անկանել նմա 'ի
 մահիճս մահու : Ի 26 յունուարի ըն-
 կալեալ զհոգևոր նպաստան ըստ իւրում
 կրօնին, խնդրէր 'ի ձայն բարձր զողոր-
 մու թին Աստուծոյ . ասէր . « Յուսամ
 յԱստուած , զի գթուածք ակնարկեցէ
 յիս վասն ամենայն բարուծէց զոր ա-
 բարի ազգիս իմում » : Կուտեցան բը-
 ժիշկք յարքունիս , և 'ի կամել վիրա-
 բուժին դարման տանել՝ կալաւ զթա-
 գաւորն բորբոք ախտի , և ապա ճարա-
 կեալ 'ի նմա քաղցկեղոյ , հազիւ վայր-
 կեան մի ևս ժամանակի զանձամբ եղեալ
 կամեցաւ դրել , և անուանեաց յաջորդ
 թագաւորութեանն զՊետրոս Բ , զորդի
 Ալեքսի : Եւ անդէն թալանայր , և
 ժամս հնգետասան տագնապեալ յեր-
 կարէր 'ի հոգեւարան : Ապա 'ի 28 յու-
 նուարի 'ի չորրորդ ժամու առաւօտուն՝
 յորում պահու սովոր էր յառնել 'ի
 գործս պետութեն՝ վճարեաց զքառա-
 սուն և զերիս ամս թագաւորութիւ
 ըոյ , և զյիսուն և զերկուս կենաց իւ-
 ըոց . կեանք՝ որով դեռ ևս կենդանի է
 Ռուսիա : Զի արանց մեծաց կեանք՝ ոչ
 յանձինս նոցա վախճանին :

Հասակագեղ էր Պետրոս և ազնուա-
 դէմ , այլ ահագնահայեաց և խրոխա ,

ողելից 'ի բանս և համառօտախօս . ա-
տեցող սեթևեթից և սիրող սլարզու-
թէ . ցանգ վառեալ 'ի տենչ մեծամեծ
իրաց , և անխոնջ 'ի վաստակս առ 'ի
հասանել ըղձիցն : Արդարասէր էր և
ճշմարտասէր , և 'ի խնդիր ճշմարտուն
և արդարութե և առ անարգադոյնս 'ի
մարդկանէ զիջանէր , և 'ի խատուծիւնս
անաչառս անխնայ ձեռն արկանէր :
Մեծ էր Պետրոս 'ի բարս , ոչ միայն զի
այնպիսիս ունէր բարս 'ի բնէ , այլ զի
պահեաց զնոսին և ընդդէմ ապականա-
րար դաստիարակութեն յոր մատնեալ
էր 'ի մանկութենէ : Մեծ ևս եկաց 'ի
գործս՝ զանձն 'ի բռին եղեալ յօգուտ
խրոյ աշխարհին , և մեծամեծս արա-
րեալ յամենայնի : Սակայն և նա ինք-
նին զփորձ առեալ զտկարութե մարդ-
կային բնութեն , և ատեսալ զի յակա-
մայս ձգի երբէք երբէք 'ի յանցմունս՝
զորս սախարակելիս ճանաչէր , բազում
անգամ գոչէր ցաւագին . « Եղո՛ւկ եմ
ես . զի կարացից նորոգել զազգն իմ ,
այլ ոչ և զանձն իմ » :

Ողբս առեալ կոծեցան զնա Ռուբ-
ամենայն , յորովք առ սիրոյ , և յերախ-
տագէտ մտաց , և ոմանք առ հիացման :
Ընդ ամենայն տեղիս աշխարհին լցին
զխիշատակարանս և զարձանս նորա . և
ոչ այնու շատացեալ , խնամով հաւա-
քեցին զոր ինչ միանգամ գտին զնորա
առանձին . և մինչև ցայժմ պանծանօք

ցուցանեն օտարականաց զնշխարս վէհ-
 ազինն իւրեանց մեծի: Մարմին նորա
 ցուցանի բազմեալ 'ի գահոյս և զգե-
 ցեալ հանդերձիւն հանդիսի՝ զոր կա-
 տարինեայ կիտեալ էր: Անդ մերձ առ
 մարմնոյն պահին գրասեղան նորա ըն-
 կուզի՝ յորում գրէր յոտին կալով,
 յատակագրութի Քրոնշթատ քաղա-
 քի՝ դժեալ նորին ձեռամբ, ձեռագիրք
 նորա բազումք, վերջին կօշիկքն բա-
 զում անգամ կարկատեալք, զէնքն, ե-
 ռիվարն պատերազմի՝ յոր հեծեալն էր
 և 'ի Փոլթաւա. գաւազանն ահագին.
 ձող մի երկաթի հարիւր և քսան լտեր՝
 դարբնեալ ձեռամբ նորին. կանթեղ
 բազմաստեղն 'ի փղոսկրէ՝ յոր ամս բա-
 զումս վաստակեալ էր. սկուռդ նորա
 հաւատարիմ, զոր իւր իսկ տուեալ էր
 յարդալից պահել. և դաղափար մի
 սեանն Տրայիանու, զոր կամէր ինքնին
 ճախարակել նախ 'ի փղոսկրէ, և գնելի
 էին 'ի պատուանդանին մակագիրք չորք,
 և շուրջանակի պատկերք սղնձիք երևե-
 ցուցիչք յաղթանակացն նորա 'ի վե-
 րայ Շվետաց, և 'ի կատար սեանն անդ-
 ըի նորին:

ԿԱՏԱՐՈՒՆԷ Ա .

Ի ՄԵՌԱՆԵԼ Պետրոսի մերձ գոլով նմա իշխանքն Մենչ չիքով , Բուժեանցով և Թողսթոյ, մինչև հրատարակեալ զմահ նորա՝ խորհուրդ 'ի մէջ առին յյաջորդէն . և գիտելով զի 'ի Թագաւորել նորա վտանգ էր կենաց իւրեանց՝ Թագուցին զվերջին տողս Թագաւորին , և հաստատեցին Թագաւորեցուցանել զԿատարինէ :

Իբրև այդ եղև՝ ծերակոյտն ամենայն և աւագանին և զօրագլուխքն կանխեցին յապարանսն , և խորհէին զի Թագաւորեցուցեն զՊետրոս Բ, զմիայն արու մաւնուկ 'ի տոհմին արքունի . քանզի զԿատարինէ գիտէին սլսակեալ որպէս զըջ խոյ և եթ ինքնակալին , և ոչ յաջորդաթուոյ նորա . ոչ անգիտանային և ըզփառասիրութի Մենչ չիքովայ՝ որ ըստ կամս վարէր արդեօք զիրս պետութեն 'ի Թագաւորել Կատարինէայ :

Մինչդեռ նոքա անագանէին 'ի խորհրդեանն , եկն Մենչ չիքով 'ի դուռն սրահի խորհրդանոցին . և իբրև ետես զի չտային նմա մոտ , փութացաւ գնաց անշուշտ , և դարձաւ ած ընդ իւր զՊութուռլին պահպանապետ Փրէօպրաթենսքի գնդին իւրովքն հանդերձ , խորտա

կէաց զգրուես խորհրդանոցին՝ և առ նմին յայտ արար էթէ թագաւորեաց Կատարինէ : Ի յեղակարծ պատահարէն յապուշ հարեալ խորհրդականացն , փոխանակ զգէժ ունելոյ՝ անդէն զաղաղակ բարձին ընդ սլահապան Գնդին . «Կեցցէ Կատարինէ դշխոյ ամենայն Ռուսաց » , և երգուան զերգուսն հաւատարմութե : Ապա և Թէոփանէս արքեպիսկոպոս Նովկորոտայ պատիւ մեծ ունելով յաչօ ամենեցուն վասն իւրոյ իմաստութեն և մատրմութե ընդ Պետրոսի մեծի՝ յայտ արար ամենայն աւազանւոյն և ժողովրդեան , էթէ Պետրոս ինքնին ասացեալ էր ինձ , ասէ , թէ ոչ վասն այլոյ իրիք պատկեսցի զԿատարինէ , բայց զի իրաւունս նմա շնորհեցից թագաւորել զհետ իմ :

Կատարինէ նախ առաջին արար ըզհարսանիս դստերն իւրոյ Աննայի խօսեցելոյն ընդ դքսին Հոլսթէյնայ . ապա վճարեաց զինուորացն զյապաղեալ ռոճիկս նոցա , և շինեաց բերդս քանի մի յերկրին Խաղախաց , զորոց կասկած էր ասպատակութե :

Իսկ Մենշ չեքով օր ըստ օրէ տիրապետեալ ՚ի վերայ կամաց դշխոյին և պետութեն , հետամուտ եղև զթագաւորութիւնն գլխովին յորդիս և ՚ի թուունս իւր անցուցանել : Վասն որոյ եզ զորդին իւր զգեռահասակ ՚ի սենեկապան դշխոյին՝ մինչև ամուսնացուցէ

զնա ընդ Նատալիայ դատեր մեծին Պե-
տրոսի : Ապա օգնական իւր կամեցեալ
ունել զկայսրն Գերմանացւոց զՎարդուս
Ջ , յորդորեաց զնա դաշն նիզակակցու-
թէ հաստատել ընդ Ռուսիոյ 'ի 6 օգոս-
տոսի յամին 1726 : Ընդ այս միաբա-
նութիւն Ռուսաց ընդ Գերմանացիս
գժգմնեալ Գէորգայ թագաւորին Անդ-
ղիոյ 'ի նախանձ մեծ դրդուեաց զբա-
զումս 'ի պետութեց Եւրոսպայ , բաց 'ի
թագաւորէն Բրուսիոյ , և եղև ժողով
մեծ յԱննովէր . և դէպ ժամու ան-
սային 'ի վէգ գալ ընդ Ռուսիոյ , Յայս
միտս արձակեաց թագաւորն Անդղիոյ
երիս նաւատորմս 'ի Րէվէլ և 'ի Քրոնշ-
թատ , և արքայն Գանեաց յաւել 'ի
նոսա և տորմիզ մի յիւրոց նաւուցն :
Այլ Վատարինէ խոհական հանճարով
ոչ ինչ խլրտեալ յահէ նոցա՝ հաստա-
տուն եկաց յուխտին Գերմանիոյ :

Առանձին խնամ կալու Վատարինէ
բարւոյք դաստիարակուէ որդւոյն Ալէք-
սի , զոր կամեր կարգել յաջորդ իւր 'ի
թագաւորութե : Ջայն իբրև զգացին
մեծամեծքն դաստապարտողք Ալէքսի ,
երկուցեալ 'ի վրէժխնդրութե որդւոյն ,
յորդոր եղեն Վատարինեայ առաքել
զպատանին յուսումն 'ի տար աշխարհ .
և խորհուրդ կալան՝ զի 'ի մեռանել գըշ-
խոյին ընդ հուպ , որպէս էր կարծել 'ի
վատառոյջ կենաց նորա , տացեն զթա-
գաւորութին դատեր նորին Աննայի :

Հնարս նիւթեալ և ընդդէմ Մենշչի-
քովայ՝ որ հարստահարէր յոյժ զնոսա
յամենայնի, պատէհ առին զհեռանալ
նորա առ ժամանակ մի ՚ի Բեթրպուր-
կայ, և բազում ինչ չարախօս եղեալ
զնմանէ առ դշխոյին՝ յաչաց հանին զնա,
մինչև հրամայեաց Կատարինէ բանտար-
գել առնել զՄենշչիքով ՚ի դառնալ
նորա ՚ի Բեթրպուրի: Այլ միջնորդու-
թիւ դքսին հոլսթէյնայ զերծեալ Մենշ-
չիքովայ ՚ի պատուհասէն՝ ապաշնորհ
դառաւ առ բարերարն իւր, և համբաւ
սուտ եհան զդքսէն՝ որպէս թէ դաւա-
ճանել խորհին զդշխոյն մտերիմք նորա,
և ամբառնալ յաթոռն զորդին Ալէքսի-
սակայն չեհաս որում ցանկայրն, զի ոչ
պատրեցաւ դշխոյն այլ ևս ՚ի նմանէ:

Ընդ նոյն ժամանակս հիւանդացաւ
Կատարինէ ՚ի մահ, և կամեցաւ կտա-
կաւ հաստատել իւր յաջորդ զՊետրոս
Բ: Եւ զի գեռ ևս մետասան ամաց
էր նա, կարգեաց ինամակալս նմին
զգոտերս իւր զԱննա և զԵղիսաբէթ,
և զարս նոցա զփեսայս իւր, և զգերա-
գոյն ատեանն, կէտ ինամապետութե-
սահմանեալ նոցա զեօթնևտասներորդ
ամ հասակի պատանւոյն. զոր և անուա-
նեաց Դուքս մեծ: Իսկ գերագոյն ատե-
նին խորհրդականս կարգեաց զՄենշչի-
քով, զԾովակալն Ափրաքսին, զատե-
նադսլիւրն արքունի Օսթերման, և զԴե-
մետր Կոլիցին, և զԱլասիլ Տոկորուքի:

Եւ մեռաւ Կատարինէ յամին 1727, 'ի մայիսի 6, ամաց երեսուն և ութից՝ թագաւորեալ ամս երկուս և ամիսս ինչ :

Սա ըստ դիւպաց իմն գոգցես ամբարձեալ յանշուք վիճակէ յայն աշտիճան բախտի, լիով ստացեալ ունէր հանգամանս գնացից բաւականս 'ի տուէլ նմա 'ի բարձրութեն . և հասեալ 'ի դրունս մահու՝ գիտաց և քաջ խորհել, և արիաբար նախախնամել որչափ ինչ կարևոր օգուտք էին աթոռոյն, որպէս յայտ է և 'ի կտակէ անտի նորա, յորում հատուածքն կարևորք էին սղբին .

Ա . Մեծ գուքսն Պետրոս Ալէքսեյեւիչ յաջորդեացէ ինձ՝ բացարձակ իշխանութի . և զնա պայազատեսցեն որդիքն իւր հարազատք :

Բ . Եթէ մեռցի նա անորդի, գուտարն իմ Աննա Փեթրովնա ժառանգեսցէ զաթոռն Ռուսիոյ . և յետ նորա որդիքն իւր :

Գ . Ի մեռանել նորա անորդի՝ անցցէ յաթոռն Եղիսաբէթ գուտար իմ, և ապա որդիք նորա : Եթէ և նա մեռցի անորդի, անցցէ թագաւորութին առ Նատալիա գուտար Ալէքսի : Այլ սոքա ամենեքեան և որք զհետ նոցա, մի կարասցեն ունել զթագն Ռուսիոյ, եթէ ունիցին զայլոյ իրիք աշխարհի, կմ չիցեն 'ի յունական գաւանութեան հաւատոյ :

Դ . Գուքսն մեծ յամենայն կացուրդս

ատենի խնամապետաց առաջիկայ գացի .
 և իշխանութի ատենին գաղարեացէ ընդ
 կատարել յաջորդին իմոյ զվէշտասան
 ամ հատակին : Յայնմ հեռէ միայնակ
 առցէ զերասանակ թագաւորութե՛ն , այլ
 մի կարասցէ համարս պահանջել յատե-
 նէ անախ զառաջնոյ տեսչութէն :

ՊԵՏՐՈՍ Բ .

Ի ՎԱՂԻՒ անդր որ էր յետմահուանն
 Կատարինեայ , ատեան խորհրդոյ կազ-
 մեալ խնամապետացն՝ հաստատեցին
 զկտակ վախճանեցելոյ դշխոյին , և թա-
 գաւորեցուցին զՊետրոս : Իսկ փառա-
 սէրն և խորամանկն Մենշչիքով ած
 զմանուկ արքայն՝ ի տուն իւր , զի մի
 առանց իւրոյ հրամանին մատչիցին առ
 նա իշխանք , և ինքն առանձին եկաց
 տեսուչ ամենայն իրաց պետութեն և
 փոխանորդ թագաւորին : Եւ առ վա-
 ղագոյն ժամանելոյ ըզձից իւրոց , զի տեն-
 շայր ամուսնացուցանել զՊետրոս ընդ
 դստերն իւրում , ազատեաց յարգելանէ
 բանտին զհանին Պետրոսի զԵւդոքսիա՝
 աւետաւորեալ նմա զթագաւորել թո-
 սինն , և խնդրելով զհաճութիւն նորա
 ընդ դաշնաւորեալ ամուսնութինն : Եւ
 իբրև եկն նա ՚ի Մոսքուա , կատարե-
 ցաւ հանդէս հարսանեացն մեծաշուք

սպասիւք յապարանս գետպանին Պեր-
մանիոյ : Ի ժամանակի հարսանեաց բը-
նաւ չէր ակնարկեալ Պետրոսի յօ-
րիորդն . ընդ որ յայտնապէս ոչ ինչ
խոժոռեալ Մենչ չիքովայ՝ պատճառս
կալաւ յանդգնագոյնս վարելոյ ընդ այ-
նոսիկ , զորոց կասկածէր ստեղիս իւր
լինել և սիրելիս ինքնակալին : Աքսո-
րեաց 'ի Սիպիր և յայլ տեղիս զարս
հոյակատարս՝ զՄաան , զԱէքին , զԵա-
կուժենպի , զՓիտարեվ , և զԹուլսթոյ ,
և գրեալ թէ զամենայն զծերակոյտն .
քանիւք խստութե և սպառնալեաց խի-
ղախեաց ընդդէմ Օսթերմանայ , և
զԱփրաքսին պատճառանօք իւլիք առա-
քեաց յԱրքանիէլ : Չարաչար յոյժ
վարեցաւ և ընդ դքսին Հոլսթէյնայ՝
մինչև ելանել գնալ նմա ընդ դքսու-
հւոյն 'ի Ռուսիոյ : Ապա և հրովարտակ
որար սպառնալից ընդդէմ ամենայն
գաւաճանաց՝ թէ գտանիցին 'ի մէջ
Ռուսաց , զորս խստագոյնս պատժել
ասէր քան զնախագրեալոգ : Իսկ 'ի
գրել զգիր սա թագաւորն՝ որդեակ զնա
անուանէր , և ստորագրէր՝ Հայր քո
Մենչ չիքով :

Այլ 'ի խուռն բաղմութե ատելեաց
բռնակալին յաջողեցան ոմանք բանալ
զաչս գեռահասակ արքային՝ 'ի ձեռն
Տոլիորուքի սրաամուոյն , որ հանապազ
ընկերէր Պետրոսի յորս :

Ի գէպ պատահեաց ընդ այն աւուրս

յայտնի լինել և այլոյ իրիք անիրաւութե Մենչ չիքովայ . զի Պետրոսի ընկալեալ ուստեք յընծայ ինն հազար ըռւսլիս՝ առաքեաց առ քոյր իւր . և Մենչ չիքովայ հանգիսեալ առնն որ տանէր զգրաման , ստէ ցնա . « Դեռ ևս մանուկ գոլով ինքնակալին՝ չգիտէ զպէտս գրամոց . անձ զնա ՚ի սենեակն իմ , և դու անհոգ լեր , ես հաճեցից զնա » : Արար պաշտօնեայն ըստ բանի նորա , և ոչ ինչ եհան ՚ի վեր ինքնակալին : Այլ ՚ի վաղիւ անգր ՚ի գալ քեռ թագաւորին յայց նմա՝ իբրև գիտաց Պետրոս թէ չիք ընկալեալ նորա զգրաման , և ծանեալ ՚ի պաշտօնէէն զոր ինչ արարն Մենչ չիքով , ՚ի զայրոյթ բարկութե բորբոքեալ՝ կոչեաց զնա առաջի , և այնպէս իմն բարձրացոյց զբարբառ իւր ՚ի վերայ նորա , զի Մենչ չիքով շուարեալ հազիւ հազ կցկցեաց պատճառանս գործոյն , և ցածոյց զսրտմտութի թագաւորին , որ զոտս ՚ի գետին հարեալ գոչէր . « Յուցից քեզ քաջ , եթէ տէր եմ , և զհնազանդութի պահանջեմ » :

Յետ աւուրց ՚ի խօթանալ սակաւ ինչ Մենչ չիքովայ՝ պարսպ առին թշնամիք նորա առաւել ևս գրգռել ընդդէմ նորա զթագաւորն : Սակայն նորա ակն ունելով անգրէն շահել զսիրտ արքայ մանկանն՝ հրաւիրեաց զնա և զնորայնն ՚ի նաւակատիւ նորաչէն մատրան իւրոյ յՕրանենապաւմ . այլ թագաւորն սրատ

Ճառեցաւ զխօթուծի : Գիտաց Մենչ չիքով, թէ է ինչ կնճիոն ՚ի միջի, սակայն անխորհուրդ գտաւ և զայլ իմն պատճառս ամբաստանուծի տալով ոսոխաց իւրոց . զի ՚ի ժամ հանդիսին տեսաւ բազմեալ ՚ի գահն՝ զոր իւր իսկ պատրաստեալ էր վասն թագաւորին : Ի նմին աւուր ընդ երեկս չոգաւ ՚ի Փեթերհոֆ, և ոչ եգիտ անդ զՊետրոս . սպասեալ մնայր նմա մինչև ցերեկ աւուրն երրորդի, և նա ոչ եկն . և պալատականքն ոչ էին ընդ Մենչ չիքովայ որպէս յերեկն և յեռանդն : Ուր ուրեմն լուաւ եթէ հրամայեալ էր արքայի բառնալ զամենայն զկահ և զկարասի իւր ՚ի տանէն Մենչ չիքովայ և տանել յամարանոցն իւր . զի անդ կամի, ասեն, բնակել :

Յապուշ հարաւ Մենչ չիքով ընդ պատահումնն . և մինչդեռ հնարս խորհէր ընդդէմ ոսոխաց իւրոց՝ եկն Ջուլ թիքով և յայտ արար, թէ հրաման է արքայի՝ ՚ի դիպահոջ զնա արկանել . ապա խաղացուցին զնա ընտանեօքն հանդերձ ՚ի Բանենպուրկ քաղաք՝ զոր իւր իսկ հիմնեալ էր . ուր և վճարեալ զգատ նորա՝ գատասպարտեցին անցուցանել զմնացուածս կենաց իւրոց ՚ի խորս Սիպիրայ ՚ի Պերեզով, կարգեալ նմա ուճիկ օր ըստ օրէ տասն բուսլիս փոխանակ անբաւ ճոխուծեանցն առաջնոց . քանզի ունէր ասեն գերիս հարիւր հա-

զար, և կալուածս բազումս մինչև 'ի հե-
ռաւոր աշխարհս անգամ: Այլ Մենչ-
չեքով զարմանալի սնդու թէ սրտի տա-
րաւ խստութե արտորանացն, և որ յա-
ռաջ վատառողջն էր՝ անդ քաջառողջ
եղև և ուժեղ, և ճշգեղով զպէտս իւր
'ի տասն բուսլեացն՝ կանգնեաց և եկե-
ղեցի մի: Աին նորա 'ի բազում ողբոց
կուրացեալ՝ մեռաւ 'ի ճանապարհին, և
գուստրն՝ զոր խօսեցեալ էր ինքնակա-
լին, մեռաւ յարտոս անդ: Յետ սակա-
ւուց մեռաւ և ինքն, և 'ի սա ևս ճշ-
մարտեցաւ բանն՝ թէ « Ոչ կարէ հան-
գարտել երկիր ... եթէ ծառայ թա-
գաւորեացէ »:

Այնուհետև 'ի պատճառս մտերմին
Պետրոսի Իւանայ Տոլկորուքի՝ տոհմն
Տոլկորուքեանց ճոխացան յամենայնի,
և զեղծան ևս՝ և գրգռեցին բորբոքեցին
ղնախանձ ոսոխացն իւրեանց, մինչև 'ի
խօթանալ Պետրոսի մերձ 'ի մահ՝ զՏոլ-
կորուքեան Իւանաւ արկին զվնասն, զի
ասէին թէ նա է որ անհանգիստ առնէ
զարբայ՝ զօրհանապազ յորսս զնա պա-
տաղեցուցեալ: Տոլկորուքեանք 'ի բայ
քերեցին յանձանց զչարախօսութիսն՝
նուաճելով զօրօք զխաղախան վտարան-
ջեալս, և այլ ևս բազում բարեկար-
գութիս առնելով 'ի պետութեն:

Մինչդեռ 'ի խոր խաղաղութե վայե-
լէր ամենայն աշխարհն Ռուսաց, մե-
ռաւ Նատալիա քոյրն Պետրոսի հնգե-

տասան ամաց . և Իւան Տուղորուբի 'ի սիոփեւ զԹագաւորն՝ յաժեցուցանէր զնա յորսս և յայլ և այլ տեղիս : Ի միում նուագի հնարիւք իմն գիպեցոյց զքոյր իւր Աատարինէ անուն 'ի տեղւոջն՝ ուր տանելոյ էր զՊետրոս . և հաճեալ յոյժ ինքնակալին ընդ ամօթագեղ սպարկեշտութի օրիորդին՝ յամին 17 29 'ի նոյեմբերի 30 խօսեցաւ զնա իւր 'ի կնուծի :

Հանդերձեալ էր Պետրոս 'ի մուտս նորոյ տարւոյն 'ի յունուարի 18 ինքնիչ խան Թագաւոր հանդիսանալ, և կատարել զհարսանիան . այլ աւուրբք յառաջ հարեալ 'ի ծաղկէ, մեռաւ 'ի 29 ամսոյն 'ի հասակի վեշտասան ամաց՝ Թագաւորեալ ամ մի և ամիսս ինն . 'ի նմա հառաւ և գիծն արական Ռոմանովեանց տոհմին : Եւ լացին զնա Ռուսք ամենայն :

Ընդ մեռանել Պետրոսի՝ Իւան Տուղորուբի եւ, ասեն, արտաքս 'ի սենեկէն սուր 'ի ձեռին գոչելով . «Աեցցէ գշխոյն Աատարինէ» . այլ ոչ ոք անգրէն կրկնեաց զբարբառն . և նա դարձուցեալ զսուրն 'ի սպտեանս՝ մեկնեցաւ 'ի տուն իւր :

ԳՆՐԱԳՈՅՆ ատեանն հանգերձ ծե-
րակուտաւ և զօրավարօք գտելովք 'ի
Մոսքուա՝ խորհուրդ արարեալ 'ի վաղիւ-
անդր 'ի Քրեմլին, առաջարկուէն Վաս-
լի Տոլկորուքեայ ընտրեցին զԱննա գըք-
սուհի Քուրլանտիոյ զգուստր Իւանայ
էղբօր մեծին Պետրոսի. որ թէպէտ այ-
րի էր, այլ չև էր անցեալ զերեսնամե-
նիւք: Անդ և օրէնք սահմանաւորք կար-
գեցան իշխանութե նորոյ դշխոյին. և
ասլա արձակեցան նուիրակք 'ի Միթ-
թաւ քաղաք՝ Վասիլ Տոլկորուքի 'ի գե-
րագոյն ատենէն, Միքայէլ Վոլիցին 'ի
ծերակուտէն, և Լէոնդիեվ 'ի դիմաց
ազատանւոյն, և խնդրեցին 'ի դքսուհւոյն
ստորագրել զսլոյմանս գերագոյն ատե-
նին, և չբերել ընդ իւր 'ի Մոսքուա ըզ-
սենեկասլան իւր զՊիրեն: Աննա յերի-
կէ իրազեկ լեալ ամենայնի 'ի թղթոյ
Եակուժենսքեայ իշխանին՝ ստորա-
գրեաց սլոյմանաց նուիրակացն, հաւա-
նեցաւ թողուլ զՊիրեն 'ի Միթթաւ, և
սլատրաստեցաւ 'ի չու:

Մինչ այս մինչ այն՝ իմացաւ Տոլկո-
րուքի, զի թղթաբեր ոմն անցեալ գնա-
ցեալ էր 'ի Քուրլանտիա, և խօսակից
լեալ ընդ դքսուհւոյն՝ դառնայր 'ի Մոս-

քուտ, առաքեաց կալաւ զայրն և խաղացոյց շղթայակապ 'ի Մոսքուտ. արկ 'ի սլատուոյն և զԵակուժէնսքի և արգել զնա 'ի խիստ բանախի 'ի Քրեմլին :

Իբրև մերձեցաւ Աննա 'ի Մոսքուտ, էլին ընդ առաջ նորա խորհրդականք գերագոյն ատենին, և ատենադպիրն մեծ մատոյց առ դշխոյն զժամպաւէն կարգի սրբոյն Անդրէի աստեղբն հանդերձ : Զայն ատեսալ Աննայի՝ առ վաղ վաղակի և արկ զուսովք իւրովք՝ ոչ մնալով արարողութեց ատենակալացն. և այն ինչ ատենադպիրն 'ի բարեմաղթել սկսանէր՝ նա հրամայեաց լուս լինել :

Ի նմին աւուր ամբարձ 'ի սլատիւ զօրավարութե զՉօլթիքով զարեանառու մօրն իւրոյ. և միւսանգամ ստորագրեաց առ երեսս սլայմանացն առաջարկելոց, այլ 'ի ծածուկ հնարէր ցրել զամենայնն 'ի ձեռն կուսակցաց իւրոց : Սոքա զառաջինն կաշառաբեկ արարեալ զսահական՝ ասլա հերձիս երկսլառակութե սերմանեցին 'ի խորհրդականս գերագոյն ատենին. յուղեցին 'ի արտունջ և զբազմութիւ ամբօխ կրսեր աղատանոյն, ասելով թէ յայսմ հետէ չիք ձեզ ամբառնալ 'ի բարձ ինչ սլատուոյ, ուր խորհրդականքն մեծազօրք զիւրեանց ազգակիցս և զբարեկամս կարգեսցեն յամենայն իշխանութիս. միտխանակ զի եթէ դշխոյն աղատօրէն իշխէր՝ սլատուք

պաշտամանց ըստ վաստակոց արդեօք
կշռէին, որպէս առ մեծաւն Պե-
տրոսիւ :

Յետ սակաւ աւուրց վեց հարիւր այր
յազատացն Մոսքուայի՝ առաջնորդ ու-
նելով զԹրուպեցքոյ, զՊարեաթինսքի
և զՉերքասքի եկին կացին առ դուրս ա-
պարանից դշտոյին, և աղաչէին զնա, զի
հրաման տացէ 'ի խորհուրդ բազմել
գերագոյն ատենին յաղադս կարևոր
ինչ իրաց խնամուպետութեն : Աննայի
գիտակ գողով խորհրդոցն թաքնութե՝
անց բազմեցաւ 'ի գահոյս 'ի մեծի խոր-
հրդարանին, և անդ հիւրընկալաւ զա-
մենայն զԹերակոյտն և զատենակալն :
Հրաման էր 'ի ծածուկ և պահակ զօ-
րացն զի զգուշասցին դրանց խորհրդա-
րանին, և զգաստ լիցին առ ամենայն
դէպս : Յայնժամ յառաջ մատուցեալ
կոմսն Մաթթէյէվ ասէ ցդշտոյն . «Ի
դիմաց համօրէն ազատանւոյն Ռուսիոյ
հասեալ կամ առ ոտս դշտոյիդ մեծի՝
յայտ առնել զպատրանսն յոր ըմբը-
նեալ էս 'ի նուիրակաց գերագոյն ա-
տենիս . զի որպէս մինչև ցայժմ ազատ
ինքնակալօք վարեցաւ Ռուսիա, և ոչ
երբէք ատենիւ խորհրդոյ, ակն ունէր
ամենայն ազգս Ռուսաց՝ զի և սուք և ըզ-
նոյն կարգ իւրոց նախնեացն տեսանիցէ,
ուրեք քեզ և որդւոց քոց ինքնիշխան
զերասանակ կառավարութե՝ զաշխար-
հիս մեծի » :

Զարմանս յոյժ կեղծեաց կայսրու-
հին ընդ բանսն, և հարցանէր ակնարկե-
լով 'ի Վասիլ Տոլկորուքի. «Մի՞թէ ո՞չ
այն իղձ էր ազգին՝ յորում ձեռնագրե-
ցի ես, ասէ, 'ի Միթթաւ »: Այն ինչ
շարժեցաւ Վասիլ 'ի կշտամբէլ զյան-
դըգնուի Մաթֆէյէվայ՝ զաղաղակ բար-
ձին ամենեքեան զի լռեսցէ: Հրամայ-
եաց գշխոյն ածել զառաջեաւ զմուր-
հակ սրայմանացն և ետ ընթեռնուլ 'ի
ձայն բարձր, և ըստ գլխոց գլխոց հար-
ցանէր՝ եթէ 'ի գէպ իցէ ազգին. և կու-
սակիցքն իւր գոչէին, ոչ: Ասա ուրեմն
յոչ ինչ է պիտանացու մուրհակդ, ա-
սաց, և առեալ պատառեաց զայն:
Յաւել յայտ առնել՝ եթէ քանզի ոչ
օրինօք խորհրդոյ, այլ իրաւամբք յա-
ջորդութի կալեալ է նորա զաթուն,
կամի ըստ նախնեացն իւրոց օրինակի՝ ա-
զատօրէն վարել զիշխանութի իւր:

Անդ էր ապա տեսանել զցնծութիւն
կրսեր ազատանոյն և զսոսկական ամբո-
խին: Իսկ խորհրդականք գերագոյն ա-
տենին լուծան լքան 'ի միտս իւրեանց,
որով և պատճառս ետուն Պիրենայ գալ
բնակել 'ի Ռուսիա 'ի կորուստ անբաւ
մարդկան:

Քանզի սա այր փառասէր, շողմոգ,
ոխակալ, անագորոյն, արծաթասէր և
անձնասէր, բնիկ 'ի Քուրլանախոյ՝ որդի
գորով առն աննշանի, ծառայէր զառա-
ջինն Պետթուշէվայ հազարապետի տան

դքսուհւոյն Քուրլանտիոյ . ապա 'ի
ձեռն Պեսթուշեվայ ամբարձեալ 'ի պա-
տիւ սենեկապանուէ դքսուհւոյն՝ նախ
զնոյն ինքն զՊեսթուշեվ զբարերարն
իւր ատելի արար յաչա դքսուհւոյն .
մինչև հալածել նմա զայրն 'ի Ռուսիա :
Այնուհետև որչափ ընդ միտ մտեալ
Պիրեն դքսուհւոյն մտերմացաւ ընդ
նմա , նոյնչափ ևս յատելուի իւր ձգեաց
զաւագանին Ռուսաց , որք և սմին իրի
պայման եղին Աննայի թողուլ զնա ան-
դէն 'ի Միթթաւ :

Արդ իբրև եկն եհաս Պիրեն 'ի Մոս-
քուա , 'ի վրէժ քինու գերագոյն ա-
տենին՝ այնչափ ինչ ամբաստան եղև զա-
տենակալացն առ Աննայի , մինչև եբարձ
նա 'ի միջոյ զայն ատեան , և կարգեաց
փոխանակ նորին զայլ ատեան ներքին .
և զՊիրեն տեսուչ և քննիչ ամենայն
գործոց խորհրդականացն , ըրոց գլխա-
ւորք էին կոմսն Օսթերման , իշխանն
Չերքասքի , և մարաջախան Մունիք :
Իսկ այլ աւագանին արգելեալ փակեալ
նստէին 'ի տունս իւրեանց պատճառա-
նօք խօթութեան . և իշխանն Վոլովքին
գրեա՛ թէ զամենայն ժամանակս թա-
գաւորութեն Աննայի եկաց 'ի մահիճս :
Զոմանս 'ի Տոլկորուքեանց ետ Պիրեն
աքսորել 'ի կողմանս Խաղանայ և Սի-
պիրայ , և յայլ տեղիս , և զոմանս մա-
հու չարաւ կորուսանել անիրաւ զըր-
պարտութիւնք : Ապա 'ի սպակման Ան-

նայի հանգիսիւ 'ի կայսրուհի Ռուսիոյ, ընկալաւ և Պիրին զպատիւ մեծի սենեկապետութեւ. և զդուստր Իւանայ Տոլկորուքեայ զԿասարինէ, զոր խօսեցեալն էր Պետրոսի երկրորդի, 'ի մենատան ուրեք արգելեալ, հնարեցաւ որդեգրեաց Աննայի զդուստր քեռ իւրոյ դքսուհւոյն Մեքլեմպուրկայ. զի մի հարկ լինիցի առն լինել Աննայի, որպէս յորդորէին զնա մերձաւորք նորին: Իսկ որդեգրեալն այն յուրաստ եղև 'ի լուտերական աղանդոյն, և մկրտեալ ըստ օրինի Ռուսաց՝ կոչեցաւ Աննա: Եւ մինչև եկեալ նորա 'ի Մոսքուա՝ կամեցաւ կայսրուհին երգմանցուցանել զազգն 'ի ճանաչել զորդեգիրն իւր օրինաւոր ժառանգ աթոռոյն յետ իւրայլ զի գիտէր զժողովուրդն՝ զի առաւել ազնեալ էին Եղիսաբեթի թագաւորելոյ քան այլում ումք, հոգյանձին կալաւ ասեղ հանգիսիւ տալ առնել զերգումնն, և իբր 'ի պատրաստունի պատերազմի կարգեաց յօրինեաց 'ի հրասպարակի անդ զամենայն զգօրան:

Կայսրուհին կամէր, ասեն, և 'ի վանս ուրեք արգելուլ զԵղիսաբեթ, այլ Պիրինն չթողացոյց, զի 'ի մտի եղեալ էր առնուլ զնա 'ի կնութի անդրանկին իւրոյ, և ազգաւ թագաւորել: Այլ առ ժամն ոչ դադարէր տառապեցուցանել զորս միանգամ դժպէտք էին նմա. զգօրաւարն Բուսեանցով սքսորեաց 'ի կող

մանս Խաղանայ, զխորհրդականն Ֆիք
'ի Սիպիր, և զծովահալն Սեւերս 'ի Ֆին-
լանտիա :

Այլ մարաջախտն Մուհիք վաստա-
կէր 'ի կատարել զքաջագործութիս և
զշինութիս մեծին Պետրոսի : Բազմա-
ցոյց զթիւ զօրացն Ռուսաց, և յաւել
զուռձիկս սպայիցն, և կարդեաց 'ի պա-
լատին Մենչչեքովայ զվարժոց երեքա-
րիւր համբակաց զինուորութեն դարմա-
նելեաց յարքունի գանձուց : Նորին
խորհրդով հրաժեշտ կալաւ Աննա
'ի գաւառաց անտի՝ զորս կալեալ էր
մեծին Պետրոսի 'ի Պարսից աշխարհէն.
զի երեսուն հազար պահանօրդք հար-
կէին կալ հանապազ անդէն, և ամ ըստ
ամէ կիսով չափ վասնէին : Կատարեաց
Մուհիք և զմեծ գործ ջրանցիցն Լատո-
կայ՝ որ յանձն էր նմա 'ի մեծէն Պետրո-
սէ, և հրաւիրեաց տարաւ զկայսրուհին
'ի աեսանել զնոյն :

Սակայն այս վաստակք և յաջողուիք
մարաջախտին գրգռեցին 'ի մախանս
զՕսթերման, և զայլս ոմանս յաւադաց-
որք և չարախօս լեալ զնմանէ առ Պի-
րեն, գժտեցուցին զնա ընդ Մուհիքայ
'ի կորուստ նմին Պիրենայ :

Ընդ այն ժամանակս յամին 1733, 'ի
մեռանել Օգոստեայ արքային Լէհաց՝
սկիզբն եղև վրդովմանցն որովք հուսկ
ուրեմն կարծանեցաւ այն աշխարհ : Զի
նախագահն Լէհաց ժողով արարեալ

էդ առաջի աւագանւոյն զհարկ ընտրու-
 թէ նորոյ թագաւորի 'ի ցածուցանել
 զխռովութիս աշխարհին : Հաւանեցան
 և կայսրն Գերմանացւոց և գշխոյն Ռու-
 սաց ընդ առաջարկութիւնն . այլ յայտ
 արարին՝ թէ չկամիմք զի ընտրեսցի միւս
 անգամ Ստանիսլաւ : Յետ սահաւուց
 կայսրընտիրն Սաքսոնիոյ մեծամեծ խոստ
 մամբք որսացաւ զԳերմանացիս և զՌուսս
 յիւր կողմն , մինչև առաքել Աննայի
 զօրս 'ի Քուրլանտիա և 'ի Լիթուանիա ,
 զի ձեռնառու լիցին և թագաւորեցուս-
 ցեն Լեհաց զկայսրընտիրն :

Ընդ այս դործ Ռուսաց ծանրացա-
 սումն եղեալ նախագահին Լեհաց և
 աւագանւոյն՝ միաբան հաւանութիւն կար-
 գեցին թագաւոր զՍտանիսլաւ : Սա-
 կայն Ռուսք բանիւք և խոստամամբք և
 դրամովք տկարացուցեալ նախ զկողմն
 Ստանիսլաւայ , սպա արձակեցին 'ի վե-
 րայ նոցա զկոմսն Լասչի քսան հազար
 արամբք . որ իբրև եմնւտ 'ի Լիթուա-
 նիա , Ստանիսլաւ եթող զՎարշաւ քա-
 ղաք և փախեաւ 'ի Տանցիկ : Յայնժամ
 կուսակիցք Սաքսոնացւոյն զնա կարգա-
 ցին թագաւոր՝ Օգոստոս Գ անուա-
 նեալ : Իսկ Լասչի յիսուն հազարաւ
 խաղայ 'ի Տանցիկ , և մինչև ցկէս տմին
 1734 հազիւ ուրեմն կարաց պաշարել
 զքաղաքն :

Ի նմին միջոցի եհաս նմա յօգնութի
 և Մուշիք կարգեալ սպարապետ ամե-

նայն զօրացն Ռուսաց . որք յառաջին յարձակման՝ սաստկապէս յետս վանեալ, ապա և ևս ստուարացեալ զօրօքն հեաղհետէ եկելովք 'ի թիկունս՝ 'ի գերութի նուաճեցին զերիս գունդս Գաղղիացւոց, որք եկեալ էին յօգնութիւն պաշարելոցն, և առաւ Տանցիկ զկնի հարիւր երեսուն և հինգ աւուրց սաշարմանն : Չերբակալ արար Մունիք զնախագահն, զկոմսն Փոնեաթովպի, և այլ ևս արս աւագս 'ի Լէհաց, և առաքեաց զնոսա 'ի Թորն . և արկ 'ի վերայ քաղաքացւոցն սուգանս երկու միլ լիոն սկուդ գերմանացի, փոխանակ զնասպնջական եղեն Ստանիսլաւայ, և փախուցին ևս զնա, և ընդդէմ կալով Ռուսաց՝ պատճառս ետուն կոտորածի ինն հազար զօրականաց և երկերիւր սպայից : Այլ կայսրուհին շնորհեաց նոցա զկէս տուժին :

Ստանիսլաւ 'ի կերպս կերպս այլաձևեալ զերծաւ, և ոչ անկաւ 'ի ձեռս խնդրակացն Մունիքայ, և Լէհք յակամայս յանձին կալան երգնուլ զերգումն հաւատարմութե առ Օգոստոս :

Այն ինչ կամէր Մունիք դարձ առնել 'ի Բեթրպուրկ, հրաման եհաս նմա խաղալ գնալ և պաշարել զԱզով, զի պատերազմ 'ի վերայ կայր ընդ Օսմանեանս, և ընդ Թաթարս Խրիմու : Եւ նորա թողեալ 'ի վերայ զօրացն Լէհաստանի զիշխան ոմն՝ գնաց 'ի Քիեվ և

պատրաստէր հանդերձանս պտտերազմին : Հրաման էր և առ Լէոնդիեւ զօրավար՝ քսան հազար արամբ մարզիկ գնդաւ , և ութ հազար խաղախօք մտանել 'ի Խրիմ . այլ նա ոչ կարաց կատարել զհրամանն առ սովոյն և ցրտոյն վճտանդի , և դարձաւ յետս : Սակայն Մուկիք ոչ ինչ լքաւ այնու , և ոչ կասեցաւ 'ի պատրաստութենն :

Անտի թագաւորն Օսմանեանց յահի եղեալ՝ փութացաւ խնդրել զխաղաղութի՛ն՝ խոստանալով կարճել զասպատակս թաթարացն Խրիմու : Այլ և 'ի Ռուսաց աւագորերոյն ոչ սակաւք չկամէին ընդ պատերազմ . սակայն կայսրուհին ոչ դարձաւ 'ի խորհրդոյն , և Օսթերմանայ յանձն եղև գրել զյայտարարուին առ վեզիրն : Յայնժամ և Օսմանեանք կազմեցան 'ի պատերազմ , և զայն նուագ ոչ արգելին զդեսպանն Ռուսաց յԵտի գուէն որպէս երբեմն , այլ արձակեցին խաղաղութի՛ք յերկիր իւր :

Խաղաց գնաց Մուկիք և առ նախ զբերդորայն Ազովայ , և զպաշարումն քաղաքին յանձն արարեալ 'ի Լասչի՛անց գիմեաց 'ի Խրիմ , և ելից զաշխարհն սրեան ճասպողեօք և քանդամբ քաղաքաց և գիւղից , և չէր ոք որ զգէմ ունէր ընթացից նորա . մինչև կոչել զնա Ռուսաց՝ Սիւն պետութի՛ն , և Արծուի ամենատես : Այլ որ յապուշ կրթեաց զամենեսեան՝ էր հոյակապ յաղթանակ

նորին առ Սթաւուչան գետով, ուր այնպէս իմն պատեալ պաշարեալ մնացին զօրքն Ռուսաց, մինչև գրել Ալի փաշայի սպարապետին Տաճկաց առ Թապաւորն՝ եթէ Ռուսք անդերծանելի պաշարեալ կան . և չիք այլ հնար, բայց զի անձնատուր լինիցին, և կամ 'ի սուր մաշեացին :

Քանզի քաղաքապետն Խոթունայ պատեալ էր զձախ Թև բանակին Ռուսաց՝ 'ի Թիկանց ունելով զանտառս և զանմատոյց լերինս . յաջմէ պաշարէր Ալի փաշա հեծելազօրօք իւրովք նոյնպէս յեցեալ 'ի բարձրաբերձ լերինս՝ որ ձգին մինչև 'ի Փրութ գետ . և յեակուսէ արգելեալ փակէր խանն Պելկորոտայ՝ գլուխ ամենայն Թաթարաց կողմանցն : Յանել արգելանէ անախ անակն ունելի դերծան Ռուսք հնարիւք իմն, և եղև 'ի տեղոջն կոտորած մեծ երկուստեք, մինչև Տաճիկք միլեցան 'ի փախուստ, և Մուսիք տարաւ լի բովանդակ զյաղթութինն : Էառ անընդհամակ զԽոթուն և զՄոլտաւխա, և զՊելկորոտ . պաշարեաց և զՕղու, և էառ զայն . և Լասլի հալածեաց զխանն Խրխուռ, և խորտակեաց զՏաճիկս մերձ 'ի Խարասու քաղաք . և Պրետալ՝ երրօրդ ծովակալի վանեաց զտօրմիզ նաւացն Տաճկաց մինչև 'ի Քէֆէ : Ապա կէս զօրացն Ռուսաց խաղացին 'ի Պէնտէր, և կէսն յԱպրայիլ : Այլ քանզի Քերմանացիք

հաստատեցին ընդ Օսմանեանս զգաշն ուխտին Պելիբրատու, Վիլլիմէօլ դէսպանն Գաղղիացւոց՝ որ առիթն էր այնմ ուխտի՝ միջնորդ եղև և առ Ռուսս. և հաստատեցան ՚ի միջի սպայմանք, զի Խ, Քանդեացին յատակեացին ամենայն բերդորայքն Ազովայ. Բ, Տաճիկք մի կարասցեն կանգնել նոր բերդս, բայց երեսուն վերստիւք յայնկոյս քաղաքին ՚ի ծովակողմն կուսէ. նոյնպէս և Ռուսք յայսմ կողմանէ. Գ, Ընդարձակեսցեն Ռուսք զսահմանս իւրեանց ընդ անապասն կոյս փարսասիս քսան, և կալցին զՍամարա. Դ, Դարձուցին անդրէն առ Օսմանցիս Օզու և Գըլպուրուն :

Ի Ժամանակի սրատերազմին Օսմանեանց նորոգեցին Ռուսք և զուխտ բարեկամութե ընդ դրանն Պարսից : Յեա աւուրց ինչ յարեաւ Խաղախ ոմն և ասէր զանձնէ թէ Ալեքսն իցէ որդի մեծին Պետրոսի : Հաւատացին նմա ոմանք ՚ի զօրականէն. և երէց գեղջն այնորիկ ազգեցութք զանգակաց Ժողովեալ ըզբնակիչս վայրացն՝ մատոյց զպատարագ և զաղօթս, զի յաջողեսցեն իրք նորոյ թողաւորին իւրեանց : Ի դէս Ժամանակի եհաս ՚ի վերայ զօրավարն Բուսանցով, զխաբեբայն խաղացոյց ՚ի Բեթըրսուրկ. ուր դատապարտեալ նորա ՚ի մահ՝ ածաւ ՚ի գաւառ իւր յՈւքրանիա, և անդ ցցահար եղև : Սպանաւ և երէցն, և զինուորքն որ զհետ չողան

նորա . և գիւղն քանդեցաւ , և բնակիչքն
այսր անդր վարատեցան :

Ընդ նոյն ժամանակս և Պիրեն ընտրե-
ցաւ դուքս Քուրլանախոյ , և փոխեաց
զանուն իւր 'ի Պիրոն , որպէս թէ իջա-
նէր նա 'ի քաջազն տոհմէն Արմանդոսի
Կոնթրոլթայ՝ որ յամին 1577 մարաջախտ
էր 'ի Գաղղիա :

Փոքր մի վաղ քան զխաղաղութիւնն
հաստատեալ ընդ Օսմանցիս կատարե-
ցան հարսանիք օրիորդին Աննայի՝ տուե-
լոյ 'ի կնուծի դքսին Պրունսվլլքայ : Եւ
կայսրուհին 'ի ցոյց իւրոյ մեծութեանն
հրամայեաց յամենայն կողմանց աշխար-
հին ածել 'ի Բեթրպուրկ արս և կա-
նայս յամենայն ազգաց իւրեանց զցես-
տուք 'ի հանդէս հարսանեացն :

Մինչդեռ դշխոյն զայսպիսեօք զուար-
ճուք գայր , անագորոյնն Պիրեն հեշա-
նայր անպարտարեանց հեղուքք : Վասկած
առեալ զոմանց եթէ չարախօս լեալ ի-
ցեն զինքենէ առ դշխոյն , զոմանց զձեռս
ետ հատանել , զոմանց զլեզուս , զկիսոց
զգլուխս , և զայլս աքսորեաց 'ի Սիսլիո :

Զայնու ժամանակաւ դքսուհին Ան-
նա ծնաւ ուստր մի , որում կայսրուհին
Իւան անուն եդեալ՝ էաւ զնա 'ի ծնո-
ղացն իւր յորդեգիրս , և տայր սնուցա-
նել յարքունիս իւրում : Այլ ինքն յետ
սակաւուց խօթացեալ անկու 'ի մա-
հիճս . և օր ըստ օրէ զայրացեալ ախտին՝
իբրև ետես թէ մեռանի , յայտ արար

Թէ իւր կամք էն յաջորդել ինքեան նորածին մանկանն Իւանայ, և յետ նորա՝ եղբօր նորին, Թէ ծնանիցի : Այս ընտրութի Իւանայ, և ՚ի բաց լքումն դքսուհւոյն Աննայի մօր մանկանն՝ գործ էր Պիրենայ . որոյ եղեալ ՚ի մտի ընդերկար ճոխանալ խնամակալութիւն ՚ի ժամանակի կրտսրութեան մանկանն, որսացաւ յիւր կողմն զամենայն զգլխաւորս աւագանւոյն և զեկեղեցականաց և զգլխուորականաց, և ետ նոցա գրել գիր պաղատանաց առ ինքն, զի յանձին կալցի խնամասպետ լինել Իւանայ . և յօրինեալ զԹուղթն՝ տարաւ Օսթերման առ կայսրուհին զի ձեռնագրեսցէ ՚ի նմա : Անդ առ մահճօքն էր և Պիրեն յորժամ ընթերցաւ Օսթերման զԹուղթն . և իբրև ստորագրեաց կայսրուհին, անդէն անկաւ ՚ի տկարութի մահու, և ոչ ևս ինչ կարացեալ բարբառել մեռաւ ՚ի 28 աւուր հոկտեմբերի յամին 1740, ՚ի հասակի քառասուն և վեց ամաց՝ Թագաւորեալ ամն տանն :

Սիրող էր սա կարգի և մեծ վայելչութեան, առատաձեռն առ վաստակաւորս, և գորովագութ առ ամենեւեան, այլ յաճախ ևս կարի իմն Թեթևամիտ և գիւրահաւան իւրոց պաշտօնէից և բարեկամաց :

Ի Ի Ա Ն

ՃԵՐԱԿՈՅՏՆ և սիւնհոգոսն և աւա-
գանին ամենայն կոչեցան ՚ի վաղիւ անգր
յապարանս արքունի, և ընթերցեալ
զկտակն ստորագրեալ յԱննայէ՝ թա-
գաւորեցուցին զԻւան, և զՊիրեն կար-
դային խնամակալ պետութեն : Առա-
ջին գործ իշխանութե նորա եղև՝ ան-
ցուցանել ՚ի Քուրլանտիա անբաւ գանձս
՚ի ստացումն կալուածոց և ՚ի շինուած
հոյակապ ապարանից . թող զբերաւոր
դրամս զորս ծախէր սակս պճնասէր
կնոջ իւրոյ : Գործակիցս ունէր իւր
միայն զՕսթերման, զՉերքապի, և
զՊեսթուշեվ, և ինքն տիրաբար և ար-
ձակ արձակ հրաման տայր յամենայնի
՚ի վեր քան զբնիկ զոք ինքնակալ Ռու-
սիոյ :

Այլ ոչ անգիտանայր թէ առ հա-
սարակ ատելի է յաչս ամենեցուն, և
մանաւանդ յաչս Ռւլրիկոսի առն Ան-
նայի, և գլխաւոր եպիսկոպոսաց և ա-
զատորերոյն . զոր և սառագեալ ՚ի ձեռն
լրտեսաց իւրոց՝ կալաւ զբազումս ՚ի
սպայից դքսին, և ետ խոշտանգել զնոսա՝
զի յայտնեսցեն զգաւակիցս իւրեանց :
Ապա ստիպեաց զգուքսն հրաժարել ՚ի
զորաւարութեն . և եթէ, ասէ, դքսու-

հին իշխեսցէ ինչ գլուխ ամբառնալ,
արձակեմ զնա որդւոյն հանգերձ 'ի
Գերմանիա, և ածեմ նստուցանեմ յա-
թոռն զգուքսն հոլաթէյնայ: Սմին իրի
յայնմհեակ գողալով երևէր միշտ Աննա
աւաջի նորա:

Մուռնիք, որ յուսով ընդ հանուր ըս-
պարտաբեռութե՛ն ձեռնատու լեալ էր Պի-
րենայ՝ զի հասցէ 'ի սատիւ խնամակա-
լութե՛ն, իբրև ետես զի գերեացաւ յոյս
իւր՝ եգ 'ի մտի բառնալ 'ի միջոյ զլի-
րագն: Բանա եգ ընդ Աննայի, և ինքն
'ի 28 նոյեմբերի ճաշ և ընթրիս առեալ
առ Պիրենայ, զբանիւք անկաւ ընդ նմա
մինչև ցմէջ գիշերոյն, և ապա մեկնե-
ցաւ 'ի նմանէ: Իբրև ժամք երկու ան-
ցին 'ի վերայ, գնաց Մուռնիք ընդ Մանս,
թէյնայ զօրագլխի 'ի ձմերոցն արքունի,
ուր էր թագաւորն և ծնողք նորա. խօ-
սեցաւ ընդ Աննայի, և սրտուիրեաց
կոչել զսպայս սրահակացն և յայտ առ-
նել նոցա զթշուառութի իւր և զոր-
դւոյն և զպետութեն. և նա արար ըստ
բանիցն, և երդուան ամենայն սրահակքն
արք հարիւր և քառասուն՝ ձեռն տալ
նմա ընդգէմ բռնաւորին:

Յայնժամ Մուռնիք սպառազինեալ
զսրահակսն՝ քառասուն այր 'ի նոցանէ
եթող 'ի սրահականութիւն գրօշուցն, և
ինքն մնացելովքն հանգերձ գիմեաց 'ի
սալաան Պիրենայ: Մանսթէյն կան-
խեալ և ազգեալ սրահակացն Պիրե-

նայ զինորհուրդն Մուսիքայ՝ քսան զօրականօք և միով սպայիւ խաղաց ՚ի ներքս, և ՚ի բաց դռեալ զքուրս սենեկին Պիրենայ՝ եմուտ անդր, ձայն ետ և հարաւ ՚ի վերայ Պիրենայ, կալաւ զնա սնդապէս մինչդեռ խոր ՚ի քուն ննջէր, և այն ինչ ՚ի վեր հարթուցեալ նորա՝ կամէր թաքչել ընդ մահճօքն, հասին ՚ի վերայ զօրականք, և նդեալ թաշկինակ ՚ի բերան նորա, և կապեալ ձեռս յետս՝ արկին ՚ի կառս և ածին զնա ՚ի ձմերոցն արքունի: Եղկելի կինն Պիրենայ հերարձակ ոտուցեալ յանկողնոյ իւրմէ ընթանայր և նա զհետ առնն. և մի ոմն ՚ի զինուորացն ած զնա ընդ քարչառ Մանսթէյն. և իբրև հրամայեաց Մանսթէյն գարձուցանել զնա ՚ի տուն իւր, զօրականն խորչեալ յաշխատութէն՝ ՚ի բաց ընկէց զնա ՚ի ձեան, և զընաց զճանաստարհ իւր:

Պիրեն իբրև եգաւ յանքոյթ վայրի, ըմբռնեցան և երկոքին եղբարք նորա՝ կոմսն Պեսթուշեւ, և զօրավարն Պրամարք: Ատա ստառազինեցան ամենայն զօրքն գտեալք ՚ի Բեթրսուրկ և ՚ի սահմանս նորա, և շուրջ սրտեցին զարքունեօքն: Աննա հռչակեցաւ մեծ գբսուհի և խնամակալ, և ամենեքեան երգուան նմա զհաւատարմութի. և ելև ուրախուի մեծ ՚ի քաղաքի անդ: Սպաք տմբարձան ՚ի մեծագոյն սպաիւ, այրն գբսուհւոյն կարգեցաւ ընդհանուր ըս-

պարտաւեա, և Մուշեք՝ երկրորդ ար-
քայի :

Խանդացաւ Օսթերման ընդ փառս
Մուշեքայ, և չարախօս եղև բազում
ինչ առ դքսին և դքսուհւոյն, մինչև
Աննա եբարձ՝ ի Մուշեքայ զիշխանութի
անտեսութե քաղաքական իրաց սե-
տուէն, և եթող զզինուորականն և եթ :
Չչարեցաւ ընդ այս Մուշեք, և խըն-
դրեաց՝ կամ լի բովանդակ շնորհել նմա
զպաշտօնն, և կամ արձակել զնա յա-
զատութի : Դքսուհին առ ժամանակ մի
յտպադեալ նմա զպատասխանին, ապա
խորե ետես՝ զի Մուշեք ընդդէմ կայ և
խորհրդոյն Օսթերմանայ՝ մարտ յար-
գարեւոյ ընդ թագաւորին Բրուսաց յան-
խրուի, եթող զնա ի կամս ազատու-
թե իւրոյ, և նա հնդեասասն հազար
բուպի տարեկան թոշակաւ և միով
գնդաւ պահեկապան զօրաց մեկնեցաւ
ի հոսթիլիցա :

Չայնու ժամանակու ել և վճիռ դա-
տապարտութե Պիրենայ. այլ դքսուհին
շնորհեալ նմա զարևն՝ ևտ աքսորել ի
Սիպիր, և ընտրեցաւ գուքս Գուր-
լանտոյ Լուգովիկոս աղջակից դքսին
Պրուշովեքայ :

Յետ այնորիկ ի յաճախել Շվետաց
ի գործս թշնամուէ ընդ Ռուսս, հար-
կեցուցին զնոսա ի պատերազմ, և Լաս-
չի մարաջախան յաղթութիս բազումս
տարեալ ի Ֆինլանտիա՝ բարձրացոյց ըզ-

փառս Ռուսիոյ : Ընդ նոյն աւուրս եկն
 'ի Բեթրապուրկ գեապան 'ի Թագաւորէն
 Օսմանեանց , որպէս և յԱննայէ առա-
 քեցաւ ռուս գեապան 'ի Կոստանդնու-
 պօլիս , զոր ըստ սրայմանաց վերջնոյ ուխ-
 տի խաղաղութեանն՝ նովին հանդիսիւ
 ընդունել ունէին Օսմանեանք , որով
 ընդունէին զգեապանն Գերմանացւոյ :
 Աքեղ ևս հրեշտակութի էր՝ զոր արար
 յայնժամ Թահմազ զուլի խան Պարսից
 առ Թագաւորն Ռուսաց : Առաքէր նա
 ընդ գեապանին իւրում արս վեշտասան
 հազար և Թնդանօթս քսան . ընդ որոց
 բաղմութին կասկած երկիւզի կալեալ
 Ռուսաց՝ արձակեցին գունդս զորաց 'ի
 կողմանս Աժաէրխանու : Իբրև եհաս
 գեապանն Պարսից 'ի գետն Խըղըլեար ,
 զօրաւորն Ափրաքսին առաքեաց ազգ-
 առնել նմա՝ զի անհուն անապատ ընդ
 մէջ կայ Աժաէրխանու և Մոսքուայի ,
 և յանհնարիցն է հոգալ զպէսս այնչափ
 ամբոխին . նմին իրի տղաչէր մի աւելի
 քան երիւք հազարօք խաղալ յառաջ :
 Զկայ էառ գեապանն , մինչև եհաս 'ի
 Թահմազայ հրաման զիջանելոյ Ռու-
 սաց . յայնժամ խաղաց գնաց գեա-
 պանն 'ի Մոսքուա երեք հազար հեծե-
 լովք՝ ածեալ 'ի սարգև Թագաւորին
 Ռուսաց փիղս չորեքօտասան , և բաղում
 ականս սրատուականս : Իսկ բան հրեշ-
 տակութեանն էր խնդրել զՆղիսաբեթ
 զգուսար մեծին Պետրոսի 'ի կնութիւն

Թահմազայ : Խնամակալ գքսուհին հաճեցաւ իմն ընդ խնդիրն , այլ ոչ Ռուսք , և ոչ Եղիսաբէթ ոչ առին յանձն ազգախառնութի կարգել ընդ խուժին :

Էր յայնժամ Ռուսիա 'ի խաղաղութե և 'ի հանգստեան մեծի . այլ որչափ զիւր առնէր գքսուհին ժողովրդեան իւրում , նոյնչափ ևս անանգորր էր յառանին իրս իւր , մինչև բաժանիլ նմա յառնէ իւրմէ : Սակայն և ոչ արտաքին խաղաղութին յերկարեաց յոյժ : Քանզի կոմսն Կոլովքին ստոխ յարուցեալ Օսթերմանայ մտերմին Ուլրիկոսի , յոր գորեաց և հաւանեցոյց զգքսուհին անձամբ թագաւորել , սրաճառանօք խափանելոյ զխառնութիս որ կարէին յուզիլ յանկարծ թէ մեռանէր մանուկ արքայն : Արտացաւ Կոլովքին և զոչ սակաւս յաւագանւոյն , և յ18 գեկտեմբերի հաստատեցին թագաւորեցուցանել զգքսուհին :

Ըստ կարգի յաջորդութեն հաստատելոյ 'ի մեծէն Պետրոսէ , յետ մեռանելոյ Պետրոսի երկրորդի՝ Եղիսաբէթի անկ էր թագաւորութին . այլ նա ընդ երկար անփոյթ արար զայնմանէ՝ ոչ միայն զի վէհերոս էր կամ թէ խաղաղասէր , այլ զի և զինքնօրէն կեանս զիւրութե 'ի վեր գասէր քան զամենայն : Ապա Ախթոք ոմն վերարոյժ գաղղիայի յազգէ ընդ միս մտեալ Եղիսաբէթի՝ ստէպ ստէպ յորդորանօք հաւանեցոյց

զնա վրէժխնդիր յառնել իրաւանց իւրոց : Շահեցաւ և զոմանս 'ի զօրականաց , և զյուզովս 'ի պահանորդաց :

Յաւուր միում իբրև լուաւ զի դքսուհին 'ի կասկածոտ միաս էր զդաւանացն , ստիպեաց զԵղիսաբէթ մի ևս յասպաղէլ զիրան . և դժեալ 'ի թղթի թագ մի և անիւ , եցոյց Եղիսաբէթի , և ստէ . « Կամ քեզ այսօր մին 'ի սոցանէ , կամ ինձ միւսն առ վաղիւ » : Եւ խոստացաւ նմա Եղիսաբէթ անյասպաղ ձեռն 'ի դործ առնել : Յայնժամ գումարեաց Ղէսթոք զդաւակիցան , և զԵղիսաբէթ ըզհասարակ գիշերաւ ամ 'ի ձմերոցս Փրէօ պրաժենսքի գնդին , որք 'ի տեսիլ դատեր մեծին Պետրոսի առ հասարակ երգուան հեղուլ 'ի սէր նորա մինչև ցլետին շիթսարեան իւրեանց . և Ղէսթոք դիմեալ նորք յասպարանան արքունի՝ ձերբակալ առնէ զդքսուհին և զայր նորա , և զԼւան և զքոյր նորին , և խաղացուցեալ սահնակօք 'ի պալատն Եղիսաբէթի՝ 'ի պահ զգուշուէ արկանէ զնոսա յայլ և յայլ սենեակս : Ասրա ըմբռնեալ և զՄուհիք և զՕսթերման և զԿոյովքին և զայլս ոմանս՝ բանտարգել առնէ զամենեւեան 'ի բերդի անդ : Եւ ընդ այգն 'ի ժողովել աւագանւոյն և ծերակուտին յայտ արարաւ նոցա անցանել դատերն Պետրոսի մեծի յաթոռն նորին , և ամենեքեան 'ի մի բերան երգուան նմա զերգումս հաւատարմութի :

Ձ հետ երկից աւուրց տուանձին հրովարտակ հանաւ՝ եթէ դքսուհին Աննա և այրն իւր ոչ ինչ իրաւունս ունելով՝ ի Ժառանգուիա թողոյն Ռուսիոյ՝ աւարին ի Գերմանիա . այլ իբրև հասին նոքա ի Ռիկա . արգելան ի միջնաբերդի անդամ մի և կէս . անտի փոխադրեալ մինչև ի Քոլմոկորի կղզի ի մէջ Տվինա գետոյ՝ անդ մեռաւ դքսուհին յամին 1786 :

Իսկ մանկիկն Իւան բաժանեալ ի ծնողացն յարգելա կայր ի Շլուսէլ սուրկ . և Եղիսաբէթի յամին 1756 կամեցեալ տեսանել զնա՝ ետ բերել անտի , և ի խօսել ընդ պատանւոյն յարտատու հարաւ ասեն : Ապա Իւան անդրէն դարձուցաւ յարգելան իւր . և իբրև եղև ամաց քսան և վեցից . Միրովիչ անուն խաղախ թօռն Մաղեփփոյ կամեցեալ հաստատել զնա վերստին յաթոռ թաղաւորութեն՝ եմուտ բրունութիւն ընդ զօրականս ոմանս ի բերդն , և սկսաւ հարկանել զբերդապահան : Ձայն տեսեալ երկուց ոմանց սպայից որ կային առ Իւանայ , և երկուցեալ թէ թէ դուցէ զերծանիցի Իւան , և խօսվեացի աշխարհն , հարան ի վերայ սպտանւոյն և սպանին զնա : Այսպէս որ անդասին ի տղայ տիոյ ի ծիրանիս խանձարրեալ ինքնակալ կոչեցաւ , յետ վըշտայից կենացն պատանեկութե տեսաւ գիական նորսր առ դուրս եկեղեցոյն

Շքուհի լայուրիոյ ծածկեալ դձուճ ամ-
զանաւ նաւավարի :

ԵՂԻՍԱԲԵԹ

Ընդ անցանել Եղիսաբէթի յաթոռ-
թագաւորութե արագ արագ հատաւ և
վճիռ գլխասարառութե իշխանացն կա-
պելոց . այլ Եղիսաբէթ շնորհեալ նոցա
զկեանան՝ արտասահման արար ՚ի Սիպիր :
Ապա վարձահատոյց եղև առատապէս ու-
րոց օգնական եղէն նմա և թագաւորե-
ցուցին : Դարձոյց յաքսորանացն Սիպիրոյ
ոգիս իբր քսան հազար . որպէս սովո-
րութի էր նոր թագաւորացն Ռուսիոյ՝
ազատութիւն շնորհել աքսորելոցն առ
նախնի թագաւորոք սակս ոչ յոյժ ծանր
յանցանաց :

Յանկայր Եղիսաբէթ ուխտ խաղա-
ղութեան հաստատել ընդ Շվէտս . այլ
իբրև ետես զի նոքա ծանր ծանր պայ-
մանս պահանջէին , ձեռն էարկ անդրէն
՚ի սրատերազմ : Ապա տեսեալ նորա ըզ-
զեղծմունս որք սպրդեալ էին ՚ի թագա-
ւորութեն ՚ի Պետրոսէ հետէ , եբարձ
զգազանի խորհրդարանն , և լրացոյց զիշ-
խանութի ձերակուտին՝ որպէս էրն առ
հարբն իւրով : Եւս կարևոր խորհուրդ
խորհեցեալ՝ կոչեաց ՚ի Բէթրպուրկ ըզ-
գեռահասակ որդի քեռն իւրոյ երիցու ,

կարգեաց զնա փոխանորդ սպարապետի, և հաստատեալ իւր յաջորդ 'ի թագաւորութեն' հրամայեաց զի աղգն ուղջոյն երգուիցէ նմա զերգումն հաւատարմութե . և փոխեալ զանունն նորա՝ կոչեաց Պետրոս Գէոսարովիչ :

Դէպք իմն յանակնկալս պատահեցին յայնժամ . զի 'ի վազիւ անգր որ յեալնարութեն Պետրոսի երրորդի, հրեշտակք 'ի Շվետաց հասին 'ի Բեթրալուրկ հրաւիրել զնա յաթող թագաւորութեն Շվետաց . զի թագաւոր նոցա ծեր էր և անզաւակ, և սա դուքս գողով հողութէյնայ՝ համարէր 'ի սերնդոց կուսդաւոսի Աաղայ արքային Շվետաց : Պետրոս եցոյց նոցա փոխանակ իւր զհօր եղբայրն իւր զԱտոլփոս Փեդերիկոս զեպիսկոպոսն Լուպէքայ : Եւ որ զարմանալին է, մինչ դեռ ևս այս բանագնացութիք լինէին 'ի միջի՝ պատերազմ սաստիկ էր Ռուսաց ընդ Շվետս :

Մի 'ի պայմանաց թագաւորելոյն Եղիսաբեթի էր՝ զերծուցանել զՌուսս 'ի բռնութեց եկամուտ աղգացն խռնելոց 'ի նոսա : Այսու պատճառանօք դունգմի զօրականին տահանջէր 'ի նմանէ կոտորել զամենայն զօտարականն, կամ գէթ արտասահման առնել զնոսա : Եւ 'ի չառնուլ յանձն Եղիսաբեթի զխժական խորհուրդն, սփռեցաւ ընդ քաղաքն համբաւ ստութե՝ որպէս թէ հրաման իցէ զօրացն գտելոց 'ի Բեթրալուրկ

սպանանել և կողոպտել զամենայն օ-
տարականս քաղաքին . և նոցա յարձա-
կեալ իւրաքանչիւր դէպ երեսաց իւ-
րեանց՝ անբաւ աղէտս գործեցին՝ ի քա-
ղաքի անդ , մինչև հազիւ ուրեմն զօրս-
վարն Քէյթ սանձեաց զնոսա , և իսով-
արարքն պատուհասեցան :

Յետ այնորիկ սաստկագոյնս վառեցին
Ռուսք զմարտն ընդ Շվէտս , մինչև իսո-
նարհեցուցին զնոսա՝ ի խնդրել զխաղա-
ղութի , և յամին 1743 յամսեանն մար-
տի կռեցան պայմանք ուխտին յԱպօ .
որով եպիսկոսոսն Լուսէքայ ընտրե-
ցաւ յաջորդ թագաւորին Շվէտաց ,
որպէս կամէին Ռուսք , և առաւ Ռու-
սաց մասն մի՝ ի գաւառացն՝ զորս կալան
՝ ի Ֆինլանտիա յայնմ՝ պատերազմի :

Զայնու ժամանակաւ թահմազ զու-
ղի իսան սրամտեալ յոյժ ընդ հրաժեշտն
Եղիաաբէթի յերթալոյ նմա՝ ի կին ,
սրատրաստեցաւ իսպալ ի վերայ նորա
մարտիւ պատերազմի : Այլ իբրև ետես-
զի և Ռուսք զօրաժողով լինին՝ ի կողմանս
Աժտէրխանայ և Աովկասու , զիջաւ ի
հաշտութի , և դարձոյց զզէն իւր ի վե-
րայ թագաւորին Օսմանեանց : Եւ Ե-
ղիաաբէթ դարձոյց զուշ իւր ի տեսու-
թի ներքին և արտաքին իրաց թագաւո-
րութէն :

Այլ Պեսթուշեվ հազարապետ թա-
գաւորութէն այր փառամուլ և նենդ-
ժոս՝ քաղում՝ դժաուրիս արկ ընդ Ե-

զիսաբեթ և ընդ դեսպանս Գաղղիա-
 ցւոյ, որք ձեռնառու լեալ էին 'ի թագա-
 ւորեցուցանել զգլխոյն: Ապա խանդա-
 ցեալ և ընդ փառս Լեւթոքայ, և թըշ-
 նամացեալ ընդ նմա սակս բարեկամու-
 թեան նորին ընդ Գաղղիացիս՝ այնչափ
 ինչ արար և հնարեցաւ, մինչև յաչաց
 եհան զնա Եղիսաբեթի, և սուայօդ
 յանցանս արկեալ 'ի վերայ քաջի առնն
 և իւրոյ բարերարի, ետ արգելուլ զնա
 'ի բերդ մի, և յետ չորից ամաց աքսո-
 թել յԱւսթիւժ վէլեքի մերձ յԱրքան-
 կէլ՝ կարգեալ նմա ռոճիկ օր ըստ օրէ
 լուսլիս երիս: Յետ ժամանակաց Պե-
 արոս Գ յաջորդն Եղիսաբեթի դար-
 ձոյց զԼեւթոք յաքսորանացն, և կար-
 գեաց զնա որպէս յաւաջն էր՝ բժշկա-
 պետ արքունի և խորհրդական. ստրա
 և Կատարինէ Բ կարգեաց նմա թոշակ
 եօթն հազար լուսլիս և կաշուածս գե-
 ղեցիկս 'ի Լիվոնիս:

Չև էր հասեալ ժամանակ պատու-
 հասի ժանտին Պեսթուշեվայ. որոյ
 դեռ ևս 'ի շնորհս գոլով Եղիսաբեթի՝
 ունէր և զխնամ գաստիարակութե Պե-
 արոսի, և զքօսեցուցանէր զնա 'ի խաղս
 և 'ի մեղկութիս: Հեռացոյց 'ի նմանէ
 զամենեսեան որ կարէին խորհրդական
 բարեաց լինել նմա բանիւ և օրինակաւ,
 և կասկած երկիւղի արկ 'ի սիրտ կայս-
 րուհւոյն՝ որպէս թէ անսանձելի կիրք
 մեծի դքսին անշուշտ զեան մեծ հա-

սուսացեն գշխոյին վաղ կամ անադան :

Սմին իրի կարգեցան առ Պետրոսի գէաք զգուշութի, և 'ի բաց արդեւան 'ի նմանէ անգամ և ընտանիք նորին, և եղեն նմա արքունիքն բանա անբմբէրելի : Ոչ կարացեալ Պեսթուշեւայ շիջուցանել զխանդ նորա 'ի զինուորական իրս, ետ բերել 'ի Հոլսթէյնայ գունդս զօրաց, որովք զքօնոյր Պետրոս յապարանս Մենշ չիքովայ, զոր սարգևեալ էր նմա Եղիսաբեթի :

Այլ ընդ զքօսանացն և 'ի դատարկութի և 'ի թուլութիւն հատանէր նա ընդ անկիրթ սրտանիս և համբալս ըստ պայիցն որ էին անդ ընդ նմա : Եւ զի սարգամիտ ևս էր 'ի բանս և 'ի խորհուրդս, քաղեցին ոմանք 'ի բերանոց նորա բանս նախատանաց ընդդէմ աղգին Ռուսաց, և յաւելին գրգռել զկասկած մասցն Եղիսաբեթի : Եւ նա թէսպէտ և առ երեսն չհաւատայր զսպարուչացն բանից, այլ 'ի սրտէ ցանդ յահի և 'ի դողման կայր, և անհանգիստ էր զմեծ մասն սուրբ կենաց իւրոց, գրեալ թէ զօրհանապաղ փոփոխէր զճաշատուն իւր, և զերկուս գիշերս մի զմիոյ կնի ոչ ննջէր 'ի նմին սենեկի :

Մի միայն միսիթարութի նորա այն էր, զի ամուսինն Պետրոսի Կատարինէ անգուլ սպարապեալ 'ի հմաութի օրինաց և սովորութեց և բարուց ազգին, և յընթերցմունս խնաստալից մատենից,

յոյս մեծ ընծայէր 'ի չափու ունեւոյ և զայրն իւր : Յաւել նա և ևս օփոփանա Եղիսաբեթի՝ ծնանելով զորդին իւր զանգրանիկ , որ կոչեցաւ Պօղոս :

Իսկ Պեսթուշեւ երթալով երթայր և բռնանայր 'ի վերայ ամենայնի . ետ Եղիսաբեթի հաստատել նոր ատեան բարձրագոյն քան զձերակուտին , անուանեալ Ատեան յարաբերութեան , որում անկ էր քննութի գաշանց , սպատերազմի , հասից և ծախուց և ամենայն կարևոր գործոց պետութեն : Ուր ուրեմն երայ զաչս Եղիսաբեթի սենեկասպանն Պրոքենատոր՝ , և եցոյց նմա աչօք բայօք զպատրանան յոր ըմբռնեալ կայր : Արկաւ Պեսթուշեւ յիշխանութեն , և արգելաւ 'ի բանաի : Յայնժամ հրատարակեցան բաղմասպատիկ անիրաւութիք Պեսթուշեւայ , և Եղիսաբեթ անձին հրովարտակաւ նշաւակեալ ըզջարիս նորին՝ հրամայեաց անաչառ գատաստանաւ քննել զնա յատենի առաջի իւր , և ասպա աքսորեաց յաւանն Կորեթովօ ոչ ինչ կարի հեռի 'ի Մոսքուայէ :

Ընդ նոյն ժամանակս յամին 1757 մարաջախան Ախրաքսին եմուտ սրատերազմաւ 'ի Բրուսիա , և էառ զՄեմել , ասպա մարտ սասաիկ տուեալ ընդ Բրուսա առ Եակէրատոր՝ քաղաքաւ , 'ի փախուտ գարձոյց զնոսա , և կալաւ 'ի նոցանէ թնդանօթս քսան և ինն . և փո-

խանակ հետամուտ լինելոյ փախստելիցն՝ դարձաւ ձմերել ՚ի Լէհատտան: Դժուարեալ ընդ սյն Եղիսաբէթի՝ հրամայեաց նմա յանձն առնել զգօրսն առ զօրավարն Ֆէրմօր, և դառնալ ՚ի Ռուսիա տալ զհամար գործոց իւրոց: Ի Նարվա արկաւ Ափրաքսին ՚ի բանա, և մինչև վճարեալ դատաստանին՝ մեռաւ ՚ի կաթուածէ:

Իսկ Ֆէրմօր յարձակեալ էառ և զՔէնիկապերկ և զՔուսթրին, և տարաւ յաղթանակ մեծ ՚ի վերայ Բրուսոց. այլ տկարացեալ ՚ի բազում վատակոց յամին 1758 հրաժարեաց ՚ի զօրավարութեն, և առաքեցաւ փոխանակ նորա Զոլթիքով:

Խաղաց գնաց Զոլթիքով գէտ ուղիղ ՚ի Քաոսէն, ուր խառնուրդք եղեն պատերազմին, և Բրուսք մեծամեծ նախաձիրս գործեալ ՚ի Թշնամիս անդր՝ ՚ի վերջէ ՚ի պարտութի մասնեցան, Թողին ՚ի տեղւոջն Թնգանօթա և գրօշս և մեկնեցան, և անկան ՚ի նոցանէ ողիք երկու հազար, և վերաւորք չորեքհազար: Աճապարեցին մտին յաղթականքն ՚ի Քաոսէն, և անախտեալ առին զՖրանքֆորթ առ Օտերաւ: Փեգերիկոս արքայն Բրուսաց ինքնին անցեալ ՚ի գլուխ քսան հազար զօրականաց՝ խաղաց գնաց ՚ի խախտել զգալուստ Լաւտոն և հատալք զօրավարացն Գերմանացոց յօգնուի Ռու-

սաց : Եւ թէպէտ անադան ժամանեաց , սահայն խիզախեալ ճակատեցաւ ընդդէմ բանակին Ռուսաց :

Իբրև սկիզբն եղև մարտին , երկուստէք անսպարառելի քաջութիւն կռուեցան ժամս ու թ կամ ինն , մինչև ջուր թիքով բազմութիւն իւրոցն վանեաց զԲրուսս , և թափեաց 'ի նոցանէ գրօշս քսան և վեց , թնդանօթս հարիւր և յիսուն և կարասի բազում : Եւ էին անկեալքն 'ի սպտերազմին ու թ հազար Բրուսք , թող զժիրաւորսն ոգիս եօթն հազար . խկ 'ի Ռուսաց անկան արք հնգետասան հազար : Վասն որոյ թէ և ամենայն Ռուսաց ուրախութիւն մեծ եղև ընդ յաղթունին , այլ Եղիսաբէթ գոչեաց ցաւագին . «Քանի՛ քանի անմեղք անկան յարևէ» : Ապա բաշխեաց զօրավարացն և սպայից և զօրականին սարգևս մեծամեծս :

Չարմանալի քաջութիւն շահատակեալ էր յայնմ սպտերազմի և զօրավարն Փանին . զի ըմբռնեալ յանըմբերելի ցաւոց ոտնառութեան՝ ոչ հանդուրժեաց կալ յանկույնի , և 'ի ձեռն ծառայից իւրոց 'ի ձի աշտանակեալ ահագին քաջութիւն գործեաց 'ի բանակի թշնամեաց , և ոչ գարձաւ 'ի խորան իւր մինչև ցվախճան սպտերազմին :

Յետ այնորիկ գիմեցին Ռուսք 'ի սաշարեւ զՔոչլուէրի . և այն ինչ յառնուէր քաղաքն , եհաս 'ի վերայ զօրավարն Վերնէրս չորիւք հազարօք , և ահարեկ

արարեալ զՌուսո հալածեաց 'ի տեղ-
 զւոջէն : Զայն պատճառս տուեալ նա-
 խանձորդայն Զոլթիքովայ՝ սախալեցին
 զԵղիսաբեթ կտրգել 'ի տեղի նորա
 զՊուլթիուրլին : Ապա պաշարեցին
 Ռուսք ժիւտանգամ զԲոլշոյերկ 'ի ծովէ
 և 'ի ցամաք կուսէ, և 'ի հինգերորդում
 ամսեանն անձնատուր եղէն քաղաքա-
 ցիքն չափաւոր պայմանօք :

Աւետիք այսր յաղթանակի եհաս 'ի
 Բեթրսուրկ յորժամ Եղիսաբեթ ան-
 կեալ յախտ մահացու մերձ էր 'ի վախ-
 ճանել : Ի տագնապ ժամուն ևս յայտ
 արար նա զընդաբոյս գորով սրտին, և
 հրամայեաց ազատս արձակել զամենայն
 բանտարկեալն յողագս արգելեալ վա-
 ճառուց, և զմաքսն ևս շնորհել նոցա :
 Եհան 'ի բանտէ և զամենայն պարտա-
 տեարս՝ որոց պարտք նուազ էին քան
 զհինգ հարիւր ըւսպլիս, և յիւրոց գան-
 ձուց հատոյց զպարտիս նոցին : Պատուի-
 րեաց յաջորդին իւրում հաւատարիմ
 մնալ յուխտի բարեկամութե ընդ այլ
 պետութիս, և մեռաւ 'ի 5 յունուարի
 յամին 1762 :

Առ հասարակ գրուատեալ է Եղիսա-
 բեթ ըստ ամենայն գլխոց . այլ որ զար-
 մանալին էր յանձին նորա՝ գթութիւն
 էր անչափ, և թուէր իմն ոչ 'ի թագա-
 ւորէլ և 'ի տիրապետել բազմեալ յա-
 թոռ արքունի, այլ 'ի մայրօրէն խնա-
 մովք տածել և սփոփել զամենայն զվըշ-

տացեալս որք միանգամ գիմէին առ
 սոս նորա : Քաջ գիտաց նա միաբանել
 զքաղցրութի ընդ մեծանձնութեան , և
 զչամբաւորութի ընդ արքունի պերճու-
 թէ , որովք և սիրելի եղև Ռուսաց և ահ-
 արկու : Եւ թէ ոչ տակաւ ժամանակս
 խարեցաւ նա 'ի Պեսթուշեվայ , և թոյլ
 ետ նմա զանիրաւութիսն , այլ միան-
 գամ զանձամբ եկեալ՝ դարձեալ յայտ
 արար զխորազնին դատուին մտաց իւրոց՝
 ընտրելով 'ի տեղի նորա իւր բարեկամ
 հաւատարիմ զկոմսն Վորոնցով՝ զայրն
 ըստ սրտի նորա :

Բարգաւաճեցոյց Եղիսաբէթ յոյժ
 յոյժ և զգիտութիս և զարուեստս . ճա-
 խացոյց ևս քան զևս զճեմարանն գի-
 տութեց , և հաստատեաց այլ ճեմա-
 րան գեղարուեստից . և առ նովաւ մա-
 նաւանդ սկիզբն արարին Ռուսք իրա-
 ւամբք հակառակել ընդ այլ ազինս Եւ-
 թոսայ առ 'ի յամիշտակել զմրցանակս
 որպիսի և իցէ փառաց :

Օ հնդեցունց հոյակապ յաջորդացն
 Եղիսաբէթի , և մանաւանդ զվերջնոցն
 երկուց , զԱլեքսանդրէ ասեմ Ա , և ըզ-
 նԻԿՈՂԱՅՈՍԷ Ս , ոչ ունելով մեր առ-
 ձեռն ճշգրիտ և ոճով պատմութի ար-
 ժանի պանծալի արարոց նոցին , կարևոր
 համարեցաք գոնեա զերեւելի երևելի
 գործոց նոցին զիշատակս ժամանակօքն
 հանդերձ գրոշմել 'ի կարգիս :

ԼՐՈՒՄՆ

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ե Ա Ն

ՌՌՒՍԱՅ

1762 = 1850



ՊԵՏՐՈՍ Գ.

(Ս) ԱԳԱՒՈՐԵԱԼ սորա փոխանակ Եղիսարէթի՝ յառաջին աւուրս անդ զարմացոյց զՌուսս վայելուչ գնացիւքն, որպիսի ինչ ոչ ակն ունէին նոքա տեսանել ՚ի նմա : Ներեաց ամենեցուն որք միանգամ միասակար լեալ էին պատուոյ իւրում առ թագաւորուքն Եղիսարէթի . դարձոյց յաքսորանաց զՄունիք և զՊիրեն . արձակեաց յազատութի և զՂէսթոք , և վարձահատոյց եղև ճոխաբար բարեկամաց իւրոց և հաւատարիմ արբանեկաց :

Եւ քանզի անգտաին ՚ի սկզբանէ հետէ զարմացեալ էր նա ընդ արիութիւն Փեղերիկոսի արքային Բրուտաց , փութացաւ ոչ միայն խաղաղութի առնել ընդ նմա և դարձուցանել ՚ի նա անգրէն

զամենայն աշխարհն, այլ և օգնականն նիզակակից լինել նմա խոստացաւ, և արձակեաց ձրի զամենայն զգէրին:

Արչափ մտերիմ էր Պետրոս արքային Բրուսաց, ըստ նմին չափու ռոսայր ընդդէմ թագաւորին Գանեաց Փեդերիկոսի Ե, որ տիրապետեալ էր 'ի վերայ իւրոյ հայրենի նահանգին, այսինքն է Հոլսթէյնայ: Նմին իրի խաղացոյց ընդայն կողմանս արս յիսուն հազար: Զայն զգացեալ արքային Գանեաց, զօրահատոյց եղև և ինքն, և միաբանեաց ընդ թագաւորին Գաղղիոյ և ընդ Մարիամու թերեզեայ գլխոյին Գերմանացւոց:

Այս նշանք յայտարարք ճոխաբար իշխանութե և տեսչուեն Պետրոսի հաճոյ եղեն յոյժ Ռուսաց. այլ վաղ խթեցին զաչս բոլորից անկարգ և ցոփ վարք նորա. մանաւանդ ատելութիւն ընդդէմ Ռուսաց, և կարճելն զհասս եկեղեցականաց: Իսկ նա և այնու ոչ շատացեալ արգել առ հասարակ ամենեցուն, զի մի ոք որ չիցէ զերեսնամենիւք՝ մասնիցէ 'ի վանս 'ի կրօնաւորութի: Աքսորեաց և զարքեպիսկոսպոսն 'չովկորոսայ, և հրաման ևս եհան բառնալ յեկեղեցեաց զամենայն զսրտակերս՝ բաց 'ի սլաոկերացն Քրիստոսի և Տիրամօրն: Գայթակղեցան ժողովուրդքն ընդ այս գործ թագաւորին, և կասկած կալան թէ նա անդրէն 'ի բնիկ ազանդ իւր կամիցի դառնալ 'ի լուտերականութի. և հաս-

տատեցան 'ի կասկածսն՝ յորժամ տե-
սին զի և եկեղեցի հրամայեաց կանգնել
լուտերականաց մերձ 'ի սրալատ իւր , և
անձամբ առաջիկայ գտաւ նաւակա-
տեաց նորին :

Ապա իբրև տեսին զի գժտուածք էր
նա և ընդ ամուսնոյն իւրոյ առաքինւոյն
Կատարինեայ , խորշեցան ուժացան 'ի
նմանէ , և ակն եղեալ մնային թագա-
ւորելոյն Կատարինեայ : Մտերիմքն , և
մերձաւորք Կատարինեայ ազգ արա-
րեալ նմա զուխա սրտի ժողովրդեանն , և
զմտաշուտ վտանգ նորին իսկ կենաց ,
հաւանեցուցին զնա կանխել զառաջս
առնուլ Պետրոսի , որ 'ի մտի եղեալ էր
յՅօ առւր յունիտի արգելուլ զամու-
սինն որդւոջն հանգերձ 'ի բերդն Շչու-
սէլպուրկայ :

Աւուրբ յառաջ իշխանն Օւլով և
այլք ոմանք յաւագանւոյն աճապարե-
ցին հանին զԿատարինէ 'ի Փեթերհո-
ֆայ՝ մինչդեռ Պետրոս էր յՕրանեն-
պաւմ , և տարան զնա 'ի ձմերոց պահա-
կացն՝ որք ըստ յառաջագոյն գիտուածե-
անդէն թագաւորեցուցին զԿատարինէ :
Անտի անյապաղ փուծացան 'ի մայր ե-
կեղեցին Բեթրպուրկայ գիշերայն , ուր
և առաջի աւագանւոյն և ուխտի եկե-
ղեցւոյն հաչակեցաւ Կատարինէ 'ի կայս-
րուհի Ռուսաց , և երգուաւ անարատ
պահէլ զկրօն և զօրէնս պետուէն : Եւ
ընդ այդն ամենեքեան որք միանգամ

իրազեկ եղեն պատահելոցն՝ խնդալից սրաիւ երգուան նմա զերգումն հաւատարմութի :

Յայնժամ Կատարինէ ամենայն ամբոխիւն արամբք իբր հնդեատասան հազարաւ դիմեաց յՕրանեհալաւ : Տագնապեալ Պետրոսի ը անակնկալ գէտան՝ առաքեաց զկոման Աորոնցով զի խօսեսցի ՚ի հաշտութի . այլ Աորոնցով ոչ ևս գարձաւ անդրէն առ նա : Գրեաց Պետրոս թուղթ առ Կատարինէ , որով յայտ առնէր թէ ինքն սրտորաստ է հրոժարել յինքնակալութէն և մեկնել ՚ի Հոլսթէյն . և մինչև ընկալեալ նորա զպատասխանին՝ տարածեցաւ համբաւ մահու նորին ՚ի յանկարծական իմն խթից որովայնի , որպէս ասէին :

Եւ քանզի չև էր սրակեալ ՚ի թագաւոր , մարմին նորա ոչ ՚ի շիրման նախնեացն իւրոց թաղեցաւ , այլ ՚ի վանս Աղեքսանդրի Նեւսքեայ : Սակայն յետ երեսուն և չորից ամոց թագաւորեալ որդւոյ նորին Պօղոսի , եհան զոսկերս հօրն ՚ի գերեզմանէն , և ՚ի վերայ տապանին կատարեալ զհանդէս պատկմանն՝ հռչակաւ և մեծաւ փառօք զեռեղեաց զնա ՚ի կարգս այլոց ինքնակալաց :

ՉՆՆԻՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ առ կուսակիցս Պետրոսի նախկին գործ արարեալ Վատարինեայ, ապա 'ի վերջ կոյս 1762 աժին գնաց 'ի Մոսքուա և սլսակեցաւ 'ի կայսրուհի . և անդ 'ի հրատարակել դաւանաց իրիք ընդդէմ նորա՝ զխառվարարան ձերբակալ արարեալ ետ սքսորել 'ի Սիպիր . այլ զՄլրովիչ զգաբեացապարան 'ի մահ գատասարտեաց :

Զայնու ժամանակաւ 'ի մեռանել Օգոստեայ արքային Ղեհայ՝ իբրև ժողովեցան 'ի խորհուրդ աւագորեար նոցին, Գերմանացիք, Բրուսք, Օսմանեանք և Ռուսք արձակեցին զորս 'ի սահմանագլուխս Ղեհաստանի, զի մի ինչ ալմուկ յարուցեալ Ղեհայ ըստ իւրեանց սովորութին վրդովեցեն զխաղաղութին հասարակաց, և Վատարինէ յայտարար աւագանւոյն Ղեհայ՝ թէ իւր ուխտ սրտի է տեսանել յաթոռն թագաւոր շոք բնիկ լէհ յազգէ : Նմին իրիորոշեցան յընտրութի լէհացիք չորք, Պրանիցքի, Յարովինսքի, Ղիւպովսքի, և Ստանիսլաւ Փոնեաթովքի . և ընտրեցաւ վերջինս՝ մտերիմ գոլով Վատարինեայ, և թագաւորին Բրուսայ :

Յետ սակաւուց բազումք յազատա-

նւոյն Աւհայ միաբանեցին ընդդէմ ամենայն աղգաց այլադաւանից դաւելոց 'ի Աւհաստան, զի մի տացի նոցա պատիւ և համարձակութի ազատութե հաւասար այլոց Աւհայ . և այնչափ աճեաց խռովութիւնն, մինչև Ստանիսլաւայ և ծերակուտին յօգնութի կոչել զԿատարինէ . զի միաբանեալ խռովարարացն ընդ իւրեանս և զԹաթարս՝ նոքօք հանդերձ խաղային 'ի Աւհաստան : Արձակեաց Կատարինէ 'ի Աւհաստան արս քառասուն հազար, որք ահագին կոտորած հասուցին 'ի վերայ նոցա : Անտի և Գաղղիացիք յօգուտ ուղղափառ հաւատոյ համարելով զաղմուկն՝ բանիւք և դրամովք իրախուսէին զաստատման : Իսկ նոքա գիմեցին և առ Թադաւորն Օսմանեանց սուլդան Մուստաֆա . և նա զի պատճառս խնդրէր պատերազմի ընդդէմ Ռուսաց, զօրաժողով եղև մեծապատրաստութե մերձ յԱդրիանուպօլիս, և արձակեաց զվէզիրն դէպ 'ի Աւհաստան վեցհարիւր հազար զօրօք :

Յամին 1769 զօրաւարն Կոլիցին էառ պատերազմաւ զամուրն Խօթուն, այլ ասպա դարձ արար յետս 'ի խնդիր համբարուց : Զհետ աւուրց քառանից միւսանգամ յարձակեալ Կոլիցինայ յՍտեպանմբերի բազում կոտորածս հասոյց 'ի զօրս Տաճկաց, և 'ի փախել Ենիչէրեայն՝ յառաջ ևս խաղացեալ էառ զԵաշ և զՊուքրէշ, և զկուսակալս

Մոլտաւիոյ և Վալաքիոյ ձերբակալ աւրօրեալ առաքեաց 'ի Բեթրայուրկ : Էառ ապա և զայլ քաղաքս մինչև 'ի Պէնտեր . և թէպէտ զօրք Օսմանեանց նուազեալ և ահաբեկ էին , այլ Կոլիցին ոչ իշխէր յարձակել 'ի վերայ ամուր ամուր քաղաքացն մնացելոց : Յայնժամ արձակեաց Կատարինէ ընդդէմ Օսմանեանց զքաջ սպարապետն Տումեանցով , և զզօրավարն Փանին , զի վախճան արասցեն մարտին՝ ական եղեալ առնուլ զամենայն երկիրն որ է 'ի մէջ Տնեսդեր և Փրութ գետոց :

Տումեանցով վաթսուն հազար զօրք ձակատեալ ընդդէմ բանակին Տաճկաց , յարձակեցոյց երկուսուք 'ի պատնէշս նոցա զզօրավարսն Տեփնին և զՓոթեմքին , և յեա արիւնըռուշտ պատերազմի առին նոքա մինչև զչորրորդ կարգ սրտնըշացն : Եւ Տումեանցով մնացելովքն ձիոք զհետ մտեալ փախստեցին Տաճկաց , որք աւելի էին քան զարս հարիւր և երեսուն հազար , զբազումս 'ի նոցանէ գետամոյնս արար 'ի Դանուբ , և զմնացեալսն հալածեաց մինչև 'ի հեռաստան , և սպա դարձաւ բաշխեաց 'ի զօրս իւր զաւար և զճոխութիս զօրացն Տաճկաց՝ որք սիրւա տարածեալ անկեալ կային զամենայն զճանապարհաւն : Ապա էառ զօրավարն Տեփնին զԲալաս քաղաք , և Պաւեր զԱխպիրման և զԲելի :

Մեծագոյն ճգանց սէտք եղեն զօրավարին Փանինայ յառնուլ զՊէնտէր: Զի պաշարեալքն Տաճիկք և Թաթարք արքիբր հնգետասան հազար՝ յուսահաս մտօք զդէմ կալան Ռուսաց զաւուրս հնգետասան, մինչև հարկեցաւ Փանին նոր զօրս ինդրել 'ի Տումեանցովայ: Ապա 'ի 26 սեպտեմբերի անհնարին սաստկութե՛ յարձակեալ Ռուսաց՝ առին գիշերայն զՊէնտէր, և աւար հարին զամենայն զքաղաքն և յաճիւն դարձուցին. այլև ինքեանք կորուսին 'ի յարձակման անդ աւելի քան զողիս հնգետասան հազար:

Յետ այնորիկ էառ և զօրավարն Վլէպով զԻպրայիլ. յորմէ փախուցեալ էր զօրացն Տաճկաց. և այնուհետև ամենայն մերձակայ վայրքն անձնատուր եղեն 'ի Ռուսս: Անտի և Օռլով 'ի նաւամարտի յաղթեաց Օսմանեանց մերձ 'ի Զմիւռնիա:

Ռուսք 'ի բազմաց հետէ աչս բերեալ 'ի ցամաք կղզին Խրիմու, զայն ժամանակ պատէ՛ համարեցան յիւրեանս ձգել զտեղին, որով զիւրանայր նոցա նաւագնաց լինել ընդ Պոնտոս: Առաքեցաւ անդր իշխանն Տոկորուքի զօրօք բազմօք, և մարտուցեալ ընդ Թաթարս՝ էառ նախ զՕրն, և ապա զՍարասու և զՎէօզլէվ: Անտի դիմեաց 'ի Քէֆէ, ուր ամրացեալ էր մեծ մասն Թաթարաց, և երեսուն հազար զօրօք սպաշտ-

պանէին քաղաքին : Ռուսք 'ի 29 յու-
նիսի յամին 1772 յարձակմամբ առին
զքաղաքն , զգիմակացն կոտորեցին ,
զզօրսն գերի վարեցին , և զՀայ բնակիչսն
տուճա 1200 վարեցին 'ի Ռուսիա . որք
յետ ամաց ինչ դարձ արարեալ մեծաւ
մասամբ 'ի Խրիմ սփռեցան յայլ և այլ
քաղաքս կղզւոյն :

Ապա առին պատերազմաւ և զԱրա-
պատ , և կողոպտեցին զայն : Իսկ Կերչ
և Ենի գալէ ինքնին անձնատուր եղեն
Ռուսաց :

Յայնժամ Սէլիմ քերէյ խան Խրի-
մու առտքեալ առ Ռուսս արս աւագս
վեցհարիւր՝ աղաչեաց 'ի հաշտութիւն ,
խոստանալով յայնմհետէ հպատակել
Ռուսաց , և ըստ կամս նոցա վարել
զաշխարհն՝ հատեալ 'ի բաց զամենայն
հաղորդակցութի ընդ Օսմանցիս : Այլ
Սէլիմ խան վաղ նենգեալ երգմանն՝
փախեաւ յերկիրն Տաճկաց . և Տոկո-
բուքի կարգեաց փոխանակ նորա զՇա-
հին քերէյ խան :

Բուսեանցով դեռ ևս 'ի Մոլտաւիա
գոլով բազում պատերազմունս մղեաց
ընդ Օսմանեանս , զորոց յերկար լինէր
ճառել . մինչև հուսկ ուրեմն յամին
1774 հինգերորդ անգամ անցեալ ընդ
Գանուք՝ լի բովանդակ տարաւ զյաղ-
թանակն՝ առեալ և զՇուսի . և խո-
նարհեցան Օսմանեանք 'ի սկզբան թա-
գաւորութե սուլթան համիտի խնդրել

ղհաշտուածի ըստ սլայմանացն զոր սլահանջէին Ռուսք, և հաստատեցան գաշինքն 'ի Գայնարճըգ գիւղ առ Սիլիսարաւ : Եւ էին գլխաւոր սլայմանքն՝ ազատ մնալ խանին Խրիսու 'ի ներքուստ ձեռին Օսմանեանց, և ունել Ռուսաց զԿերչ, և զԵնի գալէ, և զամենայն զերկիրն մինչև յԱզով :

Մեծաշուք յոյժ եղև հանգէս յաղթանակին Բումեանցովայ 'ի Բեթլըսպուրկ, և պատուեցաւ նա Զատունայսքի կոչմամբ՝ սակս անցից նորա անգրքան Գանուք : Նոյնպէս և զայլս 'ի զօրավարացն մեծապարգևս մեծարեաց Կատարինէ, և զօրացն դարձեալ բազմապատիկ սարգևս բաշխեաց :

Ի ժամանակին յորում անգուլ պատերազմ էր Ռուսաց ընդ Օսմանեանս՝ կրկին գէսլք նշանաւորք սրտահեցին 'ի ծագս սահմանացն Ռուսիոյ : Առաջին՝ զի չորեքհարիւր հազար խալմուխք անցին գնացին յերկրէն Ռուսաց 'ի Չինս, և չեն յայտ պատճառքն : Երկրորդ, զի խաբեբայք հինգ՝ մի զմիոյ կնի 'ի վեր ելեալ 'ի մէջ Տոնսքի խազախաց՝ և այլուր, ասացին զանձինս թէ Պետրոս իցեն այրն Կատարինեայ, և աղմկեցին զաշխարհն . չորք 'ի նոցանէ յոչինչ եղեն՝ պատուհասեալք և վախուցեալք . այլ հինգերորդն ոչ սակաւ սատանեցոյց զՌուսիա :

Զօրական էր սա խաղախ՝ Փուհաչել

անուն , փախուցեալ 'ի բանակէն Պէն-
տէրայ 'ի Ղէհա . անտի գնացեալ յՈւ-
րալեան շերինս հաւանեցոյց զխաղախս
տեղւոյն թէ ինքն Պետրոս Գ է թագա-
ւոր Ռուսաց , և զիւրև ածեալ արս չո-
րէքտասան հազար՝ խաղաց պաշարեաց
նորօք զԵայիք քաղաք , և օր ըստ օրէ
բազմանային զօրք նորա : Կեղծէր զբա-
րեպաշտու թէ միտս առաջի զօրացն , և
ասէր թէ ոչ այլ ինչ կամիմ ես , բայց
նստուցանել յաթոռ թագաւորու թէն
զորդին իմ զՊօղոս , և միանձնանալ :

Կատարինէ առ 'ի զառաջս ունել չա-
րեացն՝ հրովարտակ արար՝ յայտ ածե-
լով զխարգախուի նենգաւորին , և միան-
գամայն առաքեաց ընդդէմ նորա զզօ-
րավարն Պիպիքով : Անտի և Փուհաչեւ
հրատարակեաց հրովարտակ մի յանուն
Պետրոսի երրորդի , և պատահեալ մար-
տիւ Պիպիքովայ և այլոց զօրավարաց՝
էր զի յաղթեցաւ , և էր զի յաղթեաց ,
մինչև եհաս 'ի վերայ նորա Փանին , և
ընդ նմա Միքէլտոն . և երկոքին սոքա
երկուստեք հալածեալ փախուցին զՓու-
հաչեւ մինչև յայնկոյս Աղլիայի , և սա-
կաւաւոր ընկերքն Փուհաչեւայ յուսա-
հատեալ ետուն զնա 'ի ձեռս Ռուսաց :
Յամին 1774 'ի նոյեմբերի ածաւ Փու-
հաչեւ 'ի Մոսքուա , և գլխատեալ՝ ա-
սրա անգամ անգամ յօշեցաւ , և հնգե-
քին ընկերք նորա գլխաւորք աքսորեցան
'ի Սիպիր :

Յետ այնորիկ քակաեցաւ և հռչակաւ
 ւոր բանակ միարանուծէ Չափոսոժոքի
 Խաղախաց, փոխանակ զի չկամեցան
 տալ զօրացն Ռուսաց արշաւելոց 'ի Խլիմ
 համբարս և երիվարս, և համարեցան
 ձեռնառուք 'ի թշնամիան Ռուսաց:

Յամին 1775 Կատարինէ կին ած Պո-
 ղոսի զգուսար Լանակրաւոյ Հասսիա
 Տարնէթատ նահանգի. այլ 'ի մեռանել
 այնր օրիորդի տարաժամ մահուամբ՝
 ընտրեցաւ իշխանուհին Վիրթէմպերկայ
 Սուփիա. և Պօղոս ուղևորեցաւ ընդ
 Բուսմեանցովայ 'ի Պեռլին, զի խօսեցցի
 զՍուփիա իւր 'ի կին: Մեծապէս պա-
 տուասիրեաց Փեդերիկոս արքայ զՊօղոս,
 և տուեալ նմա զօրիորդն՝ դարձոյց շքով
 մեծաւ 'ի Բեթրայուրկ: Անդ կատարե-
 ցան հարսանիքն փառաւորագոյն հան-
 գիսիւ քան զառաջինն, և Սուփիայն կո-
 չեցաւ Մարիամ Ֆէոտորովնա:

Սակալ սակալ յաճախուծիք ուրա-
 խուծեանց և հանգիսից հռչակելոց 'ի
 Բեթրայուրկ ոչ ինչ կատեցուցին զԿա-
 տարինէ 'ի փուծոյ կարևոր խնամոց պե-
 տուծէն: Ուշ եդ բարգաւաճելոյ վա-
 ճառականուծէն Ռուսաց ընդ Չինս. և
 'ի դիւրացուցանել և ևս զվաճառաչա-
 հուծին ընդ Պարսս՝ արձակեաց զՎոյնո-
 վիչ կոմս զօրօք հանդերձ 'ի Դավրէժ.
 և նա դիւրաւ նուաճեալ զամենայն
 զարեմատայս Կասպից ծովուն՝ յամին
 1779 էառ և զԴարբանդ և զամենայն

գաւառնն զորս դարձուցեալ էր Աննայի
առ Թահմազ :

Տեսեալ Հերակլի արքային Վրաց ըզ-
տիրապետել Ռուսաց մինչև մերձ 'ի
սահմանս իւրոյ աշխարհին , օտարացաւ
'ի Թագաւորէն Օսմանեանց , և զհարկն
զոր հարկէր նմա՝ դարձոյց առ Ռուս ,
և եմուտ ընդ հովանաւորութիւնոցին :

Գիտաց Կաստարինէ յօգուտ 'ի կիր-
արկանել և զերկրակալութիւնն առ Խրի-
մաւ , և կառոյց զքաղաքն Քերսոն , զի
լինիցի համբարանոց վաճառականութե
Ռուսաց ընդ արևելէայս : Օսմանեանք
որք 'ի վաղուց ստրջացեալ էին ընդ սյւ-
մանս ուխտին հաստատելոյ 'ի Գայնար-
ճըգ՝ առաքեցին 'ի Խրիմ՝ զնոր խան
Տէվլէթ քերէյ անուն . այլ Ռուսք ա-
ճապարեցին ձեռն տալ Շահին քերէյ-
այ բնիկ խանին Խրիմու , և Տէվլէթ
փախտտական դարձ արար 'ի Կոստան-
դնուպօլիս : Փոքր միւս ևս և վերստին
յուզէր սլատերազմն Ռուսաց ընդ Օս-
մանեանս , այլ միջնորդութիւն դեսպա-
նին Գաղղիոյ դարձեալ հաստատեցաւ
և մեկն ևս վճռեցաւ ուխտ բարեկամու-
թենն առաջնոյ :

Սակայն Շահին քերէյ ցանգ անան-
գորր գողով յերեսաց Տաճկաց , հուսկ
ուրեմն խորհեցաւ տալ զիշխանութիւն
իւր բոլորովմեք 'ի ձեռս Կաստարինեայ .
և նա որ յայն սակս իսկ ազատ կացու-
ցեալ էր զԽրիմ և զփոքր Թաթարս 'ի

ներքուստ ձեռին Օսմանեանց՝ փութա-
ցաւ հաստատեաց զբանն առանձին յայտ-
արարութիւն յՑ ասպրիլի յամին 1783 ,
որով մասն համարեցաւ և խրիմ երկրին
Ռուսիոյ . և իշխանն փոթեմբին էառ
յամենայն թաթարաց կողմանցն զեր-
գումն հաւատարմութե առ կայսրուհին :

Սասանեցան Տաճիկք ընդ իրան , և
ձայն ետուն մարտի անհնարին սրամտու-
թիւն : Ընդվայր ճգնէր և դեսպանն Գաղ-
ղիոյ խաղաղէլ զնոսա . որ և միջնորդ
կալաւ առ Վատարինէ զՅովսէփ Բ կայսր
Գերմանացոց . այլ նա կապեալ էր
մտերմութիւն ընդ Վատարինեայ : Ապա ՚ի
վերջէ սուլթան Ապտիւլհամիտ լուեաց
և եթող Վատարինեայ տիրանալ խաղա-
ղութիւն յաշխարհակալութիւն իւր :

Այլ յաջողեաց բախան Վատարի-
նեայ և ևս , զի ոչ միայն հերակլ ար-
քայ Վրաց , այլ և այլք յոլովք ինքնա-
գլուխ իշխանք ընդարձակ հովտացն
Վովկասու հարկատու եղին Ռուսաց ,
և խնդրեցին զպաշտպանութիւնոցա :

Մինչդեռ այսչափ և այսպիսի աշ-
խարհակալութիւնք գերածայրեալ էր պե-
տութիւնն Ռուսաց առ Վատարինեալ ,
ոչ այլ ինչ սրակասէր փառաց նորա՝
բայց զի և մեծ քահանայապետն Հոով-
մայ Պիոս Զ միաբանեալ ընդ այլ պետա
աշխարհի խնդակից լինիցի նմա : Ասան
որոյ պատճառս կալեալ յընդունելու-
թիւն անախ զոր եցոյց Վատարինէ Յիսու-

սեանցն բարձեւոց յԵւրոպա, և կարգեաց զնոսա դաստիարակս մանկանց ուղղափառաց, առաքեաց պատն առ նա 'ի գիմաց իւրոց նուիրակ զհռչակաւորն Աւբէթթի: Կատարինէ ըստ իրնդրոյ քահանայապետին շնորհեաց ուղղափառաց զեկեղեցի մի 'ի Բեթրպուրկ, երիս ուղղափառ եպիսկոպոսունս յաւել յարքեպիսկոպոսն Մոհիլեվայ, և կարգեաց մետրապօլիտ զոմն վասն ամենայն նահանգաց պետութեն ընդ Ասիա և ընդ Եւրոպա, և զայլ ոմն եպիսկոպոս ուղղափառ յոյն 'ի Փլոցք:

Այլ յընդարձակածաւալ աշխարհաց ոչ ընդ երկար լռեն պատերազմունք: Վասն որոյ ընդ այն տուորս և Օսմանեանք դժուարեալք ընդ անցանել Վրաց և Կովկասայնոց առ Ռուսս՝ ձեռն արկին 'ի մարա կաքաւել ընդ նոսա 'ի սահմանն յայնոսիկ: Զայն զգացեալ Կատարինեայ՝ ազգ արար 'ի գուռն Օսմանեան՝ բաց յայլոց պայմանաց սանձել և զարշաւանս Լեզկեաց և Ապազայից 'ի Վիրս, և դիտել ստուգիւ, զի Վիրք բոլորովին ընդ տերութեամբ անկեալ են Ռուսաց: Օսմանեանք ետուն պատասխանի թէ Լեզկիք և Ապազայք ինքնագլուխք են, և ոչ հնազանդին Տաճկաց, իսկ աշխարհն Վրաց 'ի սկզբանէ հետէ անկանէր ընդ իշխանութի դրանն մեծի, և ոչ երբէք ընդ տերութի Ռուսաց:

Յայսց պատճառաց, և 'ի գրգռուէց
Մնգղիացւոց Տաճիկք պատրաստէին 'ի
պատերազմ՝ յորժամ Կատարինէ չը-
ւեաց մեծաշուք ուղևորուք 'ի Խրիմ,
ուր իշխանն Փոթեմքին բազմապատիկ
խնջոյիւք և յաղթական կամարօք մե-
ծարեաց զնա :

Ի գալստենէն Կատարինեայ 'ի Խրիմ՝
առաւել ևս հաստատեցան Տաճիկքն
թէ նորա միտք են խաղալ յառաջ մին-
չև 'ի Կոստանդինուպօլիս, և զերկրորդ
թոռն իւր զԿոստանդին կարգել յա-
թոռն Բիւզանդիոյ, որպէս համբաւէր:
Կայսրուհւոյն բնաւ այլ միտք էին յոր-
ժամ դարձ արար 'ի Մոսքուա . սա-
կայն Տաճիկք արգելեալ զդեսպանն
Ռուսաց յԵտի գուլէ՝ յայտ արարին
զպատերազմն :

Յամին 1787 յարձակեցան Օսմա-
նեանք 'ի Գըլպուրուն, այլ Սուլթորով
վանեաց զնոսա անտի սաստիկ հարուա-
ծովք : Հասին այլ զօրք եօթանասուն
հազար 'ի միւս կողմանէ՝ որոց զօրավա-
րէր Փոթեմքին իշխան, և խորտակեալ
նախ զԹաթարս Կուպանայ, մարտ ե-
ղին ընդ Տաճիկս, և բազում մարդիկ
կորուսեալ՝ հուսկ ուրեմն եկին պաշա-
րեցին զամուրն Օզու :

Յառաջնում աւուր անդ յուլիսի
հասին և 'ի ծովէ նաւք Ռուսաց . և
մինչդեռ նոքա մարանչէին ընդ նաւա-
տորմին Տաճիկաց, յարձակեցաւ 'ի վե-

րայ քաղաքին և 'ի ցամաք կուսէ փոթեմքին, և առ զպատնէշսն : Այլ հասան փաշա ծովակալն ոչ կամեցեալ երկրորդ անգամ մարտնչել, խոյս եա նաւուքն 'ի Կոստանդնուսօլիս . և փոթեմքին պատնէշ պաշարմամբ նստաւ առ բերդաւն Օզուի :

Կբրև հաս 'ի վերայ ձմեռն սաստկասաւոյց, թէպէտ Ռուսք ոչ ինչ կարի նեղէին 'ի ցրտոյն, 'ի սորս երկրի բնակեալք, այլ զի համբարքն պակասեալ էին՝ փոթեմքին եդ 'ի մտի անակնկալ յարձակմամբ առնուլ զքաղաքն : Սակայն տեսեալ զամրութիւն քաղաքին, և զպաշարելոցն ահեղ պատրաստութիւն և զիւրոցն նուազութիւն՝ ոչ վստահացաւ . զի Օզուցիք աւելի էին քան զքառասուն հազար, ուր Ռուսք չորեքտասան հազար և թ մնացեալ էին :

Ձեռն էարկ յայլ իմն հնարս, և ազգարար 'ի քաղաքն՝ թէ չեն իւր կամք պատերազմել 'ի բթալից ժամանակին, վասն որոյ մեկնի յաշխարհ իւր . այլ պատրաստ կացցեն 'ի գալ դարնայնոյն զոհ լինել սրամտութե՛ զօրաց իւրոց, զի անշուշտ առից ես, ասէ, զքաղաքդ . և հարեալ զթմբուկսն մեկնեցաւ անտի : Ձայն տեսեալ պաշարելոցն՝ խնդացին յոյժ, և մինչդեռ անհոգացեալ թմբրեալ առ հասարակ խոր 'ի քունն ննջէին՝ փոթեմքին ընդ այլ ուղի ամ գիշերայն զզօրս իւր դարձեալ ընդ բեր-

դաւ քաղաքին . և յ17 դեկտեմբերի յաւուրտօնի սրբոյն Նիկողայոսի պաշտպանի Թագաւորու թէն Ռուսաց՝ երեց բանակին քաջալէրս կարգաց առ զօրն՝ թէ որ ոք մեռանիցի յայսմ աւուր ի սէր իւրոյ Թագաւորին՝ սուրբն Նիկողայոս ահա տարածեալ զգիրկս իւր կայ յերկինս ընդունել զնա առ իւր :

Խրախուսեցին զօրքն և ՚ի բանէն . և ՚ի վեց առաջս բաժանեալ՝ զօրավարն Փալէմ գիմեաց ՚ի պատնէչն որ ՚ի վերայ լէրին կային , Փալմէմպրաք յարձակեցաւ ՚ի խորտակել զգրունան . գնդապետն Փլաթով մարտ եղ ընդ Ալպանիացիս որ ՚ի վերայ վիմին մեծի պահունէին , և զօրավարքն Անհալթ և Տուկորուքի անցեալ ընդ մին ՚ի դրանց քաղաքին՝ և ոչ ինչ միտ եղեալ դիմակացութե պաշարելոցն՝ հասին հասին մինչև յաշտարակն հասան փաշա գալէսի , և առին զայն , և խուժեցան ՚ի քաղաքն ընդ ամենայն դրունս նորա :

Յայնժամ քաղաքացիքն ՚ի տանց իւրեանց հրաղէնս արձակեալ ՚ի վերայ Ռուսաց ՚ի հարուածս սաստիկս հարկանէին զնոսա , մինչև մեռան և ինքեանք ընդ վլատակօք տանցն , զի ՚ի ծովակողմն կուսէ անդադար ամբաձիգ լինէին Ռուսք ՚ի քաղաքն : Ի հինգ վայրկենի սուաւ քաղաքն , որպէս հաւատեաց Փոթեմբին . և զի հրաման էր յաւարի սուհուլ զայն , այնչափ ճոխա-

ցան լցան աւարաւ Ռուսք՝ մինչև զմի սակի Վենետկոյ փոխէին ընդ երկուց բուսլէաց : Բազում կոտորած եղև և 'ի Ռուսս . երկու զօրավարք անկան , և յիսուն և ինն սպայք , և վեց հազար զօրականք ընդ մեռեալ և ընդ վիրաւոր :

Չև վայելեալ Կատարինեայ յարգասիս մեծի յաղթութեն՝ հարկեցաւ կոչել արս 'ի զօրացն գնացելոց ընդդէմ Տաճկաց , և արձակել զնոսս 'ի վերայ Կուսդաւոսի արքային Շվետաց , որ մեծաւ զօրութիւն ընդ ծով և ընդ ցամաթ խաղայր գայր 'ի վերայ Բեթրպուրկոյ՝ առնլով զքաղաքս Ֆինլանտիոյ : Եւ զի գաշնակից էր նա Թագաւորին Օսմանեանց՝ սահանջէր 'ի Կատարինեայ խաղաղութիւն առնել ընդ դրանն , և զյորիմ Թողուլ ինքնագլուխ :

Բազում կոտորածք եղեն երկուստեք յայլ և այլ խառնուրդս մարտից . և զսաաջինն յաղթական էին Շվետք , այլ յետոյ ուրեմն 'ի սարտութի մասնեալք՝ 'ի հաշտութիւն խօսեցան , և շատացան սպայմանօք առաջնոց գաշանցն :

Անտի և Ռուսք և Գերմանացիք առնուին 'ի Տաճկաց զքաղաքս Վալաքիոյ , և օր ըստ օրէ յառաջ խաղային . այլ իբրև Թագաւորեաց սուլթան Սէլիմ Գ , և Գերմանացոց Լէոփոլտ Բ , գուլ եղև զինուց , և սա գարձոյց առ Օսմանեանս զՊէլկրատ և զայլ քաղաքս զորս կալեալ էր :

Իսկ զօրք Կատարինեայ առաջնորդու թի՛ զօրավարացն Ուշաքովայ, Հելմանայ և Փոթեմբինայ առին զամենայն երկիրն առ Դանուբաւ և զնորն Քիլի, և Փոթեմբին պաշարեաց զԻսմայիլ: Յետ յերկար պատերազմաց Սուլտորով յարձակեալ եմուտ 'ի քաղաքն ընդ դէզադէզ գիսակունսն անկեալս 'ի նմա . և տևեաց մարտն այլ ևս երիս աւուրս, և ճասպաղիք արեան վաակօրէն խաղացեալ ընդ փողոցս քաղաքին՝ հարկանէին մինչև 'ի ծունկս յաղթականացն: Յայնմ մարտի անկան 'ի Ռուսաց արքերկոտասան հազար, և 'ի Տաճկաց առաւել քան զքսան և վեց հազար: Եռսուֆ փաշա վերստին զօրաժողով լեւալ յարձակեցաւ 'ի վերայ Ռուսաց, այլ 'ի փախչել իւրոցն և ինքն կասեցաւ:

Ի նմին Ժամանակի և զօրավարն Կոտովիչ խորտակեալ զԹաթարս Կուպանայ և զՎոլկասայինս՝ խաղաց մինչև յԱնափա և էառ զայն:

Ապա յամին 1791 Փոթեմբին 'ի գնալն 'ի Բեթրպուրկ մեռաւ զճանապարհայն, և փոխանակ նորա առաքեալ կոմսն Պեղպորտօքի՝ զիջաւ խօսել ընդ Օսմանեանս զհաշտութիւն 'ի 11 յունուարի յամին 1792 'ի քաղաքն Եաշ . և սլամանք ուխտին եղեն, զի մնացէ Օզու 'ի ձեռս Ռուսաց, և հաստատուն կացցեն պայմանքն հաստատեալք 'ի Գայնարճրդ, և Թադաւորն Օսմանեանց

հատուցէ Ռուսաց երկոտասան միլիոն դահեկանս , և մի ևս խառնեացի երբէք յիրս աշխարհին Լէհաց : Եւ յետ ձեռնագրելոյ թղթի դաշանցն՝ Պեղպորոս սքի յայտ արար վէզերին՝ թէ կայսրուհին շնորհէ նմա զպայմանեալ արծաթն :

Ընդ այն ժամանակս սուլդան Սէլիմ խոստացեալ էր Լէհաց արս քառասուն հազար , եթէ և նոքա յանձն առցեն առաքել առ նա զօրս քսան հազար ընդդէմ Ռուսաց : Յայս սակս փութացեալ Կատարինեայ 'ի հաշտութիւն՝ մինչդեռ զօրք իւր ոգիք ութսուն հազար դառնային դային փութանակի և մերձ էին 'ի սահմանս Լէհաց , սրատուէր առաքեաց առ աւագանին Լէհաց՝ յետս կալ 'ի խորհրդոյն զոր հաստատեալ էր գեալ էին 'ի մտի . այսինքն էր նոր իմն օրէնս կարգել՝ զի և իւրեանց թագաւորք որդի 'ի հօրէ առցեն զաթոռն : Եւ յընդդէմ կալ Լէհաց և 'ի խիզախել 'ի պատերազմ , հրաման ետ Կատարինէ զօրացն դարձելոց՝ յարձակել 'ի Լէհս :

Բազում քաջութիւնս ցուցին Լէհք յայնմ պատերազմի՝ որ եղև յԱլքրանիս և 'ի Լիթուանիս զօրավարութիւն Յովսէփայ Փոնեաթովսքի եղբօրորդւոյ արքային , և հռչակաւորին Թագէոսի Քաշուսթայ . այլ Ռուսք բազմագոյնք քան զԼէհս՝ ոտն ոտն յառաջ խաղային , մինչև եկին հասին 'ի Վարշաւ քաղաք ,

ուր վարանեալ մնայր Ստանիսլաւ արքայ սակաւ զօրօք : Եւ ահա եհաս առ նա գիր 'ի Կատարինեայ' թէ որ զինչ պահանջեմ էս 'ի քումմէ աւագանեոյդ' խորհրդով և միաբանութիւն թագաւորացն Գերմանիոյ և Բրուսիոյ է այն ամենայն :

Յայնժամ Ստանիսլաւ աճասպարեաց դուռ առնել զինուոց , և ունայնացոյց զօրէնս յաջորդութեն նորոգ հաստատելոյ յաւագանեոյն : Ռուսք սփռեցան ընդ ամենայն քաղաքս Լեհաց , և Լեհք նուիրակս աւաքեալ առ կայսրուհին՝ աղաչեցին զնա ընդունել զԼեհաստան դարձեալ ընդ իւրով հովանաւորութիւն որսէս կանխաւն , և անյիշաչար լինել :

Յետ սակաւ ժամանակի մինչ դեռ ևս խեռային բազումք 'ի Լեհաց ընդ եղեալն , Քոչուսքոյ որ մեկնեալ էր 'ի Լիվիսիա ընդ ոմանս յիւրոց համախոհից , ետ համբաւել ընդ Լեհաստան՝ թէ դրամս բազումս առեալ իւր 'ի Գաղղիացւոց՝ դայ ազատել զԼեհս 'ի ծառայութիւն թագաւորի , և ազատութիւն շնորհել ամենայն գիւղականաց և ծառայից : Անդէն վաղվաղակի 'ի վեր երևեցան հարիւր հազար գիւղականք սպառազէնք յամենայն կողմանց . և Քոչուսքոյ նոքօք հանգերձ և այլովք բազմօք մտեալ նախ 'ի Քրաքով՝ անց անտի 'ի Վարչաւ . ուր ազմուկ անհնարին յուզեալ ընդ ժամս երեսուն և չորս

եղև մարտ սասաիկ , և կոտորեցան բաց
յերկու հազար Ռուսաց գրեթէ ամե-
նայն աւագորեարն Ղեհաց՝ որք հաւա-
նեալն էին ընդ պահանջանս Կատարի-
նեայ :

Մինչ այս մինչ այն , և ահա Ռուսք
և Բրուսք և Գերմանացիք հեղեղեցին
ամենայն ուստեք յաշխարհն Ղեհաց ,
հարին ցրուեցին զժողովեալսն առ Քո-
շուսքայ , և զնա ձերբակալ արարին :

Գարձեալ զօրաժողով եղեն Ղեհք
'ի Բրակա մերձ 'ի Վարշաւ , և մարտըն-
չէին ընդ Ռուսս . այլ սոքա առաջնոր-
դութք քաջին Սուվորովայ ժամս վեց
անհնարին պնդութք մարտ եղեալ՝ ա-
ռին զաւանն , և հարին 'ի Ղեհաց արս-
քսան և երիս հազարս ընդ մեռեալ և
ընդ վերաւոր :

Ստանիսլաւ որ փախուցեալ մեկնեալ
էր յաշխարհէն՝ առաքեաց առ Կատա-
րինէ մուրհակ հանդիսական , որով
տայր 'ի ձեռս նորա զթագն իւր մինչև
'ի սպառ . և ինքն ևս գնաց 'ի Բեթլըր-
պուրկ : Յայնժամ և երեքին պետու-
թիքն բաժանեցան յիւրեանս զՂեհաս-
տան մինչև ցայսօր :

Յետ այնորիկ էառ Կատարինէ և
զՔուրլանտիա և զՍեմիկալչիա , և կա-
ցոյց զնոսին նահանգս Ռուսիոյ : Անտի
և զօրավար նորա Զուպով էառ զԴար-
բանդ , և սկսաւ յառաջ խաղալ 'ի վե-
րայ Պարսից՝ որք նեղէին զՀերակլ :

Իսկ Կատարինէ մինչդեռ ակն ունէր այլոց ևս յաղթանակաց՝ յանկարծա մահ եղև գիշերայն ՚ի կաթուածէ ՚ի 15 աւուր նոյեմբերի յամին 1796, ամաց լեալ վաթսուն և եօթանց, և թագաւորեալ ամս երեսուն և չորս իբրև զմիւս ոմն Շամիրամ :

Յայլ իմն կերպարանս փոխեցաւ Ռուսիա առ նորա թագաւորութքն, եթէ ՚ի բազմապատիկ աշխարհակալութեցն, և եթէ յիմաստուն տնտեսութէն ըստ ամենայն գլխոց, և զարմացաւ ամենայն Եւրոպա ընդ ճոխ պերճութի արքունեացն Բեթրպուրկայ և ընդ անբաւութի աշխարհացն զորս կալան Ռուսք ՚ի տասն վերջին ամս Կատարինեայ :

Մինչև ՚ի ժամանակս խռովութեն Գաղղիոյ՝ վայելեցին և ճարտարք եւրոպացիք ՚ի բարձս պատուոյ և ՚ի շահս օգտի յաշխարհին Ռուսաց. այլ անտի և այսր փակեցաւ իմն ընդդէմ նոցա Ռուսիա : Սակայն և գիտուիք ոչ այնչափ զարգացան առ նովաւ որչափ ակն ունելի էր. և վասն պատերազմաց յաճախութե անկատար մնացին յոլով չի նութիք՝ զորս սկսեալ էր նորա, ևս և մատեանն օրինաց զոր յօրինէր :

Արժանի յիշատակաց գիւտք եղեն առ նովաւ յաւերակս Ապլայիք քաղաքի ՚ի դաշտան Սիպիրայ առ Իրթիշ գետով, զի գտան մեծամեծ դարանք հազարաւոր ձեռագիր մատենից յանծա

նօթ բարբառս և 'ի լեզուս Չինաց,
Խալմուկից, և Մանչու թաթարաց, և
պահին ցարդ 'ի գրատունս Ճեմարանին:

ՊՕՂՈՍ

ԶԱՄԵՆԱՅՆ ժամանակս թագաւո-
րու թէն կատարինեայ կեցեալ Պօղոսի
'ի կաչինա, ուր զբօսնոյր գնդաւ միով
զօրականաց՝ զորս զգեցուցեալ էր 'ի ձե
Բրուսացի, իբրև անց բազմեցաւ յա-
թու մօրն իւրոյ՝ նախկին գործ արար
յետս կոչել զզօրսն առաքեալս 'ի կա-
տարինեայ 'ի Պարսս: Զի նոքա անսո-
վորք օգոյ և բերոց կողմանցն այնոցիկ՝
յախտս մահու անկեալ կոտորէին օր
ըստ օրէ, և 'ի հարիւր հազար զօրաց
հազիւ թէ հնգետասան հազարք եկին
ապրեցան 'ի Ռուսիա:

Պետութիւնք Եւրոպայ բազում ան-
գամ յորդորեալ զկատարինէ, և հաւա-
նեցուցեալ էին զնա առաքել յամին
1795 տորմիզ մի ութուտասն նաւաց
յօգնութի Անգղիայուոց ընդդէմ Գաղ-
ղիոյ: Եւ Պօղոս որ ատեայր զԳաղղիա-
ցիս ժամանակին՝ ոչ միայն որպէս թա-
գաւոր, այլ և որպէս այր իոհական՝ որ
զզուիցի 'ի թեթևամիտ նորաձեւութեց,
եղ 'ի մտի միաբանել ընդ թշնամիս
Գաղղիոյ իբրև պաշտպան ասպետունէն

Մեղիտեայ և քահանայապետին հռովմայ, և նիզակակից Թագաւորին Օսմանեանց. և պատուէր ետ զօրացն Վեհաստանի չուել 'ի Գաղղիա կոյս ընդ զօրավարութբ Ռոզէմպէրկայ կոմսին: Այլ նա ոչ այնչափ յաջողակ թուէր 'ի գործն որպէս քաջն Սուվորով, որ բազում անգամ աղաչեալ էր զՎատարինէ և զՊօղոս՝ զի թոյլ տացեն ինքեան երթալ և ընդ Փարէզ անցուցանել զանցան Օզուի և Բրակայ: Բայց Վատարինէ վաղ մեռաւ, և Պօղոս զառաջինն ընդ ահամբ հայէր ընդ քաջ զօրավարն. սակայն 'ի վերջէ կարգեաց զնա մարաջախտ մեծ, և արձակեաց յիտալիա փոխանակ Ռոզէմպէրկայ:

Մինչդեռ Քուայ զօրավար Գերմանացւոց խորտակեալ էր զԳաղղիացիս 'ի Վերոնա, Սուվորով եմուտ 'ի Միլան իւրովքն, և գերմանացի զօրօք, և անտի անց 'ի Պադոս գետ: Անդ յայնկոյս գետոյն հարկեցաւ զօրավարն Գաղղիացւոց Մոռօ ճակատ յարդարել ընդդէմ եօթանասուն հազար զօրաց՝ երկոտասան հազար Գաղղիացւովք. և երկիցս յաղթեալ յերրորդումն 'ի պարտութի մատնեցաւ, և խոյս ետ 'ի տեղի մի ամուր, մինչև եհաս և Մաքրոնիսլ իւրովքն 'ի Նէապօլսոյ. այլ և նա ոչ տւեալ առաջի ամբոխին Սուվորովայ՝ 'ի փախուստ դարձաւ:

Ապա եկն ընդդէմ Ռուսաց Ժուպէռ

զօրավար, և 'ի խառնուրդս մարտին
մինչ դեռ քաջասկէս կռուէր, հարեալ
'ի հրազինուց մեռաւ անդէն, և ցրուե-
ցան Գաղղիացիք :

Եհաս 'ի Ռուսիոյ նոր զօրօք ընդ նոյն
աւուրս և Քորզաքով մինչև 'ի Զուխց-
ցերի : Ընդ առաջ եղև նմա Մասսէնայ
զօրավար Գաղղիացուց, և եղև անդ
մարտ սաստիկ յոյժ, յորում անհնա-
րին հարուածս ընկալան Ռուսք՝ այն ա-
ռաջին անգամ յայնմ դարու 'ի պար-
տութի մասնեալք. և 'ի վաղիւ անդր
Թերևս 'ի սպառ խորտակէին՝ թէ չէր
Մասսէնայ երկուցեալ 'ի գալտտենէն
Սուվորովայ :

Զի ծերունին այն զօրավար այնպէս
իմն երագէր ճեպէր յընթացսն ընդ
ձիւնապատ լերինս Զուխցերաց, զի
գունդք գունդք Գաղղիացուց դիպեալք
զճանապարհայն՝ և անգամ զգէմ ու-
նել արշաւանին ոչ իշխէին : Եւ իբրև
իւրքն պարտասեալք 'ի սովոյ և 'ի ցրտոյ
և յաշխատութէ ճանապարհին՝ ոչ ևս
կամէին յառաջ խաղալ, Սուվորով ետ
պեղել փոս մի 'ի վերայ ճանապարհին,
և ինքն տարածեալ անձամբն 'ի նմա
գոչէր. « Ծածկեցէք զիս ընդ հողովս,
և թող ջիբ ստա զզօրավար ձեր. չէք
գուք իմ որդիք, և ոչ ես հայր եմ ձեր,
թոյլ տուք ինձ աստէն մեռանել » : Խի-
զախեցին զօրականքն, և յարուցեալ
զնա՝ խրախոյս կարգային ելանել 'ի կա-

տար լերինն և հալածել անտի զԳաղ-
ղիացիս, որպէս և արարին իսկ: Այլ
Սուվորով առեալ զուր միանգամ և
երկիցս պարտելոյն Քորզաքովայ, և
զԳերմանացոցն նիզակակցաց՝ լքանել
զբանակն Ռուսաց, դարձ արար և ինքն
և մեկնեցաւ յաշխարհ իւր:

Զայս ամենայն իբրև զգաց Պօղոս,
ցատուցեալ ընդ վատութի նիզակակից
զօրավարացն՝ հրամայեաց ամենայն զօ-
րաց իւրոց դառնալ գալ 'ի Ռուսիա, և
այլ ոչ ևս խառնեցաւ 'ի շիտթս Եւ-
րոպայ:

Սուվորով մեծաւ ստրջանօք ելեալ
'ի Գերմանիոյ՝ առ ցաւոց սրտին խօ-
թացաւ, և կիսամաս հասեալ 'ի Բե-
թըրպուրկ՝ յետ ոչ բազում աւուրց մե-
ռաւ այրն քաջ՝ մականուանեալն 'ի
Կատարինեայ Ռիմնիցքի, զի հասեալ էր
մինչև 'ի Ռիմնի քաղաք, և 'ի Պօղոսէ՝
Իտալական. որ և ուրեք յիւրում հրօ-
վարտակին կոչէ զնա զօրավար վեհա-
գոյն ամենայն զօրավարաց՝ որ երբէք
կացեալ իցեն ուրեք մինչև 'ի ծագս աշ-
խարհի. և հրամանք նորա և կարգա-
դրութիք մի մի օրէնք համարեցան զի-
նուորական վարժից Ռուսիոյ:

Իսկ զօրք նորա քսան հազար նշխա-
րեալք յութսուն հազարացն՝ խոնջք և
վաստակք անշքացեալք և տառապեալք
և քրձազդեսօք դարձ արարեալ յաշ-
խարհն՝ ոչ նուազ վասուաւորեցան՝ քան

եթէ զամենայն զԵւրոպա զինու զօրու
թիւ նուաճեալ էին . և յաղթականք
անգամ նոցին յապուշ հարան ընդ ան-
յողգողգ արիուի նոցա և ընդ հաւատու
առ Աստուած և առ զօրավար իւրեանց :

Յայնչափ զնասուցն , և յառաջին ա-
ռատաձեռնութեցն Կատարինեայ հա-
տան սպառեցան գանձք աշխարհին , և
Պօղոս զիջոյց զարժէս դրամոց յոյժ
յոյժ , և հնարեցաւ զթղթադրամն ըստ
այլոց ոմանց եւրոպական պետութեց :
Այլ իբրև ետես զի կարի իմն յաճա-
խեաց թուղթն , յաւուր միում վեց մի-
լիոն թուղթս հրամայեաց այրել 'ի հրա-
տարակի , և բազմացոյց առ ժամն զպղըն-
ձիս՝ մինչև բովք Սիպիրայ առ սակաւ
սակաւ լրացուցեն զթերին արքունի
գանձուցն :

Ապա եմոյծ Պօղոս 'ի զօրս իւր զխրս-
տութի զինուորացն Բրուսաց , և զան-
ցոյց ևս զնոքօք , մինչև արտնջել նո-
ցա զինքնակալէն : Ոգւովք չափ գուն
գործեաց անհետ առնել և զամենայն
գաղղիական նորաձևութիս , և անգամ
զբաճկոն գաղղիացի և զգլխարկ բոլոր-
չի՝ յանցանս գրէր զգենկեացն : Զյո-
լովս վասն այսպիսի յանցանաց և վասն
այլոց կասկածանաց եղ 'ի բանտի , աք-
տորեաց , և մերկացոյց յընչից : Եւ 'ի
վերջէ ըստ կասկածոտ բարոյիցն ան-
հանգիստ եղեալ , մեռաւ 'ի 11 մարտի
յամին 1801 , թագաւորեալ ամս չորս

և ամիսս ինչ, և էր ինքն քառասուն և եօթն ամաց :

Փոքր մի յաւաջ քան զմահն Պօղոսի ստացան Ռուբ և զաշխարհն Վրաց . զի տեսեալ որդւոյն Հերակլի՝ թէ Պարսք վաղ կամ անագան ունին յինքեանս գրաւել զաշխարհն Վրաց , լաւ համարեցաւ տալ զայն 'ի ձեռս Ռուսաց , և ինքն եկն 'ի Բեթրսպուրկ :

Որդեք չորք էին Պօղոսի . Աղէքսանդր , Կոստանդին , Նիկողայոս , և Մեքայէլ . և զմի մի 'ի նոցանէ կարգեաց դնգաւտա գնդից գնդից սահակաց , և զանգրանիկն եդ հրամանատար ընդհանուր զօրացն Բեթրսպուրկայ :

Սիրող գոլով արդարուէ , կարգեաց արկղ մի՝ յորում համարձակ էր ամենեցուն արկանել զգիրս սաղատանաց և հայցուածոց , և մի ոմն 'ի խորհրդականաց իւրոց այգուն այգուն մատուցանէր 'ումն զիմաստս թղթոցն . այլ զեղծանել նովաւ ամբօխին խափանեաց զայն :

Եբարձ 'ի գիւղականաց զբաժնորէնոյ և այլոց արմտեաց , և ազատեաց ըզբազումն 'ի Լէհայ բանտարկելոց , ընդորս և զՔոչուսքոյ : Հաստատեաց զկարգազատանւոյն , կանգնեաց դպրոցս որբոց և օրիորդաց , որոց և զաիկին իւր կարգեաց 'ի պաշտպան : Կառոյց հոյակաս շինուածս հասարակաց 'ի Մոսքուա և 'ի Բեթրսպուրկ : Կարդեաց ատեան քննութե և օտարազգի գրոց մտելոց 'ի

Ռուսիա, և ապա բնաւ իսկ արգել ըզմուտ նոցին: Հրատարակեաց զմատեան օրինացն Աատարինեայ՝ ի պարծանս մեծի կայսրուհւոյն: Շնորհեաց բազում և կարևոր ազատութիս սուանձին հրովարտակօք Հայոց բնակելոց յԱժաէրխան, ՚ի Գրիգորիպօլիս, ՚ի Գարբանդ, ՚ի Խարասու, և յԷսկի խրիս:

Չեռն էարկ Պօղոս և ՚ի կարևոր գործ հաստատութե կարգի յաջորդութե, որ անփոփոխ և անշարժ կարիցէ մնալ մինչև ՚ի սպառ. և ձեռնագրեալ ՚ի կրտակին ինքն և գշխոյն իւր՝ յաւուր պսակման իւրոյ յինքնակալ եգ զայն ՚ի վերայ սեղանոյ եկեղեցոյն ՚ի Մուքուա: Ապա յամին 1797 հրատարակեաց զանյեղ լի օրէնան՝ որովք սահմանէր արքունական տոհմին ըստ գլխոց զկալուածս, և զեկամուտս, զիշխանութիս և զնշանս անգամ պատուոյ, և զկարգ սոսյազատելոյ նոցա զիրեարս ըստ ամենայն գուշակելի գիպաց և հանգամանաց:

Այսպէս Պօղոս ՚ի սուղ ժամանակի թագաւորութեն բազում ինչ յօգտակարաց ՚ի գլուխ տարեալ՝ թէ ոչ կոչեցաւ սերժ ինքնակալ և աշխարհակալ, այլ յիրաւի բարի և բարերար և հայր աշխարհին իւրոյ խոստովանեսցի յամենեցուն:

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա .

ԱՄՐԱՐՁԵԱԼ մեծի թափալորիս յա-
թոռ ինքնակալութեան Ռուսաց 'ի 24
մարտի, յամին 1801, ըստ 'ի մանկութե
գեղեցիկ դաստիարակութեն 'ի ձեռս
հանւոյն իւրոյ Կատարինեայ երկրորդի,
և հռչակաւոր բանասիրին Վահառփայ
անդէն յայտ արար զարգասիս մարդա-
սէր և իմաստուն բարոյիցն՝ բաղմապա-
տիկ շնորհս և ազատութիս պարգևեալ
կարօտելոց : Նուաղեաց զհարկս, դար-
ձոյց զաքսորեալս, ներեաց դասալիք զե-
նուորաց, և եբարձ զխափան մտից օտար-
ազգի գրոց 'ի Ռուսիա . այլ այս ազա-
տութի յետ ամաց ինչ 'ի դէպ ամփո-
փեցաւ : Կարգաւորեաց զդատաստանա-
կան իրս, և ձեռն ետ 'ի բարգաւաճել
զվաճառաշահութի : Հրաման ևս եհան
'ի բաց լքանել իշխանաւորաց զսնոտի
անուանակոչութիս աւելորդս :

Առանձին խնամով ուշ կալաւ 'ի զար-
գացումն գիտութեց և արուեստից յիւ-
րում պետութեն՝ մեծապարգև մեծա-
րեալ զընտիր մատենագիրս . և 'ի յոլով
քաղաքս, որպէս և 'ի Տփլիսիս յամին
1804, կանգնեաց մեծամեծ դպրոցս
հասարակաց :

Խաղաղասէր ոգին Աղեքսանդրի հնարս

հաշտութիւն հոգացեալ ընդ պետութիւն
Գաղղիոյ և Անգղիոյ , աղաչէր զնոսա 'ի
սէր դաշնաւորութեւն յամին 1805 : Այլ
'Նափուէոն տիրապետեալն յայնժամ 'ի
Գաղղիա՝ թշնամանօք հանդերձ արձա-
կեաց զգեսպանն Ռուսաց 'ի Փարիզէ 'ի
Ռուսիա : Ապա իբրև Գերմանացիք 'ի
մտրտ խաղացին ընդդէմ՝ Նափուէոնի ,
սաճապարեաց և Աղէքսանդր յօգնութի
նիզակակցացն իւրոց Գերմանացոց .
այլ չև հասեալ նորա՝ առաւ Վէննա ,
և Աղէքսանդրի 'ի միում ճակատամար-
տի ձախողեալ՝ եթող զզօրս իւր առ սահ-
մանօքն Աւստրիոյ , և մեկնեցաւ 'ի Բե-
թըրպուրկ :

Ի տիրել Նափուէոնի 'ի Բրուսսիա և
'ի յարձակիլ զօրօք 'ի Ռուսս յամին
1807 , Ռուսք ոչ կարացեալ զդէմ ու-
նել բռնութեւն Գաղղիացոց 'ի սպառ ,
յեսսս ընդ կրուկն նահանջեցան . և Ա.
ղէքսանդր խօսեցաւ ընդ Նափուէոնի 'ի
հաշտութիւն յ8 յուլիսի :

Յելա կոյս 1808 ամին 'ի բորբոքել
վերստին պատերազմին Գաղղիացոց ընդ
Գերմանացիս՝ Աղէքսանդր ոչ մտեաց
'ի մի կամ 'ի միւս կողմն : Այլ իբրև
էառ Նափուէոն միւս անգամ զՎէննա և
զԲրուսսիա , և անհնարին խրոխտանօք
սպառնայր Ռուսաց՝ կանգնել անդրէն
զտէրութիւն լեհաց զկործանեալն , և
պահանջէր յԱղէքսանդրէ ծանր ծանր
պայմանս անբերելիս և անիրաւս , Աղէք-

սանդր գուն գործէր հնարս խաղաղու-
թն գտանել, այլ 'ի զուր : Ձի Նափո-
լէոն առանց ինչ ազդարարուէ մտեցաւ
'ի սահմանս նորա հինգհարիւր վաթսուն
հազար զօրօք յամին 1812 :

Մինչդեռ Աղէքսանդր խորհէր հա-
տուած մեծ զաշխարհին իւրոյ թողուլ
'ի Գաղղիացիս՝ զի գոնեա միւսոյ մասինն
յապահովի կացցէ մնասցէ իշխան, իւրքն
ահագին սասակուք գոռային ընդ Գաղ-
ղիացիս առ Սմոլէնսք քաղաքաւ . յո-
րում ճակատու կոտորած անհնարին
լեալ երկուստէք՝ մնայր մարտն անպար-
տելի : Ապա Ռուսք առ 'ի ձգել զթըշ-
նամին 'ի խորս աշխարհին իւրեանց յա-
մայի և յանջրդին անապատս՝ յետս
ընկրկեալ մեկնեցան 'ի Մոսքուա : Իբրև
եկին մերձեցան Գաղղիացիք սնդր, հուր
հարին Ռուսք ընդ ամենայն կողմանս
քաղաքին, և խոյս ետուն 'ի ներքսա-
գոյն անապատս . և 'ի հատանել Նափո-
լէոնի սնդր՝ աճիւնացեալ տեսանէր ըզ-
թագաւորեալ քաղաքն :

Յայնժամ հրաման ետ Նափոլէոն զօ-
րաց իւրոց չու դարձի առնել, զի ձմեռն
ստատկասառոյց 'ի վերայ հասեալ կայր . և
մինչ գեռ դանդաղէին նոքա, սրաղեցաւ
երկիրն առհասարակ, և կոտորեցաւ
գոպցես ողջոյն բանակն . և զմնացեալն
'ի սուր սուսերի կոտորեալ Ռուսաց՝
առին միւսանգամ զլէհս, և զվարչաւ,
ուր յայտ արար Աղէքսանդր և զերա-

առնա իւր ընդդէմ Նափուէոնի առանձին հրովարասկաւ :

Իսկ Նափուէոնի վերստին զօրաժողով լեալ 'ի Փարէզ՝ խաղաց երէքարիւր և վաթսուն հազար զօրօք և էառ զՍաքսոնիա : Անդ գրգռեցաւ մարտ սաստիկ ընդ Գաղղիացիս և ընդ գաշնաւորեալ պետութիւնսն Ռուսաց և Բրուսաց և Գերմանացոց . յորում մարտի , որպէս և յայլ նուագս , Աղեքսանդր ինքնին գլխովին շահատակեալ բազում նախճիրս 'ի Թշնամիս անդր գործէր :

Նափուէոն և յայս նուագ յաղթական գտեալ վանեաց զգաշնաւորսն , որք և 'ի նահանջէլ իւրեանց յետս՝ հրձիգ առնէին զամենայն՝ առ 'ի չթողոյ Գաղղիացոց համբարս կերակրոյ : Յայնժամ պայմանեցաւ երկուստեք աւուրս քառասուն դուլ առնել զինուց . յորում ժամանակի որոացեալ նիզակակցացն և զԱւստրիականն տէրուն՝ ստուարացան յոյժ յոյժ քան զԳաղղիացիս , և ճակատեալ առ Ղիփսիա քաղաքաւ՝ հարին խորտակեցին 'ի սպառ զզօրս Նափուէոնի 'ի 16 , 17 , և 18 հոկտեմբերի յամին 1813 . և իբրև ոչ զիջանէր նա 'ի չափաւոր պայմանս առաջարկեալս նմին 'ի նիզակակից յաղթականացն , վանեցին զնա մինչև 'ի Գաղղիա , և մսեցան առհասարակ յաշխարհն :

Անդ էր տեսանել զԱղեքսանդր իբրու նոր զոմն Ագամեմնոն խրախուսիչ համ-

աշխարհական բանակին, և քաջալեր բնակչաց երկրին. քանզի նա ինքնին էր որ խօսէր 'ի գիմաց նիզակակցաց իւրոց յամենայն պէտս՝ ըստ նոցին իսկ սահմանելոյ: Որոյ մտեալ ընդ նոսա 'ի Փարէզ՝ քաջալերեաց զբնակիչսն, և նոցին իսկ Գաղղիացւոց յընտիր արար՝ զի զ՛ր ազգ և տարազ տէրուէ կամիցին յայնմ հետէ ունել, ինքեանք ընտրեալ կաւցին: Եւ 'ի խնդրել Գաղղիացւոց 'ի մի բերան զԼուգովիկոս ԺԼ Պուրպոնեան 'ի Թագաւոր, և յուրաստ կալ 'ի Նափուէոնէ, հաւանեցաւ նոցա Աղէքսանդր. և անդ գեղերեալ մինչև 'ի գալ Լուգովիկոսի՝ ել նմա ընդ առաջ գըրկախառն ողջունիւ, և ամ զնա յապարանս նորին, ուր չէր ինքն օթւանեալ՝ 'ի պատիւ գահուն Գաղղիոյ:

Ապա յՅօ մայիսի յամին 1814 հաստատեցաւ 'ի Փարէզ հաշտութի խաղաղութե՛ն 'ի մէջ ամենայն պետուէց Եւրոպայ, և 'ի վաղիւ անդր Աղէքսանդր ճաշեաց ընդ արքայի յարքունիս նորին. յորում պահու խուռն բազմութի քաղաքին դռոյթ տուեալ 'ի հրապարակ անդր՝ 'ի ձայն ցնծութե՛ն աղաղակէին. «Վեցցէ Աղէքսանդր, կեցցէ խաղաղարան Եւրոպիոյ. Վեցցէ արքայ, կեցցէ Լուգովիկոս ցանկալին»:

Թողեալ Աղէքսանդրի զՓարէզ լի և պատարուն հռչակաւ իւրոց գեղեցիկ գնացիցն բարեկաւութե՛ն՝ խաղաց գնաց

ընդ Փեղերիկոսի Գ արքային Բրուսաց
'ի Լոնդոն և յՕքսֆորտ, և ամենայն
ուրեք կայսերական շքով մեծարեալ
դարձ արար անդրէն յաշխարհ իւր, և
եհաս 'ի 25 յուլիսի 'ի Բեթրպուրկ
ընդ գլխոյին իւրում, որ ընդ առաջ ե-
կեալ էր նմա մինչև 'ի Գերմանիա:

Եւ թէպէտ Աղեքսանդրի վաղադոյն
կանխեալ ազդ արարեալ էր անդր՝ չառ-
նել ինչ նմա հանդէս յաղթանակի, զի
տեառն է ասէր յաջողումն մարտիս,
սակայն քաղաքացիքն մեծաշուք հան-
դէս ցնծութե կատարեցին 'ի մտանել
նորա 'ի Բեթրպուրկ: Յայնժամ տպեաց
Աղեքսանդր սրտակեր սրտուոյ առ 'ի
բաշխել զօրականին՝ փորագրեալ 'ի մի
կողմն. «Մի՛ մեղ տէր, մի՛ մեղ, այլ
անուան քում տուր զփառս»:

Իբրև անցին 'ի վերայ ամիսք ինչ,
գնաց ընդ արքային Բրուսաց 'ի Վեննա,
ուր 'ի ժողովել ամենայն թագաւորաց
Եւրոպայ՝ յառաջնում աւուր անդ
նոյեմբերի յամին 1814 ունէր լինել ընդ-
հանուր ժողով թագաւորաց: Ի հասա-
նել անդր կայսերն Գերմանացւոց Ֆրան-
չիսկոսի Բ, այն ինչ շուրջ ածէր զաչս
իւր կայսրն եթէ ոք ձեռն տացէ նմա
իջանել յերիվարէն, փութացաւ էջ
Աղեքսանդր յիւրմէ երիվարէն, և ըն-
թացաւ կարկառ զձեռն իւր առ կայսրն
'ի հիացումն տեսողաց:

Ի ժողովի անդ զամենայն ճիգն թա-

փեաց Աղէքսանդր ընդդէմ ոսոխաց իւրոց առ 'ի պինդ ունել և շղատանել 'ի պետութէն Ռուսաց զԹագաւորութի Լէհաց . որում 'ի վերջէ հաւանեցան ամենեքեան 'ի յուսուարի յամին 1815, ճանաչելով զԱղէքսանդր 'ի Թագաւոր Լէհաց՝ անուամբս՝ Թագաւոր կարգեալ 'ի բարեկարգութի աշխարհին : Զոր և արդիւնացոյց Աղէքսանդր՝ բազմապատիկ պիտանի կարգաւորութիւն 'ի Լէհաստան :

Ի նմին ամի հաշտութի արար Աղէքսանդր և ընդ Ֆէթհ Ալի շահին Պարսից, որ էթող 'ի Ռուսս 'ի սպառ զամենայն զՍիւնիս, և զՏաղստան, ասլա և զՎիրս :

Այն ինչ այսպէս յանդորրու էր Եւրոպա, Նափոլէոն զերծեալ յարգելանէն իւրմէ յէլպա կղզւոյ՝ դայր մտանէր 'ի Փարէզ : Աճապարեաց Աղէքսանդր ազդ առնել նիզակակից Թագաւորաց, և ինքնին խաղաց 'ի Գաղղիա : Այլ մինչև հասեալ նորա անդր, վէլլինկոն զօրավար Անգղիացւոց նկուն արար 'ի սպառ զՆափոլէոն . և Աղէքսանդրի մտեալ 'ի Փարէզ, և խնդակից լեալ Լուդովիկոսի, դարձ արար 'ի Լէհս . ուր սա առաջին 'ի Ռուսաց եղաւ զԹագ աշխարհին, և ասլա անց գնաց 'ի Բէթրպուրկ ցնծալից հրճուանօք և աղաղակաւ քաղաքացւոցն 'ի ձայն զանգակաց և հրազինուց :

Յամին 1816 'ի յուսուարի 1, հրովարտակ արար տարագրութի Յիսու-

սեանց 'ի Ռուսիոյ , ըստ ամբաստանու-
թենն , թէ նոքա դարձուցեալ իցեն զու-
մանս յազատանւոյն 'ի հռոմէական հա-
ւատս՝ ընդդէմ՝ օրինաց նախնի թագա-
ւորացն Ռուսաց :

Գտաւ Աղէքսանդր և 'ի ժողովի թա-
գաւորացն գումարեւոյ 'ի Վերոնա քա-
ղաք յամին 1821 'ի բարեկարգել զիրս
Իտալիոյ և Սպանիոյ . և անտի եւ շրջել
ընդ երևելի քաղաքս աշխարհիս : Գարձ
արարեալ յԻտալիոյ 'ի Ռուսիա լի ե-
ռանդեամբ ժաման առնելոյ և զիւրն
ազգ յայն ծագ . քաղաքականուէ , իմաս-
տութե և ճարտարուէ , զոր իւրովն քա-
ջակիրթ ակորժակաւ և խոհական ըն-
տրութ գիտեալն էր յամենայն կողմանս
Եւրոպայ , այնչափ ինչ բարեկարգուիս
յաւել յառաջինսն , զի յիրաւի անուա-
նեցաւ վէհ ինքնակալ ազգի ոչ միայն մե-
ծի և քաջի , այլ և իմաստնոյ և ճարտա-
րի , և անյագ ուսումնասիրի :

Ուղևորեալ ապա գոգցես ընդ ամե-
նայն կողմանս լայնածաւալ աշխարհին
իւրոյ , յերկրորդում՝ նուագի ճանա-
պարհորդութեան իւրոյ 'ի Խրիմ յամին
1825 , իբրև եհաս 'ի Թայդան քաղաք ,
ըմբռնեցաւ 'ի տենդէ , և 'ի սակաւ ա-
ւուրս վախճանեաց անդ զլիւանս իւր
յամսեանն դեկտեմբերի :

Լացին զնա Ռուսք առ հասարակ ,
լացին և օտարազգիք համօրէն . նոքա
իբրև զիւրեանց բնիկ հայր գորովագութ

և տէր աշխարհաշէն , և սոքա իբրև զմի
'ի վէհազանց և 'ի պերճ տիեզերակա-
լաց , որոց գործք և բանք և խորհուրդք
պիտանիք յոյժ և դովելիք՝ առակ օրի-
նակի լեալ իցեն աշխարհի :

ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա .

ՔԱՆՁԻ Աղէքսանդր ոչ էթող որդի
ժառանգ աթուոյն , ըստ կարգի անկա-
նէր թագաւորութինն Կոստանդնի եղ-
բօր նորին երկրորդի որդւոյն Պօղոսի .
այլ զօրութի յայտարարութեն հրա-
տարակելոյ յԱղէքսանդրէ յամին 1823
ամբարձաւ յաթոռ ինքնակալուէ եր-
րորդ որդին Պօղոսի ՆԻԿՈՂԱՅՈՍ Ա , որ
և թագաւորէ այժմ մեծաւ փառօք :

Յամին 1826 , 'ի 5 սեպտեմբերի պը-
սակեցաւ նա 'ի Մոսքուա իբրև ինքնա-
կալ Ռուսիոյ , և 'ի նմին աւուր առան-
ձին հրովարտակաւ յայտ արար իւր ա-
թուաժառանգ յետ մահուանն զորդի
իւր զմեծ իշխանն Աղէքսանդր Նեքո-
լայեվիչ , զծնեալն 'ի 29 ապրիլի յա-
մին 1818 : Ապա յամին 1829 , 'ի 24
մայիսի սրակեցաւ 'ի Վարչաւ որպէս
թագաւոր Լէհաստանի :

Անդէն ընդ ինքնակալել իւրում ցա-
ծոյց զապտտամբութինն ծագեալ 'ի Բե-
թըրպուրկ : Ապա արար զպատերս զմն

ընդդէմ Օսմանեանց , յորում հանդի-
սացան յոյժ յոյժ երկոքեան զօրավարք
նորա Տիպիչ և Փասքեւիչ . առաջինն ա-
նուանեցաւ Չապաւքանաքի՝ իբր զի ան-
ցոյց զզօրս Ռուսաց անգր քան զՊաւքան
լէրինս , և եմուտ յաղթանակաւ յԱ-
դրիանուպօլիս . և երկրորդն կոչեցաւ
Երեւանաքի՝ սակս երկրակալու թէցն ՚ի
հայս :

Տորմիզ նաւաց նորա նիզակակից եղև
Անգղիացւոց և Գաղղիացւոց ՚ի հռչա-
կաւոր պատերազմին Նաւարինայ յամ-
սեանն հոկտեմբերի յամին 1828 , որով
ազատու թի շնորհեցաւ նորոյն Յունաս-
տանի :

Յամսեանն նոյեմբերի յամին 1830
աստտամբեցին Լէհք ՚ի ներքուստ ձե-
ռին Ռուսաց , մինչև մեկնել Վոստան
գնի ՚ի Վարչաւայ : Ինքնակալն արձա-
կեաց ՚ի վերայ նոցա զՏիպիչ . այլ ՚ի
յաճախել աղմկին , և ՚ի մեռանել Տի-
պիչայ յասիական աստէն յամին 1831
՚ի յունիսի 10 , (որպէս և Վոստանգին
եղբայր ինքնակալին մեռաւ ՚ի նմին աս-
տէ ,) առաքեցաւ ՚ի վերայ Լէհաց քաջն
Փասքեւիչ . որոյ առեալ պաշարմամբ
զՎարչաւ՝ նկուն արար ՚ի սպառ զԼէհս :

ՆԿԱՐԱԳԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

ՆԿԱՐԱԳՒԻՐ

ՌՈՒՍԻԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ



ՌՈՒՍԻԱ գրեթէ եօթներորդ մասն է ցամաքի տիեզերաց, և վեշտասաներորդ մասն ազգի մարդկան բնակեն 'ի նմա: Զի մակերևոյթ նորին ողջոյն ընդ Եւրոպա և ընդ Ասիա և ընդ Ամերիկա հաշուի 5,912,000 մղոն քառակուսի. և բնակիչքն ընդ ամենայն 60,000,000: Անհուն ընդարձակութիւն աշխարհին Ռուսաց կարէ ասեն տածել ոգիս 150,000,000. և բնակիչք նորուն ասին յաւելանալ ամ ըստ ամէ 500,000 ոգիք՝ սերնդեամբ ևեթ, և այն առաւել բնիկ Ռուսք՝ քան թէ եկք և այլասեռք:

Առ ճշգրիտ նկարագրութի մեծի աշխարհիս՝ կարևոր թուի ըստ արդի աշխարհագրացն բաժանման ճառել զնրմանէ 'ի կարճոյ. այս է առանձինն սահմանել և կարգել զԵւրոպական,

զԱսիական և զԱմերիկեան մասունս
Ռուսիոյ :

Դ Ի Ր Ք

ԵՒՐՈՊԱԿԱՆ մասն համարի 'ի 16
աստիճանէ արևելեան երկայնութեան
962. և 'ի 40 աստիճանաց լայնութեան
970. առեալ ընդ նմին և զԼեհաստան :

Ասիականին երկայնութի է ընդ մէջ
արևելեան 34 աստիճանաց, և արև-
մտեայց 173. իսկ լայնութի է ընդ մէջ
38 և 78 աստիճանաց :

Ամերիկեան Ռուսիոյ արևմտեան եր-
կայնութի է ընդ մէջ 133 և 17 աս-
տիճանաց, և հիւսիսային լայնութի ընդ
մէջ 55 և 71 աստիճանաց. ոչ հա-
շուեալ զկղզիան :

Ս Ա Հ Մ Ա Ն

ԵՒՐՈՊԱԿԱՆ Ռուսիա 'ի հիւսիսոյ
ունի սահման զՌվկիանոս հիւսիսային,
յարևելից զՌուսիա Ասիոյ, և զԺովն
Կասպից. 'ի հարաւոյ զՌուսիա Ասիոյ,
զՍեաւ ծով, զՄոլտաւիա, զՏաճկաս-
տան Եւրոպիոյ, զԱսարիա, և զԲրա-

քով. յարևմտից զԲրուսիա, զՊալթինկ
ծով, և զԸվէտս:

Ասիականին սահմանք են 'ի հիւսիսոյ
Եւրոպեանն Ռուսիա, և Ովկիանոս
հիւսիսային. յարևելից՝ ծովն և նեղուցն
Պերինկայ, Ովկիանոս մեծ, և ծովն
Օխոթագայ. 'ի հարաւոյ Քուրիլեան
կղզիք, Չինք, ծովն Կասպից, Պարսք,
Հայք, և Սեաւ ծով. յարևմտից Սեաւ
ծով, կիրճն Ենիգալէի, ծովն Ազախու,
և Ռուսիա Եւրոպիոյ:

Ռուսիա Ամերիկոյ ունի իւր սահման
'ի հիւսիսոյ զՈվկիանոս հիւսիսային.
յարևելից զԱմերիկա անգղիական. 'ի
հարաւոյ զՈվկիանոս մեծ. յարևմտից
զՈվկիանոս մեծ, զծովն Պերինկայ, և
զՈվկիանոս հիւսիսային:

ԼԵՐԻՆՔ

ԵՒՐՈՊԱԿԱՆ Ռուսիա ըստ մեծի մա-
սին դաշտ իմն է դողցես լայնածաւալ
'ի տեղիս տեղիս զարդարեալ բլրովք և
լեռամբք ոչ մեծամեծք: Իսկ հարա-
ւային և արևելեան սահմանք նորին յա-
ւէտ լեռնայինք են: Արդ գլխաւորք 'ի
լեռինս Ռուսիոյ այսպէս հաշուին ըստ
ունանց. Ս+անփինա+էան Լեբին+, 'ի միջն-
աշխարհին Ռուսիոյ, յորս բարձրագոյն
է Վալտայ լեռան 175 ձողաչափ: - Կար-

պա՛ւէան կամ Քրա՛թոյց ւերի՛նք, 'ի հարաւակողմն Ռուսիոյ . յորս բարձրակատարք համարինն Իքաթերինէնպէրկ' 333 ձողաչափ, և Լիսա՛ 320 ձողաչափ 'ի բարձրութիւնն : - Կո՛վասոս ւերի՛նք . ընդ որս դասին ոչ միայն գօտիք լերանցն անջրպետողաց զԵւրոպա յԱսիոյ, այլ և լերինք Խրիմի . և 'ի սոսա բարձրագոյն գնի Չատըր տաղին 790 ձողաչափ : - Ուրաւ ւերի՛նք, որք որոշէն զԵւրոպա յԱսիոյ, և ձգին ընդ ամենայն կողմն Ռուսիոյ արևելից . և Լերի՛նք Ասիոյ :

Կ Ղ Ձ Ի Ք

Ի ԲԱԶՄԵԹԻԻ կղզեաց աշխարհին մեծագոյնքն են Նոր Զեմլեա և Արշիպելագոս Սիբիրիայ 'ի հիւսիսայինն Ովկիան, որ են կղզիք անբնակք : Ի Նոր Զեմլեա է հրաբուլխ լեառն քան զամենայն հրաբուլխս մերձաւորագոյն 'ի բևեռն . և անդ 'ի նմին կղզւոջ յաճախեալ են յոյժ որթք ծովու, և այլ ևս գազանք : - Սու՛վեցոյ անուանեալ կղզիք 'ի Սպիտակ ծովուն՝ նշանաւորք վասն մենաստանին կառուցելոյ 'ի միում 'ի նոցունց : - Օպէլ կամ Իօպէլ, Քրոնշթադ, Ադօ, և Ալանս 'ի Պալթիկ ծովուն :

Իսկ Ամերիկեանն Ռուսիա կիսով չափ կղզի է, զորմէ զկնի :

ԼԻՃԻՔ

ՀԻՒՍԻՍԱԿՈՂՄՆ ՌՈՒՍԻՅ ՈՒՆԻ ԼԻՃՈՒ
մեծագոյնս քան զամենայն լիճս Եւրոպայ . և հարաւակողմինն բազմաթիւ ճահիճս , մանաւանդ 'ի Խրիմ և յՕզու և 'ի բերանս Դանուբայ : Անուանիք 'ի լիճս Ռուսիոյ են Լապտիա և Օնէիա յՕլոնէց : - Սայնա , Փայանա , և Քուլտիս 'ի Ֆինլանտիա : - Չոփոտոյէ օւլերօ կամ Բէյֆոս մերձ 'ի Բեթրպուրկ : - Իւնէն 'ի Նովկորոտ : - Էնարա 'ի Լաբոնիա : - Պելօօւլերօ 'ի Նովկորոտ : - Քոպէնստ 'ի Վոլոկտա :

Իսկ յաղի լճաց միջի հռչակաւոր է ծովակն Էլբն 'ի Սարաթով գաւառի :

ԳԵՏԻՔ

ՄԵԾԱՄԵԾԻՔ 'ի գետոց Եւրոպայ անցանէն ընդ մէջ Ռուսիոյ :

Ի Պալթիկ ծով թափին գետքս , Թուրէնա , որ բղխէ 'ի Լաբոնիա Շվետաց , և խառնի 'ի Պոթնեան ծոց : - Քէֆ , Ուլէա , Փիհայոտի , որք բղխեն 'ի համանուն ծովակաց և թափին 'ի Պոթնեան ծոց : - Նէա , կարճ , այլ շատա-

Զուր յոյժ, բխէ 'ի Լատոկա լճէն, և բաժանեալ 'ի բազում առաջս՝ խառնի 'ի Սայմա ծովակ: Այս դեռ գեղեցիկ պանծացուցիչ Բեթրպուրկայ՝ բազում անգամ զայրացեալ՝ ոչ սակաւ վտանգս հասուցանէ նմին: - Նաբէա, բխէ 'ի Բէյբուսէ, և Թափի 'ի Ֆինլանտիա: - Տլէինս հարապիս, բխէ մերձ յակունս Վոլկայի, և անկանի 'ի ծոցն Լիվոնիոյ: - Նէմէն, բխէ 'ի Մինսք գաւառի, և մտեալ 'ի Բրուսիա՝ անուանի Մեմել: - Վիս-Բուլա, բխէ յԱւստրիա, և անցեալ ընդ Լէհաստան՝ մտանէ 'ի Բրուսիա:

Ի Սեաւ ծով, Դանուբ. յորմէ Փրուս գետակ և Եթ անկանի 'ի Ռուսիա: - Տնէմբեր կամ Տնէմբեր (այն է Թոուլա), որ բխէ յԱւստրիա: - Տնէբեր, բխէ 'ի Սմոլէնսք, և մերձ յՕղու Թափի 'ի Սեաւ ծով: - Տոն կամ Տանայիս, անցեալ ընդ գաւառսն Թուլա, Թամպով, Վորոնեժ, և ընդ աշխարհն Խաղախաց՝ Թափի յԱզախ: - Կոպան, բխէ 'ի Լեւրանցն Կովկասու, և անցեալ ընդ Ապազա և ընդ Չէրքէզս, Թափի՝ ըստ մասին 'ի Պոնտոս, և ըստ մասին յԱզախ:

Ի հիւսիսային Ովկիանոս, Փասվէի, սահման Շվետաց, բխէ յԷնարա ծովակէ: - Քուլա, անցանէ ընդ Լաբոնիա Ռուսաց: - Փելուրա, բխէ յՈւրալ Լեւրանց:

Ի Սպիտակ ծով, Վիլի, Քեմբլ, և Քոլպա, բխեն մերձ յԱրքանկէլ: -

Օւէիա, բխէ մերձ 'ի լիճն համանուն: -
Տլիւնա հիւսիսային, ձկանայ 'ի խառ-
նուրդս Սոսոնա և Եոսի գետոց: - Մէ-
շէն, ձկանայ 'ի լճակաց գաւառին Վո-
լոկտայ, և Թափի 'ի ծոց Սպիտակ ծո-
վուն:

Ի ծովն Կասպից, Ուրալ, որ և Եայի+,
բխէ 'ի համանուն լերանցն: - Վոլիա,
կամ Էլիլ, մեծ քան զամենայն գետս
Եւրոսպայ, բխէ 'ի Վոլքոնսքի անտա-
ռաց, և անցեալ ընդ բազում գաւառս
Ռուսիոյ՝ ընդ 65 կամ ըստ այլոց ընդ 70
բերանս Թափի 'ի Կասպից ծով: Չունի
ինչ ուրեք ջրվէժս. վասն որոյ և անխափան
նաւարկէն ընդ նա աւելի քան զ5000
նուակս ակաղձեալս բազմապատիկ ար-
դեամբք ծովու և ցամաքի: - Կոսմա,
բխէ 'ի լերանցն Կովկասու, և ընդ բա-
զում բերանս անկանի 'ի Կասպից ծով: -
Թեբէ+ կամ Թեբ+, բխէ 'ի Խաղբէկ լե-
րանց: - Սուլադ, և Սոմուրա բխեն 'ի
լերանցն Կովկասու:

Յասիական բաժնին հռչակաւոր են
գետքս Օպի կամ Օպ, Իլիլ, Ենիսէյ՝
մեծ քան զամենայն գետս Ասիոյ, Եւ-
րոսպայ և Ափրիկոյ. Թայմուրա, Խալան-
չա, Անապարա, Օլէնէ+, Լէնա, Եանա,
Ինփիհիբա և Քուլիմա, որք Թափին 'ի
հիւսիսայինն Ովկիանոս: - Անափիբ և
Քամլալ+, 'ի ծովն Պերինկայ: - Ուրալ,
Եմպա, և Կուր, 'ի ծովն Կասպից: -
Ռիօն կամ Փասիս, 'ի Սեաւ ծով:

Են և յԱմերիկեանն Ռուսիա գետք
բազումք և մեծամեծք, այլ անուանք
նոցին և տեղիք չև ևս են քաջածանօթք :

ԶՐԱՆՑԻ

Ի ԴԻԻՐՈՒԹԻՒՆ վաճառաչահուծէ
Ռուսիոյ՝ խնամ կալան ինքնակալք աչ-
խարհին անդատին 'ի մեծէն Պետրոսէ՝
փորել ջրանցս և խրամս, և միաւորել
զբազում լիճս և զգետս և զծովս Ռու-
սիոյ. և ցայժմ են անդ աւելի քան
զքսան ջրանցս մեծամեծս և պիտանիս.
Երս գլխաւորք համարին, Վէրին Վա-
լուտ, որ կցէ զՎոլկա ընդ Վոլխով գե-
տոյ, որով և ընդ Նեւայի, ևս և զծովս
Կասպից ընդ Պալթիականին. ձգի ընդ
միջոնս երիս յերկայնութի, և ունի ե-
րիս ջրվէժս: Բացաւ յամին 1711: -
Թի+Վինեա, որ կցէ զԹիքվինքա գետ
ընդ Վոլկայի, և ունի հնգետասան ջր-
վէժս: Զսա եբաց Աղէքսանդր Ա: -
Զբանց+Մարիամո, զոր սկսաւ բանալ
մեծն Պետրոս, և աւարտեաց Աղէք-
սանդր յամին 1808: Կցէ զգետն Քո-
վեա ընդ գետոյն Վիթեկրա. ձգի ընդ
միջոնս չորս, և ունի երկոտասան ջր-
վէժս: - Լափոն, որ առաւել յաճա-
խեալն է 'ի նաւարկութի, կցէ զերե-
սին զմեծամեծ ջրանցսն զառաջինս ընդ

միմեանս . ունի երեսուն և երկու ջր-
վէժս , յորոց կէսք զայլ գեաս ածեն
Թափեն 'ի նոյն , և կէսք զաւելի ջուրս
նորին արկանեն 'ի ծովակն Նատոկա : -
Ջրանց + ձէծին Պեպրոսի , զոր նորին խկ
ածեալ էր զմտաւ , և այժմ յառաջ
վարի 'ի կատարումն , ունի կցել զՊոն-
տոս ընդ ծովուն Կասպից՝ կցելով զՏոն
գետ ընդ Վոլկայի 'ի ձեռն Իլավլիա և
Խամիշենքա անուանեալ բազկաց երկո-
ցունց գետոցս . որով երկայնութի ջրան-
ցիցս ձգեսցի ընդ մզոնս իննսուն :

ԱԶԳՔ

Ի ԽՈՒՌՆ բազմութե այլալեզու և
այլազան ազգաց Եւրոպականն Ռուսիոյ
մարթ է այսպիսի իմն գնեւ խտիր բա-
ժանման , և հաշիւս ընդհանուրս .

Ա . ՍԼԱԻԵԱՆՔ	50,440,000
Մեծ Ռուսք	33,000,000
Փոքր Ռուսք	10,000,000
Լիթուանք	1,300,000
Լէհք	5,500,000
Լեթթոնք	600,000
Բուլղարք	30,000
Բ . ՊԱԼԹԻԱԿԱՆՔ	3,000,000
Ֆինլանտացիք	1,400,000
Եսթոնք	480,000
Լարոնք և Լիվոնիացիք	11,000

	Սիրիացիք	30,000
	Վրացիք և Փերսիացիք	50,000
	Չուաչք	400,000
	Չերեմիչք	200,000
	Մորտուխիք	100,000
	Օսթեակք, Վոթեակք, ևն.	362,000
Գ .	ԹԱԹԱՐԻ	2,500,000
	Բնիկ թաթարք	1,200,000
	Խալմուխք	200,000
	Նողայք	150,000
	Թիւրքմէնք	200,000
	Խըրղըղք	400,000
	Պուխարացիք	10,000
	Պաշխըրք	150,000
	Եասուլթք, ևն.	100,000
Դ .	ԿՈՎԿԱՍԱՅԻՆԻ	1,150,000
	Վիրք	560,000
	Լազք կամ Լազիկեցիք	230,000
	Չերքէզք	190,000
	Ախսազք	90,000
	Օսսէթք, Մծղիք, ևն.	90,000
Ե .	ԹԵՒՏՈՆԻ ԵՒ ԳՈԹԱՅԻՐ	437,200
	Գերմանացիք	380,000
	Շվէտք	56,000
	Դանիք	1,200
Զ .	ԱՂԳԻ ՀԻՒՍՒՍՈՅ	200,000
	Թուրքուզք	50,000
	Սամոյետք	20,000
	Քամչատայիք, ևն.	500,000
	Էսպիմացիք	70,000
	Ամերիկացիք	20,000
Է .	ԱՂԳԻ ԱՍԻԱՅԻՐ	900,000

Հրեայք	500,000
Հայք	300,000
Տաճիկք, Չինկեանէք, Հնդիկք.	50,000
Արաբացիք, Պարսք, ևն.	50,000
Ը. ԱԶԳԻ ԱԶԳԻ ԵՒՐՈՊԱՅԻՔ.	165,000
Մուսուլմանք և Ուլահք	130,000
Յոյնք	30,000
Անգղիացիք, Գաղղիացիք, ևն.	5,000

Զայս ամենայն հաշիւս ըստ ոմանց 'ի նոր աշխարհագրաց եղաք վեր 'ի վերոյ . այլք յուրք՝ են որ կարի և են որ փոքր մի այլազգ հաշուեն . զոր օրինակ ըզհրեայս ոմանք դնեն 460,000, և ոմանք 600,000. զՀայս՝ ոմանք 74,000. կէսք՝ 200,000, այլք 400,000. զնոյն իմա և զայլոց :

Իսկ ըստ կրօնից՝ գտանին 'ի Ռուսիա Յոյնք կամ Յունադասանք . որպիսի են Ռուսք, Խաղախք, Ուլահք, Վիրք, և ամենայն հիւսիսականք՝ դարձեալք 'ի քրիստոնէական հաւատս 'ի ձեռն Ռուսաց . ընդ ամենայն հաշուեալք 48,000,000 : - Հոմովէական Ուղղափառք, այսինքն են Լէհք, Ռուսնիաքք, Լիթուանք, Հայք և Վիրք ըստ մասին, և այլք, իբր 6,600,000 : - Հայք . 300,000 : - Լատինականք . զոր օրինակ Ֆինլանտացիք, Էվէսք, ևն, հաշուեալք 2,000,000 : - Հրեայք . 500,000 : - Մահմէդականք . 4,000,000 : - Խալիֆանք, Մուսուլմանք, և այլ կուսակաշուք՝ իբր 600,000, առա-

ւել յԱսիա . զի որք յԵւրոսական
բաժնին են՝ նուազին օր ըստ օրէ՝ դառ-
նալով 'ի լոյս աւետարանին :

ԲԱՐԻ ՌՈՒՍԱՑ

ԽՏԻՐ մեծ է ընդ Մեծ և ընդ Փոքր
անուանեալ Ռուսս : Փոքր Ռուսք (Մ-
ջ-Ռօսի) բնիկ Սլաւեանք՝ թխահեղք
են և մեղուակն և հասակագեղ , և բար-
բառ նոցաներդաշնակաւոր իմն և քաղց-
րահնչիւն . իսկ ըստ բարուց՝ պարզամիտ ,
զուարթ և անհոգ : Մեծ Ռուսք (Վէ-
լիօ-Ռօսի) սփիւռ բնակեալք մերձ յաշ-
խարհս Գլթաց և Ֆինլանտացւոց՝ խառ-
նուրդ իմն ունին 'ի նոցանէ յամենայնի .
վասն որոյ շիկահեղք են , և յաճախ
ունչքն սակաւ մի 'ի վեր կոյս ցցուեալք .
և ըստ բարուց մաղձայինք , շահախրն-
գիրք , և խորամանկք այնչափ՝ մինչև
ասել երբեմն մեծին Պետրոսի , « Եթէ
դէպ լինէր Իարայէլացւոց անցս յինէն
խնդրել ընդ Ռուսիա , չտայի նոցա
թոյլ , զի մի խաբեսցին 'ի Ռուսաց » :

Սակայն առ հասարակ Ռուսք սուր
ունին զլսելիս , և միջահասակք են , այլ
յաղթանդամք և տոկունք յոյժ յամե-
նայն նեղութիս և 'ի վաստակս . չափա-
ւորք են 'ի կերակուրս , և ազատք 'ի
յաճախ հիւանդութեց . իսկ գեղ սովո-

բազանն առ նոսա ընդդէմ՝ բազում ասի-
 ախց օղին է բարկ՝ խառնեալ երբեմն
 պղպեղիւ, երբեմն և վառօդով, ևս և
 յաճախուծի բազանեաց՝ որք անշուք
 են, և առ գետով ուրեք կառուցեալք
 սովորաբար, զի բազումք ընդ ելանելն՝ ի
 բազանեաց՝ արկանեն զանձինս ՚ի ջուր
 ցուրտ, երբէք և ՚ի ձիւն, առողջաբար
 համարելով զայն և սնդիչ մարմնոյ :

Բազում հետաքնին սովորուծիք էին
 երբեմն, և ցարդ ևս են ՚ի սամիկս Ռու-
 սաց, որք յաչս եւրոպացի աշխարհա-
 գրաց զարմանալիք թէ իցեն, այլ ոչ
 նոյնպէս և արևելեայց : Գովեալ են առ-
 հասարակ հայրենասէր բարք ազատա-
 նւոյն Ռուսաց, և ճիգն նոցա ՚ի պայծա-
 ռութի աշխարհին իւրեանց :

ՊՐՕՆ

Ի ՃԱՄԱՆԱԿՍ զիցատաշտ մտորու-
 թեան Ռուսաց երկրագոյնն ՚ի գիս նոցա
 համարէր Փեռնան ամպրոպային, որոյ
 պատկերին գլուխ էր արծաթի, ա-
 կանջքն և ընչացք ոսկի, բարձքն երկա-
 թի, և մնացորդն փայտ անփուտ, և ՚ի
 ձեռին ունէր քար շանթաձև : Քուրմք
 նորա անշէջ վառէին զհուր առաջի նո-
 րա, և երբեմն մտրդաղոհ ևս առնէին
 նմա :

Հռչակաւոր էին և գլխին Սվետնա շիրի
քառադէմ անճուռնի պատկեր փայ-
տեայ անօրուս . և քուրմ նորա պատ-
գամախօս էր :

Այլ շահապետ էր հօտից . և Քո-
թա՞ քերոց երկրի . և յիշատակ տօնի
ուրախութե երկրորդիս Քոթա՞նիցա ա-
նուանեալ ցարդ ևս նշմարի 'ի Ռուսիա
'ի շէ յունիսի :

Լափա Աստղիկն էր Ռուսաց . Քիտի-
ճոռա , գլխ ցնորից երազոց . Ռոսաւսի
յաւերժահարսունք . Տոնալիէ քոթա՞նի ,
այսինքն ոգլիք տնականք , համարէին պա-
հապանք տանց . նոյնպէս 'ի պատուի
էին և օճք երևեալք 'ի տունս տունս :

Պաշտօն տանէին Ռուսք և մեծամեծ
գետոց , որոց գլուխ համարէին Ղրա-
նուր :

Ի ծագել լուսոյ աւետարանին 'ի
Ռուսիա՝ ընկալան Ռուսք ըստ ամենայ-
նի զարարողութեա Յունաց : Ի մեծէն
Ալատիմիրայ մինչև ցՖէոտոր Իւանու-
վիչ ընդ ամս 578 քառասուն և երեք
մեարասօլիսք կացին 'ի Ռուսիա ընդ
իշխանութե պատրիարգացն Վոստան-
գնուպօլսոյ . ապա վերջինն նոցա Յովբ
անուն՝ ընկալաւ զիշխանութի առանձին
պատրիարգութե . այլ Պետրոս մեծն յա-
մին 1719 յետ մահուան Ագրիանոսի
պատրիարգին՝ փոխանակ պատրիարգի
հաստատեաց զՍիւնհոգոսն , որում
զանձն իւր ստաց լինել գլուխ : Զար-

դիւ ընդ իշխանութիւն հոգոսին հաշուին 480 մենաստանք արանց, և 80 կուսաստանք, առ հատարակ 'ի կարգէ սրբոյն Բարսղի. 28,112 եկեղեցիք, և 67,900 եկեղեցականք: Իսկ գլխաւոր դպրոց կամ վարժարան և աթոռ աստուածաբանուէ եկեղեցականացն Ռուսաց է 'ի Քիեւ:

Ի գալ մեծին Պետրոսի 'ի Փարէզ և 'ի ցուցանել զիղձս իւր միաւորելոյ զեկեղեցին Ռուսաց ընդ հռովմէականին, Աստուածաբանք Սորսոնեան ժողովոյն՝ որոց գլուխ էր հռչակաւորն Լուգովիկոս Հաբերա, առաջի արարին նմա զգաւանութի հռովմէական սուրբ եկեղեցոյ՝ մի առ մի բացատրելով զգլխաւոր մասունս հաւատոյ, յորս միաբանին և Ռուսք, և դիւրացուցանելով զննդիրսն որ յազադս բղխման հոգւոյն սրբոյ, և յազադս գլխաւորութե քահանայապետին հռովմայ: Պետրոս հաճեցաւ յոյժ ընդ առաջարկութիւնն. և դարձ արարեալ 'ի Բեթրսուրկ՝ մատոյց զթուղթն ցեպիսկոպոսունս իւր, և պահանջեաց 'ի նոցանէ զպատասխանին: Նոքա այնչափ յապաղեցին զպատասխանին՝ զըժուարութիւս բազումս 'ի մէջ բերելով, մինչև եկին 'ի վերայ պատերազմունք Շվետաց և Պարսից, որովք զբաղեցաւ Պետրոս. և արքեպիսկոսրոսն Տեազանայ և մեարապօլիան Թէոփանէս մտերիմն Պետրոսի խափանեցին 'ի սպառ զիրսն

բանիւք և գրովք գրելովք լուսերա-
կան ոգւով ընդգէմ՝ ուղղափառ հաւա-
տոյ : Ապա յեա ժամանակաց Բենե-
գիկոսոս ԺԴ պապ գրեաց առ Եղիա-
բեթ, և յորդոր լինէր նմա փոյթ առ-
նել միաբանութեն. այլ նա ետ պա-
տասխանի՝ թէ եկեղեցին Ռուսաց չկա-
րէ առնել ինչ առանց հաւանութեան
պատրիարքայն արևելից. և ոչ ևս այլ
բանք և զեն զմիաբանութի :

ԼԵԶՈՒ

ՄԻ՛ ՚ի վաթսուն և աւելի ևս շառա-
ւիղաց Սլաւեան բարբառոյ՝ և գլխաւոր
՚ի նոսին է և Ռուսացն. այլ սա ևս
կրկին համարի. Մեծին Ռուսիոյ՝ որ է
Նովկորոտեան Սլաւեանցն, և Փոքուն
Ռուսիոյ, այն է Քիեվացւոցն. այլ իւր.
տիր սոցա առաւել ՚ի հնչման անդ նըչ
մարի, քան ՚ի կազմութե բարբառոյն :

Բարբառն Մոսքուայի Նովկորոտեանն
է. որ և ճոխացեալ է յոյժ ՚ի պերճա-
խօսութե, ՚ի քերթողականին և ՚ի բա-
րոյականին : Քաղցրահնչիւն է, որպէս
վկայեն Եւրոպացիք ևս, և առ յաճա-
խութե ձայնաւորաց և ազգի ազգի բա-
ղաձայնից՝ յարմար յոյժ յերաժշտուի
և ՚ի քերթողութի :

ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԱՆԱԳԱՆ ուրեմն սկիզբն եղև բարգաւաճելոյ բարբառոյն Ռուսաց 'ի մետասաներորդ գարու, յորում ծաղկեցաւ Նեստորիոս միանձն Քիեւացի, և գրեաց զպատմութի Ռուսաց յ858 ամէ մինչև ցամն 1113. նա է հայր պատմագրացն Ռուսաց: Մեծն Պետրոս զարգացոյց զգլխութիւն՝ հաստատելով զՃեմարանն գլխութեց 'ի Բեթրպուրկ, երիս գպրոցս 'ի Մոսքուա, և երկուս համալսարանս յերկոսին 'ի քաղաքսն: Այլ մեծաքայլ յառաջադիմութի դպրութեան Ռուսաց եղև առ թագաւորութբ յաջորդաց նորին, որք և անխնայ վարձարութբ քաջ մատենագրաց խրատուսեցին և խրատուսեն զամենեսեան 'ի ծաղկեցուցանել զգլխութիւն: Աղեքտանդր Ա, եբարձ և զարգելս չնդունելոյ 'ի Ռուսիա զգիրս օտար ազգաց. և գաղղիականն բարբառ հասարակ է առ նոսա:

Մատենագիրք նոցա հռչակաւորք են, 'նէֆօր միանձն 'ի Քիեւայ, ժամանակագիր Ռուսաց նախկին. մեզանի յամին 1100:

Թէ-ժանէս Փրօօթիւն մետրապօլիտ. ունի բազում գրուածս աստուածարա-

նականս , ճառականս , ներքողեանս , և
քերթուածս : Կանոնքն հաստատեալք
'ի նմանէ դեռ ևս զգուշութիւն պահպա-
նին 'ի սիւնհոգոսէն : Մեռաւ 'ի 1736 :

Քանիէ իր կուսակալն Ուլահու արար
գիրս երկուս զՕսմանեան տէրութիւն 'ի
լատին բարբառ , որք տպա յեղան 'ի
նուս : Այլ որդի նորին Անտիոքոս Քան-
թէմիր ճոխացոյց զՌուսիա բազմապա-
տիկ թարգմանութիւն 'ի լատին և գաղ-
ղիացի լեզուաց , և պիտանի գրուա-
ծովք և ճառիւք զայլ և այլ իրաց : -
1743 :

Թրեքեա՜ն լսի ուրճախօս և բանա-
տեղծ , աշակերտեալ 'ի Փարէզ Ռօլէ-
նի՝ թարգմանեաց 'ի նուս բարբառ զա-
մենայն զգործս նորա : Ասէն թէ 'ի հըր
գեհիլ երբեմն ձեռագրաց նորին՝ վե-
րջապին գրեաց զամենայնն : Ունի անբաւ-
թարգմանութիւն և շարագրածս պիտա
նիս յոյժ : - 1779 :

Այս լեզու քաջ երաժիշտ և գուսան , ևս
և բանաստեղծ . ունի քերթուածս ինչ ,
և Երգ 'ի մեծն Պետրոս : Սա առաջինն
հիմնեաց զթատր 'ի Ռուսիա : - 1763 :

Քիս՜ն զեսպան մեծին Պետրոսի 'ի
Շվեդս՝ գրեաց անգանօր զՆիւթ պատ-
մութիւն Ռուսաց 'ի սկզբանէ մինչև ցա-
ւուրս իւր : - 1718 :

Թափիւնի կուսակալ Աթաբեխանայ ,
ամս երեսուն աշխատասիրեալ յօրի-
նեաց զՊատմութիւն Ռուսիոյ . որ ըստ մա-

սին հրկէզ եղեալ՝ ըստ մասին տագաբե-
ցաւ 'ի Միւլէրայ : - 1750 :

Լ^{աճնասո՛ւ} որդի առն ձկնորսի լեալ՝
հայր եկայ մատենագրաց, և մանաւանդ
քերթողացն Ռուսաց, Պինդարոս ձայ-
նեալ առ 'ի նոցանէ : Ունի երգս 'ի մեծն
Պետրոս, քերթուածս հովուականս,
ողբերգութիս, թարգմանութիս 'ի յոյն
և 'ի լատին լեզուաց. կանոնս քերթու-
ղականս, քերականականս, ճարտասա-
նականս. ներբողեանս յԵղիսաբեթ և
'ի մեծն Պետրոս, և վերջինս այս Կործ՝
գլուխ համարեալ է ռուս պերճախո-
սութե՛. արար և Պատմութիւն Ռուսաց
ցամն 1054 : - 1705 :

Ս^{աճորոս} քերթող քաջ 'ի յօրի-
նուածս հովուականի և չափաբանեալ
առականց, ունի և բազում ողբերգութիս
'ի պատմութեանց հայրենի աշխարհին :
Արար հետևակ բանիւ և Տարեգիրս
Մոսքուայի, և Պատմութի Սթրելցաց.
և ըստ վսեմ և ներգաշնականոր ոճոյ՝
գլուխ է սա մատենագրացն Ռուսաց : -
1777 :

Ք^{երասոս} հմուտ գրեթէ սմեհայն
լեզուաց Եւրոպայ, պսակեաց զքաջու-
թի իւր 'ի քերթողականին՝ Ռուսիակաւ
նաւն մակագրելով գիւցաղնական բա-
նաստեղծութե՛, որոյ նիւթ է առումն
խազանայ յիւանայ Վասիլէվիչ : -
1807 :

Պ^{ապոն} արբեպիսկոպոս Մոսքուայի

գլուխ համարեալ քորոզացն Ռուսաց՝
ունի ճառս և քարոզս յինն հատորս :

Ն՝Ն՝Ն՝ քաջ հնախոյզ՝ բայց յայլոց
գրուածոց ունի Վաղեմի մատենագա-
րան Ռուսաց ՚ի տասն հատորս :

Մի՛ւլէր բազմահմուտն Վեոթփաղա-
ցի, ամս յիսուն և եօթն դեգերեալ ՚ի
Ռուսիա՝ բազմապատիկ մատեանս սի-
տանիս եթող ՚ի ռուս, ՚ի լատին և ՚ի գեր-
մանացի բարբառս :

Ռեթե՛ւսի և Մայ՝Ն՝ քերթողք ա-
նուանիք, ունին բազում երգս, ողբեր-
գութիւնս, հովուականս և այլ քեր-
թուածս :

Քո՛սքրա՛ն՝ ի թարգմանեաց և յօրի-
նեաց աւելի քան զտասն հազար վեր-
տառութիս, թարգմանեաց և զհօմե-
րոս, և յօրինեաց զԲառարան ռուս, և
Բառգիրս ինչ յերկոտասան լեզուս :

Շէ՛րդա՛ն՝ քաջ պատմագիր, ունի
պատմութի Ռուսաց ճշգրտագոյն քան
զառաջինան : - 1790 :

Փո՛ր՝Ն՝Ն՝ ճարտար թարգմանիչ՝ փո-
խեաց ՚ի ռուս լեզու զՓոփայ անգղիա-
ցոյ զճառն յաղագս Մարգոյ, զԼոբայ
զճառն յաղագս Գասախարակութեան,
զերգս Անակրէոնի, զթուղթս և զերգս
Ուրատեայ, զմեծ մասն Լիւիտսի, ևն : -
1760 :

Քո՛ն Վիւի՛ն համբաւեալ ՚ի յօրի-
նուածս թատերական խաղուց : - 1792 :

Լէ՛ր՝Ն՝Ն՝ ատենագպիր ճեմարանին

Բեթրպուրկայ՝ ունի ճանապարհորդարան յայլ և այլ կողմանս Ռուսիոյ, և բազում ճառս պիտանին:

Քրաշէնէանի¹, հրամանաւ պետութեն անձամբ ճանապարհորդեալ մինչև յարևելեան ծագս աշխարհին՝ գրեաց զստորագրութի վայրացն:

Աշ² իշխանութի՝ հանդիսացեալ առնացի քաջութի ՚ի զօրս Ռուսաց, ապա սակս ճարտար քերթուածոցն և բազմապատիկ հմտութեն կարգեցաւ ՚ի կայսրուհւոյն տեսուչ ճեմարանին և դպրութեց Ռուսիոյ:

Շալաշ³, աշխոյժ ՚ի քերթողութե, գրեաց և գաղղիացի տալս այնչափ ճարտար, մինչև պատրիլ Փարիզեցւոց անգամ, և կարծել գործ վոլթէնայ զթուղթն առ Նինոն՝ զարգասիս ռուս հանձարոյ:

Կալի⁴, արար զպատմութի մեծին Պետրոսի ՚ի հատորս 18: - 1801:

Տերթալի⁵ քերթող անուանի, ունի տալս հռչակաւորս: - 1816:

Օշե⁶ քերթող թատրերդակ: - 1816:

Քաբալէի⁷ քաջ բանաստեղծ և պատմագիր՝ համարի ՚ի Ռուսաց Պինդարոս և թուկիզիզէս միանգամայն: Ի բազմապատիկ գրուածս նորա գրուատեալս առհասարակ՝ երևելի է Պատմութիւնն Ռուսաց լիակատար, որ և թարգմանի ՚ի գաղղիական և յիտալացի բարբառս: - 1825:

Կենդանի մատենագիրք յամի 1828
 համբաւէին՝ Պաւլի-շէշ, որ ունի գրուածս
 ինչ քերթողականս և խմատասիրա-
 կանս : - Պաւլի-աբի, որոյ է մատեան մի
 մակագրեալ Բարբ Ռուսաց յիննևտաս-
 ներորդ գարուս : - Պաւլի-աբի, արար
 զպատմութի պատերազմի 1812 ամին : -
 Շառլոտի, կատակերգակ քերթող ա-
 նուանի : - Շիշ-շէշ ծովակալ, ունի ճառս
 յազագս ոճոյ : - Տա-ի-ի-ի, սորա են
 Յաղագս զինուորականին մատեանք : -
 Տի-ի-ի-ի, առակաբան տաղաչափ քաջ : -
 Կի-ի-ի Կի-ի-ի-ի անուամբ երկուք ո-
 մանք թարգմանիչք գործոց Շէքսպիրայ
 անգղիացւոյ : - Իւ-ի-ի-ի, առակախօս : -
 Ժ-ի-ի-ի, քնարերգակ քերթող : -
 Ք-ի-ի-ի ի-ի-ի, արար Քերթուած զիւ-
 րոյ կրից, ոգեշարժ յոյժ : - Մե-ի-ի-ի-
 ի-ի, թարգմանիչ թասսօյի խտալա-
 ցւոյ : - Փ-ի-ի-ի հեռևող Պայրրի անգ-
 զիացւոյ : - Չ-ի-ի-ի, թարգմանիչ ա-
 նուանի և քերթող, ևն :

Կանայք պիտանի մատենագրութիք
 հռչակեալք են, Պեփրե-ի-ի, Աննա Պա-
 նի, Ու-ի-ի-ի, Կ-ի-ի-ի, Կ-ի-ի-ի, Վ-ի-
 ի-ի-ի, և այլք՝ ըստ մեծի մասին իշխա-
 նուհիք :

ԱՐՈՒԵՍՏՔ

ՅԱՌԱՋ քան զառուրս մեծին Պեարոսի ձեռագործք Ռուսաց քաջայայտք և օտարաց՝ էին մորթք և կաշիք գործեալք, կտաւ առագաստի, չուան, թաղիք և ձունձ թաւարծի, ճրագ, և օճառ: Առ ժամանակօք մեծին Պեարոսի, և ապա Կատարինեայ Էրկրորդի, և Աղեքսանդրի առաջնոյ ճարտարութի Ռուսաց փայլեաց և զարգացաւ յոյժ յոյժ: Այլ մանաւանդ 'ի վերջին ամս Աղեքսանդրի, և 'ի սկզբան թագաւորութե այժմու Ինքնակալիս՝ ըստ ամենայն կարգի ճոխացան և ազնուացան ձեռնարուեստք Ռուսիոյ:

Յամին 1812 թիւ ձեռագործաց համօրէն աշխարհին էր 2332, հանդերձ 11,993 գործաւորօք. իսկ 'ի 1828 հաշուեցան ձեռագործք 5244, և գործաւորք 250,414:

Հռչակեալ են 'ի ճարտարութե յարուեստս բնակիչքն Մոսքուա, Վլատիմիր, Նիժնի Նովկորոտ, Թամակով, Քալուկա և Օլոնեց գաւառաց:

Թող զզարգացումն հասարակարուեստից, այլ և ձեռագործք մետաքսեղինաց, ապակեոյ, չուխայի, թղթոյ, յախճապակեոյ, մետաղաց և զինուց

յաճախեալ են այժմ 'ի Ռուսիա' ոչ
ինչ ընդհատ յայլոց աշխարհացն Եւ-
րոսայ :

Յամին 1830 'ի հանգիսանալ արդա-
սեաց ազգային ճարտարութե՛ տեսան
չուխայք գործարանաց Քոմարովցիի և
Թրուպեցբոյ իշխանացն յարևմանք դե-
ղեցկապոյն չուխայից Գաղղիոյ և Անդ-
ղիոյ : Չնոյն է իմանալ և զքաղվմիրաց
գործարանի Մերլինայ ակինոջ . զբիւրե-
ղաց սպարոն Մալցովի , և զյախճապա-
կեաց սպարոն Պաքմեթեվայ : Եւ պատ-
ճառք զարգացման արուեստիցս համա-
րին , զի գործաւորքն ինքնակամ վաս-
տակեն , և լիաձեռն վարձատրին :

Միւս ևս ճարտարութի սեպհական
Ռուսաց ևեթ , և սակաւուց ոմանց այ-
լոց՝ այն է , զի գիւղականք զամենայն
պէտս իւրեանց անձամբ կերտեն . վասն
որոյ անդ է տեսանել բովանդակ գիւղս
գիւղս պարապեալս յայլ և այլ ձեռա-
գործս :

Սեկ ազնիւ , որսլիսի չեք այլ ուրեք
Եւրոսայ , կաղմի 'ի քաղաքսն Աժ-
աէրխան , Թուոժոք , Խաղան ; 'ի Խրիս'
'ի քաղաքն Խարասու , և յայլ տեղիս :

Միւոցք և անձեոցք սեղանոյ ազ-
նիւք գործին 'ի Աղլոախմիր , 'ի Մոսքուս ,
'ի Քոսթրոմա և 'ի Քալուկա :

Պարսիկ կապերոք գործին 'ի Սմո-
լենսք , 'ի Քամենսքոյ , 'ի Քուրսք , և
յաւանն Միխայլովքս :

Հռչակեալ են գործարանք մեաք-
սեայ կերպասուց որք 'ի Մոսքուա , 'ի
Քուփաշևա՝ որոյ աերն է իշխանն Եռ-
սուփով , 'ի Ֆրեհեով սարոն Ղաղա-
րեանց , և այլք : Եւս և գործարանն
չուխայի Փոթեմքին կամնին 'ի Ալուչ-
քով , որ միայն բաւական է 'ի սատարու
տեղ զգգեստ զօրականին Ռուսաց : Ըն-
տիր է և Թուլթն Մոսքուայի , Բեթըր
սուրկոյ , Եարոսլաւայ , Քալուկայի , և
Լիվոնիոյ : Յախճապակին Վաչինայ ,
Ալէքսանարովքայ , և Վերպլիթքայ :
Թնդանօթք Բեթրոզաւոսքայ , Բե-
թըրպուրկոյ , և Քերսոնի : Ոսկերչու-
թի և ակնագործութի Բեթրպուրկոյ ,
Մոսքուայի , և մեծին Ուսթիւժայ :

ՎԱՃԱՌԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ՅԵՐԵՍՈՒՆ ամաց հեաէ վաճառա-
կանութի Ռուսաց ընդ արտաքինս եր-
թալով երթայ և բարդաւածէ յոյժ
յոյժ , մինչև աւելի քան զկրկնասպա-
տիկն լինել այժմու վաճառականութեն
քան զոր 'ի սկզբան դարուս :

Գլխաւոր վաճառք արձակեալք յայլ
աշխարհս են՝ ճարպ , վուշ , կանեփ ,
ալիւր , երկաթ , սղինձ , կտաւատ ,
փայտ , բաշխողի , մում , կտաւ , ձիւթ ,
կուպր , իւղ , չուան , կաշի , մորթ , սեկ :

Վաճառք որք ածին 'ի Ռուսիա են, գի-
նի, բամբակ, մետաքս, չուխայ, կեր-
պաս, ներկ, անագ, չայ, շաքար, խահ-
վե, պտուղ, օղի, կապար, սնդիկ, ծխա-
խոտ, փայտ, խէժ, և երկաթի գործիք:
Ի Սիպիրայ մորթ ազնիւ, երկաթ, ևն:
Ի Չինաց յախճապակի, չայ, մուշկ,
խաշնդեղ, կերպաս և կտաւ: Եւ յայ-
լոց կողմանց Ասիոյ ակունք, կերպառք,
երկվարք, և այլն:

Երբեակ ընկերութիւնք վաճառակա-
նաց գլխաւորք 'ի Ռուսիա՝ են, Ընկե-
րութի Ամերիկոյ հաստատեալ 'ի 1797,
Ընկերութի նաւարկութե 'ի գոլորշա-
նաւս, 'ի 1823. Ընկերութի Ռուսաց
'ի նաւարկել ընդ արեւմտեան հարաւ,
'ի 1824:

Շահաստան քաղաքք Ռուսիոյ երևե-
լիք են, Մոսքուա, որ կենդրոն համարի
ցամաքային վաճառականուէ Ռուսաց.
Նիժնի Նովկորոտ, ուր յամեն 1817 և
այսր լինի մեծագոյն տոնավաճառ աշ-
խարհին. Քալուկա, Օրեմսկուրկ,
Քուրսք, Քերսոն, Թուլա, Ուսթիւժ
մեծ, Օրեւ, Եարոսլաւ, Մոհիլեւ,
Վիլնա, Սամարա, Թոռոպեց, Ռոս-
թով, Քիեւ, Նեժին, Տուլնո, Պերտի-
չեւ, և Ռաժիվիլով:

Նաւահանդիսաք յաճախեալք՝ են 'ի
Պալթիկ ծովուն՝ Բեթրպուրկ, Բեկա,
Ապօ, Հելսինկֆորս, Բեվէլ, Փերնաւ,
Լիպաւ, Վաղա, ևն: - Ի Սպիտակ ծո-

վուն, Արքանկէլ: - Ի Կասպից ծովուն,
Աժաէրխան, Պաքու, և Ղզլար: - Ի
Սեաւ ծովուն, Օտեսա, Թայլան,
Քէֆէ, Կերճ:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ԻնքնԱԿԱԼՆ Ռուսիոյ միապետ է
ինքնիշխան, գլուխ պետութիւն և կրօնին
Ռուսաց միանգամայն: Այլ Տոնպի և
Չեւնոմոնպի Խաղախք մի մի հասարա-
կապետութիւն համարին զինուորականք.
մեծ դքսութիւն Ֆինլանտիոյ բազում ա-
զատութիւն ունի. որպէս և Ղլվոնիա,
Եսթոնիա, և Քուրլանտիա գաւառք.
և 'ի տեսչութիւն թագաւորուն Ղէհայ'
վճիռ ինքնակալին հաւասարազօր է օ-
րինաւոր իշխանութիւն ծերակուտին Ղէ-
հաստանի:

Չորք են գլխաւոր ատեանք պետու-
թիւն. ա. Ատեանն կայսերական, որ և
'ի քառեակ Դասս կամ Պաշտօնատա-
րութիւն տրոհի: - բ. Ատեան ծերակու-
տին՝ բաժանեալ յութ Դասս. յորոց
երեքն 'ի Մոսքուա կարգեալ են, և
հինգ 'ի Բեթրպուրկ: - գ. Ատեան
Սիւնհոգոսին: - դ. Ատեանն Քաղա-
քական տեսչութիւն, որ ըստ երեցունց
ատիճանաց սլայմանի քաղաքացեացն
երրեակ ունի հատուածս:

Կարգք ասպետացն Ռուսիոյ էն վեց,
 որոց ամենեցուն՝ ինքնակալն է կարգա-
 պետ. ւն. Կարգ սրբոյն Անդրէի հաս-
 տատեալ 'ի Պետրոսէ մեծէ 'ի նոյեմբ.
 30, յամին 1698: - ք. Կարգ սրբու-
 հւոյն Կատարինեայ, սահմանեալ 'ի 24
 նոյեմբ. յամին 1714 'ի Պետրոսէ մեծէ.
 և բաժանի այս կարգ յերկուս Գասս
 կամ Աստիճանս. առաջնոյն մեծ է խաչ
 նշանին, և երկրորդին փոքր: - ք. Կարգ
 սրբոյն Ալեքսանդրի Նեւսքեայ, նոյն-
 պէս 'ի մեծէն Պետրոսէ կարգեալ յա-
 մին 1722: - ք. Կարգ սրբոյն Գէորգայ
 զորավարի, վասն զինուորական դասուն,
 սահմանեալ 'ի Կատարինեայ երկրորդէ
 'ի 26 նոյեմբ. 1769. և բաժանի 'ի հինգ
 դասս: - ք. Կարգ սրբոյն Վլադիմիրայ,
 կարգեալ 'ի նմին Կատարինեայ երկրոր-
 զէ 'ի 22 սեպտ. 1782. որ և բաժանի
 'ի քառեակ դասս: - ք. Կարգ սրբոյն
 Աննայի, հաստատեալ 'ի Պետրոսէ եր-
 րորդէ 'ի փետր. 3. յամին 1736. որ
 բաժանի 'ի չորս դասս:

ՀԱՍԳ ԵՒ ԾԱԽՔ

ՀԱՍԳ կամ եկամուտք պետութեն
 Ռուսաց համարին 215,000,000 ռուպլի,
 կամ 430,000,000 Ֆրանք. և ժողովին
 այս հարք 'ի գլխահարկէ գիւղականաց,

'ի տրոց վաճառականաց ըստ չափու ճո-
խութէն նոցին՝ զոր ինքեանիք յայտ առ-
նեն պետութեն, և ըստ այնմ ընդու-
նին և ազատութիս . 'ի սեպհական կա-
լուածոց պետութեն . 'ի մաքսէ . 'ի բա-
ժից անշարժ ստացուածոց վաճառե-
լեաց . 'ի մենավաճառութէ օղոյ և ա-
ղի . 'ի բովուց . 'ի դրամահատութէ . 'ի
կնքաւոր թղթոց . 'ի թղթաբերաց . և
'ի մօրթեղէն հարկաց՝ զոր հարկանեն
հիւսիսականք :

Ծախք ևս պետութեն 'ի խաղաղու-
ղութե ժամանակս զոյգ և կշիռ համա-
րին հասիցն . այլ 'ի ժամանակս պատե-
րազմի առաւելուն :

Պարտք Ռուսիոյ համարին միլիոն մի
բուպլի :

ԶՕՐԲ ԵՒ ԱՄՐՈՒԹԻՒՆԻՔ

ԶՕՐԲ Ռուսաց ցամաքայինք հաշուին
միլիոն մի՝ հանդերձ 50,000 լեհացի
զօրօք . այլ կիրթ և կանոնաւոր զօրա-
կանքն համարին ընդ ամենայն 713,000 .
յորս 613,000 հեռակէք են, և 100,000
հեծեալք :

Ծովային զօրք Ռուսաց հաշուին
33,000 . իսկ պատերազմիկ նաւք մեծա-
մեծք և մանուկք՝ 155, և թնդանօթք
իր 4348 :

Ամրոցք Ռուսիոյ ըստ ընդարձակու-
թէն սակաւք են . յորոց միջի հռչակին
Սվեաստրիկ , Հելսինկիֆորս և Փրիտերիքս
համ'ի Ֆինլանտիա . Քրոնշթատ , Րի-
կա , Տունապուրկ , Պոսպուլսք , Թայ-
ղան , Իսմայիլ , Պէնաէր , Խօթուն , և
Ախքիրման :

Նաւակայք ծովային զորաց անուանիք
են Քրոնշթատ 'ի Պալթիկ ծովուն . Ար-
քանկէլ 'ի Ստիտակ ծովուն . Սեւաս-
տոփոլ և Նիքոլայեւ 'ի Սեաւ ծովուն .
և Աժաէրխան 'ի վերայ Աղկայի 'ի Կաս-
պից ծովուն :

Իսկ տեղիք նաւակերտի գլխաւորք են
Բեթրպուրկ , Քրոնշթատ , Արքանկէլ ,
և Նիքոլայեւ :

ՐԱԺԱՆՈՒՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱ Եւրոպիոյ ըստ քաղաքա-
կան տեսչութե պետութեանն բաժանի
այժմ 'ի 49 կուսակալութիւ կամ գա-
ւառս (կոմպերնիա), և 12 նահանգս
(օպլասն) : Արտաքոյ սոցին են Երկիր
Տոնոքի Խաղախաց , Ֆինլանտիա , և 1 է-
հաստան . ևս և այլ աշխարհք հեռա-
ւորք հարկատուք ևեթ , և ոմանք ինք-
նապուրկք ամենևին :

Յաւաջիկայդ պատկեր Գաւառաց և
Քաղաքաց՝ ընդհանուր բաժանմունքն

ե՛ն ըստ ոճոյ արդի աշխարհագրաց : Իսկ զճշգրտուէ կի՛մ զհաւանականուէ թուոյ բնակչաց քաղաքի քաղաքի՝ երաշխաւսրեացէ մեզ Օրագիր ճեմարանին գիտութեց Բեթրպուրկոյ հրատարակեալ յամին 1830, որ թուի կարգեալ ըստ աշխարհագրին եղելոյ ՚ի 1829 : Սակայն զհաշիւս գաւառացն պակասելոց յՕրագրին՝ այլուստ լցուցաք : Ի հաշիւս անդ սակա համառօտութե՛զ զերիս զըօյս նշանակա հարիւրաւորաց ՚ի բաց թողումք . զոր օրինակ զթիւ բնակչացն Բեթրպուրկայ 449, ընթերցիր 449,000 . նոյնպէս և զայլն :

Պ Ա Լ Թ Ի Ա Կ Ա Ն Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բ Ե Թ Բ Գ Ո Ւ Բ Գ (Գա-սա) . Բեթրպուրկ (Գաղա), 449 . Քրոնշթատ, 10 . Նարվա, 5 . Չարսքոյէ Սեւո, 4 . Շլուսսեւրպուրկ, 3 . Նոր Լատոկա, 2 . Կաշինա, 2 .

Ե Ս Թ Ո Ն Ի Ա . Բէվէլ, 13 . Վայսսէնշթէյն, 3 . Վայսսէնպէրկ, 3 .

Լ Ի Վ Ո Ն Ի Ա . Բիկա, 42 . Տերրդ, 9 . Փերնաւ, 4 . Ֆէլլին, 2 . Վէնսէն, 2 .

Բ Ո Ւ Բ Լ Ա Ն Տ Ի Ա . Միթթաւ, 14 . Լիպաւ, 7 . Կոլտիննկէն, 4 .

Ֆ Ի Ն Լ Ա Ն Տ Ի Ա . Հէլտինկֆորտ, 8 . Սվեապորկ, 3 . Ապօ, 11 . Վազա, 3 .

ՄԵԾ ԹՈՒՍԻՄ

- ՄՈՍԻՐՈՒՄ . Մոսքուա , 250 . Քոլումնա ,
 10 . Սերփուքով , 6 . Վէրրէյա , 5 .
 Տմիթրով , 4 . Մոժայսք , 2 .
 ՍՄՈԼԵՆՍԻ . Սմոլենսք , 11 . Վէազմա ,
 8 . Տորոհոպուժ , 4 . Պէլոյ , 3 . Ռոս-
 լաւ , 3 .
 ՓՍԻՐՈՎ . Փսքով , 9 . Թոռոփեց , 5 . Վէ-
 լիքիէ լուքի , 4 .
 ԹՎԵՐ . Թվեր , 22 . Թոռժոք , 12 . Ռժեվ ,
 10 . Օսթաշքով , 8 . Վէրին Վոլոչոք ,
 6 . Քաշինեա , 5 .
 ՆՈՎՎՈՐՈՏ . Նովկորոտ մեծ , 8 . Սթա-
 րայա Ռուսաա , 9 . Պոռովիչ , 5 . Թիք-
 վինեա , 4 . Վալտայ , 4 . Ուսթիւժ-
 նեա , 3 . Պէլոսերսք , 3 .
 ՕԼՈՆԵՑ . Բեթրոզավոսսք , 5 . Քարկո-
 փով , 2 .
 ՅՐԻՄՆԿԷԼ . Արքանիէլ , 19 . Մեզեն ,
 1 . Օնեկա , 1 .
 ՎՈԼՈՎՏԱ . Վոլոկաա , 13 . Ուսթիւժ
 մեծ , 7 . Թոթմա , 3 . Կրեազովեց , 2 .
 Նեքոլսք , 1 .
 ԵԱՐՈՍԼԱՒ . Եարոսլաւ , 24 . Ուկլիչ ,
 8 . Ռոսթով , 6 .
 ԲՈՍԹՐՈՄԱ . Քոսթրոմա , 12 . Կա-
 լիչ , 5 .
 ՎՈԼՈՏԻՄԻՐ . Վոլոտիմիր , 7 . Մուրով ,
 6 . Փերեսլաւ Զալեպի , 5 . Սուզ-
 աաւ , 5 . Եուրեվ , 4 .

- ՆԻՃՆԻ ՆՈՎՎՈՐՈՏ . Նիժնի Նովկորոտ ,
 14 . Արղամաս , 8 . Փոչինքի , 6 . Պա-
 լահնա , 3 . Փաւլովա , 6 .
- ԹԱՄՊՈՎ . Թամպով , 16 . Քոզլով . 14 .
 Թեմնիքով , 6 . Լիփեցք , 6 . Մոր-
 շանք , 6 . Սփաք , 6 .
- ԲԵՍՋԱՆ . Բեազան , 19 . Զառայք , 6 .
 Քասիմով , 6 .
- ԹՈՒԼԱ . Թուլա , 39 . Պելէվ , 5 . Պո-
 հորոսիցք , 4 .
- ՔԱԼՈՒԿԱ . Քալուկա , 26 . Պոսովք , 5 .
- ՕՐԵԼ . Օրէլ , 30 . Ելէց , 15 . Մեցենք ,
 10 . Քարաչէվ , 9 . Լիվնի , 7 . Սեւք ,
 6 . Պրիանք , 5 . Տմիթրովք , 4 .
- ՔՈՒՐՍՔ . Քուրք , 23 . Պելկորոտ , 10 .
 Բիւք . 7 .
- ՎՈՐՈՆԵՓ . Վորոնէֆ , 19 . Օսթրո-
 կոյք , 4 .

ՓՈՒՔՐ ԹՈՒՍԻՍ

- ՔՐԵՎ . Քրեվ , 56 . Պոհուտաւլ , 7 .
 Չեւքայք , 6 . Վասիլքով . 5 . Մախ-
 նովքա , 5 .
- ՉԷՐՆԻԿՈՎ . Չէրնիկով , 10 . Նեժին , 16 .
 Նովկորոտ Սեւերսքի , 8 . Կլուհով , 9 .
 Սթարոտուպ , 4 . Մկլին , 5 . Պաթու-
 բին , 5 .
- ՓՈԼԹԱՒԱ . Փոլթաւա , 8 . Քոսկէւա-
 քի , 11 . Քրեմնչուկ , 8 . Միրկո-
 րոտ , 7 . Զէնքով , 7 . Փրելուքի , 6 .
 Կրասիֆք , 5 . Փերեսլաւլ , 5 .

ԽԱՐԲՈՎ կամ ՈՒՔՐԱՆԻԱ . Խարբով
կամ Խարբովա , 13 . Ախթիրքա , 13 .
Պելոփոլէ , 11 . Լեպեաինեա , 11 .
Սուճի , 9 . Պահոտուխով , 9 . Վալքի ,
7 . Պելովոտաք , 6 . Զուլչեվ , 6 . Սլա
ւեանաք , 4 .

ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԻԱ

ՔԵՐՍՈՆ . Քերսոն , 12 . Օսեսա , 33 .
Ելիսավէթկրատ , 10 . Նիքողայեվ , 6 .
Գրիգորուպօլիս , 3 . Օզու , 2 .

ԿԱՏԱՐԻՆԷՍԼԱՒ . Կատարինէսլաւ , 8 .
Նախիջևան , 9 . Նովոմոսքովաք , 7 .
Թայլան , 6 . Ռասթով , 5 . Փաւլո
կրատ , 4 .

ԴԱՐԻՒԱ . Ախմէջիգ կամ Սիմֆերո
փոլ , 2 . Պաղջէսարայ , 9 . Խարասու ,
8 . Կէօզլէվ կամ Եւսլատորիս , 7 .
Քէֆէ կամ Թէոդոսիս , 6 . Օր , 3 .
Կերչ , 2 . Ախթիար կամ Սեւաստո
փոլ , 1 .

ՊԵՍԱՐԱՊԻԱ . Քիչնով , 20 . Ախքիր
ման , 13 . Խօթուն , 7 . Պելլի , 7 .
Պէնաէր , 5 . Խանայիլ , 13 .

ԵՐԿԻՐ ՏՈՆՍՔԻ ԽԱԶԱԽԱՑ . Նովոջեր
քաաք , 11 . Սթարոջերքաաք , 5 : Թոդ
զքսանիւ չափ և աւելի գիւղօրէս մե
ծամեծս :

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹՈՒՍԻՆ

- ՎԻԼՆԱ. Վիլնա, 56. Գոշնո, 6.
 ԿՐՈՏՆՕ. Կրոանո, 9. Պրեսոյ Լիթով-
 սի, 8.
 ՎԻԹԵՊՍՔ. Վիթեպուք, 15. Փոլոցք, 10.
 ՄՈՀԻԼԵՎ. Մոհիլեվ կամ Մոյլով, 21.
 Մսթիսլաւ, 4.
 ՄԻՆՍՔ. Մինսք, 15. Պոպրույսք, 5.
 ՎՈԼԻՆԻՆ. Ժիթոմիր, 11. Պերախչեվ
 կամ Պարախչով, 20. Տուսնո, 9.
 Զասլաւ, 8. Օսթրոկ, 8. Բրեմե-
 նեց, 6. Լուցք, 5. Ռաժիվիլով, 5.
 ՓՈՏՈԼԻՆ. Բամենից կամ Բամենեց
 Փոտոլք, 13. Մոհիլեվ, 8. Վիննի-
 ցա, 7. Պալթա, 7. Պառ, 6.
 ՊԵՆԼԻՍԹՈՔ. Պեալիսթոք, 6. Պելսք, 2.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹՈՒՍԻՆ

- ԽԱԶԱՆ. Խազան, 48. Չիսթոփոլ, 6.
 ՎԵՆԹՔԱ. Վեաթքա, 9. Իժեւսի Զա-
 վոս, 12.
 ՓԵՐՄ. Փերմ, 10. Էքաթէրինսկուրկ,
 11. Գունկուր, 8.
 ՍԻՄԳԻՐՍՔ. Սիմսկրսք, 13. Սիլրան,
 9. Սամարա, 6.
 ՓԵՆՉԱ. Փենչա, 13. Սարանսք, 8.
 ԱԺՏԵՐԻՆ. Աժտէրիան, 40. Գրաս-
 նոյար, 3.
 ՍԱՐԱԹՈՎ. Սարաթով, 35. Վոլթսք,

11. Քուզնէցք, 7. Փեթրովք, 5.
 Օրեմարտիկ. Ուֆա, 8. Օրեմարտիկ,
 6. Ուրալք, 11.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ

- ՄԱԶՈՎԻԱ. Վարշաւ, կամ Վարսաւ
 ւիա, 150. Թոմաշով, 4.
 ԿԱԼԻՉ. Կալիչ, 15.
 ՔՐԱՔՈՎԻԱ. Քելչա, 5.
 ՍԱՆՏՈՄԻՐ. Սանտոմիր, 2.
 ԼԻՒՊԼԻՆ. Լիւպլին, 12.
 ՓՈՏԼԱՔԻԱ. Սեւէրսկ, 3.
 ՓԼՈՑԻ. Փլոցք, 6.
 ԱՒԿՈՒՍԹՈՎ, Սուվալսքի, 3.

ՍԻՊԻՐ կամ ՍԻՊԵՐԻԱ

- ԹՈՊՈԼՍԻ. Թոպոլք, 25. Թիւմեն, 10.
 Թուրինք, 3.
 ԹՈՄՍԻ. Թոմսք, 9. Զմէյնսկոբք, 8.
 Պարնաուզ, 9.
 ԵՆԻՍԵՅՍԻ. Ենիսէյք, 6. Քրասնոյարք, 4.
 ԻՐԻՍԻՍԻ. Իրքուծք, 16.
 ՕՄՍԻ. Օմսք, 7. Բեթրովաւլովք, 4.
 ՆԱԳՈՒԹՍԻ. Նադուծք, 3.
 ՕԽՈԹՍԻ. Օխոծք, 1.
 ՔԱՄՉԱԹՔԱ. Բեթրովաւլովք, 1.
 ԵՐԿԻՐ ԽԸՐԶԸԶԱՅ ԵՒ ՉՈՒՔԸԱՅ,
 յորա չիք ինչ վայր բնակուածն հաստատուն և անուանի, այլ բազմաթիւ

խումբք վրանաբնակաց թափ առեալ
յածին 'ի նոսա :

ԿՈՎԿԱՍԱՅԻՆՔ

ՎՐԱՍՏԱՆ . Տփլիսիս , 12 . Տուչէթի , 1 .
Կորի , 3 . Ելիսավէթփոլ կամ Գան-
ձակ , Կէնճէ , 11 . Սըղնախ , 3 . Ճա-
րի , գլխաւոր քաղաք Լէզիկաց՝ զորս
նուաճեաց կոմսն Փասքեւիչ :

ՀՐԲԱՆ . Պաքու . Հին Համախի . Կոր
Համախի . Կուչի . Շէքի . Մողան :

ՀԱՅԱՍՏԱՆ . Երևան . Էջմիածին . Կախ-
իջևան . Ապասապատ . Արտապատ :

ՎՐԱՍՏԱՆ ՕՍՄԱՆԵԱՆ . Ախլցիսա . Ա-
խալքէլէք :

ԻՄԷՐԷԹ . Խուլթայիս . Օնի . Պաղտատ :
Ի Մնկրէլ՝ Ծոմախտի , Բէտուլթա-
լէսի : Ի Ղուրիա՝ Տիախի ցիխէ , Փո-
թի : Ի մեծ Ապաղա՝ Սօուգոու , Սօ-
խում գալէսի , Փիցուհտա , Անափա :

ԼԵՌՆԱԿՈՂՄՆ . Վլատիկաւկաս , 4 . Տա-
րիէլ . Խաղբէկ . Երկիր Օսեթաց .
Եգերացիք կամ Չէրքէզք , ուր են
մեծ և փոքր կասարթա , ևն :

ՏԱՂՍՏԱՆ . Քուպա . Քուրա . Անձուկ .
Եարսի . Դարբանդ . Գարապուտադ ,
և այլն :

ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍՈՒ . Սթաւ-
րոփոլ , 3 . Կէորկեւք , 1 . Քոն-
սթանթինոկորպք . Փոքորիվլի . Ղզար ,
9 . Մողտոք , 4 .

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵԹՐՊՈՒՐԿ կամ ՍԱՆԲԹ-ՓԵԹԵՐ-ՊՈՒՐԿ . Մի 'ի գեղեցիկ քաղաքաց աշխարհի . ըստ լայնութե , ուղղութե և մաքրութե փողոցացն , ըստ դրից վայելչաչէն շինուածոցն , և կրանիթ քարեայ թմբին 'Նեւայի' գերագոյն քան զամենայն մայրաքաղաքս Եւրոսայ : Հրասարակքն մեծամեծք' են հրասարակն Չմերանոցին արքունի . հրասարակ սրբոյն Խասակայ . հրասարակ ծերակուտին , ուր է հսկայաձև անդրին մեծին Պետրոսի կանգնեալ 'ի Կատարինեայ երկրորդէ , գործ Փալքոնետեայ , և սլատուանդանն է կրանիթ քար լեւնաձև 1,700,000 կշռով . հրասարակն Թատրոնի . հրասարակն Արեսի , ուր լինին վարժք զօրաց , և 'ի միջավայրին է անդրի Սուվորովայ . հրասարակն նորամուտ սպայից , յորում կոթող 'ի պատիւ Բումբանցովայ . և հրասարակ Մաքսատան :

Փողոցքն գեղեցկագոյնք են , փողոցն 'Նեւայի' ծառազարդ երկուստեք , յորում հոյակապ եկեղեցին Խաղանայ , և այլ ևս շինուածք վայելուչք . փողոցքն Աթէյնայա , Սալտովայա , Մորսքայա , ևն :

Շինուածք հոյակապք համարին ,

Չմերոցն արքունի՝ ուր բնակէ սովորաբար ինքնակալն, շինուած ընդարձակ յոյժ, այլ ըստ ճարտարասպետութեանն սրահասաւոր. առ որով միւս ևս սալատ գեղեցիկ, անուանեալ Էռֆելաժ, յորոյ ՚ի պահարանի բաց՚ի բաղմապատիկ սատուական իրաց՝ գտանի և ադամանդն մեծ 194 գրադ ծանրութիւն, որ և մի է յերկց մեծամեծ ադամանդաց աշխարհի: Մարմարիոն սալատն. սալատն Անիչքով՝ առանձին բնակարան այժմու Ինքնակալին. սալատն Դաւրիոյ, զոր շինեաց Փոթեմքին ՚ի սատիւ Կատարինեայ երկրորդի. սալատ մեծի իշխանին Մեքայելի եղբոր Ինքնակալին՝ նորակերտ: Ճեմարանն գեղարուեստից. գանձատունն. սալատն ծովակալին. ճեմարանն գիտութեց: Դատարանն մեծ՝ շինուած կիսաբոլոր, որոյ առաջի կանգնի արձան մեծ ՚ի յիշատակ Ազեքսանդրի Ա, և սատուական նորին կրանիթ քար 84 տոնաչափ բարձրութիւն: Կոսթիննոյ Տվու, ընդ որով են 170 կրպակք: Գրատունն արքունի, յորում հաշուին 300,000 սպագիր մատեանք, և 11,000 գրչագիրք: Չխարձակարանն. նոր զինարանն, յորում գովի յոյժ ձուլարանն. մեծ նատտանն Սմոլնոյ. վարժարան սրբուհւոյն Կատարինեայ. աղքատանոցն. որբանոցն. զինուորանոցքն Իզմայիլովսքի, Փաւլովսքի, Մոսքովսքի, ևն:

Ի բաղմաթիւ եկեղեցեաց Բեթըր-

սուրկոյ նշանաւորքն են մայր եկեղեցին՝ յանուն Տիրամօրն 'ի ձև սրբոյն Պետրոսի որ 'ի Հռովմ, այլ փոքր յոյժքան զայն . սուրբ Իսահակ հիմնեալ 'ի 1822 . հաչակի բարձրութի գմբէթին , և չորեքեան գաւիթքն , յորս սինքն են յամբողջ կրանիթ քարանց . սուրբ Պետրոս Պօղոս . սուրբ Նիկողայոս . սուրբ Սիմոն . եկեղեցին Այլակերպուէ , ևն . ևս և եկեղեցին Աղեքսանդրի Նեւաբեայ յիւրում մենաստանին , որոյ և դամբանն ձոյլ արծաթի է 'ի նմա . և շուրջանակի զեկեղեցեաւն շիրիմք թաղաւորացն Ռուսիոյ : Իսկ 'ի պերճ պալատանց հաչակաւոր են ասարանք իշխանացն Սթրոկոնով , Պեզպորոտաբի , Շէրեմէթով , Կակարին , Պելոսելաբի , և Լապանով :

Շինուածք յուսումնական պէտս երևելիք են համալսարանն («սեիւերսիւնէն») հիմնեալ յամին 1819 . առ որով կամին կառուցանել և զՈւսումնարան արևելեան լեզուաց՝ 'ի դաստիարակութի 40 պատանեաց , մետասան դասասաց վարժապետօք . և առ նմին տպարան , և գրատուն : Ճեմարանն («սպէս») բժշկականին , յորում վարժին 520 մանկունք . Ուսումնարան (ինսիսիւն) դաստիարակուէ մանկանց կառուցեալ 'ի 1828 . Ճեմարանն եկեղեցականաց . Ուսումնարան արևելեան հիմնեալ 'ի 1824 . Գպրոցն վաճառականուէ . Ուսումնա

րան արուեստից . Դպրոց մշակութեան .
Դպրոցն ծովային վաճառականութեան
հիմնեալ յայժմու Ինքնակալէն . Ուսու-
մնարան Սմոլնոյ մենաստանին 'ի դաստի-
արակութի օրիորդաց . Ուսումնարան
սրբուհւոյն Վատարինեայ, յորում դաս-
տիարակին 180 ազնուազգի օրիորդք, կեն:

Կենցաղօգուտ ընկերութիւք ևս յա-
ճախեալ են 'ի Բեթրպուրկ, յորոց սա-
կի համբաւին ճեմարանն գիտութեց .
ճեմարանն Ռուսական, ճեմարանն գեղ-
արուեստից . Ազատ ընկերութիւնն ու-
սումնասիրաց . Ընկերութի լեզուասի-
րաց ռուս բարբառոյ . Ընկերուի բժշչ-
կականին . Ընկերութի գեղարարութե .
Ընկերութիւն հանքաբանութե . Ազատ
ընկերութիւն Տնտեսականին . Ազատ ըն-
կերութի գիւղական տնտեսութե . Կայ-
սերական ընկերութիւն մարդասիրական .
Ընկերութի զինուորական . Ընկերութի
խրախուսիչ դպրոցաց, և Ընկերութիւն
խրախուսիչ արուեստաւորաց :

Իբազմաթիւ գրատանց Բեթրպուր-
կոյերէէլք են կայսերական գրատունն,
և գրատուն ճեմարանին գիտութեց՝ ճոխ
անբաւ արևելեան գրչագիր մատենիւք,
և 'ի մերում ժամանակի և ևս ճոխա-
ցեալ բազմապատիկ պարսկական ձեռա-
գրովք՝ զորս շահն Պարսից ընծայեաց
Նիկողայոսի Կայսեր : Անդ է և Դիտա-
նոց աստեղաբաշխիցն Ռուսաց, և Պա-
հարանն հաւաքման ընտիր ընտիր օրի-

նակաց բնական սլառմուլթէ . և Հան-
դիսարանն վաղէմի գրամոց , զոր առա-
ւել ճոխացոյց այժմու Ինքնակալս՝ ա-
ռեալ 'ի շահէն Պարսից բազում գրամս
վաղէմիս 'ի հաշիւ պարտուց նորին :
Հաւաքումն բովուց . Հաւաքումն գա-
ղափարաց մէքէնականին . Հանդիսա-
րանն ազգագրական՝ կառուցեալ առ
այժմու Ինքնակալաւս . Հաւաքումն ան-
բաւ հին և նոր զինուց , և հոյակապ
անկաբանական սլարտէզն ընդարձակ ,
յորում յաւելան այժմուս և հաղարա-
ւոր Պրասիլէան բոյսք 'ի ձեռն Ռի-
տէլայ :

Շուրջանակի զքաղաքաւս գլխաւոր
տեղիք , Ձարսոյէ Սէւ , գիւղ զուարճ
համարեալ քան զամենայն գիւղորէս
Ռուսիոյ . յորում ճարտարաշէն է ար-
քունի պալատն , բուրաստանն , յաղթա-
կան կամարն կանգնեալ յԱղէքսանդրէ
Ա . սրահն զարգարեալ գոճաղմ ա-
կամբք . աւաղանն 'ի կրանիթ քարէ՝
շրջապատն 90 ոտնաչափ . և լսարան՝ 14
ուսուցչօք : - Փէլէէրհոֆ , ամրոց ար-
քունի առ Ֆինլանտեան ծոցով՝ զար-
գարեալ ամենազուարճ բուրաստանօք : -
Քրնշլափ , քաղաք գեղեցիկ , ամուր ,
համբարանոց ամենայն զինուց և հան-
դերձանաց նաւուց :

ՐԻԿԱ . Քաղաք գեղեցիկ՝ շահաստան ,
շէնք 'ի նմա երևելիք , արքունի պալատն ,
գատարան , մայր եկեղեցին , նք Պե-

տրոս, Կատարինեան լսարանն, հիւանդանոցն, մաքսատուն, Թատրոն, նաւարան, կամուրջ Տվինա գետոյ, ևն : Ուսումնարանք երևելիք, լսարանն Կատարինեան, գպրոց նաւուղղութեան, գպրոց օրիորդաց, ընկերութի ուսումնական, ընկերութի գիւղական անասութե, գրատուն, գիտարան, հանդիսարան Հիմնէլայ, ևն :

ՄՈՍԻՌԻՍ կամ ՄՈՍԻՍ, կամ ՄՈՍԿՈՎ. Յետ հրդեհին եղելոյ 'ի 1812 յօրինեցաւ գեղեցկանիստ քաղաքս ևս հոյակապ քան զառաջինն և մեծագոյն : Անգ բնականան տոհմք աղնուականացն Ռուսիոյ վաղեմիք յոյժ և ճոխք . և վաճառականութի նորին ձգի մինչև յԱմերիկա, 'ի Չին, 'ի Պարսս, 'ի Լիվիա, 'ի Փարէզ, 'ի Լոնտոն և 'ի Վեննա : Հրապարակք 'ի նմա երևելիք են՝ հրապարակն Արաւթայ, Կարմիր հրապարակ, և Փեթրովքայա : Շէնք պանծալիք 'ի մայրաքաղաքիս համարին Քրեմլին կամ Քրեմլ նախնի բնակարան Թագաւորաց, պալատն բազմանկիւնի . որբանոցն՝ գեղեցկագոյն համարեալ քան զամենայն որբանոցս Եւրոպայ . Կոսթիննոյ տվոս . սրալատն զինուց . Նաւարան . պալատն Պատրիարգական ձայնեալ . աշտարակն Սուխարեվ . տունն Փաշքով . Թէատրոնն . պալատ ծերակուտին, և Սրահն մեծ 'ի վարժս զօրաց, որպիսի չիք ասէն ուրեք ըստ ընդարձակութե :

Եկեղեցիք հոյակապք, մայր եկեղեցին յանուն վերափոխման Տիրամօրն, ուր ստակին ինքնակալք. եկեղեցին Աւետեաց, Միքայելի հրեշտակապետին, Տիրամօրն, և երանելոյն Բարսղեւ հռչակեալ է զանգակատունն՝ Իւան վելիքոյ անուանեալ, առ որով խրեալ կայ ՚ի գեանի զանգակն մեծ 10,000 Փուտ ծանրութիւնք:

Ուսումնարանք գլխաւորք են, համալսարանն՝ գլուխ այլոց ամենեցուն՝ ըստ բազմութիւ ուսուցչացն և ուսանողաց. Ճեմարանն եկեղեցական, մի ՚ի չորից՝ որ ՚ի պետութեանն. Ճեմարանն բժշկական. Դպրոց զինուորական. Դպրոցն հայկական՝ հիմնեալ ՚ի Կատարինեայ երկրորդէ. Դպրոց վաճառականութե. Ճեմարան գործնական վաճառականութե, յորում ուսանին 60 սպառանիք. Դպրոցն գեղարուեստից. Դպրոցն ապակեգործութե. Վարժարանն. Ուսումնարան սրբուհւոյն Կատարինեայ, յորում դաստիարակին 250 օրիորդք. Ուսումնարան Աղէքսանդրի, ՚ի կրթութի 120 օրիորդաց ընտրելոց ՚ի միջակային ժողովրդոց: Կայսերական ընկերութի բնաստից. Ընկերուի բնաբանական և բժշկական գիտութեց. Ընկերութիւն Հնասիրաց Ռուսիոյ. Ընկերութի գիւղական անտեսութե. Գրատուն համալսարանին. Պարտէզն հասարակաց. Դիտարանն. Հանգիսարան

բնաբանութիւն, և Հանդիսարանն անդամազննութիւն :

Առանձին յիշատակի արժանի զարդ քաղաքիս է Ղազարեան Ուսումնարանն արևելեան լեզուաց՝ կառուցեալ յամին 1816 յազգասէր առատաձեռնութիւն հայկազնեան եղբարցն երկոցուն ազնուական իշխանաց և խորհրդականաց սէտութիւն Յովհաննու և Յովակիմայ Ղազարեանց : Չայս Ուսումնարան յամին 1828 սէտութիւն Ռուսաց ընկալաւ ընդ հանրական տեսչութիւն ուսումնարանացն Ռուսիոյ, որպէս զի կարացեն աշակերտեալքն ՚ի նմա ՚ի լրման ժամանակի ուսման իւրեանց անցունել ՚ի համալսարանն արքունի : Գասախօսութիւն Ուսումնարանին է ՚ի սուս բարբառ. իսկ առ ուսումն այլոց լեզուաց, որպէս և հայկականին, որոշեալ են առանձին ժամանակք. և ամբ ուսման իւրաքանչիւր սրտանեաց կարգեալ են եօթն : Գումար դրամոցն և կալուածոց առատաձեռնեւոց ՚ի սէտս Ուսումնարանին հասանէր յամին 1830 ցցօօ,օօօ ընդ սլիս, որովք դաստիարակին անդ 30 կամ 40 հայկազուն մանկունք ձրի ամենեւին. այլ բազմագոյն են որք վարձուք ուսանին. իսկ տեղին ասի բաւական լինել հարկերից և աւելի ևս ուսանողաց :

Արտաքոյ Մոսքուայի գտանի հուշակաւոր Մենաստանն սրբոյ Երրորդութիւն (Ռուսիոյ Կաթա) . որոյ զանդակա-

տունն բարձրաբերձ է յոյժ, և կարի
դաշնակաւոր զանգակքն : Է անդ և սա-
լաս կայսերական հոյակապ, և դպրոց
եկեղեցականաց իբր երեքարիւրոց :

ԹՈՒԼԱ . Քաղաք շահաստան, Եպիս-
կոսոսարան, և առ բազմաթիւ դմբե-
թացն՝ արտաքուստ գեղատե սիլ : Հռչա-
կեալ են 'ի նմա՝ դպրոցն եկեղեցական՝
ինն վարժապետօք, դպրոցն Աղէքսան-
դրեան, և մանաւանդ զինարանն մեծ,
որ բաւական է սպարաստել զէնս
100,000 զօրականաց :

ՔԱԼՈՒԿԱ . Քաղաք վաճառաշահ,
Եպիսկոսոսանիստ . ունի դպրոց եկե-
ղեցական, վարժարան, և ճեմարան զի-
նուորական :

ՕՐԵԼ . Եպիսկոսոսանիստ քաղաք,
յաճախեալ 'ի տուրևառս ցորենոյ :
Դպրոցն եկեղեցական ունի 10 վարժա-
պետս, և հազարաւոր աշակերտս :

ԹՎԵՐ . Արքեպիսկոսոսանիստ քա-
ղաք, քաջ 'ի գէս 'ի վաճառաշահու-
թի, ունի բազում հրասպարակս և փո-
ղոցս գեղեցիկս : Անուանի են սալատն
կայսերական, մայր եկեղեցին 'ի ձև գո-
թացի, դատարանն, և շիրիմն Կատարի-
նեայ երկրորդի, որ գրեթէ նորոգ կեր-
տեաց զքաղաքս : Ուսումնարանքն են՝
դպրոց եկեղեցական, վարժարան, և
դպրոց ազնուականաց :

ԵԱՐՈՍԼԱՒ . Քաղաք արքեպիսկո-
սոսանիստ, գեղեցկաշէն, անուանի 'ի

գործածս սփռոցաց սեղանոյ, [Թղթոյ և
կերպասուլց: Հռչակի Տեմիտովեան դը-
պրոցն բարձրագոյն գիտուէց՝ հիմնեալ
'ի 1811. ևս և գալրոցն եկեղեցական,
յորում էն 12 վարժապետք, և 1200
ուսանողք. վարժարանն, և ընկերուի
լէզուասիրաց ուսս բարբառոյ:

ԱՐՔԱՆՎԵԼ. Արքեպիսկոպոսանիատ,
չտեմարան վաճառուց Սիպիրայ, և կա-
րի վաճառաշահ, ունի գալրոցս և ու-
սուցմնարանս անուանիս:

ՎՈՂՈԿՏԱ. Ի մէջ Բեթրպուրկայ,
Արքանկէլայ, Մոսքուայի և Խազա-
նայ ունեւորվ զգիրս՝ վաճառաշահ է
յոյժ, և ունի գալրոց եկեղեցական ա-
նուանի:

ՍՏՆԷՆՈՒ, որ 'ի հնուցն ասի բնա-
կարան լեալ 200,000 ոգւոց, այժմ ա-
նուանի է 'ի տուրեւառս, յուսուցմնա-
կան գալրոցս, և սակս Թանճրուէ սպ-
րըսպացն:

ՆՎԷՐՈՒՄ ՌԵԺՆ, այժմ է աթու մե-
տրապօլտական. ունի բազում հնու-
թիս, և 'ի մայր եկեղեցւոջն սրբոյն Սո-
փիայ դտաւ հին գաղափար օրինացն
Եարոսլաւայ, զոր և համարին ունեք
գրեալ 'ի 1280:

ՆԻԺՆԻ ՆՎԷՐՈՒՄ, ունի գործարանս
կտաւոյ, չուանի, և գարեջրոյ. այլ
համբաւեալ է սակս աշխարհաժողով
տօնաւլաճառին, որպիսի չեք արդեօք
ուրեք յԵւրոպա, քանզի գին վաճա-

ռուց՝ որ ամեն անդր ամի ամի՝ առաւել-
լու քան զ115 միլիոն Ֆրանք :

ՔԻԵՎ . Այս մեծ գիցարան նախնի
Սլաւեանց , ապա աթու թագաւորու-
թէ Ռուսիոյ , և մայր քրիստոնէութի
համօրէն քաղաքաց աշխարհին՝ այժմ
է աթու միոյ ՚ի չորից մետրապօլտացն
Ռուսաց : Յաւերակս եկեղեցւոյ սրբոյն
Բարսղի դասն արձանագիրք յունական
տառիւք ՚ի վերայ օլաբասորի կամ թա-
փանցիկ կճոյ , գրոշմեալք յամի տեառն
260 : Շինուածք ՚ի նմա հոյակապք են
մայր եկեղեցին յանուն սրբոյն Սո-
փիայ . սալատն կայսերական . համա-
լսարանն եկեղեցական , յորում ուսա-
նին աւելի քան զմանկունս 1500 . նա-
ւարանն . և հռչակեալ մենաստանն Փե-
չերաքոյ : Ի 1824 դասն նշխարք եկեղե-
ցւոյն կանգնելոյ ՚ի մեծէն Վլասախմիրայ
յամին 996 : Ի տօնավաճառ քաղաքիս
ամի ամի ժողովին ոգիք իբրու 30,000 :

ԽՏԻՆՎ , անուանի սակս վաճառա-
կանուէն , և ուսումնական շինուածոց ,
այսինքն են համալսարանն , դպրոց եկե-
ղեցական , վարժարան , ընկերութի գի-
տութեց , ուսումնարան ազնուատոհմ
օրիորդաց :

ՕՏԵՍՍԱ . Գեղեցիկ ծնունդ հանճա-
րոյն Վատարինեայ երկրորդի , և ար-
դիւնք ճարտարութի կոմսին Ռիչըլէէօ ,
մի է ՚ի բազմամարդոյ և պերճ քաղա-
քացն Եւրոպայ , և մի միայն գլխաւոր

քաղաք վաճառականութիւն Պոնտոսի :
 Շինուածք 'ի նմա գեղեցիկք էն՝ մայր
 եկեղեցին Ռուսաց, բնակարան ծովա-
 կալին , մաքատունն , անկէլանոցն ,
 ջրմուղն , և այլք : Եւ ուսումնարանք
 երևելիք, վարժարանն վաճառականութեւն,
 դպրոց իրաւագիտութեան, դպրոց նաւ-
 ուղղութեւն , դպրոցն եկեղեցական , ու-
 սումնարանն արևելեան լեզուաց . ընկե-
 րութի գիւղական անտեսութեւն . սահա-
 րանն հնութեց հարաւային Ռուսիոյ , և
 սլաւոնացի բժշկական :

Նիւ-Յորք , փոքրիկ քաղաք բարեգիր՝
 զարդարեալ հրապարակական շինուա-
 ծովք . ունի դպրոց նաւուղղութեւն և
 նաւակերտի , գեղեցիկ հաւաքումն դա-
 ղափարաց նաւուց , և սահարան հնու-
 թեց խրիմոն : Աստանօր բնակէ և ծո-
 վական Սեաւ ծովու , և աստ է գլխա-
 ւոր նաւարան Պոնտոսի :

Թայրան կամ Թաիանի , ունի բերդ
 ամուր 'ի վերայ ծովուն Ազախու , և
 վարժարան վաճառականութեւն : Այժմ՝
 կանգնի 'ի նմա շիրիմ հոյակապ 'ի սա-
 տիւ ինքնակալին Աղէքսանդրի՝ որ աստ
 կնքեաց զկեանս իւր 'ի 1825 :

Նախիջևան , քաղաք հայոց վտարելոց
 'ի խրիմէ՝ բազմամարդ , անուանի սակա
 մեծամեծ գործարանացն մետաքսեղի-
 նաց , և ասու , և օլոյ :

Ախեջիտ , կամ Սիֆէր-է-էլ , գլխա-
 ւոր քաղաք կուսակալութեանն Տաւ-

րիոյ, ունի վարժարան, և եկեղեցի գեղեցկաշէն:

Պաշտօնատեղի, աթոռանիստ քաղաք խանիցն խրիմու, ուր կան մնան ցարդ հին ասպարանք խանին, և այլ ևս հոյակապ մզկիթք և բաղանիք:

Խարասուս պաշար, վաճառաշահ, և ճարտար յարուեստս, ունի բազում մզկիթս և բաղանիս, և իջևանս մեծամեծս: Գեղեցիկ է 'ի նմա եկեղեցին հայոց Կաթողիկոսոց նորաշէն, և որ առ նմին գպրոցն հայկական:

Սեասփոփուշ, մերձ յԱխախար գիւղ, ունի գեղեցիկ նաւահանգիստ, նաւարան, զինուորանոցս և ամրոցս. և է ձմերոց նաւուց Սեաւ ծովուն: Ի մերձակայս քաղաքիս են աւերակք նախնոյն Քերսոնիսոս քաղաքի, ուր էր և հռչակաւոր մեհեանն Անահայոյ:

Կարղուֆ, Նիփիւս, և Սեփաշ, վայրք հռչակեալք ըստ պաղարբերութե քան զամենայն կողմանս Ռուսիոյ: Այլ մանաւանդ բեր այգեացն Սուտաղայ անուանի է յոյժ. և 'ի 1829 յայգեստանեայս մեծի կոմսին Վորոնցովայ ևեթ էին 100,000 որթք յազնուագոյն ազգէ այգեացն Գաղղիոյ, Սպանիոյ, և Իտալիոյ: Ի պարտիզին արքունի 'ի Նիքիթա հաշուին 300 ազգք խաղողոյ:

Քեֆէ կամ Թեփուսիս, նորաշէն քաղաք փոքրիկ 'ի տեղւոջ հնոյն, ունի պահարան հնութեանց, գրատուն, և պար-

տէղ արքունի :

Կէրէ, անուանի սակա գրիցն, և հնու-
թէցն որ առ նովաւ, ունի սրահարան
հնու-թէց՝ ճոխ վաղէմի գրամովք, քան-
դակօք, անօթիւք, և այլովք ազգի ազ-
գի հնու-թէք :

ՎԻՆՆՆ. Քաղաք մեծ և գեղեցիկ,
աթոռ նախնի դքսիցն լիթուանիոյ.
հոյակապ է մայր եկեղեցին, եկեղեցի
սրբոյն Յովհաննու, սուրբ Անիա, սուրբ
Պետրոս, դատարանն, նաւարանն, և այլ
ասպարանք իշխանաց : Ուսումնարանքն
անուանիք, համալսարան հիմնեալ ՚ի
1587, վարժարանն, դպրոցն հասարա-
կաց, ընկերութի բժշկական :

Մ^{հիլէլ} կամ Մ^{ոյլ}, վաճառաշահ,
ունի դպրոց եկեղեցական, և վարժա-
րան. և կրկին արքեպիսկոպոսարանս, մի
Ռուսաց, և միւս հռովմէական ուղղա-
փառաց :

ԽՆՁԱՆ. Քաղաք թաթարաց մեծ
և վաճառաշահ, մի ՚ի չորից եկեղեցա-
կան ճեմարանաց Ռուսիոյ, ունի համա-
լսարան՝ հանդերձ գիտարանաւ, գրա-
տամբ, պարտիզիւ և հանդիսարանաւ.
դպրոց հասարակաց, դպրոց թաթա-
րաց, վարժարան, ասպարան թաթարաց.
ընկերութի ռուս բարբառոյ, և ուսու-
մնարան՝ ՚ի ծաղկեցուցանել զքրիստո-
նէութի ՚ի մէջ այլազգեաց :

ՆՃՏԻՐՆԱՆ. Գեղեցկանիստ քաղաք
զարգարեալ բազմաթիւ եկեղեցեօք, և

ընդարձակ պարտիզօք, այլ ըստ շինուածոցն անշուք յոյժ : Ծաղկեալ է յոյժ 'ի վաճառաշահութե, և ունի դպրոց եկեղեցական, և վարժարան :

Փեբժ, առ որով երկաթահանք և սղնձահանք :

Էթալեբիս-բի, անուանի սակս ոսկւոյն որ պեղի և զտի 'ի շրջակայս նորին՝ առատագոյն քան զոսկին Պրազիլեան :

Փէնզա, յորում դպրոց եկեղեցական՝ հազարաւոր ուսանողօք :

ՎԱՐՇԱԻ կամ ՎԱՐՍԱԻՒՅ . Մայրաքաղաք Լէհաստանի . եկեղեցկագոյն են որ առ նովաւ արուարձանեայքն քան զբուն քաղաքն : Շինուածք 'ի նմա երևելիք են՝ ամրոցն արքունի, ամրոցն Լազենքի, սալասն Քրասնիսքի, դատարանն, սալասն Սաքսոնիոյ, սալատ փոխարքային . դանձատունն, նաւարանն, զինուորանոցք, ասպարանք իշխանացն Չամօյսքի, Խոտքեվիչ, Փաց, Օսթրովսքի, Փոթոցքի, Պելլինսքի, և Չարթորիսքի . մայր եկեղեցին յանուն սրբոյն Յովհաննու . եկեղեցին Դոմինիկեանց, եկեղեցի սրբոյ Խաչին, սրբոյն Աղեքսանդրի, ևն :

Յուսումնականին ոչ ինչ ընդհատ է քաղաքս քան զկարի բարգաւաճեալսն որ յԵւրոպա . մանուանդ անուանի է համալսարանն հիմնեալ 'ի 1828, հանդերձ գրատամբ, հանդիսարանաւ, դիտանոցաւ, և պարտիզիւ . ունի և լսա-

րան, դպրոց եկեղեցական, ճեմարան
ղինուորական, դպրոց աղնուականաց,
դպրոց արուեստից, արքունի ընկերու-
նուսումնասիրաց, պահարան երաժշտու-
թե, ևն:

ԹՈՊՈԼՍՔ և ԻՐՔՈՒԹՍՔ. Բաղմա-
մարդ և վաճառաշահ քաղաքք Սիպի-
րայ գլխաւորք, ունին և տպարանս, և
թատրոնս, և դպրոցս բազումս:

ՏՓԽԻՍ. Քաղաք Վրաստանի ընդար-
ձակ և ճոխ, այլ միայն նորաշէն մասն
նորին գեղեցիկ. ունի վարժարան, դպրոց
եկեղեցական, դպրոց հայկական, և այլ
դպրոցս: Տպագրին 'ի նմա լրագիրք չորք
յայլ և այլ լեզուս, այսինքն 'ի ռուս,
'ի վրացի, 'ի հայ, և 'ի պարսիկ բար-
բառ: Հոյակապ է վաղեմի մայր եկեղե-
ցին: Հռչակաւոր են և ջերմուկք քա-
ղաքիս:

ԵՂԻՄԻՔԵՆՈՒՄՕԼԻՍ կամ Գանձակ. 'ի
չըջակայս սորա են ընդարձակ աւերակք,
յորս երբէք երբէք գտանին դրամք պար-
սից, պարթևաց, յունաց և հռով-
մայեցւոց:

Անուանի է 'ի կողմանս յայտօսիկ վա-
ղեմի սիւնն Շամբորոյ բարձր իբր 180
ոտնաչափ:


ԱԽԼՆԻՍ, ամուր քաղաք. հոյակապ է
'ի նմա մզկիթն սուլդան Ահմէտ' 'ի ձև
Այասօֆեային Կոստանդնուպօլսոյ,
հանդերձ գրատամբն, յորմէ 300 մա-
տեանս հանեալ տարան Ռուսք 'ի Բե-

Թըրպուրի : Կարնեցի Հայք գաղթեալք
այսր 'ի 1829, կառուցանեն առ Ախըլը-
խայիւ նոր քաղաք բնակուծն :

Այլ ևս երևելի քաղաքք 'ի կողմանս
յայտոսիկ և 'ի Կովկաս են Խոս-Բայիս,
Քոսպա, Դարբանդ, Վլադիկա-կաս, և
Մոզքոս :

Իսկ Ամերիկա Ռուսաց բաժանի 'ի
բնէ 'ի կղզիս, և 'ի ցամաք երկիր : Ի բազ-
մաթիւ կղզիս անդ երևելի են Արշիպե-
ղափոսն Քոլոմբէան, յորոյ 'ի միումն 'ի
կղզեաց է 'նո՛ւ Արտանիէլ քաղաք գլխա-
ւոր Ամերիկեան Ռուսիոյ : Չալսա իշւէտ,
Քոպետտ իշւէտ, Արշիպեղափոս Աւեո-
լեան . Փրիպիլով իշւէտ, և իշւէտ Դիմե-
րեայ :

Յամաքակողմն Ամերիկոյ բաժանի
յուծ գաւառս կամ նահանգս՝ որք 'ի
բնակչաց իւրեանց առնուն զկոչումն .
այսինքն են Էսքիմացիք, Քիթէկնիք,
Չուքչիք, Քոնայիկք, Քէնայիղք, Չու-
հաչք, Ուկաթակմիուծք, և Քոլուչք :



ԴՐԱՄՔ

ԸՍՏ հրովարտակին Աղէքսանդրի որ
'ի 24 յունիսի, 1810, գրամք որ գնան
'ի պետուածէ Ռուսաց, են

	Բո-պլ. †	†
Ոսկի. Իմիէռիալ, կայսերա- կան	10	. .
Փօլու իմիէռիալ. կէս կայսերական	5	. .
Ի 1817 Վճռեցաւ չհա- րանել Դրամ ոսկի 'ի վեր քան զարծէս 5 բո-պլ.		
Փլաթիւնս . (1827)	3	. .
(1830)	6	. .
Արծաթ . Բուսլ. դահեկան	100
Փոլթիննիք. կէս դա- հեկան	50
Փոլուփոլթիննիք. քա- ւորդ դահեկանի	25
Քսաննոց	20
Հնգեաասնեակ	15
Կրիլեա	10
Փեաթաք . Հնգեակ	5
Պշիլ. Կրիլեա	10
Փեաթաք	5
Կրոշ	2
Քովեյքա կի՛ Քովեք	1
Տենկա . դանդ	172

Փողուշքա . փող	174
Թղլատրատ . Աստիկնացիա .		
(սպխասկ) .	200	
	100	
	50	
	25	
(կարմիր) .	10	
(կապոյտ) .	5	
Թղլեայ բոսային ըսք արժէիցն է իբրոս եր- բորտ ճասն արժանեղի- նին :		

Բուսային այժմ 'ի Կոստանդնուպօլիս
է իբր 13 դուռուշ .

- Ի Փարէզ իբր 3 172 Ֆուանք .
- Ի Վեննա իբր 1 172 Ֆիօրին .
- Ի Լոնդոն իբր 2 172 շիլլինկ :

ԿՇԻՌՔ

Պերքովեց, որ է	10 փուտ .
Փուտ	40 Ֆուանթ .
Ֆուանթ կամ Վիպրա	32 լոթ .
Լոթ	3 զոլոթնիք .
Զոլոթնիք	68 կորիզ :
Ֆուանթն Ռուսաց 'ի Փարէզ է	406 կրամ .
Ի Կոստանդնուպօլիս իբր	280 տրամ .

ՉԱՓՔ ԵՐԿԱՅՆ ՈՒԹԵԱՆ

Վերսթա կիժ Վերստ , է 500 սաժէն .	
Սաժէն . ձող	3 արշին .
Արշին . կանգուն	16 վերշոք .
Վերշոք	1 3/4 մասն .
Տիւյմ . մասն	12 գիծ .
Ֆուլթ . ոտն	12 մասն :
Ոտն Ռուսաց 'ի փա .	
րէզ է	308 միլլիմէթր :

Չափ մակերևութի՝ Տեսեաթինա , որ է
 3200 քառակուսի ձողաչափ . և 'ի
 փարէզ 1 եկտար , և 484 սանթիմէթր :

ՉԱՓՔ ԱՐՄՏԵԱՑ

Քուլ . քուրձ , որ է	10 չէթվերիք .
Չէթվերթ	8 չէթվերիք .
Օսմինա	4 չէթվերիք .
Չէթվերիք	8 կարնեց .
Չէթվերքա	2 կարնեց .
Կարնեցն 'ի փարէզ է 3 լիտր և 9 սանտիլլիմէթր :	

ՉԵՓԻ ՀԵՂԱՆԻՒԹԻՑ

Պօչքա . տակառ , որ է	40 վերո .
Անքերոք	3 վերո .
Վերո . դոյլ	8 օսմուչքա .
Չէթվերքա	2 օսմուչքա .
Օսմուչքայն 'ի Փարէղ է իբր	1 172
լիար :	



Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ք

Ռ Ո Ի Ս Ի Ո Յ

Աճ, ՏՆ

862	Րիւրիք	Рюрикъ
879	Օլեկ	Олегиъ
913	Իկոր Ա.	Игорь I.
945	Օլկա	Ольга
955	Սվեաթոսլաւ Ա.	Свяшославъ I.
973	Եարոփոլք Ա.	Ярополкъ I.
980	Վլատիսկր Ա.	Владимиръ I.
1015	Սվեաթոփոլք Ա.	Свяшополкъ I.
1019	Եարոսլաւ Ա.	Ярославъ
1054	Իսիասլաւ Ա.	Исїяславъ I.
1078	Վսեվոլոտ Ա.	Всеволодъ I.
1093	Սվեաթոփոլք Բ.	Свяшополкъ II.
1113	Վլատիսկր Բ. Մոնոմախ	Владимиръ II. Мономахъ
1126	Մսթիսլաւ	Мстиславъ
1132	Եարոփոլք Բ.	Ярополкъ II.
1138	Վեաչեսլաւ	Вячеславъ
—	Վսեվոլոտ Բ.	Всеволодъ II.
1146	Իկոր Բ.	Игорь II.
1150	Իսիասլաւ Բ.	Исїяславъ II.
1154	Ռոսթիսլաւ	Роспиславъ
1155	Եուրի Ա.	Юрий I.

ԱՏ՝ ՏՆ

1157	Անդրէաս Ա.	Андрей I.
1177	Վսեվոլոտ Գ.	Всеволодъ
1212	Եռւրի Բ.	Юрій II.
1238	Եարոսլաւ Բ.	Ярославъ II.
1248	Անդրէաս Բ.	Андрей II.
1252	Աղէքսանդր Ա. Նեւսքի	Александръ I. Невскій
1264	Եարոսլաւ Գ.	Ярославъ III.
1271	Վասիլ Ա.	Василій I.
1276	Դեմետր Ա.	Дмипрій I.
1294	Անդրէաս Գ.	Андрей III.
1304	Միքայէլ Բ.	Михаиль II.
1320	Եռւրի Գ.	Юрій III.
1323	Դեմետր Բ.	Дмипрій II.
1324	Աղէքսանդր Բ.	Александръ II.
1328	Իւան Ա.	Иванъ I.
1340	Սիմէոն	Симеонъ
1353	Իւան Բ.	Иванъ II.
1359	Դեմետր Գ.	Дмипрій III.
1362	Դեմետր Դ.	Дмипрій IV.
1389	Վասիլ Բ.	Василій II.
1425	Վասիլ Գ.	Василій III.
1462	Իւան Գ.	Иванъ III.
1505	Վասիլ Դ.	Василій IV.
1534	Իւան Դ.	Иванъ IV.
1584	Ֆէոտոր Ա.	Феодоръ I.
1598	Պորիս	Борисъ

ԱՅ՝ ՏՃ՝

- 1605 Ֆէոտոր Բ. Феодоръ II.
 — Դեմետր Ե. Дмитрій V.
 1606 Վասիլ Ե. Василій V.
 1613 Միքայէլ Ռոմանով
 միանով Мановъ
 1645 Ալեքս Алексѣй
 1676 Ֆէոտոր Գ. Феодоръ II.
 1682 Իւան Ե. և Պետրոս Ա. Иванъ V и
 Петръ I.
 1689 Պետրոս յեծն Петръ Великій
 1725 Կատարինէ Ա. Екашерина I.
 1727 Պետրոս Բ. Петръ II.
 1729 Աննա Анна
 1730 Իւան Զ. Иванъ VI.
 1741 Եղիսաբեթ Елисавета
 1762 Պետրոս Գ. Петръ III.
 — Կատարինէ Բ. Екашерина I.
 1796 Պողոս Ա. Павель I.
 1801 Աղէքսանդր Ա. Александр I.
 1825 ՆԻԿՈՂԱՅՈՍ НИКОЛАЙ I.
 Ա.

Ազգք բնակեալք 'ի Ռուսիա 381.

Ազով քաղաք, առումն նորին 'ի Պետրոսէ մեծէ 237.

Աթոռ թագաւորութեանն Ռուսիոյ 'ի Նովկորոս 11. 'ի Քիեվ 12. 'ի Փէրէ-եասլաւ քաղաք Բուլղարաց 22. 'ի Վոլտաիմիր 73. 'ի Մոսքուա 100.

Աժաէրխան քաղաք 423.

Ալէքս հայր մեծին Պետրոսի. ծնունդ նորա 198. դաստիարակուի 200. խաղաղէ զխառվեալ ժողովուրդն 203-205. գաշն նորա ընդ Շվէտս 206. յարձակի 'ի Լէհս 209. ժողով կարգէ վասն Նիկոնի 216. բարեկարգութիք նորա 219. մահ նորին 221.

Ալէքս որդի մեծին Պետրոսի 265. գէպք նորին և մահ 267-272.

Ալէքս սուտանուհ 309.

Ախլցխա քաղաք 425.

Ախմէջիգ քաղաք 421.

Ախբիրման, առումն քաղաքիս 'ի Ռուսաց 336.

Ալէքսանդր Նեւպի, արիութիւն նորա

առ Նեւա գետով 82. Թագաւորէ 'ի Վոլոտիմիր 84. յայլթանակ կանգնէ 'ի վերայ Շվետաց 85. կրօնաւորեւ նորա, և յետ մահուն դասիլ 'ի Ռուսաց ընդ սուրբս 86.

Աղեքսանդր Բ. կոտորէ զԹաթարս 'ի Թվեր 97. մահ նորա 99. տոհմ այժմու ինքնակալաց Ռուսիոյ 98.

Աղեքսանդր Ա. փաւլովիչ. կարգաւորութիք նորա և շինութիք 361. պատերազմն ընդ Գաղղիացիս 362-364. մուտ նորա 'ի Փարէզ 365. երթն յԱնգղիա 366. 'ի Վեներա 367. պսակի 'ի Թագաւոր Լեհաց, անդ. տարագրէ զՅիսուսեանս 368. գտանի 'ի Վերոնա 'ի Ժողովի Թագաւորաց, անդ. մահ նորա, անդ :

Ալքատանոցք և որբանոցք 'ի Ռուսիա 275.

Աժ Ռուսաց սկսանի 'ի յունուարէ առ մեծաւն Պետրոսիւ 245.

Ամերիկեան մասին Ռուսիոյ սահմանք 475. ստորագրութի 426.

Ամրոցք Ռուսիոյ 402.

Անափա, առումն նորին 'ի Ռուսաց 349.

Անդրէաս Ա. Թագաւորէ 'ի Վոլոտիմիր 72. մահ նորա 73.

Անդրէաս Բ. կարգի 'ի խանէն Թաթարաց Թագաւոր Վոլոտիմիրայ 83. վանի 'ի նոցանէ 'ի Լիվոնիա 84.

Անդրէաս Գ. զհետ լինի յափշտակել, զՄոսքուա յեղբորորդւոյն իւրմէ Եու-

րեայ, այլ վաղ մեռանի 91.

Աննա դուստր մեծին Պետրոսի, խնամակալ Պետրոսի Բ. 290.

Աննա կայսրուհի 298. հնարք նորա 'ի թագաւորել ինքնիշխան 300. պատերազմն Ռուսաց առ նովաւ ընդ Լէհս 305. ընդ Տաճիկս 307. մահ նորա 311.

Աննա մայր Իւանայ Զ, կարգի խնամակալ պետութեն 314. աքսորի 319.

Աչքով իշխանուհի բազմագէտ 393.

Ապլայեք քաղաք Սիպիրայ, գիւտք մատենից յաւերակս նորին 353.

Ապտըլապիս խան Խաղանայ 120.

Ասիական մասին Ռուսիոյ սահմանք 375.

Աստուածաշունչ գրոց թարգմանութի 'ի բարբառ Սլաւեանց 43.

Ատեան գաղանի հարցափորձի առ Ալէքսիւ 220. բառնի յԵղիսաբեթէ 320.

Ատեանք Ռուսիոյ 399.

Արծուի նշան Ռուսիոյ 122.

Արուեստք 'ի Ռուսիա 395.

Արսենիա մայր Մեքայելի Ռամանով 166. 193.

Արքանկէլ քաղաք 419.

Ափրաքսին մարաջախտ, քաջութիք նորա և մահ 325. 326.

Բաժանումն Ռուսիոյ քաղաքական 402.

Բարք Ռուսաց 384.

Բեթրպուրկ, հիմնարկութի քաղաքիս 250. 251. ստորագրութի նորին 410.

Բնակիչք Ռուսիոյ 374.

Բովուց երկաթոյ պեղումն նախկին 'ի

Ռուսիա 152. պեղումն այլ և այլ բովուց առ Ալէքսիւ 220. առանձին ժողով կարգեալ 'ի սոյն պէտս 'ի Պետրոսէ մեծէ 275.

Բրուսաց պատերազմ ընդ Ռուսս 326.

Գաւառք Ռուսիոյ 402.

Գեաք Ռուսիոյ 377.

Գիտութիւնք 'ի Ռուսիա 389.

Դարբանդ, առումն քաղաքիս 'ի մեծէն Պետրոսէ 278. 'ի Կատարինեայ Բ. 341.

Դեմեար Ա. նեղի յեղբօրէն իւրմէ յԱնդրէէ 89. մահ նորա 91.

Դեմեար Բ. առնու զթագաւորութին 'ի Եուրեայ, և սպանանի յեղբօրէնորին յԱլէքսանդրէ Բ. 96.

Դեմեար Գ. արկանի յաթուոյն 101.

Դեմեար Դ. Տոնաքի. շիտթք Ռուսիոյ առ նովաւ 102. յաղթութի նորա առ Տոն գետով 103. մեռանի 105.

Դեմեար իշխան Քիւվայ 31.

Դեմեար որդի Իւանայ Դ. սպանանի 'ի հօրէն 150.

Դեմեար միւս՝ որդի Իւանայ Դ. աղետալի մահ նորա 155. գասի ընդ սուրբս 182.

Դեմեար Սուտանուն 167. կեղծեւ նորա զխօթութի 168. գայ 'ի Մոսքուա և թագաւորէ 173. մահ նորա 176-179.

Դեմեար սուտանուն երկրորդ. տես Նակի:

Դեմեար սուտանուն երրորդ 207.

Դիրք Ռուսիոյ 374.

Դիք նախնի Ռուսաց 385.

Դպրութի ՚ի Ռուսիա 389.

Դրամք պղնձիք էրբ մտին ՚ի Ռուսիա 209.

սկիզբն թղթագրամոյ ՚ի Ռուսիա 358.

այժմու գրամք Ռուսաց 427.

Եարոսլաւ Ա. որդի մեծին Վլատիմիրայ, յառնէ ընդգէմ հօրն 34. խորտակի ՚ի Ղէհաց 37. յաղթէ Փեչենեկաց 38. օրէնս կարգէ Ռուսաց 39. վանէ զՂէհս 41. յաղթի ՚ի Յունաց 42. տայ թարգմանել զեկեղեցական գիրս ՚ի Յունաց բարբառոյ ՚ի Սլաւեանցն 43. բաժանէ զերկիրն յորդիս իւր, և մեռանի, անդ.

Եարոսլաւ Բ. 80. գնայ ՚ի կոչ Պագուխանին թաթարաց, և ապա մեռանի 82.

Եարոսլաւ Գ. յաղթէ Գերմանացոց, և թագաւորեալ ամս եօթն՝ մեռանի 87.

Եարոսլաւ կամ Եարոսլաւ քաղաք 418.

Եարոփոլք Ա. յառնէ մարտիւ ՚ի վերայ եղբօր իւրոյ Օլէկայ 26. մահ նորին 27.

Եարոփոլք Բ. որդի Վլատիմիրայ Բ., ձերբակալ լինի հնարիւք և ամի ՚ի Քրաքով 63. յարձակի ՚ի Ղէհս, և քանդէ զՎիսլիցա քաղաք 65.

Եկեղեցականք Ռուսաց 387.

Եկեղեցւոյն Ռուսաց կարգացն նորոգութի ՚ի Պետրոսէ մեծէ 279.

Եղիսարեթ դուստր մեծին Պետրոսի,
 խնամակալ Պետրոսի Բ. 290. Թագա-
 ւորէ 318. մահ նորա, և նկարագիր
 բարուցն 328. 329.

Եուրի Ա. շինէ զՄոսքուա, և զայլ քա-
 ղաքս 71.

Եուրի Բ. յաղթի 'ի Մաթիսլաւայ և
 յեղբորէն իւրմէ Կոստանդնէ 75. առ-
 նու դարձեալ զաթոռն 76. մարտ դնէ
 արիաբար ընդ Թաթարս, և անկա-
 նի 79.

Եուրի Գ. 92. Թագաւորէ 95. մահ նո-
 րա 96.

Եռմաք խազախ, քաջութիւնք նորա և
 առնուլն զՍիպիր 157-162.

Երեւանսքի անուռն պատուոյ Փասքեւիչ
 Կոմսին 370.

Ետիկէր խան խազանայ՝ Չար անուա-
 նի յԻւանայ Դ. 141.

Եւրոպականին Ռուսիոյ սահմանք 374.

Զապալքանսքի անուռն պատուոյ զօրա-
 վարին Տիպիչայ 370.

Զաառնայսքի անուռն պատուոյ Տու-
 մեանցովայ 339.

Զափոռոժսքի խազախք 157. քակտեւ
 բանակի նոցին 341.

Զգետուցն Ռուսաց փոփոխութի 'ի
 ձև լեհացի 223. 'ի ձև գաղղիական 246.

Զոլթիքով զօրավար, վանէ զԲրուսս
 326.

Զօրք Ռուսաց 401.

Էլթոն լիճ աղի 377.

- Թագաւոր կոչելոյ մեծաց իշխանացն
Ռուսիոյ սկիզբն 61.
- Թաթարք արշաւեն 'ի Ռուսիա առ Չին-
կիզաւ 76. զօրանան առ Պադու խա-
նիւ և առ այլովք 83-100. տկարա-
նան 101. յարձակին 'ի Ռուսիա առ
Լէնկթիմուրաւ 107. խորտակին յՌ-
ւանայ Գ. 119. բառնի 'ի Ռուսիոյ
բռնութի նոցա 'ի սպառ 138.
- Թաթիչ չեվ պատմագիր 390.
- Թահմազ զուլի խան Պարսից, խնդրէ
զԵղիսաբէթ 'ի կնութիւն 316. պա-
տրաստի 'ի պատերազմ 322.
- Թայլան քաղաք 421.
- Թասար առաջին 'ի Ռուսիա 390.
- Թէոփանէս Փրոքոփովիչ, մատենագիր
389.
- Թնդանօթք Ռուսաց այժմուս 401.
- Թոպուք քաղաք 425.
- Թոռժոք, առումն քաղաքիս 'ի Փոլով-
ցեաց 53.
- Թուլա քաղաք 418.
- Թուլքով Միքայէլ իշխան առ Իւանաւ
Դ. 130.
- Թվեր քաղաք 418.
- Թրետեաքովքի, մատենագիր 320.
- Թրեիքա լատես Լէհաց արձակեալ 'ի
Ռուսիա 124.
- Թրուվոր էլրայր Տիւրիքայ 10.
- Ժովով ընդհանուր 'ի Ռուսիա վասն
Նիկոնի մետրապօլտի 214.
- Ժովով Թագաւորաց 'ի Նայթատ 277.

'ի Վէննա 367. 'ի Վերոնա 368.

ԻԹլար և Քիթան գեապանք Փոլովցեաց սարանանին 'ի Վլատիմիրայ 54.

Իչիավլասիլեւիչ՝ սուտանուն որդի Ֆէոտորայ Բ. 182.

Իկոր Ա. որդի Բիւրիքայ, նուաճէ ըզ-Տրեւէանս և զՌւկլիչս 15. խաղայ ընդ-դէմ Յունաց. 16. յաղթէ Տրեւէանց, և մեռանի 'ի նոցանէ 17.

Իկոր Բ. Թագաւորեալ առուրս ինչ, ապա շղթայակապ ածի առաջի Իսիասլաւայ 68. կրօնաւորի 'ի Քիւեվ 68. մեռանի 'ի ձեռաց Քիւեվացւոց 69.

Ինքնակալ (սահաբէրթեյ) անուանելոյ Թագաւորացն Ռուսաց սկիզբն 61.

Ինքնակալ կամ կայսր (Իմպերատոր) կոչել Թագաւորացն Ռուսիոյ 238.

Իչիան մեծ, հասարակաց անուն նախնի Թագաւորացն Ռուսաց 34.

Իպրայիլ, առումն քաղաքիս 'ի Ռուսաց 337.

Իսիասլաւ Ա. զօրօք Լէհաց նուաճէ զիւրն. 45. անկեալ յաթոռոյն և դարձեալ Թագաւորէ 48. յաղթեալ Փոլովցեաց՝ մեռանի յետ պատերազմին 49.

Իսիասլաւ Բ. յաղթի 'ի Փոլովցեաց 61. հրաժարի յաթոռոյն, և դարձեալ առնու և մեռանի 70.

Իամայիլ, առումն քաղաքիս 'ի Փոթեմ քինայ 349.

Իոաշական, անուն պատուոյ Սուվորո-

վայ 357.

Իրթիշ գետ 161.

Իւան Ա. մատնէ Թաթարաց զԱղէք-
սանդր Բ. 97. միացուցանէ զԻշխանու-
թիւնս Մոսքուայի և Ռոսթովայ 100.

Իւան Բ. Թագաւորէ ամս վէց 101.

Իւան Գ. նուաճէ զԽազան 116. նկուն
առնէ զՆովկորոտացիս 117. յաղթէ
Լէհաց 119. առնու զԽազան 120. զօ-
րավարք նորա անուանիք 121.

Իւան Գ. կրօնքութի նորա 128-132. պը-
տակի Թագաւն Կոստանդնի Մոնո-
մախ կայսեր 133. առնու զԽազան
134-138. վանէ զՇվէտս 139. յաղթէ
Խաչակրաց 140. հրաժարէ 'ի Թագա-
ւորուէն և գարձեալ առնու 141-145.
պատերազմ նորա ընդ Շվէտս 143.
ընդ Թաթարս 147. ընդ Լէհս 148.
սպանանել նորա զորդին իւր զԳեմետր
150. կրօնաւորէ ըն, անդ. եղանակ տես-
չութե նորա 151. մահ նորին 152.

Իւան Ե. եղբայր մեծին Պետրոսի, Թա-
գաւորէ ընդ նմա 225-232.

Իւան Զ. որդեգրի Աննայի կայսրուհ-
ւոյ 310. Թագաւորէ 512. մահ նորա 'ի
Շլուսէլպուրկ 319.

Լատա գիք նախնի Ռուսաց 386.

Լեզու Ռուսաց 388.

Լէհք յաղթին 'ի մեծէն Վլատիմիրայ
28. յաղթեն Ռուսաց՝ առաջնորդուք
արքային իւրեանց Պոլէսլաւայ 37.
գաւաճանին 'ի Ռուսաց առ Կալիչ

- քաղաքաւ 66. ձեռնտու շինին սոււ-
 անունն Դեմեարի 169. Թագաւո-
 րու թէ նոցա կործանման սկիզբն 304.
 պատերազմ նոցա առ Կատարինեա-
 Բ. 334. երկրորդ պատերազմ առ աջ-
 նորդուք Քոչուսքայ 350-352. անցա-
 նել տէրու թէ նոցա առ Ռուսս 352.
 վերջին վտարանջու թի նոցա և նուա-
 ճումն 370.
- Լեւթոք վիրաբոյժ Թագաւորեցուցանէ
 զԵղիսաբէթ 317. աքսորի 323. դառ-
 նայ անդրէն 330.
- Լերինք Ռուսիոյ 375.
- Լեփեքին մատենագիր 392.
- Լէնկ թիմուր զօրանայ 107.
- Լըֆու զօրավար մեծին Պետրոսի 234.
 յուզարկաւորու թի նորա 245.
- Լիճք Ռուսիոյ 377.
- Լոմնոսով քերթող 391.
- Խաղախք 157. առնուլ նոցա զՍիպիր
 157-162. դիմել նոցա առ Օսմանեանս
 219. աղաաու թէք նոցա 398.
- Խաղան, առումն քաղաքիս յԻւանայ
 Գ. 116-120. պաշարումն նորին 'ի զօ-
 րավարաց Իւանայ Գ. 126. վերջին ա-
 ռումն յԻւանայ Գ. 137. ստորագրու-
 թիւն քաղաքիս 423.
- Խալմուխ Թաթարաց հատուածիւ 'ի
 Ռուսիոյ 'ի Չինս 339.
- Խարաճա խան Թոպուլայ 158.
- Խարասու քաղաք 422.
- Խարքով քաղաք 420.

- Խրիմ, առուան նորին 'ի Ռուսաց 337.
- Կատարինէ Ա. քաղաք նորա հայրենի
249. պսակի ընդ մեծին Պետրոսի 258.
պսակիլ նորա 'ի կայսրուհի 280. հո-
վանայ 'ի Պետրոսէ 281. Թագաւորէ
287. հիւանդուի նորա և մահ 290-291.
- Կատարինէ Բ. 324. Թագաւորէ 332.
պատերազմն ընդ Լէհս 334. պատե-
րազմն ընդ Օսմանեանս 335-339. բար-
գաւաճէ զվաճառաշահուի Ռուսիոյ
341. կառուցանէ զՔերսոն 342. առ-
նու զԽրիմ 343. չուէ անդր 345. ա-
ռուան Օղուր 345-348. պատերազմ
ընդ Շվէտս 348. առնու զԼէհաստան
352. մահ նորա 353.
- Կարգ յաջորդուէ Թագաւորացն Ռու-
սիոյ 51. 360.
- Կարգք ասպետացն Ռուսիոյ 400.
- Կարպաթեան լեռինք 376.
- Կերչ քաղաք 423.
- Կլեպով զօրավար, առնու զԽպրայիլ
337.
- Կլինսքի Մեքայէլ 124. 123.
- Կղզիք Ռուսիոյ 376.
- Կշիւք Ռուսաց 428.
- Կողմա Մինիմ, վառի յազատուի հայ-
րենեացն 191.
- Կոլիցին իշխան 'ի սկզբան Թագաւորուէ
մեծին Պետրոսի 228. դիմէ մարտիւ 'ի
Խրիմ 230. աքսորի 232.
- Կոլիցին զօրավար առնու զԽոթուրն 335.
- Կոլեբով պատմագիր 393.

- Կողովքին իշխան, ջանայ թագաւորե-
 ցուցանել զԱննա դքսուհի 317.
- Կոստանդին առեալ զթագաւորութիւն
 յեղբօրէն իւրմէ Եուրեայ Բ. վաղ մե-
 ռանի, և թողու զաթոռն անգրէն
 Եուրեայ 76.
- Կոստանդին եղբայր այժմու ինքնակա-
 շին 369. 370.
- Կովկասու լէրինք 376.
- Կոտորած իշխանացն Թաթարաց'ի Ռու-
 սաց առ Աղէքսանդրիւ Նեւպեաւ 85.
 առ Աղէքսանդրիւ Բ. 97. Կոտորած
 օտարական ազգաց գտելոց 'ի բեթըր-
 պուրկ 321.
- Կրօն Ռուսաց 385. այլևայլ կրօնք 'ի
 Ռուսիա 383.
- Հայք վարին 'ի Քէֆէէ 'ի Ռուսիա 336.
 ազատութիւն շնորհեալք նոցա 'ի Պո-
 զոսէ 360.
- Հանդէս յաղթանակի մեծին Պետրոսի
 263.
- Հաւք և ծախք պետութեան Ռուսաց 400.
- Հեղինէ մայր Իւանայ Գ. 128. մահ նո-
 րա 130.
- Հերակլ արքայ Վրաց, մտանէ ընդ հո-
 վանաւորութիւն Ռուսաց 342.
- Հրեայք Քիւզայ կոտորին 'ի Ռուսաց 59.
- Ծահիճք 'ի Ռուսիա 377.
- Ծեմարան գիտուէց 'ի Բեթրպուրկ 280.
- Մագնոս գուքս Ալսացիոյ 144. 146.
- Մազեփփա խազախ 252.
- Մահմէտ էմին խանին Խազանայ կոտոր-

- րել դաւով զՌուսս 120.
 Մայքով քերթող 352.
 Մանուկ խան խաղանայ 120.
 Մատենագիրք Ռուսաց անուանիք 389.
 394. կենդանիք յամին 1828. 394.
 Մարախ եկեալ 'ի Ռուսիա 55.
 Մարիամ մայր Դեմետրի որդւոյ Իււ-
 նայ Դ. 152. աքսորի յՈւկրէն 156. սա-
 տահումն նորա ընդ սուտանուէնն Դե-
 մետրի 174. 178.
 Մարիանէ կին սուտանուէնն Դեմետրի .
 184. մահ նորա 189.
 Մեծ անուանել Պետրոսի Ա. 277.
 Մեծ Ռուսք 384.
 Մենամարտութի առ մեծաւն Վլատի-
 միրաւ 33.
 Մենաստանք 'ի Ռուսիա 387.
 Մենչ չիքով սկիզբն նորա 251. փառա-
 սիրութի նորա 288. ամբաստանի 290.
 բռնութիք նորա 293. աքսորի 'ի Սի-
 սիր 295.
 Մետրապօլիտք 'ի Ռուսիա 386.
 Մէնկլի քերէյ խան խրիմու յաղթի 'ի
 Ռուսաց 125. կրկին յարձակել նորա
 'ի Մոսքուա, և դեսպանք նորին առ
 Իւան Դ. 145.
 Միրովիչ խաղախ, յարձակի հանել յար-
 գելանէ զԻւան Զ. 319. մահ նորա
 334.
 Միւլէր բանասէր 392.
 Միքայէլ Ա. որդի Եուրեայ թագաւորէ
 ամ մի 73.

Մեքայէլ Բ. զբարաբի 'ի Եռերեայ իշխանէն Մոսքուայի 92. մահ նորա 96.

Մեքայէլ իշխան Քիեվայ սպանանէ ըզպատգամաւորս Թաթարաց 80. մահ նորա 83.

Մեքայէլ Ֆէոտորովիչ Ռոմանով. անցանէ 'ի վանաց յաթոռ արքունի 195. սատերազմն և հաշտութի ընդ Լէհս 196. կարգէ զհայրն իւր 'ի պատրիարգ 196. ամուսնանալ նորա ընդ Եւգրսիայ 197. բարեկարգութիւք նորա 199. մահ նորա 201.

Մոէնս սենեկասրան Կատարինեայ Ա. 281.

Մոնիլէվ կամ Մոյլով քաղաք 423.

Մոսկով Պորիս Իւանովիչ, դաստիարակ Ալէքսի 200. հնարք նորա յամուսնացուցանել զԱլէքս ընդ քեռկնոջ իւրոյ 201. բռնուիք նորա. 205. մատեանն օրինաց, աւր. մահ նորա 211.

Մոսքուա. շինութի քաղաքիս 71. առումն նորին 'ի Թաթարաց 73. աթոռ Թադաւորութեան Ռուսաց 'ի նմա 100. առումն նորին դաւով 'ի Թոխթամըշ խանէն 104. սաշարի 'ի Պուլադ խանէ 108. բարբառ քաղաքիս 388. ստորագրութի նորին 415.

Մորոզով խորհրդական Վասիլ Գ. 110.

Մորուաց բարձումն 'ի Ռուսիա 246.

Մունիք. շինութիւք նորա 304. սպարապետութի 306. արիութիւնք նորա 'ի պատերազմին Օսմանեանց 307. ձեր.

բակալ առնէ զՊիրենն 313. չարախօսի
յՕսթերմանայ 315. դառնայ յաքսո-
րանաց . 330.

Մսթիսլաւ որդի վ չատիմիրայ Բ. ար-
չաւանք Փոլովցեաց առ նովաւ 'ի Ռու-
սիա 61.

Յիսուսեանք տարագրին 'ի Ռուսիոյ
հրամանաւ մեծին Պետրոսի 276. Ա-
ղէքսանդրի Ա . 368.

Յովբ առաջին պատրիարգ Ռուսաց 154.
'Նախիջևան քաղաք 421.

'Նակի, երկրորդ սուտանունն Դեմետր
183-186.

'Նահանգք Ռուսիոյ 402.

'Նատալիա մայր մեծին Պետրոսի 218.

'Նաւակերտուի 'ի Ռուսիա 219. 235. 242.

'Նաւք Ռուսաց 401.

'Նաւահանգիստք Ռուսիոյ 398.

'Նաւակայք Ռուսիոյ 402.

'Նարիչքին երկրորդ աներ Ալէքսի, բա-
րեկարգութիւնք նորա 218.

'Նափոլէոն Պոնափառութէ . պատերազմ
նորա ընդ Ռուսս 362-367.

'Նեստոր պատմագիր 389.

'Նեւա գետ 377.

'Նիժնի Նովկորոտ քաղաք 419.

'Նիկողայոս Ա . 369.

'Նիկոն արքեպիսկոպոս Նովկորոտայ, ա-
րիութի նորա 207. դատ նորա և ար-
գելումն 'ի վանս 214. ազատութի, և
մահ նորին 224.

'Նիքոլայեւ քաղաք 421.

- Նշան Ռուսիոյ 122.
- Նովիբրով հնախոյզ 392.
- Նովկորոտ մեծ, շինութի քաղաքիս 9.
բարգաւաճութի նորին 10. վարան-
ջէլ բնակչացն յԻւանայ Գ, և ընկ-
ձիւ 'ի սպառ 116-118. այժմու գիրք
նորին 419.
- Նոր Ձեմէա կղզի 376.
- Շահաստան քաղաքք Ռուսիոյ 398.
- Շահին քէրէյ խան խրիմու տայ զէրկիր
իւր 'ի ձեռս Ռուսաց 342.
- Շէխ Ալի խան խաղանայ 126. 134. հը-
նարք նորա առ արդարացուցանելոյ
զանձն առաջի Իւանայ Գ. 138.
- Շեմեաքա Դեմեար. կուրացուցանէ ըզ-
Վասիլ Գ. 112. գեղով մահու սպա-
նանի 113.
- Շույքի Վասիլ իշխան առ Իւանաւ Գ.
130.
- Շույքի Վասիլ առ սուտանուենն Դե-
մեարիւ, խայտառակէ զսուտանուենն
Դեմեար 176-179. Թագաւորէ 180.
ձերբակալ եղեալ ածի առաջի Սի-
գիմուենգայ արքային Լեհաց 188-189.
- Շույքի Մեքայէլ Աբովին 186.
- Շուվալով քերթող 393.
- Շչերպաթով պատմագիր 392.
- Շվեաց պատերազմ ընդ Ռուսս, և
պարտութի 85. 139. գեսպանի նոցին
անցք առ Իւանաւ Գ. 144. յաղթել
նոցա Ռուսաց առ Տէվէլաւ 146. դաշն
ուխտի նոցա ընդ Ալէքսի 205. յաղ-

Թէն Ռուսաց 248. յաղթին 'ի նոցա-
նէ 250. յաղթին դարձեալ առ Փռ-
թաւայիւ 254. հաստատութի ուխտի
գաշանց ընդ Ռուսս 274. դարձեալ
պատերազմ, և հաշտութի 276-277.
պատերազմ և հաշտութի առ Եղի-
սաբէթիւ 322.

Ուրալ լէրինք 376.

Չափ և կշիռ միօրինակ 'ի Ռուսիա 275,
այժմու չափք 429.

Չինաւ եղբայր Տիւրիքայ 10.

Չինկիզ խան Թաթարաց զօրանայ 76.

Չինք գաշինս հաստատեն ընդ Ռուսս
236.

Չմկիկ կայսր Յունաց, պատերազմ նո-
րա ընդ Ռուսս 23.

Պաթթորի Ստեփաննոս արքայ Լէհայ
խաղայ մարտիւ 'ի վերայ Իւանայ Դ.
148.

Պաղջեսարայ քաղաք 422.

Պատրիարք 'ի Ռուսիա առաջին 154. վեր-
ջին առ մեծաւն Պետրոսիւ 247. 386.

Պեղպորոտսքի կոմս, խօսի ընդ Օսմա-
նեանս 'ի հաշտութի 349.

Պելսքի Իւան սպարապետ Վասլի Դ.
127. 130.

Պելսքի Սիմէոն անցեալ առ Լէհս՝ յառ-
նէ 'ի վերայ Իւանայ Դ. 129. 131.

Պելսքի Պողտան խնամակալ Դեմետրի
որդւոյ Իւանայ Դ. 153.

Պեսթուշէվ հազարապետ Թագաւո-
րութե, փառասիրութի նորա և բըռ-

նութիք 322. պարտի 325.

Պետրոս մեծն թագաւոր անուանի ընդ
 եղբոր իւրում իւանայ 227. ինքնա-
 գլուխ թագաւորէ 232. բարբ նորա և
 կրթուիք 233 235. 285. պաշարէ զԱ-
 զով քաղաք և առնու 237. հանդէս
 յաղթանակի նորա 238. Ճանապար-
 հորդէ ընդ Եւրոպա 240. երթն ՚ի Սար-
 տամ և յԱնգղիա 241. յեղակարծ գարձ
 նորա ՚ի Մոսքուա 243. ցրուէ զՍթրե-
 լեցան 245. հաստատէ զկարգ ասպե-
 տութէ սքյն Անդրէի, ա՛նդ. փոխէ
 զզգեստս Ռուսաց 246. հիմնէ զԲէթըր-
 պուրկ 250. 251. պատերազմն առ Փոլ-
 թաւայիւ 254. պատերազմն ընդ Օս-
 մանեանս 257-261. նաւամարան ընդ
 Շվէտս 262. հանդէս յաղթանակին
 203. կարգէ զասպետուի սրբուհւոյն
 Կատարինեայ 265. Ճանապարհորդէ ՚ի
 Գաղղիա 266. դատապարտէ ՚ի մահ
 զորդին իւր զԱլէքս 267-273. հաշտի
 ընդ Շվէտս 274. շինութիք նորա և
 բարեկարգուիք 275. խաղայ ՚ի Շվէ-
 տրս, և սպա հաշտի 277. անուանի
 Մեծ 277. առնու զԲարբանդ 279.
 նորոգէ զկարգս եկեղեցւոյն Ռու-
 սաց, ա՛նդ. կանգնէ զՃեմարան դի-
 տութէց 280. պսակէ զԿատարինէ ՚ի
 կայսրուհի, ա՛նդ. խօթութի նորա և
 մահ 281-284. յիշատակք նորա 286.
 Պէնտեր, առուին քաղաքիս ՚ի Ռուսաց
 337.

- Պետրոս Բ. որդի Ալեքսի 287. 289. Թագաւորէ ընդ խնամակալօք 292. մահ նորին 'ի ծաղկէ 297.
- Պետրոս Բ, ընտրի Ժառանգ աթոռոյն Ռուսաց 321. դաստիարակուածն նորա 323. Թագաւորէ 330. գնացք նորա անբարիք 331. մահ նորա և Թաղումն 333.
- Պետրոս Գ, սուտանունն 339.
- Պիոս Զ, քահանայապետ Հռովմայ հրեշտակուածն առաքէ առ Կատարինէ Բ. 344.
- Պիրեն, Թէ որպիսի դք էր 301. բռնութիւնք նորա 302-304. 310. 312. ձերբակալ լինի 'ի Մուսիքայ և աքսորի 313-315. դառնայ անդրէն 330.
- Պլուտ շողոմարար Եարովոլքայ Ա. 26. մահ նորա 27.
- Պղատոն պերճախօս քարողիչ 391.
- Պորիս որդի մեծին Ալաաիմիրայ, սպանա. նի հրամանաւ Սվեաթոփոլքայ Ա. 35.
- Պորիս Կոտուեով, որ ինչ անցս անցոյց ընդ խնամակալ իշխանա Ֆէոտորայ Ա. 153. Թագաւորէլ նորա 163. բռնութիւք 165-167. առ նովաւ դէպք սուտանունն Դեմետրի 167-170. մահ նորին 171.
- Պօղոս Ա, ծնունդ նորա 325. ամուսնանայ ընդ Սոփիայ 341. Թագաւորէ 354. արձակէ զՍուվորով 'ի Գաղղիա 355. հնարի 'ի Ռուսիա զԹղթագրամն 358. ատելուածն նորա ընդդէմ նորաձեւութեանց, անդ. որդիք նորա 359. կար-

գաւորութիւնը նորին, անդ . ազատութիւնը շնորհեալք 'ի նմանէ Հայոց 360. մահ նորա 358.

Ջրանցք Ռուսիոյ 380.

Ռեժեմլիքի քերթող 392.

Ռիմնիցքի անուն սրատուոյ Սուլարովայ 357.

Ռումանովեանց սկիզբն 121. Թագաւորք 'ի տոհմէ աստի 194. վախճան տոհմիս 297.

Ռոսթիսլաւ որդի Մսթիսլաւայ Թագաւորէ ամիսս ինչ 70.

Ռուսալքի յաւերժահարսունք նախնի Ռուսաց 386.

Ռուսիա, տարածութիւն նորին 373.

Ռուսք, անուն նոցա 11. դարձ նոցա 'ի քրթական հաւատս 32. դժուարանալ նոցա զառաջինն 'ի փոխել զհանդերձս և 'ի բառնալ զմորուս 246.

Ռուքին ընկերՆակեայ սուտանունն Դեմետրի 183.

Սահմանք Ռուսիոյ 374.

Սանթթ-Փեթերսբուրկ . տես Բեթըրպուր :

Սաֆա քերէյ խան Խրիմու խորտակի 'ի Ռուսաց 131.

Սեւաստոփոլ քաղաք 422.

Սելիմ քերէյ խան Խրիմու հպատակէ Ռուսաց 338.

Սլոնէքօ խաղախ ելուզակ 216-218.

Սթրէլէց անուանեալ զօրք 134. որունուն թիւնք նոցա 225-228. ցրուին 'ի

սպառ 245.

Սթրէշէնեւոյ աներոյն Մեքայէլի ար-
քայի գէպք 197.

Սիգիամունդ արքայ Լէհայ 186. զոր ինչ
արար ընդ գէսպանս Ռուսաց 190.

Սիմէոն Գոռոզ, ապստամբէն 'ի նմանէ
բնակիչք Թոռժոք քաղաքի 100. Մե-
ռանի 'ի ժանտ ախտէ, անդ :

Սիպիր, կամ Սիպերիա, նախկին մուտ
Ռուսաց անդր 122. առումն նորին
Եւրամբայ 156-162.

Սիւմպէքեայ կնոջ իւանին խազանայ
դաւն 135.

Սիւնհոգոս եկեղեցւոյն Ռուսաց 247.
386.

Սլոնեանք նախնի բնակիչք Ռուսիոյ 9.
Սմոլէնսք, պաշարումն քաղաքիս 'ի Լէ-
հայ 186-191. 'ի Ռուսաց 199. առումն
'ի Լէհաց, անդ. 'ի Ռուսաց 209. ստո-
րագրութի նորին 419.

Սոլովէցքոյ կղզիք 376.

Սով սաստիկ 'ի Ռուսիա 'ի ժամանակս
Իսիասլաւայ Ա. 46. առ Եուրեաւ Բ.
78. առ Պորիսաւ 164.

Սուամրոքով քերթոյ 391.

Սուվորով, առնու զԲրակա Լէհայ 352.
արիութիք նորա ընդգէմ Գաղղիա-
ցւոյ 355. 356. մահ նորա 357.

Սուտ մարգարէք 'ի Թագաւորութե ի-
սիասլաւայ Ա. 46.

Սուտաղ 422.

Սովիա քոյր մեծին Պետրոսի. չարիք նո-

րա և վառասիրութի 225-232. երկրորդ անգամ աղմկել նորա զՌուսս 243.

Ստանիսլաւ արքայ Ահհայ 305. տայ ըզթագն իւր 'ի Ռուսս 352.

Սվեաթոսլաւ Ա, որդի Իկորայ Ա. վայրագասուն կեանք նորա 20. յաղթէ Խասարաց 21. արշաւէ 'ի Բուլղարս 21-24. ղերժուցանէ զՔիեւ վ'ի սրաշարմանէ Փեչենեկաց 21. բաժանէ զսուրութին յորդիս իւր 22. յաղթի 'ի Չմէկիկ կայսերէ 23. մեռանի 'ի Փեչենեկաց 25.

Սվեաթոսլաւ և Վսեվոլոտ եղբարք Իսիասլաւայ Ա, յառնեն 'ի վերայ նորա 47.

Սվեաթովիա գէք Ռուսաց 386.

Սվեաթովոլք Ա, յափշտակեալ զաթոռ մեծին Վլատիմիրայ՝ սպանանէ զորդիս նորին 35. 36. վանի 'ի Եարոսլաւայ 38.

Սվեաթովոլք Բ, բանտարկէ զդէսպանս Փոլովցեաց և յաղթի 'ի նոցանէ . 53. առնու 'ի կնութի զդուստր Թընզըր Խանին Փոլովցեաց 54. երկագառակութի իշխանացն Ռուսաց 56-58.

Սվենալա զօրավար Իկորայ Ա. 15. մահ որդւոյ նորին յՕլէկայ. 25.

Սրսծութի 'ի Ռուսիա առ Վսեվոլոտաւ Ա. 51. առ Սիմէոնիւ 100. առ Վասլիւ Գ. 109.

Սքանափնաւեան լերինք 375.

- Վաճառականութի 'ի Ռուսիա 397.
- Վասիլ Ա. նուաճէ զնովկորոտացիս 88.
- Վասիլ Բ. յափշտակէ զԵրկիրն Պորի-
սայ 106. փախուցեալ 'ի Քոսթրոմա
յերեսաց Թաթարացն, մեռանի 108.
- Վասիլ Գ. խոյս սայ 'ի Քոլումնա յե-
րեսաց հօրեղբօր իւրոյ Վասլի 110.
յառնէ 'ի վերայ նորա, և յաղթի 111.
ապաշնորհուի նորա առ Ռուս Մահ-
մէտ 112. Գեմեարի Շեմեաքայ կու-
րացուցանել զնա 113.
- Վասիլ Դ. արձակէ զեղբայր իւր զԳե-
մեար 'ի վերայ Խազանայ 123. յաղթէ
Լէհաց 124. մարտ գնէ ընդ խանս Խա-
զանայ 126. կանայք նորա 128.
- Վասիլքօ որդի Թուինն Եարոսլաւայ
Ա. զոր կուրացոյց Գաւիթ իշխան 57:
- Վարդ քաղաքապետ Ադրիանուպօլսոյ
հնարիւք վանէ զՌուսս 23.
- Վարեկի ուրումն քրիստոնէի մարտիրո-
սութի 28.
- Վարչաւ կամ Վարսաւիա 424.
- Վեաչեսլաւ որդի Օլէկայ, Թագաւորէ
աւուրս Երկոտասան 66. միւսանգամ
հրաւիրի յաթոս 70.
- Վիլնա քաղաք 423.
- Վիրք անձնատուր լինին 'ի Ռուսս 359.
- Վրասիմիր Ա. սպանանէ զեղբայր իւր
զԵարոփօլք 27. Թագաւորեալ յաղ-
թէ Լէհաց և այլոյ 28. արձակէ արս
'ի քննել զկրօնս աղգաց աղգաց 29.
գառնայ 'ի քրիստոսական հաւատս 31.

խորաակէ զկուռս 32. սլատերազմ նորա ընդ Փեչենեկս 32. 33. բաժանէ զաշխարհն յորդիսիւր 34. բարեկարգութիւն զոր արար, անդ. յառնէ ՚ի վերայ որդւոյն ապստամբելոյ և մեռանի 34. դասի ՚ի Ռուսաց ՚ի կարգս սբց 35.

Վլատիմիր Բ. Մոնոմախ. խաղաղաւէտ թագաւորութի նորա 60. սա առաջին կոչի Արքայ և Ինքնակալ 61.

Վլոսթովիչ լեհացի, ըմբռնէ դաւով զԵարոփուք Բ. 63.

Վոլկա գետ 379.

Վոլոսիմիր քաղաք ակթուանիստ 73.

Վոլք Նովկորոտացի մենավաճառ 207.

Վոլոկտա քաղաք 419.

Վոլոս դիք Ռուսաց 386.

Վոլքով, երաժիշտ և քերթող 390.

Վորոնցով իշխան առ Իւանաւ Գ. 130. մահ նորա 131.

Վսեվոլոտ Ա. որդի Եարոսլաւայ Ա. առ նու իւր նոր մականունն 50. ներէ Եարոփուքայ Իսիասլաւեան 51.

Վսեվոլոտ Բ. ուրախութի Ռուսաց ՚ի մահուան նորա 67.

Վսեվոլոտ Գ. որդի Եուրեայ Ա. թագաւորէ քաջութիւն ամս երեսուն և հինգ 74.

Տեղագրութի Ռուսիոյ 410.

Տեսչութի Ռուսիոյ 398.

Տերժավին քերթող 393.

Տիպիչ զորավար Չապալքանսքի 370.

- Տուկորուքեայ իշխանի արիական համար,
ձակութի առ մեծն Պետրոս 273.
- Տուկորուքեանց տոհմին ճոխանալ 296.
- Տուկորուքի զօրավար, առնու զԽրիմ
337.
- Տոնսքի Խաղախք 157. առնուլ նոցա ըզ-
Սիպիր 157-162.
- Տպագրութի առաջին 'ի Ռուսիա 151.
- Տրեւէանց կոտորած յՕլկայէ 17-19.
- Տփխիս քաղաք 425.
- Միկա . ստորագրութի քաղաքիս 414.
- Միւրիք, նախկին թագաւոր Ռուսաց 10.
սպառումն տոհմի նորա 155. 162.
- Մումեանցով սպարապետ, յաղթէ Օս-
մանեանց 336. առնու զՇումնի 338.
հանդէս յաղթանակի նորա 339.
- Փանին զօրավար, արիութի նորա 'ի պա-
տերազմին Բրուսաց 327. առնու զՊէն-
տէր 337. հալածէ զՓուհաչեւ 340.
- Փապէւիչ զօրավար Երեւանսքի 370.
- Փեռուն դիցահայր Ռուսաց 32. 385.
- Փերեսլաւ մենամարտիկ 33.
- Փէրէեսլաւ քաղաք Բուլղարաց 22.
- Փիլարետ մեարապօլիտ, դեսպանութի
նորա առ արքայն Լէհաց 190. հրա-
ւիրի 'ի գահն արքունի 192. կարգի
յորդւոյն 'ի պատրիարգ 196.
- Փոթեմբին առնու զՕզու 345-348. զԽ-
մայիլ 349.
- Փոթարսքի, վանէ զԼէհո և զՇվէտս 'ի
Ռուսիոյ 192.
- Փոլթաւա . հռչակաւոր պատերազմ

Ռուսաց ընդ Շվէտս առ քաղաքաւս
254.

Փոսսեւինոս յիսուսեան, յիջնորդ խա-
ղաղութե առաքեալ 'ի սրասէն առ
Պատթորի, և առ Իւան Գ. 149.

Փուհաչեւ խաղախ. խարէութի նորա,
և մահ 339. 340.

Փոփովսքի ճարտար թարգմանիչ 392.

Փոքր Ռուսք 384.

Փրէօսրաթենսքի գունդ զօրաց մեծին
Պետրոսի 233.

Քաղուկա քաղաք 418.

Քաղաքք Ռուսիոյ 403.

Քաղաքականութի Ռուսաց առ մեծաւն
Վլատիմիրաւ 34. առ Իւանաւ Գ.
122. առ մեծաւն Պետրոսիւ 245. և
առ յապա :

Քանթէմիր Դեմետր կուսակալ Վալա-
քիոյ 258. 261.

Քանթէմիր Անտիոքոս, մատենագիր 390.

Քավանսքի զօրագլուխ Սթրեւցայ 229.

Քարամզին քերթող և սրտամագիր 393.

Քերասքով բանաստեղծ 391.

Քերսոն հին, սրտարումն և առումն քա-
ղաքիս 'ի մեծէն Վլատիմիրայ 30.

Քերսոն նոր, կառուցանի 'ի Կատարի-
նեայ Բ. 342.

Քէֆէ, առումն քաղաքիս 'ի Ռուսաց
336. այժմու հանգամանք նորին 422.

Քթախոտ էրբ եմուա 'ի Ռուսիա 242.

Քիւվ. շինութի քաղաքիս 9. աթոռ թա-
գաւորութի 'ի նմա 12. առումն նորին

'ի թաթարաց առ Չինկիզաւ 77. առ
Պագու խանիւ 81. ստորագրութի նո-
րին 420.

Քիչքով պատմագիր 390.

Քիչքիմոռա դիք նախնի Ռուսաց 386.

Քոնարածովիչ քաջ թարգման 392.

Քոչուքոյ զօրավար Լէհաց, վանի'ի Ռու-
սաց 351. աղատի 'ի բանտէ 359.

Քուչում խան Սիպիրայ 158-162.

Քուչքօ տէր երկրի Մոսքուա քաղա-
քին 71.

Քուփալօ դիք վաղէմի Ռուսաց 386.

Քրաշենեանիքով աշխարհագիր 393.

Օգեռով քերթող 393.

Օզու, առու մն նորին 'ի Մուսիքայ 308.
'ի Փոթեմքինայ 345-348.

Օթրեփիէվ. տես Դեմեար սուտանուն:

Օլէկ խնամակալ Իկորայ որդւոյ Բիւ-
րիքայ 11. առնու զՔիէվ 12. արշաւէ
յաջողակի 'ի Բիւզանդիա 13. դաշ-
նագիր լինի ընդ Յոյնս 14.

Օլկա կին Իկորայ Ա. վրէժխնդիր լինի
մահու առնն 'ի Տրեւլեանց 17-19. շե-
նութիք նորա 20. լինի քրիստոնէայ,
անդ. դասի յիւրոցն 'ի կարգս սբց, անդ:

Օսոլէնսքի իշխան առ Իւանաւ Դ. 128.
մահ նորա 130.

Օսթերման կոմս գործակից բռնութեցն
Պիրենայ 302. 304. 312. խանդայ ընդ
փառս Մուսիքայ 315.

Օսմանեանց նախկին դաշն ուխտի ընդ
Ռուսս 196. պատերազմ նոցա ընդ

- Ռուսս առ մեծաւն Պետրոսիւ 257-260. առ Աննայիւ 306. առ Կատարինեալ Բ. 335-339. հաշտութիւն և դաշինք 'ի Գայնարճըզ 339. դարձեալ պատերազմ 345-349.
- Օսքոլա և Տիր իշխանք Վիւլայ առ Տիւրքաւ 12.
- Օտեսաս քաղաք 420.
- Օրէլ քաղաք 418.
- Օրէնք Եարոսլաւայ Ա. 39. Իսխաւայ Ա. 49. յաւելուածք յԻւանայ Գ. 152. մտաեանն օրինաց Մոսկովայ 205. մեծին Պետրոսի 267. 279. Կատարինեայ Բ. 360.
- Օփրիչնիք անուանեալ գունդ զօրաց 141.
- Փէոտոր Ա. օրդի Իւանայ Գ. որ ինչ առ նովալ գէսք 'ի բռնութեց Կոտունովայ 153-156. պատերազմ նորա ընդ Շվէսս 156. առուին Սիպիլայ 156-162. մահ նորա 162.
- Փէոտոր Գ. օրդի Պորխայ. թագաւորել նորա և մահ 172. 173.
- Փէոտոր Գ. ջնջել նորա զազգահամար թուղթս ազնուականաց 222. շինութիւնք նորա և այլ ևս բարեկարգութիւք 223. մահ նորա 224.
- Փէոտոր Նիքիթիչ Ռոմանով. տէս Փիլարեա :
- Փոն Վիզին քաջ հագներգու 392.

Էջ ՏՈՂ, ՎՐԻՊԱԿԻ

ՈՒՂԻՂԻՔ

101

86	18	լեաց	լեալ
105	8	յայժամ	յայնժամ
195	18	քա-քաք	քա-լաք
206	19	դանդաղէր	դանդաղէր
241	31	'ի Հայկայանց	'ի Հայկայանց
263	2	գոգցես	գոգցես
288	16	սրահեցի	սրահեցի

1948

494272